ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

3

ԵՐԵՎԱՆ

ՀՍՍՀ ԱԿԱԴԵՄԻԱ

КОНТРОЛЬНЫЙ
ЭКЗЕМПЛЯР

АКАДЕМИЯ НАУК АРМЕНИИ
ИНСТИТУТ ЯЗЫКА им. Р. АЧАРЯНА

ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЯНСКОГО ЯЗЫКА

III

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЕНИИ
ЕРЕВАН 1991

809.198.1-5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

III

A 11/8/887

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1991

ԳՄԴ 81. 2Հ
Հ 241

Տպագրվում է Հայաստանի ԳԱ լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
բանասիրական գիտությունների թեկնածու
Լ. Ս. Հովսեփյան

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝
բանասիրական գիտ. դոկտորներ
Ռ. Ա. Իշխանյանը, Վ. Ա. Քոսյանը
և բանասիրական գիտ. թեկնածուներ
Հ. Վ. Սուքիասյանը, Յու. Մ. Գաբրիելյանը

Հայոց լեզվի պատմության հարցեր։ [Ժողովածու]/ՀԳԱ
Հ 241 *Հր. Աճառյանի անվ. լեզվի ին-տ. Եր.: ՀԳԱ հրատ., 1990. Հրատ. է 1981 թ. [Պր.] 3/[Պատ. խմբ.՝ Լ. Ա. Հովսեփյան].—1990.—314 էջ.*

Աշխատանքում հետազոտվում են հայոց լեզվի հնդեվրոպական ծագման բայերի առանձնահատկությունները, հայկական միջնադարյան աղբյուրներում վկայված՝ Հայկական լեռնաշխարհի ջրանունների ծագումնաբանական շերտերը և կառուցվածքային առանձնահատկությունները, հին հայերենի (V դ.) բառապաշարի հնչյունական, ձևաբանական և բառակազմական տարբերակները, Նաղաշ Հովնաթանի լեզվի, որպես վաղ աշխարհաբարի արտահայտության, բառային, ձևաբանական, շարահյուսական և իմաստաբանական առանձնահատկությունները։

Հասցեագրվում է հայոց լեզվի պատմության հարցերով հետաքրքրվողներին։

ԳՄԴ 81. 2Հ

4602020100
Հ ———————74—90
703 (02)—91

ISBN 5—8080—0184—6

© Հայաստանի ԳԱ հրատարակչություն, 1991

Լ. Շ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԲԱՌԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ V ԴԱՐԻ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Յուրաքանչյուր ժամանակային կտրվածքում լեզվի բառապաշարը առկայանում է բառային տարբերակներով։ Բառային տարբերակներ հասկացությունը կարելի է ըմբռնել տարբեր կերպով՝ ընդլայնելով կամ նեղացնելով սահմանները։ Ինչպես ընդունված է լեզվաբանական մի շարք աշխատություններում, մենք նույնպես բառային տարբերակներ ենք դիտում այն բառախմբերը, որոնք դրսևորում են իմաստային նույնություն ու հնչյունական որոշ զանազանություն։ Գրաբարի համար հմմտ. պաճ-պարճ, ամօթխած-ամօթղած, բեմ-բեմբ, աջողութիւն-յաջողութիւն և այլն։

Բառային տարբերակների գոյությունը կենդանի խոսքի արգասիք է, լեզվի զարգացման յուրահատկության դրսևորում։ Տարբերակների քանակական և որակական առանձնահատկությունների բացահայտումն արդեն իսկ որոշակիորեն նպաստում է բառապաշարային իրողությունների վերհանմանը։ Բայց ուսումնասիրությունը ավելի է կարևորվում այն դեպքում, երբ տրվում են դրանց գործառական-ոճական, նրբերանգային հատկությունները, առաջացման պատճառները և այլ հարակից հարցեր, որոնք միշտ չէ, որ կարող են ճիշտ և անառարկելիորեն լուսաբանվել։

Յուրատեսակ դժվարությունների հետ է կապված նաև տարբերակների դասակարգումը։ Այս հարցում լեզվաբանության մեջ ընդհանուր սկզբունք չկա։ Ընդհանրական սկզբունքի կամ ելակետերի բացակայության հիմնական առարկայական պատճառն այն է, որ լեզուներում տարբերակների բնույթը և տարբերակների առաջացման ուղիները նույնական չեն՝ կախված լեզուների պատմական զարգացման և քերականական կառուցվածքի յուրահատկություններից։ Ոչ-առարկայական պատ-

ճառը ուսումնասիրողի հայեցակետն է, տարբերակներ հասկացության անհատական ըմբռնումը։ Ինչպես նկատում է Կ. Գորբաչևիչը, «Տարբերակների հարցը վերջին տարիներին դառնալով շատ լեզվաբանների ուշադրության առարկա, շարունակում է մնալ տեսականորեն քիչ տարորոշված, պրակտիկորեն քիչ ուսումնասիրված։ Լուծված չէ դեռևս ուսումնասիրվող օբյեկտի սահմանների վեճը, որոշված չէ նրա տեղը լեզվի գիտական նկարագրման համակարգում ... Վիճելի է մնում տարբերակայնության փաստերի ընդհանուր գնահատականը» (Горбачевич, 1978, 3)։ Գորբաչևիչի գրքում ըստ ամենայնի ներկայացվում է արդի ռուսերենի տարբերակների դասակարգումը։ Սակայն հայերենի նյութը ամբողջապես չի համապատասխանում այդ համակարգին։ Այսպես, աշխատության երրորդ գլուխը (53—118) վերաբերում է բառի շեշտային տարբերակներին (акцентные варианты слова)։ Նման դասակարգումը, ինչ խոսք, ռուսերենի նյութից է բխում, և այդ դասակարգման տակ բացահայտվում են հետաքրքրական ու կարևոր իրողություններ. սակայն այն հայերենի համար բոլորովին աննպատակահարմար է, քանի որ վերջինըս շեշտադրական բառաձևեր չունի, էլ չենք խոսում այն մասին, որ դըրանք ավելի շատ արտասանական տարբերակներ են, որոնք հատկապես V դարի նյութի համար կիրառելի չեն։ Ռուսերենում հաճախական են նաև կերպային և սեռային հակադրությամբ առկայացվող տարբերակները, որոնք դարձյալ հայերենում չկան։

Տարբեր լեզուների ընձեռած նյութի և ուսումնասիրողի մոտեցման ընդհանուր եզակետը այն է, որ բոլոր դեպքերում հաշվի է առնըվում տարբերակների բառիմաստային ընդհանրությունը կամ նույնությունը։

Մեր նպատակը չհամարելով տալու բառային տարբերակների վերաբերյալ գոյություն ունեցող սահմանումները և դրանց քննարկումը, ներկայացնենք Է. Աղայանի ձևակերպումը, որը բավականին ընդգրկուն է ու ամփոփ։ «Բառային տարբերակներ կամ բառատարբերակներ ասելով հասկանում ենք միևնույն բառի հնչյունական (ձևական), բառակազմական կամ ձևաբանական այն բոլոր տարբեր ձևերը կամ զուգահեռները, որոնք լեզվի մեջ գործող գործընթացների հետևանքով և որոշակի ներլեզվական օրինաչափությունների թելադրանքով հանդես են գալիս տվյալ փուլում, անկախ նրանց գործածությունից, կանոնականությունից, գործառական ու սոցիալական բնութագրերից» (Աղայան, 1984, 148)։ Այնուհետև Է. Աղայանը իրավացիորեն նկատելով, որ բառատար-

բերակների մեծագույն մասն են կազմում բաղադրյալ բառերը, ներկայացնում է տարբերակների զանազան տեսակները (149—166)։ Քանի որ մեր նյութը ընդգրկում է որոշակի ժամանակահատված, կաշխատենք պայմանական որոշ դասակարգումներով ավելի մանրամասն ներկայացնել այն՝ ըստ հնարավորին որոշ բացառություններով ու մեկնաբանություններով։ Աշխատանքի բնույթով ու նպատակներով պայմանավորված է. Աղայանը տարբերակներ հասկացության ավելի լայն սահմաններ է ընդունում, դրանց մեջ ներառելով նաև ճատապտղանոց–ճատապտղարան, ճեֆիաքային–ճեֆիաքական, արևախաչ–արևախանձ տիպի կազմությունները (149—151), որոնք մենք տարբերակներ չենք դիտում։ Սրանք տարբեր ածանցներով ու արմատներով կազմություններ են, տարբեր բառեր, և նպատակահարմար է դրանց անդրադառնալ հոմանիշ ածանցների ու արմատների քննության ժամանակ, որն այլ հարց է։ Չենք անդրադառնա նաև, այսպես կոչված, հավելադրական բարդություններին՝ ճեղել–ջրճեղել, երամ–թռչներամ, կիրճ–լեռնակիրճ և այլն։

Քննության չենք առնում նաև խոնարհման և հոլովման համակարգի որոշ զուգաձևություններ (միևնույն բառի տարբեր հոլովիչներ, ել/իլ փոփոխակները և այլն)։ Սրանք ըստ էության ոչ թե բառային տարբերակներ են, այլ ինչպես իրավացիորեն նկատում է Լ. Գրաուդինան՝ ձևի տարբերակներ (Граудина, 1980, 110)։

Բառային տարբերակները, ըստ էության, շեղումներ են լեզվական նորմայից։ Ընդհանուր լեզվաբանական բնույթի հետազոտություններում բազմիցս արծարծվում է լեզվական նորմայի հարցը, փորձեր են արվում տարբերակելու գրավոր լեզվի նորմա և գրական լեզվի նորմա հասկացությունները։ V դարի համար այդ տարբերակումը խիստ պայմանական է։ Մենք չենք կարող ըստ էության բազմաթիվ ու որակապես նոր հատկանիշներ առաջադրել V դարի գրաբարի գրական և գրավոր լեզվի սահմանների ճշտման և այդ հասկացությունների բնութագրման համար։ Լեզվաբանության մեջ շրջանառության են դրվում նաև ժողովրդախոսակցական լեզվի, բարբառների, գրավոր և բանավոր խոսքի նորմա հասկացությունները։ Սրանց տարբերակումը հեշտ է արդի լեզուների համար, պատմական կտրվածքով այդ տարբերակումը դժվարանում է՝ համապատասխան նյութի և այդ նյութի հավաստիության բացակայության պատճառով։

Նորման գրական լեզվի հիմնական հատկանիշն է. լեզու, որ պատմականորեն ձևավորված ազգային լեզվի բարձրագույն (մշակված) ձևն

է, հարուստ բառաֆոնդով, կայուն քերականական կառուցվածքով, զարգացած ոճային համակարգով։ Նորման գրական լեզվի բարդ կառույցի այն կապող օղակն է, որ կարգավորում է լեզուն, ապահովում նրա համընդհանրությունը (Горбачевич, 36)։

Քանի որ մեր աշխատանքը վերաբերում է գրաբարի բառապաշարին, ապա բնականաբար բառապաշարային նորմայի հարցն է մեզ հետաքրքրում։ Մի առիթով Հ. Աճառյանը գրել է. «Երբ մի բառը կրկնակ ձև ունի, անշուշտ մեկը սխալ է. իսկ այդ սխալը գտնելու միակ միջոցն է ստուգաբանությունը» (ԳԱ տեղեկագիր, 1940, 4, 71)։ Այս պնդումը ճիշտ է միայն բառի ծագման հարցը և ստուգաբանորեն ճիշտ ուղղագրությունը բացահայտելու տեսակետից։ Սակայն հենց V դարի կտրվածքով մի շարք տարբերակների դեպքում (բանտ-բանդ, ջերմ-ջերմն...) դժվար է նախապատվությունը տալ մեկին, կամ մյուսը համարել գրական նորմայից շեղում։

Այո, ստուգաբանորեն այդ ձևերից մեկը ճիշտ է ու նախընտրելի, բայց V դարի կտրվածքով, ո՞րը համարել կանոնական ու ճիշտ, ո՞րը շեղում գրական նորմայից։ Այս հարցում էական դեր չի խաղում նաև բառաձևերի հաճախականությունը, էլ չենք խոսում այն մասին, որ նույն հեղինակը կարող է օգտագործել և՛ մեկ, և՛ մյուս ձևը։ Խոչընդոտ է մի այլ հանգամանք ևս։ Ե. Իստրինայի այն ձևակերպումը, թե «նորման որոշվում է գործածության աստիճանով, երբ սկզբնաղբյուրը հավաստի է» (Истрина, 1948, 19) լուրջ նկատառում է։ Այո՛, սկզբնաղբյուրը խիստ կարևոր է։ Ինչքանո՞վ է այն ճիշտ ներկայացնում տվյալ ժամանակաշրջանի լեզվական իրական պատկերը, ի՞նչ շեղումներ ու նորամուծություններ կան։ Սկզբնաղբյուրի հավաստիությունը լուրջ նախապայման է հատկապես V դարի լեզվական իրողությունների ուսումնասիրման համար, որովհետև մեր ամենավաղ ձեռագրերը IX դարից են, որոնցում այս կամ այն չափով աղավաղված է V դարի նյութը, շրջանառության են դրված ձեռագրի ժամանակաշրջանի լեզվական որոշ փաստեր։ Հանգամանք, որ դժվարացնում է ուսումնասիրողի գործը՝ սթափ պահում որոշ անվերապահ եզրահանգումներից։ Այս դժվարությունը պետք է հաշվի առնել, բայց նաև կարողանալ ըստ հնարավորին հաղթահարել։ Նախ՝ լեզվական մի շարք հետամուտ իրողություններ տարբերակելի են, և այդ գործում հայագիտությունը բավականին ձեռքբերումներ ունի։ Երկրորդ՝ հայ բազմադարյան գրչագրության փորձն ու ավանդույթները հաստատում են, որ երևի մի չգրված օրենք է եղել

նախատիպ ձեռագրին հարազատ մնալը։ Գրիչների նպատակն է եղել ոչ թե ստեղծագործելը, այլ տվյալ ձեռագիրը բծախնդիր ներկայացնելը։ Սա կարևոր հանգամանք է։ Երրորդ՝ լեզվական փոփոխությունները կարճ ժամանակահատվածում չեն կատարվում։ Եթե ասենք, VI—VII դարերի վիմական արձանագրություններում, կամ IX—X դդ. ձեռագրերում հանդիպում ենք այս կամ այն իրողություններին, ապա բացառելի չէ դրանց գոնե մի մասի գոյությունը V դարում։ Օրինակ, ի՞նչ երաշխիք ունենք պնդելու, որ հետագա դարերի ձեռագրերում ավանդված գրքային ու փոխազդեցական հնչյունափոխական երևույթները (մանգ-մանկ, աստիճան-աշտիճան...) V դարում չեն գործել։

Եթե, իրոք, V դարում կար գրության և արտասանության լրիվ համապատասխանություն, ապա բնականաբար տարբերակների գոնե մի մասի գոյությունը այդ դարում պետք է բացառել, բայց չէ՞ որ լեզուն օրենքներից զատ ճանաչում է և բացառություններ, էլ չենք խոսում բարբառային արտասանության (և համապատասխան գրության) հնարավորության և այլ կարգի գործոնների մասին, որոնք կարող էին դառնալ տարբերակային ձևերի առաջացման պատճառ։

Եվ, վերջապես, քանի որ տարբերակները մեր մատենագրության մեջ (ձեռագրերում ու հրատարակություններում) ամրագրված են որպես V դարի իրողություն, ապա անկախ ժամանակագրային հավաստիությունից, մենք դրանց պետք է անդրադառնանք։

Բառային տարբերակների քննության համար որոշ ուղեցույց են գրաբարի բառարանները, որտեղ կանոնական դիտվող ձևերը տրվում են որպես գլխաբառ, ապա նշվում տարբերակները՝ եթե այդպիսիք կան։

Բառային տարբերակներ տերմինին զուգահեռ լեզվաբանական գրականության մեջ օգտագործվում են զուգաձևեր, զուգաձևություններ, տարբերակային ձևեր տերմինները (Ս. Սարգսյան, 1987)։ Մենք նույնպես կիրառում ենք դրանք։

I. ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

1. Ձայնավորային փոփոխություններով զուգաձևեր

Ա/Ո։ խոհարար-խահարար, խոհակեր-խահակեր, յովանակ-յաւանակ, բովանդակ-բաւանդակ։ Նշված բառերը իրանական փոխառություններ են։ Հնչյունափոխությունը հայերենում չի կատարվել, ամենայն հավա-

նականությամբ այդ բառաձևերը հայերենին են անցել իրանական տարբեր սկզբնաղբյուրներից։ Այլ կարգի օրինակներ են. յոխորտիմ-յախորտիմ (ծագումը հավաստի չէ)։ Մոլար (Եղիշե, 37, 55) -մոլոր (Եղիշե, 17)։ Պատառատուն-պատառոտուն (Ագաթ.)։ Փաղփաղեմ-փողփողեմ։ Ա/Ո տարբերակներն են ներկայացնում նաև -նամ-նոմ ածանցները և դրանցով կազմված մի շարք բառեր, որոնք կքննվեն այլ տեղում։ Որպես գործիական հոլովի ցուցիչ մի խումբ բառերում հանդես է գալիս և՛ աւ-ը, և՛ ով-ը, որոնք թեև ձևաբանական ցուցիչներ են, բայց, վերջին հաշվով, առկա է ա/ո հնչյունական փոփոխությունը՝ ճեպաւ (Փրպ. 154)— ճեպով (Փրպ. 4, 23), ցորենաւ-ցորենով, ստիպաւ-ստիպով*։

Ա/Ե։ Այս հնչյունական զուգաձևերը ներկայացնող բառախմբերի թիվը մեծ չէ, և այդ խմբերն էլ տարաբնույթ են։ Ասղանի-ասղենի, ապարասան-ապերասան, երախայ-երեխայ, զրադաշտ-զրադեշտ, իջաւան-իջեւան, ճապճեպ-ճեպճեպ (Բուզ. 115), լաշկամաշկ-լեշկամաշկ, վսեմ-վսամ, զրահ-զրեհ։ Ասղանի-ասղենի զույգում հաճախականը առաջինն է, ասղենի ունի Մանդակունին (ԻԶ, 191)։ Իրանական kar «գործել, անել» ներկայի kar և անց. կատարյալի kert, նաև var «ծածկել»-ի ներկայի var և կատարյալի vert ձևերը որպես բարդության բաղադրիչներ առկայանում են հայերեն մի քանի բառերում. վնասակար, օգտակար-աղօրկեր, խոհակեր, սաղաւարտ, վարտիք-վերտ և այլն։ Ա-ն և Ե-ն մի շարք բառերում նախահավելվածներ են։ Արագ-երագ, Արաքս-Երասխ, արաստոյ-երաստոյ, աղտիւր-եղտիւր, աղիճ-եղիճ։ Նախահավելվածներ ունեն և՛ բնիկ, և՛ իրանական ծագում ունեցող բառերը։ Նախահավելվածները բնորոշ են հ.-ե. մի քանի լեզուների (հունարեն, իրանական լեզուներ), այն նաև զուտ հայկական երևույթ է և գործել է վաղնջական շրջանում։ Երգ, արջ, առիծ ... նախահավելվածավոր հին կազմություններ են, որոնց նախաձևը առանց հավելվածի է։ Նախահավելվածների ծագման և բնույթի հարցը շոշափվել է հետազոտողների կողմից։ Ենթադրվում է, որ իրանական փոխառություններում հանդես եկող տարբեր նախահավելվածները ներկայացնում են իրանական տարբեր աղբյուրներ (REA, 1966, 1968)։ Է. Աղայանի կարծիքով ա, ե, նախահավելվածները հին բարբառային երևույթներ են՝ բարբառների մի տարածքում ա, մյուսում՝ ե (Աղայան 1958, 70)։ Դ. Կոստանդյանի կարծի-

* Որոշ բառերի վկայություններ թեև չեն նշվում, բայց դրանք ստուգված են ՆՀԲ-ով կամ Արմ-ով և V դարից վկայված ձևեր են։

քով Հ.-ե. ծագման բառերում վերականգնվող նախաձևի բառասկզբի ա-ի դիմաց բարբառներում հանդես եկող ե ձայնավորը արդյունք է նախաձայն յ-ի հավելման և դրա հետևանքով առաջացած համապատասխան հնչյունափոխության, իսկ գրաբարյան ե-ի դիմաց բարբառներում հանդես եկող ա, ռ ձայնավորները արդյունք են առնմանական հնչյունափոխության (Կոստանդյան, 1987, 90—91)։ Երբեմն նախահավելվածի դերում է ի-ն։ Եթե իշխանը, իրոք, իրանական փոխառություն է՝ xši- ձևից, ապա ուրեմն ի-ն նախահավելված է (իշխանի ոչ իրանական բնույթի մասին տե՛ս Հովհաննիսյան Լ. 1989)։ Գրաբարում հաճախական է իրան «մարմնի մաս» ձևը, որոշ ձեռագրերում կա և երան։

Նկատելի է, որ արդեն V դարից իրանական փոխառությունների մեջ կան իմաստային նրբին զանազանություններ։ Առասանակ «պարան, լար, թել» — երասանակ «սանձ», ram արմատից ունենք ռամիկ և երամ (ր>ռ հնչյունափոխությունը կատարվել է իրանական լեզուներում)։

Մեր կարծիքով ե/ա նախահավելվածների բնույթը միանշանակ չէ, այն զուտ հայկական լինելով, իրանական փոխառություններում կարող է վկայված լինել հենց փոխատու աղբյուրից։

Ա/Ը։ Մեզ հայտնի է մի զուգաձևություն՝ անդաճել-ընդաճել «քննել, մտածել», «Յորժամ սկսաւ անդաճել և քննել զամենայն ուսմունս և հաստատութեամբ ի վերայ եհաս, առաւել վեհ գտանէր զօրէնս քրիստոնէից» (Եղիշե, 83)։ Ընդաճեմ-ը նույնպես Եղիշեի մոտ է. «Եւ հանդէս առնէր ուսմանց և ընդաճէր զմոգութիւնն և զքաղդէութիւնն և զամենայն ուսմունս աշխարհին իւրոյ» (151)։ Երկու բառաձևերի իմաստային նույնությունը ակնհայտ է։ Ստուգաբանորեն ճիշտը անդաճել-ն է, որ իրանական փոխառություն է ըստ Արմ-ի պհլ. andāčišn ձևից (išn-ն ածանց է)։ Ամենայն հավանականությամբ ընդաճել-ը հետագա գրչություն է, երբ գրիչը շփոթել է անել-ի հետ և ավելացրել ընդ նախդիրը։ Եղիշեն այդ չէր կարող անել, որովհետև նա քաջատեղյակ էր պարսկերենին, գիտեր և անդաճ-ի իմաստը ու կողքը դրել է հայերեն քննել համանիշը (Եղիշեի քննական բնագրում նշվում է, որ շատ ձեռագրեր ունեն անդիճել ձևը)։

Ե/Է։ Աղուէս-աղուես, ապենիազ-ապէնիազ, ամեն-ամէն, բենեզ-բենէզ, դեն-դէն (Խոր. 299. 301), Գնէլ-Գնել (Բուզ. 98, 102), Ներսէհ (Փրպ. 67. 72) — Ներսեհ (Փրպ. 127, 128), մեց-մէց, յետ-յէտ, խնենչ-

խնձէշ: Վերը նշված որոշ զուգաձևությունների ուղղագրությունը արժանացել է հետազոտողների ուշադրությանը: Ամէն բառի մասին Աճառյանը գրում է «հնագույն արմատական ձևն է, որ ընտիր մատենագրության մեջ հազվադեպ գործածություն ունի… Վարդանյանը (ՀԱ, 1913, 118) ցույց է տալիս, որ բոլոր ոսկեդարյան ամէնները «ամ» համառոտագրության հետին սխալ ընթերցվածներ են և ոսկեդարում չկար ամէն բառը, այլ միայն ամենայն: Այս բոլորը չեն խանգարել սակայն ընդունելու, թե բառս արմատն է Ամէն, որ հետնաբար սովորական գործածություն է ստացել» (տե՛ս Արմ. ամէն բառի տակ):

Ժէտ/Ժետ-ը իրանական փոխառյալ արմատ է, որը սակայն անկախ կիրառություն չունի և հանդես է գալիս բառակազմության ժամանակ: Է. Աղայանը կարծում է, որ ժէտ/ժետ, նաև ժուտ սխալագրություններ չեն, այլ գալիս են հին իրանական անորոշ դերբայների համապատասխան ձևերից (Աղայան, 1974, 74—75): Այս կարծիքը քիչ հավանական է: Եվ ընդհանրապես է/ե տարբերակների դեպքում ստուգաբանական դիտողություններից զատ պետք է հաշվի առնել ե- և է-ի արտասանական ընդհանրության գործոնը, որը շատ դեպքերում արտահայտվել է և ուղղագրության մեջ: Իսկ արդեն V դարում է-ի պարզ ձայնավորի վերածվելու, հետևաբար է-ե-ի արտասանական ընդհանրությունը կարելի է ապացուցված համարել: Է. Աղայանը է-ի պարզ ձայնավորի վերածվելու շրջանը համարում է V դարի երկրորդ կեսը (Աղայան, 1964): Բայց քանի որ լեզվական երևույթները միանգամից չեն կատարվում, ուրեմն բացառելի չէ գրավոր մատենագրության շրջանից է-ի պարզ ձայնավորային բնույթը (նկատված է, օրինակ, որ հուն. ε-ն երբեմն տառադարձվել է է-ով (փխն. ե), իսկ η-ն ե-ով (փոխ. է), (Գյուլբուդաղյան, 1971, 94): Վերջապես այնքան էլ երկրորդական չպետք է համարել այն փաստը, որ ե-ով որոշ բառեր հնչյունափոխվում են ի, հմմտ. դեւ-դիւաց (ինչպես գիտենք օրինաչափ հնչյունափոխությունը է>ի-ն է): Աղայանը կարծում է, որ նախապես եղել է դէւ: Ուղղական հոլովում էւ-ը դարձել է եւ, որովհետև հայերենը չուներ էւ կապակցությունը (Աղայան, 1964, 137):

Ե/Ի: Բաբելոն, բաբելացի-բաբիլացի, Գադիշոյ (Եղիշե, 927), Գադեշոյ (Եղիշե, 43), մանանեխ-մանանիխ, շառաւեղ (վկ. 157)-շառավիղ, ջեղ-շիղ, շեղջ-շիղջ, շեփոր-շիփոր, պեղծ-պիղծ…: Շիղջ տարբերակով ՆՀԲ-ն V դարից վկայություն չունի: Բայց վկայված են ջրաշեղջ-ջրաշիղջ ձևերը: «Գետոց և աղբերականաց և մօրաց և ջրաշեղջաց» (ՆՀԲ):

«Ջաղբիւր չարեացն թողեալ և ջրաշիղջան սրբել կամիմք» (Ոսկ., Մ. ա. 14)։

Ո/ՈՒ։ Լողակ-լուղակ, կաթողիկոս-կաթուղիկոս (Բուզ.), (եթե վերջինս վրիպակ չէ)։

Ո/Ի։ Անորոշ-անորիշ: Անորիշը բնորոշ է թերևս գիտական ոճին։ «Ձայն անորիշ և անզանազան ըստ ինքեան նշանակումն» (Փիլ. լին. 210)։ «Անհատքն անբաւք և անորիշք են առ ի թուել» (Դ. Անհաղթ, ՆՀԲ)։

Ո/Օ (ու)։ Քող-ֆօղ և սրանցով կազմված բարդություններում՝ ֆողածիգ-ֆօղածիգ, Պողոս-Պաւղոս, լող-լօղ: Ենթակայական գերբայի ող և աւղ-ը նույնպես ազատ լծորդություններ են։ Դրանք ունեն տարբեր ծագում, բայց իմաստային նույնության պատճառով հանդես են գալիս որպես փոփոխակներ։ Գ. Ջահուկյանի կարծիքով «այն հանգամանքը, որ -աւղ-ի հետ միասին հանդիպում է նաև -ող գրությունը, կամ արդյունք է -աւղ-ի վաղ բարբառային մենաբարբառացման կամ, թերևս *āflo-ից ծագող -աւղ-ի և *alo-ից ծագող ող-ի խառնվելու» (Ջահուկյան, 1987, 240)։ Ոճիւ-աւճիւ (Վկ. 111) զույգում, եթե վերջինս հետին գրչագրություն չէ, ապա բարբառային արտասանություն է։

ՈՒ/Օ։ Արտոնութիւն-արտօնութիւն, գործուն(Վնց.)-գործօն(Եզն.), գործունեայ-գործօնեայ, հուժկու-հօժկու, ուրկանոց-օրկանոց: Ուրկանոցի V դարի վկայության փաստ չի արձանագրված, բայց կա ուրկութիւն, ուրկոտութիւն: V դարից վկայված է օրկանոց, իսկ օրկութիւն չկա։ «Նոցուն կարգեցին օրկանոցս և դարմանոց ռոճիկս» (Բուզ., 64)։ «Այլ անդէն ի հանգստեան նոցին, այս ինքն յօրկանոցսն, ամենայն մարդիկ տանէին զամենայն պիտոյս նոցա» (Ն. տ., 193)։ Օրկանոց ունի և Ոսկեբերանը (Մեկն. Եա., 139)։ Արմ-ը ուրկ- (աւրկ) արմատներից որպես գլխաբառ դնում է ուրուկ-ը: Եթե սա կանոնական ձև է, ապա օրկանոց-ը բարբառային պետք է դիտել։ Հանդիպում է և ձօնի-ձունի (Ոսկ. Եա., 352) տարբերակը։

ՈՒ/Ի։ Այս կարգի զուգաձևությունների թիվը մեծ չէ. ջինջ-ջունջ, կաթ-կութ, մանուշակ-մանիշակ: «Ձի՞ կամօք անջունջ ադիտանաս վրիպեալդ առանց թողութեան» (ՆՀԲ), «Անջինջ արձակեալ է» (Փիլ. ՆՀԲ)։ «Իբրև զխակակութն տարաժամ կթեսցի» (Յոբ. ԺԵ, 33), «Որ խակակիթ առնէ զայգի իւր, խաբի նա ի խաղող ուտելոյ» (Ձգոն, 148)։

Ջունջ/ջինջ, կութ/կիթ և նման բառերում ձայնդարձի հնատիպ երևույթի առկայությունն է։ Մանուշակ-մանիշակ-ի համար ենթադրվում

է փոխառության տարբեր աղբյուրներ, բայց կարելի է կարծել, որ մաճիչակ-ը նաև ժողովրդախոսակցական-բարբառային ձևն է եղել։ Մանավանդ, որ արդի բարբառների մեծ մասում այդ ձևն է։

* * *

Կան մի շարք զուգահեռներ, որոնցում առկա է որոշ ձայնավորների հավելում կամ անկում՝ ճռեշտակ-ճրշտակ: Կանոնականը և հաճախականը ճռեշտակ-ն է, որը և որպես գլխաբառ նշվում է Արմ-ում և ՆՀԲ-ում։ V դարի մի շարք գործերում հանդիպում է ճրշտակ: «Ելաք ի կարգս հրշտակաց» (Եւս. Եմես, ՀԱ., 1958, 16, 470), Աթանաս (96, 353, 354)։ Կա նաև Ոսկեբերանի մոտ (տե՛ս Բանբ. Մատենադ., 1986, 15, 266—273)։

Հռեշտակ բառի մասին Աճառյանը, կրկնելով Հյուբշմանին, գրում է. «Հայերենի մեջ հրեշտակ համապատասխանում է իրան. firešta-freštak, իսկ նորագույն frištak ձևը տալիս է հիրիշտակ>հրըշտակ. երկուսն էլ գործածական միայն գաւառականների մեջ» (Արմ.)։ Հստակ չէ, թե Աճառյանը նորագույն frištak ասելով նկատի ունի նոր պարսկերենը, թե՞ միջին իրանական փուլի ուշ շրջանը։ Քանի որ V դարից ունենք ճրշտակ-ի բազմաթիվ վկայություններ՝ տարբեր հեղինակներից, ապա իրավունք չունենք այն համարելու նոր բարբառային երևույթ, կամ հետագա գրչագրության արդյունք։ Դա կամ հին բարբառային, կամ էլ իրանական այլ աղբյուրից եկող ձև է։

Վճուկ-վոճուկ: Հաճախականը վճուկն է: Կան օրինակներ վոճուկով, որոնք չկան ՆՀԲ-ում։ «Եթէ ասիցեն զձեզ. խնդրեցէք դուք զվոհուկս և զգետնակոչս և զընդվայրախօսս, զորովայնակոչս (Ոսկ. Ես., 105)։ «Եւ եթէ զինչ ինչ վոհուկն իցէ պարտ է ասել» (100), (տե՛ս նաև 107, 173, 312...)։ Վոճուկ կա և Եփրեմ Ասորու ճառերից մեկում. «Ջի չէն լի է վոհկաւք» (Սիոն, 1929, 79)։ Վճուկ-ը իրանական փոխառություն է, որի ստույգ նախաձևը հայտնի չէ։ Վոճուկի համար կարելի է տեսնել լիաձայնության դրսևորում, բայց հակված ենք կարծելու, որ իրանական ավելի հին ձև է, մանավանդ որ Ոսկեբերանի մոտ այդպիսի ձևեր էլի կան. բարձանել, վիրճ...։

Մի շարք բառեր ներկայանում են բառավերջի ի-ով։ Դրանդ-դրանդի, երկրոյս-երկրուսի, լորամարգ-լորամարգի, ծարաւ-ծարաւի, ճակատատեղ-ճակատատեղի, տեղ-տեղի, ճիւսիս-ճիւսիսի։

Արծուի, տեղի, ճիւսիսի, պատասխանի բնորոշ է համարվում դա-

տական գրաբարին: Վ. Առաքելյանը գտնում է, որ հետդասական շրջանում էլ հաճախականը ի-ով ձևերն են (Առաքելյան, 1981, 94—95):

Անց. կատարյալի եզակի թվի երրորդ դեմքում որոշ բայեր ստանում են ե և երբեմն հանդես են գալիս առանց ե-ի. սպան, ստեղծ, եսպան, եստեղծ (որոշ ձեռագրերը նաև է. էստեղծ (Իսիք. գ. 170): Սրանց շարքում չպետք է դնել գնաց-էգնաց (Փիլ. այլբ. 170) տիպերը, որովհետև վերջիններս այլ երևույթ են՝ հունաբան դպրոցի նորամուծություն: Հ. Մուրադյանի կարծիքով եսպան, եստեղծ ձևերը հետին դարերից են ավանդված (Մուրադյան Հ., 1982, 138):

Գրաբարում մի շարք ձայնավորների փոփոխություններ պայմանավորված են շեշտով: Շեշտափոխության նկատմամբ ավելի զգայուն են է, ու ձայնավորները է>ի, ու>ը (զրո), թեև կան այլ տիպի փոփոխություններ: Առկա են և՛ հնչյունափոխված և՛ անհնչյունափոխ զուգաձևերը:

է/ի: Դէզադէզ-դիզադէզ, գէշաքարշ-գիշաքարշ, երէցութիւն-երիցութիւն, սակաւապէտութիւն-սակաւապիտութիւն, տէրութիւն-տիրութիւն: Ուրեմն՝ է>ի-ն բացարձակ կանոն չէ. հմմտ. նաև՝ էշայծեամ, բայց՝ իշամեղու, իշակէս, իշամտրուկ, զէնընկէց, բայց՝ զինակիր, զինակից:

ի/ը: Անինչըստացիչ (Կիւրղ, 35), անընչստացիչ, ինքնամարտ-ընքնամարտ, հինգակատար-հնգակատար:

Ձայնավոր/երկբարբառ տարբերակներ

Ա/եա: Ախոյեան-ախոյան, արտորայ-արտորեայ:

«Կործանին վատանուն յախոյանէ անտի» (Եղն., 57.): «Իբրև զախոյեան նահատակ ի տղայութենէ տիոց նշկահէր» (Բուզ., 27): Այս զույգի վիճակագրությունը որոշակի բան չի ասում անդամներից մեկի հաճախականության կամ կանոնականության մասին: Եղնիկը գործածում է միայն ախոյան (չորս անգամ), Ագաթանգեղոսը միայն ախոյեան (երկու անգամ), Բուզանդը՝ ախոյան (3), ախոյեան (3 անգամ):

Ե/ԵԱ: Աղօրկեր-աղօրկեար, անխայեմ-անխայեամ, գեհեն-գեհեան: (Փրպ., 138. 150), խարտեշ-խարտեաշ, լեռնական-լեառնական, լեռնակողմն-լեառնակողմն, լեռնադաշտ-լեառնադաշտ, սարեկ-սարեակ, բըդեշխ-բդեաշխ... «Զդուստր իւր զԱրտաշամայ տայ կին Միհրդատայ ումեմն վրաց բդեշխի մեծի» (Խոր., 121), «Նահապետութիւն անուն կարգայ բդեաշխ Գուգարացւոց, որ էր լեալ ի զաւակէ Միհրդատայ» (Խոր., 114): Խորենացին բդեաշխ կիրառել է 6 անգամ, իսկ բդեշխ՝ 4:

Բառաբարդելիս Խորենացին ունի բդեշխություն: Նկատելի է, որ բդեշխ-ը առավել հաճախական է հոլովված ձևերով՝ ոչ ուղղական: Նախնական բդեաշխ ձևը ենթարկվելով եա>ե հնչյունափոխական օրինաչափությանը, դարձել է բդեշխ, որն արդեն V դարում (եթե բդեշխ-ը հետին ձեռագրական նորակազմություն չէ) կայուն կիրառություն ուներ: Պատահական չէ, որ Արմ-ը որպես գլխաբառ նշում է և՛ բդեշխ և՛ բդեաշխ ձևը:

Ե/ԱՅ: Մենաւոր–միայնաւոր, մենակեաց–միայնակեաց:

ՈՒ/ԻՒ: Ակումիտ–ակիւմիտ, թունաբեր–թիւնաբեր, թունաւոր–թիւնաւոր (Եղիշե, 7. 16), թունաթափ–թիւնաթափ, փայլածուն–փայլածիւն, փայլուն–փայլիւն, խուղ–ճիւղ:

Ի/ԻՒ: Դիցապաշտ–դիւցապաշտ, դիցազնական–դիւցազնական, եթիա–եթիւա, կիրակէ–կիւրակէ, շափիղայ–շափիւղայ, շիղ–շիւղ, ուղիղ–ուղիւղ, պիրամիդ–պիւրամիդ ...

Ենթադրվում է, որ ի պարզ ձայնավորի փոխարեն իւ երկբարբառը՝ ուղիղ հունական ազդեցության հետևանք է (Գյուլբուդաղյան, 1971, 102): Գ. Ջահուկյանը շիղ–շիւղ, ուղիղ–ուղիւղ տարբերակների դեպքում ենթադրում է ձայնավորների քմայնացման փաստի առկայություն, եթե ուշ գրչագրական ներմուծումներ չեն (Ջահուկյան, 1987, 374):

Ի/ԵԱ: Գետնախշտի–գետնախշտեայ... Այս կարգի զուգահեռներ են նաև անձներական թվականները՝ երկոքին–երկոքեան, հնգեքին–հնգեքեան..., որոշյալ դերանունները՝ ամենեքին–ամենեքեան, բոլորեքին–բոլորեքեան...:

ՈՒ/ՈՅ զուգաձևերը հնչյունափոխական են. առոյգութիւն–առուգութիւն, գերագունութիւն–գերագոյնութիւն, անփութութիւն–անփոյթութիւն (օրինակները քաղել ենք՝ Հովսեփյան, 1987, 84):

Երկբարբառային տարբերակներ

Սրանք ներկայանում են հիմնականում եւ–իւ փոփոխությամբ: Աղբեւր–աղբիւր, աղբեւս–աղբիւս, ալեւր–ալիւր, առեւծ–առիւծ, բեւր–բիւր, գեւղ–գիւղ, եղջեւր–եղջիւր, եղտեւր–եղտիւր, երկեւղ–երկիւղ, եւղ–իւղ, մեւս–միւս, ճարեւր–ճարիւր. «Ոչ իւղով, այլ հոգւով և զօրութեամբ. զի եթէ եւղով ի մարդկանէ էր օծեալ...» (Ոսկ. ես, 452): Վ. Առաքելյանի վիճակագրության տվյալների համաձայն Եզնիկը գործածել է գեւղ (1 անգամ), Կորյունը այս բառի ուղղականը երեք անգամ է կիրառել, երկու անգամ էլ հոլովված ի գեղջէ ձևով: Ագաթանգեղոսը մեկ անգամ

ունի գեւղ, *հինգ անգամ՝* գեաւղ, *Բուզանդը 28 անգամ* գեւղ, *մեկ անգամ* գեաւղ *և մեկ անգամ* գիւղ *(Առաքելյան, 1981, 82)։ Վ. Առաքելյանի կարծիքով կանոնականը* գիւղ *ձևն էր, բայց* գեւղ, գեաւղ *ձևերը ավելի հաճախական են (ն. տ.)։ Երկբարբառների փոխարեն պարզ ձայնավորով ձևերը՝* գեղ, եղ, *եթե իրոք հետին գրչություններ չեն, անկասկած բարբառային ձևեր են։ Ոսկեբերանը ունի «Եղ ու մեղր, ասի կերիցէ» (Ոսկ., ես, 88), «Եւղ և մեղր կերիցէ» (նույն տեղում, էջ 15)։*

Հայագիտության մեջ իշխող կարծիքն այն է, որ եւղ-*ը* իւղ-*ի համեմատությամբ ավելի հին է։* Իւ-*ով ձևերը ըստ է. Աղայանի վաղ գրաբարում ավելի գործածական էին։ «Կարելի է ենթադրել, որ հնագույն շրջանում նախահայերեն բարբառների մի խմբում սովորական է եղել* եւ *վանկային բունը, որից անցել է դասական գրաբարին, բայց որպես ոչ կենսունակ վանկաբուն և այդ պատճառով էլ ատրիճանաբար դուրս է մղվել տեղի տալով* իւ *կամ* եաւ *վանկաբնին, համենայնդեպս, թեև արդեն մահացող, բայց դասական գրաբարում դեռևս երևան եկող վանկաբուն է* եւ-*ը, որ մերթ լծորդում է* եաւ-*ին, մերթ* իւ-*ին» (Աղայան, 1964, 105—106)։*

Ինչ վերաբերում է* իւ, եւ-*ից որևէ մեկի բարբառային լինելուն, ապա դա դեռևս կարոտ է պարզաբանման։

A 11/81887

2. Բաղաձայնական փոփոխություններով զուգաձևեր

Բաղաձայնական տարբերակները բավականին տարաբնույթ ու բազմազան են։ Ամենաընդհանուր ձևով դրանք կարելի է բաժանել երկու խմբի. ա) օրինաչափ հնչյունական փոփոխություններով, հնչյունների հավելումով կամ անկումով ներկայացվող բառաձևեր, բ) այսպես կոչված, ստուգաբանական կրկնակներ։ Վերջիններս զգալապես տարբերվում են նախորդներից, և դրանք մանրամասն քննված են մի շարք հետազոտողների կողմից (Բագրատունի, 1852, 650—652), (Ջահուկյան, 1984, Джаукян. 1967, 300—312)։ Ստուգաբանական կրկնակները նույնպես բաղաձայնական տարբերությունների հանգող ձևեր են, բայց դրանցում նկատվում է իմաստային զանազանություն, ժամանակագրային տարբեր կտրվածքների դրսևորում, այլև տարբեր լեզվավիճակային պատկանելություն. հմմտ. դալար-բոլոր, ստերջ-ստերդ, կաղ-քայլ, պախեմ *«եփել»* — պախանեմ, *«թխվածք»,* քան-հեմ *«ինչո՞ւ»,* ծու-

ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ

ղակ-խուղ, ծիրտ-շեռ, սալոր-շլոր, սարտնում-խրտնում, ներքան-լերքան և այլն։

Այս կարգի ձևերի համար Գ. Ջահուկյանը նշում է չորս աղբյուր. 1) համահնդեվրոպական և հնդեվրոպական բարբառային հերթագայության արտացոլում, 2) հնչյունական գործընթացների տարբեր ընթացք՝ տարբեր միջավայրում, 3) այլ լեզուների ազդեցություն, 4) հին բարբառային տարբերակների առկայություն (Джаукян, *1967, 300)։*

Մեր նպատակից դուրս է այս տիպի զուգահեռների քննությունը, միայն առանձին դեպքերում կնշենք որոշ օրինակներ՝ այլ նկատառումներով։

Կանդրադառնանք միայն V դարի կորվածքով ներկայացվող այնպիսի տարբերակներին, որոնք դիրքային, փոխազդեցական, պատմական հնչյունափոխության, դրափոխության բնորոշ դրսևորումներ են։ Նյութը ամբողջական ներկայացնելու միտումով կանդրադառնանք նաև իմաստով նույնական, բայց ոչ օրինաչափ հնչյունական տարբերակներին, որոնք հարում են ստուգաբանական կրկնակներին։

Խլություն-ձայնեղություն ներկայացնող տարբերակներ

Խուլ/ձայնեղ բաղաձայններով տարբերակներ.

Այս կարգի զուգաձևությունները հաճախական են V դարի մատենագրության մեջ։ Դեռևս Ա. Բագրատունին է նշում, որ «միջակըն բ, գ, դ, ձ, ջ փոխանակին երբեմն ընդ նուրբ լծորդսն կամ ձայնակիցսն պ, տ, կ, ծ, ճ, մանավանդ զկնի մ և ն տառից գրեթե նույնանան ձայնիւ ի մերս և ի հելլէն բարբառ» (Բագրատունի, 1852, 651—652)։ Այո՛, խուլ ձայնեղ անցումը նկատվում է հատկապես պ, տ, կ, բ, դ, գ-ի դեպքում, մ և ն ձայնորդների հարևանությամբ ու ազդեցությամբ, բայց նաև այլ դեպքերում։ Բերենք օրինակներ ըստ համապատասխան անցումների։

Գ/Կ։ Գայթագղութիւն-գայթակղութիւն, ընկնեմ-ընգնեմ, ընկեր-ընգեր, ընկոյզ-ընկգոյզ, ընկենում-ընգենում, ծունկն-ծունգն, մանկ-մանգ, մանկաղ-մանգաղ, պակշոտ-պագշոտ, վտանգ-վտանկ, ցանկ-ցանգ.... *«Իշխան Պարսից զԹշնամութիւնն ..., խորամանգեալ ծածկեալ ... բերէր» (Բուզ., 45)։ «...Թէ որպէս յետոյ խորամանկութեամբ Մերուժանայ Արծրունւոյ եղեւ ապստամբութիւն» (206)։ «Արմունկն ի ծունգ և ձեռն ի ծնօտի՝ նստաւ այնպէս» (Բուզ., 74)։ «Երան բարձր նորա ոչ յանձին և ի ծունկն ոչ հասանէր» (Բուզ., 214)։ «Արձակեաց շառաւիղ և ծաղ-*

կեաց ծաղիկ եւ երեւեցոյց ընկոյզ» (Թիւք, ԺԷ, 8)։ «Ի պարտէզս ընգու-զեաց իջի հայել յարդիւնս վտակացն (Երգ., Զ, 10)։ «Եւ եկաց հրեշ-տակն Աստուծոյ յառուամէջս այգեացն, և էր ցանգ աստի և ցանգ ան-տի» (Թիւք, ԺԲ, 24)։ «Զի նա է խաղաղութիւն մեր, որ արար զերկոսեան մի եւ զմիջնորմ ցանկոյն քակեաց» (Եփես, Բ, 14)։

Գ/Տ։ Բանդ-բանտ, գինդ-գինտ, գունդ-գունտ, ժանտ-ժանդ, ընտա-նի-ընդանի, ընտրեմ-ընդրեմ, ընդոծին-ընտոծին, ընդերք-ընտերք, խան-դալ-խանտալ, կնդութիւն-կնտութիւն, դժգունել-տժգունել *(Ոսկ., պող. 41)*, դժգոհ-տժգոհ *(Ոսկ., պող., 515)*, շերտակոտր-շերդակոտր *(Պիտ., 408)*, պնդել-պնտել...։ *«Որպէս եպիսկոպոսապետն Կեսարու Եւսեբիոս վճարեալ լինէր ի բանդին» (Բուզ., 5, նաև՝ 49, 81, 84)։ «Ետ հրաման Թագաւորն Վաղէս կապել կրկին զեպիսկոպոսապետն Բարսեղ, արկա-նել ի բանտ ի նեղութիւն» (Բուզ., 85)։ «...*ընդրեաց *իւր արս ընտիրս միամիտս» (Բուզ., 158)։ «Թէ ուստի կամ որպէս ընտրեցաւ լինել կա-թուղիկոս հայոց մեծաց» (Բուզ., 51)։*

Աստվածաշնչի համաբարբառը նշում է միայն ընտոծին *(9 անգամ)։ Սակայն և 1860 և 1895 թթ. հրատարակություններում կա և* ընդոծին։

Բ/Պ։ Ամբարիշտ-ամպարիշտ, ամբոխ-ամպոխ, ամբարտաւան-ամ-պարտաւան *(խիկ. 306, 318, 278, 280)*, ըմբել-ըմպել, ըմբշամարտ-ըմպշամարտ... *«Բազմեցաւ յուտել և յըմբել» (Բուզ., 196)։ «Զոր ըմ-բելով՝ զանուն տեառն կարդացից» (149)։ «Իսկ Թագաւորն Պարսից Շապուհ... առնոյր գինի ի մատունս ըմպել» (159)։ «Որ արժանի արար զիս ըմպել զբաժակս զայս» (Բուզ., 182)։ «Փառս Ողոմպիա խաղուն հանդիսի յըմբշամարտկացն երեւի» (Խոր., 308)։ «Որ ըմպշամարտ սկա-յազօր քաջութիւնս գործեաց ի մարտս պատերազմաց» (Ագաթ., 10)։*

*Ծ/Ձ։*Գծուծ-գձուձ, ընծայ-ընձայ, ինձ-ինծ, խանձ-խանծ, ննձան-ննծան *(Մանդ., 191)*, ծնկիմ-ձնկիմ, մղձկիմ-մղծկիմ...։ *«Մլանայր յա-րեւմուտս և երկրորդն ի վերայ ընծու՝ ի հիւսիսի հայելով» (Խոր., 76)։ «Աստանօր պատահի ընձու անկարելի է զխայտուցն փոխել» (Խոր., 237)։ «Անցաւք, հաստոսկերք, որ ոչ ծնկեցան յանհնարին ցաւս ազեաց» (Վկայք., 16)։ «Եւ ոչ ի նախանձու ձնգին եւ ոչ այլ իւիք ախտիւ չերա-նին» (Ոսկ. մտ. 178)։*

Ճ/Ջ։ Այս կարգի օրինակներ քիչ են։ Խառնաղանջ-խառնաղանճ, խառնիճաղանջ-խառնիճաղանճ, կինճ-կինջ...։ *Հավանորեն V դարում այս զուգաձևերը գոյություն չեն ունեցել և հետագա գրչագրություններ են։ Նույնը չենք կարող ասել գ/տ, բ/պ, գ/կ զուգաձևությունների մա-*

ածն։ Ամենավաղ ձեռագրում սրանք արդեն ամրագրված են որպես գրքային հնչյունափոխություն և պետք է կարծել, որ գործընթացը եղել է V դարում, իսկ վկայությունների մեծաթիվ ու հաճախական լինելը թույլ է տալիս երկու ձևերն էլ դիտելու որպես կանոնական։

Խ/Ղ։ Մի շարք բառերում խ-ն և ղ-ն լծորդ հնչյուններ են, որոշ դեպքերում ներկայանալով նաև -խղ-(ղխ) հնչյունակապակցությամբ. ածուխ-ածուղ, աղխ-ախղ, աղխեմ-ախղեմ, ախաւեղագէս-աղաւեղագէս, ամօթխած-ամօթղած, բուխ-բուղխ, բխեմ-բխղեմ, թախիծ-թաղիծ, ժխոր-ժղոր, մժեխ-մժեղ, աղմար-ախմար, ջախջախ-ջաղջաղ, սանդուղf-սանդուխf, սեղեխ-սեխեղ, տխեղծ-տղիղծ ... «Բխեաց աղբեւր՝ ջուր քաղցր անոյշ» (Բուզ., 11)։ «Եւ ի նոցանէ բղխեսցեն շնորհք պատուիրանացն Աստուծոյ» (Բուզ., 11)։ «Բախեցէf զաման լալոյ արտասուացն» (Ագաթ., 69)։ «Բախեաց զթանձրութիւն լայնատարած գետոյն» (Ագաթ., 384)։ «Յայնժամ իբրեւ զթախծեալ սգաւոր յոգի և ի մարմին էաք տրտմեալք» (Եղիշե, 104)։ «Բազումք ի նոցանէ թաղծեալ ի սուգ ծանրութեան... եկին և յանդիմանեցին զնախարարեանն» (Եղիշե, 54)։

Այս բառերը ստուգաբանական դժվարություններ են ներկայացնում կապված հենց խ կամ ղ-ի նախնականության հետ։ Պատահական չէ, որ վերոհիշյալ բառերից Արմ-ում ստուգաբանված է միայն տխեղծ-ը։ Անպայմանորեն զուգաձևերից մեկը հետագա երևույթ է՝ խ և ղ-ի արտասանական ընդհանրության հետևանք, որն արտացոլվել է և գրության մեջ։ (Արդի հայերենում խ և ղ-ն տարբերակվում են միայն ձայնեղության հատկանիշով. ղ-ն որոշ թույլ դիրքերում կարող է կորցնել իր ձայնեղության հատկանիշը և նմանվել խ-ին (ԺՀԼ, 1979, 56)։

Կարելի՞ է արդյոք պարզել, թե հիշյալ և նման այլ ձևերում նախնականը խ-ն է, թե ղ-ն։ Թեև Արմատական բառարանում դրանք ստուգաբանված չեն, բայց ըստ երևույթին Աճառյանը ճիշտը համարում է խ-ով ձևերը՝ դրանք ներկայացնելով որպես գլխաբառեր (Աղխ-Ախ երկու ձևերն էլ Արմ-ում գլխաբառ են)։

Քննությունը բերել է մեզ այն համոզման, որ գոնե նման բառերի մի մասում նախապես եղել է ղ։ Այս եզրահանգմանն ենք եկել բառերի զուգահեռ այլ գրության, ինչպես նաև ստուգաբանական որոշ օրինաչափության բացահայտման շնորհիվ։ Անդրադառնանք ամօթխած-ին։ Առաջին բաղադրիչը ակնհայտորեն ամօթ բառն է։ Ի՞նչ է իրենից ներկայացնում խած(ղած)-ը։ Այս հարցում մեզ օգնում է այդ բառի մեկ

այլ գրության՝ ամօթլեած: «Եւ հանդերձ այնու ամենայնիւ յորժամ գրաւ հարսանեացն լինիցի, առեալ միայն ընդ միայն խրատիցես, զամօթլեած բարսն եւեթ յանձին ունել և չընկենուլ երբէք զայն ի բաց» (Ոսկ., Պող., 895): «Մինչդեռ ամօթլեած իցէ՝ սաստ խրատիցէ (Ն. տ.): «Եւ դու ոչ սակաւ քան զնա գտանիցիս ամօթլեած» (Ն. տ.): Ամօթլեած-ը կարող ենք դիտել որպես բարդ բառ՝ ամօթ+լի+ած ամօթլեած, որը ներկայանում է ամօթխած-ամօթղած ձևով: (Լ/ղ անցումը ինքնին հասկանալի է: Նշենք միայն, որ հենց լի բառը ղ տարբերակով դարձյալ հանդիպում է գրաբարում՝ յղի): Լի-ն էլ ծագում է հ. ե. *plē արմատի plēyo ձևից (Արմ.):

Խ/ղ տարբերակային ձևերի ստուգաբանական ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ որոշ դեպքերում առկա է կոշտ լ-ն (հ. ե. *l): Այսպես աղխ-աղխ-ը աղերսվում է հ. ե. *aleq-ի հետ (Джаукян, 1967, 121): Ձոխիլ հ. ե. *g'huu̯ol-ի հետ (Ջահուկյան, 1987, 129): Գ. Ջահուկյանը ենթադրում է բղխել-ի Բուխ-ի կապը հ. ե. *bhēl կամ *bhōl կամ ածանցված *bhlēdhi̯o-bhlōdhii̯o ձևերից (ՊԲՀ, 1965, 1, 252):

Այս զուգահեռները թույլ են տալիս թախիծ-թաղիծ արմատի մեջ էլ տեսնելու թալ «նվաղում, կսկիծ» արմատը, որն անկախաբար հանդես չի գալիս, այլ թալանալ «թմրել, թուլանալ». թալուկ, թալկանալ... և այլն: -իծ-ի հարցը հստակ չէ: Այն իր բնույթով կարելի է դիտել որպես մասնիկ, ինչպես -իր-ը թմբիր-թմիր բառերում: Ի դեպ, թալ-արմատի մեկ այլ տարբերակն է թերևս և տաղտ-ը (տ- աճականով), որից տաղտաղտ «ձանձրալի», տաղտկութիւն «ձանձրույթին», տաղտկանալ «ծանրության չդիմանալ, «ընկճվել»: Տաղտ-ը Գ. Ջահուկյանը բխեցնում է հ. ե. *tel «բարձրացնել, կրել» արմատից (Джаукян, 1967, 132—133): Այդ նույն արմատին պետք է հանգեցնել նաև թալ-ը: Թ/տ ստուգաբանական տարբերակները հայերենին խորթ չեն: Հմմտ. տապլեմ-թաւալեմ, տալաւոր-թաղար (Джаукян, 1967, 301—302): Ի դեպ, տաղտ արմատն էլ թալ-ի նման անկախաբար չի կիրառվում: Եթե մերժելի չէ թալ- արմատի այս մեկնությունը, ապա թաղանձ/թախանձ բառաձևերում նույն թալ/թաղ արմատի գոյությունը կասկածից դուրս պետք է համարել:

Մի խոսքով, բոլոր հիմքերը կան խ/ղ տարբերակային ձևերի դեպ-

քում, գոնե որոշ բառերի համար նախնականը և ստուգաբանորեն ճիշտը համարել ղ-ն (հին կոշտ լ-ն)։

Ձայնեղ/շնչեղ խուլ բաղաձայններով տարբերակներ։ Անհեդեդ-անհեթեթ, թագուցեալ-թաքուցեալ, խառնաբնդոր-խառնափնդոր, փափագեմ-փափաքեմ, քերդող-քերթող …։

Անհեդեդ-Անհեթեթ ձևերն Արմատական բառարանում դրված են որպես գլխաբառեր։ Ըստ Աճառյանի ուղիղ գրչությունը անստույգ է, թեև հետագայում գրական լեզուն ընդունում է միայն անհեթեթ-ը։ V դարում թերևս կիրառվում էր միայն անհեդեդ-ը։ «Գտան ազգ սկայից, անհեդեդք, յաղթանդամ մարմնով և վիթխարիք» (Խոր., 31)։ «Անհեդեդքն և անզարդքն ի նմա էին» (Եզն., 25)։ «Նոյնպիսի կացեալ էր անհեդեդ և անարգասաւոր» (Եզն., 29)։ Գանգատեմ-քանքատեմ։ V դարից վկայված է միայն ք-ով՝ «Սկսաւ տալ զրոյց քանքատելով» (Բ. մկբ. Գ. 37), այնինչ արդի հայերենում միայն գ-ով է»։

Խուլ/շնչեղ խուլ բաղաձայններով տարբերակներով սակավ օրինակներ կան։ «Ապշութիւն ունի զսիրտս ձեր» (Ժող. ԺԲ. 5)։ «Յորեալ պաշտեք յափշութիւն մտաց ձերոց» (Ագաթ., 34)։ Ըստ երևույթին պ>փ անցմանը նպաստել է ապշ- հնչյունախումբը (ունենք նաև ապշել-ափշել, այնինչ միայն՝ ապուշ)։ Շնչեղացված մյուս օրինակը փայքար բառն է, գրաբարում հաճախական ու օրինաչափ պայքարի դիմաց։ «Ապա եթէ չխոստանայցէ տեսչութիւն ինչ, ասասջիր եթէ զի է տեսչութիւն, որով զփայքարն եդիր» (Ոսկ., Եփես., 876)։ ՆՀԲ-ն փայքարիմ-ով բերում է միայն մեկ վկայություն՝ Եղիշեից. «Եթէ փայքարիմք ընդ նմա, նա տեղեկագոյն է, քան զամենայն վարդապետս աշխարհիս» (Եղիշէ, 158)։ Փայքար ունի և Բուզանդը (էջ 51)։ Բառը իրանական փոխառություն է։ V դարում իրանական լեզուներում արդեն գործում էր խուլերի շնչեղացման երևույթը։ Ուրեմն այս գործածությունը կարելի է համարել փոխատու աղբյուրի տվյալ ժամանակաշրջանին հարազատ ձև, իսկ պայքարը ավելի հին ձև, որը վաղուց արմատավորվել էր հայերենի բառապաշարում, որպես ժամանակագրորեն ավելի հին փոխառություն։

զ–ի հավելում: *Նախքան տարբերակները նշելը, հիշենք, որ նախագրային շրջանից զ-ն նախդրային-հոլովակազմիչ գործառություն ուներ, որը հարատևել է գրաբարի զարգացման ողջ ընթացքում։ Այս գործառությամբ պայմանավորված, ի հայտ է գալիս և զ-ի բառակազմական նշանակությունը։ V դարի մատենագրության մեջ առկայանում են զ-ով մի շարք բառեր, որոնց նախատիպ հիմքը անկախ կիրառություն չունի (կամ ունեցել է նախագրային շրջանում և մեզ չի հասել).* զառամ, զառանցել, զարմ, զգաստ, զգենուլ, զեկուցանեմ, զերծ, զկնի, զգոյշ*: *Զ-ով մի շարք կազմություններ նախատիպ հիմքի համեմատությամբ դրսևորում են իմաստային որոշ նրբերանգներ.* անգիտութիւն *«չիմանալը»* — զանգիտութիւն *«երկյուղ, վախ»*, գնամ *«գնալը»*–զգնամ *«երթևեկել, շրջել, գնալ-գալ»*, եռամ *«եռալը»*-զեռամ *«շարժվել»*, անկուած/անգուած *«հյուսված, գործված»* — զանկուած/զանգուած *«խմոր, հայս, զուղձն»*:

Իմաստային ընդհանրություն ունեցող զուգաձևերից նշենք. անկանեմ–զանկանեմ, արդ–զարդ, արբուն–զարբուն, արմանամ–զարմանամ, արմանալի–զարմանալի, արտուղի–զարտուղի, անխուլ–զանխուլ, իջանեմ–զիջանեմ, ընկենուլ–զընկենուլ: *«Ոչ միայն արդուց և զարդուց և կերպարանաց արարիչ է» (Եզն., 27)։ «Ապա, եթէ ծիծեռունք ընդ մեզ բնակեն* արմանալի *ինչ որ է» (ՆՀԲ)։* «Զարմանալի *եղեւ սէր քո ինձ» (Բ. Թագ. Ա. 16)։ «Ոչ ըստ* արտուղի *անկանին» (Ագաթ., 139)։ «Յուղիղ հաւատոյն* զարտուղի *անկան» (ՆՀԲ)։*

Նկատելի է, որ զ-ով և առանց զ-ի հիմքերը դրսևորում են բառակազմական ոչ նույնատիպ կազմություններ. արբնաբար, արբնական, արբնամիտ, արբնութիւն, *բայց՝* զարբուցիչ, զարբուն, զարբչիմ, զարբիմ: *Այս կարգի բառերում զ-ով տարբերակները հաճախ սաստկականության երանգ են արտահայտում։*

Յ–ի հավելում: *Յ-ի հավելումը դարձյալ առնչվում է նախդրային կիրառության հետ։*

ա) ստեղծվում են նոր բառեր. ագ– *արմատից՝* յագենամ, յագելի, յագեցութիւն, յագուրդ, օդ–*արմատից* յօդիմ (*հմմտ.* զօդիմ): Յայնկոյս, յանձնկալութիւն, յանգ, *«հանգանք»*, յաջորդ, յօրինեմ... *առանց յ-ի*

---

* *զգոյշ-ի ամբողջապես իրանական փոխառություն կամ* զոյշ *ձևից լինելու հարցը պարզ չէ։*

վկայված չեն, թեև ենթադրելի է նախագրային շրջանում դրանց գոյությունը։

բ) Յ-ի հավելման ժամանակ նկատվում են իմաստափոխության կամ սաստկականության որոշ երանգներ։ Ածեմ «բերել, փոխադրել»— յածեմ «տանել-բերել, ման ածել», անցանեմ «անցնել» -յանցանեմ «հանցանք գործել»։

գ) յ-ով և առանց յ-ի զույգերը ներկայանում են որպես ազատ տարբերակներ։ Ակամայ-յակամայ, անկ-յանկ, անկարծ-յանկարծ, աչող-յաչող, աջողակ-յաջողակ, առաջ-յառաջ, առաջապահ-յառաջապահ, արգոյ-յարգոյ, եղանակ-յեղանակ, ելուզակ-յելուզակ, արալեզ-յարալեզ, երկար-յերկար, երկուանք-յերկուանք... «Արհաւիրք անկարծք ի վերայ հասանէին» (Իմաստ. ԺԸ, 17)։ «Եւ եթէ անզէն մարդիկ այդպէս բռնա-յան, եթէ յանկարծ զինուորս եւս ընդ ինքեանս միաբանեսցեն» (Եղիշե, 62)։ «Հրաման տայ և քաղաքացեաց մարդկան արգոյ և պատիւ լինել, քան զգեղջկաց» (Խոր., 117)։ «Զշաբաթս ձեր և զօրս յարգոյս մեծամեծ պատուականաց ձերոց ոչ առնում յանձն» (Զգօն. ԺԳ)։ «Էր ինձ, ասէ, ով սիրելիք ... մերձ ի լեառն մի երկար յերկրէ բարձրութեամբ» (Խոր., 75)։ «Ի դորա յերկար խաղաղութեանն և մեք առողջութեամբ և աստուածպաշտութեամբ կատարեսցուք զկեանս մեր» (Եղիշե, 29)։

Այս զուգաձևերում Յ-ի հավելման դեպքերը միայն նախդրային կիրառության հետ կապելը թերևս ճիշտ չէ։ Ըստ երևույթին պետք է հաշվի առնել մեկ այլ հանգամանք ևս։ Հավանորեն մի շարք բառերում (յառաջ, յարալեզ, յերկար) գործ ունենք հին բարբառային հ-ով արտասանության հետ՝ յ-տառադարձումով (հ-ի հավելում առկա է և արդի որոշ բարբառներում)։ Բայց եթե կարելի է առարկել յառաջ, յերկար բառերի հառաջ, հերկար արտասանությանը գրաբարում և ընդունել, որ յառաջ, յերկար արտասանվել են այնպես, ինչպես գրվել են, ապա հ-ով մի շարք բառերի առկայությունը հուշում է, որ, իրոք, գրաբարում որոշ ձևեր ունեին բառասկզբի հ-ի հավելում։ Յետագայ-հետագայ, յամր-համր, յատանեմ-հատանեմ, յետ-հետ, յետեւախաղաց-հետեւակագնաց և այլն։ Ուշադրության արժանի են հատկապես յաւատ-հաւատ և յեբրայական-հեբրայական ձևերը։ Գրաբարում կա և աւատ (Դ. Թգ. ԺԲ. 15, ԻԲ, 7, ՀԱ, 1958, 10)։

Հաւատ-ի հավաստի ստուգաբանություն չկա։ Աւատ-յաւատ-հաւատ զուգաձևերի առկայությունից կարելի է ենթադրել նախնական աւ-

ատ, ապա սրանից ածանցված՝ յաւատ (նախդրային կամ հագագային) և հաւատ (հագագային հին բարբառային): Եբրայեցի (եբրայական) բառերն էլ դարձյալ գրվում են նաև յ-ով և հ-ով:

Ոսկեբերանի՝ Եսայու մեկնության մեջ երեք ձևերն էլ կան: «Զի ի հեբրայեցի լեզու՝ հրեղէն բերանք թարգմանին սրբէք» (64): «Յասուբա, յեբրայեցի լեզու՝ թէ զհարդ կայցեն թարգմանի» (173): «Եւ եբրայեցին Ուքուզիզիդով ասէ, որ թարգմանի ողորմութիւն» (252)*:

Ա. Հանեյանը բարբառային նյութի ուսումնասիրությամբ հանգում է այն եզրակացության, որ տարաժամանակյա հայեցակետով՝ բարբառային ձայնեղ հագագները, ընդհանուր առմամբ հանդես են գալիս գրաբարի բառասկզբի յ- գրով արտահայտված հնչյունի դիմաց: Նա հ- և յ հնչյունների համար ենթադրում է երեք կարգի ընդհանրություն. ա) ծագումնաբանական, բ) լծորդական-հարաբերակցական, գ) գործառական (Հանեյան, 1984, 363, 366—367):

Յ-ի հաւելում կա (ոչ նախդրային կամ հագագային) հետևյալ զույգերի երկրորդ անդամներում.
գարնանի-գարնայնի, աշնանի-աշնայնի, ամառանի-ամառայնի, ձմեռանի-ձմեռայնի, որոնցում ըստ երևույթին ային ածանցն է՝ ի- սղումով:

Վ-ի հավելում: Վ-ն ավելանում է բառամիջում՝ ո-ից հետո: Ահարոն-Ահարովն, աղաբողոն-աղաբողովն, Բաբելոն-Բաբելովն, Գեհոն-Գեհովն, կանոն-կանովն, Մակեդոնացի-Մակեդովնացի, սիղոբայ-սիլովբայ, սոռէկ-սովռէկ, սրոբէ-սրովբէ, փարաւոն-փարաւովն, քոբանակ-քովբանակ...: «Եւ յայտ անտի է՝ թէ զձկանց ասէ, այնու եթէ նոուր կերակուր ազգաց եթոպացւոց» (Եզն., 104): «Դու... նոուր կերակուր ժողովրդոց եթովպացւոց» (Եզն. 103): «Ապա դարձեալ Արիստակէս արժանահաւատ բանիւ և քաւն կանոնեալ գլխովք ժողովոյն՝ զայս հանդիսի հօրն»... (Խոր., 240): «Այլ մեք զկարգն կանոնելով, առընթեր և զմարաց թագաւորան» (Խոր., 68): «Տնկեցի որթ սոռէկ» (Եսայ. Ե. 2): «Ազգըն ինչ որթոյ ոչ կոչի սովռէկ» (Եւս. Եմ. մեկ. 226):

Ընդհանրապես վ-ի հավելումը բնորոշ է հունական ծագում ունեցող բառերին, և ով- հնչյունախումբը համապատասխանում է ω-ին

* Նախապես յ-ով ձևերը արտասանվել են յ: Այդ վերապրուկային ձևով պահպանվել է և արդի բարբառներում: Օրինակ, Ղարաբաղի բարբառում գրաբարյան յղի, «հղի» արտասանվում է յ-ով՝ յըղէ: Թէ ինչպես է եղել վիճակը V դարում, դժվար է ասել: Երևի յ-ով են արտասանվել և օտար փոխառությունները՝ յաղ, յաշտ, յերկար, յովաղ, յովանակ, յովատակ... և այլն):

(ԼՔՀԼ, VI, 600)։ Սակայն այդ երևույթը ընդհանրացվել է և վ-ի հավելում ենք տեսնում նաև այն բառերում, որոնք հունարենում ω չունեն կամ հայերեն կազմություններ են. աղաբողովն, սիղովբայ, սրովբէ, քրիստովնեայ...։ Այստեղ գործել է համաբանության երևույթը։ Լազարյան Ավետարանում ավանդված ներքոհիշյալ ձևերը այդ են հաստատում. ովմն, ովմանէ, ովմանց, որովգայթ, Պետրովս, քարովզչութիւն, քարովզել, ովգւոց ...

Այլ կարգի հավելումներ: Որոշ բառերում առկայացող հնչյունական հավելումները սաստկական երանգ են հաղորդում։ «Խեթեաց յանձն իւր Թշնամութիւն» (ՆՀԲ)։ «Ի խեթկել որդւոյն Արհմենի զորդին Որմզդի... (Եղն., 100)։ «Ընդ խաւարուտ գնայ» (Ա. Եզր. Դ. 24)։ «Զի գոնեայ իբրեւ գլուսնակայ երեւէր տիւն և ոչ ամենեւին խաւարչուտ» (Եղն. 217)։ «Հարկ է իմաստնոյն, օդ հիւսիսոյ թէ շնչիցէ ցրտագոյն, սարսռալ, կարկտչել, ցրտալ» (ՆՀԲ)։ ՆՀԲ-ն կարկտել չի ավանդում, բայց V դարում այդ բառի գոյությունը կասկած չի հարուցում։

Ներքոհիշյալ բառերում հավելումները այլ բացատրություն ունեն։ Պաճեն-պատճեն զուգաձևությունները գալիս են ըստ երևույթին փոխատու սկզբնաղբյուրից։ Կրսեր- ձևում Աճառյանը գտնում է պարզապես տ-ի անկում։ Նախնական ձևը հավանորեն կրտսերն է։ V դարից, եթե սխալագրություն կամ հետագա գրչություն չէ, ունենք նաև կրցեր, «Եւ կոտորեաց զամենայն որդիս նորա, յորոց էր կրցերն Յովնաթան» (Եւս, Եմեն. մեկն. 156)։ «Երկու որդիք էին իմ յորոց կրցեր որդին... սպան զմեւսի (Ն. տ. 91), կրցեր-ը տս- հնչյունակապակցության արտասանության արտահայտություն է։ Ամանակ/ժամանակ: Գրաբարում հաճախական է ժամանակը: V դարից կա և ամանակ: «Բայց ժամանակ ոչ է ամանակի բաղադրութիւնք»։ «Զի ամանակ է վճարելոյ ուղղութեան ժամանակ» (ՆՀԲ)։ Թեև Արմատական բառարանում իրանական ծագում է վերագրվում, բայց կարող է ամանակը լինել հայակազմություն ամ բառից, անակ ածանցով՝ ժամանակ-ի համաբանությամբ։

Կեսուր/սկեսուր: «Յորժամ դուստր զմայր անարգիցէ և նու զկեսուր իւր ... մի ինչ տարցին ընդ միտ» (Եղն. 60)։ «Պատուեա զսկեսուրն քո և զսկեսրայրն, քանզի արդ նոքա են քո հայր և մայր» (Տոբ. Ժ. 12)։ Հավանորեն կեսուր-ը հին բարբառային ձև է (եթե պարզապես ս-ի անկում չէ զ նախդրից հետո)։

Ներկայացնենք բաղաձայնների հավելման և անկման որոշ օրի-

նաչափություններ դրսևորող այլ դեպքեր, որոնք կարելի է արտահայտել բաղաձայն զրո հերթագայությամբ:

Հ/զրո: Տարբերակները իրականանում են՝ ա) համ/(հան) ածանցի ամ(ան) գրությամբ: Ամբառնամ-համբառնամ, ամբար-համբար, ամբարտակ-համբարտակ, վերամբարձ-վերհամբարձ, անդերձապետ-հանդերձապետ, անգրիննեմ-հանգրիննեմ... բ) հատ- արմատի հ-ի անկմամբ: Ազգատ-ազգահատ: «Բայց զառհմս կամսարականացն ... ազգատ առնէր» (Բուզ., 109). «Յաղագս ... ազգահատութեան տան նախարարացն տոհմին Բզնունեաց» (ՆՀԲ): Հատ/ատ արմատը ներկայացնող մեծ թվով զուգաձևեր V դարում չկան, բայց հ-ի սղումը գործել է դեռևս նախագրային շրջանից, որովհետև արդեն V դարից վկայված են ակնատ, ականջատ, միջատ, գունատ, բացատ, կառափնատ, խրամատ, կնատ, որոնց հ-ով ձևերը վկայված չեն: Փայտատ «կացին» բառի փայտահատ ձևը ուշ վկայություն է:

Հար-/ար արմատով զուգաձևության նմուշ է փողար և փողահար-ը: «Երգիչք և փողարք շուրջ զարքայիւ և ամենայն ժողովուրդք երկրին խնդային և փողս հարկանէին» (Դ. Թագ. ԺԶ, 16) «Եւ ձայն քնարերգաց եւ երաժշտականաց, արուեստականաց և փողահարաց և թմբկի՝ այլ ոչ եւս լուիցի» (Յայտ. ԺԸ, 22):

Բառասկզբում հ/զրո տարբերակներ: Աւատ-հաւատ, հոգի-ոգի, սկայ-հսկայ, Հաբել-Աբել, Հեփեստոս-Եփեստոս: ՆՀԲ-ն ոգելից բառը չի նշում, այլ՝ հոգելից: Բայց V դարից այն կա: «Այս բանք ոչ եթէ իմ ինչ են, այլ Եզեկիելի ոգելից մարգարէին» (Կիւրղ. 12):

գ) Բառամիջում հ-ի անկման կամ հավելման օրինակներ նույնպես քիչ են: Ունենք արտհունձ-արտունձ: Վերջինս կարող է սխալ գրչություն լինել: Մեզ հանդիպել է միայն մեկ օրինակ: Սուրամ-սուրհամ: Եթե իրանական փոխառություն է, ապա հնագույն ձևը սուրհամ-ն է:

Ն/զրո: ա) Ն-ի հավելում բառավերջում: Գուղձ-գուղձն, մուր-մուրն, ջերմ-ջերմն, կրուկ-կրուկն, կրնիմ-կրնիմն: ՆՀԲ-ն գուղձ-գուղձն երկու ձևերն էլ բերում է որպես գլխաբառ, բայց V դարից ՆՀԲ-ի վկայությունները միայն գուղձն ձևով են: Հաճախական են մուր հիմքով կազմությունները, բայց մուրն հիմքով ձևեր նույնպես կան: Արջ-արջն բառերը տարբերակային ձևեր չեն, այլ տարբեր բառեր՝ արջ «կենդանի», արջն «սև»:

բ) Ն-ի հավելում վերջին բաղաձայնից առաջ: Բարբաջ-բարբանջ, մարմաջ-մարմանջ և այս հիմքերով այլ կազմություններ:

գ) *Հարասության երևույթ* (արմուկն-արմունկն, կրուկն-կրունկն, նեգնել-նենգնել, պատանդ-պանտանդ, ադամանդ-անդամանդ, մեքենա-մենքենայ)։ Հմմտ. «Որպէս քար անդամանդ ծածկեալ զօրութեամբ քարշէ զերկաթն, նոյնպէս և սուրբ գիտութիւն զմաքուր միտսն առ ինքն ձգէ» (Նաւգր. 161)։ «Մարմինն էր քան զադամանդ անվթար և անգիծ» (ՆՀԲ)։ «Եւ արձակեաց ևս զպատանդսն զԱրշակունիսն Թագաւորին Հայոց» (Բուզ., 76)։ «Եւ նաուն զնա պանտանդ ի դուռն կայսերն յերկրին Յունաց» (Բուզ., 104)։ Բուզանդը մեկ տասնյակից ավելի օգտագործել է պանդանդ։

Ն-ի հավելում ածանցման ժամանակ։ Գործական-գործնական, գիտական-գիտնական, թափառական-թափառնական, խոսակից-խոսնակից, յայտարար-յայտնարար, ստորային-ստորնային և այլն։ Այս ձևերը դրսևորում են իմաստային նրբերանգներ (տե՛ս ՆՀԲ)։ Թեև այս տարբերակները ի հայտ են գալիս ածանցման դեպքում, բայց ական-նական, արար-նարար տարբեր ածանցներ չեն, ավելի ճիշտ ն-ով համապատասխան ածանց չկա։ Զուգաձևերի դեպքում գործ ունենք տարբեր հիմքերի հետ. գործ-գիտ, ստոր ... հիմքերից կազմվում են գործական, գիտական, ստորային ... ձևերը, իսկ գործուն, գիտուն, ստորին ... հիմքերից՝ գործնական, գիտնական, ստորնային։ Փաստորեն առկա են հիմքային տարբերակներ, որոնք իրականանում են զրո/ն հակադրությամբ։ Հիմքային առանձնահատկություններով պետք է բացատրել նաև իմաստային տարբերությունները։

Ր/զրո: *Մի շարք իրանական փոխառություններում (բառամիջում և բառավերջում) ավելանում է ր*։ Ունենք հետևյալ զույգերը. բաժանել-բարժանել, դաժան-դարժան, բոշակ-բորշակ, դաշոյն-դարշոյն, բագունի-բագուրնի, խոնի-խորնի, մանի-մարնի, յաւէժ-յաւերժ, ոչիլ-որչիլ, պանել-պարնել, պաշարել-պարշարել, վինի-վիրնի ...:

Արմ-ը բարժանել ձևով վկայություն բերում է հետհինգերորդդարյան մատենագրությունից։ Սակայն վկայություն կա և V դարից։ «Բարժանեայ զծով նոցա և արգել ի ջուրսն, զի քննեսցեն» (Եփր. Ասոր., ՀԱ, 1956, 14)։ «Ոչ զոր օրինակ հեթանոսք, որ ի բեւրուց ի բեւրս աստուածս բարժանեն զանեղութիւն աշխարհիս» (Ոսկ. ես. 273)։ Պաշարել/պարշարել։ «Ծով տկար աւազովն պաշարեալ՝ չիշխէ անցանել ըստ հրաման» (Եզն., 18)։ «Բաւական են նմա պարշարմունք յորս եղև մեզ ի տէր ազգոյ» (Եփրեմ, Սիոն, 1930, 15, 57)։ Վերոհիշյալ, ինչպես նաև բորշակ, յաւերժ, դարշոյն, իրանական բառերի դեպքում ր-ի հավելումը

դժվար է բացատրվում, ըստ երևույթին դրանք կամ իրանական, կամ էլ հայերեն հին բարբառային ձևեր են։ Ոչխ(որչխ) բառի ծագումը հստակ չէ։ Եթե գոլորշի բառի կապը գոլ (հ. ե. *wēl) արմատի հետ ճիշտ է, ապա գոլորշի կազմությունը զուտ հայկական (բարբառային) երևույթ է։

Այլ դեպքերում ր/րհ զուգաձևությունները որպես իրանական փոխառություններ, ստուգաբանորեն արդարանում են։ «Ածէ Աբրահամ ի մէջ և ասէ, եթէ վիրհ մեծ է ընդ մեզ և ընդ ձեզ» (Ոսկ., Ես., 144)։ «Այլ վիհ մեծ է, ասէ, ընդ մեզ և ընդ ձեզ» (Ն. տ.), «Սովորութիւն իսկ էր ... փեսայութեամբ ի դուռն տաճարին հասանել՝ զահեկանս ճապաղել իբրև զհիւպատեանն համայեցւոյ. սոյնպէս և թագուհեացն յատագատին՝ մարգարիտ» (Խոր., 179)։ «Յայնժամ թագուհին Պատրանիկէ թէպետ և դառնացեալ էր յանձն իւր» (Պրակ. ՀԱ, 1921, 15)։

Նույնիսկ հայ. պատուհաս բառի համար ենթադրելի է նախնական *պատուհրաս, *պատուրհաս ձև (իր. pātūfrās)։ Պատուհան բառի *պատուրհան ձևը գրաբարում վկայված չէ։ Իր. patifran-ին ավելի հարազատ է զրր-ի բարբառի պըտրոհան ձևը։ ր/հ զուգահեռները թույլ են տալիս հավաստելու մի շարք բառերի իրանական ծագումը։ Բահ-ը Արմ-ը համարում է բնիկ հայերեն բառ, որի հին ձևը պետք է լինի բարհ, ինչպես ցույց են տալիս կովկասյան փոխառությունները։ Մահ-ի մարհ զուգահեռն էլ խոսում է դարձյալ այդ բառի իրանական ծագման օգտին։ Րհ-ով ձևերը ավելի հին են։

Բ/մբ։ Հնչյունական այս առանձնահատկությունը ի հայտ է գալիս մի շարք բառերում՝ մ-ից հետո։ Բեմ-բեմբ, զմրիլ-զմբրիլ, թմրիմ-թըմբրիմ (թմբրութիւն), շամշիմ-շամբշիմ (շամշանք-շամբշանք, շամշական-շամբշական, շամշութիւն-շամբշութիւն...), պատշգամ-պատշգամբ, սալամ-սալամբ, թմուկ-թմբուկ...։ Բառարանները բոլոր ձևերն էլ վկայում են, բացի թմուկ-ից, բայց մեզ հանդիպել է և այդ ձևը (եթե վրիպակ չէ)։ «Եւ երկիւղի ընդ առաջ ելեալ իբրև գալիս ծովու ամբոխին թմկօք և փողովք, ազգի ազգի պարուք» (Աթանաս, 519)։ Այս զուգաձևությունները միանշանակ չեն։ Եթե որոշ դեպքերում բ-ի հավելում է, ապա այլ դեպքերում՝ անկում է։ Այսպես՝ բեմ (հուն. βῆμα)- բեմբ տարբերակում բ-ն հավելում է, իսկ, թմիր-թմբիր ձևերում՝ անկում. (Արմ-ում ենթադրվում է *tumb արմատը։ Աճառյանի կարծիքով «հայերենի ամենահին ձևն է *թումբիր (կազմված -իր մասնիկով), հետո բ-ի

անկումով Թմուր (ավելի ճիշտը պետք է լիներ Թմիր): Թմուկ *ձևերում նույնպես բ-ի անկում է (պհլ.* *tumbūk*):(Կաղամբ-ը, եթե իրոք, իրանական փոխառություն է. հմմտ. պրս.* kalam, *ապա դարձյալ բ-ն հավելում է, թեև այս դեպքում կա և հուն.* κράμβη*-ի ազդեցությունը):*

Ուրեմն, մ/մբ ներկայացնող զուգաձևությունները ոչ միայն պետք է բացատրել բառերի ծագումնաբանական, այլև ուրիշ պատճառներով (թերևս հնչյունական-արտասանական, որի հետ կապված որոշ դիրքերում մ/մբ-ն ներկայանում են որպես լծորդներ. հմմտ. գործիական հոլովում նովիմք-նովիմբք ձևերը): Գ. Ղափանցյանը հայ. խումբ *կապում է խեթ.* ḫūm-andaz *«ամբողջովին» բառի հետ (Ղափանցյան, 1961, 182): Նա բ-ի հավելում է տեսնում և* դամբան, դամբարան. *բառերում, ասոր.* tamma *«ոսկոր»: Եթե այս կապը ճիշտ է, ապա դարձյալ առկայանում են մ/մբ դրսևորման ուշագրավ օրինակներ:*

Գրաբարում կա և մ/բ լծորդության երկու հետաքրքիր օրինակ. սկիզբն-սկիսմն, ճաստարբեստ-ճաստամբեստ: *Առավել հաճախական ու արդյունավետ է* սկիզբն *հիմքը, որով ունենք մեծ թվով կազմություններ. սկզբունք, սկզբնական, սկզբնավոր... Բայց ունենք և* սկիսմն*-ով օրինակներ. «Եւ զի զգարնանային հասարակորութիւնն սկիսմ պարագայացն ամսոց ենթադրէ» (Փիլ. Մնաց. 1926, 444): «Իսկ սկիսմն հարկ է լուացն և ըղձագունացն բաշխել տալ» (ն. տ.): «Վասն որոյ առաջրեաց, թէ ձեզ ամիսս այս սկիսմն՝ յայտնելով որոշեալ և մեկնեալ իմն ժամանակաց թիւ» (445): «Զի ժամանակի ամենայնի սկիսմն և դարձեալ գարունն իցէ» (446): Փիլոնը 7 անգամ կիրառել է այս ձևը: Ուրեմն, սխալագրություն չի կարող լինել:*

Ճաստամբեստ-ճաստարբեստ *հանդիպում ենք մի շարք գործերում: Բուզանդը երկու ձևն էլ օգտագործել է: «Այսպէս յարձակէին որպէս զլեառն մի բարձր և կամ որպես զաշտարակ մի* ճաստարբեստ *հզօր և անշարժ» (169): «Իբրև զաչս ի վեր ամբառնայր արքայն Վարազդատ ... տեսանէր սպարապետն Մանուելն, ի մեծութենէ հասակին ... ի* ճաստամբեստ *յանձնէն» (204): Այս ձևերի համար ենթադրվում է* ճաստ *արմատի կրկնություն՝ որոշ հնչյունափոխությամբ: Արմատի կրկնությամբ կազմված ձևեր գրաբարում իրոք կան՝ բարձրաբերձ, ժանտաժուտ, խաժամուժ...: Ա. Մարգարյանը այս շարքում դնում է և* ճաստամբեստ*-ը (Մարգարյան, 1987, 164—168): Իհարկե, ձևականորեն կարելի է տեսնել* ճաստ *արմատի հնչյունափոխված կրկնություն: Բայց այս*

բառերի համար թերևս ավելի հարմար է ստուգաբանական-ծագումնաբանական և ոչ թե հնչյունափոխական բացատրությունը։

Հաստամեստ բառի մեջ մենք մեստ բաղադրիչը համարում ենք ոչ թե հաստ- արմատի հնչյունափոխված տարբերակը, այլ իրանական mast-mest «հաստ» բառը (հմմտ. Մալաթիայի բարբառի մաստ «հաստ», Ղափանցյան, 1961, 16)։ Ինչ վերաբերում է բեստ բաղադրիչին, ապա թեև բերել ենք հայերենին բնորոշ բ/մ լծորդության այլ օրինակներ, այս դեպքում, սակայն, այն կարող է լինել դարձյալ իրանական սկզբնաղբյուրից անցած ձև, քանի որ իրանական լեզուներում նույնպես գործել է b>m հնչյունափոխությունը հմմտ. հյ. մանուշակ, պրս. Bānafša, իր. bušt-mušt «բռունցք», որից հայերեն բարբառային՝ բշտել, մուշտի տալ։ Մեր կարծիքով հայ. ըմբշամարտ/ըմբշտամարտ բառն էլ կապված ընդ+բուշտ «բռունցք»+մարտ բաղադրիչներից՝ հմմտ. բռնամարտ։ (Ընդհանրապես m>b անցումը նկատվում է տարբեր լեզուներում։ Օրինակ, իրանա-արաբական m-ն թուրքական որոշ լեզուներում ներկայանում է b-ով՝ musulman կիրգիզ. basurman և այլն)։

Այլ կարգի բաղաձայնական ներբազայուրյուններով տարբերակներ.

Ժ/շ։ Տարբերակները ներկայացնում են հիմնականում որոշ իրանական փոխառություններ. աշխոյժ-աժխոյժ, դշխեմ-դժխեմ, գոյշ-գոյժ*, աշդահակ-աժդահակ, նժդեհ-նշդեհ...։ ժ և շ-ն լինելով նախաքմային առաջնալեզվային շփականներ (ԺՀԼ, 1979, 101) ունեն շատ ընդհանրություններ և դրանցով պայմանավորված որոշ դիրքերում կատարվում է համապատասխան հերթագայություն։ Նույն երևույթը կա և իրանական լեզուներում (հմմտ. duž) duš մասնիկը պհլ. *dužgon (հայ. դժգույն), պհլ. dušxem (հայ. դշխեմ)։

Ս/շ։ Աստինան-աշտինան։ Երկու ձևերն էլ հաճախական են։ Ս>շ անցումը ճ-ի ազդեցությամբ է կատարվել։ Նույնը և աստուճ— աշտուճ տարբերակներում։ Աստուճ-ը թեև հետին վկայություն է, բայց համարվում է նախնական ձևը։ Ուրեմն, ճ-ի մոտ ս>շ հնչյունափոխու-

* Գոյշ գգոյշ-ի արմատը և գոյժ «բոթ, վատ լուր» տարբեր բառեր են։ Սակայն սրանք ծագում են gauša «լսել, ականջ» բառից՝ դրսևորելով իմաստային հետագա զարգացումներ։

թյունը գործում էր վաղուց՝ նախագրային շրջանից։ Թարխս-Թարշիշ զույգում առաջինը հունական ձևն է, երկրորդը ասորական (հմմտ. նաև Եղիսէ-Եղիշայ)։

Զ/ս։ Տարբերակները ավելանում են առաջին հերթին զ նախդրի ս հնչմամբ և գրությամբ։ Զգաստ-սգաստ, զփարիմ-սփարիմ, զգաստութիւն-սգաստութիւն։ «Անփառացի յաղագս շրջապատեալ զփածմանն» (ՆՀԲ)։ «Սփածցին քուրձով» (Եզեկ. է. 18)։ «Այլ գլուխք՝ ամենայն արանց և կանանց շբեղք և սգաստք, սուրբք և պարկեշտք» (Պոկղ., ՀԱ, 1926)։ «Աղջիկն... զգաստ է և իմաստուն» (Տոբ. Զ. 12)։ Զ-ս անցումը գործել է դեռևս նախագրային շրջանում, քանի որ արդեն V դարից հաճախական են՝ սթափել, սրողել, սփածանելի, սփռել, սածել... և այլն։ Որոշ դեպքերում ըստ երևույթին գործել է, այսպես կոչված Գրինբերգի օրենքը, ըստ որի, միևնույն վանկում խուլ և ձայնեղ հնչյունակապակցություն չի կարող լինել։ Պետք է ենթադրել նաև զ>ս անցման ժամանակաշրջանում զ նախդրի ըզ արտասանություն չկար, այլապես այն կխոչընդոտեր այդ անցմանը։ Ս/զ-ն միայն նախդրային (բառասկզբային) կիրառությամբ չի ներկայանում։ Առկա են այլ բնույթի զուգահեռներ։ Մազդ-մաստ, ազդ-աստ, ասպարէս-ազպարէզ, Արտաշէս-Արտաշէզ։ Արտաշէզ- ձևը հիմք չունենք վրիպակ համարելու, քանի որ միայն Խորենացու մոտ այն կիրառված է հինգ անգամ։ Ազդ/աստ-ի իմաստն է «լույս», ազդ նշանակում է նաև «զորություն», ուժ», որից՝ ազդոյ, ազդու։ Այս նշանակությամբ բառը գրվում է նաև աստ, որից՝ աստղագոյն, աստագոյն «աստվածային», աստեար «հաստատուն», աստի, աստին, աստոյ «պինդ, ամուր» և այլն։

Զ/ս հերթագայությունն է նաև սկիս<սկսել<սկիզբ ձևերում։

Ս/խ։ Այս հերթագայությամբ օրինակները մեծաքանակ չեն, ընդգրկում են հայերենի տարբեր լեզվավիճակներ. խարխսխ-սարխսխ, լեսսլ-լեխել (Джаукян, 1967, 309)։ Ըստ V դարի կարգածքով այս կարգի (նաև իմաստով նույնական) զուգաձևեր են՝ բախտ-բաստ, դրախտ-դրաստ, տախտակ-տաստակ։ Սրանք կարելի է դիտել նաև որպես ստ/խտ հերթագայությամբ տարբերակներ. բախտ, դրախտ, տախտակ իրանական փոխառություններ են՝ գրաբարում հաճախական։ Բերենք օրինակներ ստ- հնչյունակապակցությամբ. «Աւաղ իմում նախկին բաստի» (ՆՀԲ)։ «Նկարուք տաստակացն» (ՆՀԲ)։ «Ապա ուրեմն ոչ է ի դրաստին փայտս այս, քանզի եթէ յամենայնէ ունել պատուիրէ ի դրաստոջացն և ի ամանէ ոչ ուտել, յայտ է թէ ոչ ի դրաստին բնականաբար,

այլ զաւրութեամբ» (Փիլ. Ճառք, 140)։ Բաստ տարբերակով վկայված են նաև բաստայեղ, բարեբաստ, չարաբաստ, ճաչաբաստիկ, փառաբաստութիւն։

Հ. Աճառյանը սրանք համարում է հին բարբառային ձևեր։ «Անշուշտ եղել են նաև ուրիշ գավառական բառեր,— գրում է նա,— խստ-ստ ձայնափոխությամբ, բայց գրականության մեջ չեն մտել։ Արդի բարբառների մեջ այդպիսի ձայնափոխություն չի նկատված» (տե՛ս Արմ. բախտ բառի տակ)։

Եթե սրանք հայերենին բնորոշ ձևեր են, ապա տարածքային մեծ ընդգրկում չեն ունեցել (վկայված են Փիլոնի մոտ և Պիտոյից գրքում, որոնց բառապաշարային ընդհանրությունը ակնհայտ է)։

Մյուս կողմից՝ բացառված չէ դրանց իրանական ակունքը, մանավանդ որ իրանական լեզուներում արձանագրվում է x>s հնչյունափոխություն. հմ. նպրս. pors «խնդրել» ներկայի հիմքը, աֆղ. puxt (Основы, 1979, 85)։

Որպես ս/խ-ի մեկ այլ տարբերակ կարելի է նշել հ.-ե. ծագումով բնիկ հայ.դուստր-ը և իրանական դուխտ-ը (վերջինս անկախաբար չի կիրառվում)։

Ռ/ր։ Լծորդությունը առկայանում է որոշ արմատներում. այր-առն, տէր-տեառն, ջեր-ջեռնում, բարձ-բառնամ, ամառն- ամարան, մատուռն-մատրան և այլն։ Վերոհիշյալները ըստ էության հիմքակազմական տարբերակներ են։ Իրանական փոխառություններում նույն արմատի ռ- և ր-ով ձևերը համապատասխանաբար ենթադրում են փոխառության ավելի նոր և հին ժամանակագրություն. ռամ(իկ)-(ե)րամ, ռահ-(վիրայ)-(ե)րահ(իկ)...։

Այս լծորդությամբ որոշ ձևեր ներկայանում են որպես զուտ հնչյունական տարբերակներ։ «Իբրեւ զփոշի կալոյ ամառայնոյ» (Դան. Բ. 35)։ «Ամառնայնոյ յեղանակին, ձմեռնայնոյն և զուգօրէին» (ՆՀԲ)։ «Վասն սորա և ոչ ուղխք զգետն սառուարացուցին արբմամբն ի ձմեռնային նուազութիւն իջանելով» (Խոր., 125)։ «Յաւուրս ձմեռայնոյ ճանապարհորդեալ ի Հայս ... պատահէ բքոյ ի լերինս Կորդուաց» (160)։ «Եւ այն որ սքանչելի ես՝ յաղագս ելէքտոռնացն ձգմանցն»։ «Ջելեկտրիոնէ աւեն կոչին ղեկտորոն» (ՆՀԲ)։ Զգոնի մոտ վկայված է ցիռ, վառապան (90, 208)՝ փոխանակ ցիր, վարապան։ Եթե ռ-ով ձևերը վրիպակներ չեն, ապա կարելի է արձանագրել ևս երկու զուգաձևություն։

խ/Հ։ Հնչյունական փոփոխությունները հանդիպում են բոլոր դիրքերում։ Ախաւեղագէս–աճաւեղագէս, խախ(խոխ)–խաճ(խոճ), խախամոf–խաճամոf, խաղր–ճաղր, խաճուր–ճաճուր, խուղ «բնակարան»-ճիւղ, խեռ «անսանձ»–ճեռ, խաշել «հյուծվել»-ճաշել, խարամանի–ճարամանի, ճրասախ–խրասախ, ճաճիճ–ճախճախուտ, յախուռն–յաճուռ... «Տասն տասն խրասախ բերէր ըստ անձին զայնչափ այրն զանհեդեդ զանարի» (Բուզ., 202)։ «Եւ հեռացուցանէր ի քաղաքէ անտի երկոտասան պարսիկ հրասախաւ (Եղիշե, 57)։ «Որպէս յոսկերչացն խանութս կարգեալ յօրինեցէ» (ՆՀԲ)։ «Զի չիք կալ ի վաճառի և ոչ զգինս ինչ տժգնել, ոչ ի կապելանոցս և ոչ ի հանութս» (Ոսկ. Ես. 419)։ «Ապրեսցի որպէս զայծեամն ի հաղբից» (Առակ. Զ. 5)։ «Յայսմ խաղբից զերծանիցիս» (ՆՀԲ)։

Տարբերակների մի մասում ստուգաբանորեն ճիշտը խ–ով ձևերն են (խաղբ, խանութ, խոհ...) մյուսում՝ ճ-ով ձևերը (հարամանի, հրասախ, հեռ...), որոնք բնիկ բառերի դեպքում հաստատվում են հ.-ե. նախաձևով, իսկ փոխառությունների դեպքում՝ փոխատու լեզվի զուգահեռներով։ Հ և խ ունեն հնչույթային ընդհանրություններ և տարբերվում են միայն ըստ արտաբերության տեղի (ԺՀԼ, 1979, 56)։ Այս ընդհանրությունը և որոշ դիրքային առանձնահատկություններ պայմանավորում են ճ/խ հերթագայությունը։

Նախատակ, ճախապետ ձևերը (նախատակ, նահապետ-ին զուգահեռ), եթե իրոք եղել են V դարում (բառարանները վկայում են), ապա այլ գործոնների հետ որոշ դեր է խաղացել նաև ժողովրդական ստուգաբանությունը։

Լ/ղ։ Հայագիտությունը ընդունում է, որ V դարում հայերենը ուներ երկու բնույթի լ։ Մեկը՝ առաջնալեզվային, ինչպես արդի հայերենի լ-ն, մյուսը՝ կոշտ, ետնալեզվային, որը հաճախ տառադարձվում է ղ-ով։ Փորձեր են արվել առանձնացնելու այն դեպքերը, երբ գրվում է լ կամ ղ։ Ըստ Աճառյանի, բառասկզբում մեծ մասամբ լինում է լ, բառամիջում, երկու ձայնավորների միջև կարող էր գտնվել թե լ, թե ղ, բայց բաղաձայնից առաջ միշտ ղ է (Հայկականք)։ Է. Աղայանը գտնում է, որ դասական հայերենին հարազատ են եղել ղ–ով ձևերը։ Յ և ւ ձայնորդներից հետո եղել է միայն ղ (1964, 178)։ Ղ–ով է տառադարձվել օտարազգի l(λ)-ն, եթե ձայնավորների միջև է եղել, կամ ի, ե ձայնավորների մոտ (Գյուլբուդաղյան, 1971, 93)։

Աճառյանը համոզիչ փաստերով ցույց է տվել նաև լ–ի ղ հնչման

ժամանակաշրջանը: Նա գտնում է, «որ ղ ձայնը նախ երևան եկավ հյուսիսում, Աղվանքի սահմանակից հայոց մեջ՝ Թ դարի սկզբից, ապա իջավ հարավ. Ժ դարի կեսին դեռ տատանյալ գրության մեջ է, իսկ ԺԱ դարում արդեն ամբողջ երկրում տարածված» («Հայկականք», տե՛ս նաև Արմ., IV էջ 654):

Անշուշտ որոշակի սկզբունքներ եղել են լ-ի և ղ-ի գրության հարցում: Բայց ուշ ձեռագրերի և հրատարակված գրականության տվյալներով որոշակի օրինաչափություններ դժվար է գտնել: Եթե ամենահնագույն ձեռագիրը Փիլիպպոս, Իսրայէլ ... ղ-ով է ներկայացնում, ապա տարբեր գործերում առկա է լ- և ղ- գրություն: Նշենք գրաբար մատենագրության մեջ հաճախական մի քանի զուգաձևեր: Այլ-այղ, բաբելացի-բաբեղացի, լոյղ-ղոյղ, լուղակ-ղուղակ, ճշոյլ-ճշոյղ, պալատ-պաղատ, ջիլ-ջիղ, սալամանդր-սաղամանդր, Գալիլեա-Գաղիղեա, Իսրայէլ-Իսրայեղ, ալփաբետ-աղփաբետ, լակիշ-ղակիշ ...

Ուշագրավ է այլ բառի գրությունը: Թեկուզ Ս. Գյուլբուդաղյանը դեմ է Բագրատունու այն կարծիքին, թե՝ այլ-ի շաղկապային կիրառության դեպքում գրվում է ղ, իսկ դերանվանական կիրառության դեպքում՝ լ (Գյուլբուդաղյան, 1971, 94), բայց փաստերը հաստատում են Բագրատունու կարծիքը: Հմմտ.... «Այդ նա ստուածապէս տիրաբար թուի ինձ՝ թէ ոչ միայն վասն կատարածի, այղ վասն ամենայն ժամանակաց» (Եւս., Կես., 7): «Այդ տակաւին չեւ ես է եկեալ Քրիստոս» (Աթանաս, 226): «Եւ ոչ է այլ աստուած բայց ի քէն» (Աթանաս, 221): «Ոչ այլ ումեք, բայց Քրիստոս» (273): Այլ-այղ շատ օրինակներ կան Ոսկեբերանի՝ Մատթեի մեկնության մեջ, որտեղ դարձյալ շաղկապի դեպքում այղ է, դերանվան դեպքում՝ այլ: «Առեալ օրէնս ոչ ի տախտակս քարեղէնս, այղ ի տախտակս սրտի մարմնեղէնս» (5): «Եւ այլքն ի կարգաց եւ ի հաճոյական վարուց» (5): «Եւ իշխանութիւնք եւ փառք եւ պատիւք և այլ ինչ այսպիսի» (11): «Զի ոչ եթէ ներքուստ ի վեր նոյնան, այլոցն սկսանի, այղ անդուստ ի վերուստ» (17): «Իսկ Ղուկաս ոչ այսպէս, այղ նախ զայլ բազում իրս յիշէ և ապա յետո գայ հասանէ ազգահամարն. եւ ոչ այսչափ այղ և այլ ևս ազգ» (17):

Լ-ի ղ գրության և հետագայում արտասանության, ապա և ղ/խ հնչյունափոխության պատճառով, որոշակի դժվարություններ են առաջանում մի շարք բառերի ստուգաբանության կամ սկզբնաձևի վերականգնման համար (տե՛ս ղ/խ տարբերակները):

Հնչյունների դրափոխության երևույթը հայերենում գործել է շատ վաղուց: Հին հայերենում կայուն գրություն ստացած բազմաթիվ բառեր հ.-ե. կամ փոխատու ձևի համեմատությամբ դրափոխված են՝ եղբայր, դարբին, երկու, լիրբ, նուրբ, աշխարհ...: Դրափոխությունը կապվում է հիմնականում ր- հնչյունի հետ (հմմտ. նաև կապերտ-կարպետ): V դարի տվյալներով կան մի քանի զուգաձևեր, դսրով-դրսով, դրժել-դժրել, կամուրջ-կարմունջ: «Երկու ազգ դրժողաց են. մին զազանաց և միւսն մարդկան» (ՆՀԲ): «Զանգործութիւն պչար դժրօղն» (ՆՀԲ): Փոխառյալ ձևին հարազատ է դրժել-ը. հմմտ. դրուժ: «Աստ առ հայել ընդ կին մարդ վասն ցանկութեան դրսովեալ է» (Կիւրղ, 119, նաև՝ 224, 244, 187, 291 ...), «Եթէ ոտնահար եղէ ... զզուեցայց ապա և ես ի ժողովրդենէ իմմէ դսրովեալ» (Յոբ, ԼԱ. 29): Չդրափոխվածը դսրովն է (իր. srva-srov): Դրսով- ձևի ՆՀԲ-ի վկայությունները ուշ շրջանից են: Թեև բառարանները կարմունջ ձև չեն արձանագրում, բայց մեզ հանդիպել է և այդ ձևը՝ եթե վրիպակ չէ (Մամբրէ, 45):

* * *

Որպես հնչյունական փոփոխություններով բառային տարբերակների լրացում-հավելված ներկայացնում ենք գրաբարում տարածված հատուկ անունների (անձնանուններ և տեղանուններ) զուգաձևերը: Դրանք շատ են հատկապես Աստվածաշնչում, բայց հանդիպում են նաև այլ գործերում:

Աստվածաշնչում. Զաքարիա-Զաքարիոս, Կայէն-Կային, Կարմել-Կարմելոս, Կիպրոս-Կիւպրոս, Հաբել-Աբել, Մակաբէ-Մակաբէոս, Մանասէ-Մանասս, Մասեկա-Մասեկկա, Մեսողոմ-Մեսողովմ, Միքքա-Միքեաս, Մովրադ-Մովրեդ, Մուրդքէ-Մուրթքէ-Մուրթքէոս, Յաբոկ-Յակովբ, Յեսու-Յեսուս, Յերոբոաղ-Յերոբովաղ, Յոզաբդոս-Յոզապտոս, Յովհան-Յովհաննես, Յուդա-Յուդաս, Նաասոն-Նաասովն, Նեեման-Նէէման, Ոզի-Ոզիա-Ոզիաս, Ովբեդ-Ովբէդ-Ովբէթ, Ուրիա-Ուրիաղ, Սողոմոն-Սողոմովըն-Սաղամոն, Սամաա-Սամաաս-Սամայի-Սամայիաս, Սառա-Սարա-Սարրա, Սարայիա-Սարայիաս, Սեհոն-Սեհովն, Սիմոն-Սիմէոն-Սիմէովն-Սիմովն, Սիոն-Սիովն, Սոկկովթ-Սոքքովթ, Սողոս-Սաւղոս, Սոմորոն-Սոմորովն, Տուբի-Տուբիա, Փաադմովաբ-Փաաթմովաբ, Փակէէ-Փակէիա, Փասոր-Փասուր, Փեննեհէս-Փենէէս, Քաղեբ-Քաղէբ, Քեղկիա-Քեղկիաս, Քետիմ-Քետտիմ, Օնան-Ովնան:

Այլ գործերում. Ահարոն-Ահարովն, Գարեգին-Գարէգին, Գնել-Գնէլ, Մեհենդակ-Մեհընդակ-Մեհունդակ, Ներսեհ-Ներսէհ, Տերէնտ-Տերենտ-Տէրէնդ, Աշտաշէս-Արտաշէզ, Յոհան-Յովհան, Միհրդատ-Միհրդաթ, Շամբատ-Շամբաթ, Եղիսէ-Եղիշէ-Եղիշայ, Ատրպատական-Ատրպայական-Ատրպատճացն, Մծբին-Նծբին, Տոսպ-Տոզբ, Թուրէժ-Թուրէշ-Թուրէջ, կասբից-կազբից, Տիգբոն-Տիսպոն-Տիսփոն ...*

Այս կարգի զուգաձևերում առկա են վերը նշած մի շարք հնչյունափոխական օրինաչափություններ, որոշ դեպքերում էլ՝ փոխատու լեզվի ձևը։ Օրինակ՝ Եղիշայ՝ ասորական ձևն է, Եղիսէ-ն հունական, իսկ հայերենում ավելի հաճախական Եղիշէ կարելի է համարել հունահայկական ձև։

II. ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

Այս դասակարգմամբ ներկայացվող զուգաձևերի տարբերությունները ըստ էության դարձյալ հնչյունական են, բայց քանի որ դրանք ի հայտ են գալիս բառակազմության գործընթացում, նպատակահարմար գտանք ներկայացնելու առանձին՝ որոշ ենթախմբերով։

1. Ածանցային տարբերակներ

Բառաշարքերը առկայանում են նմանատիպ (նույնիմաստ՝ հնչյունական որևէ տարբերությամբ) ածանցներով (չենք անդրադառնում հոմանիշ ածանցներով՝ բար–պէս–օրէն, դժ–ան–տ *կազմված ձևերին, սրանք համարելով այլ կարգի երևույթ)։ Սկսենք նախածանցներից.*

Համ/հոմ: *Առավել հաճախականը և արդյունավետը* համ-ն *է, որով ՆՀԲ-ն V դարից վկայում է 119 բառ։ Հոմ-ով ձևերը հասնում են մեկ տասնյակի։ Հանդիպում են հետևյալ զուգաձևերը.* համահայր–հոմահայր, համանուն–հոմանուն, համանունութիւն–հոմանունութիւն, համասեռ–հոմասեռ, համասեր–հոմասեր, համացեղ–հոմացեղ, համերամ–հոմերամ: *Բերենք երկու օրինակ. «*Համածին *անուշութիւնս մատուցանեն կերողացն գխորտկաց որոշութիւնս» (Փրպ., 10)։ «Եթե* հոմածին *զհոմածին իւր խոցիցէ...» (ՆՀԲ)։ «Ձիարդ* համահարք *և միոյ մօր որդիք երկպառակք լինիցին և ոչ միաբանք» (Եղիշե, 170)։ «Երաշխիս գոյ*

---

* Նծբին *ձևը կիրառել է Բուզանդը (116)։ Այն կարող է լինել Բ-ի մոտ մ>ն հնչյունափոխության արդյունք, կամ ասորական հարազատ ձև* (Nşıwın):

տիրագոյն, նախ իսկ զհօրն և երկրորդ զհաւուն և երրորդ զհոմահարց եղբարցն» (ՆՀԲ)։ Հոմ- ածանցով որոշ բառեր՝ հոմիշխան, հոմանախանձորդ համ-ով զուգահեռը չունեն։ Համ-ի համար ենթադրում է հ.-ե. ծագում՝ *Sm̥-ից կամ իրանական փոխառություն։ Հոմ-ը հունաբան գրքերի կերտած ածանցներից է՝ հուն. ὁμο-ի պատճենումը։

Ենթ/ընթ: Ենթադրեմ-ընթադրեմ, ենթադրութիւն-ընթադրութիւն, ենթակայ-ընթակայ, ենթակայութիւն-ընթակայութիւն: Ենթ «տակը» համապատասխանում է հուն. ὑπο-ին, որ ըստ Աճառյանի «գտնվում է մի խումբ հելլենադպրոցյան բառերի սկիզբը, որոնք թարգմանաբար կազմվում են հունարենից. ենթադրել հուն. ὑπο-τίθημι, ենթածել ὑπ-ἀγω» (տե՛ս Արմ. ենթ արմատի տակ)։ Ենթ-ը հայերեն ընդ-ի նմանությամբ ստեղծված ածանց է՝ հունարենի ազդեցությամբ, ընթ-ը ենթ-ի լծորդն է՝ դարձյալ հունաբանության նորամուծումներից՝ նվազ հաճախական։ Աճառյանը միայն ընթադրելն է համարում դասական շրջանից վկայված (տե՛ս նաև Ա. Մուրադյան, 1964, 75—86)։ Ենթ-ով ձևերի մոտ նկատվում է բազմիմաստություն, օրինակ, ենթադրություն «իրեն ենթարկել» նաև՝ «առաջարկություն», ենթակա «ստորակա, առարկա» նաև՝ «լեզվաբանական տերմին», ենթադրել «ներքև գցել, նվաճել» նաև՝ «հաստատել, կարգել»։ Ընթ-ով ձևերի բազմիմաստություն չի արձանագրված։ Թեպետ ընթ-ը դիտվում է որպես ենթ նախածանցի և ընդ նախդրի միջին ձև և ընդ-ի բարբառային տարբերակը (Ա. Մուրադյան, 1964, 70), սակայն առարկելի է ընթ-ը բարբառային ձև համարելը. այն թերևս արհեստական, բայց գրական ձև է։

Մի շարք զուգաձևեր ներկայանում են -ան- միջնածանցի առկայությամբ ու բացակայությամբ. ամամ-ամանամ, ամբարշտեմ-ամբարշտանամ, անիծեմ-անիծանեմ, անհաւատամ-անհաւատանամ, արտասնեմ-արտասանեմ, զատեմ-զատանեմ, շատիմ-շատանամ, ցանկամ-ցանկանամ, ծուլամ-ծուլանամ, ցրտամ-ցրտանամ: «Եւ օդ հիւսիսոյ թէ շնչիցէ ցրտագոյն, սարսուռ, կարկաչել ... և ցրտալ» (Փիլ., Բանք. 62)։ «Զցրտանալն ի հեշտ ցանկութեանց աստի» (ՆՀԲ)։ «Արդ ոմանք զձմեռնայինսն ոչ ըմպեն յեղանակս փոխանակ ջրոյ շատեալ օդոյն ցրտութեամբ» (Փիլ., Բանք, 48)։ «Զեղից ձեզ զօրհնութիւն իմ մինչև ի շատանալ» (ՆՀԲ)։ «Որպէս հայր քո յորժամ զորդի իւր խրատիցէ ... չծուլալ յուսմանէն» (Եզն., 42), «Ծուլանան առ բարի գործն» (ՆՀԲ)։

Ան-ով որոշ ձևեր V դարի վկայություններ են, իսկ առանց ան-ի

հնահնդեվրոպական. անձկանամ-անձկամ, բեկանեմ-բեկեմ, զղջանամ-զղջամ և այլն: Ան- միջնածանցի բնույթի վերաբերյալ հայ քերականագիտության մեջ տարբեր կարծիքներ են արտահայտվել: Գ. Ավետիքյանն, օրինակ, ատ, ոտ, տ ածանցները համարում է սաստկական, իսկ «անուշցնող մասնիկ է ան-ը, որ նշանակութիւնը չի փոխէր, զոր բեկիմ-բեկանեմ, անիծեմ-անիծանեմ, օծեմ-օծանեմ և այլն» (Ավետիքյան, 1815, 283): Նույն տեղում Ավետիքյանը բերում է և Գ. Մաղխասյանի կարծիքը, որը այդ ձևերը դիտում էր որպես ռամկական և ազնվական ոճերի արտահայտություն:

Ավետիքյանի «անուշցնող մասնիկ» արտահայտությունը ըստ էության գիտական բացատրություն չէ, իսկ Մաղխասյանը թերևս նկատի ուներ այն հանգամանքը, որ ան-ով մի շարք ձևեր ժամանակագրորեն ավելի հին են, և դրանք համարել է «ազնվական ոճ»: Կա ավելի գիտական բացատրություն, ըստ որի ան-ով բայական ձևերը ավելի տևական գործողություն են արտահայտել: Այս հարցին անդրադարձել են նաև բայի հարցերով զբաղվող խորհրդահայ մի շարք լեզվաբաններ (Ղափանցյան, 1939, Բարսեղյան, 1953, Ս. Աբրահամյան, 1962): Ենթադրվում է, որ ան/են-ը տևական կերպի ձևաբանական արտահայտիչ էր: Սրա օգտին է խոսում -ան-ի միայն ներկայի հիմքից կազմված ժամանակաձևերում (տեսանեմ, տեսանէի, տեսանիցեմ) հանդես գալու հանգամանքը: Կերպային այս հակադրությունը գուցե հստակ է եղել նախագրային շրջանում, իսկ V դարի վիճակով այն հստակ չէ և հաճախ հենց նույն հեղինակը կիրառում է երկու ձևերն էլ՝ առանց կերպային որևէ զանազանության. «Առնել զանձնիշխանութիւնն ում կամի ծառայանալ, որ մեծ շնորհն պարգեւեալ է նմա յԱստուծոյ. քանզի այլ ամենայն ի հարկէ ծառայէ աստուածական հրամանին» (Եղն., 40): «Անձն ամպարշտի ցանկանայ չարեաց և ոչ գտցէ» (Առակ. ԻԱ. 10), «Ամպարիշտ ցանկայ զամենայն աւուրս զցանկութիւն» (Ն. տ.):

Ընդհանրապես, տևականություն-ոչ տևականություն, կատարյալություն-անկատարություն կերպային դրսևորումները V դարի գրաբարում օրինաչափ չէին: Ուսումնասիրողները անկատարություն—կատարելիություն հակադրությունը փորձում են տեսնել առաջին ապառնի / երկրորդ ապառնի ձևերի մեջ: Անդրադառնալով ներքոհիշյալ օրինակին՝ «Յորժամ քաղաք և գիւղք աւերեսցին և անդ դեւք բնակիցեն և կեղծս ի կեղծս յայտնիցին» (Եղն., 98), Աճառյանը գրում է. «Ավերումը միայն մի անգամ եղավ և վերջացավ, իսկ դևերի բնակությունը անորոշ ժա-

մանակով է» (ԼՔՀԼ, 4, 61)։ Բայց սա գրաբարի համար բացարձակ օրինաչափություն չէ։ Հանդիպում ենք և հակառակ բնույթի օրինակներ. «Եւ որ լսիցեն կեցցեն» (Յովհ. է. 23)։ «Եթե որ ուտիցէ ի հացէ յայսմանէ կեցցէ ի յաւիտեան» (Ն. տ.)։ Այս օրինակում էլ, առաջին ապառնիով դրված են այն բայերը, որոնց նշած գործողությունը մեկ անգամ կկատարվի և կվերջանա, երկարատև, չավարտված գործողությունն, ընդհակառակը արտահայտված է երկրորդ ապառնիով։

Որոշ դեպքերում զուտ լծորդներ են ան-ը և են-ը։ «Նա չկլացելոյն և չծնելոյն անուն դնէր» (Եղն., 123)։ «Նոյնպէս և ոչ բարւոյ ընդ չարին մարթէր ի միում արգանդի յղենալ» (Եղն., 133)։

Կան տարբերակներ, որոնք առկայանում են վերջածանցման բնույթով։ Երէն/արէն: Դրվելով նախատիպ բառի վրա մատնանշում են որևէ լեզու. յունարէն-յունէրէն, հրէերէն-հրէարէն, հռովմերէն-հռովմայերէն...։ «Նոքա ... մերձաւորեալք ի յունարէն հեղենայինսն (Փրպ., 15)։ «Ոչ ինչ էին այնպէս տեղեակ գիտնապէս հրահանգի յունարէն ուսմանն» (Փրպ., 16)։ «Որ է անգամ մարմին, անբեղուն ըստ բուսոյ և անհամ ըստ ճաշակոյ յունէրէն» (Փրպ., 181)։

Պան/պան: Դռնապան-դռնապան, դիւանապան-դիւանապան, կապանապան-կապանապան... Միշտ չէ, որ առկա է համապատասխան զուգահեռը։ Կա թիկնապան, բայց թիկնապան չկա, ունենք բարապան, սակայն բարապան ձև չի վկայված։ Պանդոկապան-ի պանդոկապան զուգահեռը նույնպես չի վկայված, դրախտապան չկա, բայց կա դրախտապան։ Պան/պան-ով զուգաձևերը V դարի տվյալներով մեծ թիվ չեն կազմում։ Թեև արդի հայերենում դրանք քիչ գործուն ածանցներ են համարվում (Գալստյան, 1978, 95), բայց դրանցով կազմված բառերը ավելի շատ են քան գրաբարում։

Ենի/ի: Չանդրադառնալով այս ածանցների բազմիմաստությանը, խոսենք միայն իմաստային մի խմբում՝ բուսանուններում, այդ ածանցների դրսևորման մասին։

V դարի տվյալներով ունենք ոչ մեծաթիվ զուգաձևեր. ուռի-ուռենի, խնձորի-խնձորենի։ Որոշ անվանումներ կազմվում են ի-ով, իսկ մյուսները ենի-ով։ Տանձի, ծիրանի, ընկույզի, կաղնի, բայց՝ նռենի, թզենի, թըթենի, մորենի, խնկենի, ձիթենի ... և այլն։ V դարից ունենք դեղձի, իսկ դեղձենի-ն ուշ շրջանից է, մյուս կողմից հինգերորդ դարից է սարդենին, իսկ սարդի-ն՝ ուշ։ Մայրի-ն մայրենի զուգահեռը չունի՝ այլ մայր։ Հմմտ. «Ապա երթեալ հասանէին ի գաւառն Բասենոյ ի մէջ մայրեացն»

(Ագաթ., 104)։ «Զմայրս եւ զեղեւնափայտս հարցուք» (Եսայ. Թ. 10)։ Կա մուտ-մտենի, բայց մտի չկա։

Ի/ենի զուգահեռներից հնագույնը ի-ն է «Ի-ն վաղնջահայերենի գործուն ածանցներից է. բարդի, կաղնի, հացի,... համեմատաբար ուշ է տարածում ստանում -ենի- ածանցը, որ ոմանք ուրարտական ազդեցությամբ են բացատրում» (Ջահուկյան, 1987, 231)։ Ի-ի հնությունը հաստատվում է նաև փաստերով. սոճ, նոճ, մայր անածանց ձևերը ունեն միայն սոճի, նոճի, մայրի զուգահեռները։ Արդի բարբառներում փաստորեն միայն ի- է։ Այդպես է օրինակ Ղարաբաղի բարբառում, որտեղ նկատվում է մեկ առանձնահատկություն ևս։ Պտղատու ծառերի անվանումները ի-ով են, այդ մրգի տարբեր տեսակներ անվանող ծառերը՝ ենի-ով։ Օրինակ՝ տանձի, բայց այս նույն մրգի տարբեր ծառատեսակներ՝ ծըմրռնենի, կուլենի, կըրմըրէնի..., իսկ երբ չեշտվում է մրգի անվանումը, դարձյալ ի-ով է կազմվում. մըխուրտանձի, ֆըլըխընձորի...։ V դարից ի-ով և ենի-ով ձևերն էլ վկայված են, բայց ավելի տարածվածը առաջինն է։ Թթենի, թզենի, նռնենի, ուռենի ձևերից կարելի է եզրակացնել, որ նախապես ենի-ով կազմվել են միավանկ բառերը։

Արդի հայերենի ի-ի համար բնորոշ է համարվում ավելի ժողովըրդախոսակցական երանգը (Գալստյան, 1978, 131)։ Ենի/ի զուգաձևությունները դրսևորվում են նաև վայրի/վայրենի բառերի մեջ։ «Փոխեալ զնա ընդ ցիռս վայրի» (Ագաթ., 99)։ «Հաւքն վայրի ծանեան զժամանակ գալստեան իւրեանց» (Ագաթ., 339)։ «Ելեալ ըստ մարդկային բնութիւնս արտաքս՝ ի նմանութիւն վայրենի խոզաց» (Ագաթ., 118)։ «Ընդ անդամս ոսկերացն բուսեալ էր խոզանաստեւ իբրեւ զմեծամեծ վարազաց վայրենեաց» (Ագաթ., 379)։

Ոց/(ա)նոց։ Այս ածանցները համանիշ են ստան, արան-ին և նախատիպ բառի հետ դրվելով ցույց են տալիս տեղ, մի բանից շատ լինելը։ Դրանցով կազմված զուգաձևություններից նշենք. դպրոց-դպրանոց, հանգստոց-հանգստանոց, համբարոց-համբարանոց, մոխրոց-մոխրանոց, պոռնկոց-պոռնկանոց, վարժոց-վարժանոց, «Կարգեն դպրոցս, մին զբունն իւրեանց ասորին և միւս եւս զյոյն» (Խոր., 164), «Իբրեւ ի դպրանոցս տան» (ՆՀԲ)։ «Դէպ եղեւ նոցա գալ մտանել ի փողոցամէջս համբարոցացն» (Ագաթ., 27)։ «Որոց ոչ գոն շտեմարանք և ոչ համբարանոցք (Ղուկ., ԺԲ, 24)։ «Ի կրել արտաքս զաւելորդ թրքածս մոխրոցացն՝ ձանձրացուցանէ զգազախդէմ զկրողսն» (Փրպ., 56)։ «Մը-

տեալ ի տուն մոխրանոցին զկրակն ասաց զոլ ատուած» (Փրպ., 39)։

Սկզբնապես այս ածանցներն ունեցել են տարբերակված կիրառություն։ Ըստ երևույթին անոց-ը գրվել է նախատիպ բառը անձ լինելու դեպքում։ Այդ են հաստատում հետևյալ բառերը, որոնց ոց-ով զուգահեռները վկայված չեն. դատաւորանոց, բժշկանոց, բոզանոց, եղբայրանոց, եպիսկոպոսանոց, երիտասարդանոց, ժողովրդանոց, կանանոց, մարգարէանոց, որբանոց, պանդխտանոց, սարկաւագանոց, վարդապետանոց։ Անոց-ը հաճախական է նաև այն դեպքերում, երբ այդ ածանցով կազմությունը ցույց է տալիս տեղ, որ մարդկանց համար է. աղօթանոց, դիտանոց, խորհրդանոց, կապելանոց, կոււանոց, մենանոց/միայնանոց, միանձնանոց, մասվաճառանոց, վկայանոց։ Երևի այս սկզբունքին են ենթարկվել նաև այն կազմությունները, որոնց նախատիպը որևէ կենդանու (թռչունի) անուն է. լօրանոց, եզնանոց...։ Մյուս դեպքերում գործում է -ոց- ածանցը. ծաղկոց (ծաղկանոց-ը ուշ շրջանից է), դարմանոց... և այլն։ Կան նաև շեղումներ, որ թերևս հետագա գրչագրության պետք է համարել։ Վկայված է մրջինոց (մրջնանոց չկա), կոյանոց, խնկանոց...։

Ոց- ածանցը նախատիպ բառի հետ գրվելով ցույց է տալիս նաև իր, առարկա։ Թիկնոց, պրկոց, ջնջոց։ Վկայված է թիկնանոց ձևը, սպասելի *նուիրոց ձևի փոխարեն առկա է նուիրանոց։

Ս. Ղալստյանը արդի հայերենի ոց-ով բաղադրություններից, որ ունեն նախատիպ բառի ցույց տված տեղի համար նախատեսված հագուստ, զարդ և այլն նշում է. անթոց, բազկոց, ականոց, ճակատոց, բերնոց, ձեռնոց, թիկնոց... (Ղալստյան, 1978, 169)։ Գրաբարում ականոց, ճակատոց, ձեռնոց չկա (կամ չի վկայված)։ Բացառված չէ, որ այդ առարկաները ընդհանրապես չկային։ V դարից չկա և բազկոց, կա բազկանոց՝ ուշ շրջանից, նաև բազպան։ Թիկնոց վկայված չէ, այլ՝ թիկնանոց։ Բերնոց «սանձ»-ի փոխարեն կա բերանակապ։ Մի խոսքով, իմաստային այս խմբի համար գրաբարում ոց/անոց ածանցով կազմությունները հաճախական չեն։

Անէ/ինէ։ Ածանցներին հանդիպում ենք նախատանէ-նախատինէ զուգաձևերում։ «Ոչ ի նախատանս առաւել՝ քան ի գութ նախատանաց» (ՆՀԲ)։ «Բարձին յանձանց զնախատինս այրութեան» (Եղիշե, 202)։

2. Հիմնակազմական տարբերակներ

Սրանք ըստ էության հնչյունական տարբերություններ ներկայացնող զուգահեռներ են, որ առկայանում են բառակազմության ժամանակ, ըստ հիմքային առանձնահատկությունների:

Ներկայի հիմք/ներգործական դերբայով հիմք *(զրո/ող)*: -Անկարութիւն-անկարողութիւն, աննիշութիւն-աննիշողութիւն, բամբասութիւն-բամբասողութիւն, գիտութիւն-գիտողութիւն, դժրութիւն-դժրողութիւն, լսութիւն-լսողութիւն, ճգնութիւն-ճգնողութիւն, մարդահաճութիւն-մարդահաճողութիւն:

«Ոչ բնութեան անկարողութիւն դնեմք իբրև յանբան կենդանիսն» (ՆՀԲ): «Եթէ անկարութեան էր աղօթքն, ոչ անզօր միայն էր, այլև անգէտ» (Ոսկ. ՅՍ. ա. 18): «Զորս գտեալ՝ ածէ և զնոսա ի գիտութիւն ճշմարտութեան» (Խոր., 340), «Ծածկեցաւ յինէն անվրէպ գիտողութիւն ճշմարտարքնին հանդիպութեան (ՆՀԲ):

Ներկայի հիմք/անորոշ դերբայի հիմք (զրո/ել): Անսիրութիւն-անսիրելութիւն, ընկղմութիւն-ընկղմելութիւն, օծութիւն-օծելութիւն, օտարսիրութիւն-օտարսիրելութիւն:

Անորոշ դերբայով հիմք/ներգործական դերբայով հիմք (ել/ող): Լսելութիւն-լսողութիւն, գիտելութիւն-գիտողութիւն, անծնելութիւն-անծնողութիւն, ծնելութիւն-ծնողութիւն: *Անորոշ և ներգործական դերբայի հիմքով կազմությունները հաճախական չեն, սրանք թերևս հունաբանության դրսևորումներ են. Գ. Անհաղթի մոտ կան որսողական, լսելական, որոնք բառարաններում վկայված չեն:*

Ներկայի հիմք/անցյալ կատարյալի հիմք (եց/աց):—Ազդական-ազդեցական, ազդութիւն-ազդեցութիւն, անական-անեցական, անուն-անեցուն, յագութիւն-յագեցութիւն: Մուրական *(Ոսկ. պող. 29)* — մուրացկան:

Բայարմատ-կատարյալի հիմք (զրո/աց): *Բարկութիւն-բարկացութիւն, զայրութիւն-զայրացութիւն, զայրումն-զայրացումն, սքանչումն-սքանչացումն (Հովսեփյան, 1987, 88): Լ. Հովսեփյանը (88—89) բերում է այլ դասակարգումներ՝ համապատասխան օրինակներով. բայարմատ-պատճառական հիմք (բարձիչ-բարձրացուցիչ), ներկայի երրորդ դեմք-կատարյալի հիմք (գոյութիւն-գոյացութիւն): Շատ են հատ-*

կապես հրամայականի հիմք/կատարյալի հիմք զուգաձևերը. կենդանատու-կենդատուր, հարկատրութիւն-հարկատութիւն, հրամանատրութիւն-հրամանատութիւն, վանատու-վանատուր։

Հետաքրքիր զուգաձևություններ են դրսևորում տամ, լի, կամ *բառերով.* աղեrսալի-աղեrսալից, ամօթալի-ամօթալից, խնկալի-խնկալից, վշտալի-վշտալից, արտօսrալի-արտօսrալից, օrինատու-օrինատուr, կայ-կաց, առաջակայ-առաջակաց, անընդդիմակայ-անընդդիմակաց, ընբեrակայ-ընբեrակաց։

Բերենք մի քանի օրինակ. «Անդ աղօթք աղերսալիք և խնդրուածք հաշտեցուցիչք» (Կոր., 32)։ «Եւ աղերսալից բարբառով ասէր ցյանցուցեալն» (Եղն., 73)։ «Ընդ փառաց զգեցեալ են ամօթալի ձաղութիւնս» (ՆՀԲ)։ «Ամօթալից առնեն զերեսս իւրեանց» (Ագաթ., 149)։ «Հաճոյ թուէր բանն առաջի թագաւորին և ամենայն մեծամեծացն, մանաւանդ որ էին առաջակայք օրինացն» (Եղիշե, 19) «...ի վայրենի ջոլիրս մի իմն ի թագաւորականացն առաջակայ եղեալ» (ՆՀԲ)։

ՆՀԲ-ն օrինատուr *բառ չի նշում, բայց այդպիսի բառ կա V դարից. «Սրբութիւն նոցա պղծութիւն է և պահք նոցա բամբասանք և ընթերցուածքն անէծք, զի կերակրիչն և զօրինատուրն բամբասեն» (Եվս. եմես. Բ. ճառ)։*

Կան նաև հատված և լրիվ հիմքերով զուգաձևություններ, որոնք մոտենում են հնչյունական տարբերակների տիպին (Հովսեփյան, 1987, 89)։ Մեքենաւորութիւն-մեքենայաւորութիւն, նշանական-նշանակական, շարունական-շարունակական, դելփական-դելփիական։

Հիմքակազմական տարբերակների մեջ նշենք երկու, երեք, չորս թվականների տարբեր հիմքերով կազմված ձևերը։ Երկու *թվականի հիմքը վկայված է* երկ, երկու, երկի *ձևերով. երկգլուխ, երկուկանգնեան, երկեամ (երկի-ամ), երեք-ը* եռ, եrեf, եr, եrի. *եռամսան, երեքայրի, երամսեայ, երրեակ (երիր-եակ), չորսը՝* չոr, չոrf, չոrեf *և տարահիմք՝* fառ-. *չորրորդ, չորեքկարպ, քառորդ (Հովսեփյան, 1987, 88)։ Այս հիմքով կազմված բառային տարբերակները շատ չեն.* երկօrեայ-երկուօrեայ, երկուrակեան-երկոrակեան, եռօrեայ-եrեfօrեայ, եռանկիւնի-եrեfանկիւն, չոrեfկաrգեան-fառակաrգեան, չոrեfկուսի-fառակուսի *և այլն։ Ահա մի քանի վկայված օրինակ. «Երկօրեայք եկաք ի պատիուղս»։ «Ոմանք միօրեանս, ոմանք երկուօրեայ» (ՆՀԲ)։ «Երկաքանչիւրոց ի միասին եղեալ հաւասարակողմ հաւասարակողմի, եռանկիւն եռանկեան տայցուք» (ՆՀԲ)։ «Երեքանկիւք իմն կարգեաց ձևով» (Խոր., 36)։*

«Եռամասնեայ բացատուն եռամասնեայքն լնուին» (ՆՀԲ)։ «Երեքմասնեայ ոգւոցս մերոց եղելոց» (Փիլ., այբ.)։ «Արասցես զնա չորեքանկիւնի, թզաւ յերկայնութիւն՝ և թզաւ ի լայնութիւն» (Ելք, ԻԸ, 16), «Երկուտասանիցն թիւ բաղկանայ յառաջնոցն յերկոց քառանկիւնեաց՝ ի չորից և յիննէն (Փիլ. լին. ՆՀԲ)։

Եռ, քառ հիմքերով տարբերակները երեք, եր, չոր(ք)-ի համեմատությամբ թերևս ավելի նոր կազմություններ են, բնորոշ գիտական ոճին։ Սրանք եթե հունաբանության անմիջական դրսևորում չեն, ապա ակնհայտորեն հաճախական են հունարենից թարգմանված գրականության մեջ, ուրեմն գրքային ճանապարհով անցած կազմություններ են, տերմինային արժեք ունեցող բառեր։

Գրաբարում բառակազմական հիմքեր են երկար-ը և երկայն-ը՝ հ.-ե. նույն արմատից՝ այն և ար- ածանցով։ Գրաբարի բարբառների ավանդած օրինակները վկայում են, որ երկայն-ը ավելի հաճախական է, և այն բառակազմական ավելի արդյունավետ հիմք է, քան երկար-ը։ Պատկերը այլ է արդի գրական լեզվում, իսկ բարբառներում թերևս հարազատ է գրաբարյան վիճակը. երկայն-ը բարբառներում ընդգրկում է տարբեր տարածքներ։

Աստվածաշնչում երկայն կիրառված է 4 անգամ, որից մեկը ժամանակային իմաստով։ Այդ հիմքով՝ երկայնագոյն, երկայնակեաց, երկայնամիտ, երկայնամտել, երկայնատարած, երկայնել, երկայնամտութիւն, երկայնութիւն, երկայնօրեայ։ Երկար հանդիպում է 2 անգամ՝ ժամանակային իմաստով։ Այդ հիմքով՝ երկայնագոյն. դարձյալ ժամանակային իմաստով։

Կորյունը ունի միայն երկայն (2 անգամ) և՛ տարածական, և՛ ժամանակային իմաստով։ «Զամենայն ընտրութիւնս նշանագրացն ... զկարճըն և զերկայնն ... յաւրինեալ և յանցուցեալ» (48)։ «Երանելւոյն Սահակայ լցեալ աւուրբք երկայն ժամանակաւք» (86)։ Կորյունի մոտ երկայն հիմքով այլ կազմություններ չկան։

Եզնիկը՝ երկայն չունի, իսկ այդ հիմքով կան երկայնամիտ, երկայնել, երկայնամտութիւն։ Երկար կիրառել է մեկ անգամ՝ ժամանակային իմաստով. «Այլքն ասեն, վասն զի ոչ տեւէր մարմինն ընդ շընչոյն յերկար ժամանակս կեալ» (72)։

Բուզանդը՝ 5 անգամ երկայն՝ տարածական իմաստով։ Այդ հիմքով՝ երկայնամիտ, երկայնամտութիւն, 3 անգամ՝ երկար՝ տարածական և ժամանակային իմաստով. «Ընդէր այնչափ երկար թողացուցին նմա

խօսել» (149)։ «...ընդ երկար ճանապարհ» (74) կա նաև՝ երկարեմ։

Ագաթանգեղոսը՝ **երկայն** (5 անգամ)՝ ժամանակային և տարածական իմաստով։ Այդ հիմքով՝ երկայնակեաց, երկայնամիտ, երկայնամտութիւն, երկայնութիւն, երկայնուղի։ **Երկար** չկա, բայց կա **երկարակեաց**։

Եղիշեն ունի **երկայն** (2 անգամ)՝ տարածական և ժամանակային իմաստով. «Աղօթս առնել ի վերայ կենաց թագաւորի և անձանձրոյթ խնդրել յԱստուծոյ վասն երկայն ժամանակաց զորս» (29)։ «Եւ արկին պարանս երկայնս յոտս նոցա» (160)։ **Երկայն** հիմքով՝ երկայնաբան, երկայնակեցութիւն, երկայնամիտ, երկայնեմ, երկայնութիւն։ **Երկար** — Եղիշեն չունի։

Փարպեցին ունի **երկայն** (2 անգամ)՝ ժամանակային իմաստով, այդ հիմքով՝ երկայնագոյն, երկայնամիտ, երկայնամտել, երկայնաչափութիւն, երկայնեմ։ Մեկ անգամ կիրառել է **երկար**՝ ժամանակային իմաստով, այդ հիմքով՝ երկարագոյն, երկարել, երկարումն։ Այս բառաձևերն էլ դարձյալ ժամանակային իմաստով են. «Յերկարումն է խօսից և ձանձրութիւն» (173)։ «Հանգչէր երկայն ծերութեամբ» (116)։

Խորենացին՝ մեկ անգամ **երկայն**. «Ուր երկայն ճանապարհաց յոյսն հեշտացուցիչ» (361)։ Այդ հիմքով՝ երկայնակեաց, երկայնաձեւ, երկայնաձիգ, երկայնամիտ, երկայնանիստ, երկայնեմ, երկայնամտութիւն, երկայնութիւն։

Երկար — Խորենացին կիրառել է 6 անգամ՝ ժամանակային և տարածական իմաստով։ Ունի երկարել, երկարոգի, երկարութիւն (բոլորն էլ ժամանակային իմաստով)։

Այս վիճակագրությունը առաջին հերթին հաստատում է, որ V դարի մատենագրության մեջ առավել հաճախական է և արդյունավետ **երկայն** հիմքը։ Սա բնորոշ է և հետագա դարերի գրաբարին, որը դարձյալ հաստատվում է վիճակագրությամբ։ Այսպես, Հ. Դրասխանակերտցին երեք անգամ ունի **երկայն**՝ ժամանակային և տարածական իմաստով։ Այդ հիմքով՝ երկայնագոգ, երկայնամտութիւն, երկայնութիւն։ **Երկար** բառը և այս հիմքով կազմությունները չկան։ Ասողիկը **երկայն** և **երկար** առանձին բառ չունի, բայց ունի երկայնաբազուկ, երկայնագոյն, երկայնակեաց, երկայնակեցութիւն, երկայնաձեռն, երկայնութիւն։ Կա և **երկարանալ**՝ ժամանակային իմաստով։

Ի՞նչ կարելի է ասել **երկայն** և **երկար** բառերի գործառական առանձնահատկությունների մասին։ Եթե ենթադրենք, որ դրանք բարբառային

(տարածքային) տարբերակներ են, ապա նույն հեղինակի մոտ վկայված երկու ձևերի առկայությունը հօգուտ այդ ենթադրության չէ։

Առկա նյութը թույլ չի տալիս անվերապահորեն պնդելու, թե երկայն-ը տարածական, իսկ երկար-ը ժամանակային իմաստով է կիրառվել։ Համենայնդեպս V դարի կտրվածքով այդ տարբերակումը արդեն չկա, եթե վկայված օրինակները հարազատ են նախահիմք ձեռագրին։ Բայց, քանի որ երկար-ի ժամանակային իմաստով կիրառությունը ավելի զգալի է, կարելի է ենթադրել, որ նախագրային շրջանում երկար-ը և երկայն-ը տարբերակված են եղել ըստ ժամանակային և տարածական հատկանիշների։ Այժմ բերենք մի քանի բառային զույգեր՝ համապատասխան օրինակներով.

Երկայնակեաց/Երկարակեաց: «Երկայնակեաց իսկ արարեալ զհարսն և յերկարակեաց ծնունդ շնորհաց» (Ագաթ., 152)։ Երկայնութիւն/Երկարութիւն: «Մի երկայնութիւն բանից տաղտկութիւն ընթերցողացն լինիցի» (Խոր., 188)։ «Բայց զի՞նչ օգուտ ինձ և խօսիցս երկարութիւն» (Խոր., 328)։ Երկայնել/Երկարել: «Զի՞ երկայնեմ բանս» (Խոր., 82)։ «Հնգետասան օր յետ բանիցն եղելոյ երկարեաց Քրիստոս» (Բուզ., 74)։ Երկայնագոյն/Երկարագոյն: «Քան զյոյժ երկայնագոյնսն և բարձրագոյնսն» (Փիլ. լին. ՆՀԲ)։ «Երթայր ընդ նոսա երկարագոյն» (Փրպ., 77)։

Հիմքային տարբերակները առաջանում են նաև տարբեր հոլովաձևերից կազմված բաղադրություններում։ Առավել տարածված են եզակի ուղղական/եզակի սեռ.-տրական հիմքերից կազմված զուգաձևությունները. այրաբար-առնաբար, այրական-առնական, այրապատկեր-առնապատկեր, այրուձի-առնուձի, անունդրութիւն-անուանադրութիւն, աշնային-աշնանային, արիւնհեղութիւն-արիւնահեղութիւն, գարնային-գարնանային, եղբայրապէս-եղբօրապէս, հայրաբարոյ-հօրաբարոյ, սերմնական-սերմանական, քաղցրենի-քաղցրուենի:

Կան եզ. ուղ. /հոգ. սեռ.-տր. (լեռնամէջ, լերանցամէջ, դիւամոլ-դիւացամոլ), եզ. ուղղ./հոգն. ուղղ. (մարդօրէն-մարդկօրէն, մարդապէս-մարդկապէս), հոգ. սեռ.-տր. /հոգն. հայց. (միմեանցասէր-զմիմեանսասէր):

Առանձին բացառություններով հանդերձ, տարբեր հոլովներով հիմքակազմությունները ներառում են ներքին թեքման պատկանող բառերը։

Տարահոլով հիմքերով բառային զուգաձևությունները պարտադիր

կազմություններ չեն։ Ըստ ՆՀԲ-ի տվյալների, այր հիմքով հետևյալ կազմությունները առն հիմքով համապատասխան զուգահեռը չունեն։ Այրաթող, այրական, այրանամ, այրասիրություն, այրասէր, այրասիրտ, այրասպան, այրասպանել, այրասպանություն, այրատեղծություն, այրացուցանեմ։ Առն հիմքով հետևյալ բառերը չունեն այր հիմքով համապատասխանությունը. առնակնութիւն, առնակոյս, առնանոց։

Առկա են նաև այնպիսի զուգաձևեր, որոնցից մեկը հինգերորդդարյան է, իսկ մյուսը հետին (համենայնդեպս ըստ բառարանային տվյալների)։ V դարից են, օրինակ այրաձև, այրանման, զարունարբեր, հետհինգերորդդարյան՝ առնաձև, առնանման, զարնանարբեր։

Որոշ զուգահեռներ ունեն և իմաստային տարբերություններ։ Այսպես այրի նշանակում է «ամուսինը մահացած կին», իսկ առնի «առնացի, արական»։ «Կին մի այրի եմ ես» (ՆՀԲ). «Ի հայրենական ազգին և յառնի զաւակին» (Փիլ. ՆՀԲ). այրակին «արուէգ», առնակին «ամուսնացած կին»։ «Յաղագս Դիոնիսեայ այրակին զոլոյն, ասեն՝ թէ զարանց իրս գործէր և զկանանց կրէր» (ՆՀԲ)։ «Կին առնակին ի կենդանի այր իւր կապեալ է օրինօք» (Ծննդ. Ի. 3)։

Հիմքակազմությամբ արտահայտվող տարբերակների բազմազան տիպերը և այդ տիպերն ընդգրկող բառերի զգալի թիվը վկայում է գրաբարի բառակազմական ճկունության ու լայն հնարավորությունների մասին։

3. Հոդակապով և առանց հոդակապի բարդություններ

Հայերենը ժառանգելով հ.-ե. բառաբարդման յուրահատկությունը՝ նախագրային վաղ շրջանում բարդությունները կազմում էր առանց հոդակապի։ Սա վաղուց համոզիչ փաստերով ապացուցված է։ Այնինչ, հայերենի գրավոր ավանդման շրջանից իսկ հոդակապը առկա է և մեծ դեր է խաղում բառաբարդման ժամանակ։ Այդ են հաստատում և վիճակագրական տվյալները։ Օրինակ, Աստվածաշնչում բառակազմության հիմնական միջոցը ածանցումից հետո (ըստ բառաքանակի), մնում է ա հոդակապով բարդությունը, մի բարդություն, որով կազմված են համաժողովրդական, բարբառային և նորակազմ գրքային շատ ձևեր (Առաքելյան, 1984, 133), իսկ մաքուր հիմքերով երկհիմք հոդակապավոր բարդությունները կազմում են գրաբարի բարդությունների 67,2 %-ը (Հովսեփյան, 1987, 95)։ Տարբեր հեղինակների գրական նորակազմու-

թյունները հիմնականում ա-ով են: Ուրեմն, ակնհայտ է, որ գրաբարում հիմնական ու հաճախական հոդակապը ա-ն է. տարաբերել, անտառախիտ, ապատագոր և այլն: Այդ գործառույթները կատարում են երբեմն այլ ձայնավորներ. ե՝ խաբեբայ, հնգետասան, ո՝ կաթոգին, ընդոծին: Իհարկե, սրանք իրենց բնույթով որոշակիորեն տարբերվում են ա-ից. խաբեբայ, հնգետասան-ի դեպքում հավանորեն խաբի, հնգի հիմքն է, ընդոծին, կաթոգին-ի դեպքում երևի դարձյալ հիմքային ձայնավորի հետ գործ ունենք:

Հոդակապի դեր են կատարում և, ու շաղկապները. այրեձի-այրուձի: Վերջապես որոշ նախդիրների կցված գրությունը կարելի է դիտել հոդակապի առկայություն. ափիբերան, բանիբուն, բարձրիգլուխ, բարձրիձայն, զառիվեր, գլխիվայր, գերիվերոյ, խառնիխուռն:

Ինչպես նշեցինք, հիմնականը ա հոդակապն է: V դարի բառապաշարում կարելի է առանձնացնել մի շարք բառային զույգեր՝ ա հոդակապով կամ առանց հոդակապի: Նշենք մի քանիսը. աղօրակեր-աղօրկեր (Բուզ.), անձնահան-անձնհան, աստուածապաշտութիւն (Կոր.)-աստուածպաշտութիւն, արտահունձ (Մանդ., 169) — արտհունձ, նախագոյն-նախգոյն (Փրպ.) ոտնակապ-ոտնկապ (ՍԳՐ), ոտնահարութիւն-ոտնհարութիւն (ՍԳՐ), ջրաբուղխ-ջրբուղխ (ՍԳՐ), ջրակիր-ջրկիր (ՍԳՐ), վատատոհմակ-վատտոհմակ, վերաբերիլ-վերբերիլ (ՍԳՐ), ֆարակոտ-ֆարկոտ:

Արդյոք պատճառաբանվո՞ւմ է այս կարգի զուգահեռների գոյությունը: Ինչպես ասվեց, վաղ նախագրային շրջանում հոդակապ և մասնավորապես ա հոդակապ հայերենը չի ունեցել: Մեյեի կարծիքով պարթևական փոխառությունների շրջանում դեռևս -ա- հոդակապ չի եղել, որ փաստարկվում է հին իրանական փոխառություններում ա-ի բացակայությամբ (Մեյե, 1978, 90), Գ. Ջահուկյանի կարծիքով ա- հոդակապը տարածվել է միայն «հնագույն շրջանում, այն էլ համեմատաբար ուշ՝ վերջավորությունների թուլացումից և անկումից հետո» (Ջահուկյան, 1987, 246—247):

Ժամանակագրության տեսակետից երկու գիտնականների կարծիքները մոտավորապես համընկնում են: Ըստ երևույթին հայերենի գրավոր ավանդմանը նախորդող առաջին, երկրորդ հարյուրամյակներում հոդակապը սկսում է գործել հայերենում, և արդեն V դարում արձանագրվում է հոդակապի լայն կիրառություն, բառակազմական մի համակարգ, որ հարատևում է մեր լեզվի հետագա բոլոր փուլերում: Վերը

նշվեց, որ վիճակագրական տվյալները վկայում են ա հոդակապով բարդությունների քանակական առավելության մասին։ Այդ հաստատվում է նաև ոչ-բառարանային տվյալներով։ V դարում վկայված, բայց ՆՀԲ-ում չարձանագրված բարդ բառերի գերակշիռ մասը դարձյալ ա հոդակապով է։ Նշենք օրինակներ տարբեր հեղինակներից։ Բուզանդ. գետախառնունք (98), եկեղեցախորան (100), եղեգնաբերան (16), երամակակալ (213), ընդիկապետ (136), իրաքաշ (57), կանանցահանդերձ (97), հայակողմն (142), հայատակ (142), շերտափակ (146), չարասիրտ (40), տառապելասէր (80), սրնգահար (196)։ Ագաթանգեղոս. առաջահեծ (432), առաջագիր (247), ծառախիթ (147), հրեշտակատես (166), պակասամտագոյն (47), պղծագունդ (164), սահմանաթաքոյց (169)։ Ագաթանգեղոսից ՆՀԲ-ում չավանդված բառերում առանց հոդակապի են միայն երկրորդ բաղադրիչը ձայնավորով սկսող հետևյալ բառերը, սուրբընկալ (396), սպիտակերամ (309), վերնանկին (243)։

Աբրահամ խոստովանող. բանագարդ (174), բերդատապալ (71), դասակագեղ (68), երկանաբեկ (70), թիկնակալ (171), մարմնահեղձոյց (53), մոգակոյտ (199), նեղամուտ (38), սենեկամուտ (72), տաճարասուն (69)։ Անհոդակապ են. կողմնառել (3), հաստոսկեր (16), հաստոբոշ (38), ծառայորդի (57)։

Եթե V դարի գրաբարի համար բնորոշը հոդակապավոր բարդություններն են, ապա ինչպես բացատրել անհոդակապ կազմությունների առկայությունը։ Նկատված է, որ երկրորդ բաղադրիչը ձայնավորով սկսելու դեպքում ա հոդակապ չի դրվում. վերնանկին, սպիտակերամ և այլն, որպես կանոն առաջին բաղադրիչը երբ թվական է, դարձյալ ա հոդակապը բացակայում է, երկմիտ, երկոտասան, հնգետասան և այլն։ Ա-ն չի դրվում այս, այդ, այն առաջադաս ցուցական դերանուններով բարդություններում. այսչափ, այդչափ, այնժամ և այլն։

Կարծիք կա, որ առանց ա հոդակապի են առօրյա, ժողովրդախոսակցական բառերը։ Անշուշտ, այս ոլորտի մի շարք բառեր իրոք այդպես են։ Բայց ժողովրդական մտածողության, կենդանի բառ ու բանի նմուշներ կան, որոնցում առկա է հոդակապը։ Մանդակունու գործում մի շարք հմայական բառեր կազմված են ա-ով. գողահան (86), դեղահմայ (193), միջագիտութիւն, խտրողադիւթ (197—198) և այլն։

Ենթադրվում է, որ հոդակապերը հանդես են գալիս հիմնականում կարճ բաղադրիչների կապակցման ժամանակ, նկատվում է և այն երև-

վույթը, որ երբ բառը երկարում է, հոդակապը սղվում է. ողջամիտ-ողջմտութիւն, շատախօս-շատախօսութիւն, աստուածասէր-աստուածսիրութիւն, կարճամիտ-կարճմտութիւն, ընկերահաշտ-ընկերհաշտութիւն, ճարտարամտեմ-ճարտարմտութիւն...: *Այս երևույթը նկատել է դեռևս Ա. Մեյեն (Մեյե, 1978, 91—92), (տե՛ս նաև՝ Հովսեփյան, 1987, 92)։*

Ասենք, որ կարճ բաղադրիչներով բառերն էլ կարող են հոդակապ չստանալ, ոտնկապ-, ձեռնկապ *և այլն։ Իսկ ինչ վերաբերում է հոդակապի սղման վերոհիշյալ դեպքերին, ապա ճիշտ չէ այն միայն բառի երկարության հետ կապելը. հմմտ. մանկասպան-մանկասպանություն, սքանչելագործ-սքանչելագործություն, ճարտարախոս-ճարտարախոսություն։*

Մեզ թվում է (թեկուզ դա դժվար է ապացուցել), որ որոշ բառերում ածանցվելիս ա *հոդակապի սղումը պայմանավորված է արտասանական ռիթմի հետ, որը գործել է գրաբարում։ Այն կարծիքը, թե բառերի կցման կետում ձայնավորի առկայության ժամանակ հոդակապ չի դրվում՝ ձայնավորների կուտակումից խուսափելու համար, ընդհանուր առմամբ ճիշտ է, բայց, ինչպես իրավացիորեն նշում է Լ. Հովսեփյանը, «Ձայնավորների առկայությունը սակայն անհոդակապ բաղադրություն կազմելու պայման չէ։ Այն դեպքերը, երբ արմատների կցման կետում հանդիպում են բաղաձայն հնչյուններ, քանակապես միայն որոշ չափով են զիջում ձայնավոր բաղադրիչներով դեպքերին. աղկեր, այդպես, այլպես, այծքաղ, անձնդիր, արբշիռ, արեմուտք, արջնդեղ, երկմիտ, ձեռնթափ, ձեռնպահ, ոտնկապ, ստնտու, վատնշան, քարկուռ, քարկոփ, օրհաս...» (Հովսեփյան, 1987, 119), կարելի է ավելացնել. բերանբաց, ջրհեղեղ, երկրպագու և այլն։ Ուրեմն գրաբարում* ա *հոդակապով և առանց հոդակապի կազմությունները խստիվ սահմանազատված օրինաչափությունների չեն ենթարկվում։ Այս հարցում անշուշտ առկա է հեղինակի բառաստեղծման նախասիրությունը։*

4. Տարբեր հոդակապով բարդություններ

V դարի մատենագրության մեջ մի շարք բառերում որպես լծորդ հոդակապեր հանդես են գալիս և, ու-ն։ *Ակնհայտ օրինակ է* այրեւձի-այրուձի-ն։ *Աստվածաշնչում* այրուձի *կիրառված է 5 անգամ,* այրեձի *չկա։ Մեկ անգամ էլ՝* առնուձի։ *Փարպեցին 24 անգամ կիրառել է* այրուձի, *6 անգամ՝* այրեւձի։ *Բուզանդը ունի միայն* այրեւձի *(3 անգամ), Եղիշեն՝*

այրունի (14 անգամ), Խորենացին մեկ անգամ՝ այրենի: Թեև հաճախականը ու հոդակապն է, բայց ընդունված է այն կարծիքը, որ և-ը ավելի հին է. «Եւ-ով զոդումը ընտիր է և համաձայն դասական հայերենի պահանջքին, ու-ով շաղկապումը մեծաւ մասամբ խորթ է ու յետսամուտ. գոնէ ձեռագրական տրամադրելի տարբերութիւնները այս եզրակացութեան կմղեն զիս» (Վարդանյան, 16—17):

Առարկելի չէ այն, որ ավելի «ընտիր» է և-ով հոդակապումը: Մեզ առարկելի է թվում բանասերի այն դիտողությունը, թե ու-ով շաղկապումը (հոդակապումը) հետին դարերից է: Այնպիսի կազմություն, ինչպիսին ճասուճաս-ն է ըստ էության բավական հնություն ունի, որտեղ հանդես է գալիս հիմքային ու ձայնավորը, և այն արդեն դիտվում է որպես հոդակապ (ենթադրվում է, որ ա հոդակապն էլ նախապես որոշ բառերում հիմքային ձայնավոր է եղել, այնուհետև ստացել է հոդակապի գործառություն):

Եվ-ու հոդակապային տարբերակները ի հայտ են գալիս նաև թվականների կազմության ժամանակ. իննեւտասն-իննուտասն, ութեւտասն-ութուտասն: Եւ հոդակապով մի շարք կազմություններ գրաբարի բառարաններում ավանդված չեն: Բ. Կեսարացին ունի արկեւառ (արկանել և առնուլ բայերից), (Բյուզ., 1889, 24. 21): Կերեւուրաց գեղեցիկ բառը նույնպես բառարանները չեն նշում: Վկայված է «Գիրք Թղթոցում». «Զի վասն հեբրայեցւոցն ասաց զկերեւուրաց և զաստուածամատոյց ազգն զորս յարգէրն վասն արմատոյ» (6): Հունարեն 'αχάριστος «անշնորհակալ, երախտամոռ», հայ թարգմանիչը արտահայտել է կերեւուրաց բառով, որն ըստ երևույթին գործածական է եղել բանավոր, ժողովրդախոսակցական լեզվում. համտ. այժմ գործածական ուտող-ուրացող արտահայտությունը:

Առկա են ա/ու, ա/ե, ա/ի հոդակապով զուգահեռներ. ճարցեփորձ-ճարցափորձ, խառնաճաղանչ-խառնիճաղանչ, Տարաբերել-տարուբերել: Կա և տարեածեմ նույնիմաստ բառը՝ և հոդակապով (ի դեպ տարեածեմ-ը նույնպես չկա գրաբարի բառարաններում): «Մարմնոյ բարի է միայնում տան, քանզի ոչ տարեւածեն զնա ցանկութիւնք» (Եփր. Ասոր. Բ. 5):

Մի շարք բառային զուգաձևեր ի հայտ են գալիս ի-ով վերջացող բառերի ա հոդակապով բարդությունների ժամանակ՝ կապված ի+ա զուգորդման հետ: Հայերենում որպես կանոն ի+ա փոխվում է ե (շերտի ազդեցությամբ): Գինի+ա+ւէտ գինեւէտ, կարի+ա+

ձմեռն կարեձմեռն: Սակայն այս կարգի որոշ բառեր առկայանում են նաև այլ տեսքով՝ կարաձմեռն, գինաւէտ: *Հմմտ. «Եւ նշանք ահագինք յերկնից և կարեձմերունք յերկրի» (Կիրղ., 309): «Բազում մրրիկք երկիւղիւ պատեն զմիտս նոցա և կարաձմեռն յամենայն կողմանց կայ ի վերայ նոցա» (Մանդ., Է): «Ի պարտէզ* ընկուզաստանի *շրջէիք» (Կիրղ., 277): Նույն գրքի 1727 թ. հրատարակության մեջ* ընկուզեստանի *է:* Գինարբու *(Խոր., Փիլ.)* գիներբու *(Պիտ.): Ե-ի փոխարեն երբեմն՝* է: գոռեմարտ-գոռէմարտ, այգեգործ-այգէգործ *(Բուզ., 82)*, ոսկեգիր-ոսկէգիր *(Փրպ., 30. 35)*, ոսկէհատ *(Փրպ., 117)*, գերեդարձ *(Բուզ.)* -գերէդարձ *(Եղիշե)*, բարենշան *(Բուզ. 57)*, -բարէնշան *(Բուզ. 218): Երբեմն աճանցման ժամանակ* ի-ն *ավում է: Անարութիւն-անարիութիւն, արութիւն-արիութիւն, արփի-արփային և այլն: Նկատելի է, որ* ոգի *առաջադաս բաղադրիչով բարդությունները տարբերակներ չունեն, այլ հանդես են գալիս օրինաչափ ի+ա=ե հնչյունափոխությամբ.* ոգելից, ոգեկիր, ոգեւոր, ոգեխառնիչ *և այլն: Որ օրինաչափը և ճիշտը այս է, հաստատում են* գին*ի բաղադրիչով կազմված ձևերը. գինելից, գինեխառնութիւն, գինեհար, գինեհարութիւն, գինեմոլ, գինեպաշտ, ա-ով առկա է գինարբու, գինաւէտ: Սրանք կարելի է բացատրել երկրորդ բաղադրիչի ձայնավորով սկսվելու դեպքում* ի-ի *անկման փաստով. հմմտ. նաև* գինըմպութիւն. *գինաւէտ-ի դեպքում երկրորդ բաղադրիչ է գիտակցվել աւէտ-ը և ոչ թեւէտ-ը*:*

Բառային տարբերակներ են նաև բարդ բառերի բաղադրիչների անջատ կամ միասին գրված ձևերը. եղ և մուտ-եղեմուտ, այր և ձի-այրեձի, ճարց և փործ-ճարցափործ, գունդ-գունդ-գունդագունդ, դաս դաս-դասադաս, խոշ ընդ ոտն-խոշընդոտն, բարձր ի ձայն-բարձրաձայն, երկիր պագանեմ-երկիրպագանեմ:

5. Բարդ բառերի բաղադրիչների շարադասական տարբերակներ

Այս դասակարգման տակ բերվող օրինակները, ի տարբերություն նախորդների, հնչյունական փոփոխություններով չեն պայմանավորված: Տարբերակների բնույթը այլ է: Ամեն մի լեզու, այդ թվում և հայերենը, ունի բառաբարդման իր յուրահատուկ օրենքները: «Հ.-ե. լեզուների ընդհանուր սկզբունքը այն է, որ լրացուցիչը դրվել է լրացյալից առաջ, որը հայերենում դրսևորվում է այսպես. նախ՝ սեռականով հատկա-

* Ընկուզաստան *կազմության դեպքում երկրորդ բաղադրիչ է գիտակցվել ոչ թե* ստան-ը *այլ* աստան-ը *(հմմտ. Հայաստան, ծառաստան)*:

ցուցիչը, հետո գոյականը՝ գանձատուն, նախ ածականը, հետո՝ գոյականը՝ մայրաքաղաք, Թերակղզի, նախ՝ գոյականը, հետո բայը՝ բանասեր և այլն» (Աճառյան, ԼՔՀԼ, 3-րդ, 128)։

Բառաբարդման օրենքները, սակայն քարացած չեն և երբեմն շեղվում են օրինաչափություններից։ Շեղումների պատճառները կարող են պայմանավորված լինել օտար ազդեցությամբ, անհատական բառակերտմամբ և այլ բնույթի հանգամանքներով։ Այդ շեղումները և՛ քանակապես, և՛ որակապես զգալի են հատկապես երկար ժամանակահատվածի, առավել ևս նույն լեզվի տարբեր փուլերի դեպքում, սակայն հենց V դարի մատենագրության մեջ նշմարվում են բառաբարդման այդպիսի տարբերակներ։ Է. Աղայանը (1984, 149) սրանք անվանում է փոխատեղական բաղադրյալ տարբերակներ։ Քանի որ դրանք այնքան էլ մեծաթիվ չեն, այբբենական կարգով ներկայացնենք հիմնականները՝ համապատասխան վկայություններով։

Ակնաղբիւր-աղբիւրակն։ «Մերձեցաւ կին տեսանել ի դրաւշակս հանդերձի նորա և ցամաքեցոյց զակնաղբիւր արեան նորա» (Ոսկ. ՀԱ. 1922, 340)։ «Եղիցի երկիրն ծարաւուտ յաղբերականս» (Ոսկ., Ես., ՆՀԲ)։

Աստուածասէր-սիրաստուած։ Գրաբարում հաճախական է առաջինը, բարդումն էլ կատարված է հայերենի կանոններով։ Եթե այն գրական փոխառություն է հունարենից, ապա աստուածասէր-ը հայերենի բառակազմության օրենքներին խորթ չէ, անկախ այն բանից, թարգմանիչը նկատի է ունեցել հուն. φιλόθεος-ը, թե θεόφιλος-ը։ Սիրաստուած-ը, որ եզակի վկայություն է, ակնհայտորեն խորթ ձև է, հուն. φιλόθεος-ի բառացի պատճենումը։ Այն վկայված է Փիլոնի մոտ։ «Արդ սոցա դէպ եղեւ միոյ տան և միոյ ազգի գոլ. քանզի վերջինն որդի է միջնոյն և որդւոյ որդի առաջնոյն և զամենեսին սիրաստուածս՝ միանգամայն և աստուածասէրս» (Փիլ., Ճառք, 46)։ Որ սիրաստուած-ը օտար ու հայերենին չմերված ձև է, հաստատվում է այդ բառակազմական հիմքով նոր բառերի չգոյությամբ, այնինչ աստուածասէր-ով ունենք. աստուածասիրագոյն, աստուածասիրակ, աստուածասիրիլ, աստուածասիրութիւն։ Բագրատունու հավաստմամբ Աստուած բաղադրիչը գրաբարում միշտ նախադաս է. «Աստուած անուն անհաղորդական՝ նախադաս

է միշտ, ևս ընդդէմ բառին՝ որ այլում ամենայնի նախադասն է. Աստուածընդդէմ։ Անսովոր է Փիլոն սիրաստուած, փոխանակ աստուածասէր։ Իսկ սուտանուն աստուած յետադասի. բազմաստուած» (Բագրատունի, 666—667)։

Աստուած բաղադրիչի առաջադասությունը հին հայկական մատենագրության մեջ ինչ-որ չափով նաև քրիստոնեության սիմվոլիկայի՝ Աստված էության առաջնայնության ու կարևորության յուրատեսակ արտահայտություն է, որն ի հայտ է գալիս նաև այդ բառի և Է-ի մեծատառ գրությամբ։

Արձակաձեռ-ձեռարձակ։ «Մարդն արձակաձեռացն ահագին կսկըծմամբ սգացեալ ողբային» (Ոսկ., Մտթ., ՆՀԲ), «Վարսս մերկացեալ հոլանեալ, ձեռարձակ ցանեալք» (Գ Մկբ., Բ. 3)։ Գրաբարում հաճախական է ձեռարձակ-ը։ VII դարից վկայված է և գիսարձակ, իսկ արձակագէս չկա։

Բանասէր-սիրաբան։ «Զգտակն բանից իմաստակաց՝ Մովսէս բանասէր զնա գիտէ գոլ, բայց իմաստուն և ոչ միով իրօք» (Փիլ., այլբ, ՆՀԲ)։ «Արանց իմաստնոց և հնախօս սիրաբանից ստուգապես տեղեկացեալ՝ արդարաբար քեզ զրուցեցաք» (Խոր., 214)։

Հայերենի բառակերտման օրենքներին ավելի հարազատ է բանասէր-ը, որը գրական լեզվի մեջ է մտել անշուշտ հունարենի ազդեցությամբ, հունարենից պատճենում է սիրաբանը, որն արդեն բաղադրիչների շարադրությամբ իսկ հայերենի համար օտար է։

Բանընդդէմ-ընդդիմաբան։ «Եթէ ոք յոյժ անմիտ իցէ, չկարէ բանընդդէմ լինել» (Ոսկ., Ես., ՆՀԲ)։ «Յորժամ զհակառակն ասաց իբրև զընդդիմաբան» (ՆՀԲ)։ Թեև երկուսն էլ ըստ ՆՀԲ-ի եզակի վկայություններ են, սակայն V դարում ընդդիմաբան հիմքով առկա ընդդիմաբանեմ, ընդդիմաբանութիւն, նաև հետագա դարերից վկայված ընդդիմաբան-ը հաստատում են, որ վերջինս ավելի տարածված և ընդունելի ձև է եղել։

Բացաբերանեալ-բերանաբացեալ։ «Ի կարօտութենէ անտի իւրեանց բացաբերանեալ էին իբրև շունք» (Եւս., պատմ., Գ. 6)։ «Որսասցես զբերանաբացեալ և զարձակ զվայրենի ախտիցն տրամադրութիւն» (Փիլ., լին. ՀԲ)։ Հայերենի համար ճիշտը բերանաբացեմ-ն է։ V դարից բառարանները վկայում են և բերանաբաց. «Ամենեքեան բերանաբաց

հառաչէին զկնի նորա» (Բուզ., 218)։ V դարից է վկայված նաև բերանաբացութիւն, այլ դարերից՝ բերանաբացեմ, բերանաբացել։

Բերանալիր–լիաբերան։ «Ուտէին զԻսրայէլ բերանալիր բերանով» (Ես., Թ. 12)։ «Եկեր լիաբերան պատառ մի խորսխոյ» (ՆՀԲ)։ Բառարանները այդ հիմքերով այլ կազմություններ չեն նշում։

Բերդամեջ–միջնաբերդ։ «Կէսքն ի բերդամիջին և կէսք զքաղաքամէջն լցին խնճոյիւք» (Ագաթ., 99)։ «Գնաց Յուդա ի միջնաբերդ ամրոցէ անտի» (ՆՀԲ)։

Գիւղաքաղաք/գեղաքաղաք–քաղաքագիւղ/քաղաքագեղ։ «Մատնեաց տէր զգեղաքաղաքն զԱրշակաւանն ի ձեռս հարուածոցն» (Բուզ., 95)։ «Գայր հասանէր ի քաղաքագեօղն Բագաւան (Ագաթ., 426)։
Քաղաքագիւղ ունի նաև Խորենացին։

Ընդհանրապես գոյ.+գոյ. բաղադրիչների դեպքերում, երբ որոշակիորեն չի արտահայտվում հատկացուցիչ-հատկացյալ հարաբերությունը, դժվար է որոշել թե որ ձևն է ճիշտ։ Ըստ երևույթին գիւղաքաղաք-քաղաքագեւղ զույգի դեպքում, թերևս առկա է տրամաբանական, տեղեկատվական գործոնը՝ ըստ առաջին բաղադրիչի. գիւղաքաղաք՝ գիւղատիպ քաղաք, քաղաքագեօղ՝ քաղաքատիպ գյուղ, քաղաքի նման գյուղ և այլն։

Գործաձեռն–ձեռագործ։ «Խոկումն գրոց յամենայն ժամ և տքնութիւն և գործաձեռն (Մնդ., ՆՀԲ)։ «Ի ձեռագործս քո խորհեցայ» (Սաղմ. հզ. 54)։ Գործաձեռն հիմքով այլ կազմություններ բառարանները չեն նշում, իսկ ձեռագործ հիմքով ՆՀԲ-ն ունի ձեռագործական, ձեռագործեմ, ձեռագործութիւն։

Երդմն(ա)ստութիւն–ստերդմնութիւն։ «Խռովութիւն, երդմնստութիւն, աղմկութիւն, բարեաց երախտեաց անյիշատակութիւն» (Իմաստ. ԺԴ. 26)։ «Բուսանի յերդմնասիրութենէ ստերդմնութիւն և ամբարշտութիւն» (ՆՀԲ)։ Ճիշտ ձևը ստերդմնութիւնն է։ Կա և ստերդումն, երդմնաստ։ Ստերդմնութիւն ունի և Բուզանդը (64)։

Լիաբուռն–բռնալիր — «Հնձեմ լիաբուռն զամբարշտութեան որոմս» (Պիտ. ՆՀԲ)։ Բռնալիր լուանան զձեռս» (ՆՀԲ)։

Լիապտուղ–պտղալիր — պտղալից։ «Դրախտ քաջազուարթ՝ սաղարթացեալ ծառովք լիապտղովք» (ՆՀԲ)։ «Այգի պտղալից» (ՆՀԲ)։

Մայրաքաղաք–քաղաքամայր։ «Բնակիչքն՝ որ բնակեալ էին ի մայրաքաղաքսն» (Յես. Ժ. 2)։ «Եւ մեք և նոքա հասարակ ժառանգեսցուք

զքաղաքամայրն բարեաց» (*Եղիշե, 203*)։ Մայրաքաղաք-ը *հուն.* μητρο-πόλις*-ի համապատասխանությունն է։ Ըստ էության երկու ձևերն էլ խորթ չեն հայերենին։ Մայրաքաղաք-ի դեպքում առկա է որոշիչ-որոշյալ հարաբերությունը՝ որոշչի առաջադասությամբ,* քաղաքամայր*-ում՝ հատկացուցիչ-հատկացյալի հարաբերություն՝ հատկացուցչի առաջադասությամբ։*

Մայրաքաղաք*-ը ավելի հաճախական է։ Ունի նաև «մենաստան» իմաստը։*

Շահավաճառ-վաճառաշահ: *«Զմեծութիւն ծովու դիեցուցէ քեզ և զշահավաճառաց առ ծովեզեր բնակելոց» (Ա. Տիմ. Զ. 5)։ «Որ բնակեալդ ես ի մուտս ծովուդ վաճառաշահ ազգաց ի կղզեաց բազմաց» (Եզեկ., Իէ, 3)։*

Տարբերակներ են նաև շահավաճառութիւն-վաճառաշահութիւն, *որոնցով ՆՀԲ-ում վկայված օրինակները նաև V դարից են։*

Բառային տարբերակների շարքում չենք քննում այն ձևերը, որոնց շարադասական փոփոխությունները ուղեկցվում են նաև իմաստային փոփոխություններով։ Այսպես, V դարից վկայված է մոգպետ *և* պետմոգ: *Փաստորեն սրանք տարբեր բառեր են՝ տարբեր իմաստներով։* Մոգպետ *նշանակում է «մոգ, մոգերի գլխավորը», «Իսկ չարաչէր մոգպետն հանդերձ մեծ հազարապետաւն շնչեաց չարախօսութիւն... (Եղիշե, 42)։ Եղիշեն մեկ տասնյակից ավելի օգտագործել է այդ բառը։ Կա և* մովպետ *ձևը, որն արդեն բառային տարբերակ է, իրանական այլ սկզբնաղբյուրից անցած ձև, իսկ* պետմոգը *ըստ մեզ հասած վկայության զրադաշտական ուսմունքի անվանում է։*

Եղիշեն, թվարկելով զրադաշտական ուսմունքները՝ ամպարտքաշ, բոզպայիտ, պահլաւիկ, պարսկադէն, ավելացնում է։ «Քանզի այս հինգ կեշտք են, որ զրաւեալ ունեն զամենայն օրէնս մոգութեանն, բայց արտաքոյ սոցա է ևս այլ վեցերորդ զոր Պետմոգն կոչեն» (144)։ Գուցե պետմոգ *նշանակել է և մոգերի պետ։ Համենայն դեպս այդպիսի օրինակ մեր մատենագրության մեջ վկայված չէ։*

Նկատելի է, որ որոշ շարադասական տարբերակներ ժամանակագրային նույն հատվածին չեն վերագրվում։ Այսպես, գեղագոյն*-ը վկայված է V դարից, իսկ* գունագեղ*-ը ուշ շրջանից։* Գեղապատշաճ *ունի Խորենացին (32), իսկ* պատշաճագեղ *հետհինգերորդդարյան վկայություն է։ V դարից է* լիապարգեւ*-ը, ուշ՝* պարգեւալից*-ը։*

Կան նաև այլ կարգի զուգահեռներ։ Բանաստեղծ-ի ստեղծաբան տարբերակը չկա բառարաններում, բայց V դարից կա ստեղծաբանեմ, իսկ բանաստեղծեմ վկայված է XII դարից։

Շարադասական տարբերակները ի հայտ են գալիս միայն երկարմատ բարդություններում։ Արմատ$_1$+Արմատ$_2$ (+ածանց) կաղմության տարբերակային կաղապարը առկայանում է Արմատ$_2$+Արմատ$_1$ (+ածանց) տեսքով։

Այն տարբերակները, որոնք հարազատ են հայերենի բառակազմական օրենքներին, ավելի կենսունակ են ու հաճախական, նաև բառակազմական գործուն հիմքեր են։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ա) Սկզբնաղբյուրներ

Աբրահամու խոստովանողի վկայք Արևելից, Էջմիածին, 1921։

Աստուածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց, Կ. Պոլիս, 1895։

Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, Տփղիս, 1909։

Եղնկայ Կողբացւոյ Բագրևանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826։

Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957։

Կիւրղի Երուսաղեմայ հայրապետի Կոչումն ընծայութեան, Վիեննա, 1832։

Յովհաննու Ոսկեբերանի Մեկնութիւն Եսայեայ մարգարէի, Վենետիկ, 1880։

Եւսեբիայ եպիսկոպոսի Եմեսացւոյ Ճառք (ՀԱ, 1956—1959)։

Եւսեբի Պամփիլեայ Կեսարացւոյ Ժամանակականք երկմասնեայ, Վենետիկ, 1818։

Եւսեբիոսի Եմեսացւոյ Մեկնութիւնք, Վենետիկ, 1980։

Կորիւն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941։

Կցուրդք երանելւոյն Եփրեմի խուրին Ասորւոյ, Վիեննա, 1957։

Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904։

Մամբրէի վերծանողի Ճառք, Վենետիկ, 1894։

Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913։

Յովհանն Ոսկեբերան, Մեկնութիւն Մատթէի, Վենետիկ, 1891։

Յաղագս պիտոյից (տե՛ս Մ. Խորենացւոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1843, էջ 339—580)։

Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի Մեկնութիւն Թղթոյն Պաւղոսի, Վենետիկ, 1862։

Ս. Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի Ճառք, Թուղթ և ընդդիմասացութիւնք, Վենետիկ, 1899։

Սրբոյն հօրն Եւագրի Պոնտացւոյ վարք և մատենագրութիւնք, Վենետիկ, 1907։

Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց հայրապետի Ճառք, Վենետիկ, 1860։

Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883։

Փիլոնի Եբրայեցւոյ Ճառք թարգմանեալք ի նախնեաց մերոց, Վենետիկ, 1892։

բ) Տեսական գրականություն

Աբրահամյան Ս. Ս., *Բայը ժամանակակից հայերենում*, Երևան, 1962։

Աղայան Է., *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Երևան, 1984։

Աղայան Է., *Բառային հնագույն տարբերությունները հայերենում* (ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր հաս. գիտ., 1958, № 5)։

Աղայան Է., *Գրաբարի քերականություն*, Երևան, 1964։

Աղայան Է., *Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ*, Եր., 1974։

Առաքելյան Վ., *Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության*, Երևան, 1981։

Առաքելյան Վ., *Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը*, Երևան, 1984։

Ավետիքյան Գ., *Քերականութիւն հայկական*, Վենետիկ, 1815։

Բագրատունի Ա., *Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց*, Վենետիկ, 1852։

Բարսեղյան Հ., *Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն*, Երևան, 1953։

Բյուզանդացի Ն., *Հայկական բառաքննութիւն*, Կ. Պոլիս, 1880։

Գալստյան Ս., *Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում*, Երևան, 1978։

Գյուլբուդաղյան Ս., *Հայերենի ուղղագրությունը Ե—Թ դարերում* («Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 3)։

Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն և բառագիտություն), Երևան, 1979։

Կոստանդյան Դ., *Բառասկզբնային ձայնավորների զուգաձևությունների հարցի շուրջը («Հայերենագիտական միջազգային երկրորդ գիտաժողով, 21—23 սեպտեմբերի, 1987, զեկուցումների դրույթներ»)*։

Հովհաննիսյան Լ., *Հայերենի իրանական փոխառությունները*, Երևան, 1990։

Հովսեփյան Լ., *Գրաբարի բառակազմությունը*, Երևան, 1987։

Ղափանցյան Գ., *Ընդհանուր լեզվաբանություն*, Երևան, 1939։

Ղափանցյան Գ., *Հայոց լեզվի պատմություն*, Երևան, 1961։

Մեյե Ա., *Հայագիտական ուսումնասիրություններ*, Երևան, 1978։

Մուրադյան Ա., *Հունաբան դպրոցի կերտած նախածանցները* (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր հաս. գիտ.», 1964, № 11)։

Մուրադյան Հ., *Հայոց լեզվի պատմական քերականություն*, հտ. 2, Երևան, 1982։

Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1835—1837։

Ջահուկյան Գ., *Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը*, Երևան, 1959։

Ջահուկյան Գ., *Ստուգաբանություններ* (ՊԲՀ, 1965, № 1)։

Ջահուկյան Գ., *Հայերենի ստուգաբանական կրկնակների մասին* (*Միջազգային հայերենագիտական գիտաժողով, 21—25 սեպտեմբերի, 1981, Զեկուցումներ*, Երևան, 1984, 146—160)։

Ջահուկյան Գ., *Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան*, Երևան, 1987։

Սարգսյան Ա., *Գոյական զուգաձևությունները ժամանակակից հայերենում* (*Լեզվի և ոճի հարցեր*, պրակ 10-րդ, Երևան, 1987, էջ 123—130։

Ахманова О. С., Очерки по общей и русской лексикологии, М., 1957.

Горбачевич К. С., Вариантность слова и языковая норма, М., 1978.

Граудина Л. К. Вопросы нормализации русского языка; Грамматика и вариантность, М., 1980.
Джаукян Г. Б. Очерки по истории дописьменного периода армянского языка, Е., 1967.
Джаукян Г. Б., Сравнительная грамматика армянского языка, Е., 1982.
Истрина Б. С., Нормы русского литературного языка и культура речи, М.—Л., 1948.
Основы иранского языкознания (древнеиранские языки, М., 1979).
Рогожникова Р. П., Варианты слов в русском языке, М., 1966.

Ն. Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆԱՂԱՇ ՀՈՎՆԱԹԱՆԻ ՏԱՂԵՐԻ ԼԵԶՈՒՆ ՈՐՊԵՍ ՎԱՂ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայոց նոր գրական լեզվի կազմավորման միտումները անխզելի հանգույցներով կապված են հայ ժողովրդի գոյության XVII—XVIII դդ. պատմական հանգամանքների հետ։

1604—1605 թթ. Շահ-Աբբաս I-ի ասպատակության, ապա և Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Իրանի միջև երկարատև պատերազմի թատերաբեմը Արարատյան դաշտավայրից Արաքսի ափերը ձգվող տարածքն էր՝ Նախիջևան-Սյունիք-Հին Ջուղա-Գողթն շրջագծով։ Եվ պատահական չէ, որ այդ տարածքի վրա էլ XVII դ. կեսերից ծայր են առնում հայոց նոր ժամանակների ազգային-ազատագրական շարժումները՝ գործիչներ ու գաղափարախոսներ ունենալով նույն տարածքի զավակներին (Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոս, Իսրայել Օրի, Առաքել Շոռոթեցի, Հովսեփ Էմին, Մովսես Բաղրամյան, Շահամիր և Հակոբ Շահամիրյաններ)։

1639-ին Թուրքիայի և Իրանի միջև կնքված խաղաղության դաշնագրից հետո արևելահայությանը վերջապես վիճակվեց ութսունամյա խաղաղ կյանք՝ միասնական ներտնտեսական-հասարակական ըստ ամենայնի լայն հարաբերություններով ու շփումներով։

Տարածքային ծավալուն շառավղով միասնական այդ հաղորդակցությունները, վերաշինվող նոր գյուղաքաղաքներով ու վայրերով (դրանցից հարկ է շեշտել Նոր Ջուղայի և Ագուլիսի դերը), սնում են աշխարհիկ կյանքի հասարակական նոր հոգեբանություն և գիտակցություն, բնականաբար նաև հաղորդակցական մեկ ընդհանուր լեզու

ունենալու պահանջ, որի թելադրանքով մշակվում է խոսակցական հասկանալի մի լեզու։

XVII դարը լեզվաբանության մեջ համարվում է վաղ աշխարհաբարյան ենթաշրջանի սկիզբը։ Այդ ենթաշրջանը Գ. Ջահուկյանը բնութագրում է «...որոշ միասնականացնող տենդենցներով, որոնք էլ հենց հիմք են տալիս ընդհանուր լեզվի և նրա կողմից գրաբարի՝ որպես գրական լեզվի, ֆունկցիաները սահմանափակելու համար»[1]*։*

Գործառությամբ սահմանափակվող գրաբարի և բարբառների հիմքով աստիճանաբար ձևավորվում է լեզվական մի տարբերակ, որը ենթաշրջանի լեզվավիճակը ներկայացնողները համարում են «քաղաքական» կամ «քաղաքացիական» հայերեն։

Հետագայում բարբառային հիմքերից սովորաբար առանձնացվում են Արարատյան և Պոլսի բարբառները՝ առաջնություն տալով մեկին կամ մյուսին։ Այսպես. Հովհաննես Կոստանդնուպոլսեցու, Պաղտասար Դպիրի նկարագրած «քաղաքացիական» հայերենում առկա են արևմտյան բարբառներին հատուկ իրողություններ։ Նույնը հաստատում է Մխիթար Սեբաստացին թուրքերենով գրված իր աշխատությամբ։ 1711-ին գերմանացի հայագետ Ա. Շրյոդերի հրատարակած «Արամեան լեզուին գանձ» գրքում տեղ գտած հայերեն նմուշներում գերիշխողը արևելյան բարբառների ազդեցությունն է։ Եվ սակայն, ուսումնասիրողներն իրավացի են, գտնելով, որ սկզբնական շրջանում չի եղել արևելյան և արևմտյան բաժանում՝ լեզուն եղել է միասնական[2]*. տնտեսական-հասարակական ու մշակութային կյանքով պայմանավորված այդ տարբերակումը դրսևորվել է XVIII դարում։ Միաժամանակ ընդհանուր հասկանալի խոսակցական այդ լեզվում առկա են տարատեսակներ՝ ըստ հին գրական լեզվից, միջին հայերենից և բարբառներից ներառած շերտերի։ Լեզվական այսպիսի տարբեր պատկեր են ներկայացնում Գրիգոր Դարանաղցու ժամանակագրությունը (1630), Զաքարիա Ագուլեցու օրագրությունը (1647—1681), գործառական-վաճառականական բնույթի այլ գործեր՝ «Արհեստ համարողության» (1675), Ղուկաս Վանանդեցու «Գանձ չափոյ, կշռոյ, թուոյ և դրամից բոլոր աշխարհի» (1699) և այլն։*

---

1 Ջահուկյան Գ., *1969, 50*։

2 Իշխանյան Ռ., *1979, 21*։ Պառնասյան Ն., *1987, 140—141*։

Այս ենթաշրջանի լեզվավիճակի համապատկերին բնորոշ է նաև այն, ինչ արձանագրել է Հ. Թորոսյանը. «...գրաբարը պահեց իր գրական լեզվի դիրքը, գեթ բարձր գիտություններ ... մշակելու համար։ Ժողովրդական լեզվով գրվեցան միայն աշխարհիկ քերթվածներ և գործնական գիտություններ, ինչպես բժշկական գրքեր...»[3]*։*

XVII դարի II կեսի խոսակցական լեզուն առանձնանում է նաև միջբարբառային բնույթով, ասել է՝ «մեկ միասնական բարբառային հիմքի» բացակայությամբ, որը և իբրև հաղորդակցության միջոց լայնորեն գործածվում էր առևտրա-արհեստավորական միջավայրում տարածքային ծավալում շառավղով՝ ներտնտեսական-հասարակական լայն հարաբերություններում։

Միջբարբառային հիմքով խոսակցական այդ լեզվից էլ ձևավորվում է լեզվական մի տարբերակ, որ դառնում է գյուղաքաղաքային ու քաղաքային հրապարակային աշխարհիկ կյանքի պահանջներին ծառայելու կոչված գուսանական արվեստի լեզուն[4]*, որն էլ իր հերթին նպաստում է աշխարհաբար բանաստեղծության լեզվի (Ստեփանոս Դաշտեցի և ուրիշներ), այլև, առհասարակ, նոր գրական հայերենի ձևավորմանը։*

Այս ընդհանուր օրինաչափությունների ոլորտում էլ սույն աշխատանքում քննվում է Նաղաշ Հովնաթանի տաղերի լեզուն, որի ստեղծագործությունը աշխարհիկ ոգով ու բովանդակությամբ, դրան համազոր ժողովրդախոսակցական լեզվով ու լեզվամտածողությամբ XVII դարի վերջերի և XVIII դարի սկզբների հասարակական հոգեբանության ու մթնոլորտի ծնունդն էր։

Նաղաշ Հովնաթանը (1661—1722) ծնվել է Հին Ջուղայից ոչ հեռու գտնվող պատմական Հայաստանի Երնջակ գավառի Շոռոթ գյուղում (այժմ՝ Նախիջևանի ԻնՍՀ-ում)։ Նախնական կրթությունը ստանալուց հետո, ուսումնառության հիմնավոր դպրոց է անցել Ագուլիսում և, վաղ հասակից ճանաչվելով իբրև նկարիչ-որմնանկարիչ ու տաղերգու, գործել է Սյունյաց աշխարհի առավելապես Երնջակի ու Գողթնի գավառներում, Երևանում, Թիֆլիսում և այլուր։

---

3 Թորոսյան Հ., *1961, 34։*

4 *Ռ. Իշխանյանի բնութագրությամբ «գուսանական վաղ աշխարհաբար» (Էգազ, Արզումի և ուրիշներ)։* Իշխանյան Ռ., *1978, 44։*

Թուրքիայի և Իրանի միջև վերը հիշատակված դաշնագրին հաջորդած ութսունամյա խաղաղ տարիներին այդ ամբողջ տարածքն ապրում էր շինարարական-առևտրական եռուն կյանքով։ Տարեցտարի տարածվում էր Հովնաթանի համբավը, և նա, հրավերներ ստանալով, ամենատարբեր վայրերում հիմնում, որմնանկարում, որմնաքանդակում է բազմաթիվ եկեղեցիներ ու աշխարհիկ շինություններ, հիմք դնելով հայոց նոր ժամանակների գեղանկարչությանը, դառնալով Հովնաթանյան նկարիչների տոհմի մեծահռչակ նախահայրը։

Հմուտ արհեստավորի իր այդ գործունեության ընթացքում, բնականաբար, նա փոխադրվել է տեղից տեղ, շփվել ու հաղորդակցվել տարբեր բարբառներով խոսող մարդկանց, առավելապես արհեստավորների հետ, ըստ որում նաև Արևմտյան Հայաստանից։ Զաքարիա Ագուլեցին վկայում է, որ Ագուլիսի Ս. Թովմա վանքի պարիսպներն ու շինությունները վերանորոգելու համար Պետրոս վարդապետը Արաքսի մյուս ափից՝ Վասպուրականից «...ուստեք բերավ, նոր այլվի հող ու քարով պարիսպն շինեց, բրջեր շինեց, մաղազեք շինեց... մեջն ամեն տաշած քարով, թե՛ խուց, թե՛ օթախնի լավ արծակոցույց»[5]*։*

Պարզ է, որ տարբեր ժամանակներում կարող էին արհեստավորներ «բերվել» նաև Արևմտյան Հայաստանի այլ վայրերից, որոնց հետ նույնպես Հովնաթանն անմիջականորեն շփվել է ոչ միայն Ագուլիսի, այլև մյուս վայրերի կանգուն ու ավերված հայտնի հուշարձանները կառուցելիս։ Եվ դրանց հետքերը ևս կարելի է գտնել նրա լեզվում։

Սակայն Արաքսի մի ափից մյուսը՝ բնակչության հոծ տեղափոխությունը ոչ թե առևտրական ու սովորական շփումներով և հարաբերություններով, այլ տեղահանությամբ ու գաղթերով առավել ուժեղ էր նախորդ ժամանակաշրջանում, երբ երկիրը մշտական արշավանքների թատերաբեմ էր։ Եվ խոսակցական հայերենը շարունակում էր մնալ միասնական, չբաժանված արևելյանի ու արևմտյանի։

Հովնաթանի գործունեության տարիներին արդեն Հայաստանի արևելյան այդ տարածքը սկսում է ապրել տնտեսական ու հասարակական միասնական կյանքով, և բնակչության նշված հոծ շրջանառությունը նկատելիորեն կրճատվում է։ Արաքսի մյուս ափի հետ շփումները սահմանափակվում են, մնալով գլխավորապես առևտրական և արհեստա-

---

5 Ագուլեցի Զաքարիա, *1938, 78*։

վորական։ Դրա փոխարեն գնալով աշխուժանում են բնակչության շըփումներն ու հարաբերությունները տարածքի ներսում։

Պատմական այս նախադրյալներով էլ սկզբնապես գյուղաքաղաքային մակարդակով արևելահայ բարբառներից ձևավորվում է միջբարբառային ժողովրդախոսակցական մի լեզու, որը հաղորդակցական կենդանի ու ճկուն հնարավորություններով, հարուստ բառապաշարով, փոխառություններով, աշխարհաբար գրական հայերենին հարազատ միանականացնող միտումներով իր անդրադարձումն է գտել Նաղաշ Հովնաթանի տաղերում։

Հռչակավոր Նաղաշի կենդանության օրոք, ամենայն հավանականությամբ, նրա խոհական ու խնջույքի տաղերը, երգիծական թղթերը, եթե ոչ ավելի լայնորեն, ապա տարածված են եղել ու գնահատվել Շոռոթում և Ագուլիսում, առհասարակ Երնջակի ու Գողթնի գյուղերում, գյուղաքաղաքներում, գուցե և Երևանում։ Դրա ապացույցն են տարբեր վայրերում պահպանված ձեռագրերը։

Դրանցից առավել ամբողջականներից մեկը պահպանվել է Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանում, որից և թվով 60 տաղ 1910 թ. Փարիզում «Նաղաշ Հովնաթան աշուղը և Հովնաթան Հովնաթանյան նկարիչը» խորագրով, առանձին գրքով և ծավալուն առաջաբանով հրատարակում է Արշակ Չոպանյանը։

Հրապարակությունն ընդունվում է իբրև հայտնություն, և այդ ժամանակից սկսած՝ անմիջականորեն Սայաթ-Նովայի հետ կողք-կողքի, Նաղաշ Հովնաթանը հաստատուն տեղ է գրավում հայ գրականության պատմության մեջ։ Նրա տաղերը, կյանքն ու նկարչական հիմնարար գործունեությունը դառնում են բանասիրական-գրականագիտական ու արվեստաբանական հետազոտությունների, քննության ու մեկնության առարկա։ Արդեն իսկ 1911 թ. Գ. Հովնանյանը հավաստում էր, թե Հովնաթանի տաղերը «...շատ անգամ կհիշեցնեն Գողթան երգերն՝ մանավանդ անոնց գեղեցիկ կրկնությանց և նմանաձայնությանց հետևելով»[6]։ Իր հերթին Ն. Ակինյանը «Հովնաթան Նաղաշ և Նաղաշ Հովնաթանյանք» հետազոտության մեջ արձանագրում է, որ մեզ հայտնի հին տաղերգուներից «...ոչ ոք եղած է երգերու նկարագրով Հովնաթանի պես բազմագույն»[7]։

---

6 Հովնանյան Գ., *1911, 46*։

7 Ակինյան Ն., *1911, 64*։

Հովնաթանի տաղերը «բազմագույն» են XVII դ. վերջերի և XVIII դ. սկզբների հայոց կյանքի ու կենցաղի, վարք ու բարքի, մարդկային փոխհարաբերությունների, Հայաստանի բնության լայն անդրադարձումներով, որ հավասարապես տեսնում ենք ինչպես սիրային, խնջույքի և ուրախության երգերում, այնպես էլ խրատական ու երգիծական չափածոյում։

Ջոպանյանի աշխատասիրությանը ծավալուն հոդվածով արձագանքում է և Հովհ. Թումանյանը։ Տաղերի առաջաբանը Ջոպանյանը շարադրել էր Նահապետ Քուչակին վերագրվող հայրենների[8], Սայաթ-Նովայի և Նաղաշ Հովնաթանի սիրերգության, լեզվի ու ոճի բնութագրությամբ։ Խորը վերլուծություններով և ընտիր մեջբերումներով Թումանյանն արձանագրում է Հովնաթանի սիրերգության տարբերությունը Սայաթ-Նովայից (վերջին դեպքում դժբախտ սեր ու սիրերգ), միաժամանակ նկատում է խոր հարազատություն Քուչակի երջանիկ սիրերգությանը։ Թումանյանը մեկնակետային առումով շեշտում է նաև, որ՝ եթե Քուչակն ու Սայաթ-Նովան «...երգում են իրենց սերն ու սիրուհուն՝ երգում են ամբողջ աշխարհքի առաջ. եթե դիմում են իրենց յարին՝ պատմելու նրա սերն ու գեղեցկությունը՝ խոսում են լուրջ ու հանդիսավոր...», այլ է Հովնաթանը, նրա «...բանաստեղծությունները հաճախ մասնավոր սիրային նամակագրության բնավորություն ունեն... դրանից է, ի միջի այլոց, որ նա էնքան մանրամասնություններ է պատմում...»[9]։

Ճիշտ նկատված այս առանձնահատկությունը՝ մանրամասնություններ պատմելը, վերաբերում է ոչ միայն Հովնաթանի սիրերգությանը, այլև հավասարապես խնջույքի և ուրախության, խրատական, առավել ևս երգիծական ստեղծագործությանը։

Բազմագունությունն ու մանրամասնություններ պատմելը՝ բնություն, կենցաղ, սովորություններ, սեր ու վայելք, ինչպես և կյանքի հոռի կողմերը նկարագրելիս, բերում են լեզվական մեծ հարստություն՝ պայմանավորելով Հովնաթանի տաղերի պատկերային-ոճական համակարգի ներկայացրած հետաքրքրությունը հայոց լեզվի պատմության համար։

Լեզվական հարստության հետ միասին հետազոտողները Ջոպան-

---

8 Հետագայում Մ. Աբեղյանը «Հին գուսանական ժողովրդական երգեր» աշխատության մեջ (տե՛ս Աբեղյան, 1967, 11—23) հիմնավորապես ապացուցեց, որ հայրենները Քուչակին վերագրելը ճիշտ չէ. դրանք ժողովրդական ստեղծագործություն են։

9 Թումանյան Հովհ., 1951, 188—189։

յանից սկսած մշտապես շեշտել ու շեշտում են Նաղաշի տաղերի ոճական հարազատությունը ժողովրդական-ռամկական տարրերին, բանաստեղծական մտածողությանը։

Համակողմանիորեն քննության առնելով Հովնաթանի ժառանգությունը, Մ. Աբեղյանն իր հերթին շեշտում է, որ նրա «...բանաստեղծության մեջ մենք տեսնում ենք մի ամբողջական աշխարհայեցողություն, որով քրիստոնեական ոգին և աշխարհասիրությունն արդեն հաշտված են, ինչպես արդի մարդու համար և վերջ է տրված մեր հին բանաստեղծության ցավագին շեշտերին։ Դա մի աշխարհական հայացք է և ոչ կրոնական»[10]։

Թեև իբրև սարկավագ Հովնաթանը երբեմն ծառայել է եկեղեցում, նա, ի տարբերություն մեր միջնադարյան տաղերգուների, եղել է աշխարհական արվեստավոր մարդ, իբրև «շնորհալից վարպետ իմաստուն» ապրել ազատ կյանքով ու կենցաղավարությամբ։ Թե որքան է հարազատ եղել նա իր միջավայրի արհեստավոր մարդկանց, նրանց մթնոլորտին, երևում է խնջույքի և խրատական երգերից, որոնք բոլորն էլ ստեղծագործ աշխատանքի և եղբայրական միաբանության փառաբանություն են։

Նկարչի, բանաստեղծի, երգահան-երգասացի անկաշկանդ հայացքով ու աշխարհասիրությամբ Հովնաթանի տաղերում միմյանց են հաջորդում կյանքի պատկերներ՝ բնության և գյուղական աշխատանքի ու գործիքների, գյուղատնտեսական կուլտուրաների ու ընտանիքների, բուսական ու կենդանական աշխարհի, շինարարության և արհեստների, կահկարասիների, առանձին կենցաղավարության, խմիչքների, ուտեստների, ամանեղենի, առևտրի, շուկաների, մարդկային վարք ու բարքի և փոխհարաբերությունների, հոգևոր երևույթների անվանումների լայն շրջանառությամբ, այդ ամենի բուն ժողովրդական լեզվամտածողությամբ, ոճական դիպուկ ու ճկուն դարձվածքներով։

Այստեղից Հովնաթանի տաղերգության լեզվական ընդգրկման տարողությունը, ժողովրդականին հարազատ լեզվաքերականական բնույթը, հյուսվածքային համակարգն ու աշխարհիկ պաթոսը, որի վերաբերյալ Մ. Աբեղյանը գրում է. «...մեր հին բանաստեղծության ամենից զվարթ և լուսավոր երգերն են, որոնց մեջ կյանքի հրճվանքն արտահայտված է ամենազորեղ, միաժամանակ և ազնիվ շեշտերով...»[11]։

---

10 Աբեղյան Մ., *1970, 502*։

11 *Նույն տեղում, 505*։

Սիրո երգերում կնոջը գովերգելիս և սեփական ապրումները երանգավորելիս, նա առավելապես օգտագործում է ժողովրդական երգերից եկող կայուն կամ անփոփոխ մակդիրներ։ Դրանք արտահայտված են առավելապես պարզ ածականներով, այլև գոյականներով ու դերբայներով և գործ են ածվում ինչպես ուղղակի, այնպես էլ փոխաբերական-այլաբանական իմաստներով։ Հովնաթանի տաղերգության բնորոշ չեն բարդ ածականներն ու ինքնահնար մակդիրները։ Նրա օգտագործածները գերազանցապես ժողովրդական երգերում արդեն ավանդության ուժ ձեռք բերած, միևնույն առարկաներին կամ երևույթներին առնչվող կայունացած մակդիրներ են. ինչպես՝ նախշուն երես, բոլոր սուրաթ, ցաւոտ սեր, ծով աչքեր, խոցւած սիրտ, պայծառ աչքեր, քաղցր բլբուլ, լեզուդ շարբաթ, ունքերդ կապած կամար, աչքերդ լարած՝ նետ ու աղեղ *և այլն։*

Ժամանակի կենդանի խոսքի հետ են կապվում նաև բառային համանիշների կրկնությունները։ Հովնաթանը ժամանակի ոգով և ճաշակով խոսքին արևելյան գունագեղություն հաղորդելու համար սիրում է համանիշ բառերի գործածություններ, համանիշային հավելադրումներ, որոնք ձևով և իմաստներով ճոխացնում-հարստացնում են չափածո խոսքը, օժտում աշուղական երգերի որոշ հատկանիշներով. մարալ ու ջեյրան, հայիլ-մայիլ, հալվել-մաշվել, էշխ ու հաւաս, խև ու բանգի, հեյրան ու մաթ *և այլն։*

Աշուղական արվեստը, որ կոչված էր հրապարակային կատարման, մեջլիսային մրցության համար, ձևավորվում էր ժամանակի գյուղաքաղաքներում ու քաղաքներում, որոնք Անդրկովկասի պայմաններում բնակչության կազմով բազմազգ էին՝ հայեր, վրացիներ, ադրբեջանցիներ, պարսիկներ,— ուստի և ձևավորվող գրական աշխարհաբարը, ինչպես և ժողովրդական խոսակցականը, ներառում էին այդ ժողովուրդների լեզուներից բառեր, արտահայտություններ, դարձվածքներ։ Այս առումով բնորոշ է, որ Հովնաթանի, հետագայում ավելի լայնորեն Սայաթ-Նովայի, համանիշային կրկնություն-հավելադրումները հաճախ զուգավորվում են օտարամուտ բառերով. հայերենի կամ միմյանց հետ գործածվում են ադրբեջաներեն, պարսկերեն, արաբերեն, վրացերեն համանիշներ։

Թումանյանի դիպուկ բնութագրությանն արժանացած Հովնաթանի սիրային «նամակագրությունը» աշուղականի պես նաև երգվում էր տաղերգուի հնարած կամ հայրենի ու օտար այս ու այն մեղեդիով, որպի-

սիք որպես կանոն նշվում էին վերնագրին կից։ Այդ երգերից շատերն ունեն խոսքով փոփոխվող, չափ ու կշռույթով անփոփոխ կրկներգեր, որոնցով՝ միաժամանակ և՛ բառերով, և՛ եղանակներով մտերմիկ շընչով ու երգեցիկ շեշտերով ապահովվում է ընդհանուր տրամադրության միասնությունը։

Ուշագրավ է նաև, որ գերազանցապես զվարթ այդ երգերի շարքում հանդիպում ենք և «պար գալոյ» եղանակով հյուսված սիրերգերի, որոնք սկզբնամասի որոշ հատվածներով տաղ կամ «կանչվող» խաղ են, իսկ հետո շարունակվում են պարեղանակով։

Նման առանձնահատկություններով Նաղաշի տաղերգությունը խորապես հարազատ է ժողովրդական երգերին՝ հայրեններին, գլխավորապես խաղիկներին, որի ուղղակի հիշատակությունը գտնում ենք հետևյալ տողերում. «Եղբայրք, յորժամ բազմիք սեղան, խաղ, տաղ կանչէք խրախճական» (188)։ Տարբերությունն այն է, որ եթե խաղիկները մի-մի առանձին քառյակ են ժողովրդի միջավայրում տարածված մի մեծ սիրավեպից, ապա այս դեպքում մեկ անհատի սիրավեպն է՝ անցյալից ներկա և ապագա ձգվող շղթայով։ Կարևորը շղթայի օղակները հանդիսացող տներն են, որոնցում, ինչպես նկատում է Աբեղյանը՝ «Հովնաթանը չի հեռանում հայրեններից կամ ժողովրդական երգից» և նրա «...սիրո երգերը, ինչպես և հայրենները մեր հին սիրերգության մի-մի առանձին տեսակի կատարելագործություն են, նույն ժողովրդական ոգով, մաքուր և զգաստ...»[12]։ Ավելին. Չոպանյանը դիպուկ օրինակներով Նաղաշի մոտ տեսնում էր «բավական պատկերներ, գաղափարներ, դարձվածքներ, որ Քուչակը (այսինքն՝ հայրենները—Ն. Հովհաննիսյան) կհիշեցնեն»[13]։ Նույնը նկատում է և Աբեղյանը, Հովնաթանի տաղերում մատնանշելով խաղիկներին համանման «շատ մոտիվներ, արտահայտություններ, դարձվածներ ու դրություններ ... նույնիսկ մեր այժմյան հասկացողությամբ շատ ազատ, հեշտասեր»[14]։

Հայոց բանաստեղծության պատմության հետաքրքիր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նրա նորդարյա զարգացման նախաշեմին՝ դեռևս XVII դ. վերջերից Նաղաշ Հովնաթանի ստեղծագործության մեջ կյանքի բազմապիսի երևույթները չափածոյի բովան-

---

12 Նույն տեղում, 508։

13 Չոպանյան Ա., 1910, 14—15։

14 Աբեղյան Մ., 1970, 508։

դակությունն են դառնում երգիծանքով։ Ըստ որում, հոնավորվում են նոր և նորագույն ժամանակների երգիծական համարյա բոլոր ժանրատեսակներով։

Գնահատելով տաղերգուի երգիծական ժառանգությունը, նրա երկերի մեր ժամանակի հրատարակիչներ Աս. Մնացականյանն ու Շ. Նազարյանը գրում են, որ այդ բանաստեղծություններով նա՝ «երևան է գալիս որպես մեր միջնադարյան պոեզիայի առաջին խոշոր երգիծաբանը ... Նա է, որ առաջին անգամ մեր միջնադարյան պոեզիայի երգիծաբանական ժանրը թեթև զավեշտի մակարդակից բարձրացնում է դեպի հասարակական-սոցիալական մակարդակը»[15]։ Այդ բանաստեղծությունները՝ կարճառոտ, թե երկարաշունչ, որպես նոր մակարդակի արտահայտություններ աչքի են ընկնում նաև ժանրային ու լեզվաոճական հետաքրքիր առանձնահատկություններով։

Նախ երգիծականների կողքին՝ իրենց աշխարհիկ նյութով, նպատակաուղղվածությամբ ու ժանրատեսակով բոլորովին այլ որակ են, այսպես ասած՝ ծիծաղական, կիսալուրջ-կիսակատակային բանաստեղծությունները։ Եթե երգիծականների բովանդակությունը հասարակական-սոցիալական է՝ հաճախ սուր մերկացումներով, ապա երկրորդները՝ ժողովրդական կյանքի հոռի կողմերի ու սովորությունների ծիծաղելի-ծիծաղաշարժ դրվագներ են։ Բանաստեղծը սրանք համարել է տաղ ծիծաղական կամ ուղղակի տաղ։ Եվ իրոք, դրանք սիրո ու խնջույքի տաղերի պես նկարագրական-պատմողական զվարճալի աշխարհիկ չափածո են և, սակայն, փոքր-ինչ այլ բնույթի։ Ոգեշունչ հիացականի փոխարեն սրանց ընդհանուր տրամադրությունը չափավոր ուրախական է, չկան և բնության նկարագրություններ։ Որպես կանոն դրանք սկսվում են դիմումով, և դա արդեն աշուղական բանաստեղծությանը բնորոշ մեջլիսային-հրապարակային մրցույթի հրավիրելու հայտ էր։ Դիմումն ուղղված է հանուրին («Տեսէ՛ք, եղբարք...», «Ո՞վ ողորմելի խէղճ կանանիք»), կամ առանձին անձերի, կամ էլ հենց իրեն՝ տաղերգուին, որին հետևում են կենցաղային պատկերներ, անցուդարձեր, հոգեբանական ծիծաղելի ու միաժամանակ ցավալի դրություններ՝ նկարագրված հանգամանքների, իրավիճակի, ասես, անսպառ, մանրամասներով։ Այնպես որ մանրամասներ պատմելը առկա է ոչ միայն նրա

[15] Հովնաթան Նաղաշ, 1951, XIX (այսուհետև՝ էջերը կտրվեն տեքստին կից, փակագծերում)։

սիրերգության մեջ, Հովնաթանն այդպիսին է և ծիծաղական-երգիծական տաղերում, որոնցում դժվար չէ որսալ ժամանակի ժողովրդախոսակցական լեզուն՝ բարբառային և օտարամուտ բառերի կենդանի թրթրուն խառնուրդով, մինչև օրս էլ ժողովրդի մեջ հնչող առած-ասացվածքներով ու դարձվածքներով։

Երգիծական ժանրատեսակներից է և թուղթը, որ տաղերից մեկում հիշատակվում է նաև հունարեն անվանումով՝ «քարտէս»։ Ավանդաբար, թուղթը բարձրաոճ գրաբարով և գիմումնային շարակարգությամբ շոշափում էր հասարակական հարցեր։ Այդ հարցերը՝ հոգևորականության արարմունքների մերկացումներով տեսնում ենք նաև Հովնաթանի թղթերում, և այս դեպքում ևս նորից խոսակցական լեզվաոճական միջոցներով։ Հակամարտությունը թուղթ առ թուղթ սրվում է, քանի որ հոգևորականները ամենուրեք շարունակում են հալածել «պատվական» Նաղաշին, նրա հասցեին գրում են ծաղրական ոտանավորներ, նախանձով վատաբանում են նրա արվեստը[16]։ Ինքն էլ այս ամենին պատասխանում է «խոհուն», «կորովի, բարոյականություն որոնող» մարդու[17] համարձակությամբ, խարազանող երգիծանքով, երբեմն էլ ծանր խորհրդածություններով՝ արվեստագետի սեփական բախտը բացատրելով հարազատ ժողովրդի ճակատագրով.

.... Մանաւանդ հայոց ազգն է հար նըկուն,
Որ չունին իշխան, թագաւորութիւն,
Պատուական մարդուն կուտան նեղութիւն,
Խօճայքն խմեն միմեանց ողջութիւն ...(80)։

---

16 *Հովնաթանի երգիծական թղթերի շարքում կա «Գոհհիկ է տոհմ և ցեղըդ» տողով սկսվող մեկը՝ հասցեագրված Գողթնի Փառակա գյուղի աբեղային և երկու երեցի (132)։ Այս կապակցությամբ ավելորդ չէ հետևյալ ճշտումը. Փառակայի Հակոբ-Հայրապետ եկեղեցին վերջին անգամ վերանորոգվել է 1691—1701 թթ. (տե՛ս* Айвазян А., *1981, 37)։ Հովնաթանը եկեղեցու զարդանկար-զարդաքանդակները արած պետք է լինի վերանորոգման վերջին տարիներին։ Այդ ժամանակին էլ վերաբերում է երգիծական թուղթը, որի քառատողերից մեկում կարդում ենք.*

...Բարձրացեալ զինչ փակառայում,
Դէպ ի յաստեղերն էք հայում ... (132)։

Տաղում գտնում ենք գյուղը բնական գիրքով ու տեսքով ներկայացնող այլ տողեր ևս. այնպես որ «փակառան» կա՛մ բառախաղ է, կա՛մ էլ վրիպակ, որ վրիպել է բնագիրը պատրաստողների ուշադրությունից։

17 Աբեղյան Մ., *1970, 502։*

Կենսասիրական-լավատեսական ընդհանուր պաթոսով հանդերձ, ինչպես տեսնում ենք, քննադատական բացահայտ շեշտեր ենք գտնում նաև տաղերգուի խոհական-խրատական էջերում, այն էլ տիրող վերին դասի՝ խոջայության հասցեին։ Քննադատական շեշտեր՝ միաձուլված հնամենի վարքերի խրատներին և թղթերի դիմումնային ոճերին, մի երևույթ, որը նույնպես ներկայացնում է ժանրային, միաժամանակ լեզվաոճական հետաքրքրություն, քանի որ ամեն դեպքում ժանրն է թելադրում գրական ստեղծագործության լեզուն և ոճը։ Ժանրային փոխակերպությունները իրենց հետ բերում են «ոճական տարբեր համակարգեր», որոնց «...պատմությունը ևս,— ինչպես շեշտում է Գ. Ջահուկյանը,— պետք է մտնի հայոց լեզվի պատմության շրջանակների մեջ՝ ավելի հասկանալի դարձնելով գրական լեզվի փոփոխությունների կամ խոսակցական հիմքից նրա հեռանալու կոնկրետ պատմությունը»[18]։

Միջնադարյան տաղի ժանրը փոփոխվելով և մերձենալով նամակագրությանը կամ ժողովրդական խաղիկներին (ինչպես գտնում են Թումանյանը, Ջոպանյանը, Աբեղյանը), ոճական համակարգով էլ մերձենում է խոսակցական լեզվին։ Բնորոշ է, որ ինչպես սիրո երգերում ու երգիծական թղթերում, խոհախրատական տաղերում ևս Հովնաթանը չի հեռանում պատմողական-խոսակցական լեզվից և վերացական դատողությունները նույնպես մարմնավորում է աշխարհիկ լայն բովանդակության և ժողովրդական լեզվի հնարավորությունների ճկուն համադրումներով. ինչպես՝ *Մարդ կայ, որ խոսի, շաքար կու ծամի, Խելքըն՝ լայն ծով է և միտքն՝ գեամի* (80), *Շատ գիտուն մարդն չի ուրախանալ, Ձէրայ տգետքն չեն հաւան կենալ...* (83) և այլն։

Հովնաթանի տաղերը գրության տարեթվեր չունեն, բայց դրանց բովանդակությանը, արվեստին, լեզվին ու ոճին ուշադիր հետևելու դեպքում կարելի է ասել, որ տաղերգուի նրա ուղին սկիզբ է առել խընջույքի և ուրախության երգերով։ Պատանի հասակից այդպիսիք հյուսել ու եղանակելով երգել է հայրենի Շոռոթի ու Ագուլիսի խնջույքներում ու տոնախմբություններում։ Դրանց շարքում անտարակույս նրա առաջին երգերից է «Տաղ ուրախութեան ի Նաղաշ Յովնաթանէ ասացեալ» խորագրով և հետևյալ տողերով սկսվող տաղը.

---

18 Ջահուկյան Գ., 1969, 29։

Յաւուրս գարնան եղանակին
Փթթեալ ծաղկեցաւ այգին,
Հնչէ քաղցր ձայն տատրակին.
Ելէք, եղբարք իմ, ցնծալով,
Ուրախութեամբ և պարելով,
Ծափս-ծափի հարկանելով ... (164)։

Որոշակիորեն տեսնում ենք ոճական գրաբարայնություն, որը, սակայն, գնալով նվազում է տաղի շարունակվող չափատողերում։ Պատկերն էապես այլ է ավելի ուշ ժամանակների երգիծական թղթերում։ Սրանք նույնպես սկսվում են գրաբարաոճ շարադրանքով, բայց սկզբի կարճառոտ հատվածից հետո չափածո միանգամից փոխվում է ժողովրդական խոսակցականի։ Ակնհայտորեն առաջին դեպքում նա առաջնորդվում էր ընդունված կարգով։ Երկրորդ դեպքում արդեն գործ ունենք ժամանակակիցներին հասկանալի լեզվով խոսելու հասուն տաղերգուի գիտակցված կողմնորոշման հետ։

Կասկած չի կարող լինել, որ երգիծական թղթերում սկզբնամասի գրաբարախառն դիմումներով ցույց տալով, որ ինքն էլ կարող է բարբառել ընդունված «բարձր» լեզվով, Հովնաթանը խոսակցական «գեղջուկ բառի» հայտնում էր աշխարհիկ բանաստեղծի իր սկզբունքային համոզմունքը, դրանով մարտահրավեր նետելով գրաբարամոլ կրոնավորներին, մի պայքար, որ XIX դ. սկզբներին պետք է շարունակեր Խ. Աբովյանը։

Այդ է վկայում «Պատասխանի թղտոյն խակակիրթ կրօնաւորին միոյ, զոր գօվաբանեալ էր սուրբ Կարապետ, ի գեղջուկ բառի ասացեալ բան» (ընդգծումը՝ Ն. Հովհ.) երգիծական տաղը, որով ծաղրվում են և խակակիրթ կրոնավորի քրիստոնեական կրոնի կիսատ-պռատ իմացությունները, և գրաբարաոճ մթամած «շարադրական բանը»։ Այդ են վկայում և երգիծական տաղերում սփռված բազմապիսի գրաբարաոճ տողեր, որոնցով իրենց իսկ օգտագործած խոսակցական ոճերով ծաղրվում-ծանակվում են կրոնավորները։

Դրա օգտին է խոսում նաև կարևոր այս իրողությունը. վերը հիշատակված «Կանչէք տաղեր և շարական» տողը ուղղակի հուշում է, որ այդ ժամանակներում ուրախության սեղաններին երգվել են ոչ միայն տաղեր, այլև շարականներ։ Եվ սակայն, մեզ հասած տվյալներով Նաղաշ Հովնաթանը «աշխարհական հայացքով» գրել է սիրո, խնջույքի և ուրախության, խրատական և երգիծական տաղեր, միայն և միայն տա-

ղեր, շարականի հանգով թողնելով միայն տգետ քահանայի բարբառած օրհնության մի ծաղրանմանություն։ Գրել է գերազանցապես խոսակցական լեզվով, պարզ ու կենդանի ոճով՝ միանգամայն համապատասխան իր աշխարհիկ տաղերգության բովանդակությանը։

Ժողովրդական խաղիկներից, ապա և աշուղական բանաստեղծությունից լայնորեն հայտնի է, որ լեզվական տարողությունը մի մեծ չափով ծանրանում է հանգակապ բառերի վրա։ Հովնաթանի տաղերն աչքի են ընկնում հանգակապիչ բառերի ու ձևերի ամենաբազմապիսի համադրումներով։

Տաղերում հանգը ձևավորվում է առավելապես համահունչ բառերով, հոլովման ու խոնարհման վերջավորություններով, վերջածանցներով։ Որքանով «ներդաշնակության զգացումը շատ խոր ու փափուկ է Հովնաթանի մոտ ... բառերն ընտրված ու դասավորված են երաժշտականությունն հառաջ բերելու ակներև ու գրեթե միշտ զմայլելիորեն հաջողած դիտումով մը ...»[19], ապա այս եղանակով էլ՝ հիմնականում հանգավորումով ապահովվող մեղեդային-հնչական ներդաշնակ հնչեղությամբ ձևավորվում է բանաստեղծական պատկերը։ Ամենուրեք հանգաստեղծման ժամանակ գործուն դեր ունեն համահունչ բառերը, որոնք մեծ մասամբ արմատական բառեր են՝ համապատասխանեցված հնչյունական կառուցվածքով, այլև, կարծես, ինչ-որ տեղ մոտ են նաև իմաստով, նշանակությամբ, ինչպես՝ նուշ ... անուշ ... բեուշ (5), սուրմայ ... խուրմայ ... պուրմայ (27), տապակ ... պապակ ... փափաք (34), ոլոր... բոլոր ... մոլոր... նոր (43) և այլն։ Նկատելի է, որ հանգաստեղծ բառերը նմանաձայնությամբ հանդերձ, ունեն նաև հնչյունի տարբերակվող կամ երանգավորող հնչական հավելում։ Սա նշանակում է, որ տաղերգուն, այնուամենայնիվ զգալով հանգավոր չափատողի միապաղաղությունը, այս միջոցով ևս ձգտում էր խուսափել միօրինակությունից։

Ուշագրավ է սակայն, որ, այսուհանդերձ, զգալապես համահունչ են հոլովական և խոնարհման վերջավորություններով հանգ կազմող գոյականներն ու բայերը. սազով-դամով... համով... ջամով..., քայլին... փայլին... զմայլին... (13), կու փովլի... կու ցրվի... գրվի (28) և այլն։

Սիրո և ուրախության տաղերում տների հանգերի բազմազանության ընդհանուր մթնոլորտում հաստատուն է չորրորդ տողերի միևնույն հանգը. է կերած... է աւերած... է քերած (60) — (այդպես և՝ 5,

---

[19] Չօպանյան Ա., *1910, 16*։

19—20, 42, 51—52)։ Երբեմն էլ առաջին տան երկրորդ և չորրորդ տողերի հանգը պահպանվում է հաջորդ տների միայն չորրորդ տողերում[20]. չարսան... նան... ղան (25)։

Դարձյալ սիրային տաղերում տեսնում ենք վերջույթի երևույթը՝ տողավերջի բառերի կամ բառակապակցությունների կրկնություններ։ Նման դեպքերում հանգավորվում են վերջույթին նախորդող հատվածները ես՝ ստեղծելով ներքին հանգ (...եմ մնացել... է գնացել... չես բացել... թարկել ես, մոռացել... 30)։

Սրանք տաղաչափական իրողություններ են, որոնք վկայում են հանգի ու չափի տաղերգուի նուրբ զգացողությունը, բառը բառին մոտեցնելու, դրանք միմյանց հետ հյուսելու ոճական ճկունությունը, բառապաշարի հարստությունը։

Հովնաթանի սիրային և խնջույքի տաղերում հաճախադեպ են կրկնակ տողերը, որոնք նույնպես ծառայում են չափածոյի ճկունությանն ու խաղացկունությանը՝ այս անգամ արդեն կշռույթային ռիթմական առումով։ Սիրո տաղերում դրանք բացառապես բնութագրում են տաղերգուի հոգեկան ապրումները, ամեն կրկնվելու հետ շեշտում նրա տանջանքի ռիթմիկ ուժեղացումը. Ես դիւանայ ջունուն եղէ քեզ համար, Աւարայ Մաջլուն եղէ քեզ համար (18), Ամա՜ն-ամա՜ն, քո սիրոյդ եղեր եմ դալու-դիւանայ (23—24), Դու իմ խելքն տարար, Ես չունիմ ղարար (54—55) և այլն։ Ինչպես հայտնի է, կրկնակը ժողովրդական երգի բնորոշ առանձնահատկություններից է, և սրանով ևս Հովնաթանը հարազատ է ժողովրդականին։

Խնջույքի տաղերում կրկնակը ծառայում է ցնծության բորբոքմանն ու պաթոսային զորացմանը և հատկանշական է, զորացման ընթացքով տաղը վերաճում է պարերգի, որով նույնպես այն հարազատ է ժողովրդական խաղիկներին։ Փոխվում է չափատողի ռիթմը, ավելի ոստոստուն են դառնում հանգերը, արագանում է հանգակապ բառերի հերթափոխը։

Հանգակապ բառերի հերթափոխությունը՝ ամենատարբեր հոլովումներով, ամենից ավելի բնորոշ է երգիծական գործերին։ Սիրո և խընջույքի տաղերում նկատելի են դրությունների, հոգեբանական վիճակների, ուրեմն և բառապաշարային ատաղձի ու շարադասության որոշ կրկնություններ։ Միանգամայն զերծ են այդպիսիներից երգիծական-

20 Հանգաբառերի բազմազանությունն ու դասավորությունը բնորոշ է աշուղական երգերին։ Մանրամասն տե՛ս Սրեղյան Մ., 1971, 381—382։

ները՝ գրված հասարակական տարբեր անցուդարձերի առիթով, որպիսիք իրենց հետ բերում են լեզվական բազմապիսի շերտեր, գրաբարի, բարբառների և փոխառյալ բառերի համանիշային հարստություն։

Անդրադառնալով տաղերգուի լեզվաոճական բնութագրին, Ռ. Իշխանյանը գտնում է, որ «Հովնաթանի լեզուն իր հիմնական մասով 17—18-րդ դարերի հայոց նոր գրական լեզվի տարբերակն է, ոճական, նաև տաղաչափական տեսակետից հայ ժողովրդային բանաստեղծության միջնադարյան տաղասացության և նոր գուսանական շերտերով՝ վերջինիս գերակշռությամբ»[21]*։ Նշված շերտերը, ինչ խոսք, առկա են Հովնաթանի տաղերում, բայց գերակշռությունը, թվում է, պատկանում է ժողովրդական բանաստեղծությանը։ Ինչ վերաբերում է նորգուսանական շերտին, ապա հակված ենք կարծելու, որ այն ձևավորվում է ավելի ուշ շրջանում։ Որոշակիորեն այն տարիներին, երբ Հովնաթանը գործում է արևելյան քաղաքային մթնոլորտով շնչող Թիֆլիսում, հենց այդ ժամանակ ստեղծված տաղերում էլ բարբառայինի փոխարեն ավելի են գործածված փոխառյալ բառեր, զուգորդվող համանիշներ։*

* * *

«Նաղաշ Հովնաթան աշուղը և Հովնաթան Հովնաթանյան նկարիչը» գրքի առաջաբանում Ա. Չոպանյանը Հովնաթանի լեզուն համարում է արևմտյան և արևելյան հայերենի խառնուրդ՝ գրաբարի և հին աշուղական բանաստեղծության երանգներով։ Նա միաժամանակ ավելացնում է, որ տաղերգուի լեզվում զգալի է պարսիկ-թուրք բանաստեղծության ազդեցությունը՝ պարսկերեն, թուրքերեն բառերի օգտագործմամբ[22]*։*

Ն. Ակինյանի կարծիքով Հովնաթանի լեզուն ռամկախոս է՝ գրաբարի հզոր ազդեցությամբ և «յուր ռամկախօսութիւնք կկրեն առավելապես Երևանյան բարբառին նկարագիրը, կամ մեկ խոսքով՝ այն բարբառին, որ ապա Աբովյանի գրչի տակ հաղթանակող հանդիսացավ։ Գրաբարեն ու աշխարհաբարեն գիտցած է օգտվիլ Հովնաթան այնչափ, որչափ կարևոր էր յուր տաղերուն ներդաշնակություն մը զգացնելու համար»[23]*։*

Տասնամյակներ անց «Հայ հին գրականության պատմություն» աշխատության մեջ Հովնաթանի տաղերի հանգամանալի քննությամբ

---

21 Իշխանյան Ռ., *1978, 74։*

22 Չոպանյան Ա., *1910, 14—15։*

23 Ակինյան Ն., *1911, 82—83։*

Մ. Աբեղյանը հավաստում է, որ նրա «երգերով մեր քնարերգությունը կատարելապես աշխարհականացել է»[24]։ Անկասկած, խոսքը վերաբերում է նաև լեզվին։ Լեզվական առումով Աբեղյանը նույնպես շեշտում է պարսից լեզվի և բանաստեղծության ազդեցությունը[25]։

Ինչպես տեսնում ենք, առանձին վերապահումներով հանդերձ, ուսումնասիրողները, որոշակիորեն պաշտպանում են Հովնաթանի լեզվի ժողովրդախոսակցական երակը, իսկ Աբեղյանն արդեն առաջ է քաշում նրա լեզվի աշխարհաբարացման հարցը։ Այստեղից հետևում է Հովնաթանի տաղերի լեզվական համակարգի և առանձնահատկությունների կարևորությունը XIX դարում հաղթանակած աշխարհաբարի ակունքների, լեզվական օրինաչափությունների ուսումնասիրության համար։

Մ. Աբեղյանից հետո Նաղաշ Հովնաթանի ստեղծագործության լեզվին անդրադարձել են Է. Թումանյանը, Ռ. Իշխանյանը, Ս. Ղազարյանը, «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» հատորներում՝ Ս. Անթոսյանն ու Լ. Կարապետյանը։

Անդրադառնալով «միջնադարի վերջին և վաղ աշխարահաբարի առաջին բանաստեղծի» լեզվին[26], Է. Թումանյանը նշում է գրաբարի, միջին հայերենի, աշխարհաբարի քերականական առանձնահատկությունների միահյուսված առկայությունը տաղերում, շեշտում թյուրքական և այլ լեզուներից փոխառված բառերի լայն կիրառությունը, առանձին-առանձին քննում հոլովների կազմությունը։ Լեզվաբանի դիտարկումներով լեզվական իրողությունների փոփոխությունները տաղերում պայմանավորված են բովանդակությամբ. խրատական տաղերում գերակշռում են գրաբարյան ձևերը, սիրո տաղերում՝ ժողովրդականը. «Իսկ ամբողջության մեջ նկատվում է վաղ շրջանի արևելյան և արևմտյան աշխարհաբարների լեզվական ձևերի խառնուրդ»[27]։

Միջին գրական հայերենի պատմության ակնարկներում բարբառային զգալի ներթափանցումներով բնութագրվող XV—XVII դդ. միջին գրական հայերենի խոնարհման համակարգը ներկայացնելիս, ինչ-

---

24 Աբեղյան Մ., *1970, 510։*

25 *Նույն տեղում, 511։*

26 Туманян Э., 1962, 40—42:

27 Туманян Э., 1962, 40:

պես և բարդ նախադասության քննությանը հատկացված բաժնում, օրինակներ են քաղված Հովնաթանի տաղերից[28]։ Երկու դեպքում էլ ուսումնասիրության հեղինակների (մասնավորապես՝ Ս. Անթոսյանի) արձանագրած խրողությունները ճշտորեն են բնութագրում տաղերգուի լեզվի խոնարհման և շարահյուսական համակարգի շոշափվող կողմերը։

Ըստ Ս. Ղազարյանի, Հովնաթանի լեզուն միջին հայերենի և -ում ճյուղի բարբառների խրողությունների զուգակցություն է։ Նրանում առկա են գրական լեզվի ուղղագրությունն ու արտասանությունը, ուստի և «նրա լեզուն շատ դեպքերում նույնանում է հայոց ազգային լեզվի վաղ շրջանի հետ»[29]։

Ռ. Իշխանյանը նախ համեմատական հիմնավորումներով Հովնաթանի տաղերից զատում է «Պատվական եղբայրներ, ինձ մի՛ մեղադրեք» տողով սկսվող և «Ջուղայեցուց հայրենի գրոց պարզ լեզուն այ, զոր կու պարծենան» տաղերը, գտնելով, որ դրանք տաղերգուի գրչին չեն պատկանում։ Նշենք, որ ելնելով լեզվաբանի[30], ինչպես և սեփական դիտարկումներից՝ զատված տաղերում նաև բառերի, բառաձևերի, բայաձևերի եղակի և յուրօրինակ գործածության տարբերություններից, համաձայն ենք Ռ. Իշխանյանի հետ, ուստի և նշված երկու տաղը սույն աշխատանքում արտացոլված չեն։

Այնուհետև տաղերգուի լեզվի մի քանի կարևոր հատկանիշներ պարզելու նպատակով, լեզվաբանը քննության է առնում մի շարք բառաձևերի ու քերականական տարրերի գործածություններ. ցուցական դերանունների երկու ձևաշարքերը (այս...-էս...), էական բայի եզակի երրորդ դեմքի երկու հնարավոր ձևերը (է-ա), բայերի ներկա ժամանակի համադրական և հարադրական, գոյականների հոգնակիի, բացառական հոլովաձևերի կազմությունները, առանձնացնում գրաբարյան բառերն ու բառաձևերը, փոխառյալ բարբառային բառերի գործածությունները և այլն[31]։

Լեզվաբանի եզրակացությունն այն է, որ Հովնաթանի լեզուն՝ «17—18-րդ դարերի բոլոր հայ ստեղծագործողների լեզվից, թերևս, ամենից

---

28 *Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության (այսուհետև՝ Ակնարկներ 1972, 361, 363, 365, 369...։ 1975, 208, 210, 212, 213...։*

29 Ղազարյան Ս., *1981, 291—292։*

30 *Մանրամասն տե՛ս* Իշխանյան Ռ., *1978, 72—74։*

31 Իշխանյան Ռ., *1972, 40—50։ 1978, 60—74։*

ավելի շատ նպաստեց... նոր գրական հայերենի արևելյան ճյուղի զարգացմանն ու հարստացմանը»[32]։

Անպայման ընդունելի եզրակացություն, եթե նկատի ունենանք, որ համբավավոր արվեստավորի գործունեության բերումով Հովնաթանը գործել է Արևելյան Հայաստանի ժամանակի ամենաբանուկ, ամենաաշխույժ կյանքով ապրող վայրերում՝ Երնջակ-Նախիջևան, Գողթն-Սյունիք, Երևան, ինչպես և հայաշատ Թիֆլիսում, Հովնաթանի, նրա Նաղաշ որդու՝ Հակոբ Հովնաթանի, թոռ ու ծոռ Հովնաթանյանների, նրանց և այլոց աշուղական-հրապարակային կատարումներով նրա տաղերն արժանացել են լայն տարածման, ուրեմն և կարելի է չկասկածել, որ ազդեցության տարածական և ժամանակային այդպիսի լայն շրջագծով որոշակիորեն նպաստել են արևելահայ նոր գրական լեզվի «միասնականացնող տենդենցների» խորացմանն ու զարգացմանը։

Այս հանգամանքը թելադրում է Հովնաթանի տաղերի լեզվի բազմակողմանի ու կարևոր այդ առանձնահատկությունների ավելի համակողմանի, հիմնավոր քննություն։

Հովնաթանի տաղերի լեզվի վաղ աշխարհաբարյան «միասնականացնող» այդ միտումների համակողմանի քննությանն էլ նվիրված է սույն աշխատանքը։ Քննության համար հիմք է ընդունված Ա. Մնացականյանի և Ճ. Նազարյանի աշխատասիրությամբ 1951 թ. ԳԱ հրատարակչության լույս ընծայած Նաղաշ Հովնաթանի «Բանաստեղծություններ» ժողովածուն։

Աշխատանքում արտացոլված չեն հնչյունական կողությունները հետևյալ պատճառաբանությամբ. ժողովածուն կազմողները նշում են, որ «ուղղագրությունը պահպանված է ըստ ձեռագրերի և, որ օգտագործված աղբյուրներից ոչ մեկը ինքնագիր (автограф) չէ (ընդգծումը՝ Ն. Հովհ.) ... տեքստեր կազմելիս ոչ մի օրինակ չի ընդունվել որպես հիմք»[33]։ Հնարավոր էլ չէ ընդունել, քանի որ, ինչպես արդեն ակնարկվեց, չափազանց լայն է տաղերի ընդօրինակությունների քարտեզը՝ Մուշ, Էրզրում, Կ. Պոլիս, Ագուլիս, Թիֆլիս, Իզմիր (՞) և այլ վայրեր։

---

32 Իշխանյան Ռ., *1978, 71*։

33 Հովնաթան Նաղաշ, *1951, XXXIII*։

ԲԱՌԱՊԱՇԱՐ

1. Գրաբարյան և միջին հայերենյան բառաշերտեր*

Յուրաքանչյուր ստեղծագործող իր գրվածքներում ներկայացնում է լեզվի պատմական զարգացման տվյալ ժամանակաշրջանի վիճակը։ Նաղաշ Հովնաթանի տաղերի լեզուն XVII—XVIII դդ. հայերենի լեզվական իրողությունների անդրադարձումն է։ XVII դարը, ինչպես ասվեց, հայ լեզվաբանության մեջ համարվում է վաղ աշխարհաբարի ժամանակաշրջան, երբ աշխարհաբարը սկսում է կազմավորվել նաև որպես գրական լեզու[1]*։ Լեզուն, գրաբարյան տարրերի խառնուրդով, մղվում է աշխարհաբարյան ձևերի համակարգայնացման, ժողովրդախոսակցական բառաձևերի գործածությունների հղկման։ Փոփոխություններ է կրում նաև բառապաշարը. նկատելիորեն աշխուժանում են բարբառային, փոխառյալ բառաշերտերը։*

Այս առումով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Նաղաշ Հովնաթանի տաղերի բառապաշարը։ Դեռևս առաջին հետազոտողը նրա լեզուն համարել է «գրաբարի զարդերով բարդացած»[2]*։ Հետագայում Ն. Ակինյանն է նշել «գրաբարի հզոր ազդեցությունը» Հովնաթանի լեզվի վրա*[3]*։ Գրաբար բառերի, հոլովաձևերի, բայաձևերի գործածությունը տաղերում վկայում է տաղերգուի գրաբարի իմացությունը և, սակայն, մեծ մասամբ դրանք, կարծես մի տեսակ, արհեստականորեն են մուծված բանաստեղծական հյուսվածք. այսպես՝ Վարդապետացն* աստ *քաշին ... (149), Թալիմ* չեն առեալ բազում *ղումաշէն (83), Նոր* ծաղկեցաւ *այգին... (34), Քո սիրուդ* հալեալ մաշեցայ... *(45) և այլն։ Նմանօրինակ*

** Գրաբարյան բառաշերտում են ներկայացվում նաև քերականական համակարգի գրաբարաբանությունները։*

1 *Туманян Э., 1962, 5;* Ջահուկյան Գ., *1969, 50։*

1980 թ. է. Մկրտչյանը հրապարակեց «Աշխարհաբարի տարրերը միջնադարյան գրական հուշարձաններում» գրքույկը։ Հիշատակարաններից քաղված առանձին փաստերի նմուշներով հետազոտողը աշխարհաբարի վաղ շրջանը հասցնում է մինչև XIV—XV դարերը։

2 Չոպանյան Ա., *1910, 15։*

3 Ակինյան Ն., *1911, 82։*

գրաբարյան ձևերից բացի, հանդիպում են նաև զուտ գրաբարյան հյուսվածքներ և, բնորոշ է, այդպիսիք ոճական առումով ավելի հարազատ են շարականի դիմումնային վսեմ արտահայտչականությանը։ Այդպիսիք են «Յամենայն ժամ տացուք փառս տեառն աստուծոյ յապենիազին» (157) և «Հայր անզգիզըն, բարեխնամ, մարդասէր...» (124) տողերով սկսվող տաղերը։ Հետաքրքրական է նաև, որ գրաբարաշունչ, վերամբարձ ոճով սկսվող խնջույքի տաղերից շատերը տեղ-տեղ, իսկ վերջում, արդեն, կարծես, լիովին «սպառում են» գրաբարը, և չափատողը կրկին մերձենում է ժողովրդախոսակցական լեզվին, այսպես՝

Յաւուրս գարնան եղանակին
Փթթեալ ծաղկեցաւ այգին ...
...էր պարապ կու մնաս, սաղի,
Ցալաքն է մեր օմրին եաղի,
Աշխարհս մեզ չէ մնալ պաղի ... (164—166) և այլն։

Հովնաթանի տաղերում կարելի է որսալ նաև գրաբարի բառապաշարին առնչվող այլ իրողություններ։ Հայտնի է, որ գրաբարյան բազմաթիվ բառեր և ոճեր միջին գրական հայերենում այլևս չեն գործածվել։ Անգործածական բառերի շարքում հիշատակվում է փութանակի-ն[4]։ Հովնաթանի տաղերում բառը գտնում ենք օգտագործված մեկ անգամ, հավանաբար, հանգը պահպանելու համար. ...ժամանակի ...փակի ...առանձնակի ...փութանակի (135)։ Ակներևաբար հանգապահպանմամբ է պայմանավորված և տխւ բառի գործածությունը. ...ի տուընջեան... տրտնջան (120)։

Բազում, աղաղակել, աստ, անդ բառերը տաղերում դարձյալ մեկական գործածություն ունեն, զուգահեռաբար հանդիպում են դրանց «նոր» ձևերը՝ շատ, կանչել, այստեղ, այնտեղ։ Արևմտահայ գրական լեզվում պահպանված միջին հայերենյան աղէկ, մանչ, սուտ բառերը նույնպես զուգորդվում են «այլ» ձևերի գործածությամբ՝ լաւ, երեխա/ըրխա, փոքրաւոր (երեխա նշանակությամբ), փող։

Հետաքրքրական է ֆատակ բառը. ՆՀԲ-ն նշում է «նմանութիւն. ձև. համեմատութիւն. օրինակ»[5]. ՀԱԲ-ն՝ «նման»[6]։ Նույնը և տաղերում՝ Նման ես առիւծին մատակ, Վայրի գայլոյն ես ֆատակ (138)։ Արդի հայերենի

---

4 Ակնարկներ ..., 1972, 181։

5 ՆՀԲ, 1837, 994։

6 ՀԱԲ, 1979, 558։

բացատրական բառարաններում քատակ չի արձանագրված. սակայն, բառարանային տվյալներով տեղայնորեն սահմանափակվել և պահպանվել է Շիրակի բարբառում՝ նույն նշանակությամբ[7]։

Քերականական համակարգում գրաբարաբանություններ են որոշիչ-որոշյալի և հատկացուցիչ-հատկացյալի համաձայնության դեպքերը, գերազանցապես տեղ գտած երգիծական տաղերի դիմումնային արտահայտություններում. մանկանց եկեղեցւոյ, հոգւոյն սրբոյ, հարցն մերոց (124), կրօնաւորին միոյ (147), տեառն աստուծոյ (157), յաւուրս գարնան եղանակին (164), յայնմ աւուր (182), հոգւոց մերոց (183), ապա և՝ դարձվածային արժեք ունեցող՝ յաւուր մեծ(ի) դատաստանի (138), յաւուր յայտնութեան (179) կապակցություններում։

Այնուհետև. գրաբարյան երևիլ, երկնչիլ, զերծանիլ, ուսանիլ բայերը տաղերում մեկական կիրառություն ունեն՝ երևեցա (167), երկընչին (119), զերծայ (203), ուսանին (79)։ Գրաբարյան անցանել, գտանել, ելանել, հասանել, մտանել, սպանանել, տեսանել ածանցավոր բայերի սակավաթիվ գործածություններին զուգահեռ տաղերում հանդիպում են միջին հայերենի հնչյունական փոփոխություններով պայմանավորված՝ անցնել, գտնել, ելնել, հասնել, մտնել, սպանել, տեսնել նոր ձևերը, որոնք, ինչպես գտնում է Ա. Այտընյանը՝ «ընտրելի» են[8]։

Գրաբար նախադասություններում հանդիպում են ստորադասական (սահմանական) երկրորդ ապառնու, հորդորական հրամայականի կիրառություններ՝ աղաչեսցուք (127), երկրպագեսցուք (124), հայեսցես (89), ճաշակեսցուք (180), մտցէ, յիշեսցէ (92), յաջողեսցէ (177), ցընծասցուք (185), փրկեսցէ (182), օգնեսցէ (179), օրհնեսցէ (126), ուրախասցի (132), ներեսջիք (92)։ Գտնում ենք -ոց վերջավորությամբ ապառնի դերբայով երկրորդական բաղադրյալ ժամանակաձևի կիրառություններ, որոնք, նույնպես, ասես, արհեստականորեն են մուծված բանաստեղծական հյուսվածք. լինելոց են վրէժխնդիր (139), առնելոց եմ խայտառակ (97)։ Ավելի հաճախակի են անցյալ դերբայ+եմ օժանդակ բայ կառույցով երկրորդական բաղադրյալ ժամանակաձևի գործածությունները. ասացեալ է (181), եղեալ ես (135), ելեալ ես (58), եկեալ է (128, 152, 161 ...), գրեալ էիր (148, էր 132), գովաբանեալ էր (147), համարձակեալ եմ (140), հասեալ է (160, 162)։

---

7 ՀԲԲ, 668։

8 Այտընյան Ա., 1866, 72—73։

Նշված բոլոր ժամանակաձևերը տաղերի խոնարհման համակարգում դիտվում են որպես գրաբարաբանություններ։

Նույնը և գրաբարյան անցյալ կատարյալի՝ անկայ, անկար (76, 149), ծնար, ծնաւ (124, 93), ջախջախեցէր (138), կերակրեցէր (129), կրեցեր (24). կրավորաձև խոնարհման՝ մաշեցայ (45), համբարձաւ (143), հալեցաւ (169), յայտնեցաւ (6, 69). հրամայականի -եա վերջավորությամբ՝ աղաչեա (124, 182), ներեա (132), ողորմեա (125, 140...), առեա, խոստովանեա, պահեա (92) բայաձևերի գործածությունները։

Էհաս (15) և եռես (147) բայաձևերի նմանությամբ է կազմված ելաց (36) բայաձևը, բայց և նույն տաղի տարբերակում այն հանդիպում է միջին հայերենին բնորոշ ի աճականով՝ իլաց (207), մի երևույթ, որ արձանագրվել է նաև Ն. Քուչակին վերագրվող հայրեններում[9]։

Գրաբարին հատուկ յաղագաւ նախադրությամբ, քանզի, զի շաղկապներով (առաջին երկուսը մեկական կիրառությամբ) ձևավորվում են գրաբար կամ գրաբարախառն պատճառական բնույթի նախադասություններ. Յամենայն ժամ տացուք փառս տեառն աստուծոյ յավենիազին, Քանզի ետ կարօղութիւն մեզ հարազատ եղբայր Այվազին (157), Դու ինձ ներեա՛, ով նազելի, Սիրոյ յաղագաւ գրեցի (132). Եկաք ժողովուրդ, երկրպագեսցուք, Զի նայ է յոյս հաւատացելոց (124), ...ուրախ լէր, դու Յովնաթան, Զի եկեալ է մածուն ու բան (128) և այլն։

Լեզվաբանական գրականության մեջ արձանագրվում է, որ միջին գրական հայերենը հատկանշվում է հին գրական լեզվում և լեզվի բարբառային ու խոսակցական տարբերակներում հանդիպող նույնիմաստ բառերի կուտակմամբ[10]։ Լեզվի խոսակցական տարբերակների աշխուժացմամբ պայմանավորված այս երևույթը շարունակվում է հետագա ժամանակներում։ Խոսքային իրադրությունների նման բազմազանության բերումով, բնականաբար, նկատելիորեն հարուստ է Հովնաթանի տաղերի լեզվի համանիշային համակարգը։ Ավելին. դա նրա ոճի էական հատկանիշներից է։ Հարկ է նշել, սակայն, որ տաղերգուն փոքր-ինչ ավելի է նախընտրում համանիշների շարքի փոխառյալ անդամների գործածությունը (տե՛ս Փոխառյալ բառեր)։ Հանդիպում են հետևյալ համանիշների կիրառությունները.

ամրել/փակել — ... Դուռն ամրում եմ, դուրս կորեք (109). Մեծ պասին դռներն պինդ փակէք (176).

---

9 Ակնարկներ..., 1972, 387։

10 Ակնարկներ..., 1972, 176։

այժմ/հիմա — Այժմ *միտք արա բարակ, խոր (111)*. *Հիմա կոխեմ ձեզ մէջ ցխին (98)*.

բնաւ/իսկի — *Բնաւ ծախու բան չէ … (85)*. *Լեզուդ լալիկ է,* իսկի *հաց չարի (116)*.

իբրև/զէտ — *Ով չեթ Վարդան անխելացին, Յիմար* իբրև *զգերդեսացին (138), Նա մրրկեալ է՝* զէտ *ալէկոծ նաւ (93)*.

հանապազ/միշտ — *Նաև պարտիք* հանապազ *սեղան բազմիլ ասա, ուրախանալ (158),* Միշտ *խոստովանեա և ա՛ռ սրբութիւն (92)*.

համար/վասն — *Մեռել ես մէկ ձվի* համար *(136), Տաղ սիրոյ ի Նաղաշ Յովնաթանէ ասացեալ* վասն *ուրախութեան (64)*.

միւս/մէկել/ուրիշ — *Ի* միւս *անգամ գալստեանն եւ աշխարհական ատենին Ի յերկնից խոնարհեցար… (124), Քեզ հետ խօսողին երեսն հայէ,* Մէկել *խօսօղին ականջ հետ պահէ (99), Ձէրայ քո վատըն* ուրիշին *կասէ (93), Տոցիդ եմիշներն, ինձնէ զատ, նշանից չտաս* ուրիշ *մարդի (23)*.

միատեղ/մէկտեղ — *Եկ,* միատեղ *նստեմք սեղան (51), Յուրտ է, արի* մէկտեղ *պառկինք (38)*.

նայել/հայիլ/մտիկ անել — *Որպէս որ* նայես՝ *այնպէս կերևես (92). Երեսիդ* կու հայիմ, *կու մնամ բէյուշ (55), Տով աչքերիդ* մտիկ կանեմ՝ *ձեռաց կու գնամ (46)*.

նման/Ֆաւտակ — Նման *ես ափւծին մատակ, Վայրի գայլոցն ես* Ֆատակ *(138)*.

շուտով/բուրգան — *Չար խօսք, որ լսես,* շուտով *մոռանաս (89), Եթէ հաճաթ տաս դու այլոց մարդկան, Կամ քոնն մնայ օտար մարդոյ տան, Օտարն տուր իւրեանց, քոնն առ* բուրգան… *(88)*.

շուրբ/պռեկ/պռոշ — Նրբունֆդ *բարակ է, կարմիր և փայլուն (42), Կարմիր* պռեկներդ *ուշքս է տարած… (195), Մուկ տեսած կատւի նման,* Պռոշներս *դողացրվան (142)*.

ուստի՞/յո՞ւստ — Ուստի՞ *կուգաս, քաղցր բլբուլ (19), Փիլոնացու* յո՞ւստ *կու ճարէք (121)*։

Այդպես նաև՝ աշխատել/դատել, առևտուր/առ ու ծախս, գինովնալ/հարբիլ, երբ/յորժամ, ըմպել/խմել, թեՖ/ծուռ, ժամանակ/ժուկ, ինչո՞ւ/ինչի՞/զիա՞րդ, լի/շատ, լուռ/մունջ, խելագար/խենթ/խև, համբույր(-ել)/պագ(տալ), հաստատ/պինդ, մազ/վարս/ծամ, շուռ գալ/շուրջ գալ, ողբ/սուգ, պահել/գաղել, վատ/գէշ, ուղարկել/ղրկել, փողպատ/եախայ։

Հայերենի ընդհանուր բառապաշարից տաղերի լեզվին ժառանգա-

բար փոխանցված բառերը (հին փոփոխություններով հանդերձ) հատուկ են հայերենի բոլոր դրսևորումներին. դրանք բազմազան են իմաստային խմբավորումով, ըստ գործածության ոլորտների. նշենք մի քանիսը.

1. Բնություն ու աշխարհ — *աղբիւր, ամպել, անապատ, անդունդ, անձրև, բալ, բուք, երաշտ, ծագել, կարկուտ և այլն.*

2. Ազգ, ընտանիք, ընկերություն — *ազգ, այրի, բարեկամ, եղբայր, զավակ, ընկեր, ժողովուրդ, ծնող, հարազատ, հարեւան, մանուկ և այլն.*

3. Բուսակենդանական աշխարհ — *արմատ, բակլայ, գարի, դարման, դդում, ծաղիկ, ծառ, շաղգամ, սերկևիլ, տերև և այլն. աղաւնի, աղուէս, առիւծ, արծիւ, գառն, թռչուն, կատու, կաքաւ, ձուկն, տատրակ և այլն.*

4. Մարմնի մաս — *ականջ, աչք, ատամ, արգանդ, գավակ, թիկունք, ծամ, մէջք, սիրտ(-իկ), վարս, ուս, փոր, քիթ և այլն.*

5. Սնունդ, կերակրատեսակ — *ալիւր, բաղարջ, խմոր, կարագ, ձէթ, մածուն, մեղր, շաքար, պանիր, պաշար, սխտոր, սոխ, քացախ և այլն.*

6. Արվեստ, արհեստ, ուսում — *աշակերտ, արուեստաւոր, գիրք, թանաք, թուղթ, ծաղկել, ճարտարապետ, նկար, պատկեր, վարպետ, տոմար և այլն.*

7. Տնային իրեր, կահկարասի, ամանեղեն — *ակիշ, բաժակ, բղուղ, դանակ, խնոցի, կանթեղ, կարաս, կթղայ, կճուճ, շամփուր, շերեփ, սափոր, սեղան, տաշտ և այլն.*

8. Պետական կարգ, պաշտոնավարություն, իրավական, դատական բառեր — *ատեան, դատաստան, հրաման, վկայ, օրէնք, առաջնորդ, արքայ, թագավոր, իշխան, տանուտէր, տէր և այլն.*

9. Կրոն — *աբեղայ, աղօթք, առաքեալ, աւետարան, բուրվառ, երդումն, ճգնաւոր, մարգարէ, մկրտել, պատարագ, սարկաւագ, փոխ(ն) և այլն.*

10. Գույն — *թուխ, կանաչ(-անալ), կարմիր, ճերմակ, սպիտակ, սև և այլն.*

11. Տարվա եղանակ, ժամանակ — *ամ, ամառ(ն), ամիս, աշուն, գարուն, երկուշաբթի, ժուկ, շաբաթ, տարի, ցերեկ, ուրբաթ, օր և այլն։*

2. Նոր բառեր և իմաստային նոր կիրառություններ

Հովնաթանի տաղերում հանդիպում են գրաբարի բառակազմության ոչ խորթ բառեր, որոնք արձանագրված չեն գրաբարի բառարաններում[11]*: Գրաբարակերպ այդ բառերը հարաբերականորեն կարելի է դիտել որպես* նոր բառեր. *չարձանագրված բառիմաստները՝* իմաստային նոր կիրառություններ: *Նոր բառերից են՝*

անխաշ — *Կարգաւոր շատ կա՝ անեփ,* անխաշ *են (83).*

անճաշ — *Անտէր տղա կայ ... մերկ, աղքատ,* անճաշ *(86).*

բրամիտ[12] — *Վիթ-վիթ և անմիտ, խակ և* բրամիտ, *Յոյժ պակասամիտ ... (133).*

գաղտարան — *Օրհնեսցէ չորքանկիւնն ... ծածուկ* գաղտարանն *(126).*

թանաման — *Օրհնեսցէ չորքանկիւնն ...* Թանամանն, *պանրամանն (126).*

ինքնահաւան — *Վասն ազէտ ... եւ* ինքնահաւան *բարկացող մարդոյ (83). Անարգանք* ինքնահաւան *մարդոյ վերայ ... (133).*

խակակիրք — *Տաղ ի վերայ* խակակիրք *աբեղայի ... (132), Պատասխանի թղտոյն* խակակիրք *կրօնաւորին միոյ... (147).*

ձուակեր — *Հէնց են* ձուակեր *գող կատու (123).*

շապկաւոր — *Զայներն քաշ, լղունչն լցած, Ատեանն* շապկաւոր *լցած (121).*

ոտիկ — *Գինով ժամ գաս երկու* ոտիկ *(113).*

սրտիկ — *...խմեց՝* սրտիկն *հովացաւ (100), Երբ կու նայիմ ճաւուցն երամ,* Սրտիկս *խոց կելնի վէրամ (139) և այլն.*

փիլոնացու — Փիլոնացու *յո՞ւստ կու ճարէք... (121).*

փողաման — *Կատուն էլ քանց ամէն լօթի, Հերթէն* փողամանումն *ցեթի (108) և այլն:*

Նշված բոլոր բառերն արձանագրված են արդի հայերենի բառարաններում[13]*:*

---

11 *Խոսքը վերաբերում է հետևյալ բառարաններին. ՆՀԲ, ԱԲ,* Սեբաստացի Մխիթար, *1769, ՀԱԲ: Համեմատվել են նաև՝* Ջախջախյան Մ., *1837 և* Քաջունի Մ., *1893, որոնք անհրաժեշտության դեպքում վկայակոչվում են:*

12 *Բառը նշում է Ս. Գաբամաճյանն իբրև «նոր շինված». տե՛ս ԳՆԲՀԼ, 275:*

13 *Տե՛ս ԱՀԲԲ, ԺՀԼԲԲ:* Անխաշ, անճաշ, թանաման, խակակիրք *բառերն արձանագրված չեն ԱՀԲԲ-ում, իսկ* շապկաւոր-*ը ԺՀԼԲԲ-ում:*

Նույն սկզբունքով կարելի է առանձնացնել նաև այն բառերը, որոնք բառարանագրված չեն ո՛չ գրաբարի, ո՛չ էլ ժամանակակից հայոց լեզվի բառարաններում։ Եվ, սակայն, երկու դեպքում էլ դժվար է որոշել նորակազմ բառերի առաջացման ուղիները. արդյոք դրանք եղե՞լ են ժամանակի խոսակցական լեզվում, թե՞ հեղինակային նորակազմություններ են. այսպես.

աղՖացու — *Թան բերին իբր շնահաւոր տարի,*

Մէջն էր խառնած քարեր և գարի,

ԱղՖացու *եղէ և հոգեվարի (153).*

անխելացի — *Ով չէթ Վարդան անխելացին,*

Յիմար իբրև զգերգեսացին... գետին... լացին (138)։

Հավանաբար, այս դեպքում բառը կազմվել է հանգի պահպանման համար։

գառնափլավ — Գառնափլավ *խորովին հետ կարմիր գինին խիստ է խառն (183).*

զգիկ (՞) — *Խնկին նման է* զգիկ *բարբառի, դմակի իւղով պողազն հարի (117).*

թամբոց — *Դուն, որ* թամբոց *է խաղալիս, Փիլոնի տեղակ է տալիս (120)։ Ժողովածուն կազմողների նշումով՝ թամբոց — «խաղի տեսակ»*[14]*։*

թսարակ — *Ես եմ հաւակեր* թսարակ,

Հաւն քաղցր էր քանց մեղր-կարագ,

Վասն այն կերայ շուտ և արագ,

Ապա թէ եկի պատարագ (142)։

Թսարակն *հաւն գողացաւ ... (143)։*

Թերևս, բառն առնչվո՞ւմ է պարսկերեն تسارع [tasāro‘] *«աճապարանք, փութկոտություն, շտապողականություն» բառին։*

լիական — *...զքեզ գովեմ սրտիվ* լիական *(21)։ Կարելի է ենթադրել, որ բառը նշված տողին նախորդող* տան սիրական *և* արէյՖական *բառերի համանման կազմություն է։*

լրբաղէմ — *Ով* լրբաղէմ *և յանդուգն, խեղդած աղուէս, տառեխ ձուկն (137).*

լուսաւորակ — *Զի ցամաք սիրտք մեր զովացան,* Լուսաւորակ *նիւթին այն (129).*

---

14 Հովնաթան Նաղաշ, *1951, 320։*

ծոխարարիկ — Ծոխարարիկն *ծուլի, թնքի ... (108).*

մարմնադեղ — *Թող սա, վի պարտ է և արժան ...*

Կազմել մարմնադեղ *զանազան,*

Զոր հազիւ գոյ Ցռանգստան (128—129)։

Բառը հանդիպում է միայն Մ. Քաջունու բառարանում, որը և բացատրում է իբրև «ներկ մարմնագույն»[15] *(°)։*

շարուն — *Կանանչ խոտի վրայ նստեցէք* շարուն *(167)։ Բառի կազմությունը, հավանաբար, դարձյալ պայմանավորված է հանգապահպանման միտումով՝ ...գարուն ...պարոն ...շարուն....*

ոսկենաւ — *Է՛, իմ սիրամարգ,* ոսկենաւ,

Քաղցրախօս և նախշուն կաքաւ... (37).

պաղպաչական — *Նորափոր գնայք առուց՝ փրփնչագոչ,* պաղպաչական,

Նոյն ջրովն ի գործ ածեն ջրաղացն, որ է պատուական (157).

փոփսանոտ — Փոփսանոտ՝ *քո նաֆասն,*

Դու ո՞նց ես ճաշակում մասն (113).

ֆառափեռի — *Մարիֆաթէն խիստ ես հեռի.*

Հէնց են թեփռած ֆառափեռի *(122)։*

Հովնաթանը երգիծական այս տաղում Շոռոթի մոնթերին նմանեցնում է «փետրած թռչնի» (°)։

Թվարկված այս խմբի բառերից դիպվածական[16] *բնորոշմամբ կարելի է առանձնացնել* անխելացի, զգիկ, լիական, ոսկենաւ, պաղպաչական *բառերը, որոնք, ինչպես ասվեց, գործածված են տաղաչափական նկատառումներով՝ վանկաքանակն ու հանգը պահպանելու համար։ Պայմանականորեն որպես «հեղինակային նորակազմություններ» թվարկված բառերից* աղֆացաւ, գառնափլաւ, լրբադէմ, շարուն, մարմնադեղ *(թերևս նաև՝* ծոխարարիկ*) բառերը, անշուշտ, ժամանակաշրջանի ուրիշ հեղինակների ստեղծագործություններում հանդիպող նմանատիպ բազմաթիվ այլ բառերի հետ միասին, կարող են ծառայել արդի գրական հայերենի բառաստեղծմանը. այն լեզվի պատմական գանձարանի տրվյալներով ու հնարավորություններով նորոգելուն և հարստացնելուն։*

Մի խումբ բառեր էլ բառարանների համեմատությամբ իմաստա-

---

15 Քաջունի Մ., *1893, 160։*

16 *Տե՛ս* Աղայան Է., *1984, 137։*

փոխվել են և կամ նշված չեն արդի հայերենի բառարաններում։ Դրանցից են՝

նաւակեր — ՆՀԲ-ն նշում է «կեր կամ կերակուր հաւուց եղեալ՝ կամ լինի, կուր լինել թռչնոց»[17]։ Մինչդեռ՝ «Ես եմ նաւակեր Ստեփանն... Ես եմ նաւակեր Թաթուլ» (142) տողերում «հավ ուտող, հավի միս սիրող» նշանակությունն ունի, այսինքն՝ արտահայտում է ճիշտ այն իմաստը, ինչ արդի հայերենում[18]։

վիրել — ՆՀԲ-ն նշում է «վիրաւորել, խոցոտել, թրածեծ առնել»[19]։ Հովնաթանը, սակայն, բառն օգտագործել է «թափվել» իմաստով. Թանն վեր դառաւ վիրեց իմ շորն (153)։ Արձանագրված չէ արդի հայերենի բառարաններում։ Թերևս, կարող է լինել և վրիպակ՝ վիրեց։

կուրայ — ՆՀԲ-ն նշում է իբրև կուր «տաշտ, կոնք»[20]։ ՀԱԲ-ն արձանագրում է բառը. Աճառյանի վկայությամբ կուրիկ Համշենի բարբառում նշանակում է «մի տեսակ աման փայտյա՝ որ իբր չափ է գործածվում» և պահպանվել է Թրքախոս հայերի միջավայրում իբրև «փայտյա աման»[21]։ Թվում է, Հովնաթանի տաղերից մեկում հանդիպող կուրայ-ն և Աճառյանի նշած բառը միևնույն իմաստն ունեն.

Համբարձման յետ՝ Եղիա կայ,
Կուրայ չինեն Ըռովակայ,
Կասեն. «Եղիայ, սո՛ւրբ Եղիայ,
Անձրև՛ արայ, ղրկէ, որ գայ» (103)։

Արդի հայերենի բացատրական բառարաններում կուր-ը հին բառ է համարվում[22]։

փոճրաւոր — Հովնաթանը բառն օգտագործում է «մանուկ, երեխա» գոյականական կիրառությամբ. Մեծատան փառքն՝ լաւ փոճրաւորն է (88)։ ՀԱԲ-ն նշում է իբրև «նոր բառ»[23]։ Էդ. Աղայանը «սպասավոր, ծառա. եկեղեցու կամ կրոնավորի սպասավոր» նշանակությունների հետ

---

17 ՆՀԲ, 1837, 71։
18 ԱՀԲԲ, 1976, 832, ԺՀԼԲԲ, 1974, 308։
19 ՆՀԲ, 1837, 825։
20 ՆՀԲ, 1836, 1125։
21 ՀԱԲ, 1973, 665։
22 ԱՀԲԲ, 1976, 787, ԺՀԼԲԲ, 1974, 247։
23 ՀԱԲ, 1979, 530։

միաժամանակ նշում է և բառի ածականական հազվադեպ գործածությունը՝ «փոքր, ոչ մեծ»[24]։

փոխադրական — *Ս. Գաբամաճյանը բառը դիտում է «նոր շինված»՝ «ուրիշի հաղորդվող» նշանակությամբ[25].*

Նուռն և խնձորն է պատուական,
Խմէք՝ իրար փոխադրական ... *(166)։*

Դժվար չէ նկատել, որ քաղված տողերում փոխադրական-*ի իմաստը համընկնում է Գաբամաճյանի առանձնացրածին, այն է՝ «փոխադարձաբար, միմյանց կենացը»։ Ժամանակակից բացատրական բառարաններում այս իմաստը բացակայում է[26]։*

Լեզվական նշված իրողությունները, իրենց հերթին, հիմք են տալիս հաստատելու, որ վաղ աշխարհաբարի ենթաշրջանում (XVII դ. վերջ XVIII դ. սկզբներ) հայերենը հարստացել է որոշակի թվով նոր բառերով, բառային նորակազմություններով, ինչպես և նախկինում հայտնի բառերը ձեռք են բերել նոր իմաստներ։ Բառապաշարի այս տարրերը հետագայում մասամբ անցել են նոր գրական հայերենին՝ տեղ գտնելով համապատասխան բառարաններում։

3. Բարբառային բառեր

Հետազոտողները միաժամանակ նշում են տաղերգուի լեզվի բարբառային տարրը։ Ն. Ակինյանի բնութագրությամբ՝ «յուր ռամկախոսությունք կկրեն առավելապես Երևանյան բարբառին նկարագիրը, կամ մեկ խոսքով՝ այն բարբառին, որ ապա Աբովյանի գրչի տակ հաղթանակող հանդիսացավ»[27]։ Հետագայում Ռ. Իշխանյանը նույնպես արձանագրում է արարատյան բարբառի ազդեցությունը, շեշտելով նաև Հովնաթանի Թբիլիսիում ապրելու և ստեղծագործելու հանգամանքը[28]։ Որքան էլ այդ ազդեցությունը շոշափելի է, տաղերի լեզուն բարբառային բառերի կազմով իրենից ներկայացնում է ավելի լայն շրջագիծ՝ ձգվելով հատկապես դեպի այն վայրերը, որոնցում գործել է Հովնաթանը։ Ըստ

---

24 *ԱՀԲԲ, 1976, 1538։*

25 *ԳՆԲՀԼ, 1338։*

26 *Հմմտ. ԱՀԲԲ, 1976, 1525, ԺՀԼԲԲ, 1980, 660։*

27 Ակինյան Ն., *1911, 82։*

28 Իշխանյան Ռ., *1979, 61։*

տրում, ընդհանուր բարբառային բառերի կողքին գտնում ենք նաև առանձին բարբառներում և խոսվածքներում հանդիպող բառեր։

Այս առումով սարրև տարբերակվում են բարբառային և նեղ բարբառային բառեր՝ *առավելապես հենվելով բառարանային տվյալների վրա*[29]։ *Երբեմն էլ բառը պարզաբանվել է բանավոր հարցումներով։*

Տաղերում տեղ գտած բարբառային բառերն արձանագրված են բարբառների մեծ մասում։ Վերը հիշատակված պատճառաբանությամբ (տե՛ս էջ 79) հաշվի չեն առնված բարբառային հնչյունական տարբերակները, թեև, մի քանի դեպքում դրանք ևս տրվում են, քանի որ հետաքրքրական և կարևոր է այս կամ այն բարբառում այդ բառերի գոյության փաստը։

Քննենք այդ բառերը ըստ իմաստի և բարբառային պատկանելության.

ամա̃ն-լուայ — *աման լվանալու գործողությունը — Վան, Ն. Նխջ., Ղրբ.*
Երկուշաբթի՝ լուացք անելու, Ամա̃ն-լուայ, *քուլ հանելու... (106).*

բազկաթան — *Արտ., Ղրբ., Մուշ, Ակն, Սեբ. Տաղ... վասն... չկալուկ բազկաթանին ... (152).*

բաս անել/բռնել — *վիճել, մրցել, գրազ գալ — Արտ., Ղրբ., Թբ., Ն. Բզ., Ուրմ., Կրճ., Կար.*

Դու հենց ես, որ այծն տհաս,
Որ գալին հետ կու բռնէ բաս ...
Գառն որ գայլին հետ բաս աճի... *(111).*

բնչերք — *պինչ — Արտ., Ղրբ., (Ղզ., Գնձ.), Թբ., Ն. Բզ., Ուրմ., Սեբ., Կար., Մուշ, Մրշ., Ակն, Մկ., Վան, Քղի., պընչ — Եվդ.*

Աղով և խոռնով բնչերքն *հարի (117).*

բորել — *հրմշտել, մշտել — Արտ., Ղրբ., Թբ., Ուրմ., Շմխ.*

Դու եղբարց կշտին բորում,
Տաղեր գրում ու հոտում (115).

գլխել — *սպառել, վերջանալ (-ցնել) — Արտ., Ղրբ., Մղ., Ն. Բզ., Խրբ., Մկ., Մլթ., Գոր., Շմխ.*

Թասն որ գլխում է *ձեռնի,*
Կասէ. «Զոքանչդ կու մեռնի» (104).

գռծելի — *փայտածուխ — Թբ., Մրղ., Վան, Մլթ., Կար., Սրբ. (Քղի), (Զթ.), Հմշ., Տր.*

---

29 *Օգտագործվել են հետևյալ բառարաններն ու աշխատությունները. ՀԳԲ. ՀԱԲ. ՀԲԲ. ՄՀԲԲ. ԼԻՀԳԲ. ՀԲՆ. ՍԱԳ,* Դավթյան Կ., *1966։*

Երեսին քսէ գործելի մուրն (93).

եռեռմանի/էռեռմանի — *թափառական, թշվառ — Թբ., Ուրմ., Կար., Մրշ.*

Այժմ մնացին որբ և այրի,
Գիշեր ցերեկ եռեռմանի *(139).*

զավր անել — *զսպել, ետ պահել մի որևէ բան անելուց — Արտ., Ղրբ., (Գնձ.), Ն. Նխջ., Կար.*

Ով զավր կանի *Ստեփանն,*
Մակամ աստուած առնի ջանն (146).

ըռոշտալ — *հորանջել — ըրըշտորալ — Ղրբ., արշտորալ — Արտ., Կար., (Շրկ.), ըռշտալ — Ագ. բրբ խսվ.*

Ըռոշտալով *գէշ ձայն ածէ (105).*

թռնթռալ — *փնթփնթալ, տրտնջալ, դժգոհել — Արտ., Ղրբ., Կար., թնթորալ — Ղրբ.. Կարդացողաց խօսք չես լսիլ,*

Բան կուղարկեն՝ կու թռնթռաս *(137).*

խոռոն - *ուրց - խոռնը — Ղրբ., Շմխ., Ղրդ., Ագ. բրբ. խսվ.*

Աղով և խոռոնով *բնչերքն հարի (117).*

նալի-*անալի — Ղրբ., Ագ. բրբ. խսվ. Հէնց են* նալի *սառած հալիմ (119).*

նի fցել — *նի — «ներս, վրա, դեմ, հետ», նի անել/տալ-կոկորդը լցնել, ագահաբար ուտել — Արտ., Թբ., Ղրբ., Հմշ.։ Հովնաթանն օգտագործում է* նի fցել *հարադրությունը՝ «ներս գցել՝ խմել» նշանակությամբ. Սկուտէն լցաւ,* նի fըցեց *(141).*

նշանց տալ — *ցույց տալ — Ղրբ., Խլ., Ն. Բզ., Ջղ., շանց տալ — Եր., Խզ., Ղզխ., Վան, Թբ., շհանց տալ — Եր., Թբ.*

Թէ ինձ նշանց *չտաս՝ ընկնես պատուհաս (5).*

պտղտալ — *պտղոտալ — սրտի տրոփվելը, տակնուվրա լինելը — Գնձ., Բնց.*

Թանի մէջն էր հող և մոխիր խառն,
Սիրտս պտղտաց, *նա խիստ էր դառն (153).*

սառել — *սարքել, լարել — Արտ., Ղրբ., Թբ., (Շլվ.).*

Միմեանց համար սառեն *թալակ (122).*

վէրամ — *վարամ — ցավ, վիշտ, դարդ — Ղրբ., Թբ., Մրշ., Կար., ցավ, հիվանդություն — Ղրբ., Կար., (Ջվխ.), Մրղ., Վան, Թարախ-Կար., (Ջվխ.)։*

Տաղերում գործածված է «վշտոտ, ցավոտ» նշանակությամբ.

Երբ կու նայիմ հաւուցն երամ,
Սրտիկս խոց կելնի վէրամ *(139).*

վիք-վիք-վիթվիթ-վթվթան՝ ճլվլացող, ճլվլան — Կար. (Ջվխ.), վթվըթան — Արտ., Կար. (Ջվխ.), վիտվիտ-վերվերիկ՝ թեթևամիտ, թեթևսոլիկ — Արտ., Ղրբ., Մղ., անհամբեր, համբերություն չունեցող — Մղ., (Կքվ.), ցատկոտող, թռչկոտող — Արտ., (Լ.).

Անգէտ և տգէտ, Սարի փթած փէտ.

Վիք–վիք *և անմիտ, խակ և բթամիտ (133)։*

Ինքնահավան մարդուն ուղղված անարգանքում, ակնհայտորեն, բառը կիրառված է թեթևամիտ, թեթևսոլիկ իմաստով։

տնկօզ *— բարձրորակ, ընտիր — Արտ., հպարտ, սեգ — Արտ., Կար., (Շրկ.), Վան, պճնված, զուգված — Արտ., Կար., գոռոզ, մեծամիտ — Սեբ., Խտջ., Ակն, գործունյա, աչքաբաց — Խտջ., խմելուց տրամադրությունը բարձրացած — Ղրբ.։ Հովնաթանի տաղերին հարազատ է Արտ. բարբառում առկա բառիմաստը.*

Գլուխը դրած տնկօզ *գօտի[կ],*

Գինով ժամ գաս երկու ոտիկ... (113).

ճաշ *— ցած, ոչ բարձր — Արտ., Ղրբ., Շմխ., Մղ.*

Ձայներն ճաշ, *դունչն ցցած... (121),*

Էշի նման կանչեն զռանչ,

Քաշ և բարձր խառնիճաղանճ (122) և այլն։

Նկատելի է, որ հիշատակված բառերը հիմնականում գործածական են Արտ., Ղրբ. և Թբ. բարբառներում։

Թվարկվածների զգալի մասը այժմ օգտագործվում է ժողովրդախոսակցական լեզվում։

Տաղերում հանդիպում են նաև ըստ բառարանների միայն արևմըտահայ բարբառներում վկայված բառեր, ինչպես.

լոռել *— նետել, ձգել — Կար., Բս.։ Արդյոք համարժե՞ք են տաղերգուի օգտագործած և բարբառում առկա բառերի իմաստները. Հաւն ծամեցին* լոռելով *(144)։ Ժողովածուն կազմողները այս բառի դիմաց նշում են՝ ոլորելով։*

ջոռջոռալ *— երերալ, տարուբերվել — Մլթ., Կես.*

Տունն կաթում, սայրն սուգ բերած ...

Ձեռներն ընչայ ջահրակ մանում, Ջոռջոռալով *հոգւոց հանում*

(107)։

Թերևս, «տրտնջալով, դժգոհելով» նշանակությամբ է գործածվում։

տզման *— հսկա, վիթխարի — Կար., Վան, մեծահասակ, տարիքավոր-*

Կար., (Տրկ.), առույգ, կայտառ — Խտջ., գեր և պարթև — Եվդ. (Ամ.), Վան, Սեբ.։ Տաղերում ունի «հսկա, վիթխարի» իմաստը.

Ես արջակատու եմ տզման *(27)։*

տոմուղ — *ՆՀԲ-ն* տոմուղ-*ը նշում է իբրև «մատաղահասակն յանասունս՝ չև մղեալ 'ի գործ. անփորձ, անվար. անլուծ. դժուարասանձ. անհամեստ. չև ևս ճնշեալ»*[30]*։ Ըստ ԼԻՀԳԲ-ի բառն առկա է Սս. «դանդաղաշարժ (մարդ)» և Ուրմ. «դեռևս հեծնելու՝ լծելու չվարժեցրած (կենդանի)» իմաստներով։ Հովնաթանը բառն օգտագործել է ինքնահավան մարդուն հասցեագրված անարգանքում, հավանական է թվում «դանդաղաշարժ» իմաստը։ Ժողովածուն կազմողները* տոմուղ-*ը բացատրում են իբրև «էշի քուռակ»։*

Խելաց ես խիստ սուղ, Աւանակ տոմուղ *(134)։*

Բարբառային բառերից մի քանիսը որոշակիորեն առանձին պարզաբանման կարիք ունեն։

Շոռոթի մոնթերին ուղղված երգիծական տաղում հանդիպում է բուզ *բառը. Հանգստի հացն ուտեն* բուզ*.*

էշ քուռակի պէս գան խնդրուզ (122)։

Պատմական Երնջակի (Նախիջևանի ինքնավար հանրապետություն) գյուղերում (Փարադաշտ, հավանական է և Շոռոթ) պուզը *«թոնրի մեջ թխված կլոր հացի տեսակ է»։ Երկտողում բառը ածականական կիրառություն ունի. Թերևս, առնչվում է* բո՞ւռ *բառի հետ։*

Կխպել — *Գողթնի գյուղերում (Փառակա և այլն) օգտագործվում է «խիստ բորբոսնել» նշանակությամբ (Ցղնայի խոսվածքում՝* կխպեծ*, այլ բարբառներում՝* տխպել *հնչմամբ). նույնը և տաղերում.*

Ո՞ւր է քո փարաջէն փալաս,

Կխպած *շլոր, հոտած մալաս (137)։*

Ջիժ — *դարձյալ Գողթնի գյուղերում, «մի որևէ փայլուն իր» է նշում։*

Քաղվող երկտողում ջիժը *«կայծ» իմաստով է գործածվում.*

Ծրագէն, որ ջիժն *թանի,*
Կասեն. «Հալբաթ մարդ կու մեռնի» (103)։

Սար- *Կու նմանին ղզիկ թաթի,*
Սըռըկնամեռ անտեռ սարի *(122)։*

Թերևս, Մգ. բարբառում առկա «մի տեսակ ձո՞ւկ»[31]*։*

---

30 *ՆՀԲ, 1837, 898։*

31 *ԼԻՀԳԲ։*

Ինչպես կարելի է տեսնել, այս բառերից բուզն առնչվում է Հովնաթանի հայրենի բարբառին, մյուսները պատկանում են Ագ. (նաև մերձակա գյուղերի) և Մղ. բարբառներին։ Բարբառներ, որոնց հետ նա երկար տարիներով շփվել է՝ ուսանելով ու գործելով Ագուլիսում և շրջակա վայրերում։

4. Նեղ բարբառային բառեր

Նաղաշ Հովնաթանի տաղերում օգտագործված նեղ բարբառային բառերի պարզաբանումները, նրա լեզվի մյուս ոլորտների ու առանձնահատկությունների կողքին, կարևոր են հայոց լեզվի պատմության շրջափուլերից մեկի՝ վաղ աշխարհաբարի, լեզվական հարստության, միջբարբառային առնչությունների ուսումնասիրության տեսակետից։

Հայտնի է, որ նեղ բարբառային բառեր են դիտվում մեկ-երկու բարբառում հանդիպող, այն է՝ բարբառային նեղ տարածք ընդգրկող, այդ տարածքից դուրս մասամբ կամ լրիվ անհասկանալի և լրացուցիչ բացատրություն պահանջող բառերը։ Հովնաթանի տաղերում այդպիսիք մեծ մասամբ պահպանել են բարբառում առկա նշանակությունը և որոշ դեպքերում միայն գործածվում են բառիմաստային այլ նրբերանգներով[32]*։ Ասենք նաև, որ ստորև հիշատակվող բառերը տաղերում հանդիպում են առավելապես մեկական գործածությամբ։*

Աղբել* — *ՆՀԲ-ում նշվում է «աղբ արկանել ի գետին վասն պարարտացուցանելոյ»*[33]*։ Մալխասյանցն արձանագրում է իբրև գավառական բառ՝ աղտոտել (անասունների համար)*[34]*։ Աճառյանի հավաստմամբ* աղբել-*ը վկայված է Վանի բարբառում նույն նշանակությամբ*[35]*։ Հովնաթանի տաղերում ևս հանդիպում է նշված իմաստով.*

Այնպիսի մարդն է քանց մուկն ուտող,
Որ դըրդում ծակէ և մէջն դուրս տայ,
Փոխարէնն աղբէ *և թողու՝ դուրս գայ,*
Նա ոչ ամաչէ և ոչ նամուս կայ (93)։

---

32 *Որքան հաջողվել է պարզել հետևյալ բառարաններից և աշխատություններից. ՀԱԲ. ՀԳԲ. ՀԲԲ. ՄՀԲԲ. ԼԻՀԳԲ. ԱՄԲ. ԱՔՆՋ։*

* *Աստղանիշով բառերը ՄՀԲԲ-ում նշված են իբրև գավառական։*

33 *ՆՀԲ, 1836, 35։*

34 *ՄՀԲԲ, 1944, 41։*

35 *ՀԳԲ, 74։*

Աղբել-ի հարակատար դերբայը գործածվում է «աղտոտ, կեղտոտ» և «թափված՝ կիտված» իմաստային երանգներով. Աղբած չորթան էր փիս բաղկաթանն (152), Ջիմն եկած, չափար, կտուր պատած ... Համալներն քուչումն աղբած (107)։

Ամրել* — «գոցել, փակել, կողպել» նշանակությամբ գործածվում է Ջղ. և Ն. Ջղ. բարբառներում[36]. նույնը տեսնում ենք տաղերում.

...Դուռն ամրում եմ, դուրս կորէք (109)։

Թուրզան* — «շտապ, շուտով». վկայված է Մկ., Բ. (թուրկան) բարբառներում[37]. նույն նշանակությամբ է գործածված հետևյալ հատվածում.

Եթէ հաճաթ տաս դու այլոց մարդկան,
Կամ քոնն մնայ օտար մարդոյ տան,
Օտարն տուր իրեանց, քոնն առ թուրզան .... (88)։

Իէմին — հանդիպում է Ն. Ջղ. և Թբ. բարբառներում[38] «մի բան» նշանակությամբ։ Տաղերում առկա է նույն իմաստը.

Ոտից տակ իէմին նա ոչ հաւաքէ,
Կոխելով կոտրէ, կամ ի վայր թափէ (88)։

Խնդոուզ — «տրտինգ». գործածական է Ղրբ. (խնդուզի տալ) և Ագ. բարբառներում՝ «անասուններու ուրախ-ուրախ վազվռտել ցատկոտելը (երբեմն՝ մարդու)»[39]։ Նույնը և Շոռոթի մոնթերին ուղղված երգիծանքում.

Հանգստի հացն ուտեն բոուզ,
Էշ քուռակին պէս գան խնդոուզ (122)։

Նշենք նաև, որ Գողթնի գյուղերի խոսվածքներում (օրինակ՝ Փառակայում) խնդլոզ (տալ)-ը նշանակում է գլուխկոնծի։

Ծտանէ* — Ղրբ., Ագ. (ծտվանք) բարբառներում՝ «շատ մանր հողախառն կուտ»[40]։ Երգիծական տաղերից մեկում օգտագործված է նույն նշանակությամբ.

---

36 ՀԳԲ, 89. ԱՔՆՋ, 352։
37 ՀԳԲ, 379. ԼԻՀԳԲ։
38 ԱՔՆՋ, 217. ՀԳԲ, 404։
39 ՀԳԲ, 1044. ՀԲԲ, 284։
40 ՀԲԲ, 320. ԼԻՀԳԲ։

Կաննես լաղար միստանքըն,
Էնտով կու եփիս ծաանէըն (114)։

Մրուր-մնուն* — արձանագրված է Արտ. բարբառում «խիտ աղբուր» նշանակությամբ[41].

Փորդ եղեալ է գինւոյ տուն,
Միրադ՝ արտում, մրուր, մնուն[42] (136)։

Դժվար չէ նկատել, որ բնագրում կիրառված է նշված իմաստով։

Պժավիկ* — Ագ. բարբառում՝ պժավակ, իսկ շրջակա գյուղերի խոսվածքներում՝ պժավեկ ձևով. «սարիփնայի գագաթնաձայաց ձողերի վրա դրված հորիզոնական ձողեր, որոնց վրա պառկում են որթատունկի շիվերը»[43].

Թէ կատուն ելնի էրթիկն, կամ դուրս թանի պժավիկն... (104),
Կանուխ ցուրտ, թօրօն չէ վառած, Պժավիկն էլ պինդ սառած (108)։

Սայի — Կար., (Ջվխ.) բարբառում օգտագործվում է «լրաբեր, սուրհանդակ» նշանակությամբ[44]։ Բառը տաղերում նույն իմաստն ունի.

Տունն կաթում, սային սուգ բերած, Ալիր չկայ, ցանն երած... (107)։

Սլիկ* — Վանի և Շրկ. բարբառներում կիրառվում է «ճարպիկ, խորամանկ, ժիր, աչքաբաց» իմաստով[45]։ Տաղերում տեղ է գտել նշված իմաստով.

Ո՞վ խաբեբայ և խիտ սլիկ.
Աղքատաց հետ է՞ր չես բոլիկ (137)։

Սկուտէ — գործածական է Մղ. բարբառում սկօտէ ձևով՝ «կավե փոքր աման»[46]. Նույն նշանակությամբ գտնում ենք տաղերում.

Գինոյ կուժն կշտին ցըցեց, Սկուտէն լցաւ, նի քըցեց ... (141)։

Տէկոց* — «խմելը, կոնծելը. արբեցողություն». օգտագործվում է Գլ. և Սեբ. բարբառներում[47]. Նույնը և տաղերում.

---

41 ԼԻՀԳԲ։

42 Բնագրում ստորակետ, թերևս, կետադրական վրիպակ է։

43 ՀԳԲ, 909. ԼԻՀԳԲ։

44 ԼԻՀԳԲ։

45 ՀԳԲ, 971. ՀԲԲ, 592։

46 ԱՄԲ, 328։ Հմմտ. պրս. sikūra = սկաւառակ. (Աճառյան Հ., 1940, 239)։

47 ՀԳԲ, 1036. ԼԻՀԳԲ։

Չլնի շատ խմէք դառնաք բոց,
[Եւ] սահմանէք կռիւ, տնկոց... (88)։

Տնտուզ (ՙ) — դնդուզ հնչմամբ հիշատակվում է Վանի բարբառում «սագին պոչին տակը գտնուած պարկը, ուրկէ կտուցով իւղը առնելով վրան կըքսէ»[48]։ Արտ. բարբառի խոսվածքներում՝ «հավի պոչուկի մաս»։ Տաղերում «տնտուզ մեջքը» նմանեցվում է ուռած, փքված սամար մուշտակի.

Մէջք է տնտուզ որպէս սամար (136)։

Տուռնայ — Ստ. Մալխասյանցը բառը համարում է ոչ գավառական[49]։ Հովնաթանի բանաստեղծությունների ժողովածուն կազմողները բառի դիմաց նշում են «կռունկ» (պարսկերեն درنا [dornā], թուրքերեն turna)։ Տուռնա-ն Ն. Նխջ. և Մշո բարբառներում նշանակում է «ուռուցք, կոշտուկ»։ Առավել հավանական է թվում, սակայն, «տանիքի քիվ»-ը, որ հանդիպում է Մրշ. և Կլկ. բարբառներում[50].

Կարդալն փուռն այ, Արքայի դուռն այ,
Բարձր է քանց տուռնայ, նաղարա ու զուռնայ (131)։

Քննությունից կարելի է եզրակացնել, որ նշված նեղ բարբառային բառերը (ինչպես և արդեն հիշատակված միայն արևմտահայ բարբառներում վկայվածները) ժամանակին գործածական են եղել հենց տաղերգուի հայրենի Շոռոթում և նրան հարող շրջաններում։ Անկարելի է շրջանցել նաև Թբ. բարբառի լեզվական խառնուրդի ազդեցությունը։ Նեղ բարբառային այդ բառերը, սակայն, լեզվի պատմական զարգացման ընթացքում, թերևս, այդ բարբառներից կամ անհետացել են, կամ էլ ինչ-ինչ պատճառներով չեն գրանցվել։

5. Փոխառյալ բառեր*

Որպես հետևանք ժողովուրդների միջև փոխհարաբերությունների ու փոխազդեցության՝ լեզուների բառապաշարն անընդմեջ հարստանում է բազմապիսի երևույթների վերաբերող փոխառություններով։ Վերջին-

48 ՀԳԲ, 281։

49 ՄՀԲԲ, 1956, 438։

50 ՀԳԲ, 1042. ԼԻՀԳԲ։

* Փոխառությունները ստուգելիս մեզ օգնել է հմուտ պարսկագետ Հ. Մուրադյանը, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը։

ներս ներթափանցում են գրական լեզվի և բարբառների միջոցով (ասել է՝ գրավոր և բանավոր ուղիներով)[51] տվյալ լեզվում երբեմն ունենալով հին ու նոր հոմանիշներ։ Ժամանակի ընթացքում փոխառությունների զգալի մասը ձուլվում է լեզվին, այնպես որ հաճախ դժվար է լինում կողմնորոշվել, արդյոք փոխառություննե՞ր են դրանք, թե՞ բնիկ բառեր։ Շփվելով տարբեր ժողովուրդների հետ կամ ապրելով նրանց տիրապետության տակ՝ տարբեր ժամանակներում հայերենը բազմաթիվ բառեր է փոխառել կովկասյան լեզուներից, ասորերենից, հունարենից, պարսկերենից, արաբերենից, թուրքերենից, նոր ժամանակներում՝ ռուսերենից, այլ լեզուներից։

XVII—XVIII դդ. լեզվական վիճակն արտացոլող Հովնաթանի տաղերի լեզուն ներառել է դարեր շարունակ հայոց լեզվում գործառող, այլև ժամանակի խոսակցական լեզվում հանդիպող բազմաթիվ փոխառյալ բառեր, որոնց աղբյուրներն են հիմնականում արաբերենը, պարսկերենը, թյուրքական լեզուները։

Հովնաթանի լեզվին անցած փոխառությունները վերաբերում են ամենատարբեր բնագավառների, գոյության և կյանքի ամենաբազմապիսի ոլորտների։ Հետևելով, սակայն, տաղերում գործածված փոխառյալ բառերին, դժվար չի լինի նկատել, որ բարբառների բառապաշարում հանդիպող այդ բառերի մեծագույն մասը մուտք չի գործել գրական հայերեն։

Ստորև ներկայացվում են փոխառյալ բառերի իմաստային խմբավորումներն ըստ փոխատու լեզուների։ Հարկ է նշել, որ նախ տրվում են իմաստային խմբավորումները, իսկ հետո՝ փոխատու լեզուները։

Առավել բազմաքանակ և գործածությամբ հաճախական են ա) դըրություն, վիճակ, հոգեվիճակ նշանակող. բ) բնավորություն, սովորություն արտահայտող. գ) մարդկային հարաբերություններ բնութագրող արաբերեն բառախմբերը*.

---

51 Реформатский Л., 1955, 115; Булаховский А., 1953, 111.

* Նշենք, որ արաբական ծագման բառերի զգալի մասը գործածական է պարսկերենում, թյուրքական լեզուներում, և դժվար է որոշել, թե ո՞ր լեզուն է հանդիսացել փոխառության աղբյուր կամ էլ միջնորդ. որոշ դեպքերում պահպանվել է բառի պարսկական հնչողությունը, որոշ դեպքերում՝ թյուրքական լեզուներինը։

Բացի այդ. խմբավորումներում չեն նշվում հին փոխառությունները, ինչպես՝ աշխարհ, ապաշխարհել, բազմել, բալասան, գերեզման, գիժ, գովել, դժոխք, երիտասարդ, զանգակ, թանկ, խավար, ճակատ, ճանկ, հրեշտակ, մանուշակ, նշխարք, շապիկ, պատասխան, պատկեր, տաճար, փառք, քանդել և այլն, և այլն։

ա) **աջաբ** *«զարմանք, հիացում»*, **ավfար** *«մտածմունք, մտատանջություն»*, **բալա** *«դժբախտություն, վիշտ»*, **դաղ** *«կսկիծ, սրտնեղություն»*, **եաս** *«հուսահատ»*, **խալվաթ** *«միայնակ, առանձին»*, **խումար** *«գինովցած, հիվանդագին վիճակ»*, **հալ** (ու **ահվալ**) *«վիճակ, ինքնազգացողություն»*, **հէյրան** *«զարմացած, հիացած»*, **ղարար** *«հանգիստ, դադար»*, **մայիլ** *«ցանկալի, բաղձալի»*, **մանխարայ** *«ծիծաղելի»*, **մախմուր** *«գինովցած»*, **չալապում** *«հրապուրող, հմայող, գրավող»*, **ջունուն** *«խելագար, ցնորված»*, **վէսմ** *«դրություն, վիճակ» և այլն.*

բ) **աբլահ** *«հիմար, ագետ, անմիտ»*, **ալամ-ղալամ** *«խաբեբա, աշխարհ խաբող»*, **աջիզ** *«թույլ, անկարող»*, **թալբիս** *«խորամանկություն»*, **թամահfար** *«ժլատ, ագահ»*, **խասիաթ** *«բնավորություն»*, **հիլաբ** *«նենգություն, խարդախություն»*, **ղայտայ** *«սովորություն»*, **մուրվաթ** *«գութ, խիղճ»*, **սաալր** *«համբերություն»*, **սէֆիլ** *«սոսր, անարժան»*, **վաս-վաս** *«կասկածոտ»*, **ռահմ** *«գութ, կարեկցություն»*, **փախիլ** *«ագահ, գծուծ»*, **fաֆիր** *«անխիղճ» և այլն.*

գ) **ահտ** *«խոստում, դաշինք»*, **էհտիբար** *«վստահություն, հավատ»*, **լայեղ** *«համապատասխան»*, **իղրար** *«խոստովանություն, համաձայնություն»*, **ղայիլ** (**կենալ**) *«հաշվի առնել/նստել»*, **ղամզայ** *«աչքի ծայրով սիրային հայացք»*, **մադաթ** *«օգնություն»*, **մաղբուլ** *«ընդունելի, հաճելի»*, **մարիֆաթ** *«իմացություն, քաղաքավարություն»*, **մուատի** *«խոստում»*, **մուղեաթ** *«հոգնածություն» և այլն:*

Պարսկերենից և թյուրքական լեզուներից փոխառված, նշված համապատասխան խմբերը ներկայացնող բառերից են.

ա) պրս. — **ախմուրի** *«մռայլ, բարկացկոտ»*, **աւարայ** *«անգործ, թափառական»*, **բէչարայ** *«անճար, անմիջոց»*, **բէուշ** *«անմիտ, ուշաթափ»*, **բանգի** *«թմրած, արբած»*, **դարբեդար** *«անտուն, թափառական»*, **դարդիմանդ** *«վշտոտ, թախծոտ»*, **դիւանայ** *«խենթ, խելագար»*, **զապուն** *«ճնշված, թույլ»*, **թունբարքուն** *(ընկնել) «կրակվել, հրդեհվել»*, **մաթ** *«ապշած, զարմացած»*, **մուշկուլ** *«ծանր, դժվար»*, **նադան** *«առանց իմանալու»*, **նաշի** *«չիմացող, սկսնակ»*, **նաչար** *«անճար»*, **նազանի** *«հաճելի, նազելի»*, **շէյտայ** *«խելագար, ցնորված սիրուց»*, **սարգարդան** *«մոլորված, ապշած»*, **փերիշան** *«մոլորված, խեղճ» և այլն.*

թյուրf. լ. — **բիլմազ** *«չիմացող»*, **դալու** *«խելագար»*, **եանուղ** *«այրված»*, **եանայ-եանայ** *«այրվելով»*, **զարընջի** *(՞) «ողբալի, աղեկտուր»*, **սուս** *«անձայն, լուռ» և այլն.*

բ) **պրս.** — **դիւանբուռ** *«դատ կտրող»*, **խամ** *«միամիտ, տհաս»*,

նամարդ «*ամարդի*», նաքաս «*սառը, անարժան*», սարսարի «*թեթևամիտ*», սարճզապ «*հաշվենկատ, շահախնդիր*», փաքիզայ «*մաքրասեր, մաքրակենցաղ*», փնքի, քալակ «*խորամանկություն*» *և այլն*.

թյուրք. լ. — զալում «*անգութ, անիրավ*», ջանճալ «*դանդաղ, ծույլ*» *և այլն*.

գ) պրս. — փէյվան «*կապ, դաշինք, միություն*».

թյուրք. լ. — բիռլիկ «*հաշտ, ներդաշն*», սըռդաշ «*գաղտնակից*», ռազի «*համաձայն, բավարարված*» *և այլն*։

Ըստ փոխատու լեզուների համարյա հավասարաչափ են գործածված՝ դ) պետական կարգ, պաշտոնավարություն, դրամական գործարք և ե) հագուստ, կտորեղեն, զարդ ցույց տվող. զ) մարդուն վերաբերող, մարմնի մաս նշող բառախմբերը. այսպես՝

դ) արբ. — արզայ «*խնդրագիր, դիմում*», բարջմանլու «*տուգանքի ենթարկված*», իխտիար «*իրավունք, կամք*», մանսար «*վկայագիր, ատյան*», մէջլիս «*խորհրդարան, ժողով*», թէմէսուկ «*պարտամուրհակ*», ըռշվաթ «*կաշառք, պարգև*», խազինայ «*գանձարան*», խարճ «*ծախս, հարկ*», ղարուզ «*պարտամուրհակ, ընկալագիր*» *և այլն*.

պրս. — աղա, աղասար «*գլխավոր*», դաստուր «*հրաման, կարգադրություն*», դիւան «*դատ, դատաստան*», զօռ «*ուժ, ճնշում*», խօճայ «*տեր, հարգելի, ազդեցիկ մարդ*», խաթուն «*բարձրաստիճան տիկին*», մճր(էլ) «*կնքել*», սալվար «*գլխավոր, վեհապատ*», սաւոր «*բանտապետի օգնական*», քեղխուդա «*տանուտեր*», աշրաֆի «*ոսկեդրամ*», արմաղան «*ընծա, պարգև*», թուման, միրէ «*ձրի*», սաղվար «*թանկագին ընծա*», փարայ «*բաժին, մաս, կտոր, փող*» *և այլն*.

թյուրք. լ. — եասավուլ, զուլում «*բռնություն, անարդարություն*», ղարավաշ «*ծառա*», ղուլ «*ստրուկ, ծառա*», պույուրմիշ (*անել*) «*հրամայել*», սուլթան, փաշա, ալաճա «*չուխա*», ալիշվերիշ «*առևտուր*», փայ «*բաժին*» *և այլն*.

ե) արբ. — խելա «*պատվավոր խալաթ*», կապա «*պարեգոտ*», ճամայիլ, ղալամի «*ձեռագործ, նախշած*», ղումաշ «*կերպաս, մետաքսե նուրբ գործվածք*», մուրասայ «*ականակուռ*» *և այլն*.

պրս. — դիբա «*դիպակ*», եախա («*օձիք*», զարբաֆ/բ «*ոսկեգործ դիպակ*», զառնշան «*ոսկեզօծ մանվածք*», բաք «*տակ, փեշ*», թօփ «*կտորի փաթեթ*», լաչակ «*գլխաշոր*», խարայ «*մետաքսե գործվածք*», չամբար «*մանյակ*», չարսավ «*քող, երեսկալ*», ռախտ «*հագուստ*», վալափուշ «*վերնազգեստ, վերարկու*», քամար «*գոտի*» *և այլն*.

թյուրք. լ. — արխալուղ «ազգային հագուստ», եաղմուրլուխ «անձրևանոց», եաղլուխ «թաշկինակ», եափունջի «գլխարկով թիկնոց», ինջի «մարգարիտ», մանտիլ «գլխաշոր», չարուխ «կոշիկի տեսակ», չաքմա «երկարաճիտ կոշիկ», չուխա «ազգային հագուստ», քեչա «թաղիք».

գ) արբ. — բադան «մարմին», ճէյքալ «հասակ, կերպարանք», ճիլպ «գեղեցկուհիների հոնք», նաֆաս «շունչ, հոգի», շամալ «ձախ (ձեռք)», սուրաթ «դեմք, կերպարանք».

պրս. — դամ «շունչ, ձայն», լաբ «շուրթ», խալ, չամ (՛) «քայլվածք, ճեմ», ջիգյար «լյարդ», քաքուլ «խոպոպ».

թյուրք. լ. — բօյ «հասակ», բողազ «կոկորդ», գոբակ «պորտ», ջան «մարմին», սաչ «մազ»:

Պատկերն այլ է՝ է) բնության երևույթներ. ը) բուսակենդանական աշխարհ. թ) կահկարասի. ժ) կերակրատեսակ, սնունդ նշող. ժա) բժշկության վերաբերող բառախմբերում: Եթե առաջինում (է) զգալի են արբ. բառերը՝ ալամ «աշխարհ, տիեզերք», ճաւայ «եղանակ, օդ», ղամար «լուսին», շամս «արև», վաթան «հայրենիք», օմր/ումր «կյանք» (հմմտ. պրս.՝ դարիեայ «ծով». թյուրք. լ. չօլ «անապատ, դատարկ տեղ», ֆրթնա «փոթորիկ»), ապա մնացյալ բառախմբերում գերակշռում են պրս. բառերը. ինչպես՝ դուդի «թութակ», թազի «որսաշուն», թաւ «ոստայն», խառայ «էշ, ավանակ», խօրօզ «աքաղաղ», ղումրի «տատրակ», շիշակ «միամյա գառ», բանաւշայ «մանուշակ», գուլինար «նռան ծաղիկ», թուրինջ «նարինջ», թառայ «կանաչ, թարմություն», մալաս «թրթվաշ, կիսաթթու» և այլն (հմմտ. արբ.՝ բաղալ «ջորի», ճայվան «անասուն», ղանաֆիլ/ղարանֆիլ «մեխակ», շամամ «փոքրիկ, կլոր սեխիկ». թյուրք. լ.՝ դանա «հորթ», ղուշ «թռչուն», ղօչ «խոյ», մարալ, «ջեյրան»): Վերջին՝ բժշկության վերաբերող (ժա), բառախմբում պրս. (լալ «համր», լաղար «նիհար», ճար/չարայ «հնար, միջոց», քառ «խուլ», քօռ «կույր», քսար «պակաս (նիհար)», քօսայ «անմորուս, նոսրամորուս») և թյուրք. լ. (եարայ «վերք», եարալու «վերքոտ», չաղ «գեր», չոլուխ (-անալ) «խեղանդամ», սաղ «ողջ, առողջ, կենդանի») բառերի դիմաց հանդիպում են արբ. ճեքիմ «բժիշկ», մաճլամ «սպեղանի» բառերը:

Համանման հակադարձ հարաբերությամբ են բնութագրվում՝ ժբ) արվեստ, արհեստ, ուսում և ժգ) շինություն, շենքի մաս նշող բառախմբերը. որոշակիորեն այստեղ արդեն գերակշռում են արբ. բառերը, ինչպես՝ թալիմ «ուսում, կրթություն», ղալամ «գրիչ», ղայրաթ «ջանք, եռանդ», նաղաշ «նկարիչ», վարաղ «թերթ, թուղթ», տիփ «թանաքա-

ման», ղալակ «վարսավիր», ղասապ «մսագործ», ջավահիրչի «գոհարավաճառ» և այլն (հմմտ. պրս.՝ ուստայ «վարպետ», գիլ «կավ», զառգեար «ոսկերիչ», փեշակ «գործ, զբաղմունք», փեշակար «արհեստավոր». թյուրք. լ.՝ թօխմախ «փայտե մուրճ», չիլինկար «պղնձագործ, երկաթագործ», քուրքչի «մորթագործ»):

Մեկական-երկուական բառով են սահմանափակվում՝ ժդ) կենցաղավարությանը բնորոշ (արբ. դաճմիլ «կարգադրություն», թադարիք «պատրաստություն». պրս. պաս «ետ գցում, պահպանում»). ժե) գույն նշող (արբ. լալի «գեղեցիկ, պայծառ կարմիր գույն». պրս. լաջվարդ «կապույտ», սիահ «սև». թյուրք. լ. ղարա «սև», ղրմըզի «կարմիր»). ժզ) երաժշտական գործիք ցույց տվող (արբ. նաղարա «ոչ մեծ թմբուկ». պրս. զուռնա, սանթուր «տավիղ». թյուրք. լ. ղարատուզան, տուզա)՝ բառախմբերը և այլն:

Արաբերենից, պարսկերենից, թյուրքական լեզուներից փոխառյալ նշված բազմաթիվ բառերի կողքին հանդիպում են նաև վրացերենից և ռուսերենից փոխառյալ հետևյալ բառերը՝ թաւադ «ազնվական, իշխան», խիզան «ընտանիք, գերդաստան», չոնգուր «արևելյան լարավոր նվագարան», զալ «դահլիճ», ֆանար «լամպ, լուսամփոփ»:

Անդրադառնանք փոխառյալ բառերից մի քանիսին, որոնք, թերևս, որոշ հետաքրքրություն են ներկայացնում բառագիտական և իմաստաբանական առումով:

Քննվող բառերի առաջին խումբը տաղերում մեկ ագամ հանդիպող և, որքանով հաջողվել է պարզել, հայ բարբառներում չգործածվող և չպահպանված բառեր են:

Ալամ-ղալամ — կազմված է արաբերեն عالم [alam] «աշխարհ, տիեզերք» և قل [;al] «ննենգություն, խաբեություն» բառերի հարադրումով՝ երկրորդ բաղադրիչը կազմությամբ առաջինին նմանեցնելով: Հովնաթանի տաղերում այն գործածված է «աշխարհ խաբող» նշանակությամբ:

Քեզի էլ ո՞վ կուտայ սալամ,
Առ ու ծախսում՝ ալամ-ղալամ (137):

Բիլ (տալ) — Հարիսակն խառն է ջիլ տուր,
Սուֆրան ձգէ, նստիր բիլ տուր (150).

ակնհայտորեն, բայական հարադրությունը «կուլ տալ» նշանակությամբ արաբերեն بلع [balʿ] «կլանում» բառից է. հնչյունափոխությունը, հավանաբար, պայմանավորված է հանգի պահպանմամբ:

Դիւանբուռ — *բառացի նշանակում է «դատ կտրող», պարսկերեն* ديوان [divān] *«դատ, դատաստան» և* بریدن [boridan] *«կտրել» բառերի կցումով.*

Մարդ կայ սարհղապ և դիւանբուռ *է,*
Անունն պարոն, կապէն մախմուռ է … (84)։

Զարա-զրուխ — *կրկնավոր բարդության առաջին բաղադրիչը, թերևս, պարսկերեն* زیره [zire] *«քիմոն» բառն է։ Բարդության երկրորդ բաղադրիչը ձևավորվել է ձայնավորների փոփոխությամբ, բառավերջում* խ-*ի հավելումով*[52].

Տէրտէրն ասաց. «Օրէնք մերայ,
Էն հաւին միսն խիստ կերայ,
Զարա-զրուխ *ետուր վերայ...» (143)։*

Ղան-աղա — *Ինձ հետ մի կենար զինչպես* ղան-աղան,
Քեզ շատ կու սիրեմ, խիստ ես արմաղան (49)։

Պետական կարգ, պաշտոնավարություն նշող պարսկերեն خان [xān] *«խան» և* آقا [āɣā] *«աղա, տեր» բառերի հարադրումով՝ «ինձ հետ* խան-աղա *մի՛ լինիր» իմաստով։*

Ղըզբէրէք — *արաբերեն* غضب [ɣazab] *«բարկություն, կատաղություն» բառից է։ Շառոթի մոնթերին բնութագրելիս Հովնաթանը բառը օգտագործում է* ղըզբէրէք *ձևով.*

Թափ տւած կու լափեն անտէր,
Ղըզբէրէք *կծուող ճանճեր (123)։*

Մուրքունամ, մուրպաչամ — *ինչպես նշում են Հովնաթանի տաղերի ժողովածուն կազմողները, «ճաշի տեսակ՝ հավի մսից»*[53]*։ Ավելացնենք, որ, թերևս, այն համանման կազմություն է պարսից խոհանոցում պատրաստվող հավի մսից մեկ այլ ճաշատեսակի՝* فسنجان [fesenǰān], *ընդունելով պարսկերեն* مرغ [morɣ] *«թռչուն» բառի հայերեն* մուրք-*ի անցման հնարավորությունը. «Տաղ ի վերայ հաւին, զոր բարեկենդանին*

---

52 *Հմմտ.* Արեղյան Մ., *1974, 147—148։*

53 Հովնաթան Նաղաշ, *1951, 323։*

տէր Գրիգորն սեղանէն մէկ հաւ եոուր ժամհարին, թէ մուրթանամ չինէ...» (141, տե՛ս նաև՝ 143—146)։

Շոյլայ-պօյլայ — *Տէրտէր, քեզ ով տաաց հալայ,*
Որ ինձ գրես շօյլայ-պօյլայ (115)։

Շօյլայ — *ժողովրդախոսակցական պարսկերենում հանդիպող* شل [šol] *«թույլ, անիմաստ» բառն է։ Կրկնավոր բարդությունը կազմըվել է երկրորդ բաղադրիչի բառասկզբի հնչյունի փոփոխությամբ*[54]։

Ջալապում — *սիրո տաղերից մեկում կրկնվող այս բառը, ամենայն հավանականությամբ, արաբերեն* جلب [ǰalab] *«հրապուրում, հմայում, գրավչություն» բառն է. ածականական գործածությամբ՝* جلب [jaleb] *«գրավող, հմայող, հրապուրող».*

Ելեալ ես այվանն, Դու կաննես սէյրան,
Մարալ չէյրան, ջալապում, Ես եմ քեզ հէյրան։
Սամերդ ոլոր, Աչերդ բոլոր,
Սիրելի նոր ջալապում, Ինձ արիր մոլոր ... (58 և այլն)։

Չարբաղ — *պարսկերենում բառացի նշանակում է «չորս այգի»,* چار-جهار [čehār = čār[*«չորս» և* باغ [bāγ] *«այգի, պարտեզ», որ գործածվում է «կանաչ, թարմություն», ասել է՝ «դրախտ» փոխաբերական իմաստով.*

Նման է ծոցդ նոր չարբաղի,
Կրակով սիրտս կու դաղի... (70).

Հավանաբար, այստեղից էլ Երևանի համանուն թաղամասի անվանո՞ւմը, որտեղ, թերևս, ժամանակին եղել են այդպիսի այգիներ։

Պաս *(դնել) — պարսից կենցաղավարությանը բնորոշ* پس [pas] *«ետ գցում, ավելացում, կուտակում» բառն է, որը տաղերում գործածված է հարադրական կազմությամբ.*

Թարջմանլու ես, գառն պատրաստիր,
*Դու տեղ, ապաշխարանք, **պաս դիր**... (150)։*

Սահրատի — *Խելքդ չաժիլ մէկ մահմատի,*
*Լայն թաքեր, երկայն **սահրատի**... (111)։*

---

54 *Աբեղյան Մ., 1974, 147—148։*

Շահվերտունց տեր Աբրահամին ուղղված երգիծական այս տաղում խոսքն ըստ երևույթին վերաբերում է հագուստի։ Պարսից արքունիքում պալատի պահապան-դռնապանը համարվել է հատուկ պաշտոն՝ سرایدار [sarāydār]. պաշտոնավորը կրել է խալաթանման հագուստ, որն էլ, հավանաբար, հետագայում կոչվել է պաշտոնի անունով. թերևս, **սահրատ**-ին առնչվո՞ւմ է խալաթանման այդ հագուստի հետ։ Մանավանդ որ, **բաՙ** այստեղ «փեշ, քղանցք» նշանակությամբ է գործածված՝ պարսկերեն تگ [tak] «տակ, ներքև»։

Տօղի *(տալ)* — արաբերեն دقّه [daγe] «հարված». գործածվում է նաև պարսկերենում دق [daγ] «հարված, ծեծ».

Դասումն խրար կու տան **տօղի**,
Ճընճըղան ձագերն խողի (122)։

Պարզ է. Շոռոթի մոնթերը դասի ժամանակ իրար «տօղի են տալիս» ասել է՝ հարվածում են, ծեծում միմյանց։

Քեարանայ — պարսկերեն کرانه [karāne] «եզր, կող, ափ, սահման». տաղերում այն արտահայտում է վիճակ, ձև, դրություն՝ «մի կողմ գցված, եզրին մոռացված».

Ճարված դնգում է **քեարանայ**... *(118)։*

Քսար — պարսկերեն کسر [kasr] «կրճատում, պակասեցում» բառի դրափոխված ձևն է։ Ժողովրդախոսակցական հայերենում հանդիպում է **քա̈սա̈ր** հնչմամբ՝ «կարճ, ուղիղ»։ Տաղերում այն իմաստային փոքր-ինչ այլ երանգ ունի՝ «կրճատ, պակաս»՝ «նիհար, հիվանդոտ, թերևս՝ վտիտ».

Մարդ կայ, որ մերկ է մարմինն է **քսար** *(91)։*

Տաղերում գործածված փոխառյալ բառերից մյուսները գործածական են մեկ-երկու բարբառներում, մեծ մասամբ պահպանելով փոխատու լեզվում բառի ունեցած նշանակությունը, երբեմն էլ ստանալով բառիմաստային այլ նրբերանգ։ Տարբերակելով հանդերձ, թերևս, դրանք նույնպես կարելի է դասել **նեղ** բարբառային բառերի շարքը։

Աբլահ — արաբերեն ابله [ablah] «հիմար, տգետ, տխմար»։

Սարև քաղվող չափատողերում պահպանել է փոխատու լեզվի բառիմաստը.

Կիժ խօսի, աչիզ կանի մեզ,
Կասէ. «Ախմախ, արլան գձեզ...» (115):

Բառարանային տվյալներով բառը հանդիպում է միայն Մղ. բարբառում[55]:

Ախմուրի — պարսկերեն أخمو [axmu] «մռայլ, տխուր, բարկացկոտ» բառից: Պահպանվել է դարձյալ միայն Մղ. բարբառում՝ ախմուռ «նախատինք, պարսավանք» նշանակությամբ[56]: Տաղերում գործածված է բարբառին հատուկ իմաստային երանգով:

Ղանդ ու շաքար դու մուխուրի,
Քանի ծախես ինձ ախմուրի (57):

Չի՞ աղերսվում արդյոք պարսկերեն այս բառը ռուսերեն хмурый բառի հետ: Ի դեպ Մ. Ֆասմերը նշում է բառի սլավոնական ծագումը[57]:

Բանաւշայ — պարսկերեն بنفشه [banafše] «մանուշակ»:

Մանուշակ-բանաւշայ, սմբուլ, Քաղցր գարնան ունի՞ս խաբար (53), Բանաւշայ, սմբուլ, Ղրմզի գուլ ... (71—74):

Բառարանային տվյալներով գործածական է Ուրմ. և Սս. բարբառներում[58]: Գողթնի գյուղերի խոսվածքներում բառը մանուշակագույնի երանգ է նշում, օգտագործվելով գույնի իմաստով:

Թունբարուն — պարսկերեն تون [tun] «մեծ վառարան, կրակարան» արմատից: Բառը պարսկերեն կազմություն ունի թունբարուն (հմմտ. دربدر [darbedar] «դռնեդռու») «կրակարանից կրակարան» բառացի նշանակությամբ, ասել է՝ «խոշտանգվելու վայր, դժոխք»: Մինչև այժմ էլ լինել բայի հարադրությամբ իբրև անեծք հնչում է պատմական Գողթնի գյուղերի խոսվածքներում, ինչպես՝ Փառակայում՝ «թո̈ն-բո̈թո̈ն էլիս» — «դժոխք ընկնես, դժոխքի բաժին դառնաս»: Անեծքի

55 ԱՄԲ, 255. ԼԻՀԳԲ:

56 ԱՄԲ, 292:

57 Фасмер М., 1973, т. 4, 852.

58 ԼԻՀԳԲ:

նույն իմաստը որոշակի է Հովնաթանի տաղերում՝ «կրակ ընկնի, կրակի բաժին դառնա». Թունբարուն ընկնի խաստի գոռն (109):

Լաբ — պարսկերեն لب [lab] «շուրթ».

Աչքերդ քաշել ես սուրմայ,
Լաբդ շաքար, լեզուդ խուրմայ (17):

Բառարանային տվյալներով փոխաբերական կիրառությամբ պահպանվել է միայն Ղրբ. բարբառում[59]:

Համդամ — պարսկերեն همدم [hamdam] «անկեղծ ընկեր»: Թբ. բարբառում՝ «խոսակից, սրտակից, ընկերակից»[60]. նույն իմաստն ունի տաղերում. Դու ես իմ **համդամ** սրդաշն (28):

Հիլ (տալ) — պարսկերեն هشتن [heštan] բայի «թողնել, բաց թողնել» ներկայի հիմքն է هل [hel].

Սիլդ կարդացմունքդ **հիլ** տուր,
Տնտեսության լաւ դահմիլ տուր (150):

Բառը **անել** և **տալ** բայերի հարադրությամբ գործածվում է Արտ. բարբառի ենթաբարբառներում «բաց թողնել, արձակել»[61] նշանակությամբ:

Մալաս — պարսկերեն ملس [malas] «թթվաշ»: Ամատունին, ինչպես և Մալխասյանցը, նշում են իբրև անհայտ նշանակության բառ[62]: Մղ. բարբառում այն գործածվում է «կիսաթթու» իմաստով, մա́լա́շ հնչմամբ[63]: Ղրբ. բարբառը նշում է «խոշոր հատիկներով, կիսաքաղցր նռան տեսակ»: Գողթնի խոսվածքներում **մալաս**-ը «կիսաթթու շլորի մի տեսակ է». հենց այս նույն առումով էլ գործ է ածում Հովնաթանը.

Ո՞ւր է քո փարաչէն փալաս,
Կխպած շլոր, հոտած **մալաս** (137):

Չարան-փարան — պարսկերեն چرند-پرند [čarand—parand]

59 ԼԻՀԳԲ:

60 **Սայաթ-Նովա**, *1914, 110. ԼԻՀԳԲ:*

61 ԼԻՀԳԲ:

62 ՀԲԲ, 454. ՄՀԲԲ, 1945, 234:

63 ԱՄԲ, 318:

«արածող-թռչող» բառացի նշանակությամբ, ասել է՝ «ներքևում-վերևում գտնվողներ, վար-վեր անողներ», փոխաբերական առումով՝ «վայրիվերո, ափեղ-ցփեղ».

Կարդալիս են չարան-փարան,
Կտրատում են գիրք, ավետարան (119)։

Ըստ ԼԻՀԳԲ-ի Թբ. բարբառում առկա չարան-փարան անել հարադրությունն ունի «ջանք գործադրել» իմաստը։ Տաղերին հարազատ է փոխատու լեզվի բառիմաստը։

Սաչ — թուրքերեն sač «վարս, մազ».

Լեզուդ շաքրաթ, սաչդ ամբուլ,
Քաղցր լեզվովդ ջուր տուր ինձի (19)։

Կար., (Շրկ.), Վանի բարբառներում սաչ-ը «երկար, հյուսավոր մազ»-ն է[64]։

Սարդաֆ — պարսկերեն سرداب [sardab] «ներքնատուն, նկուղ, մառան». նույն իմաստով օգտագործել է Հովնաթանը. Նստենք խմենք ձեր սարդաֆն (73)։ Պահպանվել է Թբ. և Արտ. բարբառներում[65]։

Սիահ — պարսկերեն سیاه [siah] «սև». բառարանային տվյալներով հանդիպում է միայն Ն. Նխչ. բարբառում[66]։ Տաղերում գործածվում է բազմիցս սիահ խալ, սիահ ծամեր, սիահ արտևանունք, սիահ ունք և այլ կապակցություններում։ Հետաքրքիր, բայց բնական զուգադիպություն. տաղերգուի հայրենի Շոռոթ գյուղում սիահ-ը օգտագործվել է սևի փոխարեն, և նույնը տեսնում ենք Ն. Նխչ.-ում, որի բնակիչների նախնիները վերաբնակիչներ էին նաև հին Նախիջևանից (նրա կազմում էր և Երնջակը)։

Տօշամայ (անել) — թուրքերեն döšemek «հարդարել, փռել, ծածկել, կահավորել» բայից։ Թուրքերենին մոտիկ հնչմամբ (դո̈շա̈մմ) բառը պահպանվել է Գողթնի գյուղերում «հարդարել, կահավորել» նշանակությամբ։ Նույն իմաստն ունի այս տաղերում.

64 ԼԻՀԳԲ։
65 ԼԻՀԳԲ։
66 ԼԻՀԳԲ։

Աղէկ խալվաթ է օթաղն,
Տօշամայ է արած թաղտն (37):

Հետաքրքիր են նաև փոխատու լեզուների բառերով և բաղադրիչներով բաղադրված փոխառյալ բառերը, միաժամանակ և այն առումով, թե նման կառույցները փոխատու լեզուներից որի՞ն են բնորոշ:

Բանդաղուլ, ղուլբանդ — պարսկերեն بنده [bande] «սարուկ, գերի, ծառա» և թուրքերեն ǧul «ծառա, սարուկ» համանիշ բառերի կցումով ստեղծված բարդությունները (երկրորդը՝ հակադարձ շարադասությամբ) տաղերում տեղ են գտել «գերում, սրկայում» նշանակությամբ.

Սոհրաթումդ պակաս չէ բանդաղուլն,
Ես զարիպ եմ, դիպչիլ մի հրած սրտիս ... (40):
Անեմք էս էլ մէկ ղուլբանդ այ,
Քանի պահես փարլէքանդայ ... (28):

Բէինսաֆ, բէղայրաք, պէմուռատ, բէմուրվաք — բառերը բաղադրված են հայերեն ան ժխտական նախածանցին համազոր պարսկերեն به [be] -ով: Բէ+արաբերեն انصاف [ensaf] «արդարություն» կառույցը «անարդար» իմաստով է գործածված. Քարասիրտ, բէինսաֆ, մէկ ըռահմ արա (42):

Բէ+արաբերեն غيرت [γeյra] «եռանդ, ջանք»՝ Վասն բէղայրաք մարդոց և տղայոց խրատ (86) տողում համապատասխանում է «անեռանդ, անջանք» իմաստին:

Դարձյալ պարսկերեն ժխտական մասնիկով և արաբերեն مراد [morād] «ցանկություն, նպատակ, իղձ» բառով հարադրված կառույցը գործածված է «նպատակ չունեցող, անիղձ» նշանակությամբ. Այ պէմուռատ, Ըռահմ արայ՝ երեսդ բաց (207):

Բէ+արաբերեն مروت [morovvat] «գութ, խիղճ, մեծահոգություն» կառույցն է. տաղերում կիրառվում է բազմիցս «անգութ, անխիղճ» նշանակությամբ. Ըռահմ արա, հէ՜յ, բէմուրվաք (19), է՜յ, բէմուրվաք, ինսաֆ արա (21), է՜յ, զալում եար, է՜յ բէմուրվաք ... (32—33): Այդ-

պես և 47, 192։ Գործածական է Արտ., Թբ., Ղրբ., (Բրչ.) բարբառներում[67]*։*

Դաւաշի — *պարսկերեն* دعو [da‘vā] *«վեճ, խնդիր, կռիվ, դատական գործ», բայական հարադրություններում՝ «կռվել, վիճել» և գործողություն կատարող անձ ցույց տվող թուրքերեն* چی [či] *մասնիկով կազմված բառն է, թուրքերենում՝ «հայցվոր, բողոքարկու».*

> *Անչափ փող որ տաս* դաւաշուն ...
> *Կասեն, թ' «էս գնաց իմ հոգւոյն» (114)։*

Դաւէֆար — *Հայր կայ ... Ջորդին շինում է ճարտար փէշաքար,*
> *Յետոյ կանգնում է հօրն* դաւէֆար ... *(87)։*

Որոշակիորեն գործածված է վերը հիշատակված դաւաշի *բառի նշանակությամբ։ Կարելի է ենթադրել նաև, որ բառը՝* դաւէֆար, *արաբերեն* دعوی [da‘vi] *«դատ, գործ, պահանջ»+պարսկերեն* کار]kār] *«գործ, աշխատանք, զբաղմունք» բաղադրիչներով ստեղծված կառույց է՝ «պահանջարկու, դատական գործ հարուցող» նշանակությամբ։*

Զամաքֆար — *կազմված է արաբերեն* زحمت [zahmat] *«նեղություն, անհանգստություն» բառից։ Պարսկերենում գործածվում է* زحمتکش [zahmatkaš] *բառը՝ «նեղություն կրող, քաշող», ասել է՝ «բանվոր, գործավոր»։ Հովնաթանը օգտագործել է սրա նմանությամբ կազմված* զամաքֆար, *հիշատակված պարսկերեն «գործ, աշխատանք» բառի կցումով. Գող* զամաքֆար *եմ իշխանի (98)։*

Ղալամղաշ, ղալամֆար — *բառերի առաջին բաղադրիչը արաբերեն* قلم]γalam] *«գրիչ» բառն է։* Ղալամղաշ*-ի երկրորդ բաղադրիչը՝* ղաշ, *պարսկերեն* کشیدن [kašidan] *«գծել, նկարել, քաշել» բայն է՝ «ղալամով քաշած, գծած» այն է՝ «նուրբ, գեղեցիկ»։ Տաղերգուն բառն օգտագործում է սիրուհու հոնքերը նկարագրելիս. Թուխ ծամ ունես,* ղալամղաշ *ես (19), Սիահ է քո* ղալամղաշն *(28)։*

Արտ. և Թբ. բարբառներում[68] *հանդիպում է* ղալամֆաշը՝ *«գրչով*

---

67 ԼԻՀԳԲ։

68 ԼԻՀԳԲ։

գծված, նկարված»։ Բառը պատկերավոր խոսքի այլևայլ տարբերակներով բազմիցս գործ է ածում Սայաթ-Նովան[69]*։*

Ղալամքար-ը *գործածվում է պարսկերենում «ձեռագործ դաշված-քով մանվածք» նշանակությամբ։ Նույն իմաստով էլ գտնում ենք տա-ղերում, այլև Թբ. բարբառում*[70]*.* Նոր ղալամքար *արխալուղ հագար (69)։*

Ղասապխանա — *բաղադրված է արաբերեն* قصاب [ɣasāb] *«մսագործ» և պարսկերեն* خانه [xāne] *«տուն», բառերով.*

> *Առանց մեծարք վազում տներ,*
> *Ղասապխանի լօթի շներ (123)։*

Ինչպես երկրոդում, այնպես էլ Թուրքերենում, բառը գործածվում է «սպանդանոց» նշանակությամբ։

Ղարաղաշ — *Թուրքերենում «սևահոնք» նշանակությամբ լայնորեն կիրառվող այս բառը կազմված է Թուրքերեն* kara [ɣara] *«սև» և պարսկերեն «քաշել, գծել, նկարել» բառերով (տե՛ս* ղալամղաշ*).* Նա... *գիտէ ունքերս* ղարաղաշ *է (9)։*

Նաշաղ — *պարսկերեն* به [be] *ժխտական մասնիկին համարժեք պարսկերեն* نا [nā] + *Թուրքերեն* چاق [čāɣ] *«գեր» բաղադրիչներով կառույց է։ Հովնաթանի լեզվում ունի «ոչ գեր՝ հիվանդ» նշանակությու-նը. Կարծէմ Թէ Նազարն* նաշաղ *է, Գնայ, խմորըն շաղախէ (150)։*

Բառը գործածական է Արտ., Դրբ., Հվր. բարբառներում[71]*։*

Սըռդաշ — *կցական կազմություն է արաբերեն* سير [seyr] *«գաղտնիք» և Թուրքերեն* adaš *«անվանակից» բառերով։ Գործածվում է Թուրքերենում «գաղտնակից» նշանակությամբ. նույնը և տաղերում.* ...*քեզ* սռդաշ *եմ... (31), Դու ես իմ համդամ* սըռդաշն *(28)։ Հանդիպում է Արտ., Դրբ., (Ղզխ.) բարբառներում՝ «սրտակից, մտերիմ» իմաստով*[72]*։*

---

69 Սայաթ-Նովա, *1914, 111։*

70 *Նույն տեղում։*

71 *ԼԻՀԳԲ։*

72 *ԼԻՀԳԲ։*

Ռաքանումետ — *բաղադրված է արաբերեն* ربح [rebh] *«շահույթ, եկամուտ» և պարսկերեն* آمدن [āmadan] *«գալ» բառերով։ Երկրորդից պարզ երևում է, որ բառն ունի արաբերենին համարժեք իմաստ.*

Ռաքանումեան *ամէն հատու,*
Դարա-Տամրէն բերէք կաքու (121)։

Ուզալրուն — *կցական կաղմություն է թյուրքական լեզուներից* jyz *«հարյուր» և* altin *«ոսկի» բառերով, բառացի՝ «հարյուր ոսկի».*
Խաղողի չիտրն ուզալրուն,

Դու վաննես փողով երեսուն (114)։

Վերը քննված փոխառյալ բառերի մեծագույն մասը, հնչյունական և իմաստային ինչ-ինչ տարբերություններով պահպանվել և մինչև օրս էլ օգտագործվում է հայ բարբառներում[73]*։ Եվ բնորոշ է, հիմնականում բարբառներում պահպանվել են Հովնաթանի տաղերում ավելի հաճախակի գործածություն ունեցող բառերը։ Ինչպես.*

Արմաղան — *ընծա, նվեր — Արտ., (Մուշ), Ղրբ., Կար., (Տրկ.), Երզ., Ակն, Վան։*

Բաղան — *մարմին, իրան, մեջք—Արտ., Ղրբ., Ագ. Ուրմ., Ն. Բզ.։*

Դամ — *ա) շունչ, ձայն — Արտ., Թբ., Ն. Բզ., Ղրբ., Հվր., Կրճ., Ուրմ., Կար., բ) պահ, միջոց, ժամանակ — Ղրբ., Գնձ., Շմխ., Կրճ., Ուրմ.։*

Թազա — *նոր, թարմ — Արտ., Թբ., Ն. Բզ., Շմխ., Կար., Վան, (Տրկ.), Ագ. բրբ. խավ.։*

Թալակ — *թակարդ — Արտ., Թբ., Ն. Բզ., Ղրբ., Սս., Հվր., Մղ., Կար., Մկ., Ախլք., Ագ. բրբ. խավ.։*

Թամաշա — *դիտում, տեսարան — Արտ., Թբ., Ն. Բզ., Հվր., Ուրմ., Ղրբ., Կար., Տրկ., Ջվխ., Մուշ, Մկ., Ագ. բրբ. խավ.։*

Ջալում — *դաժան, անգութ — Արտ., Ն. Բզ., Ն. Ջղ., Թբ., Կար., Ագ. բրբ. խավ...* զալըմ — *Ղրբ., (Ղզխ.), Հվր., Ուրմ., Ն. Նխջ., Ամ., Արբ., Վան, Մկ.։*

Լաչակ — *գլխաշոր — Արտ., Թբ., Ն. Բզ., Պլ., Ղրբ., Կար.։*

---

73 *Առանձնացված են ըստ ՀԻՀԳԲ-ի*

Նանա-Նանա — վառված, բորբոքված — Թբ., Ղրբ., (Գնձ.), Արտ., (Լ.), Խոյ, Մուշ, (Ալշ.), Վան, Ագ. բրբ. խմվ.։

Նարա — վերք — Արտ., Թբ., Ղրբ., Մղ., (Կրճ.), Ագ., Շմխ., Պլ., Ն. Նխջ., Ամ., Կար., Երզ., Հմշ., Մուշ, (Ալշ.)։

Հէյրան — զմայլանք, հիացմունք — Թբ., Ղրբ., (Գնձ.), Բզ., Վան, Հվր., Մկ., Մուշ, Խրբ., Ն. Նխջ. և այլն։

Շամամ — փոքրիկ, կլոր, անուշահոտ սեխ — Արտ., Թբ., Ղրբ., Հվր., Սեբ., Կար., Մուշ, Մկ., Վան, Ագ. բրբ. խմվ.։

Չիման — մարգագետին — Արտ., Ն. Բզ., Ղրբ., Հվր., Շմխ., Ուրմ., Կար., (Տրկ.), Մուշ, Վան, Տտխ., Ագ. բրբ. խմվ.։

Ռահմ — գութ, խիղճ — Արտ., Թբ., Ղրբ., Հվր., Մղ., Ն. Նխջ., Մուշ, (Բզ.), Սս., Մկ.։

Ռանգ — գույն — Արտ., Ն. Բզ., Թբ., Ղրբ., Հվր., Շմխ., Մղ., (Կրճ.), Ուրմ., Կար., Մուշ, Մկ., Ագ. բրբ. խմվ.։

Ջամ — գավաթ — Արտ., Թբ., Ղրբ., Հվր., Ուրմ., Ագ. բրբ. խմվ.։

Ջիկար — լյարդ — ջիգյար — Արտ., Ղրբ., (Գնձ.), Մղ., (Կրճ.), Կար., Ուրմ., Ագ. բրբ. խմվ.. ջիկյար — (Տրկ., Ջվխ.), Կար.. ջիգար — Թբ., Հվր., Կար., (Ջվխ.), Ղրբ., (Ղզ.), Մուշ, (Բլ.), Վան։

Սազ — Արտ., Թբ., Ղրբ., Հվր., Ուրմ., Ագ. բրբ. խմվ.։

Սաղ — ողջ, կենդանի — Արտ., Ն. Բզ., Թբ., Ղրբ., Հվր., Շմխ., Մղ., (Կրճ.), Ուրմ., Պլ., Ն. Նխջ., Եվդ., (Ամ.), Կար., Հմշ., Քս., Հճ., Մկ., Մուշ, Վան, Տտխ.։

Սուրմա — աչքի ծարիր — Արտ., Ղրբ., (Գնձ.), Հվր., Շմխ., Մուշ, Ագլ. բրբ. խմվ.։

Օրախ — սենյակ — Արտ., Թբ., Ն. Բզ., Հվր., Ագ., բրբ. խմվ.. օրաղ — Ղրբ., Շմխ., Ուրմ. և այլն։

Թվարկված բառերից բացի, մեր ձեռքի տակ եղած բառարաններում ընդհանուր բարբառային են դիտվում Հովնաթանի տաղերում գործածվող հետևյալ փոխառյալ բառերը՝ ախմախ, ախր, ամարաք, այվան, զօզալ, զուռ, խաբար, խեր, ճալբաք, ճաչաք, ճարամի, ճեքիմ, ղազան, ճար, մալ, ճամուս, վախտ, փարա, փարաչա, ֆափ, ֆօռ *և այլն։ Նշված բառերը, անշուշտ, գիտակցվելով իբրև փոխառյալ, համընդհանուր լայն գործածություն ստանալով, համարվում են ժողովրդախոսակցական բնույթի բառեր և այժմ արդեն կազմում են ժողովրդախոսակցական բառապաշարի անբաժանելի մասը։ Հակված ենք կարծելու, որ արաբական, ապա պարսկական ու թուրքական տիրապետության ժա-*

մանկաշրջաններում ներմուծված այդ բառերը ժողովրդախոսակցական հայերենում ամրակայվել են հենց Հովնաթանի կյանքի ու գործունեության ժամանակներում։

Փոխառյալ բառերի քննությունը հնարավորություն է ընձեռում անդրադառնալու և ի հայտ բերելու հայերեն բառի փոխառյալ համանիշը, այլև փոխառյալ բազմաթիվ համանիշ բառերի գործածությունները, որոնք թաքցնում են Հայաստանի աշխարհագրական դիրքով ու տարածքով և պատմական ճակատագրով պայմանավորված լեզվական լայն փոխազդեցություններ։

Այդ փոխազդեցությունների լայնքը պատկերացնելու համար բավական է ասել, որ Հովնաթանի տաղերում հանդիպում են երկու-երեքից ավելի փոխառյալ համանիշներ։ Ինչպես. աման-գուշ, աղանի-դոխ, այրված-եանայ-եանայ, անճար-բէչարայ-նաչար*, անգործ-անփեշա-աւարայ, ապրանք-մալ, առևտուր-(առուծախ)-ալիշվերիշ, արեգակ-շամս, բազար-ալաճա, բարև-սալամ, բժիշկ-հեքիմ, գաւաթ-տօլու, գերի-բանդաղուլ-դութսաղ-ղուլբանդ, գող-հարամի, գոմ-թաւլա, գույն-ռանգ, գործելի-քեօմուր ("), գոտի-քամար, դարդ-ղամ, եղանակ-հաւայ, երդում-ահտ, զրույց-գեաֆ-սոհբաթ, ընծայ-արմաղան, թալակ-թաւ, ժամանակ-ժուկ-դամ-դովրան-վախտ, լուսին-ղամար-հիլալ, իշտահ-մատայ ("), լի-(շատ)-բոլ-փոռ, լուռ-(մունջ)-անսաս, խելագար-(խև, խենթ)-դալու-դիւանայ-ջունուն, խեղճ-սէֆիլ, խիղճ-ռահմ-ինսաֆ, խիզան-օղլուշաղ ("), խորովու-բիրեան, խոց-եարայ-վէրամ ("), ծով-դարիեայ, ծունկ-չոք, կարմիր-ղրմզի, կեանք-օմր /ումր, կենդանի-սաղ, կաղ--լանկ-չոլուխ (-անալ), ծառայ-ղուլ-ղարաւաշ, հիմն-բունիաթ, հանապազ -(միշտ)-համիշայ, հաստատ-(պինդ)-ղայիմ, հանգիստ-ղարար, հիւր-ղոնաղ,հալ-վէսմ, մանուշակ-բանաւշայ, մեծարք-էհտիրար, մաքուր-փաք-խատակ, մեխակ-ղարանֆիլ/ղանաֆիլ, մաղ-(ծամ, վարս)-սաչ, նավ-գեամի, նախանձ-փախիլ, նոր-թազայ, շաքար-ղանդ, շնորհք-մարիֆաթ, շունչ-նաֆաս, շուրթ-պռեկ-պռոշ-լաբ, ողբ-(սուգ)-ֆիղան-զար, ոսկի-ալթըն-զառ, չափ-կեօրայ, պատուհաս-բալայ, պրակ-ջվալ-բօրփա, պատճառ-մահանայ, պարան-չաթու-չվան, պատասխան-ջուղաբ, պալատ-ամարաթ-քոշկ, պատկեր-սուրաթ, սար-դաղ, սէր-էշխ-սաւդայ, սափոր-կուժ-քուզա-թունկ, սովորութին-ղայդայ, սերեկ-ղափաղ, սև-

---

* Ընդգծվում են համանիշ երկու և ավելի եղր ունեցող փոխառյալ բառերը, փակագծերում նշվում է տաղերում հանդիպող հայերեն համանիշը։

սիահ-ղարայ, սենյակ-օթաղ, վարդ-գուլ, վարպետ-ուստայ, վատ-գէշ-փիս, ցեղ-միլաթ, փող-ստակ, փողոց-քուչա, քանզի-զէրայ, քու-վասա-վասէ, քթոց-սաբաթ։

Համանիշների բազմերրությամբ առանձնանում են մասնավորապես սիրային տաղերը՝ սիրող—սիրվող զույգի նկարագրի, վիճակների և հոգեվիճակների տարբերակվող բնութագրումներում. (ինչպես՝ Ես զունահքար, մեղաց գերի նաղաշն եմ (41), Ինձ դուքսաղ արիր, կուպահես ջաֆով (25), Սոհբաթումդ պակաս չէ բանդաղուլն (40), Ասեմք է՞ս էլ մէկ ղուլբանդ այ (28), Ես եմ քո ծովային աչքերին ծառայ... (194), Ես դուլ եմ քո հագիդ կարմիր ատլասին (35), Հագել են ղումաշ ու խարայ, Ունեն շատ դարաւաշ, ծառայ (13) և այլն։

Երևույթը վկայում է, որ ժամանակի խոսակցական լեզվում հայկական բառերի կողքին չափազանց գործածական են եղել նույնիմաստ փոխառյալ բառերը, որոնք ավելի հասկանալի են եղել դիմացինին, ուստի և տաղերգուն գիմել-գովերգել է նրան այդ բառերով։

Ամփոփելով Հովնաթանի տաղերի լեզվում տեղ գտած փոխառությունների քննությունը, ասենք, որ փոխառյալ բառերի խմբավորումներում ընդգրկված չեն պարսկերեն, թյուրքական լեզուներով հանդիպող ամբողջական նախադասությունների ու կառույցների բառերը, վերնագրերում օգտագործված պարեղանակների, երգերի հիշատակումները (տե՛ս 5, 21, 25, 29)։ Հովնաթանի միայն սիրային տաղերի վերնագրերում եղած այս խրողությունը առհասարակ բնորոշ է աշուղական երգարվեստին[74]։ Այդ արվեստի տարածումը պայմանավորված էր XVI—XVII դդ. Անդրկովկասի տարածքում, հատկապես՝ գյուղաքաղաքներում ու քաղաքներում կենտրոնացվող բնակչության բազմազգ բնույթով, և պետք է համարել աշուղական-հրապարակային արվեստի ծաղկման հիմնական նախադրյալներից մեկը։ Լսարանի բազմազգ կազմը թելադրում էր հասկացվելու նպատակով խոսել ու երգել նաև այլազգի ունկնդիրների համար և այդ պահանջով է, որ Հովնաթանի տաղերում գտնում ենք պարսկերեն կամ թյուրքական լեզուներով տողեր։ Ավելին, սիրային տաղերից մեկում հնգյակ տները ավարտվում են թյուրքական լեզուների տողերով (69—70), մի այլ տաղ էլ կառուցված է հայերեն և թյուրքական լեզուներով տողերի հերթագայությամբ (75—76)։

74 Պառամազրյան Ա., 1973, 88—89։

Ինչ վերաբերում է պարսկերեն, թյուրքական լեզուներով ամբողջական նախադասություններին, բառակապակցություններին, ապա դրանք գործածվում են նաև երբեմն հանգի կազմության և պահպանման նկատառումներով (63, 142, 144 և այլն)։

Բացի հայերենից, այլ լեզուներով ստեղծագործելը աշուղական արվեստի համար դառնում է օրինաչափություն։ Կարճ ժամանակից Սայաթ-Նովան արդեն երգում է երեք լեզվով. նույնը և հաջորդ աշուղները՝ XIX դարի աշուղներից Միսկին Բուրջին, որի «...տաղերից յուրաքանչյուրը տարբեր լեզվով է գրված — ռուսերեն, հայերեն, ադրբեջաներեն և պարսկերեն...» — ինչպես վկայում է Ա. Պատմագրյանը. այսպես և Ազբար Եդամը, Սայհադը, որոնք նույնպես հետազոտողի վկայությամբ վարժ տիրապետել են պարսկերենին, թուրքերենին, վրացերենին[75]*։*

* * *

Նաղաշ Հովնաթանի տաղերի բառապաշարի շերտերի քննությունից հետևում է, որ նրա լեզուն բովանդակում է հայերենի ընդհանուր բառապաշարի բառեր (գրաբարյան, միջին գրական հայերենի), հարուստ է բարբառային բառերով, ինչպես և փոխառություններով, մեծապես արաբերենից ու պարսկերենից։ Նման միախառն բնույթով այն ներկայացնում է XVII դարի կեսերից XVIII դարի սկզբների ժողովրդախոսակցական լեզվի բառապաշարի ընդհանուր պատկերը՝ բարբառների (Արտ., Ղրբ., Ջղ., Ագ., Թբ.) միջև նկատվող միասնականացնող միտումներով։

Այդ միտումների շարունակական ընթացքով էլ ձևավորվելով ու զովելով, XIX դարի կեսերին կազմավորվելով միասնականանում է արևելահայ գրական լեզվի հիմնական բառապաշարը, անշուշտ, շարունակաբար հարստանալով նոր բառերով, բառակազմություններով ու բառաստեղծումներով։

6. Բառակազմական առանձնահատկություններ

Ինչպես ընդհանուր գրական հայերենում, այնպես էլ Հովնաթանի

---

75 *Նույն տեղում*, 105—106։

տաղերի լեզվում, բառակազմության հիմնական եղանակներն են բառաբարդումն ու ածանցումը։

Բանաստեղծական խոսքի շրջանակներում բառակազմությունն ավելի զգալի չափով է առնչվում տվյալ ժողովրդի լեզվամտածողությանն ու դարձվածաբանությանը, նաև տվյալ հեղինակի ոճական առանձնահատկություններին։ Նման դեպքերում, բնականաբար, բառակազմական համակարգի հարցերի շրջանակն ընդլայնվում է՝ ածանցավոր բառերի, հոդակապով ու անհոդակապ բարդությունների կողքին թելադրելով հարադրական բաղադրությունների, դարձվածքների քննության անհրաժեշտություն։

Տաղերի լեզվում ևս ածանցները գերազանցապես վերջածանցներ են։ Առատ գործածությունը տվյալ դեպքում պայմանավորված է նաև վերջածանցների հանգակապիչ դերով, ինչպես կարելի է տեսնել -ական վերջածանցի օրինակով. ...պատուական ...շարադրական ...որդիական ...խոնարհական ...գիտնական ...գերադրական ...վարդապետական ... (147) և այլն։ Վերջածանցների շարքում առավել գործուն են -ական և -ութին վերջածանցները. -ական անվանական ածանցով կազմված բառերը, ինչպես ընդհանուր գրական հայերենում, գործածվում են մեծ մասամբ ածականաբար, երբեմն նաև իբրև գոյական. անդնդական, անմահական, աշխարհական, արքայական, բժշկական, բնական, եդեմական, թագաւորական, թափառական, թշուառական, իսկական, լիական, խրախճանական, ծաղրական, ծիծաղական, մարմնական, մաքրական, մեղանչական, միաբանական, պարտական, պէտքական, սիրական, սխրական, վայելչական, վկայական, տրտմական, ուրախական, օգնական (ընդգծվածներն օգտագործվում են նաև իբրև գոյական)։ Թվարկվածները մեծագույն մասով և նույն նշանակությամբ անցել են արդի գրական լեզվին, բայց և որոշ դեպքերում էլ -ական-ը փոխարինվել է -ելի, -ալի վերջածանցներով՝ ծիծաղական-ծիծաղելի, սիրական-սիրելի, սխրական-սխրալի, ուրախական-ուրախալի, պատվական-պատվելի։

-Ութին վերջածանցով, ինչպես ընդհանրապես հայերենում, կազմըվում են հատկություն ցույց տվող վերացական անուններ. ազատութին, անմահութին, արքայութին, բարութին, գժութին, գոհութին, իմաստութին, խաղաղութին, խոստովանութին, կարօղութին, հաշտութին, հպարտութին, ղարիպութին, մեծութին, մկրտութին, յայտնութին և այլն։ Սրանք հիմնականում գրաբարյան բառեր են, որոնք

բոլորն էլ անցել են արդի հայերենին։ Բացառություն են, թերևս, ղարիպութիւն և գժութիւն բառերը, որ Հովնաթանի լեզվին են անցել ժամանակի ժողովրդախոսակցական լեզվից։

Մեկական նմուշներով տաղերում հանդիպում են -ային *(ծովային),* -ան *(հնձան),* -եակ *(որդեակ),* -եղ *(զօրեղ),* -ին *(մթին),* -ուկ *(գեղջուկ) վերջածանցները.* -եակը՝ *փոքրացուցիչ,* -եղը՝ *մի բանից շատ ունեցող,* -ուկը՝ *նվազական, արդի հայերենում առկա նշանակություններով։*

Սրանց կողքին փոքր-ինչ ավելի հաճախական և կենսունակ են հետևյալ վերջածանցները. -անոց *(բուրանոց, փէտանոց),* -արան *(գաղտարան, սաղմոսարան), որոնք կազմում են առարկայի տեղ նշող գոյականներ.* -արար *վերջածանցով կազմվում են արհեստների անվանումներ (գզարար, լուսարար, ժամարար, նաղաշարար).* -ացի, -ցի-*ով բառերը, ինչպես արդի գրական հայերենում և բարբառներում, ցույց են տալիս մի որևէ վայրի բնակիչ լինելը (գեղացի, վրացի).* -ացու՝ *«տվյալ բանի համար նախատեսված» (մահացու, շուրջառացու, տիրացու).* -աւոր, -ւոր՝ *Մ. Աբեղյանի բնութագրությամբ՝ բաղադրվելով գոյական անվան հետ, նշանակում է «ունեցող, վրան կրող»*[76] *(արուեստաւոր, աքեոր, երկնաւոր, լուսաւոր, խորհրդաւոր, մեղաւոր, շապկաւոր, կարգաւոր, սպասաւոր, ուխտաւոր).* -եղէն *վերջածանցը՝ մի բանից շինված առարկաների նշանակությամբ (խեցեղէն, հողեղէն, հրեղէն, ոսկեղէն, պղնձեղէն, ջրեղէն), ապա և մի բանի էության իմաստով (աստուածեղէն).* -իկ-*ով կազմությունները՝ նվազական-փաղաքշական իմաստներով, առավելապես Հովնաթանի տաղերին են անցել ժամանակի ժողովրդախոսակցական լեզվից (լալիկ, խորոտիկ, կարմրիկ, ոտիկ, սրտիկ, քաղցրիկ)։ Պատահական չէ, որ այս բառերը լայնորեն հանդիպում են ժողովրդական խաղիկներում։* -իչ *վերջածանցով, ինչպես արդի հայերենում, կազմվում են գործող անձի և գործիքի անուն ցույց տվող բառեր (ավետարանիչ, բրիչ, խոտիչ, կոկիչ, մխիթարիչ, սփոփիչ, քարոզիչ)։ Արդի հայերենում, սակայն, այս ածանցը շատ հաճախ տեղը զիջում է ենթակայական դերբայի* -ող *վերջավորությանը։* -ոտ *գործածված է արդի հայերենի «մի բան վրան շատ ունենալու» նշանակությամբ (եղտոտ, ճենճոտ, մրոտ, ցաւոտ).* -որդ *(առաջնորդ, լեղնորդ).* -ոց *(թամբոց, ծածկոց, ճաշոց).* -ստան *(բուրաստան, Գուրջստան, դատաս-*

76 Աբեղյան Մ., *1974, 221։*

տան, Հապեշստան, Հնդստան, յանդաստան, Ցուանգստան). -ուն (գի-տուն, իմաստուն, սիրուն, փայլուն). -ու (ծախու, խորովու). բոլոր այս կազմություններում էլ վերջածանցներն արտահայտում են արդի հայերենում առկա նշանակություններ. գրական լեզվի բառապաշարից դուրս են մնացել շատ քչերը, ինչպես՝ լեղնորդ, թամբոց, խորովու:

Վերջածանցների համեմատությամբ սակավ են նախածանցները: Ժխտական նշանակությամբ ամենագործունը -ան նախածանցն է. անա-ղի, անարատ, անբան, անգէտ, անգութ, անխելք, անխոստովանք, ան-կէզ, անհաշտ, անյիշաչար, անպտուղ, անտաշ, անտես, անպատմելի, անքուն և այլն. ան+փոխառյալ բառ կառույցով՝ անդան «չիմացող», անսաս «անձայն», անփէշա «արհեստ, զբաղմունք չունեցող»:

Ժխտական տ և չ նախածանցները գործածվում են ընդամենը երեք դեպքում՝ տգէտ, տհաս, չհաս:

Հունաբան դպրոցի ավանդածներից Հովնաթանի տաղերում գտնում ենք միայն -գեր նախածանցը՝ գերագույն, գերադրական, գերաղանց:

Բարդություններին դառնալիս, որոշակիորեն նկատվում է, որ հո-դակապով բարդությունները կրկնակի գերակշռում են անհոդակապնե-րին: Ըստ որում և՛ հոդակապով, և՛ անհոդակապ բարդությունները մե-ծագույն մասով անփոփոխ պահպանվել են արդի հայերենում.

ա) հոդակապով բարդություններ. անուշահոտ, աստուածաբան, աս-տուածազարդ, աստուածածին, աստուածապաշտ, արինահեղ, բարե-կամ, գրագիր, գրքակալ, դիւաբնակ, եղաձու, եղբայրասէր, ժամահար, ծաղկազարդ, կպրաձէթ, կռապաշտ, կորակալ, ձիթածախ, ճարտարա-պետ, մարգարտաշար, մարդասէր, մեծատուն, նորահաս, նորատունկ, նորափոր, շնորհազարդ, շնորհալից, ոսկեթել, ոսկեհաւ, պակասամիտ, վերնատուն, տակառապետ, տաճարապետ, տիրամայր, ուղտապան, փառասէր, փորացաւ, քաղցրախօս, քաղցրահամ, քաղցրաշունչ և այլն.

բ) անհոդակապ. աղաման, արինթաթախ, արինշաղախ, եղա-ման, թանաման, ժամարար, կիրակմուտ, ջերմեռանդ, ջրաղաց, վրէժ-խնդիր, տանտէր, տնտեսատուն և այլն:

Բարդությունների կազմության կաղապարային կառույցները բազ-մազան են. ա) գոյական+գոյական /ածական/ բայահիմք՝ աղքացաւ, անուշահամ, գառնափլավ, քարասիրտ, աստղանման, աչքաբաց, ձուա-կեր, կամապաշտ, մարդասպան, նավավար և այլն. բ) ածական+գո-յական / բայահիմք՝ բթամիտ, խստասիրտ, կարմրափայլ, քաղցրաձայն, բարեխնամ, բարեխօս, խակակիրթ, չարախօս և այլն. գ) բայահիմք+

գոյական՝ խոստովանորդի. դ) դերանուն+գոյական/բայահիմք՝ միաբերան, միատեղ, ինքնագոյ, ինքնահաւան, ե) թվական+գոյական՝ վեցթևեան, չորքանկիւն և այլն։

Առանձնացված բառերի շարքում զգալի են ՀԱԲ-ում «Նոր բառեր» դիտվածները. ինչպես՝ աչքաբաց, արջակատու, գինաման, դեռահաս, երեսպաշտ, թթխմորաման, ժամասէր, ժամկոչ, լուսահոգի, ծաղկաման, ձիթաման, ձկնաման, մեղրաման, նախարարած, ոսկեջրել, պանրաման և այլն։

Տաղերի լեզուն, սակայն, աչքի է ընկնում հարադրական բաղադրությունների առատությամբ։ Անվանական հարադրությունները մեծ մասամբ հարակցական և շաղկապական են՝ հայերեն և փոխառյալ, այլև միայն փոխառյալ համանիշ բառերի հարադրմամբ. հեյրան ու մաթ, հալ ու ահվալ, մուշկուլ, ու փէրիշան, թունկ-շուշայ, սիահ-ղաբայ։ Որոշ դեպքերում առաջադաս է հայերեն համանիշը (ապրանք ու մալ, գող և հարամի, խև ու բանգի, հաց ու սուֆրա, սարեր-դաղ, բցու՝ դանդ ու շաքար), կամ էլ՝ փոխառյալ ավելի հայտնի ու հասկանալի համանիշը. թվանկ-եարաղ, նամուս-ղայրաթ, մալ-խարճ։ Մեկ այլ տարբերակում զուգադրվում են իմաստային առումով իրար մոտ բառեր. աչք և ունք (աչք-ունք), առ ու ծախ, գործ ու բան, հոտ և համ, մեղր ու կարագ (մեղր-կարագ), ձեռ ու ոտք, նետ ու աղեղ, շամս ու ղամաբայ, լաչակ-քիթկալ, սխտոր-սոխ, տեղ-տուն, տիւիթ-ղալամ, օթաղայվան և այլն։

Կրկնավոր բաղադրության բաղադրիչներ են կազմում գոյականը, ածականը, թվականն ու մակբայը. խալ-խալ, կուռն-կուռն, մաս-մաս, մէկ-մէկ, շուտ-շուտ, պինդ-պինդ, վաղ-վաղ, վարայ-վարայ, ցեղ-ցեղ և այլն։

Կցական բաղադրություններից են՝ այլվի, այսօր, այնտեղ, այսչափ, մէկել, մէկտեղ և այլն։

Առավել մեծ թիվ են կազմում հարադրավոր բայերը, որոնք բանաստեղծական չափատողերին հաղորդում են կենդանի խաղացկուն շունչ ու եռանդ, մատնելով Հովնաթանի տաղերգության հարազատությունը ժողովրդական երգի ու տաղի պարզ ու անպաճույճ շարակարգությանը։

Հարադրի կառուցվածքային տիպով՝ ըստ խոսքիմասային պատկանելության, դրանք կարելի է խմբավորել՝ գոյական, ածական, դերանուն, թվական, մակբայ հարադիրներով, ձայնարկությամբ և բնաձայ-

նական բառերով, և ապա՝ կախյալ բայարմատներով ու բառերով կազմըված հարադրական բայեր։ Հիշյալ հարադիրները որպես կանոն հանդես են գալիս անփոփոխ, արտահայտվում են քերականական որոշակի ձևով։ Փոփոխվում-խոնարհվում է միայն բայական բաղադրիչը։ Իսկ գոյական հարադրի դեպքում (որի կիրառությունները տաղերում բազմաթիվ են) գոյականը ձևականորեն պահպանում է հոլովական իմաստները, դրվելով՝

ուղղականով և հայցականով. աչքերը սևանալ, աշխարհ(ը) թողնել, բալայ անգանել, գիրկ ածել, թաղարիք տեսնել, իշտահ անել և այլն. (հայցական հոլովով դրված գոյական հարադիրը կատարում է և՛ խնդրային, և՛ պարագայական պաշտոն). սեռական-տրականով. բանին կենալ, գլխին տալ. բացառականով՝ դարդէն հալի/մաշել, հոգի-հաւատէ հանել, ձեռաց գնալ/երթալ/տալ և այլն. գործիականով՝ աչքաւ-ունքաւ անել, աչօք անել, զարպով տալ և այլն։

Գոյական հարադիրն արտահայտվում է նաև՝ կրկնավոր, ինչպես և բաղհյուսական հարադրությամբ. մաս-մաս անել, կուռն-կուռն տալ, ծափ-ծափի հարկանել և այլն. աչք և ունք լարել, ուշ ու խելքը գնալ/տանել, հիմն-հատակ լինել, սարեր-դաղ ընկնել և այլն։ Միայն մեկ անգամ օգտագործված է եռաբաղադրիչ ուշ ու խելք ու միտքը տանել բաղհյուսական հարադրություն՝ Դու իմ ուշ ու խելք ու միտքն ես տարել (41), մինչդեռ ավելի հաճախ է հանդիպում նշված առաջին երկբաղադրիչ հարադրությունը (ուշ ու խելք)։ Պետք է նշել նաև իբրև հարադիր հոգնակի գոյականների գործածության փաստը. աչքերը սևանալ, դարդերը տաշել, սարեր-դաղ ընկնել և այլն։

Զափածո խոսքը միշտ էլ պահանջ ունի համառոտագրության, իսկ կրկնավոր ու բաղհյուսական հարադրություններով հարադրական բայերը դրա համար ընձեռում են լայն հնարավորություն՝ կարճառոտ տողում միտքը, հուզապրումը միանգամից մարմնավորելու իմաստային երկուերեք նրբերանգով։

Գոյականով հարադրավոր բայերի համեմատությամբ քիչ են ածականով հարադրվածները, մեծ մասամբ՝ պարզ ու ածանցավոր ածականներով. ազատ առնել/անել, անուշ անել/լինել, դատարկ նստել, ուրախ լինել, անպակաս լինել, անճար մնալ և այլն. կան նաև մի քանի բարդ ածականներով՝ արիւնաշաղախ լինել, բարեխոս լինել, ժամասէր լինել, մեղադիր լինել, վրեժխնդիր լինել:

Դերանուններից որպես հարադիր օգտագործված է միայն իրար փո-

խաղարձ դերանունը. Դատարկ վախտ,— կասեն էրկոցն,— իրար չի տամ օրորոցն (104):

Բվական հարադիրը նույնպես հանդիպում է մեկ անգամ, մինչև այժմ էլ լայնորեն օգտագործվող խօսքը մէկ անել հարադրությամբ. Քո խօսքն ինձ հետ մէկ արայ (38):

Մակբայով հարադրավոր բայերից գտնում ենք բավականաչափ գործածություններ. դէմ տալ, դուրս գալ/ելնել/տալ/հանել, մէջ բերել/ընկնել, (յ)ետ բանալ/բացել/տալ, շուռ ածել/գալ/տալ, շուրջ գալ, վեր առնել/գցել, տակը գցել/դնել[77] և այլն, որոնք մեծ մասամբ մինչև օրս էլ պահպանել են իրենց իմաստը:

Ինչպես տեսնում ենք, բերված օրինակներում հարադրվող բաղադրիչները երկուսից չեն անցնում, որը գալիս է մակբայ+բայ կաղապարի կառուցվածքային տիպի ընդհանուր բնույթից: Նման կապակցությունները շատ սակավ դեպքերում են լինում ծավալուն, որքանով մակբայը, առհասարակ, հազվադեպ է լրացում ընդունում:

Պ. Բեդիրյանի առանձնացրած «բայ+կապ—կապի խնդիր»[78] կառույցով գործածվում են կրակի մէջ ընկնել, գայլի հետ բաս անել/բըռնել, սրտի մէջը դաղել հարադիր բայերը:

Ձայնարկությամբ և բնաձայնական բառերով հարադրված հարադրավոր բայերին բայական բաղադրիչ են ծառայում գերազանցապես անել, կանչել, տալ, քաշել բայերը. ախ քաշել, ախ-վախ տալ, երանի տալ, զռանչ կանչել, վայ տալ և նման այլ հարադրական բայեր, որոնք այժմ էլ գործածական են ժողովրդի միջավայրում:

Կախյալ բայարմատներով և բառերով հարադրված բայերից հաճախակի են օգտագործվում նշանց տալ-ը և մտիկ անել-ը: Սրանց կողքին հանդիպում են և նման կազմություններ՝ անց կենալ, բաց թողնել, դադ անել, բարկ անել/տալ, ցույց տալ, փուլ գալ և այլն, որոնք նույնպես կայունացած իմաստներով գործածվում են ինչպես բարբառներում, այնպես էլ գրական հայերենում:

Մ. Աբեղյանի հավաստմամբ, հայերենում հարադիրն ու բայը «կարող են հաճախ մեկ բառով փոխանակվել», ստանալով «մեկ բառի նշանակություն»[79]: Այս իրողությունը տեսնում ենք նաև Հովնաթանի տա-

---

77 Ըստ Մ. Աբեղյանի «տեղ, տակ, հետ բառերը բայերի հետ դրվում են հոդով» (Աբեղյան Մ., 1974, 139):

78 Բեդիրյան Պ., 1973, 193:

79 Աբեղյան Մ., 1974, 137:

ղերում, որտեղ նման բառազույգերը օգտագործված են համարյա հավասարաչափ: Սակայն դրանց շարքում ակնհայտորեն տարբեր է գոհութին տալ-գոհանալ, գովասան(ք) տալ-գովել, դադ անել-դադել, պարգալ-պարել, վար անել-վարել, փոշիման լինել-փոշ(ի)մանել *(զղջալ բայի զուգահեռ կիրառությամբ) զույգերի գործածությունը, գերիշխողը համադրական ձևերն են, որոնք, թերևս, կարելի է համարել գրական աշխարհաբարի որոշակի արտահայտություն:*

Ինչ վերաբերում է զուգադրական (զուգորդական) բայերին, ապա սրանց զուգադրվող ընդհանրական իմաստով միակցված բաղադրիչները ընդունված կարգով գրվում են միության գծիկով կամ էլ հարադրվում են առանց կետադրական նշանի: Տաղերում գերակշռում է վերջին ձևը. հանդիպում են և ստորակետով հարադրական բայեր, որոնցում առանձնացվում են բացահայտ զուգադրական բայերը. Դու գաս, անց կենաս *մեր դուռըն (65),* ...գընացէ՛ք, տեսէք, *թէ իմ եարըն տա՞ն այ,* Երթամ, աղաչեմ, *բալքի ըռահմ անի, դուռըն բանայ (24), Քեզ ի՞նչ եմ արել, որ ինձ* թարկել ես, մոռացել... *(30) և այլն:*

Նման երկբաղադրիչների կողքին հանդիպում են նաև եռաբաղադրիչ զուգորդական բայեր, և այդ դեպքերում արդեն հարադրավոր բայերն ունենում են ելակետային տարբեր պատկանելություն: Սովորաբար առաջին և երկրորդ բաղադրիչները լինում են հրամայական, երրորդը՝ ըղձական եղանակի բայեր. ինչպես. ...բեր լից խմենք *ջամն (145): Կամ էլ՝ երրորդ բաղադրիչը պատճառական կերպի բայ է. Կարասներն բաց,* եկ՝ խաբար բեր, *մեզ ուրախացուր,* ...*շուշէքն* լից բեր, *թասով* խմացուր *(160): Երկու դեպքում էլ ճիշտ և ճիշտ այն կազմություն-կառուցվածքն է, ինչ տեսնում ենք մերօրյա ժողովրդախոսակցական լեզվում:*

Զուգադրական բայերի բաղադրիչներից մեկը կարող է լինել նաև հարադրական կազմություն. նստել թամաշա անել, գնալ երկիր պագանել, խմել բոց դառնալ *և այլն: Այդպիսիք բանաստեղծական հյուսվածք են ներմուծվում բոլոր այն դեպքերում, երբ անհրաժեշտ է լինում արտահայտել փոխանցվող շարունակական գործողություն:*

Ալ. Մարգարյանը գտնում է, որ միջին հայերենում «...նվազում են գրաբարի համար սովորական անցյալ դերբայի և դիմավոր բայի հարադրությամբ կազմված ձևերը»[80]*: Իրոք, այդ ձևերը շարունակում են նվազել և հետագայում, և, բնորոշ է, որ Հովնաթանի տաղերում հան-*

---

80 Մարգարյան Ալ., *1966, 317*:

դիպում են գրաբարյան կազմության միայն երեք դեպք։ Դրանցից երկուսը վերը նշված բնույթի են՝ *ժամհարն* առեալ գնաց, *գինովցաւ...* *(141), Քո սիրուդ* ճալեալ մաշեցայ... *(45)*։ Երրորդը կազմված է զույգ անցյալ դերբայների հարադրումով՝ *Յաչ և յահեակ մարդիկք կացեալ,* Տառ(ե)ալ, *իւրեանց դուռն* ցուցեալ *(187)*։

Դառնալով հարադրավոր պատճառական բայերին, նշենք, որ դրանցից Հովնաթանի տաղերում գործածված են երեքը. այն է՝ գրել տալ — *Թումանը ... Հիմի* գրել տայ, *դատաստանին կարդայ (131)*, գողանալ տալ — *Ժամհարն ...հաւըն* գողանալ ետուր *(141)*, կանչել տալ — Կանչել տամք *տէր Յարութիւն[ն] (187)*։ Տալ *բայական բաղադրիչը ամենուրեք եռադաս է։ Որոշակիորեն նկատելի է այն, ինչ արձանագրել է Ալ. Մարգարյանը. «...ուշագրավ պատկեր է ներկայացնում միջին հայերենը, որտեղ ի տարբերություն գրաբարի, գերիշխողը... նախադաս անորոշի և եռադաս տալ բայի համադրությամբ կազմված ձևերն են»*[81]։ *Նման վերափոխությունը ժողովրդախոսակցական լեզվի օրենքներով ձևավորվող աշխարհաբարի ընդհանուր օրինաչափություններից է, որի հետագա խորացման վկայություններից մեկն էլ Հովնաթանի տաղերում օգտագործված բայական հարադրությունների կառուցվածքային բնույթն է՝ դարձվածաոճական յուրօրինակությամբ։ Այս առումով հետաքրքիր է անդրադառնալ նաև տաղերում տեղ գտած հարադրական բայերի դարձվածաբանական արժեքին, դրանց իմաստաոճական առանձնահատկությանը։ Դարձվածային հարադրական բայերի բաղադրիչները միասին վերցրած արտահայտում են փոխաբերական նշանակություն՝ բանաստեղծական հյուսվածքում վերաճելով ոճական պատկերավոր ձևերի։ Անշուշտ, հենց այդ էլ նկատի ունենալով, Ս. Այտընյանն իր ժամանակին հարադրական բայերը համարել է «ոճեր»*[82]։

Լեզվի հարստությունը հարադրավոր բայերով ինքնին լեզվի «երկարատև զարգացման» վկայություն է։ Հովնաթանի լեզուն հարուստ է ժողովրդախոսակցական լեզվից եկող հարադրություններով ու դարձվածներով, որոնք բնութագրվում են փոխաբերական-պատկերավոր լայն հնարավորությամբ, խոհի, հուզապրումի, վերաբերմունքի երանգներ ու նրբերանգներ արտահայտելու ճկունությամբ։ Որոշ նմուշներով տեսնենք, թե բանաստեղծական տողին ինչպիսի հնչեղություն են հաղոր-

81 Նույն տեղում, *438*։

82 Այտընյան Ս., *1866, 317*։

դում, օրինակ արիւն անել, սև անել (գլխին), դարդերը տաշել, պատանք մտնել, բոց դառնալ, ջիկարն այրել, հոգին հանել, սիրտը երել *և այլ դարձվածային հարադրավոր բայերը։ Թվարկվածներից* արիւն անել *և* սիրտ երել *հարադիր բայերը հանդիպում են հենց կողք-կողքի. Շատ մարդոյ* սիրտ երել, արիւն ես արել... *(16),* Արիւն անելու *մի՞տք ունես, հագել ես կարմիր սարասար (32)։ Ինչպես այս, այնպես էլ փոխաբերորեն նորաիմաստավորված նման սեղմ դարձվածներով միանգամից պատկերվում է թե՛ բանաստեղծի, թե՛ նրա սիրած էակի նկարագիրը, վիճակը, վերաբերմունքը. Աչքերդ ծանր շուռ կածես,* հոգիս կու հանես *(45), Իմ սրտին կու տաս սրած դանակով,* Ջիկարս այրեցիր *անշէջ կրակով (49), Աչւերս* դարձել այ արիւն ... *(53), Նաղաշին սիրտըն* արիր դուման *(76) և այլն։*

Սիրտ, արյուն, ջիկար, հոգի, աչք, դուման ... *գոյականներով և վերը հիշատակած բայերով կազմված փոխաբերական նման և համանրման դարձվածներ հետագայում լայնորեն հանդիպում են ոչ միայն Սայաթ-Նովայի, այլև Խ. Աբովյանի, ավելի ուշ ժամանակներում Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Հովհ. Շիրազի, Պ. Սևակի ստեղծագործություններում, որ վկայում է հարադրավոր բայերի և դրանց դարձվածաբանական դերի ու արժեքի կենսունակությունը ժողովրդախոսակցական լեզվում։*

Փոխաբերական առումով օգտագործված հարադիր բայերով դարձվածներ ենք գտնում նաև Հովնաթանի երգիծական տաղերում, ինչպես՝ ...Ամենն սև անեմ *ձեր գլխին (98)։ Մեկ այլ դեպքում՝ Ո՞ւր է հանց խոճայ, որ ղայրաթ քաշի, Ընկած փէշաքրին* դարդերը տաշի *(80), ապա՝ Ջլնի շատ* խմէք դառնաք բոց ... *Ձեր ծնողաց* սիրտն չինէք խոց *(188)։* Դարդերը տաշել, խմել բոց դառնալ, սիրտը խոց չինել. *թվում է, սրանք արդեն, հեղինակի ստեղծած դարձվածային միավորներ են՝ լիցք առած հանրության այն նույն լեզվամտածողությունից, որով սնվել է հայոց բանաստեղծությունը, ինչպես Հովնաթանից առաջ, այնպես էլ մինչև մեր օրերը։*

Ինչպես վերը բերված բոլոր, այնպես էլ այս վերջին դեպքում, բայը, ի տարբերություն ազատ կապակցություններում ունեցած իր նշանակության, ամենուրեք կրում կամ թաքցնում է այլաբերական երանգ։ Հենց դա էլ հնարավորություն է ընձեռում բառային տարբեր միջավայրում կամ իրադրության մեջ միևնույն երևույթը բնութագրել տարբեր հարադիր բայերով. այսպես՝ «խենթանալ, ցնորվել» իմաստն արտա-

հայտնելու համար բառային այլևայլ իրագրության մեջ Հովնաթանն օգտագործում է խելքն առնել/գնալ/տանել, ուշ ու խելքը գնալ/տանել, «տանջել, չարչարել» իմաստով՝ հոգին առնել, ջիգյարն այրել, սիրտը այրել/դաղել/վառել, քարէքար տալ հարադրավոր բայերը։

Դարձվածային գերադաս բառերի իմաստային դաշտերը բնութագրելիս Պ. Բեդիրյանն առաջին հերթին նշում է մարդու մարմնի մասերի անուններով կազմվածները[83]։ Դա նույնությամբ տեսնում ենք Հովնաթանի տաղերում, որտեղ ամենից ավելի օգտագործված են խելք ու սիրտ, ապա՝ աչք, գլուխ, ականջ, ձեռք բառերով բաղադրված հարադրական բայեր։ Սա միանգամայն հասկանալի է, քանի որ տաղը քնարերգական ժանր է, իսկ քնարերգության առարկան ամենից առաջ մարդն է։ Միաժամանակ այստեղ ևս հարադրական բայերի «գլխավոր ուժը» գոյականներն են։ Սակայն, ինչպես ավելացնում է Պ. Բեդիրյանը, «կարելի է առանձնացնել մի խումբ բայեր, որոնք ամենաակտիվ մասնակցությունն են ունենում դարձվածների կազմությանը. անել, լինել, տալ, գնալ, բերել, ընկնել, մնալ, թողնել, դնել»[84]։

Արդի հայերենի համար թվարկվող այս բայերը նույն ակտիվ դերով հանդես են գալիս Հովնաթանի տաղերում օգտագործված հարադրավոր բայերում ու դարձվածներում։ Դա նշանակում է, որ թվարկված բայերը այդ դերն արդեն նվաճած են եղել Հովնաթանի ապրած ժամանակներում (ինչ խոսք, դրանից էլ առաջ), և իբրև կայուն կառուցվածքներ XVII դարի վերջերից հաստատված են մեր լեզվում՝ հների կողքին, հարստանալով և նորակազմություններով։

Հովնաթանի տաղերում օգտագործված գրաբարյան կամ գրաբարատիպ կառուցվածքի հարադրավոր բայերը գործածության տեսակետից նկատելիորեն զիջում են աշխարհաբարյան ձևերին։ Գրաբարյան նախդրավոր հարադրական բայերից են առ Քրիստոս երթալ, յանձն առնել (փոխն. առնուլ), յերկինս համբառնալ, ի գլուխ հանել, ի գործ ածել, ի քուն լինել և այլն։ Սրանց կողքին նշենք և ազատ առնել, երկիր պագանել (երկրպագել), մեղաց դառնալ, պատասխանի տալ և այլ հարադրավոր բայերի առկայությունը։

Ինչպես աշխարհաբարյան, այնպես էլ գրաբարյան հարադրավոր բայերի կազմությանը գործուն մասնակցություն է բերում լինել բայը,

---

83 Բեդիրյան Պ., 1973, 91։

84 Նույն տեղում, 92։

որը կիրառված է ներկայի՝ հաստատ լինիք, երկրորդ ապառնու՝ արժան լիցիս/եղիցին, անպակաս լիցի, բուն հրամայականի՝ ողջ լերուք, ուրախ լերուք ձևերով։ Լինել բայի, ինչպես և այլ դեպքերում, շատ հաճախ գրաբարյան կամ գրաբարատիպ ձևերին զուգահեռ գործածվում են աշխարհաբարյան ձևեր. այսպես՝ պատասխանի տալ և պատասխան տալ։ Ընկնել բային զուգահեռ օգտագործվող անկանիլ բայը հանդիպում է բալայ անգանել, թալակ անկանել հարադրավոր բայերում։ Հետաքրքիր է պատահաս ընկնել/բալայ անգանել հարադրավոր բայերի գործածության փաստը, ինչպես և գրաբարյան բայի կիրառությունը փոխառյալ բալայ բառի հարադրումով։

Դժվար չէ նկատել, որ բառակազմական բոլոր այս միտումներով Նաղաշ Հովնաթանի տաղերի լեզուն որոշակիորեն հարազատ է աշխարհաբարին։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՈԼՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

1. Անվանական հոլովում. հոլովման տիպեր

Ինչպես հայտնի է, ածականը, թվականը, դերբայը միջին հայերենի ժամանակաշրջանից սկսած կորցնում են գոյական անվանը թվով ու հոլովով համաձայնելու գրաբարին բնորոշ առանձնահատկությունը։ Նման համաձայնության դեպքեր Հովնաթանի տաղերում հազվադեպ են և հանդիպում են միայն գրաբարատիպ կառույցներում (ինչպես՝ Պատասխանի թղթոյն խակակիրթ կրճնաւորին միոյ..., 147)։ Նշված խոսքի մասերը տաղերում հոլովվում են միայն փոխանունաբար կիրառվելիս. ո՞ր մէկին տամ (121), Մանողին աչքիզ ավքար կանի (108), Քեզ տեսնողին կու մնամ մաթ (61) և այլն։

Ուրեմն. Հովնաթանի տաղերի հոլովման համակարգը բնութագրվում է գոյական անվան և դերանվան հոլովումներով։

Հոլովման տիպերը սորև առանձնացնում ենք սեռական-տրական հոլովաձևերի հիման վրա, նկատի ունենալով, որ հոլովիչները դրսև-

վորվում են սեռական-տրական հոլովներում. մյուս հոլովներում դրանք մեծ մասամբ չեն պահպանվում, յուրաքանչյուր հոլով ունի իրեն հատուկ ձայնավորը (ինչպես՝ բացառական -է), բացի այդ, տաղերում ավելի շատ են միևնույն (սեռական-տրական) հոլովաձևով վկայված բառերը, այսինքն՝ հոլովման հարացույցերն ամբողջական չեն։ Այդպիսին է և -ի հոլովումը. Հովնաթանի տաղերում ևս այն իրեն է ենթարկում իմաստային և ձևական ընդհանուր հատկանիշներ չունեցող գոյականներ՝ ագռափի, բարեկենդանի, գանգատի, դարպասի, թանի, երեսի, իլիկի, լուսարարի, խելքի, կանթեղի, ճանգստի, ձայնի և այլն (տե՛ս Հավելված Ա)։

Իրավացի է Է. Թումանյանը, գրելով, թե «Նաղաշ Հովնաթանի ստեղծագործություններում արդեն ճնշող մեծամասնությամբ նկատելի է անցումն -ի հոլովման»[1]։ Այդ հոլովման է ձգտում նաև փոխառյալ բառերի մեծագույն մասը՝ աշխանի, ղազանի, մաքլաքի, բաղալի, սատայի, տօլոփի, ֆրընայի և այլն։

Մյուս հոլովումները սահմանափակվում են մասամբ ձևական, մասամբ էլ իմաստային ընդհանրություն ունեցող բառախմբերով, որոնց հոլովումը գնալով հիմնականում դառնում է ավանդական։ -Ո(յ) և -ու հոլովումները հատուկ են -ի վերջնահանգ ունեցող բառերին։ Այդ հոլովումներին պատկանող բառերի շարքում նկատվում են զուգահեռ կիրառություններ, որոնցում (մասնավորապես՝ գինի, ճոգի, մարդ, սէր) գերակշռում է -ո(յ) հոլովումը։ -Ո(յ) հոլովման են ենթարկվում հետևյալ բառերը՝ առուոյ, ամսոյ, այգւոյ, աստուծոյ, եկեղեցոյ (-ւոյ), թշնամոյ, թղտոյ, մարմնոյ, ոսկոյ, ջրոյ, սեղանոյ, սգոյ և այլն։

-Ու հոլովումը պահպանվում է արեւու և մանու հոլովաձևերում։ Իսկ գրաբարյան -ո(յ) հոլովման պատկանող բառերի (գինի, թշնամի, մատանի, սիրելի և այլն) -ու հոլովմամբ հանդես գալը պայմանավորված է ոյ>ու փոխանցումով։

Զևականորեն են խմբավորվում և -եան, -եա հոլովումները, համապատասխանաբար -ում, -ուրդ և -ութիւն-ով վերջավորվող բառերի համար, այսպես. -եան — գալստեան, ժողովրդեան. -եա — ազատութեան, անմահութեան, արքայութեան, գուշակութեան, եղբայրութեան, խաղաղութեան, ճաշութեան, յայտնութեան, ողորմութեան, պարկեշ-

[1] Туманян Э., 1962, 40.

տութեան*, վկայութեան, տեսութեան, ցնծութեան, ուրախութեան, փոռձութեան *և այլն։*

Գրաբարյան ձայնորդահանգ գառն, դուռն, ձուկն, մուկն, նուռն բառերը, տուն արմատը, նրանով կազմված բաղադրությունները հոլովվում են վերջընթեր ձայնավորի ա հերթագայությամբ. ամառան/ամռան, աւեգական, գառան, դռան, ձկան, մեծատան, մկան, նռան, շան, վեռնատան, տան *և այլն։*

Իմաստային հատկանիշով խմբավորված տեղանունները պահպանել են գրաբարին բնորոշ –ա ձայնավոր հոլովումը. Աշտարխանայ**, Գուրջստանայ, Եւևանայ, Հնդստանայ, Ըռվակայ, Իսպահանայ, Վրաստանայ:

–Ան *հոլովման պատկանող բառերը սակավաթիվ են.* գաւնան, ճամբաւձման, մանկան:

Մեկ-երկու բառով են հանդիպում տաղերում հետևյալ հոլովումները — Բօլվա, Թորվա(ն). տիրոջ, տեղոջ, հօր, կտեր։

Իբրև գրաբարատիպ «խառը» հոլովում կարելի է առանձնացնել գինի, ձեռն *գոյականների սեռական և գործիական հոլովաձևերի կիրառությունները.* գինոյ (–ւոյ)–գինեաւ, ձեռի(ն), ձնռաւ *(փխն. ձեռամբ)։*

Ներկայացնենք տաղերում գործածված հոլովման տիպերի զուգաձևությունները (տե՛ս աղյուսակ 1)։

Հոլովման տիպերի զուգաձևություններում պարզորոշ է –ի *հոլովման գերիշխող դիրքը, այն հանդիպում է զուգաձևությունների մեծ մասում, այլև աչքի է ընկնում հաճախական գործածությամբ։*

2. Հոլովակազմություն

Տաղերի լեզվին բնորոշ է հոլովակազմության մասնիկային եղանակը, որը դրսևորում է հոլովանիշ թեքույթների բազմազանություն։ Հոլովների կազմության գրաբարյան, միջին հայերենյան ձևերի կողքին նկատվում է բարբառային տարրի ներհոսք, ինչպես, օրինակ, սեռական-տրական հոլովների կազմության ժամանակ. Դուրս *տար* այգինուն *տատաշն (150), Իրանց* գլխու *օրէնք կապին (101), Տա Փանու* գլխէն .. *(117), Այսօր նման է գարնան* ճաւէն *(176), Երեսիդ գոյն և միս չկայ, Յիսուն* տաւէն *փթած մեռել (136), Մէկ* օւէն *հիւր (184)։*

---

* *Գործիական պարկեշտութեամբ հոլովաձևից։*

** *Բացառական Հաշտարխանայ հոլովաձևից։*

*Հոլովման տիպերի զու- գաձևություններ**	*Օրինակներ*
ի/ու	*Աբրահամի/Աբրահամու* *Թիֆլիզի/Թիֆլիզու* *էշի/իշու* *հաւերի/հաւուցն* *մարդի/մարդու* *մոնթերի/մոնթերու (Ն)*
ի/ո(յ)	*գայլի/գայլոց* *երեխի/երեխոց* *թղթի/թղտոյ (Ն)* *ծառի/ծառոց* *մարդի/մարդոյ* *ջրի/ջրոց* *տղի/տղայոց*
(ոյ,) (ւոյ) /ու	*գինոյ (ւոյ) /գինու* *թշնամոյ/թշնամու* *հոգոյ (ւոյ) /հոգու* *մարդոյ/մարդու* *սիրոյ/սիրու* *սիրելոյ (ւոյ) /սիրելու (Ն)*

Գլխէն, հաւէն, տարէն *բացառականաձև սեռական-տրական հոլովի գործածություններ են. լեզվական իրողություն, որ Ն. Ջղ.-ում արձանագրել է Հր. Աճառյանը*[2]*: *Հաւայ–հաւէ *փոխանցումը գործում է նաև Մղ.-ում*[3]*:*

Եզակի ուղղականն *արտահայտվում է բառի ուղիղ, անփոփոխ ձևով՝ չստանալով ձևաբանական որևէ ցուցիչ: Հոգնակին աչքի է ընկնում թվանիշ ձևույթների բազմազանությամբ (տե՛ս Հոգնակերտ ձևույթներ):*

Հայցական հոլովը բնութագրվում է հիմնականում աննախդիր կիրառությամբ: Հոգնակի հայցականն աննախդիր է միայն -եր, -ներ *հոգնակերտների գործածության դեպքում.* զբանս, զյանցանս, զննջե–

* *Առավել հաճախական հոլովման տիպերը հիշատակված են սկզբից. բցռ. -մր Աբրահամ, թուղթ, թշնամի բառերի, որոնք հավասար գործածություն ունեն:*

2 *ԱԲՆՋ, 197:*

3 *ԱՄԲ, 59:*

ցեալսն, *սակայն՝ Կատուն լիզում է* ամաններն *(106),* Կարասներն *բաց ... (60), Նստիր քեզ ասեմ* դարդերս *կարգով (49) և այլն։*

Հոգնակի սեռական-տրական կազմությանը դառնալիս, թեքույթներում որոշակի է միասնական -ց *տարրի առկայությունը.* -աց *(աչաց, ընկերաց, խելաց, ձեռաց),* -եաց *(աղանեաց),* -անց *(ծաղկանց, մըկանց, մանկանց, քարանց),* -ենց *(Անդրիասենց, Աստւենց, Գղրենց),* -ունց *(Շահվերտունց),* -ից *(աղօթից, ընչից, համբուրից, ոտից, քահանայից),* -ոց *(ծառոց, շատոց, տղայոց),* -ուց *(հաւուց)։ Միջին գրական հայերենի հոլովների կազմությունը ներկայացնելիս հոգնակի սեռական-տրական հոլովի համար տարբերակվում է թեքույթների երեք տեսակ։ Երրորդ տիպի բաղադրյալ թեքույթները, ինչպես համաստում է Լ. Հովսեփյանը, հոգնակիության իմաստն արտահայտում են կրկնակի՝ և՛ հոգնակերտի, և՛ հոլովանիշ տարրի միջոցով*[4]*. եր+աց, (ի)կ+աց, վտ(ի)+ոց և այլն։ Տաղերում գործածված է կիրառությամբ հիշատակված թեքույթների նման, բայց և կազմությամբ եռաբաղադրիչ* ուերաց= *վի+եր+աց թեքույթը. Մայիլ եմ* աչուերացդ *անգին ալմասին (203)։ Օգտագործված հաջորդ բաղադրյալ թեքույթն է* երու=*եր+ու՝* մանողներու*(ն),* մոնքերու*(ն), (118),* գօզալներու*(ն), (19)։*

Հոգնակի սեռական-տրական հոլովի -աց *թեքույթից հետո գործածությամբ հաճախական է* -ի-*ն, որը հանդես է գալիս* -եր, -ներ *հոգնակերտների համադրմամբ՝* աչքերի, բնկերի, կուրերի, մշակների, չամամների, ունքերի, փայտերի, տէրտէրների: *Միաժամանակ արդեն կարելի է նշել հոլովման վերջամասնիկների հաջորդման որոշակի կարգի առկայությունը, ասել է՝ հոլովանիշ թեքույթների նկատմամբ հոգնակերտ ձևույթների նախադաս դիրքի բացարձակ գործածությունը (հմմտ.* աչքերով, ծաղկներով, fարերով *և այլն)։*

Հետաքրքիր կազմություն է ձեռացներ *սաստական հոգնակին՝ Ամենքն միմեանց տուն գնան,* Ձեռացներն *կուժ, ճաշի աման (176, այդպես և՝ 165, 170)։*

Բացառական հոլովը նույնպես աչքի է ընկնում թեքույթների բազմազանությամբ։ Եզակի բացառականի ամենագործուն թեքույթներն են -էն, -է (այվանէն, բուրվառէն, գաւաթէն, խելfէն, ճակատէն, աէտարանէ, մալէ-խարճէ, ճաւատէ, ճպարտութենէ, վարպետէ *և այլն)։ Վեր-*

---

[4] *Ակնարկներ ..., 1975, 69։*

ջինը հանդիպում է նաև ի նախդրով՝ ի Յովճարանէ, ի չարէ: Նշենք, որ -է(ն)-ով բացառականը առավել բնորոշ է արևմտահայ բարբառներին, այլև Մղ., Ագ. և շրջակա տարածքի բարբառներին[5]:

Հոգնակի բացառականի կազմությանը մասնակցում են -աց, -ից, -է թեքույթները՝ նախդրով և աննախդիր ((ի) ձեռաց, ի մեղաց, ի չարեաց, երկնից, վանից, բաներէ, ի մարդկանէ): Հանդիպում են սիրելունանէ, կանանոցանէ բացառական հոլովաձևերը որոշակիորեն կաղմըված բացառականի վերլուծական եղանակով, այսինքն՝ բացառական հոլովը հետադրությամբ արտահայտող բարբառների նմանությամբ. Ագ.[6], Գողթան աշխարհի այլ գյուղեր (Ցղնա, Փառակա և այլն). նրանք, իրենց հերթին, ընդհանրություն ունեն արևմտահայ[7] և Ղրբ.[8], Ղրղ.[9] բարբառների բացառականի կազմության նման ձևերի հետ: Հր. Աճառյանը հիշատակում է Գիլանենցի ժամանակագրություններում վկայված աստուածանէ ձևը[10]. այստեղ բացառականի կազմության համար բառահիմքը վերցված է անփոփոխ, մինչդեռ տաղերում գործածված է սեռական-տրական հոլովաձև+անէ կառույցը: Նման կառույց հիշատակվում է նաև Վ. Ավթանդիլյանի աշխատության մեջ. բարբառներում բացառականի կազմության երկրորդ եղանակ են համարվում անա, անէ, ինա, ինի, անի, էնից, հէնի ... հետադրություններով կազմությունները, որ դրվում են սեռականից հետո[11]: Անա-անէ փոխանցումը կարելի է, թերևս, բացատրել բացառականի -է թեքույթի հաճախակի գործածության ազդեցությամբ:

Գործիական հոլովի հիմնական թեքույթն է -ով՝ բելով, խօսքով, ճոգով մոմով, սրտով և այլն: Նույնիսկ գործիականի տարբեր թեքույթներով գործածված բառերը հաճախականությամբ հակված են դեպի

5 ՀԲՆ, 83 և աղյուսակ 4:

6 ՍԱԲ, 91:

7 ՀԲՆ, 83 և աղյուսակ 4:

8 Դավթյան Կ., 1966, 105:

9 ՂՀԲ, 236:

10 ԱՔՆՋ, 198: Գիլանեցին սերել է պատմական Գիլան քաղաքից (Նախիջևանի խանություն), որ գտնվում էր Գիլան գետի ափին, Գողթն աշխարհի Ազա գյուղին մոտ (տե՛ս Հակոբյան Թ...., 1986, 861), ուստի և պատահական չէ, որ նշված հոլովաձևը պահպանվել է Ագ.-ում և շրջակա գյուղերի խոսվածքներում:

11 Автандилян В., 1955, 17.

-ով *թեքույթը, ինչպես՝* աշքով-աշքաւ, գինով-գինեաւ[12]։ *Եզակի գործիականի թեքույթներից են նաև գրաբարյան* -ամբ *և սակավ կիրառությամբ՝* -աւ, -իւ, -եաւ *թեքույթները* (խաղաղութեամբ, խնդութեամբ, անուամբ *և այլն.* ամօրաւ երկրաւ, կամաւ, ձեռաւ, նշանաւ. խաչիւ, ձայնիւ, բառիւ, սրտիւ, նիւթիւ. բարեաւ, գինեաւ):

Հոգնակի գործիականն ունի համարյա հավասար գործածությամբ երկու թեքույթ՝ -ով, -օք (աղաշանօք, աշօք, արտասուօք, ձեռօք, տեսօք): -Ով *թեքույթը համադրվում է* -եր, -ներ *հոգնակերտներին՝* աշքերով, ծաղիկներով, ունքերով, քարերով։ *Ուստի և, կարելի է ասել, որ գործիական հոլովը՝* -ով *թեքույթի լայն գործածությամբ և ընդհանրացմամբ, ձգտում է միաձևության։*

Գր. Վանցյանի հավաստմամբ XVII դարում -ում-*ով ներգոյականն «արդեն ժողովրդական էր»*[13]*։ Ուսումնասիրողները գտնում են, որ Հովնաթանի տաղերում իշխում է* ում-*ով ներգոյականը։ Է. Թումանյանն ուղղակի գրում է, որ տաղերգուի լեզվում «քանակը փոխվեց որակի՝ առաջացավ ... ձևով ինքնուրույն ներգոյական հոլով»*[14]. այգում, ծոցում, մեջլիսում, սրտում, քուշում *և այլն։*

Հոգնակի ներգոյականը գրաբարատիպ է, ձևավորվում է ի նախդիր+հոգնակի հայցական կառույցով՝ յաշխարհս, յերկինս, ի կանայս *և այլն։*

Գոյական անվան հոլովական հարացույցները առավելապես պակասավոր են, քանի որ անունները գործածվում են մեծ մասամբ ոչ բոլոր հոլովներով, հաճախ վկայված օրինակները միայն մեկ հոլովաձևի եզակի կիրառություններ են։

3. Հոգնակերտ ձևույթներ

Միջին հայերենում արձանագրվող հոգնակերտ ձևույթների աշխուժացման երևույթը՝ շարունակվում է հետագայում[15]*, որոշակիորեն դրսևորվելով Հովնաթանի ստեղծագործության մեջ։ Տաղերում գոյական անվան հոգնակին կազմվում է ստորև նշվող հոգնակերտներով. պարզ-*

---

12 Կարգ *և* սիրտ *բառերի գործիականի թեքույթների զուգաձև կիրառությունները հավասարաչափ են։*

13 Վանցյան Գ., *1906, 29։*

14 *Туманян Э.*, 1962, 41.

15 *Автандилян В.*, 1955, 9—10.

-այք, -ան, -անք, -եղէն, -ենի, -ենք, -եր, -իկ(իք), -ինք, -նի, -ներ, -ունք, -օրայք. բաղադրյալ- -երք (եր+ք), -րանք (եր+անք), -ւեր /-վեր/-վիր (ավ/ի+եր/իր[16]), -անիք (անի+ք)։

Վերջին դեպքում (անիf) գործ ունենք Հր. Աճառյանի արձանագրած անի՝ «մասնավոր հոգնակի մասնիկի հետ», որ «կցվում է պարզ եզակի ձևի վրա կամ էr, f ձևով հոգնակիի վրա և կամ ինքը ստանում է f մասնիկը»[17]։ Հովնաթանի տաղերում նման կազմությամբ գործածված է կանանիf բառը։

Թվարկված հոգնակերտներից առավել գործածական են և ձևական հատկանիշներով խմբավորվում են հետևյալ ձևույթները. էr՝ գործածվում է միավանկ (այծ, բան, խալ, ցաւ) և մուկն, ձուկն, գառն, դուռն, նուռն, ձայնորդահանգ բառերում, -նէr՝ երկվանկ բառերում (անուն, ընկեր, կարաս, սեղան), -f՝ ի, ա, ձայնավորներով վերջացող (ագի, որդի, քահանա) և այլ բազմավանկ բառերում (տե՛ս Հավելված Բ)։ Այս ձևույթները դրվում են բառի ուղիղ ձևի վրա։ Չնայած արդի հայերենում ընդունված չէ սեռական հոլովաձևից հոգնակի կազմելը, սակայն այդպիսին հանդիպում է տաղերում՝ աստղեր (132)։ Մյուս հոգնակերտները դրսևորում են գործածության նվազ հաճախականություն. ունf—աստղունք, ծաղկունք, մանկունք, մանրունք, մկունք, շրթունք, անf—թիանք, սրբանք, փշրանք. այf—կանայք, պարոնայք, եղէն—խեցեղէն, պղնձեղէն. ան—ձիան, ենի—շուշենի. ինf—միջինք, նի—ձեռնի. օrայf—վանօրայք. nf—շատոք։ Իսկ բաղադրյալ հոգնակերտները սահմանափակվում են մեկական-երկուական կիրառությամբ (բնչէrf, դեղրանf, աչւեr, ծծվեr/վիr)։

Հոգնակերտները խմբավորվում են նաև ըստ իմաստային հատկանիշների. գերդաստան, տոհմ, ազգակցություն են արտահայտում անf, ենf, ունf մասնիկները՝ Անդրիասենք, Ասաւենք, Գզրենք, Կիսատանք (-ենք), Մարգարենք, Մարութենք, Շահվերտունք, Պուլզիկենք, Տերտերենք։

Միևնույն բառի տարբեր հոգնակերտ մասնիկներով զուգահեռ գործածությունը տաղերում շատ չի, եթե նկատի ունենանք միջին հայերենում հոգնակերտների բազմազանությունը՝ պայմանավորված նրա ժամանակատարածքային լայն ընդգրկումով։

---

16 Ա. Բարսայանի վկայությամբ, -էr հոգնակերտի տարբերակ դիտվող -իr-ը հաքաղված է Բր.-ին։ Бабасян А., 1953, 16։

17 ԱՔՆՁ, 174—175։

Ուրաշկիրեն տաղերի լեզվում նկատվում է -եր, -ներ *հոգնակերտների մեծ հաճախականություն, որոնք ստանում են ընդհանրական արժեք, որքանով օտար բառերի հոգնակին ևս գերազանցապես կազմվում է նշված* -եր, -ներ *մասնիկներով՝* բլբուլներ, դարդեր, դիշմաններ, եաղմուրլուխներ, թաւադներ, ճամալներ, սազեր, ֆուրֆչիններ, ֆիլաֆներ *և այլն։*

Հարկ է ասել, որ բաղադրյալ հոգնակերտները գործածական են նաև հայ բարբառներում[18], *ինչպես՝* -վի *և սրանով բաղադրվող հոգնակերտները՝ արևմտահայ բարբառների գերակշռող մասում և Իրանի տարածքի բարբառներում.* -երf, -րանf *տիպի բաղադրյալ հոգնակերտները՝ մի քանի արևմտահայ բարբառում (Մուշ, Տգ., Հզզ., Ալշ., Մնզ., Խլ., Վան), Թբ.-ում, տարածականորեն միասնություն կազմող Մղ., Ագ., Ղրբ. բարբառներում։*

4. Դերանվանական հոլովում

Իմաստային խմբավորումով տաղերում գործածված դերանունները հարազատ են հայերենի բոլոր դրսևորումներին։

Սրանց կողքին գտնում ենք դերանուններ նաև բարբառային ձևերի կիրառությամբ, լայնորեն գործածվող էս, էն *դերանունները բարբառային ընդհանրական երևույթ են, պայմանավորված գրաբարյան* այ-*ի պարզեցմամբ։* էտ *դերանունը հանդիպում է բացառական և գործիական հոլովաձևերով՝ մեկական կիրառությամբ՝* էնտուց *(87, 152),* էնտով *(114),* էտնով *(122)։ Ցուցական դերանունների թեք հոլովաձևերում հավելական տ(դ)-ի առկայությունը բնորոշ է արևմտահայ բարբառներից մի քանիսին (Մուշ, Խն., Ալշ., Մնզ.), Հայկական ԽՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ, Իրանի տարածքների բարբառներին*[19]. *հավանական կարելի է համարել, Ագ., Ջղ., Ն. Ջղ., Մղ. բարբառների ազդեցությունը. նշված հոլովաձևերը արձանագրվել են նաև Արտ. ու Թբ. բարբառներում*[20]*։ Դերանունների հոլովման հարացույցում* էնտով, էտնով-*ը* -ով *գործիականի միակ կիրառություններն են։ Այնուհետև հանդիպում են* էնտեղ, էստեղ, էնչափ *ձևերի մեկ-երկուական գործածություններ։ Ի տարբերություն* ինչո՞ւ, ինչի՞ *հարցական դերանունների մեկական կի-*

---

18 *ՀԲՆ, 82 և աղյուսակ 4։*

19 *Նույն տեղում։*

20 Բաղդասարյան-Թափալցյան Ս., *1973, 225.* ՂՀԲ, *272.* Ջահուկյան Գ., *1969, 54։*

բառությունների (45, 210) նկատելի է ե՞ր հարցականի լայն գործածություն։ Մեկ անգամ է հանդիպում և իմին «մի բան» անորոշ դերանունը, որը, ինչպես արդեն նշվել է, առկա է Ն. Ջղ. և Թբ. բարբառներում[21]։ Ինչպես ոչ ոք, այնպես էլ ոչ ով, ոչ-ով, ոնչով ժխտական բարբառային դերանունները նույնպես տաղերում ունեն մեկական գործածություն (53, 58, 104, 152)։ Ըստ Աճառյանի, վոչօվ, ոնչով ձևերը վկայված են միայն «Ջմիռնիոյ աղերսագրում»[22]։ Էնօր կեօրայ է տան մէջն սրղալ (88) նախադասության էնօր սեռական-տրական հոլովաձևը բնորոշ է արևմտահայ բարբառներին. մասնակի հնչյունափոխություններով այն գտնում ենք Վանի (ինոր), Պլ., Մլթ. (անօր) և Կար. (էնօր) բարբառներում[23]։ Նշված այս կիրառությունները եզակի են, տաղերում գործածված են խոսքային տարբեր շրջապատներում և արձանագրվում են պարզապես իբրև տարբեր բարբառներից եկող լեզվական իրողություններ։

Առավել ամբողջական է անձնական դերանունների հոլովման հարացույցը, որտեղ, սակայն, բացակայում է գործիական հոլովը։ Մնացյալ դերանունների հարացույցները պակասավոր են։

Դերանվանական և անվանական հոլովումներին դառնալով, պետք է նշել, որ անվանական հոլովում է նկատվում այլոց, ուրիշին, մերայ[24], մերոց, ումնից դերանունների հոլովման մեկական գործածության ժամանակ։

Ինչպիսի՞ օրինաչափություններ են նկատվում դերանվան հոլովումը քննելիս։ Իրենց պակասավոր հարացույցներով, գրաբարյան են ցուցական դերանուններից՝ այս, այն, սա, նոյն, անորոշ՝ ոք, որոշյալ՝ ամենայն դերանունների հոլովումները։ Դոքա, մերք, այլք դերանունները գործածված են միայն սեռական-տրական հոլովաձևերով՝ դոցա, մերոց, այլոց. քանի, ոք դերանունները՝ միայն ուղղական և հայցական հոլովներով։ Գրաբարյան հոլովաձևերով այս կամ այն դերանունը մեծ մասամբ մեկ անգամ է հանդիպում, բացառությամբ այլոց-ի, որը

---

21 ԱՔՆՋ, 217. ԼԻՀԳԲ։

22 ԱՔՆՋ, 218։

23 ԴՀԲ, 386, 394, 409, 413։

24 Մեր դերանվան սեռ.-տրական հոլովում -ո հոլովիչը հնչյունափոխվել է ա-ի, հավանորեն, հանգերի համահնչունության համար. ...մերայ... կերայ... եռուր վերայ (143)։

ոճական յուրատեսակ երանգով օգտագործվում է նաև արդի հայերենում:

Այլ պատկեր են ներկայացնում անձնական դերանունները: Ավանդական հոլովաձևերին զուգահեռ տաղերում գործածվում են և ինձի, քեզի, մեզի ձևերը: Արևմտահայ բարբառների մեծ մասը, Հայկական ԽՍՀ (Կողբ, Կամո), Ադրբեջանական ԽՍՀ, Իրանի տարածքի բարբառները[25], այլև Թբ. բարբառը[26] բնութագրվում են դերանունների թեք հոլովաձևերում ի-ի առկայությամբ: Ինձի-ն Աճառյանի վկայությամբ «նորագույն և ամենից ավելի սովորական ձևն է»[27]: Հոլովման հարացույցից դուրս են մնում ի մէնջ և ի քէն բացառականի գրաբարյան հոլովաձևերը, քանի որ, ինչպես արդեն ասվեց, անձնական դերանունների բացառականը գերազանցապես կազմվում է տրականից՝ -է վերջնահնչյունով: Առաջին և երկրորդ դեմքի դերանունների համար, հիմքերի ձևավորմանը մասնակցում է նաև -ն (մեկ անգամ միայն -մ) ձայնորդը՝ ինձնէ քեզնէ /քեզանէ/քեզմէ, մեզնէ, ձեզնէ: Երրորդ դեմքի համար իշխում է գրաբարյան բացառականը՝ ի նմանէ, ի նոցանէ:

Ից-ով բացառական է հանդիպում միայն ով դերանվան հարացույցում՝ ումնից:

ԽՈՆԱՐՀՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Տաղերի լեզվի բայական իրողությունների քննությունը ցույց է տալիս, որ նրանում արդեն որոշակիորեն գծագրվում են աշխարհաբար գրական լեզվի բայի խոնարհման համակարգի հիմնական առանձնահատկությունները:

Առկա չորս լծորդությունների* գործածությունները անհավասարաչափ են. առավել մեծ թիվ են կազմում ե, ա լծորդությունների՝ համապատասխանաբար պարզ և պարզ, ածանցավոր բայերը: Ի լծորդությանն են պատկանում բազմիլ, ծիծաղիլ, նստիլ, խօսիլ և այլ, ինչպես

* Գոլ բայը տաղերում միայն մեկ անգամ է հանդիպում՝ Թող սա, զի պարտ է և արժան, Նաղաշն պահել որպես քիրշան, Կազմել մարմնադեզ զանազան, զոր հավիւ գոյ Ցռանդստան (129):

25 ՀԲՆ, 83 և աղյուսակ 4:

26 ՂՀԲ, 271:

27 Աճառյան Հ., 1941, 108:

և բայական -իլ վերջավորությամբ հանդիպող, թերևս, բարբառային ազդեցությամբ ձևավորված բանիլ, բխիլ, ճանիլ, ջոկիլ, շանչիլ, պառկիլ, տանիլ բայերը։ Ու լծորդության բայերից գործածվում են միայն առնուլ, զգենուլ*, զենուլ*, ընթեռնուլ*, թողուլ բայերը։ Աստղանիշով բայերը պահպանվել են արևմտահայ գրական լեզվում[28], և, առհասարակ, ու(լ) լծորդությունը հատկանշական է արևմտահայ բարբառներին[29]։ Նկատենք, որ ի, ու լծորդության բայերի խոնարհման համակարգն ամբողջական չէ։

Որոշակի օրինաչափությամբ նկատվում են միևնույն բայի տարբեր լծորդություններով զուգաձև կիրառություններ։

Աղյուսակ 2

Զուգաձև բայերի տիպեր	Օրինակներ	
ե/ի	անել/անիլ	հագնել/հագնիլ
	գիտել/գիտիլ*	հասնել/հասնիլ (*)
	գտնել/գտնիլ *	ճանաչել/ճանաչիլ *
	դատել/դատիլ *	մեռնել/մեռնիլ
	լսել/լսիլ *	նստել/նստիլ
	խաբել/խաբիլ*	ուտել/ուտիլ *
	խոսել/խոսիլ	փոշմանել/փոշմանիլ
	ծախել/ծախիլ*	քաշել/քաշիլ
	կապել/կապիլ	
ե/ու	առնել/առնուլ մտնել/մտնուլ	
ե/ի/ու	թողնել/թողնիլ*/թողնուլ*	
ե/ի/ա/ու	տեսնել/տեսնիլ/տեսնալ/տեսնուլ	
ի/ա	երևիլ/երևալ	

Առավել գործուն է ե(լ) լծորդությունը, որը մեծ մասամբ առկա է նաև մյուս լծորդությունների զուգաձևությունների դեպքում։ Իսկ զուգաձև բայերից ի(լ) լծորդությամբ հանդիպողների գերակշռող մասը քերականական իմաստի (սեռային) տարբերակվածություն չունի։ Կրավորաձև են գործածված հետևյալները. Չեն խոնարհիլ, որ տան թասն (120), Աղքատ մեռելէն խռովին, Հարստին վրայ ժողվին (121), Այ

* Աստղանիշով բայերի կիրառությունները ժխտական խոնարհման են։

28 Սարգսյան Ա., 1985, 215։

29 ՀԲՆ, 100 և աղյուսակ 5։

տէր, կուզիմ՝ գլուխս բանաս, խոստովանիմ, մեղաց դառնամ (145)։ Լծորդությունների զուգաձև կիրառություններում բարբառային են կառնու (85), կառնուս (201), մտնուճ (205), կու տեսնուս (40) բայաձևերը։ Առաջին երկուսը գտանել, իջանել բայերի հետ բայական փոխանցման ենթարկվելով միջին հայերենում, ունեն բազմաթիվ կիրառություններ[30]։

* * *

Հայտնի է, որ միջին հայերենը մասնակի ձևափոխություններով ժառանգել է գրաբարի անորոշ, ներկա (ենթակայական), անցյալ, ապառնի դերբայները, դրանց հավելելով հարակատար, վաղակատար, անկատար և ժխտման դերբայները։ Հետագայում գրաբարից ժառանգած ոչ բոլոր դերբայներն են լայնորեն գործածվում, ինչպես՝ անցյալ, ենթակայական (-իչ), ապառնի (-ի, -ոց)։ Միաժամանակ, գնալով աշխուժանում են միջին հայերենի դերբայները։

Կիրառությունների բազմազանությամբ տաղերում առանձնանում են անորոշ, հարակատար, ենթակայական (-ող) դերբայները։ Անկատարը (-ում, -իս) մեծ մասամբ կազմում է բայական ժամանակաձևեր։ Սակավ է գործածված ապառնի դերբայը (-ի, -ոյ, -ու)։ Հաճախական են անցյալ դերբայի որոշչային կիրառությունները, որոնցով ստեղծվում է չափածոների գրաբարյան մթնոլորտ։ Իշխում են -ել վերջավորությամբ վաղակատարի գործածությունները։

* * *

Սեռանիշ վերջամասնիկներից են միջին հայերենում նորաստեղծ -վ- (-ւ, -ու-) կրավորակերտը՝ խոցւած, զարդարվել ես, մաշվել եմ, բացուեալ է, չի ճարվիլ և այլն. -(ա)ցն պատճառականը՝ դատարկացնել, խմացնել, կանգնացնել, կորցնել, հագցնել և այլն։ Ուրեմն և տաղերի լեզվին բնորոշ է պատճառական բայերի ժողովրդախոսակցական ձևի ամրակայում. հանդիպում է գրաբարյան պատճառական -ուցան ածանցով բայերի երեք կիրառություն միայն՝ լցուցանել (180), մեծացուցանել (124), իջացուցեալ (187, փխն. իջուցեալ)։ Ե՛վ կրավորական, և՛ պատճառական կազմությունները ձգտում են որոշակի միօրինականացման։

---

30 Ակնարկներ..., 1972, 301, 362։

Հետևելով տաղերի դերբայական կիրառություններին, դժվար չի լինի նկատել դրանց կազմության, տարբերակվող գործածությունների շոշափելի հարազատություն արդի գրական հայերենի բուն և ձևակազմիչ դերբայների դասդասման միջև։ Ըստ որի, առաջինները (անորոշ, ենթակայական, հարակցական. հարակատարը հաճախ դրսևորում է ձևակազմիչ դերբայի հատկանիշներ) ձևաբանական ինքնուրույն միավորներ են, փոխանունաբար կիրառվելիս կատարում են շարահյուսական պաշտոններ։ Ի հակադրություն բուն դերբայների, ձևակազմիչները (անկատար, վաղակատար, ապառնի, ժխտման) ոչ թե ինքնուրույն ձևեր, այլ «դիմային ձևերի բաղադրիչներ» են[31]*։*

1. Ժամանակաձևերի կազմությունը

Հովնաթանի տաղերում արտացոլված են ժամանակակից հայերենի բայի բոլոր եղանակները՝ սահմանական, ըղձական, պայմանական, հարկադրական, հրամայական։ Սահմանական ներկան *արտահայտված է.*

ա) -ում անկատար դերբայ+եմ օժանդակ բայ կառույցով՝ ամաչում ես *(83),* գլխում է *(104),* պահում եմ *(145),* կտրատում են *(119),* բերում ես *(37),* ճաշակում ես *(113),* ֆաշում է *(144),* ամրում եմ *(109) և այլն։*

բ) (1) կու, (2) կ մասնիկ+գրաբարյան ներկա կառույցով՝ կու գոռամ *(40),* կու ձգես *(25),* կու խոցէ *(64),* կու նստի *(86),* կու ծիծաղիս *(45),* կու ծախեն *(99, 100),* կու նմանին *(122),* կուզեմ *(145, 206),* կերթաս *(99),* կերդվես *(135) և այլն։*

գ) գրաբարյան ներկայով՝ Մէկ մարդ, որ դատի, *շատ* ճարտանա... *(92), Գոմ* մտանեն, գողանան *չաթու (123),* ընկնին *(102),* աղբէ *(93),* փութաս *(138),* գոհանամք *(159, 181),* թողնիք *(122),* օրհնեն *(124),* զգենուն *(79) և այլն։*

Նշված դեպքերում ե, ի *լծորդության բայերը եզակի երրորդ դեմքում ունեն* -է, -ի *վերջավորություններ՝ համարյա հավասար գործածությամբ. Ջայն* ելանէ *որպէս սանթուր* (140), *Աչքաբաց քոռ է և մարդ* կու խափէ... *Կոխելով կոտրէ կամ* ի վայր թափէ *(88), ...Յայնժամ խրատն* յիշէ, փոշմանի *(87),* թմրի *(104),* ճարվի *(116),* տրտմի *(142),*

31 *Մանրամասն տե՛ս* Աբրահամյան Ս., *1981, 196—202։*

փայլի *(15, 21)*, կուզի *(120, 148)*, կողոդի *(91) և այլն։ Ն լծորդության բայերը, երրորդ դեմքում* -ի *վերջավորություն ստանալով, կրավորաձև խոնարհում ունեն հետևյալ դեպքերում. Ծոխարարիկն ծովի*, բեՐի *(108)*, *Կու թողեն, որ մարդ* ճալի *ու* մաշի *(80)*, *Մարդ* կու փառաւորի *և ցընծայ հոգին (168)*, *հմմտ.* ծովի, կովի *(86)*, մաշվի *(55)*, բեՐվի *(86)*, կու ցրվի *(18)*։

գ) -Իս *վերջավորությամբ անկատար դերբայի և օժանդակ բայի հարադրումով՝ ...է՞ր* ես *ինձնէ* ճեռանայիս... *Դարչերս է՞ր* չես իմանալիս՝ *Գեղեցիկ երեսդ* բանալիս *(15—16, 194—196)*, *Դուն, որ թամրոց է* խաղալիս, *Փիլոնի տեղակ է տալիս (120)։ Սահմանական ներկայի նման դրսևորումը բնորոշ է Ագ., Ղրբ. բարբառներին, Ռամիսի խոսվածքին*[32]։

Առավել բազմաքանակ են գրաբարաձև ներկայով (գ կառույց) սահմանականի կիրառությունները, ուրեմն և՝ տաղերի խոնարհման համակարգում գերակշռում են սահմանական ներկայի կազմության համադրական ձևերը, որոնք և մոտավորապես 1,5 անգամ հաճախակի են գործածվում ա) և բ) կառույցներից։ Գործածության հաճախականությամբ աչքի է ընկնում և բ) (1) կառույցը, մինչդեռ ա)-ն սահմանափակվում է շուրջ 50 կիրառությամբ։

Սակավ է հանդիպում կառուցվածքով գրաբարյան անցյալ անկատարը. ասէին *(126)*, գոռայր, կանչէր *(135)*, իմանայր, սպանէր *(139)*, խփէր, չփէր, պսպղայր *(138)*։ -Ում *անկատար դերբայ+օժանդակ բայի անցյալ ժամանակ կառույցով գտնում ենք երկու բայ, այն էլ՝ միևնույն տաղում՝* գրում էի, միտՐ ի անում *(9)*։

Կու, կ *մասնիկներով անցյալ անկատարի կիրառություններ չկան։*

Նկատելի է ապառնի ժամանակաձևերի գործածության սակավություն. -ոյ, -ու *վերջավորություններով՝* գալոյ եմ *(9)*, չեմ տալոյ դադար *(112)*, գնալու է *(117)*։ *Հետաքրքիր կազմություն է* -ի *վերջավորությամբ ապառնի դերբայի և օժանդակ բայի հարադրումով, սահմանական ներկայի նշանակությամբ հետևյալ բայաձևը՝* է՞ր չէՐ խնդալի ... *(162), որը գուցե և կարելի է դիտել* խնդալիս-*ի տարբերակ։*

Գերակշռում են -ել *վերջավորությամբ* վաղակատար *ժամանակաձևերը՝* առել ես, տարել (ես), շարել (ես), աչՐով չես արել *(52)*, սիրել ես, կողկողել ես, գովել ես *(147) և այլն։* -Ր *վերջավորությամբ վաղակատար ժամանակաձևերը դերազանցապես հանդիպում են տաղերի*

---

32 *ՂՀԲ, 253, 299. ՍԱԲ, 112—113։*

տարբերակներում. չի ասեր *(83)*, բացվեր է *(203)*, ծածկեր ես, վառվիր է *(201)*, կապեր է *(202)*, գրեր եմ *(209)*։

Հարակատար ժամանակաձևերի կազմությանը մասնակցում են չեզոք, ներգործական, կրավորական սեռի բայեր. ընկած ես *(26)*, կանչած է *(107)*, ուռած է *(153)*, եռած ես *(161)*, ածրած է *(60)*, մորթած են *(104)*, սովորած եմ, կտրած եմ *(146)*։ *Անցյալ ժամանակաձևերից են՝* բսած էիր *(143)*, լցած էր *(142)*, խառնած էր, ձգած էր, քաշած էր *(153)*։ *Այս բայերը, ինչպես հայտնի է, ժամանակակից հայերենում կազմում են վաղակատար ժամանակաձևեր։*

Անցյալ կատարյալը *կազմությամբ գրաբարյան և աշխարհաբարյան է։ Գրաբար նախադասություններում այդպիսիք պահպանել են իրենց գրաբարյան կրավորաձև խոնարհումները, որոնք դիտվում են որպես գրաբարաբանություն (տե՛ս էջ 82—83)։*

Գրաբարյան կրավորակերպ խոնարհման վերջավորությունները՝ -այ, -ար, -աւ... *կրավորականի իմաստ չեն դրսևորում, այսպես՝* հանդիպեցար *(115)*, համառեցար, պատկառեցար *(147)*, ծագեցաւ *(43, 169)*, կանանչացաւ *(169)*, ծաղկեցաւ *(15, 34, 164, 203—205)*։

Անցյալ կատարյալի հիմքում արմատական կազմություն ունեցող բայերը աշխարհաբարաձև են՝ գտար, ընկայ, ընկաւ, փախաւ *և այլն։ Եզակի երրորդ դեմքում* -եց *հիմքակազմիչ մասնիկին զուգահեռ հանդիպում է* -եաց-ը՝ գրեաց *(132)*, ծաղկեաց *(69)*, կանգնեաց *(157)*, կատարեաց *(128)*, հնչեաց *(36, 63, 169, 207) և այլն. հարկ է չեշտել, որ* -եց-*ով բայաձևերը կրկնակի շատ են գործածված տաղերում։ Ներկայի հիմքից են* զարկար *(139)*, բացաւ *(152)*, բացի *(74)*, բացիր *(112)*, բացվաւ *(58, բանալ բայի զուգաձևությամբ)*, բերիր *(112)*, բերին *(98, 107, 128...)*, հատաւ *(121, 152)*, սկսաւ *(130) բայաձևերը. (ընդգծվածները, եզրափակելով չափատողերը, հանգապահպանման և համահնչության թելադրանքով նմանակվում են նախորդ և հաջորդ տողերի բառերի, բայերի վերջավորությունները՝* մնացի-լացի-բացի-խնդացի, բացվաւ-շատացաւ ... -իմացաւ *և այլն)։*

Անցյալ կատարյալում ցույական/անցույական զուգաձևությամբ են արտահայտված ասել, գտնել, նստել *բայերը՝* ասացի, ասացիր, ասաց, ասացին/ասի, ասիր, գրեցինք/գրինք, նստեցիր/նստար։ *Վերջին բայազույգի գործածության մասին կարելի է, թերևս, ասել, որ* նստեցիր-*ը թելադրված է հանգապահպանմամբ,* նստար *բայաձևը՝ բանաստեղծական ոտքը կանոնավորելու նպատակով։ Բայազույգի գործածության հա-*

մանման երևույթ է նկատված Արտ. բարբառում[33], իսկ Ա. Աբրահամյանի վկայությամբ անցողական հիմքերը, առհասարակ, հատուկ են բանավոր խոսքին[34]: Անցյալ կատարյալի կազմությանը մասնակցող հիմքերից Հովնաթանը նախընտրում է ցոյականները:

Տողերում առավել ամբողջական է -ի, -իր, -∅, -ինք. (-իք), -ին հարացույցը:

Հարկադրական եղանակը ժամանակակից հայերենին բնորոշ դրսևորումով միայն երեք կիրառություն ունի. պիտի ճող դառնաս, պիտի ճեռանաս (89), պիտի խնդան (123): Գրաբարյան պիտի բայը անկախ է գործածված և եղանակիչ է ստացել հետևյալ նախադասությունում. Ինձ մոտ չկայ իխտիար, հայ... Դու կու պիտիս զալում, զալում (76): Գրաբար նախադասություններում գործածվում են պարտ է, պիտոյ է, արժան է միադիմի բայերով կազմված հարկադրական եղանակի նշանակությամբ արտահայտություններ՝ պարտ էր ճեզ ընտրել (132), պարտ էր ճեզ (նախ) ծունր դնել (147), Պարտ է, որ ամենեճեան խնդան (175), պարտ է և արժան (նաղաշն) պաճել որպէս ճիրշան (125):

XII—XIV դդ. միջին հայերենին բնորոշ կամել բայի ներկա ժամանակաձևերով և անորոշ դերբայի հարադրությամբ հարկադրական եղանակ արտահայտելը հետագայում վերանում է, որքանով այդ կազմությունները արդեն դիտվում են որպես բաղադրյալ ստորոգյալ: Նույնը տեսնում ենք Հովնաթանի տաղերում. կամի ավիրել, կամենաս ասել, կամեցար անցնել, կամեցար անել, կամիս երկարի, ճամբուրել կամի, սպանանել կամի, կամենայ սպանանի, կամիս փախչիլ, կամիք գովել: Թվում է, հարկադրական եղանակի որոշ երանգ են պարունակում կամի դնել (վաթան) կառույցն ու կու, կ+գրաբարյան ներկա կաղապարի նմանօրինակ մի քանի կիրառություններ. Կանանց զարդէն Յովնաթանն Գնաց դէպ Թիֆլիզու խանն, Կամի այնտեղ դնել վաթանն (10), Դու էլ կու մեռնիս, չե՛ս անմահական (50), Աջա՞պ, դու էլ ինձ խղճա՞ս, թէ այդպէս կու մնամ (46), Նռներդ հող կու դառնայ, է՞ր պինդ կու պահես (34):

Ըղձական եղանակը կազմությամբ ձևականորեն նմանվում է սահմանականի գրաբարաձև ներկային և անցյալ անկատարին: Տարբերությունը եղանակների արտահայտած իմաստային զանազանությունն է:

---

33 Բաղդասարյան-Թափալցյան Ս., 1973, 138:

34 Աբրահամյան Ս., 1962, 339:

Ըղձական Ե լծորդության (չեզոք, ներգործական, կրավորական) բայերի եզակի III դեմքի համար կայունացել է -ի վերջավորությունը, և ապա՝ քող եղանակավորող բառի ավելի հաճախական գործածությունը (որ օրինաչափ է նաև արդի հայերենում)։ Հանդիպում է նաև Ե լծորդության բայերի եզակի III դեմքի -է վերջավորությամբ մի երկու գործածություն. քող ասէ (35), վնասէ (144), լսէ (94), որոնք նույնպես, կարելի է ասել, թերևս, թելադրված են բանաստեղծական ոտքի և հանգի պահպանման անհրաժեշտությամբ։

Տաղերում ըղձական եղանակով են արտահայտված նաև օրհնանքմաղթանքի և անեծքի դարձվածային արժեք ունեցող որոշ կապակցություններ՝ Բարով որդիդ կարգես (47), աստուած որդիդ պահի (44), բարով մաշես (16, 18), տունդ աւերի (143), ինչպես և համանման իմաստային երանգներով ու պայմանական հարաբերությամբ օժտված շաղկապական և ստորադասական հետևյալ կառույցները. Սիրոյ կրակի մէջն մնաս, Երվիս, որ դարդս իմանաս (72), Թէ ինձ նշանց չտաս՝ ընկնես պատուհաս (5), Թորոն շինողն չոլուխանայ, Լալով ապրի, ո՛չ ուրախանայ (108), Կարի՛ ձեր սօղըն, Քոռանա՛յ ձեր հաց տուողն (107) և այլն։

Պայմանական եղանակը կազմվում է ըղձական եղանակի ժամանակաձևերով և կու, կ եղանակիչների հարադրումով (ձևով նման է սահմանական ներկա ժամանակաձևերին). Աչերս դարձել այ արին, Թէ ինձ ո՞վ կու բերէ խաբար (53), Խնոցի հարելն է մեծ վկայ, Որ յերկնից շատ կարկուտ կու գայ (103), Քանի որ կենդան եմ կգտնեմ նրան (193), Ինձ լսես, թէ չէ կասեմ խանին (70), Անիծես ոչ Ստեփանին, թէ չէ մաշիկդ էլ կու տանի (143) և այլն։ Պայմանական եղանակի անցյալի ժամանակաձևեր տաղերում չեն հանդիպում։ Վերը բերված օրինակները որոշակիորեն արտահայտում են պայմանական հարաբերություն, ճիշտ այնպես, ինչպես արդի հայերենում։

Հրամայականի եզակի թիվը բնորոշվում է վերջավորությունների բազմազանությամբ. գերակշռում է -է վերջավորությունը՝ Ասիր. «Տաղ գրէ, ինձ նամբուրէ... (70), Մէկ գիշեր ինձ տար ծոցդ պահէ... (31), զարդարէ (68), խմէ (28, 166), շաղախէ (150), ուղարկէ (յ, 18, 21) և այլն։ Հայտնի է, որ -է վերջավորությունը՝ ձևավորվելով միջին հայերենում, հաստատվում է արևմտահայ գրական լեզվում։ -Ա(յ) վերջավորություն ունեն ա լծորդության բայերը՝ Արիսն՝ ջրո՛վ լուա... (90),

Ես տաղ կանչեմ, դու էլ խաղա (73), Ել, դո՛ւ կարդա, ծիծաղէ *(150)...*
ինչ գանգատ ունես՝ ինձ ասայ ... *(29) և այլն։*

Ներկայի և անցյալ կատարյալի հիմքից -իր *վերջավորությամբ են կազմվում* խնդրիր, ճանաչիր, չ՛բիր, նստիր, շրջիր, հագիր, մտիր, փախիր, գոհացիր, իմացիր, հեռացիր, ուրախացիր *բայաձևերը։ Բարբառային ազդեցություն է, անշուշտ,* ր-*ի անկումով հրամայականի* -ի *վերջավորությունը՝* բրջի *(150),* ուղարկի *(9),* շինի *(9). մերօրյա խոսակցական լեզվում լայնորեն հանդիպող երևույթ, որը խոսքում անհետևողականության և անփութության արդյունք է։*

Արմատական է առնել, բացել, բերել, ելնել, երթալ, թողնել, տեսնել *բայերի հրամայականը՝* առ, բաց, բեր, ել, երթ, թող, տես։ *Նույն բայաձևերը գործածվում են նաև բայական հարադրություններում՝* վեր առ, դուրս ել, բաց թող *և այլն։*

Պատճառական կերպի բայերից միևնույն քառատողում հանդիպող երեք բայ գործածված են միջին հայերենում նորակազմ հրամայականի -ցուր *վերջավորությամբ՝* իմացուր, ուրախացուր, խմացուր *(160)։ Հրամայականի այս վերջավորությունը արձանագրված է Ն. Ջղ. բարբառում*[35]*։*

Հոգնակի վերջավորությունն է -էք *համապատասխանաբար ներկայի և անցյալ կատարյալի հիմքերից՝* ածէք, բաշխէք, եփէք, խառնէք, գտէք, գնացէք, զղջացէք, զուարճացէք, խաղացէք, օրհնեցէք, շնորհեցէք *և այլն։ Հանդիպում են և զուգաձև կիրառություններ՝* բաժանէք *(121)* -բաժանեցէք *(161),* բարբառէք *(173)* -բարբառեցէք *(210),* խմէք *(157, 166, 168)* -խմեցէք *(160, 167, 182...),* ձգէք *(171)* -ձգեցէք *(185),* յիշէք *(162, 166)* -յիշեցէք *(123, 158...),* նստէք *(175, 183, 185)* -նըստեցէք *(167)։ Հրամայական եղանակի կիրառությունները բնորոշ են խրատական տաղերին։*

Արգելական հրամայականը *կազմվում է* մի *մասնիկով, որն ավելանում է եզակի թվի դեպքում՝ անորոշ դերբային՝* մի թողնիլ *(70),* մի հեռանալ *(9),* մի քանդիլ *(63) և այլն, իսկ հոգնակիի դեպքում՝ ներկա ժամանակի հոգնակի II դեմքին՝* մի կենայք *(183)։ Հոգնակի թվի մեկ այլ կառույց է՝ միք+անորոշ դերբայ՝* միք կենալ *(183),* միք մոռանալ *(158),* միք բերել *(164)։ Սովորաբար* մի-ն *առաջադաս է, բացառություն են* ...դիպչիլ մի *(40—41),* հաճ(չ)իլ միք *(108—109) գործածություն-*

---

35 *ԱՔՆՋ, 271։*

ները։ Գ. Ջահուկյանի հավաստումով՝ մի, ոչ մասնիկների հետադաս կիրառությունները բնորոշ են նաև Ագ., Մղ. բարբառներին և այդ տարածքի խոսվածքներին[36]։ Ժամանակակից հայերենին հատուկ միակ կազմությունը տաղերում մի խաղիր-ն է (196)։

Հովնաթանի տաղերում կարելի է առանձնացնել ժխտական խոնարհման կազմության երեք եղանակ.

ա) չը, չի, չ ժխտական մասնիկ+բայաձև կառույց. նշված ձևով են արտահայտվում անցյալ կատարյալի, ներկայի, ըղձական եղանակի ժխտական խոնարհման բայաձևերը՝ չը խօսի (83), չի մօռանաս (154), ...չի գայ (206), չի ճովացաւ (152), չբացիր (112) և այլն։

Գրաբարյան ժխտական խոնարհման ոչ եւես բայաձևը տաղերում ներկայանում է հետաքրքիր կառույցով. չ ժխտական մասնիկ+էտես անցյալ կատարյալ բայաձև. Հարկէզ չէտես թէ զինչ արին (142)։

բ) ոչ ժխտական մասնիկ+բայաձև կառույցը բնորոշ է սահմանականի գրաբարյան ներկային և ըղձականի ապառնի ժամանակաձևերին. ոչ գիտէն (118), ոչ նկատես (132), ոչ ճաւաճէ (88), ոչ փոշմանէ (83), ոչ ուրախանայ (108)։ Հանդիպում է ոչ ժխտական մասնիկի հետադաս երկու գործածություն ևս, որոնք, հավանաբար, կրում են վերը նշված բարբառների ազդեցությունը. Անիծես ոչ Ստեփանին ... (143), Տէրն ասաց. «Գայ ոչ ...» (145)։

գ) չ+օժանդակ բայ+դերբայ կառույց. ժխտական խոնարհման այս ձևը դրսևորվում է հետևյալ դերբայների օգնությամբ. 1) անորոշ դերբայ՝ մեծ մասամբ անկատար ներկայի նշանակությամբ. Ես էլ չեմ ճամբերել (42), Ջար սովորությունն չեն թարկել (102), Չեն ճանաչել գիրք և ճաշոց (118) և այլն։ Ժխտական կազմության այսպիսի կառուցվածք է արձանագրել Հր. Աճառյանը Ն. Ջղ.-ում[37]. 2) -ում վերջավորությամբ անկատար դերբայ. չես երևում, չես բերում ... չեմ ճամբերում (72), չի շաճում (145), չեն ջոկում (79), չէ թողնում (117)։ -Իս վերջավորությամբ անկատար դերբայը, ինչպես ավելի, օժանդակ բայի հարադրումով վերլուծական ժամանակաձևեր է կազմում. Դարդերս է՞ր չես իմանալիս գեղեցիկ երեսդ բանալիս (15—17...). 3) հարակատար և անցյալ դերբայներ՝ վաղակատարի նշանակությամբ. Վարպետէ չեն

---

36 ՀԲՆ, 102 և այլուստ 5։

37 ԱՔՆՋ, 275։

առած բալիմ *(119), ...թօրօն չէ* վառած *(108),* Ձեմք լուեալ *ի մարդկանէ (101), Թալիմ* չեն առեալ ... *ղումաշէն (83)։ Հիշատակված կիրառություններում ժխտական մասնիկները նախադաս են, իսկ մասնիկների հետադաս՝ բարբառային գործածություններից են՝ Տանտէրն* խօսում չի ... *(177), Քանի* եկած չէ ... *(186)։*

Ժխտական խոնարհման կազմության նշված եղանակներից տաղերում առավել հաճախակի գործածվում է առաջին կառույցը՝ չը, չ, չի ժխտական մասնիկ+բայաձև, որով, ինչպես և առհասարակ ժամանակաձևերի կազմությունների միտումներով, տաղերի լեզուն մերձենում է արդի գրական հայերենին։

* * *

Անկանոն բայերի անկանոնությունը դրսևորվում է անցյալ կատարյալում և հրամայականի կազմություններում. այդ ժամանակաձևերը ձևավորվում են տարահիմք և տարարմատ կառուցվածքով։ Տաղերում գործածված անկանոն բայերի զգալի մասը ենթարկված է որոշ համակարգայնացման, որքանով անցյալ կատարյալում ունի կանոնավոր վերջավորություններ, իսկ հրամայականում՝ կանոնավոր բայերին հատուկ -էք վերջավորություն։ Այսպես՝ անել *(արի, արիր, արինարա, արէք),* դնել *(դրիր-դիր, դրէք),* տալ *(տուիր/տըւիր, տվաւ-տվէք).* տանել *(տարար, տարաւ, տարան-տար, տարէք),* գալ *(եկաւ),* լինել *(եղայ, եղար),* ուտել *(կերայ, կերաւ, կերան-կեր, կերէք)։ Հանդիպում են և գրաբարյան բայաձևեր՝* արարէր, լուայ, լուր, ետուր, ետ, եկայք. լէր, լէրուք. *ինչպես բազմիցս նշվել է, դրանք եզակի կիրառություններ են, երբեմն պայմանավորված՝ հանգապահպանմամբ և Հովնաթանի լեզվում դիտվում են որպես գրաբարաբանություններ (տե՛ս էջ 82—83)։*

Բայաձևերի միախառնված, ուշագրավ պատկեր են ներկայացնում և պակասավոր բայերը։ Պարտել *պակասավոր բայը՝ միջին հայերենում ունենալով եզակի կիրառություններ հետագայում աստիճանաբար դուրս է գալիս շրջանառությունից։ Տաղերում այն արտահայտված է միայն ներկա ժամանակով՝* պարտիմք *(179, 180),* պարտիք *(158, 178)։*

Կայ *բայն ունի ներկայի և անցյալ անկատարի միայն երրորդ դեմքի կիրառություններ՝* կայ, կան, կայր, կային։ *Մեկ անգամ է հանդիպում* կաս *բայաձևը, գործածված հանգի համապատասխանության համար՝ ...Ղուկաս ... արթուն կաս ... Խոկաս (139)։ Ժխտական խոնարհումը կազմված է չ մասնիկով՝* չկայ։ *Թվում է, հանգավորման*

արժեք ունի նաև չկեր ժխտականի գործածությունը՝ ...գեր ...չկէր ... չփէր ...խփէր (138)։ Հիշատակված բարբառային չկէր ձևը, հավանաբար, ժամանակին գործածական է եղել Ագ.-ում և շրջակա վայրերում. այն հանդիպում է և Զաքարիա Ագուլեցու Օրագրությունում[38]։

Եմ բայը հանդիպում է ներկա և անցյալ հետևյալ ժամանակաձևերով՝ եմ, ես, է, ենf, էf, են, էի, էիր, էր. ժխտական խոնարհում՝ չեմ, չես, չի (չէ). -չէի։ Գրաբարյան եմf ձևը մեկ անգամ է հանդիպում՝ ի բեղ եմf ապաւին ... (124)։ Եզակի առաջին դեմքի ամ-ը, ակնհայտորեն Ն. Ջղ. բարբառի ազդեցությունն է[39]. մնացել ամ (19), տէր ամ (139), յաճ ամ (141)։ Վերջին գործածությունները դարձյալ հանգը պահպանելու համար են։ Օժանդակ բայի անցյալ ժամանակում գտնում ենք է-ի սղման մի քանի դեպք. միտf ի անում (9), ընկել ինf (153), մեռել ի (153), մէյլ'իր ավել (8)։ Համանման երևույթ է նկատվում արևմտահայ բարբառախոս վայրերում՝ Մուշ, Խն., Ալշ., Հճ., Մրշ., Վան և այլն, արձանագրված է Արտ., այլև Ջղ., Ն. Ջղ. բարբառներում[40]։ Թբ.-ին բնորոշ է տաղերում հանդիպող օժանդակ բայի -իս ձևը[41]. պատկեր իս (18), տրտում իս (194—196)։

Հովնաթանը նախընտրում է եզակի երրորդ դեմքի է ձևը, որը գործածվում է բանաստեղծական տողի տարբեր հատվածներում և շուրջ հինգ անգամ հաճախական է -ա(յ)-ից։ Ա(յ) ձևը մեծ մասամբ հանդիպում է տողի վերջում, ուստի և տաղերի լեզվում օժանդակ բայի է և ա ձևերի գործածությունը կարելի է բացատրել ճիշտ այն առումով, որով Գ. Սևակը բնութագրում է Սայաթ-Նովայի լեզվի այս առանձնահատկությունը. «Այսօրինակ դեպքերի բացարձակ մեծամասնությունը արդյունք է վանկի կամ հանգի հարկադրանքի։ Մեկ-երկու բացառությունների էլ պետք է բացատրել տողի հնչողության շահագրգռություններով...»[42]։ Այս իմաստով ավելորդ չէր լինի ուշադրության առնել, ենթադրենք, այսպիսիք. բէշարայ ...աւարայ ...համար այ (20), տեսայ ... երես այ ...հալաս այ ...ինձ ասայ (29), սուգ այ ...բուք այ ...վկայ ... կու գայ (103)։

---

38 Ագուլեցի Զ., 1938, 62, 70։

39 ԱՔՆՁ, 245։

40 ՂՀԲ, 177. ՀԲՆ, 101 և աղյուսակ 5. ԱՔՆՁ, 246։

41 ՂՀԲ, 273։

42 Սևակ Գ., 1969, 406։

2. Բայի եղանակային ձևերի ոճական կիրառություններ

Բայի եղանակային ձևերի գործածությունը այլ եղանակաժամանակաձևերի իմաստներով, ինչպես հայտնի է, առավելապես բնորոշ է ժողովրդախոսակցական լեզվին, բարբառներին։ Բնականաբար, կարելի է ենթադրել, որ ժողովրդախոսակցականից լայնորեն սնունդ առած Հովնաթանի լեզուն նույնպես պետք է բնութագրվեր բայի եղանակային ձևերի բազմազան կիրառություններով։ Սակայն քննությունից պարզվում է, որ տաղերի լեզվում անցյալ անկատարն ու հրամայական եղանակը ոճական նման գործածություն բացարձակապես չունեն, իսկ սահմանական ներկան և ապառնի ժամանակաձևերը ունեն միայն այդպիսի մի քանի կիրառություն և, այդ առումով, ասես, հակված են դեպի գրական լեզուն։ Նման երևույթը կարելի է մասամբ բացատրել տաղերի լեզվում ընդհանրապես անցյալ անկատար ու ապառնի ժամանակաձևերի սակավ գործածությամբ, ինչպես և սահմանական ներկայի դրսևորման ձևերի բազմազանությամբ՝ գրաբարյան ներկայով և կու, կ մասնիկ+գրաբարյան ներկա կառույցներով, որոնցով էլ ներկան ձևով նմանվում է ըղձական և պայմանական եղանակներին։

Սահմանական ներկայի և ապառնու գործածությունները սակավ են այլ ժամանակաձևերով։ Բայաձևի եղանակաժամանակաձևի թելադրանքով, օրինակ, նստեմք սահմանական ներկան արտահայտում է ըղձական եղանակի անցյալ ժամանակի նշանակություն. Դաստուր տար խանն, նստեմք ձիանն, Դէպ՝ մեր վաթանն (74)։

Պայմանական եղանակի նշանակությամբ է գործածված սահմանական ներկան հիմա մակբայի առկայությամբ. Հիմա կոխեմ ձեզ մէջ ցխին (98), Հիմա ձեզ ասեմ քանի բան (123), ...Հիմա զայ, լսի՝ զարմանայ (118), Կասեն. «Հիմա մեռելք լսեն, Գան ճրագի չորս կողմն նստեն» (103)։ Միաժամանակ գտնում ենք և հիմա+պայմանական ժամանակաձև կառույցը. Հիմա կանեմ ախր զաման (97), ...Հմի կուգան ճամփորդիքն (104)։

Հարակատար ժամանակաձևի օգտագործումը վաղակատարի նշանակությամբ հատուկ է բարբառներին, և դրանց գործածությունը տաղերում պետք է հավանորեն դիտել որպես բարբառային ազդեցություն. Սովորած եմ գործել սալակ, Ջերայ շատ եմ կտրած թալակ (146), Աչքերդ ... Շատ մարդոյ տուն է աւերած (60), Մորած են երկէն երէցն ... (104), Գրած եմ ...Մեռած եմ (9) և այլն։

Տաղերի լեզվում այլ ժամանակաձևերի իմաստով հաճախակի գործածությամբ առանձնանում են ըղձական, մասամբ՝ պայմանական ու հարկադրական եղանակները։

Ըղձական եղանակը պայմանական հարաբերություն դրսևորող հետևյալ նախադասություններում գործածված է հրամայականի նշանակությամբ. Ինձ լսես, թէ չէ՝ կասեմ խանին (70), Թէ ինձ նշանց չտաս՝ ընկնես պատուհաս (5), Թէ ինձ կու սիրես՝ մէկ դու խմես, մէկ ինձի տաս... (15)։ Հրամանի որոշակի երանգ են պարունակում ըղձական ժամանակաձևերով կառուցված օրհնանք-մաղթանքի այսօրինակ դարձվածքները. դուք միշտ շէն կենայք (159), ուրախ կենաք համիշայ (173)։ Ըղձական եղանակը ժխտական խոնարհմամբ դրսևորում է և արգելական հրամայականի իմաստ. Ծոցիդ եմիշները, Ինձնէ զատ, նշանց չտաս ուրիշ մարդի (23), Զարախօս մարդու մօտ շը նստես բնաւ (93)։

Պատճառահետևանքային հարաբերություն արտահայտող նախադասություններում ըղձականը հանդիպում է ենթադրականի նշանակությամբ. Ես քաղեմ կարմիր գուլինար, Երբ որ բարով գա ամառն (52), Վախեմ՝ թէ բառամի, շատ մի կենար պաս (5), Դու չոր պահե մեծ պասն, Զատկին տամ քեզ հաւն ու թասն (145), Շատ խմես, դառնաս գինոյ տուճ (113)։

Ենթադրական եղանակը տաղերում երբեմն հարկադրականի երանգ ունի. Դու էլ կու մեռնիս, չե՛ս անմահական (50), Աջա՞պ, դու էլ ինձ խղճա՞ս, թէ այդպէս կու մնամ (46), Կու մեռնիմ, կու մնաս դու ինձ պարտական (35)։

Հարկադրական եղանակը հրամայականի նշանակությամբ ունի միայն մեկ կիրառություն, և այդ դեպքում հրամանը, ասես, խրատական, հորդորական բնույթ է ստանում, «արտահայտելով բարեկամական վերաբերմունք հանդեպ խոսողը»[43]. Բեօհտան բանէրէ պիտի հեռանաս (89)։

Խոնարհման համակարգի քննության ընթացքին հետևելով՝ կարելի է համոզվել, թե դերբայական ձևերի, ժամանակաձևերի, անկանոն բայերի, բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունների որքան համընկնումներ կան Հովնաթանի տաղերի լեզվի և արևելահայ նոր գրական, թերևս նաև այդ ժամանակաշրջանի ժողովրդախոսակցական

43 Պողոսյան Պ., 1959, 209։

լեզվի մեջ։ Միաժամանակ ակներև է գրաբարյան խոնարհման համակարգի ձևերի որոշակի նահանջ։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նաղաշ Հովնաթանի տաղերի շարահյուսական առանձնահատկությունների քննությունը կարող է լույս սփռել արդի գրական հայերենի լեզվամտածողության ակունքներին, պարզել շարահյուսական որոշ իրողությունների սկզբնավորումը, ամբողջացնել ուսումնասիրվող ժամանակաշրջանի լեզվի պատկերը՝ նաև խոսքի կառուցման յուրահատկությունների առումով։

Հովնաթանի լեզվի շարահյուսական առանձնահատկություններից այստեղ քննության են առնվում հետևյալները. նախադասությունների կառուցվածքային տիպերը՝ բարդ համադասական նախադասություն, երկրորդական նախադասությունների բնույթը, շարահարությամբ բարդ նախադասություն. նախադասության անդամների ձևաբանական արտահայտությունը, ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը։

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԻՊԵՐԸ

Համառոտ և ընդարձակ նախադասությունները տաղերում հանդիպում են զուգորդված ձևով։ Տվյալ առումով հատկանշական են բնության և սիրո երգերի չափատողերը. Յայտնեցաւ գարուն, Հարաւ հնչեաց ... (69), Նոր ծաղկեցաւ այգին, Եկել է գարուն (34), Գարուն եղև, քաղցր խօսի բլբուլն (40), Նոր գարուն է, հնչեաց հարաւ (36) և այլն։ Այսուհանդերձ, հետևելով չափատողերի կառուցվածքին, դժվար է գտնել բնութագրման որևէ միասնական համակարգ։

Չափածո տողի հակիրճության բերումով, տաղերի նախադասություններում առկա է գերադաս անդամների կամ լրացումների զեղչման երևույթ (այսինքն՝ ձևական առումով թերի նախադասություն)։ Ինչպես և կենդանի խոսքում, հաճախակի են զեղչված ենթակայով միավորյալ բնույթի նախադասությունները. Նա ցամաք հացով կշտացաւ, Նստեց իւր գլուխն լացաւ։ Շատ լացաւ ... Երկու ձեռօք տվաւ գլխին (143) և

այլն։ Չկան ենթակայի մասնակի զեղչման դեպքեր. մինչդեռ ստորոգյալը զեղչվում է և՛ ամբողջովին, և՛ մասնակի՝ Դու ծաղիկ քաղէ, ես՝ նուռն (44), Քո սէրն կրակ է, իմ սիրտն՝ քուրայ (54) և այլն։ Որոշիչ-որոշյալ երկանդամության մեջ զեղչվում է որոշյալը, հատկացուցիչ-հատկացյալում՝ հատկացյալը. Սրա պահօղ մարդն ... Սրա չպահօղն ..., Սրի հարէն կու գայ, լեզուինը չի գար (90)։ Սակավ են նախադասության երկրորդական անդամների զեղչման դեպքերը։

Հովնաթանի երգիծական տաղերին բնորոշ են անորոշ-դիմավոր միակազմ նախադասությունները[1], որոնցում երգիծանքը, ասես, լիցքաթափվում է դատափետող սրությունից, մի տեսակ ունենալով-չունենալով իր որոշակի հասցեատերը. մի բան, որ առհասարակ հատուկ է ժողովրդական երգիծական-ծիծաղական խոսքին, նաև առած-ասացվածքներին. Հերկէզ չեն ջոկում վատըն ու լաւն (79), Նաղաշն կասեն խիստ բէշարայ (20), Չեն ճանաչել գիրք և ճաշոց, Պատարագին ածեն բշոց (118), Թէ մէկ թաղի ձգես փորն, Չի ջոկիլ մէկ էշն ու եզն (118). Հմմտ. Շիտակ խոսքը հանաքով կասեն. Թող ասեն գէշ ա, թող չասեն էշ ա[2]։

Սրանց կողքին խոհախրատական տաղերում զգալի են ընդհանրական-դիմավոր բայական միակազմ նախադասությունները, որքանով նշված կառույցի նախադասությունները, պարունակելով խորհուրդ, խրատ կամ հորդոր, հասցեագրված են միաժամանակ յուրաքանչյուրին և հանուրին. Արինն՝ ջրո՛վ լուա, պատառէ, Կռիւն քաղցր խօսքով կարկատէ (90), Խելօք մարդոյ հետ շրջիր և խօսէ ... Հոգեսէր ծերոց խրատն լսէ (94) և այլն։ Ակներևաբար, դարձյալ գործ ունենք առած-ասացվածքներին նման վաղ կառույցների հետ. Հմմտ. Գժին բանի դի, հետը գնա. Բանն արա, հետո պարծեցիր[3]։

Սակավ են անդեմ բայական նախադասությունները, բայց հաճախ են օգտագործվում անվանական անդեմ նախադասությունները, որ հատուկ են ժողովրդական բանաստեղծությանը հարազատ չափածոյին։ Եվ արտակայված ստորոգման բացակայության պայմաններում՝ նա-

---

1 Հետևել ենք միակազմ նախադասությունների տարբերակման համար կիրառվող այն սկզբունքին, որով առանձնացվում են բայական և անվանական միակազմ նախադասությունների խմբերը՝ ներառելով անդեմության և դիմավորության հատկանիշներ. ԺՀՏՀ, 394։ Ակնարկներ ... 1975, 134։

2 Ղանալանյան Ա., 1960, 8, 9։

3 Նույն տեղում, 12, 16։

խադասությունը հատկանշվում է գործող անձի, գործողության հանգամանքների նկարագրությամբ. Նոր գարուն, նոր արև, ծաղիկ շնորհազարդ, Այսուհետև բացուի մանուշակ և վարդ (170), Բանաւշայ, սմբուլ, Ղըրմզի գուլ, Է՛յ քաղցր բլբուլ (71—74) և այլն:

Նշված տիպի թերի, ինչպես և միակազմ նախադասությունները վկայում են Հովնաթանի լեզվի և ոճի հարազատությունը ժամանակի ժողովրդախոսակցական լեզվին:

1. Բարդ համադասական նախադասություն

Հովնաթանի տաղերի բարդ համադասական նախադասություններում (ԲՀՆ) կիրառված շաղկապների քննությունը վկայում է, որ, ինչպես միջին և արդի հայերենում, դրանք հիմնականում արտահայտում են միավորաներառական, հակադրական, տրոհական հարաբերություններ, միաժամանակ դրսևորելով ամենատարբեր երանգներ: Ինչպես կարելի է տեսնել ստորև, տաղերի ԲՀՆ-երը արդի հայերենին հարազատ են նաև գործածվող շաղկապների մեծ մասով, և շաղկապի հաճախականությամբ ու կիրառական ոլորտով: Միաժամանակ նկատվում է շաղկապների ներհոսք ժողովրդախոսակցական լեզվից:

ԲՀՆ-ում միավորական հարաբերություն են դրսևորում և, ու շաղկապները: Գերակշռում են նախադասության համազոր անդամների ու համադաս նախադասությունների կապակցման և շաղկապի կիրառությունները: Միջին հայերենում լայնորեն կիրառվող ու շաղկապը, տաղերում առավելապես շաղկապում է հարադրական կապակցություններ և հոմանիշ բառեր՝ ուշ ու խելք, բարև ու գիր, վէմ ու հալ, խև ու բանգի, էշխ ու հաւաս և այլն: Եվ-ի և ու-ի մոտավոր հարաբերական գործածությունն է 2:1-ի:

Միավորական հարաբերությամբ զուգադրվող նախադասությունները առավելապես դրսևորում են համաժամանակյա գործողություն՝ ստորոգյալի եղանակաժամանակային միևնույն ձևերի օգտագործմամբ. Աշկէրս զարմանայ, մայլի Եւ սիրտս դողայ (21), Իմ գրած տաղն կու կարդաս Ու սազ կանես (38), Նախանձուի սիրտն և դառնայ արիւնն (79) և այլն:

Սրանց կողքին տաղերում միավորյալ-ներառական «նաև» հարաբերությամբ են գործածված՝ դարձյալ և-ի շեշտվող սաստկական երան-

գով, «լոկ հավելում ցույց տվող»[4], նույնպես և, այլ և հարադրական կազմությամբ շաղկապները։ Վերջինս, ըստ Գ. Գարեգինյանի, ժամանակակից հայերենի համար հնացած գործածություն է և այժմ փոխարինվում է ոչ միայն ... այլև զուգաշաղկապով[5]։ Բնորոշ է, որ նշված հարադրական շաղկապները հանդիպում են առավելապես խոհախրատական տաղերում, այն էլ պատկերային զգալիորեն բարդ համակարգով. *Որպէս որ մարգարէն Դաւիթ ասէ բան վըկայական,— գինի՝ ուրախ առնէ, իւղ՝ զուարդ, հաց՝ հաստատէ սիրտ մարդկան,—* Նոյնպէս և *մէք ճաշակեսցուք իւղ և զհաց մարմնական,* Այլ և *խմէք անուշ գինին, բաժակ է անապական (180)* և այլն։

Հավելամիավորական նշանակությամբ է գործածված ինչպէս ... էլ այնպէս տարանդամ զուգաշաղկապը. այն արդի հայերենի ինչպես... այնպես էլ շաղկապի նմանությամբ, բացառապես կապակցում է նախադասության համազոր անդամներ (տվյալ դեպքում՝ զեղչված միավորյալ ենթակայով նախադասություններ). *Լաւ մարդն այն է,* ինչպէս *եկեալ է՝* էլ այնպէս *գնայ (61)*։

Նաև բաղադրյալ շաղկապը որոշակիորեն դրսևորում է ներառական հարաբերություն. Նաև *ասէին ընդ մանկանն, Թէ բրեցէք ... (28)* և այլն։

Սիրո երգերում սովորաբար «և, նաև» երանգավորված իմաստներով է կիրառվում էլ ներառական շաղկապը. *Մէջքդ նազլու բարակ ... Քեամար* էլ *ես կապել տունդ աւադան (5), Նոր ծաղկեցաւ ծառն, գարուն էհաս ... Նաղանի քաղցրիկ եար, բարով դու* էլ *գաս ... (15)*։

Քննվող և, այլ և, նաև, էլ շաղկապները հավելական երանգով նկատելիորեն սաստկացնում են նախորդ նախադասության իմաստը և, ինչպես նշում է Մ. Աբեղյանը, «ունին զորացման կամ աճման երկրորդական գաղափար»[6]։ Գ. Ջահուկյանի կարծիքով էլ կատարում են «նաև եղանակական ուժեղացնող մասնիկների դեր, որոնք նույնպես կարող են կապվել տարբեր խոսքի մասերի հետ և իրենց գործառական բնույթով մոտենում են համադասական շաղկապներին»[7]։

Թվարկումով միավորվող հարաբերությամբ են բնութագրվում ժողովրդախոսակցական լեզվից տաղերին անցած համ ...համ (հէմ ... հէմ), բէ ... բէ կրկնադիր, ոչ ... ոչ կրկնաժխտական զուգաշաղկապները՝ *Համ*

4 Աբեղյան Մ., *1974, 541*։
5 Գարեգինյան Գ., *1963, 103*։
6 Աբեղյան Մ., *1974, 541*։
7 *ԺՀՏՀ, 500—501*։

թանն անիծած, համ իւր բղուղըն ... (153), Հէմ կանանչ կու հագնիս, հէմ գոյն ի լալի (192), Հերկէզ չեն ջոկում վատըն և լաւըն, Թէ Հնդըստանայ մաւն ու զառըն, Թէ Դարաշամբին խաշար աստառըն (79), Ոչ դարդս գիտես, ոչ հալս կիմանաս ... (18)։ Նշված նախադասություններն միավորական բնույթի դրսևորմանը նպաստում են և զեղչված միավորյալ ենթակաները։ Ստորև բաղվող տողերում համանման հարաբերություն ունի նաև կամ շաղկապի գործածությունը... չեմ կարիլ հայիլ... կամ խելքս պահիլ (45). Նման դեպքերում կամ շաղկապը կարելի է փոխարինել և-ով։

Լեզվաբանական գրականության մեջ արձանագրվում է, որ նախ ... ապա զուգաշաղկապն ու և ապա հարադրական շաղկապը նկարագրական-պատմողական բնույթի նախադասություններում դրսևորում են տրամաբանական հաջորդականություն կամ փոխհաջորդում։ Տաղերում դրանք ներառում են և շեշտված հետևանքայնություն, ասել է՝ նախադասությունների միջև իմաստային կապը տրամաբանորեն պատճառահետևանքային է և, պատահական չէ, որ նշված շաղկապները հանդիպում են խոհախրատական տաղերում. Նախ պարտ էր քեզ ընտրել զբարին, Ապա բ[ա]նալ զքո բերան (132), Պարտ ես, որ բանն ստույգ իմանաս, Եւ ապայ մարդոյ ասել կամենաս (89)։ Արտահայտած հարաբերությամբ նմանատիպ է ու շաղկապի հետևյալ գործածությունը. Ջէրայ քո վատն ուրիշին կասէ Ու կուգայ քեզ մօտ գնա բանպասէ (93)։

«Այնուհետև» նշանակությամբ ժամանակային հաջորդականություն են դրսևորում ապա, ապա թէ շաղկապները. Վասն այն կերայ շուտ և արագ, Ապա թէ եկի պատարագ (142), Իշտահով կերէք, սրտով խմեցէք, ուրախ ծիծաղէք ... Ապա ում սրտի քէն ունի՝ հանէ (160—161)։

Տաղերի ԲՀՆ-ում գործածվող և շաղկապն արտահայտում է նաև գործողությունների զուգորդությունից բխող հետևանքային հարաբերություն, ինչպես՝ Մէկ մարդ, որ դատի շատ հարստանայ Եւ ողորմութեան գործոց հեռանայ (92)։

Եւ շաղկապը երբեմն դրսևորում է փոքր-ինչ հավելամեկնական, հարակցական հարաբերություն, կարծես մեկնելով-բացատրելով իրողությունը. Հո՛ղ ես, և վերջն պիտի հող դառնաս (89), Տեսէ՛ք, եղբարք, այս ի՞նչ բան է ... Եւ ոչ ասելն արժան է (101)։

Միավորական շաղկապների կողքին տաղերի ԲՀՆ-ում հակադրական հարաբերությամբ են գործածված բայց, իսկ շաղկապները (երկու-

երեք գործածություն). Ես առաւել ի մէջ իւր գեղի, Որ միշտ տան ըմպել դառնագոյն լեղի, Բայց ուրիշ տեղում նա ոչինչ նեղի, Այլ տան փոքր ինչ խնդութեան տեղի (80)։ Սրանց թվում հանդիպում են բայց, իսկ շաղկապների գործածություններ՝ լրացական-բացատրական երանգի նույն հարաբերությամբ. Անուամբ «ճգնաւոր», «աստուածապաշտ» է, Բայց յոյժ մեծամիտ և կամապաշտ է (84), Իմաստուն մարդոյն՝ բան մի բաւական, Իսկ անմտիցն՝ բիւր բան և խթան (92)։ Հետաքրքիր է, որ նշված շաղկապները նույնպես կիրառված են խոհախրատական տաղերում, մինչդեռ սիրո և երգիծական տաղերում հակադրական նույն հարաբերությամբ օգտագործվում է ժողովրդախոսակցական լեզվից եկող էլ շաղկապը, որն առհասարակ հատուկ է պարզ կառուցվածք ունեցող ժողովրդական երգերին ու խաղիկներին. Քո սիրուդ հալեալ մաշեցայ, դու էլ չես խապար (45), Ես տաղ ասեմ դու էլ խաղա՛ (73) և այլն։

Հակադրական հարաբերությամբ է բնութագրվում ապա շաղկապը։ «Բայց, սակայն» նշանակությամբ ժողովրդախոսակցական լեզվից փոխառված այս շաղկապի գործածությունը նշված շաղկապների համեմատությամբ փոքր-ինչ ավելին է. Դու էլ իմ սիրովն ծարաւ ես, պապակ, Ապա է՞ր կու մնամք մէք միմեանց փափաք (34), Ասացի՝ անունդ շըտամ, Ապա բան ես անում խիստ խամ (111)։ Ապա շաղկապը համանման կիրառությամբ արձանագրել է Հ. Աճառյանը Ն. Ջղ. բարբառում[8]։

Միավորումից բացի, և շաղկապը մի շարք ԲՀՆ-ում դրսևորում է հակադրական հարաբերություն. դրանցում հոլովվող և-ը կարելի է փոխարինել բայց, իսկ շաղկապներով. Յաշխարհս բամբասէ և զինքն գովէ (84), Անհաշտ թշնամուն դու մի հաւատար Ու բարեկամին բնաւ ձեռաց մի տար (90) և այլն։ Այս օրինակները նույնպես քաղված են Հովնաթանի խրատական, երգիծական տաղերից և, նախդիրների հետ միասին, հիմք են տալիս ասելու, որ տաղերգուն և շաղկապը գլխավորապես օգտագործում է այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է խոհական, դատողական ոլորտներին։

Խոսքի հատվածներ միմյանց միավորելով, շեշտված զուգորդվող հակադրական հարաբերություն է ներառում այլ շաղկապը, ասես, առանձնացնելով հակադրվող եզրերից մեկը. Այսչափ բաներս քեզ համար այ, Այլ դու ե՞րբ կու խղճաս ինձի (20) և այլն։

---

8 ԱՔՆՋ, 287։

Ակնհայտ պայմանաներհակական հարաբերությամբ ժողովրդախո-սակցականին հարազատ թէ չէ հարադրական շաղկապը արտահայտում է հակադրության նշանակություն։ Այս դեպքում վճռորոշ է բաղադրիչ առաջին նախադասության ստորոգյալի հրամայական, ըղձական եղա-նակով կամ ժխտական խոնարհմամբ գործածությունը. Ինձ լսես, թէ չէ կասեմ խանին (70), Անիծես ու Ստեփանին, Թէ չէ՝ մաշիկդ էլ կու տանի (143) և այլն։

Կամ շաղկապը ստորև բերված քառատողում արտահայտում է հա-կադրահամեմատական հարաբերություն. ինչպես՝ Ծ՞ըր կարէ ձեռն տըմ-բուզին, Ջարպով տալ վերայ սուր բզին, Կամ չոր փուշն, որ շատ դի-գին, Անկէզ մնայ կրակի վիզին (111)։

Տրոհական հարաբերությամբ առանձնանում է կամ ... կամ կրկնա-դիր զուգաշաղկապը, որով հավասարապես արժեքավորվում են տրոհ-վող երկու գործողությունները. Ջալում, էդ ի՞նչպես դատաստան է, Կամ դիւան արա, Կամ սպանէ (10), Երբ նորա անհամ խօսքերն լսես, Կամ թերի կելնես, կամ կու սովրես (93)։

Տրոհական կամ թէ չէ հարադրական շաղկապը պարունակում է և ներհակականություն՝ գործողությունների փոխադարձ բացառում տրոհ-ման միջոցով. Թող համբուրեմ կամ թէ չէ իմ հոգին առ ... (15)։

Թէ շաղկապը տաղերում սակավ կիրառությամբ բնութագրվում է տրոհական նրբերանգով, որի արտահայտմանը մեծապես նպաստում է և նախորդ նախադասության հարցական առոգանությունը. Աջա՞պ դու էլ ինձ խղճա՞ս, թէ այսպէս կու մնամ (46)։

2. Երկրորդական նախադասությունների բնույթը

Տաղերի բարդ ստորադասական նախադասության (ԲՍՆ) քննությու-նից պարզվում է, որ առավել մեծ քանակ են կազմում պարագա և ասույթ խնդիր երկրորդական նախադասությունները (ԵՆ)։ Ենթակա և ստորո-գելիական ԵՆ-երի սակավությունը, թերևս, պայմանավորված է չափա-ծոյում նախադասության գլխավոր անդամների որոշակի և անհրաժեշտ ներկայությամբ։

Ենթակա ԵՆ-երը արտահայտվում են միջին հայերենին բնորոշ հե-տևյալ կառույցներով. Պարտ է + ստորադասական շաղկապ..., բաղա-դրյալ ստորոգյալ + ստորադասական շաղկապ — Պարտ է, որ ամենե-քեան խնդան (175), Լաւ է, որ մտնես սպատան[ք]ըն (114)։

Ստորոգելիական ԵՆ-երը ձևավորվում են որ շաղկապով և գլխավոր

նախադասության մեջ ցուցական դերանուն+III դեմքի օժանդակ բայ կառուցվածքով՝ բաղադրյալ ստորոգյալի մշտական առկայությամբ, այսինքն հիշեցնում են ժամանակակից հայերենի նման բնույթի նախադասությունները. Նամուս-ղայրաթի լաւ մարդն այն է, Որ գիշերն ի բուն բարակ միտք անէ *(86) և այլն։ Ինչպես ենթակա ԵՆ-երը, սրանք նույնպես որպես կանոն ունեն հետադաս շարադասություն։*

Սակավ են նաև ճատկացուցիչ՝ *Գիտեմ*, ով որ մոիկ արած, *նրա հոգին է շուտ մեռած (61)*, Ով զավք կանի Ստեփանն, *Մակամ աստուած տանի ջանն (146) և* բացաճայտիչ *ԵՆ։ Վերջինները ներկայանում են կառուցվածքային մի քանի տիպով. նախ՝ միջին հայերենին բնորոշ մասնավորեցնող-կոնկրետացնող նշանակության* որ է *կապակցությամբ. Գլուխ որձակին ջախջախեցէր,* Որ էր ճաւուցն բազաւոր *(138), Պարտ էր քեզ նախ որդիական ծանր դնել խոնարհական Առաջնորդին քո սրբազան,* Որ է գլուխ ժողովրդեան *(147)։ Այնուհետև՝ ենթակա+ստորադասական շաղկապ... կառույցով (ենթական արտահայտված է հատուկ գոյականով կամ դերանվամբ). Դո՛ւ,* որ ուղի ես սուրբ Սիոնի *... (148), Նա,* որ ձեր խաթրն չի շաճում *... է՞ր եք պահում (145)։ Բացահայտիչ ԵՆ հաջորդում է և կոչական անվանը՝ Ով մարդ,* որ կամիս կեանքդ երկարի... *(89)։*

Ինչպես նշված, այնպես էլ որոշիչ ԵՆ-երը կապակցվում են գլխավորապես որ *հարաբերական դերանունով. Մարդ կայ,* որ մէկ է և ճազար աժէ, *Հազար մարդ էլ կա,* որ մէկ մի չաժէ, *Այպս էն մէկն,* որ ճազար աժէ *... (82), Գոռոզ մարդ էլ կայ ...* Որ ինադ կանէ *... (84) և այլն։ Գլխավոր նախադասությունը երբեմն ունենում է ցուցական դերանվամբ արտահայտված ձևական որոշիչ.* Հէնց *պատկեր կանեն,* որ fon ու լանկ է *(80) և այլն։ Նկատելի է, որ, ինչպես քննվող, այնպես էլ ստորադասական այլ բնույթի ԵՆ-երում* որ *շաղկապը լայն կիրառությամբ արդեն գրավում է տիրապետող դիրք, ինչ տեսնում ենք արդի հայերենում։*

Կառուցվածքային առումով բացահայտիչ և որոշիչ ԵՆ-երը կայուն շարադասություն ունեն՝ միշտ հետադաս են։

Տաղերում բազմաթիվ են ուղիղ խնդիր *ԵՆ-երը, որոնք համապատասխանում են ԲՄՆ կառուցվածքային այն կաղապարին, որում գլխավոր նախադասության ստորոգյալը ա)* իմացական բայ *է՝ Գիտես, որ ես սիրոյ տէր եմ (56), Դու լաւ իմացիր, որ նա վասվառ է (93) և այլն.*

բ) ասացական բայ է՝ *Թէ որ դու էլ ինձ կու սիրես,* ասէ՛, *իմանամ (46), Չես* ասիլ, *թէ Նաղաշ[ի]ն ուշն ու խելքն գնաց (22) և այլն. գ)* զգացական, կամական, ցանկություն արտահայտող բայ է. *ստորադասական նախադասությունն այս դեպքում դրսևորում է անձկություն, բաղձանք, ձգտում.* Կուզեմ, *որ հոգիս հանեմ (62),* Խնդրեմք, *որ այսօր... շատ ուրախանայք (159),* Աղաչենք *մեր հոգւոյ սուրբ եասաւուլն, Որ մեր հոգին խառնի սրբոց երամն (167) և այլն։*

Ինչպես արդի հայերենի համար նշել է Գ. Գարեգինյանը[9], *տաղերում նույնպես ուղիղ խնդիր ԵՆ-երում իմացական և ասացական բայերի կիրառության դեպքերում* թէ *շաղկապը խոսքին, ասես, հաղորդում է անստուգություն, անհավաստիություն։*

Նշված կառույցի այլ տարբերակ են հարցական բնույթի *ուղիղ խնդիր ԵՆ-երը. Դու Նաղաշին է՞ր կսպանես, տեսնեմ՝* թէ քեզ ի՞նչ է արած *(24), Վաղին ոչ գիտես,* թէ զի՞նչ ծնանի *(170)։*

Զգալի թիվ են կազմում ստորոգյալ+ստորադասական շաղկապ... (Գիտեմ, որ ..., Խնդրեմք, որ ... Տես, որ..., Լսես, որ /թէ...) կաղապարով ուղիղ խնդիր ԵՆ ունեցող ԲՄՆ-երը։ Այս տիպի կառույցներում նկատելի է ստորադասական շաղկապների և հարաբերական դերանունների բազմազանությունը՝ որ, թէ, թէ որ, ինչ(որ), անց, երբ, ինչպէս: *Սա նշանակում է, թե XVII դ. վերջերին և XVIII դ. սկզբներին աշխարհաբարը բարդ զատողություններ, բարդ մտածումներ արտահայտելու համար ուներ շաղկապային բավականաչափ հարուստ հնարավորություններ։*

Ինչ վերաբերում է ուղիղ խնդիր ԵՆ շարադասությանը, ապա այն կայուն չէ, հանդիպում են և՛ նախադաս, և՛ միջադաս, և՛ հետադաս կիրառություններ, որ երևում է վերը բերված օրինակներում։

Սակայն հանդիպող անուղղակի խնդիր ԵՆ-երից կարելի է առանձնացնել իմաստային հետևյալ խմբերը.

ա) ճանաչման *անուղղակի խնդիր. Թողեմ կերթամ,* ով որ տեսնաս՝ *Կու* հարցանես *(37), Զարուխ շինեմ Ղարաբաղի՝* Ով որ եկեալ է ինձ թաղի *(97).*

բ) վերաբերության *անուղղակի խնդիր. Քեզ մեծ աւետիք դիլաք,* Որ Ավումին կինն մեռաւ *(137), Այժմ միաք արա բարակ, խոր,* Թէ իմ ձեռնէն ոնց կուտես չոր *(111).*

---

9 Գարեգինյան Գ., *1963, 190։*

գ) անջատման անուղղակի խնդիր. Ումից որ կուզես՝ առ խաբար (53), Խապար չեմ թէ Քեզ ի՞նչ արի (37) և այլն:

Այս բնույթի ԵՆ-երը գլխավորին ստորադասվում են որ, թէ շաղկապներով, ով որ (ով–ոք), թէ որ կապակցման հարադրական ձևերով՝ և՛ նախադաս, և՛ հետադաս:

Պարագա ԵՆ-երի շարքում ժամանակի պարագա ԵՆ-երն աչքի են ընկնում ստորադասման միջոցների բազմազանությամբ և արտահայտած իմաստների նրբերանգներով: Ավանդաբար ընդունված համաժամանակյա և տարժամանակյա հարաբերություն դրսևորող ժամանակի պարագա ԵՆ-երի կողքին տարբերակվում է նաև ժամանակային շարունակականության-տևականության հարաբերություն:

Տողերում հետևանքի երանգով գործողության ժամանակային հարաբերություն են արտահայտում երբ, երբ որ, յորժամ շաղկապները. Երբ իմանաս՝ կու հովանաս (72), Յորժամ եղև զարուն, արև ծագեցաւ (169) և այլն:

Երբ ... յայնժամ, յորժամ ...յայնժամ շաղկապների զուգադիր կիրառությունն արտահայտում է զուգադրվող գործողությունների համաժամանակություն. Երբ մեղայ չը տայ ... Յայնժամ քեզ խոցէ ... (83), Յորժամ փորձութեան մէջն անկանի, Յայնժամ խրատն յիշէ ... (87):

Չի շաղկապի պես, չափազանց սակավ դեպքերում են գործածված նաև յորժամ, յայնժամ գրաբարյան շաղկապները: Դրա փոխարեն ժամանակի պարագա ԵՆ-երը, ինչպես տեսնում ենք, գլխավորին ստորադասվում են հիմնականում որ շաղկապով, երբ որ, քանի որ, թէ որ հարադրական ձևերով: Եվ դա, անշուշտ, ժողովրդախոսակցական լեզվի հատկանիշ է: Ընդ որում, որ շաղկապով ժամանակի պարագա ԵՆ-երը և՛ համաժամանակյա, և՛ տարժամանակյա բնույթ ունեն. Աչքերդ նաղի ջալլադ, որ տեսնեմ՝ սիրտս կու դողայ (23), Քեզ որ տեսայ՝ աչքս բացի (74), Մէկ մարդ, որ դատի, շատ հարստանայ ... (92. փոքր-ինչ պայմանական երանգով՝ ...եթե դատի ...):

Մասնակի համաժամանակյա հարաբերությամբ մասամբ պայմանականության երանգ են պարունակում թէ, թէ որ շաղկապների հետևյալ կիրառությունները=երբ-ին. Թէ ծառի ծաղիկն ընկնի մէջ գոգին, Մարդ կու փառաւորի ... (168), Թէ որ չը խօսի՝ սիրտն չի հովանալ (83):

Հետևանքային երանգով գործողության ժամանակային հաջորդականություն բնութագրող հարաբերությամբ է գործածված թէ որ շաղ-

կապը. Թէ որ յանկարծ վեր կենայ սաղ, Մկներն կանէ արինշաղախ (97)։

Երբ շաղկապը ժամանակային պայմանականություն է դրսևորում. Երբ նորա անճամ խօսքերըն լսես, Կամ թերի կելնիս կամ կու սովորես (93) տողում. երբ-ը կարելի է փոխարինել եթե շաղկապով։

Ժամանակի պարագա ԵՆ-երը որոշ դեպքերում աղերսվում են չափ ու քանակի պարագա ԵՆ-երին, որքանով վերջիններս տողերում արտահայտում են նաև ժամանակի և գործողության տևողության չափ ու քանակ[10]. Որքան որձակն էր կենդանի՝ Հաւերն կային ի խրախճանի (133), Քանի քեզ միտս կու բերեմ, խելք չի մնալ ... ... (56) և այլն։

Պատճառի պարագա ԵՆ-երը գլխավորին ստորադասվում են թէ, երբ, քանի որ շաղկապներով՝ Ուրբաթն չեն բանիլ, Թէ. «Սուգ այ ... (103), Կանանչ խոտի վրա նստեցէք շարուն, Քանի որ վառ է ձեր կենաց ամն (167) և այլն։ Ժողովրդախոսակցականին հարազատ հյուսվածքներում հանդիպող նշված հարաբերությունը մեր օրերում տիրապետող դարձավ քանի որ կապակցությամբ։ Գործողության տևողության փոխարեն ժամանակակից հայերենում այն բացարձակապես բընութագրում է պատճառ։

Պատճառի պարագա ԵՆ կառույցում հաճախ է հանդիպում բարբառներում լայնորեն գործածվող զերա (զէրա) փոխառյալ շաղկապը. Զէրա էրեց ես, խաբր արի (115), Սովորած եմ գործել սալակ, Զերա շատ եմ կոտրած թալակ (146)։

Պայմանի պարագա ԵՆ-երը գլխավորին ստորադասվում են գերադանցապես թէ, եթէ շաղկապներով. Թէ ինձ հետ սէր ունիս՝ Եկ ինձ մօտ քաֆիր (21), Եթէ փուշ տնկես՝ հոգիտ կու էրես (92) և այլն։ Երբեմն էլ նույն բնույթի նախադասությունները կապակցվում են կամ շաղկապով, ստանալով գործողության պայմանի ընտրության հնարավորության երանգ. Եթէ հաճաթ տաս դու այլոց մարդկան, Կամ քոնն մնայ օտար մարդոյ տանն... (88), Թէ մարդոյ կովիս կամ թէ բարկանաս, Քեզ սուրբ չհամարիս ... (90)։ Ինչպես տեսնում ենք, իրագործելի և անիրագործելի տարբերակային իմաստներով, շաղկապներով ու շարադասությամբ տողերի պայմանի պարագա ԵՆ-երը համապատասխանում են արդի հայերենին։

Պայման և միաժամանակ զիջական երանգ է պարունակում՝ Թէ

---

10 Հմմտ. Գարեգինյան Գ., 1963, 319։

որ էտնով չանիլ հերիք, Այլ փող ժողովիր բերիք (122) նախադասությունը. արդի հայերենում թէ որ-ը փոխարինվել է լայնորեն կիրառվող երբ ... ապա զուգաշաղկապով:

Պայմանականության որոշ երանգ ունի անչափ ... էնչափ հարաբերական բառերի զուգադիր կիրառությունը. Անչափ փող որ տաս դալալչուն, էնչափ էլ հալ՝ փլաւ, թութուն ... (114):

Թէպէտ ... բայց զուգաշաղկապով ձևավորված խոհախրատական տաղերից քաղված հետևյալ նախադասությունը դրսևորում է զուտ զիջական հարաբերություն. Թէպէտ առերես խօսի քաղցրագոյն, Բայց ծածուկ կամի տալ դեղ դառնագոյն (79):

Հաճախական են նպատակի պարագա ԵՆ-երը, որոնք գերադասին ստորադասվում են ամենուր գործող որ, թէ շաղկապներով. բայց համապատասխանաբար դրվում է հրամայական և ըղձական եղանակներով. Յորեն սիրմանես, որ հաց վայելես (92), Մտիկ կանես այլոց ձեռնի, Թէ չալակս ո՞վ հաց կու բերնի ... (136) և այլն:

Իբր շաղկապով ձևավորված նպատակի պարագա ԵՆ-երից է՝ Սուրբ Կարապետն սիրել ես, Հազար խօսքով կողկողել ես, Իբր չորս կողմն գովել ես (147). Թերևս, առկա է նաև ենթադրության որոշ երանգ:

Ձևի պարագա ԵՆ-երը ստորադասվում են արդի հայերենում լայնորեն կիրառվող ինչպէս, որպէս (որ) և բարբառային հենց (հէնց) հարաբերականներով. Որպէս որ հայես՝ այնպէս կերևես (92), Մարիֆաթէն խիստ են հեռի, Հէնց են բէփառծ ճառափեռի (122) և այլն: Որպես կանոն գլխավոր նախադասությունը հանդես է գալիս և՛ հարաբերյալով, և՛ առանց դրա: Հարաբերվող նախադասությունները նույնպես որպես կանոն առաջադաս են, և այս դեպքում ես գործ ունենք նկարիչ բանաստեղծի ստեղծագործական ուշադրավ առանձնահատկության հետ. նա հակված է ամենուրեք նախ շեշտել համեմատվող կողմը:

Ձևի պարագա ԵՆ-երի շարքում տարբերակելի են, այնքան էլ մեծ թիվ չկազմող, նմանության (զինչ=ինչպես) և համեմատության (քան, քանց թէ) նախադասությունները. Զինչ ձուկն՝ չէին դուրս—Ես կուզամ տապակ (34), Լաւ է, որ մտնես պատան[ք]ըն, Քանց թէ գողանաս այանէն (114), Լաւ է ընդ իմաստնոց միշտ քաղցած մնալ, Քան ընդ տգիտաց ուտել և ցնծալ ... (91): Վերջին օրինակում գլխավոր նախա-

դասության մեջ առկա լաւ բառը իր հերթին ավելի է շեշտում համեմատվող կողմը։

Քննվող այս ամբողջ շարքում հանդիպում է տեղի պարագա ԵՆ միայն մեկ դեպք. Եւս առաւել ի մէջ իւր գեղի, Որ տան միշտ ըմպել դառնագոյն լեղի *(80)։ Մինչդեռ պարզ նախադասության կառույցում, ինչպես կտեսնենք, լայնորեն գործածված են տեղի պարագա լրացումներ։*

3. Շարահարությամբ բարդ նախադասություն

Շարահարությունը՝ նախադասությունների անշաղկապ, առանց հարաբերական բառերի կապակցությունն է։ Նման դեպքերում կապակցմանը նպաստում են նախադասությունների իմաստային փոխհարաբերությունը, հնչերանգը, ստորոգյալների եղանակաժամանակային գործածությունը, լեզվական կապակցության այլ միջոցներ։

Անկախ և կախյալ շարահարությամբ բարդ նախադասությունների[11] *(ԱՇԲՆ և ԿՇԲՆ) տարբերակման ընդունված ելակետը բաղադրիչ մասերի համեմատական անկախությունն ու կախյալությունն է։ Դրանք տարբերվում են նաև ստորոգյալների արտահայտած նշանակությունների որոշ համապատասխանությամբ, բարդ նախադասությունների (ԲՆ) կազմի մեջ մտնող նախադասությունների շարադասական փոխկախվածությամբ*[12]*։*

Մ. Աբեղյանը գտնում էր, որ «Շարահարությունը խոսքերի կապակցության ամենապարզ, սկզբնական ձևն է», որը «հատուկ է ժողովրդական լեզվին...»[13]*։ Իր ժամանակաշրջանի ժողովրդախոսակցական լեզվից, բառ ու բանից, դարձվածքներից լայնորեն սնված Հովնաթանի ստեղծագործության ԲՆ-երի կապակցության կառուցվածքը քննելիս հանդիպում են զգալի թվով շարահարությամբ ԲՆ։ Դրանք որոշակի հետաքրքրություն են ներկայացնում ինչպես իրենց արտահայտած իմաստային նրբերանգներով, այնպես էլ լեզվական այլևայլ իրո-*

---

11 *Գ. Գարեգինյանը «Ժամանակակից հայոց լեզու» աշխատությունում ընդունում է համապատասխանաբար բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասություններին հարաբերակից անշաղկապ կապակցությամբ կառույցներ ձևակերպումը։* Գարեգինյան Գ., *1984, 304—305։*

12 Առաքելյան Վ., *1964, 364։*

13 Աբեղյան Մ., *1974, 502։*

ղությունների շարքում՝ ժամանակի խոսակցական հայերենի և արդի հայերենի լեզվամտածողության համընկնումներով։

Տաղերի ԱՇԲՆ-երը բնութագրվում են համաժամանակության, զուգադրական-հակադրական, հարակցական իմաստային հարաբերությունների դրսևորումներով։ Համաժամանակությունը միևնույն ժամանակահատվածում թվարկվող գործողությունների կապվածությունն է, երբ ԲՆ-երը ձևավորվում են ստորոգյալների ինչպես միևնույն, այնպես էլ տարբեր եղանակաժամանակային ձևերով. Վարդերն կու բացուի, խօսի բլբուլն, Մէջլիսի մէջ ցրուեն[14] ռեհան, սմբուլն (167), Յաւուրս գարնան եղանակին փթթեալ ծաղկեցաւ այգին, Հնչէ քաղցր ձայն տատրակին (164), Ընկայ քո մեղաց ծովն, էլ չի մնաց հոգւոյ պաշար (23)[15]։

Ժամանակային հաջորդականություն՝ գործողությունների հաջորդում ժամանակային առումով, դրսևորող ԱՇԲՆ-երը, թերևս, հիշեցնում են «այսուհետև» նշանակությամբ՝ ապա, ապա թե, և ապա շաղկապների, նախ ... ապա զուգադիր շաղկապի գործածությունները. Գամ, քեզի մօտ նստիմ, տուր սիրոյ գինի ... (16), Ասաց թէ. «Երկու լաւ հաւ են բերել, Երկու քաղցած մարդ եկել են, կերել, Ըռանգ են տուել, տունս աւերել ... (52)։

Նման նախադասություններում արդեն առկա է հաջորդական գործողությունների պատճառահետևանքային առնչության որոշակի երանգ[16]. Ղալամ ունքերդ կու խաղայ, Կու տեսնիմ՝ սիրտս կու դողայ (36), Գընաց աշուն և ամառն, Յամարեաց ծաղկունք և ծառն (72)։ Նշված տեսակի նախադասությունները նաև եռաբաղադրիչ են. Սիրամարգի նման քայլին, Աստղանման գունով փայլին, Տեսողքն զարմանան, մայլին՝ Վրաստանայ գօղալները ... (13)։

Համաժամանակության տարբերակ են մասնակի համաժամանա-

---

14 Սահմանական ներկան տաղերում դրսևորվում է գրաբարյան ներկայով, կու, կ մասնիկ+գրաբարյան ներկա, -ում անկատար դերբայ+եմ օժանդակ բայի ներկա ժամանակ կառուցվածքով։

15 Վ. Առաքելյանի հավաստումով, անցյալ կատարյալը ընդհանրապես սակավ է միաժամանակություն արտահայտում, քանի որ ցույց է տալիս միանգամյա գործողություն առանց ժամանակային երկար տևողության։ Առաքելյան Վ., 1964, 302։

16 Հմմտ. Գարեգինյան Գ., 1963, 114. Պառնասյան Ն., 1964, 33։

կության[17] հարաբերություն արտահայտող ԲՆ-երը, որպիսիք, սակայն, տաղերում քիչ են գործածված. Նոր ծաղկեցաւ այգին, եկել է գարուն (34), Նոր գարուն է, հնչեաց հարաւ (36), Գարուն եղև, քաղցր խօսի բլբուլն (40)։

Հակադրական հարաբերությամբ ԲՆ-ում հակադրվում են երևույթներ, դեպքեր, գործողություններ, անձինք։ Այդօրինակ նախադասություններում դրսևորվում են. ա) զուգադրական-համեմատական՝ Քո սէրն կրակ է, իմ սիրտն՝ քուրայ (54), Դու Լեյլի ջընուն, զալում, Ես եղէ Մէջլուն, զալում (8), ապա և՝ բ) հակադրական հարաբերություններ՝ Մազ մանօղներուն ճրագն վառուեց, Ջէրպապ գործողին սիրտն պատառուեց (80), Սրի եարէն կուգայ, լեզուինը չի գար (90)։ Զուգադրմանն ու հակադրմանը հաջորդող հետևանքային հարաբերությամբ է իմաստավորված՝ Ես հիվանդ էի, մէյլ `իր տվել. Ողջացայ ... Հեշտացայ ... (8) նախադասությունը։

Տաղերը (մեծ մասամբ սիրո) բնութագրվում են զուգադրվող-համեմատվող գործողությունների, երևույթների, իրողությունների հակադրությամբ, ասել է՝ բանաստեղծի և «զալում եարի» հոգեվիճակների, հուզապրումների, նրանց գործողությունների համեմատությամբ։ Զուգադրական-հակադրական հարաբերություն արտահայտող ԱՇԲՆ-երից են. Առաւօտուց վարդ կու քաղես, Ինձ լաց կանես, դու՝ ծիծաղես (36), Իմ սիրտը արուն արիր, դու՝ կելնես շուռ գաս ծիծաղելով (32)։

Տաղերի զոդվածով կառույցներում հակադրական (նաև զուգադրական-համեմատական) հարաբերությամբ են գործածվում բայց, իսկ, և, այլ, բէ չէ (կամ թէ չէ), էլ շաղկապները, իսկ հակադրական-համեմատական երանգով՝ կամ շաղկապը (տե՛ս էջ 158)։

Հարակցական (հավելական) կապակցությամբ շարահարական կառույցները ԲՆ-ը հաղորդելով լրացական-բացատրական երանգ, ավելի համակողմանիորեն են բացահայտում նախադասության իմաստը։ Լեզվաբանական գրականության մեջ նշվում է, որ նման դեպքերում բաղադրիչ նախադասությունների իմաստային կապը ավելի թույլ է, և

---

17 Մասնակի համաժամանակությունն այն է, երբ գործողություններից մեկը արտահայտվում է տևական ժամանակով, մինչդեռ մյուսը համընկնում է միայն մի պահին։ Մասնակի համաժամանակության մասին տե՛ս Առաքելյան Վ., *1964, 289—299*. Պառնասյան Ն., *1964, 29—30*։

բաղադրիչ մասերը համեմատաբար ավելի ինքնուրույն են: Դա տեսնում ենք հետևյալ չափատողերում. Գոհանամք զտեսանել, որ ունիմք սեղան. դուն միշտ չէն կենայր (159), Ղալապալուղ է. Քեֆերս է հասեալ այսօր խիստ աղէկ (160): Հարակցական հարաբերությամբ ԲՆ-երը տաղերում աչքի են ընկնում և բացատրական շեշտված երանգով. Դու ինձ արել ես իմ խելքէն մոլոր, զարդերս եղև շատ թալալ և նոր (49), Իմ եարըն նստել դամով, Լեզուն քանց շաքար համով, Ինձ կու սիրէ իր կամով (62) և այլն: Հարակցական, մասամբ և բնութագրական է՝ Սուտ աշխարհս անցաւոր է, մութն երազ կու նմանի (184), Բնաւ խելք չունի, խապառ չեթ է (135) տողերի արտահայտած հարաբերությունը: Իբրև նմանատիպ նախադասություններ կարելի է գիտել նաև այն ԲՆ-երը, որոնց երկրորդ բաղադրիչը պարունակում է հարցում, քանի որ հարցը հավելական մի նոր երանգ է ավելացնում հաղորդվածին. այսպես՝ Նոր ծաղկեցաւ այգին, եկել է գարուն, Ե՞ր իմ սիրտս կաննես նարալու արիւն (34) և այլն:

Ըստ Մ. Աբեղյանի, շարահարությամբ կապակցություն է նաև «միավորյալ խոսք ասածը, որի մեջ մի քանի համազոր խոսքեր միանում են մի ընդհանուր ենթակայով»[18]: Այդպիսիք որոշակիորեն միջանկյալ դիրք են գրավում ԱՇԲՆ և ԿՇԲՆ-երի շարքում: Չափածո խոսքի կարճառոտության, հանգի, ոտքի թելադրանքով տաղերում բազմաթիվ են զեղչված ենթակայով միավորյալ բնույթի ԱՇԲ-ները: Դրանք կարելի է տարբերակել. ա) համաժամանակություն՝ Գիր էր գրում քո անունն, Միտք ի անում քո սիրոյ բանն (9). բ) ժամանակային հաջորդականություն՝ Թասն խմէք, մէկ ողորմի ասացէք իրեանն (179), Զիմ խելքն առիր, դու գիս արիր գիւանայ (192), գ) զուգադրական-հակադրական հարաբերություններ նշող նախադասություններ՝ Չեն ճանաչել գիրք և ճաշոց, Պատարագին ածեն քշոց (118), Աղքատ մեռելէն խռովին, Հարըստին վրայ ժողովին (121):

Համաժամանակության հարաբերությամբ հետևանքի երանգ արտահայտող վերը նշված եռաբաղադրիչ ԲՆ-երից սիրերգերում զգալի թիվ են կազմում միավորյալ բնույթի նախադասությունները. Պաղչումն ծաղիկ քաղես, ծածուկ դէպ ինձ ծիծաղես, Կրակով սիրտս դաղես (63), Ղեղաջ աչքով մտիկ անես, Ծիծաղելով հոգոց հանես, Ունքերովդ ինձ կու սպանես (47) և այլն: Այդպիսիք բանաստեղծի սիրո, կարոտի ու

18 Աբեղյան Մ., *1974*, *539*:

տառապանքի, այսպես ասած, միավորված բազմաստիճան դրսևորումներն են՝ բանաստեղծի հոգեկան վիճակի ու սիրած «զալումի» անտարբերության շերտերով։

Ինչպես ժողովրդական երգերում, այնպես էլ Հովնաթանի տաղերում, միավորյալ բնույթի ԲՆ-երի կապակցմանը հաճախ մասնակցում է կրկնադիր գործածությամբ է՞ր հարցական դերանունը. Է՞ր գրագիր սովորեցիր, է՞ր չի քո տանն նստեցիր (112), է՞ր չես կտրում, է՞ր չես դորում ... է՞ր չես վանքին այգին բրում (148). (Հմմտ.՝ Հովհ. Թումանյանի «Անուշ» պոեմի համանման կազմության հետևյալ տողերը՝ Ընչի՞ չես խոսում, ընչի՞ չես նայում ... Դու իմ գերեզմանն ընչի՞ ես խըլում...)[19]*։*

ԿՇԲՆ-ում կամ, ինչպես արդեն ասվել է, ԲՄՆ-երին հարաբերակից անշաղկապ կապակցությամբ կառույցներում, բաղադրիչ նախադասություններից մեկը լրացնում է մյուսում բացակայող որևէ անդամը, առավել ամբողջացնելով նախադասության իմաստը։ Փոխադարձ կախվածությամբ բնութագրվող կախյալ շարահարությամբ կառույցները դրըսևորում են ենթակայի, նրա լրացումների, խնդրային, պարագայական հարաբերություններ։

Ենթակայական հարաբերություն արտահայտող տողերի սակավաթիվ շարահարական կառույցներում կախյալությունն արտահայտվում է նախորդ նախադասության ստորոգյալի բաղադրյալ կազմությամբ. Լավ է՝ քո պարոն կենդան չի (39), Շատ վախտ է՝ աչքով չես արել (52)։ Քննելով ԲՄՆ-երը, Վ. Առաքելյանը առանձնացնում է չլինի՞ թե ... *կաղապարով ենթակա ԵՆ-երը*[20]*։ Տաղերում հանդիպում են ակնհայտորեն ժողովրդախոսակցական լեզվի ազդեցությամբ ձևավորված շարահարական նման կառույցներ. Չլինի՝ ինձ մոռանաս, թարգես (47), Քո փործած մարդն, չըլնի՝ նոր փործես (90), Չըլնի՝ մարդոյ տաք վնաս (186)։ Համանման բնույթի են նաև՝ Ինչ կելնի՝ ինձ ձեր տուն տանես (27), Ինչ կելնի՝ դուշմանն անարգես (56) ԲՆ-երը, որոք, սակայն, ունենալով որոշակի պայմանականության երանգ (ինչ կելնի ... եթե ...), պարունակում են և գործողության արժեքավորման իմաստ (հմմտ.՝ ռուս.* Добро бы, ладно бы)[21]*։*

---

19 Թումանյան Հ., *1953, 204։*

20 Առաքելյան Վ., *1964, 111։*

21 *Колосова Т., Черемисина.* М., 1984, 74.

Լեզվաբանական գրականության մեջ արձանագրվում է, որ հատկացուցիչ շարահարական կապակցությունները հազվադեպ են։ Որքանով հաջողվել է պարզել, տաղերում այդպիսիք չկան (հմմտ. էջ 159)։ Սակավ են բացահայտիչի հարաբերություն արտահայտող ԿՇԲՆ-երը։ Գտնում ենք մեկական երանգով մասնական բացահայտիչ[22] շարահարական կապակցությամբ հետևյալ ԲՆ՝ Ծոցդ կայ երկու քաղաք զանշան, Մէկն Ըսպահան է և մեկն Քեաշան (50)։ Թերևս, այդպիսին կարելի է գիտել և ժողովրդախոսակցական լեզվի նմանությամբ առավելագույնս համառոտված՝ Մինն Հէյդար, մինն Զօմար, Սխալ խառնափնդոր տոմար (122) անվանական նախադասությունը։

Ստորոգելիական վերադրի հարաբերություն արտահայտող ԿՇԲՆ-երի կառուցվածքային առանձնահատկությունը՝ հարաբերյալի առկայությունն է գլխավորում։ Բացառություն չեն և տաղերի նման կարգի նախադասությունները. Խելօք մարդն այն է՝ իւր չափն իմանայ (89), Լաւ մարդն այն է, ինչպէս եկեալ է՝ էլ այնպէս գնայ (161)։

Հետաքրքրական է, որ վերը ներկայացված ԿՇԲՆ-երը և դրանց զոդվածով կառույցները համարյա հավասարաչափ սակավ գործածություն ունեն։ Այս և նման երևույթների բացատրությունն այն է, որ, ինչպես ժողովրդական խաղիկներն ու երգերը, տաղերը պարզ ու անմիջական պատկերավոր հյուսվածքներ են, ուրեմն և՝ չունեն բազմապիսի հարաբերություններով ագուցվող հուզախոհական կուտակումներ։

Այլ է որոշչային հարաբերություն դրսևորող ԿՇԲՆ-երի գործածությունը։ Թեև այս դեպքում էլ հաճախական է գլխավոր նախադասության միևնույն՝ ենթակա+ստորոգյալ ... կաղապարը. Մարդ կայ՝ մարդասպան է և ընկեր գողի, Մարդ կայ՝ իւր կամաւ աշխարհս կու թողի, Մարդ կայ՝ մեղաց մէջ տալիս է լողի, Մարդ կայ՝ արտասուօք մեղքն կողողի (91) և այլն։

Համատիպ ԲՆ-երի ձևավորմանը երբեմն նպաստում է մէկ (մի) անորոշ դերանվան առկայությունը նախորդ նախադասության մեջ. Ունիս մէկ փիս ղայտայ ... Որդնած հաւ կուտես զինչ գեատայ (114)։ «Անկախ» (առանց հարաբերական դերանվան) դրսևորում ունի որոշչային հարաբերությամբ շարահարական կառուցվածքը. Կարդացող շատ կայ, խելքն թեթև է (83)։ Փոքր-ինչ մեկնական է ... խմէք անուշ գի-

---

22 Պապոյան Ա., 1968, 101։

նին, բաժակ է անապական (180) նախադասության որոշչային հարաբերությունը։

Սրանց համեմատությամբ հաճախական են խնդրային և պարագայական հարաբերություն արտահայտող նախադասությունները (ինչ դիտվում է և նրանց զոդվածով կիրառությունների ժամանակ)։

Խնդրային հարաբերությամբ շարահարական ԲՆ-ում վճռորոշը խնդրառու բայի առկայությունն է։ Ուղիղ խնդրի հարաբերություն արտահայտող կառույցներում օրինաչափ է ներգործական սեռի ասացական, իմացական, զգացական, կամային բայերի գործածությունը. Ասել են՝ թէ «Նա որ Նաղաշ է, Գիտէ՝ ունքերս ղարաղաշ է, Ասէք սուրաթիս նման քաշէ» (9), Երթամ, աղաչեմ, բալքի ըռահմ անի, դուռըն բանայ (24) և այլն։

Անուղղակի խնդրի հարաբերության ձևավորումը կախված է բայիմաստից։ Անջատման անուղղակի խնդիր շարահարական կապակցությամբ կառույցները հանդիպում են վախել, խապար լինել բայերի առկայությամբ. Խապար եմ՝ քեզ էլ միտք ունես (38), Վախեմ ամէն թողնիք, փախչիք .... (122)։ Զոդվածով նմանատիպ կառույցներում իշխում է րէ շաղկապը (տե՛ս էջ 161)։

Ինչ վերաբերում է պարագայական հարաբերություն նշող ԿՇԲՆ-երին, ապա, որքանով Հովնաթանի սիրերգությունն իր լիցքով ըղձերգություն է, դրա թելադրանքով նրա սիրային տաղերում ավելի քան հաճախակի են նպատակի հարաբերությամբ ԲՆ-երի ինչպես զոդվածով, այնպես էլ շարահարական կառույցները։ Շարահարական նման կառույցներում ստորոգյալը առավելապես դրված է հրամայական եղանակով, և բանաստեղծական խոսքը իրենից ներկայացնում է հրամանի և իղձի յուրատեսակ իմաստային խառնուրդ. Գիր ուղարկի՝ սիրտըս հովանայ, Ծածուկ ուղարկի, մարդ չիմանայ (9), Դու գիս սիրէ, աշխարհ-ալէմ իմանայ (92) և այլն։ Նպատակի հարաբերությունը միտք անել բայական հարադրությամբ շեշտված-սաստկացված է. Արին անելու մի՞տք ունես, հագել ես կարմիր սարասար (32) նախադասությունում, որտեղ նպատակի հարաբերությամբ կառույցն առաջադաս է։ Որոշակի ցանկություն իրագործելու նպատակ են արտահայտում և հետևյալ տողերը. Այս գիշեր դուռն բաց թողնեմ՝ Մեր տուն գաս (36), Ինձ ծախեմ՝ էդ բախչեդ առնեմ (48)։

Պատճառի հարաբերությամբ ԿՇԲՆ-երը առանձնանում են կառուցվածքային այնպիսի կաղապարով, որտեղ նախորդ նախադասության

ստորոգյալը արտահայտված է արգելական հրամայականով կամ ժըխտական խոնարհման բայով. ինչպես՝ Նըշանց մի տալ, զլում-քաֆիր, խեղճ է իմ հոգին (21), Ինձ հետ մի կենար զինչպէս ղան-աղան, Քեզ շատ կու սիրեմ ... (49), Խապար ու գիր չես ուղարկում, Նրա համար խիստ եմ ղառն (52. պատճառը շեշտված է և նրա համար արտահայտությամբ), Ես ղարիպ եմ, դիպչիլ մի երած սրտիս (40. հետադաս կիրառություն): Ընդգծված ստորոգյալը, ասես, նպաստում է խոսքի վերաիմաստավորմանն ու միաժամանակ իմաստի բացատրությանը: Այս օրինակները ևս հաստատում են, որ նախադասության այդպիսի կառուցվածքը հատուկ է ժողովրդական լեզվամտածողությանը, այլև այն գրողների լեզվին ու ոճին, որոնք մոտ են կանգնած ժողովրդական ակունքներին:

Տաղերի նմանատիպ նախադասությունների ստորոգյալը նաև բաղադրյալ է կամ բայական հարադրություն. Ցաւոտ սիրոյդ ես հիւանդ եմ, **Ես քան զքեզ դարդիմանդ եմ (38), Բնավ խելք չունի, խապառ շէթ է, Կատուն արեր է իր եղբայր (135):**

Նշված շարահարական կառույցին իմաստային առումով մոտ են հետևանքի հարաբերություն արտահայտող ԿՇԲՆ-երը, որոնք, թերևս, կարելի է առանձնացնել իբրև պատճառահետևանքային հարաբերությամբ շարահարական կառույցներ. Լուսին երեսդ ամէն օր կու նորի, Քեզ տեսնողին խելքն ի՞նչպէս բոլորի (42), Քո սիրոյդ ես հիւանդացայ, Աշխարհքս ամեն մոռացայ (72), Ծով աչքերիդ մոխկ կանեմ՝ ձեռաց կու գնամ (46): Այս տիպի նախադասությունները հեշտությամբ կարելի է շփոթել հետևանքի երանգով միաժամանակության հարաբերություն նշող ԲՆ-երի հետ:

Ի հակադրություն ժամանակի պարագա ԵՆ-երի, որոնք առանձնանում են ոչ միայն կապակցման միջոցների բազմազանությամբ, այլև արտահայտվող իմաստային նրբերանգներով, կախյալ շարահարությամբ այդօրինակ կառույցները քիչ են: Դրանցից են՝ ժամանակային հաջորդականության երանգով արտահայտվածները. Տէրտէրն այս բանս իմացաւ, Իւր երեսին գոյնն դարձաւ (142) և այլն. սրա և՝ հետևանքի երանգ ունեցող այս օրինակը. Միտըս եմ բերում ... Ես խիստ եմ երվում ... (8): Կարելի է ասել նաև, որ վերջին դեպքում, թերևս, զգացվում է որոշ պայմանականություն. Համմտ. (Եթե) Միտըս եմ բերում ... Ես խիստ եմ երվում...:

Պայմանի հարաբերություն նշող ԲՆ-երը տաղերում դրսևորվում են

աստուած սիրէֆ դարձվածքով. Աստուած սիրէք գընացեք, տեսէք, թէ իմ եարն տա՞ն այ (24), Աստուած սիրէք, ում սրտում որ նախանձ կա՝ հանի (184)։ Դարձվածային արժեք ունեցող աստուած սիրէֆ արտահայտությունը փոխարինում է եթե աստծուն սիրում եք ... պայմանի պարագա են։ Համանման կազմություն կարելի է գտնել և՝ Հողիգ սիրես, ինձ մէկ պագ տուր ... (36) շարահարական կառույցը՝ եթե հոգիդ սիրում ես ...։

Հովնաթանի տաղերի քննվող շարահարական կապակցությամբ ենների տիպերը խորապես հարազատ են աշխարհաբար հայերենի զարգացման արովյանական շրջանին։ Այդ տիպերից առատ օրինակներ կարելի է քաղել «Վերք Հայաստանիից», այլև ավելի ուշ՝ Հովհ. Հովհաննիսյանի, Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի ստեղծագործություններից, որ նշանակում է, թե շարահարական այդ ձևերը կենդանի գործածությամբ հարատևել են ժողովրդախոսակցականում և փոխանցվել գրական լեզվին։

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ

Նախադասության լրացումների քանակն ու բնույթը պայմանավորվում են գերադաս անդամների հնարավոր արտահայտություններով։ Ստորև ներկայացվում են տաղերի լեզվի նախադասության անդամների ձևաբանական արտահայտությունները։

Գերադաս անդամներից ենթական դրսևորված է.

ա) գոյական անվամբ՝ Դոստն ուրախանայ (192), մանկունֆ երգեն (183).

բ) գոյականաբար գործածվածածականով՝ Ծոյլն քուն կլնի հարբած ... (86), Ձկան համեղն, թազայ ու նորն է (88).

գ) անձնական, ցուցական, հարցական-հարաբերական, անորոշ, որոշյալ, ժխտական դերանվամբ[23]. Ես գիւանայ ջունուն եղէ ... (18), ...այս քեզնէ ծնաւ (93), Ամենֆն միմեանց տուն գնան (176), Պիտի ամենեֆեան խնդան (123), Ով չի խմեր՝ թող քնի (209), Մէկն խաղ էր կանչում, մէկն՝ պար գալիս (168) և այլն.

23 Նշված նախադասություններում դերանունը գրված է ուղղական հոլովով. հանդիպում են և գրաբարին հատուկ դերանվան սեռական-տրական հոլովով ենթակայի կիրառություններ՝ Նախ պարտ էր ֆեզ ընտրել զբարին ... (132), Պարտ էր ֆեզ ... Ծունր դնել ... (147)։

դ) անորոշ, ենթակայական, հարակատար դերբայներով՝ Նազ անելդ խիստ է իմ սիրտն դաղում ... (16), Բռածն լիցի խորան (128), Տեսնողն խև կուլի ... (42) և այլն:

Պարզ և բաղադրյալ բայական ստորոգյալները համապատասխանաբար արտահայտված են բայի բոլոր ժամանակաձևերով (տե՛ս ժամանակաձևերի կազմությունը): Հ. Կուսիկյանը նոր գրական հայերենին բնորոշ երևույթ է դիտում անվանական բաղադրյալ ստորոգյալը, որի կիրառելիությունը կապում է կը և ում ճյուղերի բարբառների բայական համակարգի ամրակայման հետ[24]: Անվանական բաղադրյալ ստորոգյալի ստորոգելիական վերադիրը տաղերում արտահայտված է.

ա) առավելապես ուղղ. հոլովով դրված գոյականով՝ ...էդ ի՞նչպէս դատաստան է (10), ...մեղաց ծով եմ (14), ...սիրոյ տէր եմ (56) և այլն: Մեկ-երկու կիրառություն ունի սեռ.-տր. և գործ. հոլովներով ստորոգելիական վերադիրը. Նա ոչ խելքին էր, ոչ յուշին (142), Մէլով եմ ... Սիրոյդ գինով եմ ... (9).

բ) ածականով՝ Ջկան համեղն, թազայ ու նորն է (88), Գոնճիկ է տոհմ և ցեղըդ (132) և այլն.

գ) անձնական, ցուցական, հարցական-հարաբերական դերանուններով՝ Ես եմ քո ծովային աչքերիդ ծառայ ... (184), Նամուս-ղայրաթի յաւ մարդն այն է ... (86), Ո՞ւր է որձակն հրաշազան (138) և այլն.

դ) կապ, կապի խնդիր+հանգույց կառույցով՝ ...էդ ո՞ւմ համար այ (42), Սիրամարգի նման ես (24) և այլն:

Հովնաթանի քնարերգության մեջ անվանական լրացումներից որոշիչն արտահայտվում է որակական և հարաբերական ածականով. պայծառ երես, համեղ նուշ (5), անուշ խօսք (51), ծովային աչքեր (94), արծաթէ թաս (32), ցաւոտ սէր (38): Որոշիչ են դառնում նաև ուղղ.-ով դրված գոյականները. նշված ծովային աչքեր-ի կողքին հանդիպում են և ծով աչքեր (38, 42, 48, 51...), պաղշայ ծոց (52), լուսին երես (42), ղալամ ունքեր (36) և այլ կառույցներ: Գոյականական մակդիրներ, որպիսիք կամ որոնց նմանները լայնորեն կարելի է վկայակոչել ժողովրդական խաղիկներից: Գոյական որոշիչը արտահայտվում է նաև սեռ.-տր. հոլովով. սիրոյ կրակ (72), անմահութեան հոտ (181, 184), ուրախութեան օր (183): Սրանց կողքին ուշագրավ են բացառականաձև սեռ.-տր.-ով հանդիպող օրինակները, որոնք, ինչպես արդեն նշվել է, բար-

[24] Кусикян И., 1959, 111—112.

բառային տարրեր են՝ յիսուն տարէն *փթած մեռել (36),* մէկ օրէն *հիւր (184)։*

Ժողովրդախոսակցական լեզվում և բարբառներում գործ. հոլովով *գոյականական որոշիչները սովորաբար գործածվում են կենդանության ոլորտի բառակապակցություններում. այդպես է և տաղերում՝* խղով *գաթայն (128), ոսկեղէն* ալմասով *մատանի (32)։*

Բազմազան են նաև որոշչի թվականով, դերանվամբ ու դերբայներով արտահայտված ձևերը։ Թվականներից *հանդիպում են քանակականները՝* երկու *կողմանց (41),* հազար *մարդ (84),* քառասուն *ամաց (130) և այլն։* Դերանուններից, *որքան կարելի է նկատել, շատ են գործածված ցուցականը, անորոշը և որոշյալը, ինչպես արդի հայերենին հարազատ, այնպես էլ գրաբարյան ու բարբառներում կիրառվող որոշիչ-որոշյալ կապակցություններով.* այս *կրակիս (76),* այն *մարդըն(23),* էն *ժուկն (14),* նոյն *ջրովն (76),* այլոց *մարդկան (88),* մէկէլ *խօսօղին (90),* ամենայն *ժամ (157, 183),* այսչափ *բաներ (20) և այլն։*

Դերբայներից *գերազանցապես բնութագրական իմաստով որպես որոշիչ են գործածված անորոշը, հարակատարը, անցյալն ու ենթակայականը.* չասելոյ *բան (90),* գովելոյ *պատճառ (100),* եռած *սիրտ (40, 41),* ոսկէջրած *ծաղկաման (46),* եփեալ *հաւեր,* խորովեալ *գառն (183),* սրտ պահօղ *մարդ (90),* բարկացօղ *մարդ (83) և այլն։*

Բնորոշ է, որ խրատական տաղերում հանդիպում են գրաբարյան անցյալ դերբայով որոշիչներ, իսկ սիրո և խնջույքի տաղերում գործածված հարակատարն ու ենթակայականը ժողովրդախոսակցական մակդիրներ են։ Նմանօրինակ որոշիչներ են նաև կապով և կապի խնդրով, *ինչպես և* կրկնավոր *բարդությամբ արտահայտվածները.* լուսնի նման *պատկեր (8),* վարդի նման *երես (12), խելք (չունին)* չափով սխեռի *(103),* ցեղ-ցեղ *օրէնք (101) և այլն։*

Թուցիկ հայացքով էլ կարելի է նկատել, որ վերը քաղված որոշիչ-որոշյալ կապակցությունները, իրենց հիմնական մասով, երկանդամ են։ Սակայն, տաղերում հանդիպում են ըստ կառուցվածքի եռանդամ, քառանդամ, *և այլ՝ կապակցության բնույթով պայմանավորված՝* համադաս, ստորադաս *և* խառը *որոշիչ-որոշյալի կիրառություններ։ Համադաս բնույթի են՝* նազանի քաղցրիկ *եար (15),* քաղցրախօս և նախշուն *կաքաւ (37),* բազայ և նոր *դարդեր (49),* նոր ղալամքեար *արխալուղ (69)։ Ստորադաս են՝* նոր փռված *վարդ (37),* մեղաց գերի *Նաղաշ (41),* քաղցր քնելու *ժամանակն (107),* արտասուօք բացեալ *աչքեր*

(187), նռան կարմիր ծաղկի նման ծամեր (22)։ Խառը բնույթ ունեն՝ լուսնի նման պայծառ երես (5, 201), խիստ պատուական կամար ունք (6), մեր մեղաց այն օրը (152) և այլն։ Համադաս, ստորադաս և խառը բնույթի այս կառույցները, ունենալով շարահյուսական որոշակի առանձնահատկություններ[25], համատիպ են երկանդամ կապակցություններին, այսինքն՝ արտահայտված են նույն խոսքի մասերով։

Ինչ վերաբերում է հատկացուցիչներին, ապա դրանք նույնպես տաղերում հանդես են գալիս մեծ մասամբ գոյականով, դերանվամբ, դերբայով, հիմնականում արտահայտելով բնութագրական և պատկանելության իմաստ. ծաղկանց բուրաստան (64), Գուրջստանայ խաթուններ, Շէն Թիֆլիզու թաւադներ (11—13), իմ սրտիկս (205), մեր վաթանն (74), այլոց ձեռնի (136) և այլն։ Գոյականաբար գործածված ենթակայական դերբայով են արտահայտված այսպիսիք՝ մանողներուն ճրագ (80), երվողի հալին (29), կարդացողաց համը (119)։

Հովնաթանի տաղերում իշխում են նախադաս չհամաձայնված որոշչի և հատկացուցչի կիրառությունները։ Դրանց կողքին, թերևս, չափածո խոսքի բնույթի թելադրանքով գտնում ենք և սակավաթիվ որոշչային ու հատկացուցչային հետադաս գործածություններ. կարմիր երես նման վարդի (12), խօսք ուրախական (21), աչքերս գետի նման վարար (53), ծառոց պտուղ անուշահամ, հոտ կնդրկի պատուական (80), որդիակ սիրական (128) և այլն։

Ինչպես գրաբարում, միջին հայերենում և արդի հայերենում, տաղերում նույնպես բացահայտիչը մշտապես հետադաս է, դեմքով, թվով, հոլովությամբ համաձայնելով բացահայտյալին. Ես՝ Նաղաշս մեղաց ծով եմ (14), Զիս՝ Յովնաթանս յիշեցէք (188)։

Դառնալով բայական լրացումների արտահայտման հնարավոր ձևերին, հարկ է նշել, որ կառույցներում տարբերակված են նաև այնպիսիք, որպիսիք հետագայում լայնորեն չեն գործածվել։ Ս. Ղազարյանը գտնում է, որ աշխարհաբարի հիմնական առանձնահատկություններից մեկն էլ գրաբարյան նախդիրների գործածության թուլացումն է[26]։ Այս առումով հին գրական հայերենից ժառանգած կառույցների կիրառելիությունը որոշելու համար առանձնացվում են և Հովնաթանի տաղերի նախդրավոր և նախադրություններով կառույցները[27]։

---

25 Մանրամասն տե՛ս Ակնարկներ..., 1975, 164—165։

26 Ղազարյան Ս., 1981, 321։

27 Նախդրավոր կառույցների մասին տե՛ս Քոսյան Վ., 1984, 158—186։

Տաղերում ամենատարբեր իմաստ արտահայտող լրացումները գործածված են առ, ընդ, զ, ի նախդիրներով, որոնք դրսևորում են խնդրային հարաբերություններ, մինչդեռ պարագայական հարաբերություն է արտահայտում գերազանցապես միայն ի նախդիրը։ Նախդրավոր և նախադրություններով կառույցները[28] տաղերում նկատելիորեն բազմազան են և սակայն, գործածության հաճախականությամբ՝ չափազանց նվազ, սահմանափակվում են քաղված նմուշների շրջանակով։ Ուշագրավ է նաև, որ դրանք մեծ մասամբ երգիծական ստեղծագործություններից են, որոնցում կրոնավորներին ծաղկելիս օգտագործվում են նրանց իսկ միջավայրում գործածվող գրաբարյան արտահայտություններ։

Ե՛վ գործածության բազմազանությամբ, և՛ հաճախականությամբ տաղերին բնորոշ են աննախդիր կապակցությունները, որոնք և, հիմնավորվելով, տիրապետող են դառնում նոր գրական լեզվում։

Բայի սեռի հետ կապված ուղիղ խնդիրը արտահայտված է գոյական անվամբ, սիրերգության մեջ ավելի հաճախ դերանվամբ. Իմ սիրտը արուն արիր ... (32), Մարդոյ տուն քանդեն, Կու կտրին կուրճ (84), Քանի քարէքար տաս ինձի ... (19), Յանկարծ ինձ տեսայ ... (49), Ամէնն սև անեմ ձեր գլխին (98) և այլն, և ապա՝ Ձիս կարօտ մի թողուր... (205), Նա զինձ սիրէ ... (85) և այլն։ Այլ դեպքերում ուղիղ խնդիրը դրված է նաև անորոշ և հարակատար դերբայներով. Ճահրակ մանելն թարկ արեց (102), Թէ որ իմ ասածն կանէք ... (123)։ Հանդիպում է և հարադիր կազմությամբ ուղիղ խնդիր. Թէ մէկ թագի ձգեմ փորն, Չի գտնիլ մէկ եշն ու երն (118)։

Ուղիղ խնդիրը գերազանցապես աննախդիր է, ինչպես կարելի է եզրակացնել՝ վերը բերված օրինակներից։ Զ+հայց. հոլովաձև կառույցները հիմնականում գործածվում են գրաբար նախադասություններում։ Նման դեպքերում, եթե նախդրավոր ուղիղ խնդիրը լրացում ունի, ապա նախդիրն անցնում է լրացմանը. Նա կատարեաց զայս հրաման (128), Զիմ խելքն առիր ... (192)։

Բայիմաստին առնչվող, այսինքն՝ բայի բառական իմաստի պահանջով դրված, անուղղակի խնդիրները համապատասխանաբար արտահայտված են.

1. մատուցման, հանգման անուղղակի խնդիր՝ տր. հոլովով. Կա-

[28] Այս բնույթի կառույցները ներկայացվում են բ) կետում։

նանց տան կնդրուկ (121), Թասն լից տուր Յովնաթանին (177), Ծով աչերիդ մտիկ կանեմ ... (146), Հանդիպեցար մարդոյ բարի (115)[29] և այլն։ Հանդիպում է և գոյականաբար գործածված դերբայի կիրառություն՝ Պարգևողին փառս տուք ... (182)։ Այդպիսիք հանդիպում են և դէպ նախադրություն+սեռ.-տր. կամ հայց. հոլովաձև կառույցով. Շամալ կուռդ մեկնէ, ծաղիկ դէպ ինձ բեր (154), Գնաց դէպ Թիֆլիզու խանն (110). բ) նախդիր (առ, ընդ, զ, ի)+հոլովաձև կառույցներով. Բարեխօսեցէք առ տէր վասն մեր (124), Նաև ամէին ընդ մանկանն ... (128), Աղաչեա զաստուած՝ վասն մանկանց եկեղեցւոյ (124), Ի քեզ եմք ապաւին ... (124).

2. միասնության անուղղակի խնդիր՝ սեռ.-տր. հոլովաձև+հետ կապ կառույցով. Քո խօսքն ինձ հետ մէկ արայ (38), Խելօք մարդոյ հետ շրջիր և խօսէ (94) և այլն. բ) ընդ+սեռ.-տր. հոլովաձև կառույցով. Լավ է ընդ իմաստնոց միշտ քաղցած մնալ, Քան ընդ տգիտաց ուտել և ցնծալ (91).

3. անջատման անուղղակի խնդիր, ինչպես արդեն նշվել է, աննախդիր բցռ. հոլովաձևով. Չեմք լուեալ սաղմոսարանէ Եւ ոչ սուրբ աւետարանէ ... Թող ազատվի կանանց բերնէն ... (110)։ Անջատման իմաստն առավել անմիջական է դերանվամբ արտահայտված օրինակներում. ...է՞ր ես ինձնէ հեռանալիս (15—16), Զեզնէ թողութիւն խնդրեցի (150). բ) ի+բցռ. հոլովաձև. Մէկ խապար չես ղրկել ի քո բերանէն (42), Շատ չես նեղանալ դու ի նմանէ (83), Երբ ի նմանէ ծնանի մէկ ցաւ ... (93)։ Վերջին դեպքը դիտվում է իբրև ծագման, սերման[30] անուղղակի խնդիր. տաղերում հանդիպում է և աննախդիր գործածությամբ՝ ...այս քեզնէ ծնաւ (93).

4. հաղորդման անուղղակի խնդիր՝ ասացական բայերի առկայությամբ՝ Ինձ լսես, թէ չէ՝ կասեմ խանին (70), Ջերայ քո վատն ուրիշին կասէ (93).

5. նմանության կամ համապատասխանության անուղղակի խնդիր՝ նմանվել, համեմատվել, համապատասխանել և այլ բայերի առկայությամբ և սեռ.-տր. հոլովաձևով. Մարդոյս կեանքն վայրի ծաղկի նմանի (170), Երեսդ կու նմանի ... վարդին (204) և այլն.

---

29 Նման կառույցները Վ. Առաքելյանի բնութագրությամբ ուղղորման կամ ուղղության խնդիր են։ Առաքելյան Վ., 1958, 302։

30 Նույն տեղում, 316—317։

6. միջոցի անուղղակի խնդիրն արտահայտված է գործ. հոլովաձևերով. Սրտիդ սէրն աչքերովդ ինձ յայտնեցիր ... (32), Սիրտս կրակով երում ես ... (46) և այլն.

7. վերաբերության անուղղակի խնդիր՝ բ) ընդ նախդիր+հոլովաձև կառույցով. Ընդ աղբատաց սիրտն խեթ է (35) և այլն: Վերաբերության հարաբերությամբ գտնում ենք վասն, ի վերայ, սակս նախադրություններով կառույցներ. Վասն գեղեցիկ արուեստաւորաց ... (79), Տաղ ի վերայ կանանց ... (106), Գրեմ քարտէս յոյժ ողբալի ... Սակս չարեացն անպատմելի (135).

8. բաղդատության և համեմատության անուղղակի խնդիր՝ բ) քան+զ+հոլովաձև կառույցով՝ Էլ չկա քան զքեզ սիրուն ... (45): Հանդիպում են և միջին հայերենում նորակազմ հանց, ֆանց նախադրություններով կառույցներ՝ Հաւի միսն հանց էր խուրմայ (142), Էլ չունիմ սիրելի ֆանց քեզ պատուական (35) և այլն.

9. չեզոք ներգործման խնդիր՝ բ) զ, ի+հոլովաձև. Ոչ ի յաստուծոյ երկնչին Եւ ոչ ի մարդկանէ ամաչին (119), Գոհանամք զտեառնէ... (159) և այլն.

10. բացառման անուղղակի խնդիր. զատման հարաբերությունը համապատասխան էլ տաղերում գործածվում են բ) (ի) զատ և առանց կապերով կառույցներով. Մեզնէ զատ ոնչով ... չիմացավ (152), Քեզնէ ի զատ ... (58). Առանց քննելոյ և վկայութեան մարդոյ չբարկանաս ... (89): Հանդիպում է նաև առանց+հայց. հոլովաձև կառույցը՝ Առանց հարցանել մի տար պատասխան (89), Առանց վարդապետ Ո՞նց դառնայ վարպետ (131):

Դառնալով բայական լրացումներից պարագայական հարաբերություն նշող լրացումներին, պետք է ասել, որ տաղերում գործածության հաճախականությամբ և իմաստային երանգներով առանձնանում է տեղի պարագան, և դա, անկասկած, պայմանավորված է նկարիչ բանաստեղծի խառնվածքով. նա հակված է գործողության վայրը ամեն անգամ նկարագրել մանրամասներով.

1. բուն տեղի պարագան արտահայտված է մակբայով, գոյականի ներգ. հոլովաձևերով. Էլ յառաջ բերին սև ճահրակն (107), Գինոյ կուժն կշտին ցցեց (141), Փիլոնացու յո՞ւստ կու ճարէք (121), Կամի այնտեղ գնել վաթան (110), Սրտումս գրել եմ դաղի (97) և այլն. բ) նախդրիվ տր.-ով, հայց.-ով՝ Խելօքն որ խօսի ի դուրս թէ ի տան ... (84), Նստեմք

ի մէջլիս… (159) և ի+մէջ հոլովաձևով՝ Կարմիր վարթ ես ցէլ ի մէջ քոյ գոգին (21), Ք[ո] բան[ն] պահեա ի մէջ քո մտաց (92)։

Գոյականի հայց. հոլովով դրված տեղի պարագան ցույց է տալիս և՛ գործողության տեղը, և՛ գործողության նպատակակետը՝ դրսևորելով ուղևորության իմաստ. Մարդ կայ, որ փոքն ձգես մէկ թագի… (83), Մէկ օր գալոյ եմ քո ճերխանէն (9). բ) նախդրիվ հայց.-ով. Հաւն յերկինս համբարձաւ (142), Յորժամ գայցէ ի դատաստան… (182)։ Հանդիպում են նաև միջին հայերենում նորակազմ, բարբառներում լայնորեն օգտագործվող չուր (չուրի) նախադրությամբ կառույցներ. Ձձեզ բշեմ չուրի Մարզվան (97), Կարօտ են քո տեսնուդ չուր Հալապչեստան… (195)։

Բյո. հոլովով արդեն դրսևորվում է գործողության սկզբնակետ՝ եկման տեղի պարագա. Թամաշա կանեմ մեր այվանէն (8), Նոր է եկած Հաշտարխանայ… (65). գործ.-ով՝ անցման տեղի պարագա՝ Ով գալու է սարով, ճարով… (77)։

Տեղի պարագայական իմաստ են արտահայտում նաև՝ սեռ.-տր. հոլովաձև+տակ, շուրջ, առջև, մէջ, վրա (վերայ) կապերով կառույցները. Ծառի տակ նստեմք… (55), Սեղանի շուրջ դուք քանց ծաղիկ (210), Ձեր առջևն կանանչ պաղչայ… (178), Բախչի մէջ ամեն օր վարդ կու քաղես (40), Կանանչ խոտի վրայ նստեցէք շարուն (167) և այլն. (չորս բոլոր)+սեռ.-տր. հոլովաձև+(չորս կողմն) կառույցները. Գան ճրագի չորս կողմն նստեն (103), …նստեմք չորս բոլորն շարած վարդին (23).

2. Ժամանակի պարագան, դրսևորելով գործողության սկզբնավորման, կատարման ու վախճանի ժամանակային հարաբերություններ, ինչպես առհասարակ պարագայական լրացումները, արտահայտվում է նախ մակբայով. սկզբնավորման առումով՝ Առաւօտուց վարդ կու քաղես (36). ընթացքի իմաստով՝ Յետոյ փոշմանիս, գլուխդ քորես (34). ժամանակային վախճանի իմաստով՝ Ես էլ չեմ կենալ նրա տանն (109), Այժմ մնացին որբ և այրի (139)։ Գործողության սկզբնավորման իմաստ է արտահայտվում նաև ժամանակ ցույց տվող բառերով, կապ+կապի խնդիր հետևյալ կառույցներով՝ Զատկին արեգակն է ցրտել (102), Մինչ համբարձում քառսուն օր է (102) և այլն։ Դերբայներով, կապ+կապի խնդիր կառույցով են դրսևորվում գործողության ընթացք և վախճան նշող ժամանակի պարագաները. Նշխարն տալիս անեն արին (120), Մէնակ ու ծածուկ մնալիս… (15—17), Դունչ տալոյ վախտ լեզուն սուրայ (123), Երկու շաբթէն ետև… Դուրս ձգեցին… (112), Ջէրայ

մարդ մեռնելուն յետըն շատ կու փոշմանի (184). բ) նախդրիվ տր.-ով՝ Ի միւս անգամ գալստեանն ... Ի յերկնից խոնարհեցար աստուած հարցն մերոց (124).

3. ձևի պարագան արտահայտվում է մակբայով, ածականով, գոյական անվան գործ. հոլովաձևերով. Տոցդ նշանց տուիր, այլի ծածկեցիր (35), Այլ փող ժողովիք բերիք (122), Խիստ տխուր կելնեմ մեծ պասին (177), Ամօրաւ կերանք (152) և այլն: Հանդիպում են նաև մէկ բերան և ի մի բերան ժողովրդախոսակցական լեզվից սերող կառույցներ. Դուք յիշեցէք ի մի բերան ... (123), ...ի մի բերան բարին յիշեցէք (158), Մէկ բերան ինձ հետ խօսի (24):

Բազմաքանակ են սեռ.-տր. հոլովաձևով և նման, պէս կապերով ու ինչպէս, որպէս հարաբերյալներով ձևավորված նմանություն արտահայտող կառույցները. Դու վարդ ես պլպուլի նման ... (68), Շուրջ կուգաս վարդի նման... (32), ...երեսդ կու փայլի ինչպէս ճայելի (21), Քաղցր ծիծաղիս որպէս կաքաւ (7) և այլն. բ) զինչ, զէտ (զերդ), քանց+հայց. հոլովաձև կառույցներ՝ Աչքերդ ինձ այրեց զինչ ամռան արև (25), Նա մրրկեալ է զէտ ալէկոծ նաւ (93), ...Ձերդ զբիտոս բրել գերեզման (128):

Ձևի պարագան դրսևորվում է նաև հարակատար, անցյալ դերբայներով ու անորոշ դերբայի գործ. հոլովաձևով. Ես մնացել եմ պաշարած (24), նստեալ մենակ՝ խմես ... (202), Քեզ տեսնելով, ախ քաշելով կու մաշվեմ (41): Քաղված օրինակներում դերբայները ցույց են տալիս գործողի վիճակ:

4. պատճառի պարագան՝ գոյականի բցռ. հոլովաձևերով. Կանանց դարդէն Յովնաթանն գնաց դէպ Թիֆլիզու խանն (110), Շատ ճպարտութենէ դառն ես (114): Սակավաթիվ գործածությամբ հանդիպում են նաև պատճառ-նպատակի միախառնված պարագայական կիրառություններ՝ անորոշ դերբայի սեռ.-տր. հոլովաձև+համար կառույցով. Մէկ պագ տալոյ ճամար կուտաս ինձ քարէքար ... (64), ...ծիծաղելոյ ճամար գրեցի (150) և այլն. բ) (վասն)+սեռ.-տր. հոլովաձև+(յաղագս) կառույցներով. Վասն Վարդան ժամահարին, որ վասն իւր քնատ լինելոյն, եկեղեցւոյ որձակն սպանեց ... (135), ...Սիրոյ յաղագաւ գրեցի (132).

5. չափի պարագան ցույց տալով գործողության կատարման չափը, ապա և՝ գործողության ժամանակի տևողության չափը, արտահայտվում է գերազանցապես մակբայով. ...հագել ես կարմիր սարասար (32),

Քեզ շատ կու սիրեմ ... (49), Խիստ էր դառնացել էն Թանի համըն (153), Լեզուն լալիկ է խսկի հազ չարի (116), Եւ բարեկամն բնաւ ձեռաց մի տար (90)։

Գործողության ժամանակի տևողության չափ է դրսևորվում նաև «անգամ» երանգը կրող մէկ թվականով. Դեռ մէ՛կ է կանչած քոռ որձակն (107).

6. ճպատակի պարագա՝ բ) նախդրիվ հայց.-ով՝ էն վախտն գան ի պատարագ (119).

7. վիճակի պարագա՝ բ) նախդրիվ տր.-ով՝ ...Հաւերն կային ի խըռախճանի (139)։

Անվանական և բայական լրացումների այս քննությունից հիմնական եզրակացությունն այն է, որ՝ որոշ չափով պահպանելով հանդերձ գրաբարյան ինչ-ինչ ձևեր ու յուրօրինակություններ, Հովնաթանի տաղերի նախադասության երկրորդական լրացումները ձևակառուցվածքային բնույթով որոշակիորեն մոտ են արդի հայերենին։

ԵՆԹԱԿԱՅԻ ԵՎ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Նախադասության շարահյուսական կառուցվածքում նախադասության անդամների կապակցման եղանակների քննության ժամանակ տաղերում նկատվում է նաև գլխավոր անդամների անհամաձայնության հետաքրքիր երևույթ։

Ենթական և ստորոգյալը թվով գերազանցապես համաձայնում են միմյանց, ասել է՝ գործում են եզակի ենթակա+եզակի ստորոգյալ, հոգնակի ենթակա+հոգնակի ստորոգյալ կաղապարները. ինչպես՝ ձայնն լցաւ (26), արև եղև (27), դու եկիր (10), ոչ-ով իմացաւ (58), մանկունք երգեն (183), դուք կերէք, խմեցէք ... (171), Պիտի ամենեքեան խնդան (123), Ամէնքն կօպիտ են (80) և այլն։ Բայց և հանդիպում են ենթակայի ու ստորոգյալի թվով անհամաձայնություններ։ Այդպիսի դեպքերում ենթական պարունակում է հավաքականության որոշ երանգ, որ նկատելի է եզակի ենթակա+հոգնակի ստորոգյալ կաղապարով ձևավորված հետևյալ նախադասություններում. Շնորհալից մարդ կայ, որ չեն լինիր քուն, Ուսանին արհեստ, լինին բանիբուն (79), Մանաւանդ հայոց ազգն է հար նկուն, Որ չունին իշխան, Թագաւորութիւն ... (80), Կարգաւոր շատ կա՝ աննփ, անխաշ են ... (83), Հազար մարդ կովին, կրակ տան դուռն (84)։ Քաղված տողերում կաղապարը փոքր-

ինչ խաթարում են հոգնակի թվով դրված ստորոգյալներին նախորդող եզակի ստորոգյալները՝ մարդ կայ, ազգն է, կարգաւոր կայ։

Ստորոգյալը առավելապես եզակի է, երբ ենթական արտահայտված է հարադիր կազմությամբ. Բօյն ու ջամալն է մուբարակ (12), ...վէսմ ու հալն թող գրվի (18), Աչքդ ու բերանդ է նման (136), Գնաց աշուն և ամառն, Յամաքեաց ծաղկունք և ծառն (72). վերջին նախադասության մեջ ստորոգյալի եզակի թվով գործածությունը առավել հավանական է ենթակաների գործողության միասնականության[31] պայմանով։

Տաղերում հանդիպող հոգնակի ենթակա+եզակի ստորոգյալ կաղապարի իրացման համար հատկանշական է որոշ բառերով արտահայտված հոգնակի ենթակաների հաճախությունը՝ աչքեր (ավելի քան 12 անգամ), ունքեր, շամամներ և խօսքեր՝ Աչւերըս դարձել այ արին (53), աչքերս սևացաւ (152), ունքերդ կու խաղայ (36), խօսքերդ հոգիս կու հանի (64), այլև՝ նռներդ հող կու դառնայ (34), դարդերս եղև (49), թող ծամերդ ծալվի (55), վարդերն կու բացուի (167), թասերն է մարգարտաշար (209)։

Ակնհայտորեն թվով անհամաձայնության հետ գործ ունենք՝ Դու քանի սէֆիլ Նաղաշին սրտիկն դաղիք... և շունչն քաղիք (46) նախադասության մեջ։

Ենթակայի և ստորոգյալի դեմքով անհամաձայնության միայն մեկ դեպք է հանդիպում տաղերում՝ Դուն, որ թամբաց է խաղալիս, Փիլոնի տեղակ է տալիս (120). սա, ինչպես և նախորդ օրինակը, թերևս, կարելի է համարել հեղինակային վրիպակ։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նաղաշ Հովնաթանի տաղերի բառապաշարի, ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկությունների քննությունից հետևում է, որ իբրև լեզվական իրողություն տաղերի լեզուն վաղ աշխարհաբարի արտահայտությունն է.

1. Այն ներառում է հայերենի ընդհանուր բառապաշարի բառեր (գրաբարյան և միջին հայերենի), հարուստ է բարբառային և փոխառ-

---

31 Ակնարկներ..., 1975, 155։

յալ բառերով (գլխավորապես արաբերենից և պարսկերենից)։ Բառապաշարի նման խառը բնույթով տաղերի լեզուն ներկայացնում է XVII դարի կեսերի XVIII դարի սկզբների ժողովրդախոսակցական լեզվի պատկերը՝ բարբառների (առավելապես արևելահայ՝ Արտ., Ղրբ., Ջղ., Ագ., Թբ.) միջև նկատվող միասնականացնող միտումներով։

2. Ձևաբանական մակարդակն ունի հետևյալ հիմնական առանձնահատկությունները։ Հոլովման համակարգում ակնհայտ է ի հոլովման գերիշխող դիրքը։ Հոլովակազմության գրաբարյան և միջին հայերենյան ձևերի կողքին նկատվում է բարբառային տարրի ներհոսք։ Գործածության մեծ հաճախականությամբ են բնութագրվում ընդհանրական արժեք ստացող -եր, -ներ հոգնակերտները։ Դերանվանական հոլովումը ևս բնորոշվում է և՛ գրաբարյան, և՛ բարբառային հոլովաձևերի խառը գործածությամբ։

Խոնարհման համակարգում որոշակիորեն գծագրվում են աշխարհաբար գրական հայերենի բայի խոնարհման համակարգի առանձնահատկությունները՝ դրսևորված դերբայական ձևերի, ժամանակաձևերի կազմության միտումներում, անկանոն բայերի զգալի մասի որոշ համակարգայնացմամբ, բայի եղանակային ձևերի ոճական կիրառություններով։

3. Միաժամանակ բառապաշարի և ձևաբանական մակարդակում գտնում ենք արևմտահայ բարբառներին բնորոշ լեզվական որոշ երևույթներ (Կարին, Կեսարիա, Սասուն, Պոլիս, Սեբաստիա, Կիլիկիա և այլն)։ Հոլովակազմության ոլորտում բացառականում հաճախական է արևմտահայ բարբառներին հատուկ -է հոլովակազմիչը, որ բնորոշ է նաև Մեղրու, Ագուլիսի բարբառներին և շրջակա գյուղերի խոսվածքներին։ Բաղադրյալ հոգնակերտներից -երք, -րանք բնորոշ են նաև արևմտահայ բարբառներին։ էնօր հոլովաձևը, ինչպես և անձնական դերանունների թեք հոլովաձևերում ի-ի առկայությունը (ինձի, քեզի, մեզի) նույնպես առավելապես հատուկ է արևմտահայ բարբառների մեծ մասին։ Խոնարհման համակարգում առկա ու լծորդությունը առհասարակ հատկանշական է արևմտահայ բարբառներին։ Այս բարբառներին է բնորոշ նաև սահմանական ներկայի կազմությունը կու, կ մասնիկներով։

Այս իրողություններն էլ վկայում են, որ Հովնաթանի ապրած ժամանակաշրջանում դեռևս այնքան էլ որոշակի չէր արևելահայ-արևմտահայ տարբերակումը։

4. Շարահյուսական մակարդակում նախադասության կառուցվածքային տիպերի (բարդ համադասական նախադասություն, երկրորդական նախադասությունների բնույթը, շարահարությամբ բարդ նախադասություն), նախադասության անդամների ձևաբանական արտահայտության մեջ պահպանելով հանդերձ գրաբարյան ինչ-ինչ ձևեր ու յուրօրինակություններ, Հովնաթանի տաղերի լեզուն դարձյալ բնութագրվում է արդի հայերենին մոտ աշխարհաբարյան համակարգի իրակություններով։

Հետևաբար, կարելի է պնդել, որ Նաղաշ Հովնաթանի տաղերի լեզուն աշխարհիկ բովանդակությամբ, բառապաշարային, ձևաբանական ու շարահյուսական մակարդակների հիմնական առանձնահատկություններով վաղ աշխարհաբարի արտահայտություն է։

ՀԱՎԵԼՎԱԾ Ա

ա) -ի հոլովման պատկանող անունների ցանկ

արեղայի/հարեղի
Աբրահամի
ագռաւի
ատլասի
ալմասի
աղբերի
ամանի
Այվազի
անապատի
անեղի
աշակերտի
աշխանի
աշգանի
աշխարհի
աչքի, աչքերի
ապենխազի
ապրանքի
ապրիլի
առաջնորդի
առիւծի
առնետի
Ասլանի
Աւլումի
ատենի
արգանդի
արծաթի
արքայի
աւելի
բազկաթանի
բաժկի
բակակի
բաղչի, բաղչայի
բաղպանի
բանի
բանջարի
բարեկենդանի
բարձի
բերանի
բիբարի
բզի
բլբուլի
բուխախի
գայլի/չ'կլի
գանգատի
գանձանակի
գեղի
գետի
գղածարարի
գրկի
գլխի
գոգի
գողի
գորտի
գօզալների
գօտկի
դասի
դատաստանի
Դարաշամբի
դարդի
դարչինի
դարպասի
դմակի
դոլաբի
դոշակի
դրախտի
եախի

դղի
եղանակի
երեխի/ըրխի
երեսի
երէցի, երիցի
երկաթի
զամբաղի
զատկի
էշի
էշխի
ընկերի
թագաւորի
թաթի
թանի
թասի
թաւանի
թելի
Թիֆլիսի
թոնրի
թղթի
Թումանի
թուրինջի
թրի
թշի
թնկերի
ժամի
ժամահարի/ժամհարի
ժամանակի
իլիկի
լաշակի
լեզուի
լուսարարի
լուսնի
Խաթայի/խութայի
խաղարարի
խաղողի
խանի
խաշի
խաւծի
խելքի
խնծորի
խոտի
խռատի

խրախճանի
խնկի
խօսքի
ծալի
ծաղկի
ծաղկազարդի
ծառի
ծոցի
ծնկների
կանթեղի
կատուի(-վի)
կիրակմտի
կնդրկի
կտրակալի
կրակի
կրօնաւորի
կշտի
կժերի
կուրերի
հալի
համամի
հանգստի
հարստի
հացի
հաւի, հաւերի
հաւուզի
հոգեվարի
ձայնի
ձեռի
ձիթածախի
ձորի
ձվի
ղազանի
ղազրեկի
ղալամի
ղայրաթի
ղասապի
ղասապխանի
Ղարաբաղի
ղարիպի
ղուշի
ճակատի
ճամփորդի

ճաշի
ճառթի
ճրագի
մաթլարի
մալի
մածունի
մանողի
մատի
մարգարտի
մարդի
մեղրի
մէջլիսի
մշակների
մոնթերի
միրքի
մուրթուճամի
Յովնաթանի
յունվարի
Նաղաշի
նաղաշարարի
նամուսի
նարինջի
նետի
նիւթի
Նշանի
շամամի, շամամների
շամտանի
շամսի
շամփուրի
շարականի
շողի
շորի
ոչխարի
որձակի
չաղալի
չարբաղի
չիմանի
չինարի
պապի
պառաւի
պասի
պատի
պատարագի

պատկերի
պարտականի
պսակի
ջալլատի
ջահրայի, ջահրակի
ջահի
ջանջալի
ջվալի
ջրաղացի
ջուլհակի
ջրի
ռեհանի
ռանգի
սաթի
սանդկի
սապոնի
սառուցի
սատանի
սարի
Սարգսի
սաւտայի
սեղանի
Սիոնի
սիսեռի
սիրամարգի

սրտի
սիրունի
սմբուլի
սոխի
Ստեփանի
սրի
սուրաթի
սրմայի
վանքի
վարդի
Վարդանի
վարդավառի
վարսերի
վիզի
տաճարի
տաճարապետի
տատրակի
տաւարի
տէրտէրի, տէրտէրների
տղի
տմբուզի
տնտեսի
տօլուի
ցխի
ուղտապանի
ունքերի

ուշի
ուսի
փետի, փայտերի
փաքի
փեշաքարի/փեշաքրի
փիլոնի
փլավի
փողի
փողպատի
փորի
քաղաքի
քառի
քարի, քարերի
քարաշի
Քրիստոսի
քեօմուրի
Քռի
քուռակի
օթաղի
օմրի
օրի
օրէնքի
ֆռանկի
ֆրթնայի

ՀԱՎԵԼՎԱԾ Բ

Հոգնակերտ ձևույթներով անունների ցանկ

-ք

աշակերտք
աշխարհք
առաքեալք
աքիք
բարեկամք
գոլբեք

եարեք
եղբայրք(-արք)
ընկերք
թռչունք
խօճայք
ծնծղայք
հարք
մեռելք
ննջեցեալք*

շուշէք
որդիք
ոսկերք
ոտք
պալատք
սերոբէք
սիրտք
սիւրահիք
վկայք

* Վերականգնված է հայցական հոլովաձևից։

ադետք
քադխուդէք
քահանայք
քերոբէք

-ՆԵՐ

ամաններ
անուններ
ատամներ
արմաղաններ
բլբուլներ
դուշմաններ
եաղմուրլուխներ
եղբայրներ
եմիշներ
իրիցներ
ընկերներ
թուադներ
խաթուններ
ծաղկներ
կարասներ
համալներ
մանողներ
մշակներ
շամամներ
պարտականներ
պռեկներ
պռոշներ

սեղաններ
քսակներ
բուրքչիններ
օջախներ
ֆիլաքներ

-ԵՐ

այծեր
աչքեր
աստղեր
բաներ
բեռներ
բոզեր
դարդեր
դռներ
գառեր
թասեր
թաքեր
թևեր
թնկեր
խալեր
խօսքեր
ժամեր
ծնկներ
ծծեր
կժեր
կուրեր
հաւեր

ձագեր
ձայներ
ձեռներ
ձվեր
ճանճեր
մազեր
մատներ
մէջքեր
մկներ
մոմեր
մոնթեր
նռներ
շորեր
շներ
ոտքեր
սազեր
սարեր
վարդեր
վարսեր
տաղեր
տներ
ցաւեր
ունքեր
փայտեր
փոխեր
փողեր
քարեր
քեֆեր

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Աշխատություններ և բառարաններ

ԱԲ — Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Վենետիկ, 1865։

ԱՀՀԲ — Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976։

ԱՄԲ — Աղայան Է. Բ., Մեղրու բարբառը, Երևան, 1954։

ԱՔՆՋ — Աճառյան Հ., Քննություն Նոր Ջուղայի բարբառի, Երևան, 1940։

ԳՆԲՀԼ — Գաբամաճյան Ս., Նոր բառագիրք հայերեն լեզվի, Կ. Պոլիս, 1910։

ԺՀԼԲԲ — Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Երևան, 1—4, 1969—1980։

ԺՀՏՀ — Ջահուկյան Գ. Բ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1977։

ԼԻՀԳԲ — Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի կազմած հայերեն գավառական բառարան-ձեռագիր։

ՀԱԲ — Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, Երևան, 1—4, 1971—1979։

ՀԲԲ — Ամատունի Ս., Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912։

ՀԲՆ — Ջահուկյան Գ. Բ., Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972։

ՀԳԲ — Աճառյան Հ., Հայերեն գավառական բառարան, Թիֆլիս, 1913։

ՂՀԲ — Ղարիբյան Ա., Հայ բարբառագիտություն, Երևան, 1953։

ՄՀԲԲ — Մալխասյանց Ս., Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1—4, 1944—1956։

ՆՀԲ — Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, Ա—Բ, 1836—1837։

ՍԱԳ — Սարգսյանց Ս., Ագուլեցոց բարբառը, Մոսկվա, 1883։

2. Բարբառներ, խոսվածքներ, բարբառախոս վայրեր*

Ագլ. — Ագուլիս
Ախլք. — Ախլքալաք
Ամս. — Ամասիա
Ալշ. — Ալաշկերտ
Արբ. — Արաբկիր
Արտ. — Արարատյան
Բ. — Բալու
Բլ. — Բուլանըղ
Բղ. — Բաղեշ
Բնձ. — Բանանց
Բս. — Բասեն
Բրչ. — Բորչալու
Գնձ. — Գանձակ
Գոր. — Գորիս
Եվդ. — Եվդոկիա
Եր. — Երևան
Երզ. — Երզնկա
Զթ. — Զեյթուն
Թբ. — Թբիլիսի
Լ. — Լոռի
Խզ. — Խիզան
Խլ. — Խլաթ
Խն. — Խնուս
Խտջ. — Խոտրջուր
Խրբ. — Խարբերդ
Կար. — Կարին
Կլկ. — Կիլիկիա
Կրճ. — Կարճևան
Կես. — Կեսարիա
Կրվ. — Կաքավաբերդ
Հվր. — Հավարիկ
Հդզ. — Հադրութ
Համշ. — Համշեն
Հճ. — Հաճն
Ղզ. — Ղազախ
Ղրբ. — Ղարաբաղ
Ղրդ. — Ղարադաղ
Մլթ. — Մալաթիա
Մղ. — Մեղրի
Մնզ. — Մանազկերտ
Մրղ. — Մարաղա
Մրշ. — Մարաշ
Մկ. — Մոկս
Ն. Բզ. — Նոր Բայազետ
Ն. Նխջ. — Նոր Նախիջևան
Ն. Ջղ. — Նոր Ջուղա
Շլ. — Շուլավեր
Շմ. — Շամախի

---

* Կարճ անունները (Ակն, Մուշ, Վան, Քղի և այլն) բերվում են առանց համառոտման։

Շտ. — Շատախ
Շրկ. — Շիրակ
Պլ. — Պոլիս
Ջվխ. — Ջավախք
Ջղ. — Ջուղա
Սս. — Սասուն
Սեբ. — Սեբաստիա
Տգ. — Տիգրանակերտ
Տր. — Տրապիզոն
Ուրմ. — Ուրմիա
Քս. — Քեսաբ

բրբ. խսվ. — բարբառի խոսվածք(ներ)

3. Լեզուներ

արբ. — արաբերեն
թյուրք. լ. — թյուրքական լեզուներ
պրս. — պարսկերեն

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ., *Երկեր*, *Երևան*, *Բ—1967, 387. Դ—1970, 635. Ե—1971, 510. Զ—1974, 847*։

2. Աբրահամյան Ա. Ա., *Բայը ժամանակակից հայերենում*, *Գիրք 1*, *Երևան*, *1962, 727*։

3. Աբրահամյան Ա. Ա., *Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը*, *1953, 441*։

4. Աբրահամյան Ս. Գ., *Ժամանակակից գրական հայերեն*, *Երևան*, *1981, 408*։

5. Ագուլեցի Զաքարիա, *Օրագրություն*, *Երևան*, *1938, 196*։

6. Ակինյան Ն., *Հովնաթան Նաղաշ և Նաղաշ Հովնաթանյանք և յուրյանց բանաստեղծական ու նկարչական աշխատությունք։ — Հովնանյան Ղ. «Միջնադարյան ազգային տաղաչափություն», գրքում, Վիեննա, 1911, 51—117*։

7. *Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության*, *Երևան*, *Ա—1972, 495. Բ—1975, 302*։

8. Աղայան Է. Բ., *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, *Երևան*, *1984, 370*։

9. Աղայան Է. Բ., *Մեղրու բարբառը*, *Երևան*, *1954, 405*։

10. Աճառյան Հր., *Հայոց լեզվի պատմություն*, *Երևան*, *Մ. 1, 1940, 355*։

11. Աճառյան Հր., *Քննություն Նոր-Ջուղայի բարբառի*, *Երևան*, *1940, 401*։

12. Աճառյան Հր., *Քննություն պոլսահայ բարբառի*, *Երևան*, *1941, 234*։

13. Այտընյան Ա., *Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի։ Հանդերձ ներածությամբ և հավելվածով*, *Վիեննա*, *1866, 502*։

14. Առաքելյան Վ. Դ., *Հայերենի շարահյուսություն*, *Երևան*, *հ. 1, 1957, 503. հ. 2, 1964, 467*։

15. Բաղդասարյան-Թափալցյան Ս. Հ., *Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում*, *Երևան*, *1973, 356*։

16. Բեդիրյան Պ. Ս., *Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան, 1973, 230։*

17. Գարեգինյան Գ. Լ., *Ժամանակակից հայոց լեզու։ Բարդ նախադասություն, Երևան, 1984, 420։*

18. Գարեգինյան Գ. Լ., *Շաղկապները ժամանակակից հայերենում, Երևան, 1963, 368։*

19. Դավթյան Կ. Ս., *Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1966, 505։*

20. Թորոսյան Հ. Ն., *Արևմտահայ աշխարհաբարի ծագումը և զարգացումը, Բոստոն, 1961, 140։*

21. Թումանյան Հովհ., *Երկերի ժողովածու, Երևան, հ. 4, 1951, 527։*

22. Թումանյան Հովհ., *Ընտիր երկեր, Երևան, 1953, 433։*

23. Իշխանյան Ռ. Ս., *Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն, Երևան, 1978, 427։*

24. Իշխանյան Ռ. Ս., *Նաղաշ Հովնաթանի ստեղծագործության լեզվական բնութագիրը, ԼՀԳ, 1972, 1, 40—50։*

25. Իշխանյան Ռ. Ս., *Նոր գրական հայերենը XVII—XVIII դդ., Երևան, 1979, 151։*

26. Հովնաթան Նաղաշ, *Բանաստեղծություններ, Երևան, 1951, 335։*

27. Ղազարյան Ս. Ղ., *Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1981, 401։*

28. Ղանալանյան Ա. Տ., *Առածանի, Երևան, 1960, 398։*

29. Ղարիբյան Ա. Ս., *Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, 458։*

30. Մարգարյան Ա. Ս., *Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966, 502։*

31. Մկրտչյան Է. Լ., *Աշխարհաբարի տարրերը միջնադարի գրական հուշարձաններում, Երևան, 1980, 152։*

32. Հովնանյան Ղ., *Միջնադարյան ազգային տաղաչափություն։ Ռամկախառն, Վիեննա, Ա—Բ, 1911, 117։*

33. Չոպանյան Արշ., *Նաղաշ Հովնաթան աշուղը և Հովնաթան Հովնաթանյան նկարիչը, Փարիզ, 1910, 128։*

34. Պապոյան Ա. Հ., *Կախյալ շարահարությամբ բարդ նախադասությունները արդի հայերենում, Երևան, 1968, 275։*

35. Պառնասյան Ն. Ս., *Անշաղկապ բարդ նախադասությունները ժամանակակից հայերենում։ Լեզվի և ոճի հարցեր, Երևան, հ. 2, 1964, 5—153։*

36. Պառնասյան Ն. Ա., *Նոր գրական հայերենի կազմավորման հարցի շուրջը, Հայերենագիտական միջազգային II գիտաժողով, Երևան, 1987, 140—141։*

37. Պատմագրյան Ա., *Հայ երգը դարերի միջից, Բեյրութ, 1973, 359։*

38. Պողոսյան Պ. Մ., *Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում, Երևան, 1959, 247։*

39. Ջահուկյան Գ. Բ., *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1977, 587։*

40. Ջահուկյան Գ. Բ., *Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, 347։*

41. Ջահուկյան Գ. Բ., *Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, 291։*

42. Սայաթ-Նովա, *Թիֆլիս, 1914, 120։*

43. Սարգսյան Ս. Ե., *Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Երևան, 1985, 327։*

44. Սարգսյանց Ս., *Ագուլեցոց բարբառը, Մոսկվա, 1883, 208։*

45. Սևակ Պ., *Սայաթ-Նովա, Երևան, 1969, 499։*

46. Վանցյան Գ., *Պատմական քերականություն արևելահայ լեզվի, Թիֆլիս, 1906, 244։*

47. Քոսյան Վ. Ս., *Միջին հայերենի բառակապակցությունները, Երևան, 1984, 213։*

48. *Аствацатрян В. А.,* Историческое развитие склонения имен существительных в армянском языке, авт. канд. дисс., Ереван, 1955.

49. *Айвазян А. А.,* Памятники армянской архитектуры Нахичеванской АССР, Ереван, изд. Айастан, 1981, 165 (с иллюстрациями).

50. *Бабасян А. С.,* Грамматическая категория числа в армянском языке, авт. канд. дисс., Ереван, 1953.

51. *Булаховский Л. А.,* Введение в языкознание, Москва, Учпедгиз. ч. II, 1953, 178.

52. *Колосова Г. А., Черемисина М. Л.,* О принципах классификации сложных предложений, ВЯ, изд. Наука, Москва, 1984, 6, 69—80.

53. *Кусикьян И. К.,* Очерки исторического синтаксиса литературного армянского языка, Москва, изд. АН СССР, 1959, 164.

54. *Реформатский А. А.,* Введение в языкознание, Москва, Учпедгиз. 1955, 400.

55. *Туманян Э. Г.,* Очерки исторического развития падежных форм новоармянского литературного языка, Москва, изд. АН СССР, 1962, 190.

ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

56. Աղայան Է. Բ., *Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, հ. 1, 929. հ. 2, 1615։*

57. Աճառյան Հր., *Հայերեն գավառական բառարան. Էմինյան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, 1914, 1141։*

58. Աճառյան Հր., *Հայերեն արմատական բառարան, Երևան, հ. 1, 1971, 698. հ. 2, 1973, 697. հ. 3, 1977, 635. հ. 4, 1979, 674։*

59. Ամատունի Ս., *Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, 706։*

60. *Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865, 843։*

61. Բաղրամյան Ռ. Հ., Խալիլով Ի. Հ., *Հայ-ադրբեջաներեն բառարան, Երևան, 1978, 565։*

62. Գարամանյան Ս., *Նոր բառագիրք հայերեն լեզվի, Կ. Պոլիս, 1910, 1403։*

63. *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Երևան, հ. 1, 1969, 601. հ. 2, 1972, 714. հ. 3, 1974, 574. հ. 4, 1980, 828։*

64. Կիրակոսյան Կ., *Պարսկերեն-հայերեն բառարան, Ջուղա-Սպահան։ Թեհրան, 1933, 790։*

65. Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ., *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Երևան, հ. 1, 1986, 991։*

66. *ՀՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կազմած հայերեն գավառական բառարան-ձեռագիր։*

67. Մալխասյանց Ստ., *Հայերեն բացատրական բառարան, Երևան, հ. 1, 1944, 608. հ. 2, 1944, 512. հ. 3, 1956, 614. հ. 4, 1945, 646։*

68. Մուշեղյան Եղիա Կարենցի, *Թուրքերեն-հայերեն բառարան, աշխ.-մբ Բ. Զուգասզյանի, Երևան, 1968, 177։*

69. *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, հ. 1, 1836, 1140. հ. 2, 1837, 1067։*

70. Ջախջախեան Մ., *Բառգիրք ի բարբառ հայ և իտալական, Վենետիկ, 1837, 1908։*

71. Սեբաստացի Մ., *Բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, հ. 2—3, 1769, 416—700։*

72. Քաջունի Մ., *Բառգիրք արուեստից եւ գիտութեանց եւ գեղեցիկ դպրութեանց, Վենետիկ, հ. 2, 1893, 878։*

73. *Баранов Х. К.*, Арабско-русский словарь, Москва, изд. Русский язык, 1984, 942.

74. Персидско-русский словарь, Москва, изд. Русский язык, т. 1, 1983, 800, т. 2, 1983, 864.

75. Турецко-русский словарь, Москва, изд. Русский язык, 1977, 966.

76. *Фасмер М.*, Этимологический словарь русского языка, Москва, изд. Прогресс, т. 4, 1973, 852.

Վ. Գ. ՋԻՀԱՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՋՐԱՆՈՒՆՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Տեղանունները որպես պատմալեզվական աղբյուր: *Աշխարհագրական որոշակի տարածքում էթնոլեզվական գործընթացների բացահայտման գործում հատուկ անունների դերն այսօր դժվար է թերագնահատել: Որքան խորանում ենք դեպի անցյալը, գրավոր աղբյուրների նվազելուն զուգընթաց, աճում է հատուկ անունների նշանակությունը*[1]:

Որոշ տարածքների էթնոլեզվական հին վիճակի վերաբերյալ մեր միակ աղբյուրները հատուկ անուններն են, մեծ մասամբ վկայված օտար ավանդույթով (գրությամբ): Գիտական շրջանառության մեջ է

---

[1] *Այս կապակցությամբ արտահայտված բազմաթիվ կարծիքներից նշենք երկուսը. «Հնագիտական հուշարձանները վերակենդանացնում են հեռավոր անցյալի նյութական մշակույթը, սակայն նրանք համր են. Նրանց միջոցով ճշտորեն որոշվում է, թե երբ և որ տարածքում է տիրել հորային մշակույթը կամ անդրոնովյան մշակույթը, բայց կարելի չէ անվանել այդ մշակույթը կրող ժողովուրդներին: Անունները բառեր են, նրանք պերճախոս կերպով վկայում են այդ անունները ստեղծողների մասին: Իսկ քանի որ դրանք ամրացած են տեղին, ապա նրանց միջոցով կարելի է որոշակի տարածքում վերականգնել հին լեզուն և գծել նրա տարածման սահմանները: Լեզուների մեծ մասի համար անուններն ավելի հին են, քան գրավոր վկայությունները»* (Никонов, 11): *«Հին բալկանյան լեզուների տարածման մարզից «լիարժեք» լեզվական փաստերի (կապակցված գրավոր վկայությունների, և ոչ միայն «այսինչի օբյեկտ», «իրը պատկանում է այսինչին», «ընծայվում է այսինչ աստվածությանը» և նման տիպի արձանագրությունների) անբավարարության, երբեմն նաև լիակատար բացակայության պատճառով հատուկ անունների դերը զգալիորեն մեծանում է բալկանյան ժողովուրդների էթնոգենեզի և գլոտոգենեզի մի շարք խնդիրների լուծման գործում»* (Нерознак, 1977, 29):

մուծել «անվանական կամ հատկանվանական լեզուներ» («ономастические языки») տերմինը՝ այն լեզուները նշանակելու համար, որոնց վերաբերյալ մեր գիտելիքները սահմանափակվում են մի քանի տասնյակ կամ հարյուր բառով, գլխավորապես հատուկ անուններով[2]:

Պատմալեզվական առումով առավել կարևոր են տեղանունները, որոնք, ի տարբերություն հատուկ անունների այլ դասերի (անձնանունների, տիեզերական մարմինների անունների և այլն), չեն փոխառվում: Տվյալ տարածքում որևէ լեզվով կազմված տեղանվան առկայությունը անպայմանորեն արդյունք է այդ լեզուն կրողների գոյության (տեղանվան ստեղծման պահին): Այնինչ, օրինակ, անձնանվան առկայությունը բոլորովին չի ենթադրում այդ անունն ստեղծած էթնիկական տարրի գոյությունը տվյալ տարածքում: Անձնանունը կարող է մուտք գործել նաև մշակութային շփումների միջոցով, հաճախ միջնորդավորված երրորդ էթնոլեզվական հանրությամբ[3]:

---

2 «Կենտրոնական և հյուսիսային Բալկաններում,— գրում է Վ. Գեորգիևը,— կան հ.-ե. լեզուներ, որոնք քիչ են ծանոթ, ինչպես, օրինակ՝ թրակերենը, դակերենը և փռյուգերենը. այս լեզուների լեզվական նյութը բաղկացած է մի քանի տասնյակ բառերից, մի քանի հարյուր հատուկ անուններից և մի քանի արձանագրություններից» (Georgiev, 108): «Հին բալկանյան հատկանվանական տարածքը, որ կարելի է վերականգնել հին բալկանյան լեզուների տարածման ողջ շրջանում, ընդգրկում է, բացի թրակյան, իլլիրական, մեսապյան, հին մակեդոնական, փռյուգական և պելասգյան անուններից, այսպես կոչված Բալկանների «հատկանվանական» լեզուների՝ միգդոներենի, պեոներենի, դարդաներենի, լիբուրներենի նյութը: վերջիններիս լեզվական վկայությունները բաղկացած են բացառապես հատկանվանական տվյալներից» (Нерознак, 1977, 27): «Մի շարք անհետացած լեզուներից առհասարակ ոչինչ չի պահպանվել, բացի աշխարհագրական անուններից: ...Այսպես, հին իլլիրացիների մասին, որոնք բնակվում էին Դանուբի և Ադրիատիկի միջև մեր թվականությունից առաջ վերջին դարերում, հիշեցնում են միայն անվանումները, որոնք չեն ջնջվել ո՛չ կելտերի, ո՛չ հռոմեացիների, ո՛չ գերմանների կողմից» (Никонов, 12):

3 Անձնանունների փոխառության երևույթը բավական ցայտուն կերպով նշմարվում է վերջին երկու հազար տարիների ընթացքում: Քրիստոնեության, ապա նաև իսլամի ծագման ու տարածման հետ զուգընթաց հրեական (աստվածաշնչական), հունական, ասորական, արաբական անունները լայնորեն տարածվեցին այդ կրոններն ընդունած եվրոպական և ասիական ժողովուրդների մեջ: Տեղանունների փոխառության երևույթը անհամեմատ նոր է՝ XVI—XVII դարերից է նշմարվում: Հմմտ. Ամերիկայի, Ավստրալիայի տեղանունների պատմությունը՝ աշխարհագրական մեծ հայտնագործությունների ժամանակ: Այսօր ևս անձնանունների փոխառությունները ավելի շատ են, քան տեղանուններինը:

Տեղանվան առնչությունը օբյեկտին շատ հաճախ ավելի պայմանական է, քան անձնանվան առնչությունը անձին։ Տեղանվան ստեղծումը պայմանավորված է երեք գործոններով՝ պատմական, լեզվական և աշխարհագրական։ Պատմական գործոնը անվանադիր հանրությունն է իր սոցիալ-պատմական և մշակութային զարգացման վիճակով։ Լեզվական գործոնը անվանադիր հանրության լեզուն է՝ բառակազմական իր միջոցներով ու մտածողությամբ։ Աշխարհագրական գործոնը օբյեկտիվ իրականությունն է՝ աշխարհագրական օբյեկտն իր հատկանիշներով։ Տեղանունը ստեղծվում է տվյալ տարածքում տվյալ պահին խոսվող լեզվի միջոցներով։ Անհայտ ծագմամբ և չստուգաբանվող տեղանունները կամ մեզ հայտնի լեզուների՝ անհայտ լեզվական իրողությունների դրսևորումներ են, և կամ մնացորդներն են այն լեզուների, որոնք երբևէ խոսվել են տվյալ տարածքում, սակայն որոնց մասին մենք տեղեկություն չունենք[4]։

Աշխարհագրական որոշակի տարածքի տեղանունները բազմաշերտ են՝ ա) ըստ լեզվական ծագման և բ) ըստ ստեղծման ժամանակի։ Սա նշանակում է, որ տվյալ տարածքի տեղանունները ստեղծվել են՝ ա) տարբեր էթնոլեզվական և բ) տարբեր պատմական ու սոցիալ-մշակութային միջավայրերում։ Առաջին հանգամանքը պայմանավորված է անվանադիր հանրության էթնոլեզվական պատկանելությամբ, իսկ երկրորդը՝ սոցիալ-պատմական զարգացման աստիճանով։ Առաջին դեպքում լեզվական հիմքը անպայմանորեն տարբեր է, իսկ երկրորդ դեպքում այն կարող է և նույնը լինել։

Սկզբնական շրջանում իբրև տեղանուն հանդես եկող բառը կամ բառակապակցությունը դեռևս պահպանում է իր լեզվական իմաստն ու հասկացական ծավալը։ Գործածվելով որպես տեղանուն՝ լեզվական միավորը սահմանափակվում է ծավալով. այն ընդգրկում է միայն այն առարկան, որն անվանում է։ Այլ խոսքով, լեզվական միավորի տեղանվանացումը նրա ծավալի սահմանափակումն է։ Տեղանվան բնութագրիչ, որոշիչ էությունը ընկալվում է այնքան ժամանակ, քանի դեռ գոյություն ունեն այն կազմող լեզվական միջոցները։ Վերջիններիս կորուստն է հիմնական պատճառը, որ տեղանունը որպես բառ կամ բա-

---

4 «Տեղանունները կազմվում են իրենց ստեղծման ժամանակաշրջանում տվյալ տարածքում խոսված լեզվով և ձևափոխվում են այն լեզուների հնչյունական օրենքներով, որոնք... հերթականությամբ դուրս են մղել բնիկ լեզուն» (Dauzat, 4)։

ռակապակցություն զրկվում է իմաստից և լեզվական բովանդակությունից։ Տեղանունը, որպես աշխարհագրական օբյեկտի անհատական անուն, ամրանում է օբյեկտին, և այս հանգամանքը նրան դարձնում է բավական կայուն ու կենսունակ զանազան արտաքին ազդեցությունների նկատմամբ[5]։

Աշխարհագրական որևէ տարածքում դարերի ու հազարամյակների ընթացքում պատմական, էթնիկական ու լեզվական բարդ գործընթացներ են կատարվում՝ էթնիկական (էթնոլեզվական) խմբերի ու հանրությունների հերթագայում, միաձուլում, խաչավորում և այլն. աշխարհագրական միջավայրն այս առումով գրեթե անփոփոխ է մնում։ Մինչև իսկ այն դեպքում, երբ էնթոլեզվական հանրությունը վերանում է, նրա ստեղծած տեղանունը կարող է գոյատևել՝ յուրացվել հաջորդ (ժառանգորդ) էթնոլեզվական հանրության կողմից։ Միայն տեղանունը չէ, որ ժառանգվում է, ժառանգվում են նաև լեզվական այլ կարգի երևույթներ ևս, գլխավորապես բառապաշարի միավորները։ Սակայն ի տարբերություն ժառանգված բառային միավորների, որոնք յուրացվում են որպես իմաստակիր միավորներ, տեղանուններն արդեն յուրացվում են որպես կոնկրետ այս կամ այն առարկայի (անհատի) անուն։ Նրանց բովանդակությունը միայն տվյալ անհատ առարկան է։

Իհարկե սա չի նշանակում, թե տեղանունը՝ ստեղծման պահից գոյատևելով դարեր ու հազարամյակներ մնում է անփոփոխ։ Այն ևս պատմական զարգացման ընթացքում ենթարկվում է փոփոխությունների, որոնք կարող են կրել կամ օրինաչափ, կամ ոչ օրինաչափ բնույթ։ Տեղանունը որպես լեզվի բառապաշարի միավոր անպայմանորեն ենթարկվում է հնչյունական այն օրենքներին, որոնք որևէ ժամանակահատվածում գործում են տվյալ լեզվում։ Այս փոփոխությունները բնական են և բանական։ Այնինչ ոչ օրինաչափ փոփոխությունները արտալեզվական երևույթների արդյունք են։ Այս կարգի փոփոխությունները կարելի է խմբավորել հետևյալ կետերում.

1) Ոչ օրինաչափ հնչյունական փոփոխություններ: —Այս կարգի փոփոխությունների հիմնական պատճառը էթնոլեզվական միջավայրի

---

5 «Ոչ թե անմարդաբնակ անապատում, այլ Եվրոպայի հենց կենտրոնում, ուր երկու հազար տարվա ընթացքում աղմուկով միմյանց հերթափոխեցին այդքան ժողովուրդներ ու ցեղեր, պահպանվել են բազմաթիվ կելտական անուններ և դեռևս անծանոթ լեզվով անուններ» (Никонов, 12):

փոփոխությունն է։ Սրանք կարող են տարատեսակ լինել. ա) անվանադրի և ժառանգորդի լեզուների հնչյունական համակարգերում միշտ էլ կլինեն որոշ տարբերություններ։ Հին տեղանունը ժառանգորդի լեզվում ենթարկվում է հնչյունական աղավաղման՝ ըստ նրա հնչյունական համակարգի առանձնահատկությունների. բ) աղավաղման երկրորդ եղանակը համանվանական կամ հարանվանական աղավաղումներն են (ժողովրդական ստուգաբանությամբ առաջացած աղավաղումները), որոնք հնարավոր են նաև միևնույն էթնոլեզվական միջավայրում. իմաստազրկված տեղանունը վերաիմաստավորվում է՝ ենթարկվելով համապատասխան հնչյունական ձևափոխության. գ) աղավաղման յուրատեսակ երևույթ է հապավումը կամ հապլոլոգիան. դ) սխալագրություն. պատմական աղբյուրներում հաճախ հանդիպում են միևնույն անվան գրության տարբեր ձևեր, այնպես որ դժվար է լինում որոշել ճիշտը։

2) Տեղանվան փոխությունները։— *Այս փոփոխությունները երկու տեսակ են լինում. ա) վերանվանում, երբ տեղանունը զանազան պատճառներով (որևէ մեկի հիշատակի հավերժացման, տեղանվան անբարեհնչունության և այլն) ամբողջովին կամ մասամբ փոխվում է. բ) թարգմանություն. այս կարգի փոփոխություններ են կրում այն տեղանունները, որոնք դեռևս պահպանում են իրենց իմաստային կողմը. տարբեր էթնոլեզվական հանրությունների համակեցության ընթացքում տեղանունը մասամբ կամ ամբողջովին թարգմանվում է և հետագայում քաղաքացիություն է ձեռք բերում վերջին (թարգմանված) ձևը։*

3) *Յուրատեսակ երևույթ է միևնույն* օբյեկտի բազմանունությունը: *Տարբեր էթնոլեզվական հանրություններ միևնույն օբյեկտն անվանում են տարբեր անուններով։ Ժամանակի ընթացքում այդ անուններից մեկը կամ մի քանիսը կարող են մոռացվել կամ դուրս գալ գործածությունից։*

Յուրաքանչյուր տեղանուն իր ուրույն պատմական զարգացումն է ունենում, և պարտադիր չէ, որ ենթարկվի նշված բոլոր փոփոխություններին։ Տեղանվան պատմական զարգացման ընթացքը, ինչպես նաև տեղանվան ծագումը բացահայտելը տեղանվանագիտության գլխավոր խնդիրն է։

2. Տեղանվանագիտության սկզբունքներն ու մեթոդները։ — *Աշխարհագրական որոշակի տարածքի տեղանունների ուսումնասիրությունը կարող է տարվել ժամանակային երկու մոտեցմամբ՝ համաժամանակյա և տարժամանակյա։ Առաջին դեպքում քննության են առնվում տա-*

րածքի տեղանունները որոշակի ժամանակային կտրվածքում: Երկրորդ դեպքում ուսումնասիրվում է տարածքի տեղանունների պատմական զարգացման ընթացքը: Ուսումնասիրության երկրորդ մոտեցումը դըրսևորվում է երկու եղանակով. 1) դիմահայաց (перспективно), երբ քննությունը կատարվում է պատմական զարգացմանը զուգընթաց, և 2) ետահայաց (ретроспективно), երբ քննությունը կատարվում է պատմական զարգացման հակառակ ուղղությամբ: Դիմահայաց քննության համար անհրաժեշտ է ունենալ տեղանունների պատմալեզվական բավարար հիմք: Սակայն, որպես կանոն, այդ հիմքը թերի է լինում, քանի որ տվյալ տարածքի ոչ բոլոր տեղանուններն են վկայված պատմական հուշարձաններում:

Այս բացը մասամբ կարելի է լրացնել ետահայաց քննությամբ, այսինքն՝ հիմք ընդունել ուշ շրջանի՝ տվյալներով համեմատաբար հարուստ վիճակը և աստիճանաբար բացառելով վերին շերտերը, հարաբերականորեն վերականգնել ավելի վաղ շրջանի վիճակը: Քննության այս եղանակը հնարավորություն է ընձեռում առանձնացնել տեղանունների ժամանակագրական և ծագումնաբանական շերտերը:

Ըստ ուսումնասիրության նպատակի տեղանվանագիտության մեջ կիրառելի են լեզվաբանական հետազոտության տարբեր մեթոդներ և մեթոդների համակցումներ:

Ինչպես բոլոր գիտաճյուղերում, տեղանվանագիտության մեջ ևս ելակետայինը նկարագրական մեթոդն է (համատեքստային-տիպաբանական տաքսոնոմիան): Այս եղանակով հավաքվում, որոշակի սկզբունքներով դասակարգվում, համակարգվում է տարածքի տեղանունների ամբողջությունը կամ քննության առարկա դասը:

Կառուցվածքային (ներկառուցվածքային տաքսոնոմիայի) մեթոդով քննության են առնվում արդեն դասակարգված տեղանունների առանձին խմբեր և ենթախմբեր՝ ըստ բաղադրիչների, ըստ բաղադրիչների փոխհարաբերության և այլն:

Իմաստաբանական (թեմատիկ-իմացաբանական տաքսոնոմիայի) մեթոդով ուսումնասիրվում են տեղանունների կազմության առանձին տարրերի իմաստային ոլորտները, տեղանունների փոխանցման և այլ հարակից հարցեր:

Տեղանունների ծագումնաբանական-ստուգաբանական հետազոտություններում կիրառելի են ներքին և արտաքին վերականգնման, ինչպես նաև համեմատական-զուգադրական և լեզվահնէաբանական մեթոդնե-

րը։ Եթե ներքին վերականգնման մեթոդը գործում է միևնույն լեզվի, արտաքին վերականգնման մեթոդը՝ ցեղակից լեզուների շրջանակներում, ապա վերջին երկու մեթոդները ընդլայնում են ուսումնասիրության շրջանակները՝ ներառելով նաև ոչ ցեղակից լեզուները։

Տեղանվանագիտության կարևոր մեթոդներից մեկն է նաև տարածքային կամ լեզվաաշխարհագրական մեթոդը, որը հնարավորություն է ընձեռում տեղանվանական (լայն առումով՝ լեզվական) նյութի համապատասխան ուսումնասիրության համար։

Առավել հաճախ տեղանվանագիտական, մասնավորապես ծագումնաբանական-ստուգաբանական ուսումնասիրություններում կիրառվում են մեթոդների համակցումներ (կոմբինատոր մեթոդներ)։ Այս իմաստով տեղանվանագիտական ուսումնասիրությունները ինչ-որ չափով մերձենում են վերծանման ուսումնասիրություններին։ Թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքում հարկ է լինում բացահայտել անհայտ լեզվական հիմքը։

Տեղանվանագիտական ուսումնասիրություններում անհրաժեշտաբար պետք է պատմական մոտեցում, որը ենթադրում է թե՛ լեզվի, թե՛ աշխարհագրության և թե՛ սոցիալ-մշակութային պատմական իրողությունների հաշվառումը։

3. Ջրանունների պատմալեզվական կարևորությունը։ — *Տեղանվանագիտության մեջ առաջ քաշված այն դրույթը, թե գետանուններում համեմատաբար ավելի շատ հին անուններ են պահպանվել[6], քան այլ կարգի տեղանուններում, առանձին տարածքների և առանձին խոշոր գետերի ավազանների գետանունների ուսումնասիրության խթան դարձավ։ Ուսումնասիրությունների տվյալները հաստատեցին վերոհիշյալ դրույթի ճշմարտությունը, ինչպես նաև բացահայտեցին մի շարք նոր ընդհանուր օրինաչափություններ, որոնք են.*

ա) Մեծ գետերի անունները ավելի հին են, քան փոքր գետերի անունները. ըստ Վ. Շտայնհաուզերի՝ արևելյան Ալպերի շրջանում Դանուբ գետի գլխավոր վտակների անունները կելտական ծագում ունեն, վտակների վտակներինը՝ սլավոնական, իսկ վերջիններիս վտակներինն

---

6 *«Հոսող ջրերի անունները առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում. բոլոր կարգի տեղանունների մեջ նրանք պահում են առավել հին անունների ամենամեծ տոկոսը»* (Dauzat, *195*)։ *«Տվյալ տարածքի հնագույն բնակչության բնույթը ուսումնասիրելիս արժեքավոր հետևություններ կարելի է անել ջրանունների վերլուծությամբ»* (Georgiev, *328*)։

ու առավել փոքր գետերինը՝ գերմանական։ Վ. Գեորգիևը նշում է, որ Բուլղարիայի 100 կմ և ավելի երկարությամբ 27 գետերից 20-ի անունները նախասլավոնական (թրակյան) ծագում ունեն և միայն 2-ը՝ սլավոնական (բուլղարական), այնինչ 50—100 կմ երկարությամբ 58 գետերից 31-ը բուլղարական և միայն 9-ը թրակյան անուններ ունեն (Georgiev, 328)։

բ) Գետերի անունները սովորաբար «ջուր» իմաստային դաշտին պատկանող բառերի (ջուր, գետ, առու, ծով, հեղեղ, ճահիճ և այլն), ինչպես նաև ջրին բնորոշ («հոսել», «թափվել», «ծորալ») հատկանիշներ նշող բառերի ածանցյալների տեղանվանացումներ են[7]։

գ) Առավել հաճախ գետն անվանվում է որևէ բնորոշ հատկանիշով, որը կարող է լինել ջրի գույնը, ջերմությունը, համը, հոսանքի արագությունը, գետի հունը, շրջապատի որևէ բնորոշ հատկանիշ և այլն։ Այսպիսի գետանունները սովորաբար բաղադրյալ են՝ որոշիչ-որոշյալ տիպի բառակապակցություններ, որոնց եզրերից մեկը տեսականիշ բառն է[8]։

դ) Գետանունների կազմության տարածված եղանակ է նաև գետը իր ափին գտնվող բնակավայրի, լեռան, գետի ակունքի, տարածքի (գավառի) անունով կոչելը։ Այս դեպքում բաղադրյալ գետանունները հատկացուցիչ-հատկացյալ տիպի բառակապակցություններ են. եզրերից մեկը կրկին տեսականիշ բառն է[9]։

---

7 «Գետի նշանակման համակարգերը մեծ բազմազանություն չունեն։ Ամենապարզը այն «գետ» անվանելն է պարզապես, կամ ջուր, հոսող ջուր, որոնցից յուրաքանչյուրը գետ է գլխավորապես իր ափին բնակվողների համար» (Dauzat, 195). «Նախնական և անկասկած հնագույն անվանումները ... ծագում են այսպես կոչված «ջրային բառերից», այսինքն «(հոսող) ջուր», «աղբյուր», «առու», «գետ», «(ջրային) հոսանք» (կամ «հոսել») և այլ նշանակություններից» (Krahe, 289)։

8 «Տեսականիշ բառը կարող է ուղեկցվել մի մակդիրով, որը նախորդում է նրան։ Ի վերջո ածականը գոյականանալով գործածվում է առանձին որպես փոխանվանական կազմություն։ Այն գլխավորապես նշանակում է մի բնական որակ (ջրի գույնը կամ ջերմաստիճանը, հոսանքի արագությունը և այլն)» (Dauzat, 195)։

9 «Ի վերջո ... գետը կարող է վերցնել իրեն ծնունդ տվող ակունքի կամ իր ոռոգած գլխավոր քաղաքի անունը» (Նույն տեղում)։

*Բաղադրյալ գետանունները ժամանակի ընթացքում կարող են վերածվել բարդ բառերի (անունների), ինչպես նաև կարող են սեղմվել (ենթարկվել էլիպսիսի)։ Վերջին դեպքում սովորաբար ընկնում է տեսականիշ բառը։ Փաստորեն լրացումը՝ հատկանիշը կամ մյուս տեղանունը վեր է ածվում գետանվան (*Dauzat, *22, 195)։*

Ինչպես կարելի է համոզվել, այս օրինաչափությունները ընդհանուր տիպաբանական բնույթ ունեն։ Այս տեսակետից կարելի է քննել բացահայտ պարզ, հստակ ծագում ունեցող գետանունները։ Իսկ եթե ծագումն անհա՞յտ է։ Բնականաբար նախ պետք է պարզել անվան ծագումը, այսինքն ստուգաբանել։ Ահա այստեղ կրկին օգնության են գալիս վերոհիշյալ օրինաչափությունները։

Գ Լ Ո Ւ Խ Ա Ռ Ա Ջ Ի Ն

ՀԱՅ ՏԵՂԱՆՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Հայ տեղանվանագիտության պատմության համառոտ ակնարկ։ *Հայկական լեռնաշխարհի տեղանունների ուսումնասիրության պատմությունը կարելի է բաժանել երեք շրջանի՝*

ա) Առասպելական-ինտուիտիվ ստուգաբանությունների (էպոնիմային-անվանադրական մեկնաբանությունների) շրջան։ Հայկական լեռնաշխարհի տեղանունների ծագումնաբանական-ստուգաբանական առաջին փորձերին հանդիպում ենք անտիկ շրջանի հեղինակների, իսկ մ. թ. V դարից սկսած նաև հայ մատենագիրների երկերում։ Այս մեկնաբանությունները մեծ մասամբ խարսխված են ժողովրդական ավանդույթների, ինչպես նաև համանվանական ու հարանվանական երևույթների վրա։ Իհարկե հանդիպում են նաև ճիշտ բացատրություններ, երբ տեղանվան ծագումը հստակ է և կամ ծանոթ է հեղինակին։

Մինչև XVIII դարի վերջն ընդգրկող այս շրջանի ամփոփիչ աշխատանքը կարելի է համարել Մ. Սեբաստացու և աշակերտների «Բառգիրք յատուկ անուանց, որք գտանին յայլ և այլ գիրս արտաքոյ Աստուածա-

շունչ գրոց» գործը։ Այս բառարանը զետեղված է «Բառգիրք հայկազեան լեզուի» երկրորդ հատորում[10]։

բ) Տեղագրական-տեղանվանական ուսումնասիրությունների շրջան։ XIX դարում սկիզբ առավ հայկական տեղագրությունը։ Առաջին հայ տեղագիրները՝ Ղ. Ինճիճյանը, Ն. Սարգսյանը, Հ. Շահխաթունյանը, Ա. Ջալալյանը, իրենց ժամանակի Հայաստանի տեղագրությունը տալուն զուգընթաց հաճախ փորձում էին տեղորոշել հին անունները։ Այս իմաստով առանձնանում են Ղ. Ալիշանի «Այրարատ», «Սիսական» և «Շիրակ» աշխատությունները, որոնք իրենց բնույթով ոչ միայն տեղագրական են, այլև պատմաաշխարհագրական։ Ալիշանը այսպիսով շարունակեց Ղ. Ինճիճյանի սկսած աշխատանքը՝ հիմք ընդունելով ժամանակակից Հայաստանի տեղանվանական վիճակը (ետահայաց-ռետրոսպեկտիվ եղանակով)։ Իր պատմաաշխարհագրական բնույթով ուշագրավ գործ է Ս. Էփրիկյանի «Բնաշխարհիկ բառարանը», որը դժբախտաբար մնացել է անավարտ։ Հիշատակված հեղինակներին, ինչպես նաև նրանց ժամանակակից այլ հեղինակների (Գ. Սրվանձտյան, Մ. Սմբատյան, Ա. Տեկանց), բնորոշ է հայ մատենագրության ավանդներին հետևելը։ Նրանց երկերում հանդիպող ստուգաբանական և ծագումնաբանական դիտողությունները մեծ մասամբ հիմք ունեն հայ մատենագրության ստուգաբանական փորձերը։

գ) Տեղանվանագիտական ուսումնասիրությունների շրջան։ Այս շրջանը սկզբնավորվում է Հ. Հյուբշմանի «Հին հայոց տեղվո անունները» աշխատությամբ։ Ըստ էության այս երկը առաջին փորձն էր լեզվաբանական քննության ենթարկելու պատմական Հայաստանի տեղանունները։ Հյուբշմանի աշխատության աղբյուրներն են եղել հայ մատենագիրների հրապարակված երկերը, ինչպես նաև XIX դարի տեղագիրների գործերը։ Հյուբշմանի աշխատության միջուկը կազմում է հին Հայաստանի նահանգների և գավառների անունների քննությունը։ Աշխատության վերջում քննվում են նաև բնակավայրերի անունների կազմության կաղապարներն ու միջոցները։ Վերջում հավելվածաբար ներկայացված է տեղանունների մի բառարան, որտեղ տրված են այդ անուններից շատերի ստուգաբանությունները։ Աշխատության մեջ ջրանուններն ու լեռնանունները գրեթե չեն քննված։

---

[10] Այս և ստորև հիշված հեղինակների աշխատությունների և երկերի վերաբերյալ տվյալները տե՛ս գրականության ցանկում։

Հյուբշմանի աշխատությունից հետո երկար ժամանակ տեղանվանագիտական հարցերը հայագետներին զբաղեցնում էին դեպքից դեպք, որպես իրենց պատմական կամ աշխարհագրական հետազոտության օժանդակ միջոց (Ն. Ադոնց, Յ. Մարկվարտ և ուրիշներ):

1930-ական թվականներին Հայկական լեռնաշխարհի տեղանունների լեզվաբանական քննությանն անդրադարձավ Գ. Ղափանցյանը: Դրա համար նոր նախադրյալներ էին ստեղծվել: Դարասկզբին վերծանվեցին խեթական արձանագրությունները, հրապարակվեցին ասորական և ուրարտական բազմաթիվ նոր արձանագրություններ, որոնց տեղանվանական նյութը անմիջական առնչություն ուներ Հայկական լեռնաշխարհի հետ: Ղափանցյանն առաջիններից մեկն էր, որ ձեռնարկեց տեղանվանական այդ նյութի լեզվաբանական քննությանը: Նրա տեղանվանագիտական աշխատություններն են «Վերջածանցներ և վերջածանց դարձած բառեր հին Փոքր Ասիայի տեղանուններում», «Հայասան հայերի բնօրրան» և «Հին Հայաստանի տեղանունների պատմալեզվաբանական նշանակությունը»:

Վերջին տարիների լեզվաբանական աշխատությունների մեջ իրենց տեղանվանագիտական բնույթով առանձնանում են Գ. Ջահուկյանի «Հայերենը և նրա առնչությունը հնդեվրոպական լեզուների հետ» և «Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները» գործերը: Առաջինում հեղինակը քննում է խեթական աղբյուրներում վկայված հայասական հատուկ անունները՝ տեղանունները, անձնանունները, դիցանունները և եզրակացնում, որ հայասական հատուկ անուններում գերակշռում են հին անատոլիական հնդեվրոպական տարրերը, այսինքն հայասերենը հին անատոլիական հնդեվրոպական լեզու է և պատկանում է կենտումային խմբին: Երկրորդում հեղինակը համեմատում է հայերենի և Բալկանների ու Փոքր Ասիայի հնդեվրոպական հին լեզուների լեզվական նյութը: Հայկական հատկանվանական նյութին այստեղ զգալի տեղ է հատկացված:

Ըստ էության այսքանով ավարտվում է հայ տեղանվանագիտական գրականության ցանկը, որին կարելի է ավելացնել նաև մի շարք ամսագրային հոդվածներ և տարաբնույթ հայագիտական գրականության մի քանի էջեր:

Այս շրջանում հին աղբյուրների տեղանվանական նյութը առավել հաճախ քննվում է տեղորոշման հայեցակետից: Միջնադարում խախտված համակարգը այսօր պատմաբանների, աշխարհագրագետ-

ների, լեզվաբանների ուշադրության կիզակետում է, մասնավորապես լուրջ խոչընդոտներ են հարուցում հին տեղանունների տեղորոշման հարցերը։ Այս ուղղությամբ մեծ աշխատանք է կատարել Ս. Երեմյանը, որը կազմել է պատմական Հայաստանի մի շարք պատմաաշխարհագրական քարտեզներ։ Հետաքրքրություն են ներկայացնում նաև «Աշխարհացույցի» տվյալների հիման վրա կազմված քարտեզի ծանոթագրությունները «Հայաստանը ըստ «Աշխարհացույցի» գրքում։ Առավել հին՝ սեպագիր արձանագրություններում վկայված տեղանունների տեղորոշմանը նվիրված են Ն. Հարությունյանի, Վ. Խաչատրյանի, Հ. Կարագյոզյանի բազմաթիվ աշխատությունները։ Այս բնագավառում կատարված գործը նույնպես հեռու է բավարար լինելուց։

Հայկական տեղանունների քննության և տեղորոշման վերաբերյալ ուշագրավ մեկնաբանություններ կան Թ. Հակոբյանի, Ս. Մելիք-Բախշյանի, Հ. Բարսեղյանի «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում»։ Սակայն այս բառարանը ավելի պատմաաշխարհագրական բնույթ ունի, քան պատմալեզվական։ Հեղինակների նպատակն է եղել հավաքել Հայկական լեռնաշխարհի տեղանունների վերաբերյալ տեղեկությունները հնագույն շրջանից մինչև մեր օրերը։

Ամփոփելով հայ տեղանվանագիտության պատմության այս համառոտ ակնարկը՝ հարկ է նշել, որ մինչ այժմ կատարված գործը սկիզբն է միայն։ Տեղանվանագիտության այսօրվա նվաճումները հաշվի առնելով կարիք կա ձեռնարկել Հայկական լեռնաշխարհի տեղանունների համակարգված ու ամբողջական քննությանը։

2. **Հայկական լեռնաշխարհի տեղանունների աղբյուրները:** Տեղանվանական ուսումնասիրության համար աղբյուր կարող է ծառայել տեղանուն պարունակող յուրաքանչյուր պատմական վավերագիր։ Իհարկե տարբեր բնույթի վավերագրեր տարբեր աստիճանի «տեղանվանական» են։ Տեղանունների հիմնական աղբյուրները աշխարհագրական և պատմական բնույթի վավերագրերն են։

Հայկական լեռնաշխարհի տեղանունների աղբյուրները բազմազան են ու տարալեզու և ընդգրկում են շուրջ չորսհազարամյա մի ժամանակամիջոց։ Այդ աղբյուրները կարելի է խմբավորել տարբեր սկզբունքներով, սակայն մենք նպատակահարմար ենք գտնում խմբավորել ըստ ավանդման ժամանակի՝ հնագույն, անտիկ, միջնադարյան, ժամանակակից։ Այս խմբերից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել տեղանվանական ուսումնա-

տիրությունների ժամանակ։ Քննենք այդ առանձնահատկությունները ըստ առանձին խմբերի։

Ա) Հնագույն շրջանի աղբյուրները (մ. թ. ա. XVIII—VII դդ.)։ Այս խումբը կազմում են Առաջավոր Ասիայի հնագույն քաղաքակրթությունների՝ խեթական թագավորության (մ. թ. ա. XVIII—XII դդ.) և Ասորեստանի (մ. թ. ա. XVIII—VII դդ.) սեպագիր արձանագրությունները[11]։ Սկզբնական շրջանում (մ. թ. ա. XVIII—XVI դդ.) այս աղբյուրների տվյալները Հայկական լեռնաշխարհի մասին աղքատիկ են ու կցկտուր, սակայն խեթական թագավորության դեպի արևելք (մ. թ. ա. XV դարից սկսած) և Ասորեստանի դեպի հյուսիս (մ. թ. ա. XII դարից սկսած) ընդարձակմանը զուգընթաց աստիճանաբար դառնում են ավելի հարուստ ու բովանդակալից։ Խեթական թագավորության կործանումից հետո (մ. թ. ա. XII դար) մինչև Հայկական լեռնաշխարհում Ուրարտական պետության կազմավորումը (մ. թ. ա. IX դար), շուրջ երեք հարյուր տարի Հայկական լեռնաշխարհի մասին տեղեկությունների միակ աղբյուրները մնում են ասորական սեպագիր վավերագրերը։ Հաջորդ երեք հարյուր տարիները բնորոշվում են Ասորեստանի և Ուրարտուի համառ ու անզիջում պայքարով՝ Առաջավոր Ասիայում գերիշխանության համար։ Այդ պայքարն իր արտացոլումն է գտել ոչ միայն ասորական, այլև ուրարտական (դարձյալ սեպագիր) արձանագրություններում։ Վերջինները տեղեկություններ են հաղորդում նաև մերձարաքսյան և այսրարաքսյան տարածքների մասին, ինչը պակասում էր խեթական և ասորական արձանագրություններում։

Աղբյուրների այս խումբը միավորվում է գրության համակարգով, որը միջագետքյան սեպագիրն է։ Այս աղբյուրների տեղանվանական նյութի լեզվաբանական քննության առանձնահատկությունները պայմանավորված են սեպագրի էությամբ։

Սեպագիրն ստեղծվել էր շումերական միջավայրում (մ. թ. ա. IV—III հազարամյակներում)։ Սեմական աքքադայինները (ասուրաբաբելացիները) շատ վաղ յուրացրին այն և բավարար ճշգրտությամբ հարմարեցրին իրենց լեզվի հնչյունական համակարգին։ Խեթական, խուռիական, ուրարտական սեպագիր արձանագրությունների հիմքը սեպագրի աքքադական տարբերակն է (աքքադական սեպագիրը)։ Այն

11 Կցկտուր տեղեկություններ Հայկական լեռնաշխարհի մասին հանդիպում են նաև Սարգոն Աքքադացու և Նարամսուենի արձանագրություններում։

բնորոշվում է գրառման և ընթերցման շատ բարդ եղանակով։ Սեպագիրը վանկային գիր է, այսինքն արտահայտում է V, CV, VC, CVC հնչյունակապակցություններ, իսկ շղթայում՝ VCV, CVCVC, CVCCVC։ Միևնույն սեպագիր նշանը կարող է ունենալ մի քանի արտասանություն (արտահայտել տարբեր հնչյունակապակցություններ), ինչպես նաև կատարել դետերմինատիվի (դասանիշի կամ որոշչի նշանի) դեր կամ կիրառվել որպես գաղափարանիշ։ Սեպագիր նշանների բազմազան գործառույթները հաճախ պատճառ են դառնում սխալ ընթերցումների կամ ծնում են տարընթերցումներ։ Ուշագրավ է, որ նման տարընթերցումները հիմնականում հանդիպում են հատուկ անուններում, ինչպես՝ Bargun—Mašgun, Bagbartu—Bagmaštu, Nunme—Tunme.

Առհասարակ սեպագրին հատուկ այս բարդությանը խեթական, խուռիական, ուրարտական արձանագրություններում ավելանում է նաև այն, որ այս լեզուների հնչյունական համակարգերը էապես տարբերվում էին աքքադերենի հնչյունական համակարգից։ Ինչ խոսք, յուրացնելով աքքադական սեպագիրը՝ խեթերը, խուռիները, ուրարտացիները անպայման այն հարմարեցրել էին իրենց լեզվի հնչյունական համակարգերին, սակայն սեպագրագիտությունը դեռևս լիովին չի բացահայտել համապատասխանությունների էությունը, և շատ դեպքերում (մեծ մասամբ) այս արձանագրություններն ընթերցվում են աքքադերենի հնչմամբ։ Այս կարգի խնդիրներից նշենք՝ ուրարտերենում և խեթերենում o ձայնավորի, ուրարտերենում շչական կիսաշփականների, ոչ էմֆատիկ սուլական կիսաշփականների հարցերը և այլն (Меликишвили, 46)։

Ինչպես նշեցինք, սեպագիրը բառասկզբում և բառավերջում կարող էր արտահայտել միայն մեկ բաղաձայն, իսկ միջձայնավորային դիրքում՝ առավելագույնը երկու։ Սեպագիրը յուրացրած մյուս լեզուները կարող էին ունենալ այլ առանձնահատկություններ, ինչպես, օրինակ՝ բառասկզբում և բառավերջում երկու, իսկ միջձայնավորային դիրքում՝ երեք բաղաձայնների առկայություն, որն, ինչ խոսք, սեպագրով անհնար էր արտահայտել[12]։

Այս կարգի բազմաթիվ խնդիրների լուսաբանմանը զգալի չափով օգնում են տեղանունները, որոնք ավանդված են տարբեր սեպագիր

---

12 CCV և VCCCV հնչյունաշարերում բաղաձայններից մեկը կարող է լինել ռնգային, նաև կամ թրթռուն ձայնորդ (m, n, l, r)։ Սակայն վերջիններս սեպագրում հանդես էին գալիս որպես բաղաձայն (այսինքն ձայնավորի հետ մի վանկում) և անհնար էր արտահայտել CSV, VSCCV, VCCSV հնչյունաշարերը։

աղբյուրներում, ինչպես նաև ավելի ուշ շրջանի՝ հունա-հռոմեական և միջնադարյան աղբյուրներում։ Տեղանունների տեղորոշումն ու նույնացումն այս իմաստով կարևոր նշանակություն է ձեռք բերում։ Սակայն այս հարցում ևս սեպագիր վավերագրերի տվյալները կարոտ են լուրջ քննության։ Ժամանակային մեծ հեռավորությունը, որի ընթացքում մեզ հետաքրքրող տարածքում բարդ պատմական և էթնոլեզվական գործընթացներ են տեղի ունեցել, շատ դեպքերում գրեթե անհնար է դարձնում հնագույն տեղանունների տեղորոշումը։ Ինչևէ, սեպագրագիտությունը դեռևս մեծ անելիքներ ունի այդ խնդիրների վրայից անհայտության ու անորոշության քողը հեռացնելու ուղղությամբ։

Բ) Անտիկ շրջանի կամ հունա-հռոմեական աղբյուրներ (մ. թ. ա. V—մ. թ. V դդ.)։ Մ. թ. ա. VI դարում Առաջավոր Ասիայում պատմական և քաղաքական մեծ փոփոխություններ կատարվեցին։ Պատմության թատերաբեմից հեռացան Ասորեստանն ու Ուրարտուն և բարձրացան նոր քաղաքական միավորումներ՝ նախ Մարաստանը, ապա Աքեմենյան Պարսկաստանը։ Մ. թ. ա. VI դարի վերջին ամբողջ Առաջավոր Ասիան գտնվում էր Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության տակ։ Այս շրջանից մեզ հետաքրքրող միայն մեկ պատմական վավերագիր է վկայված՝ Դարեհ 1-ինի Բեհիսթունյան արձանագրությունը։ Մ. թ. ա. VI—V դարերում Պարսկաստանի և Հունաստանի միջև պատերազմները հույների շրջանում հետաքրքրություն արթնացրին Հին Արևելքի այդ հզոր պետության նկատմամբ։ Հույն հեղինակներն իրենց պատմական երկերում արդեն անդրադառնում են այս պետությանը, տեղեկություններ հաղորդելով նրա տարածքում գտնվող երկրների ու ժողովուրդների մասին։

Առաջինն այս շարքում Հերոդոտոսն է (մ. թ. ա. V դար), որ շարադրել է հունա-պարսկական պատերազմների պատմությունն ու Աքեմենյան Պարսկաստանի տարածքում բնակվող ժողովուրդների վերաբերյալ բազմաթիվ պատմական ու ազգագրական բնույթի տեղեկություններ։ Հաջորդը Քսենոփոնն է (մ. թ. ա. V—IV դարեր)։ Քսենոփոնի «Անաբասիս» և «Կյուրոպեդիա» երկերը անգնահատելի տվյալներ են հաղորդում ժամանակի Հայաստանի մասին։ Հետագա դարերում Արևելքի (Պարսկաստանի) և Արևմուտքի (Հունաստանի, իսկ մ. թ. ա. II դարից սկսած Հռոմի) հարաբերություններին անդրադարձած հեղինակները այս կամ այն չափով անդրադառնում են նաև Հայկական լեռնաշխարհին (այն է՝ Հայաստանին)։ Այդ հեղինակներից հարկ է նշել Պոլիբիոսին (մ. թ. ա. II դար), Դիոդորոս Սիկիլիացուն (մ. թ. ա. I դար),

Պլուտարքոսին (մ. թ. ա. I դար) և այլն։ Այս շարքում առանձնանում է Ստրաբոնը, որի «Աշխարհագրությունը» հարուստ տեղեկություններ է պարունակում Հայաստանի մասին։ Ստրաբոնը շատ դեպքերում քաղվածքներ է բերում նաև իր նախորդների երկերից։ Հայաստանի վերաբերյալ ուշագրավ տեղանվանական տեղեկություններ կան Պետինգերյան աղյուսակներում։

Հունա-հռոմեական աղբյուրների տեղանվանական տվյալները Հայաստանի և Հայկական լեռնաշխարհի մասին հարուստ չեն և ցրված են զանազան երկերում։ Այստեղ ևս մենք բնդհարվում ենք տեղանունների՝ այլալեզու ավանդման երևույթին, այսինքն տեղանվան հնչյունական պատկերը դարձյալ ճշգրիտ չէ։ Սակայն այս աղբյուրների տեղանունների տեղորոշումը մեծ մասամբ հայտնի է ուշ շրջանի հայկական աղբյուրներից, որն ինչ-որ չափով օգնում է վերականգնելու տեղանունների նախնական հնչյունական տեսքը։

Գ) Միջնադարյան աղբյուրներ (V—XVIII դդ.)։ Այս շրջանը բնորոշվում է մի կարևոր հանգամանքով. Հայկական լեռնաշխարհի տեղանունների հիմնական աղբյուր են դառնում հայ մատենագիրների երկերը։ Առաջին անգամ տարածքի տեղանունները վկայված են բնիկ ժողովրդի լեզվի հնչյունական համակարգը կատարելապես վերարտադրող մի գրությամբ, որը նվազագույնի է հասցնում աղավաղումների հնարավորությունը։ Օտար աղբյուրներն այսուհետև դառնում են սոսկ օժանդակ՝ լրացնելու մեր աղբյուրների որոշ բացթողումները։

Միջնադարյան աղբյուրները կարելի է բաժանել երկու խմբի՝ վաղ և ուշ միջնադարյան աղբյուրներ՝ բաժանման սահմանագիծ ընդունելով XIV—XV դարերը, որը պատճառաբանվում է հետևյալ նկատառումներով։

XII դարից սկսած Հայկական լեռնաշխարհը շուրջ երեք ու կես դար անընդհատ ենթակա էր թուրք-թաթարական և թաթար-մոնղոլական արշավանքներին, որոնց արդյունքը եղավ տարածքում թյուրքական էթնիկական տարրի հաստատումը։ Այն իր հերթին առաջ բերեց տարածքի հին տեղանվանական համակարգի զգալի փոփոխություն։ Թյուրքական տեղանունների առաջին վկայությունները Հայկական լեռնաշխարհում վերաբերում են XIV—XV դարերին։ Աստիճանաբար հին տեղանուններից շատերը դուրս մնացին գործածությունից՝ փոխարինվելով նոր՝ թյուրքական և կամ թյուրքացված ու աղավաղված անուններով։ Հայ մատենագրությունը, սակայն, շարունակում էր հին ավանդույթը։ Դժբախտա-

բար տարածքի հին տեղանունների մի փոքր մասն է վկայված այդ երկերում. մինչև իսկ աշխարհագրական երկերը, չնայած իրենց պարունակած հարուստ տեղանվանական նյութին, հեռու են բավարար տվյալներ հաղորդելուց։

Վաղ միջնադարյան օտար աղբյուրները բյուզանդական, արաբական, ասորական, վրացական պատմա-աշխարհագրական երկերն են։ Այս աղբյուրներում, ցավոք, առավել կամ նվազ չափով աղավաղված են ներկայանում Հայկական լեռնաշխարհի տեղանունները։ Սակայն արդեն աղավաղումների ճշգրտումը ավելի դյուրին է։

Ուշ միջնադարի հայ աղբյուրներում, բացի պատմական, աշխարհագրական բնույթի երկերից, զգալի թիվ են կազմում ձեռագրերի հիշատակարանները, վիմագիր արձանագրությունները։

Այս շրջանում առավել բազմալեզու և բազմաժանր են դառնում օտար աղբյուրները։ Աստիճանաբար կազմավորվում է թուրքալեզու պատմագրությունը։ XIII դարից սկսած դեպի արևելք են ուղևորվում բազմաթիվ եվրոպացիներ՝ ճանապարհորդներ, վաճառականներ, միսիոներներ, որոնք հաճախ հրապարակում են իրենց ուղևորությունների նկարագրությունները։ Այս ուղեգրություններն ուշագրավ նյութեր են պարունակում Հայաստանի և հարակից վայրերի մասին։

Դ) Ժամանակակից աղբյուրներ (XIX—XX դդ.)։ Նախորդ շրջանների աղբյուրները նպատակ չունեին ներկայացնել տարածքի տեղանուններն իրենց ամբողջությամբ։ Տեղանուններն այնտեղ հիշվում են ըստ հարկի։ XIX դարում սկզբնավորվեց հայկական տեղագրությունը։ Առաջինը Ղ. Ինճիճյանն էր, որ ձեռնարկեց Հայաստանի տեղագրությունը՝ նախ ժամանակակից, ապա նաև հին, պատմական։ Նրա երկերը օրինակ և ուղենիշ դարձան հաջորդների համար (Հ. Շահխաթունյան, Ղ. Ալիշան, Ս. Ջալալյան, Ն. Սարգսյան և ուրիշներ)։ Տեղագիրներից շատերը իրենք էին ուղևորվում և իրենց անմիջական տեղեկություններն էին ներկայացնում։ Այս շրջանի աղբյուրները նախորդներից տարբերվում էին նյութի առավել ամբողջական մատուցմամբ։ Անչափ կարևոր է նաև այն հանգամանքը, որ տեղանունները որոշակիորեն տեղորոշված են, ինչը հնարավորություն է տալիս տեղանվանական քննությունը կատարել առավել ճիշտ։

Ինչպես ուշ միջնադարի, այնպես էլ ժամանակակից հայկական աղբյուրներում ակնառու մի դժվարություն կա։ Ժամանակակից (հին աղբյուրներում չվկայված) տեղանունների գրությունը շատ հաճախ անկա-

յուն է. տարբեր հեղինակներ միևնույն տեղանունը ավանդում են տարբեր գրությամբ։ Պատճառը մի կողմից հեղինակի ծագումն է (արևմտահայ, արևելահայ), մյուս կողմից տեղական, բարբառային արտասանության առանձնահատկությունները։ Այսպես են հատկապես ձայնեղ և շնչեղ խուլ բաղաձայններ պարունակող տեղանունների գրությունները[13]։

Ժամանակակից աղբյուրներում կարևոր նշանակություն ունեն բազմալեզու քարտեզները, որոնք նոր երևույթ են։

Հայկական լեռնաշխարհի տեղանունների աղբյուրները, ինչպես տեսանք, բազմաթիվ են և բազմաբնույթ։ Այդ աղբյուրների տվյալներից օգտվելը կապված է նաև տեխնիկական բնույթի դժվարությունների հետ։ Ոչ բոլոր աղբյուրներն են մատչելի հետազոտողին, տեղանունները ցրված են տարբեր աղբյուրներում։ Մինչև իսկ իդեալական աղբյուրները, ինչպիսիք են տեղագրությունները ու քարտեզները, ոչ բոլոր տեղանուններն են ամփոփում։ Տեղանունների ամբողջական հավաքածուներ (ըստ աղբյուրների, ըստ ժամանակաշրջանների, ըստ տեսակների) պակասում են, ինչը լրացուցիչ դժվարություններ է ստեղծում համակարգված ընդգրկուն տեղանվանական ուսումնասիրության համար։

Վերջին տարիներին կազմվել և հրատարակվել են սեպագիր վավերագրերում վկայված տեղանունների բառարաններ (Parpola, *1970*; Monte, Tischler, *1978*)։ Կասկածից վեր է, որ անհրաժեշտ է կազմել նաև հունա-հռոմեական, բյուզանդական, արաբական, ասորական, վրացական և այլ աղբյուրների տեղանվանական տվյալների բառարաններ (Tischler, *1977*)։ Դեռևս չկա հայկական աղբյուրների տեղանվանական նյութի մի ամբողջական բառարան։ XX դարասկզբին նման աշխատության ձեռնարկեց Ս. Էփրիկյանը, սակայն նրա գործը մնացել է անավարտ (վերջանում է Կոստանդնուպոլիս հոդվածով)։ Այժմ կազմվող «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանը», կարծում ենք, կլրացնի այդ բացը։

Տեղանվանական ուսումնասիրությունը պահանջում է նաև տեղանունների հանգաբառարանի կազմություն։ Հայկական լեռնաշխարհում և հարակից վայրերում երբևէ խոսված լեզուները, որքան կարելի է եզրակացնել առկա նյութից, հիմնականում վերջածանցավոր լեզուներ են

---

13 Հին՝ պատմական աղբյուրներում վկայված անունների գրությունը, ինչպես նաև բացահայտ հայկական ծագում ունեցող տեղանունների գրությունը մեծ մասամբ ճիշտ է։ Սակայն շատ անգամ գրությունների մեջ զգալի տարբերություններ են նկատվում. ինչպես՝ Գուգոյ վանք-Կուքոյ վանք, Ասփսթան-Հասպիստան, Բեթար-Փեթար և այլն։

եղել: Իսկ եթե ճիշտ է այն դրույթը, թե տեքստում միևնույն ածանցին հանդիպելու հավանականությունն ավելի մեծ է, քան միևնույն արմատին, ապա պարզ կդառնա, որ տեղանունների հանգաբառարանը հնարավորություն կտա առավել դյուրին ու ճիշտ կերպով որոշել տեղանվանական այն հիմքերը, որոնք գործածվել են Հայկական լեռնաշխարհում[14]:

3. Հայկական լեռնաշխարհի ջրագրությունը և նրա արտացոլումը պատմական աղբյուրներում: *Հայկական լեռնաշխարհը Առաջավոր Ասիայի գլխավոր ջրբաժանն է: Այստեղ են սկիզբ առնում և լեռնաշխարհի բազմաթիվ ձորերով ու հովիտներով դեպի հարևան հարթավայրերն են հոսում Առաջավոր Ասիայի գրեթե բոլոր խոշոր գետերը, ինչպես նաև նրանց վտակներից շատերը: Մոտավոր հաշվումներով այս տարածքում 100 կմ և ավելի երկարությամբ ավելի քան 100 գետեր կան: Բնականաբար ավելի բազմաթիվ են 40—100 կմ երկարություն ունեցող գետերը: Մինչև իսկ փոքր մասշտաբի քարտեզների վրա ամրագրված են մի քանի տասնյակ լճերի անուններ: Այս բավական հարուստ ջրագրությունը բավարար չափով չի արտացոլված հին վավերագրերում[15]:*

Հայկական լեռնաշխարհի բազմաթիվ ջրային օբյեկտներից միայն մի մասի հին անուններն են հայտնի: Համեմատաբար լավ է ներկայաց-

---

14 *Հայկական լեռնաշխարհի տեղանունների հանգաբառարան կազմելու մի փորձ կատարել ենք մենք՝ հենվելով հինգ կիլոմետրանոց ռուսական քարտեզի վրա (նյութի ամբողջական ընդգրկման նպատակով), սակայն տեղանվանական նյութն այստեղ շատ է աղավաղված. ճշգրտված հանգաբառարանի կազմությունը կապված է ժամանակի և որոշ դժվարությունների հետ:*

15 *Հաճախ մեր պատմիչները տեղանունը չեն նշում՝ բավարարվելով սոսկ օբյեկտի տեսակային անունը տալով: Մենք չգիտենք, օրինակ, թե հետևյալ քաղվածքներում հիշատակված գետերը ինչպես էին կոչվում հնում. «Հրամայէ (Շամիրամ—Վ. Ջ.) նախ զամբարտակ գետոյն ապառաժիւք և մեծամեծ վիմօք շինել» (Խոր., 52), «զմասն ինչ գետոյն ընդ մէջ քաղաքին բաշխեալ անցուցանէ» (Խոր., 53), (խոսքն այժմյան Խոշաբ գետի մասին է), «էջ յափն գետոյն հոսանացն Եփրատու ... ի գետախառնուռնն երկուց գետոց» (Բուզ., 115), (երկրորդ գետի անունը մնում է անծանոթ), «յորժամ ի գեօղն մտանէր սուրբ և աստուածասէր ժողովն, գետ փոքրագոյն անցանէր ընդ մէջ շինին» (Կաղանկ., 74): Նման հաղորդումներ շատ կան մեր պատմիչների երկերում: Իսկ հանվանն մեր պատմիչները հիշատակում են. Կորյունը մեկ գետանուն, Ագաթանգեղոսը՝ երեք, Եղիշեն՝ երեք, Բուզանդը՝ վեց, Փարպեցին՝ երկու, Խորենացին՝ տասնինը, Ղևոնդը՝ վեց, Սեբեոսը՝ տասնմեկ, Մամիկոնյանը՝ վեց, Դրասխանակերտցին՝ տասնմեկ և այլն: Առավելագույն թվով գետանունները, բնականաբար, վկայված են «Աշխարհացույցում»՝ քսանհինգ:*

ված Երասխի ավազանը. վկայված են 40 կմ և ավելի երկարությամբ շուրջ 40 գետերից 18-ի անունները։ Ավելի սակավ են Եփրատի (շուրջ 60 գետերից 10-ի անունները), Տիգրիսի (20-ից՝ 4-ի), Կուրի (աջակողմյան շուրջ 30 վտակներից 2-ի անունները) և Ճորոխի ավազանների վերաբերյալ տվյալները։ Ներքին (ներքին լճերի) ավազանների գետերից միայն մեկի անունն է վկայված (Արասխ→Կապուտան լիճ)։ «Աշխարհացույցը» Մեծ Հայքի տարածքում հիշում է վեց լիճ (Բզնունեաց ծով, Մովք լին, Գեղաքունեաց ծով, Գայլատու լին, Կապուտան ծով, Եղիգի լին), (ԵՀԱ)։ Այլ աղբյուրներից այս շարքին կարելի է ավելացնել ևս մի քանիսը՝ Միայ ծով (Մամիկ., 26), Պաղակացիս ծովակ (Լաստ., 13), ծովակ Հիւսիսոյ (Խոր., 109), Արեան լին (Արծր., 160)։ Ընդհանուր առմամբ հանվանե հայտնի են շուրջ 50 օբյեկտներ։ Հայտնի են առանձին օբյեկտների (գետերի, լճերի) մի քանի տարբեր անուններ (այսինքն օբյեկտը բազմանուն է), ինչպես Ճորոխ—Ակամսիս—Վոհ/Յոհ, Բզնունեաց ծով—Ռշտունեաց ծով, Ասպահեն—Խոզմօր, Գեղամայ ծով—Գեղաքունեաց ծով և այլն։ Այս ձևով ընդլայնվում է ջրանունների ցանկը, բայց ոչ աշխարհագրական տարածքը։

Մի շարք գետանուններ կարելի է վերականգնել կողմնակի վկայություններով։ Այսպես, ըստ «Աշխարհացույցի», «...Սիւնիք ...ունի գաւառս երկոտասան. զԵրնջակ, զՃահուկ, զՎայոց ձոր, զԳեղաքունի հոմանուն ծովովն, զՍոթս, զԱղահէճ, զԾղուկն, զՀաբանդ, զԲաղս, զՁորըս, զԱրեւիս, զԿովսական հոմանուն գետովք...» (ԵՀԱ, 109)։ Դարձյալ ըստ «Աշխարհացույցի» «հոմանուն» (նույնանուն) գետեր են եղել նաև Տայքի (ԵՀԱ, 10) և Գուգարքի (ԵՀԱ, 104, 110) մի շարք գավառներում։

Տարաբնույթ (տարատեսակ) աշխարհագրական օբյեկտների համանունությունը նշանակում է, որ դրանցից մեկի անունը առաջնային է (նախնականն է), իսկ մյուսը փոխանցված է կամ կազմված նախորդից։ Եթե տեղանունը փոխանցված է, ապա առկա է բացարձակ համանունություն. ինչպես՝ Բագրեւանդ գավառ և Բագրեւանդ գետ (ԵՀԱ, 110), Մանանաղի գավառ և Մանանաղի գետ (Լաստ., 158)։ Իսկ եթե մի տեղանունը կազմված է մյուսից, ապա համանունությունը հարաբերական է. ինչպես՝ Ջերմ գետ (ԵՀԱ, 108, Սեբ., 52) և Ջերմաձոր գավառ (ԵՀԱ, 108), Երասխ գետ և Երասխաձոր գավառ, Կորդուք (սեռ. Կորդուաց) գավառ և Կորդուաց գետ (Բուզ., 220)։ «Աշխարհացույցի» հաղորդումները, ինչպես կարելի է համոզվել, պատմաաշխարհագրական արժեք

ունեն, իսկ լեզվաբանական առումով թերարժեք են։ Գավառների և գետերի համանունության աստիճանը մնում է անհայտ։ Պատմաաշխարհագրական տեսակետից այս խնդիրը կարևորություն չունի, սակայն լեզվաբանական տեսակետից, երբ անհրաժեշտ է բացահայտել ու միայն տեղանվան կառուցվածքը, այլև ծագումը, այն ձեռք է բերում առաջնային նշանակություն։

Մի շարք գավառանունների երկրորդ՝ ռոտ բաղադրիչը (<իրան. *rauta- «գետ») նշում է գավառին համանուն գետի գոյությունը։ Ակնհայտ է, որ այս պարագայում գետանունը փոխանցվել է գավառին։

Նկատի առնելով այն հանգամանքը, որ պատմական Հայաստանի գավառները մեծ մասամբ բնական սահմաններով էին բաժանված (լեռներով, գետերով), կարելի է ենթադրել, որ յուրաքանչյուր գավառ գտնըվել է որևէ գետի հովտում, և, հաճախ, գետն ու գավառը համանուն են եղել։ Նման եզրակացության են մղում մի կողմից վերոշարադրյալը, մյուս կողմից՝ փոր երկրորդ բաղադրիչով գավառանունները, որոնց զգալի մասը համանուն գետեր ուներ։ Պատմական Հայաստանի այլ գավառանուններում հանդիպում են ձոր և հովիտ բառերը, որոնք փոր-ի հոմանիշներն են։ Արդյո՞ք այդ գավառները (կամ մի մասը) համանուն գետեր չեն ունեցել. հմմտ. Ջերմ գետ և Ջերմաձոր գավառ։

Ամենայն հավանականությամբ անուններ են ունեցել նաև փոքր գետերն ու գետակները. հմմտ. գետ բաղադրիչով գյուղանունները Սյունիքում, ինչպես՝ Ագարակու գետ, Գինական գետ, Ցրտոգետ, Խորթագետ և այլն (Օրբել., 513—516), որոնք ակնհայտորեն փոխանցումներ են գետանուններից։

Նման բազմաբնույթ փաստերի, հաղորդումների համակողմանի քննությամբ կարելի է լրացնել Հայկական լեռնաշխարհի հին գետանունների ցանկը։ Սակայն մինչ այդ հարկ է բավարարվել պատմական վավերագրերում հանդիպող հիշված գետանուններով։

Հայկական լեռնաշխարհի ջրանունները միջնադարի հայկական աղբյուրներում վկայված են գլխավորապես բառակապակցություններով, որոնց եզրերից մեկը որևէ տեսականիշ բառ է (աշխարհագրական տերմին)՝ գետ, ծով, ծովակ, լիճ։ Օրինակ՝ «անտառ առ Ազատ գետո՛վն անկէ». «Ճամբարն Երուանդայ էր ... ի վերայ գետոյն Ախուրեան». «...Գեւղն որ կոչի Անգղն ընդ որ անցանէ գետն Արածանի». «դիպեցան միմեանց առ ափն ծովուն Բզնունեաց յԱռեստն աւանի»։

Որոշ դեպքերում ջրանունը (գետանունը) վկայված է անկախա-

բար, առանց տեսականիշ բառի, ինչպես՝ «անցուցին ընդ Արածանի և հանին ի Քարքէ». «ծնաւ ի ճանապարհին ... ուր խառնին Մուրց և Երասխ». «չուայ թողլ ... անցանել ընդ Եփրատ». «մինչև յեզր Եփրատայ, ուր Մանանաղի ի նմա խառնի»: Բայց, ինչպես կարելի է համոզվել, սրանք կամ հայտնի և մեծ գետերի անուններն են, և ջրանվան անկախ գործածությունը որևէ շփոթության տեղիք չի տալիս, և կամ համատեքստը աներկբայորեն ցույց է տալիս, որ գործ ունենք ջրանվան հետ: Որոշ դեպքերում (ծով/գետ) եզր, ակունք բառերի գործածությունը ջրանվան հետ կրկին ավելորդ է դարձնում տեսականիշ բառի կիրառությունը. օրինակ՝ «ըմբռնեալ զեզրայր մեծին Յովսեփայ յակունս Մեծամօրի». «գայր հասանէր ... ի գետեզերն Երասխայ»:

Ջրանունները երբեմն հանդես են գալիս տեսականիշ բառի լրացում (որոշիչ կամ բացահայտիչ) երկրորդական նախադասության կամ դերբայական դարձվածի կազմում. օրինակ՝ «ի վերայ գետոյն, որ անուանեալ կոչի Մամուշեղ». «անցին զգետովն, որ կոչի Ջերմայ». «առ եզերբ գետոյն, որ անուանեալ կոչի Հրազդան». «մերձ ի Ծովակն, որ կոչի Պաղակացիս»:

Սակայն ջրանունները ճնշող մեծամասնությամբ վկայված են բառակապակցություններով, որոնց եզրերից մեկը տեսականիշ բառն է՝ գետն Եփրատ, գետն Երասխ, Երասխ գետ, ծովակն Հիւսիսոյ, գետն Կորդուաց, գետն Մեղտեայ և այլն: Ինչպիսի՞ հարաբերության մեջ են գտնվում եզրերը այդ բառակապակցություններում: Նախ քննենք հետևյալ օրինակները՝ «դիպեցան միմեանց առ ափն ծովուն Բզնունեաց». «ի գիշերի մի անցանել ընդ գետն Մեղտեայ». «ի ծովեզերն Ռշտունեաց ծովուն». «անցանէր նա ընդ գետն Կորդուաց». «երթայր ընդ կողմն արևելից ծովուն Կարնոյ»: Բառակապակցություններում հանդես եկող տեղանունները կամ գավառանուններ են, կամ բնակավայրերի անուններ (Բզնունիք, Կորդուք, Ռշտունիք—գավառներ են, Մեղտի, Կարին — բնակավայրեր են, թեև Կարինը ևս գավառի անունն է): Այս տեղանունները սեռական հոլովով՝ տեսականիշ բառի հետ կազմում են հատկացուցիչ-հատկացյալ տիպի բառակապակցություններ: Այս կապակցությունները, կարծում ենք, պետք է դիտել որպես բաղադրյալ ջրանուններ. տեղանունը և տեսականիշ բառը միասին անվանում են ջրային օբյեկտը:

Հետևյալ օրինակներում առկա է որոշիչ — որոշյալ կապը՝ «զափամբ մօրին Մեծի բանակի ի տեղւոջ, ուր գետն Մեծ ի ծովակէն Հիւսիսոյ

սկիզբն առեալ իջանէ և խառնի ի մօրն Մեծ»։ Այստեղ եզրերից մեկը՝ լրացումը, որևէ ածական է կամ ածականացած բառ («ի ծովակէն Հիւսիսոյ»)։ Այս կապակցությունները ևս մենք համարում ենք բաղադրյալ ջրանուններ։ Նշենք, որ նման կապակցությունները կարող են վերածվել բարդ բառերի (Մեծամոր, Մեծագետ), կամ սեղմվելով (էլիպսիսի ենթարկվելով) դառնալ պարզ բառ (Տղմուտ գետ—Տղմուտ)։

Բառակապակցությունների այլ տեսակ են ներկայացնում հետևյալ օրինակները՝ «ի վերայ Ախուրեան գետոյ». «ի վերայ գետոյն Ախուրեան». «զայգին մեծ, յոր մտանէր Առուն գետ». «ընդ որ անցանէ գետն Արածանի». «յայնկոյս Կուրն գետոյն» և այլն։

Հայ լեզվաբանության մեջ տեղանուն-տեսականիշ բառ կապակցությունները ոմանք դիտում են որպես որոշչի և որոշյալի կապ, ուրիշներ՝ բացահայտչի և բացահայտյալի։ Հարցի պատմությունը քննության առարկա է դարձել Հ. Ավետիսյանի «Որոշիչ-որոշյալի կապակցությունը գրաբարում» աշխատանքում (Ավետիսյան, 1972, 91—96)։ Հեղինակը հարում է առաջին տեսակետի պաշտպանությանը (նույն տեղում, 100—101)։ Որոշ նկատառումներով հարկ ենք համարում կրկին անդրադառնալ այս հարցին։

Տեղանուն-աշխարհագրական տերմին (քաղաք, գյուղ, գետ, ծով, լեռ, բլուր, գավառ և այլն) կապակցությունները գոյականական են, որոնց երկու եզրերն էլ գոյականներ են։ Տեղանունը աշխարհագրական տերմինի որոշիչ (գոյական որոշիչ) համարող հեղինակները, մեր կարծիքով, անտեսում են կարևոր մի հանգամանք, այն, որ գոյականը որոշչի պաշտոնում դրսևորում է ածականի հատկանիշ. այն ոչ թե առարկան է նշում, այլ այդ առարկայի հատկանիշներից մեկը կամ մի քանիսը։ Գոյական անունն այս կապակցություններում ըստ էության փոխանուն է. հմմտ. քար սիրտ, քար լռություն, ոսկի ձեռքեր, ծով համբերություն։ Այս կապակցություններում քար, ոսկի, ծով գոյականները ոչ թե առարկա են նշում, այլ այդ առարկաներին բնորոշ այս կամ այն հատկանիշը, քարի կարծրությունը, սառնությունը, անդրդվելիությունը (քար սիրտ), ծանրությունը (քար լռություն), ոսկու թանկարժեքությունը, ամեն ինչ կարողանալու ընդունակությունը (ոսկի ձեռքեր), ծովի անվերջությունը, անհատակությունը, խորությունը, անսահմանությունը (ծով համբերություն)։ Սակայն դեռ շատ այլ հատկանիշներ, որ ունեն այս գոյականները, տվյալ կապակցություններում չեն արտահայտվում, ինչպես՝ քարի ծակոտկենությունը, կոտրվելու, փշրվելու ընդունակությունը, ոսկու

դեղնությունը, փայլը, ծովի կապտականաչավուն գույնը, ալեկոծումը և այլն։ Այս հատկանիշները կարող են ի հայտ գալ այլ կապակցություններում, ինչպես՝ ծով աչքեր, ուր ծովը կարող է նշանակել կապույտ, երկնագույն, նաև անհատակ և այլն[16]։

Իսկ ինչպիսի՞ն է Երասխ գետ և գետն Երասխ կապակցություններում եզրերի հարաբերությունը։ Դժվար չէ համոզվել, որ տեղանունը հանդես է գալիս ինքն իր դերում, այն փոխանուն չէ։ Բոլոր դիրքերում և բոլոր դեպքերում այն ոչ թե անվանվող առարկայի այս կամ այն հատկանիշն է նշում, այլ հենց ինքը՝ առարկան։ Փոխակերպենք այս կապակցությունները, կստանանք Երասխ, որ է գետ և գետն, որ է Երասխ նախադասությունները։ Առաջին դեպքում երկրորդական նախադասությունը բացահայտում է տեղանվան պատկանելությունը աշխարհագրական որոշակի տեսակի առարկային։ Երկրորդ դեպքում տվյալ աշխարհագրական առարկան նույն տեսակի այլ առարկաներից տարբերվում է. մասնավորապես նշվում է որ առարկան, որ գետը։ Թե կապակցություններում, թե նախադասություններում եզրերի հարաբերությունը բնորոշվում է հավասարությամբ (որ է), թեև այդ հավասարությունը նույնություն չէ, ինչպիսին է բացահայտչի և բացահայտյալի հարաբերությունը։

Իսկ գոյական որոշիչով բառակապակցությունների փոխակերպումից ստացվում են այլ բնույթի նախադասություններ. քար սիրտ—սիրտը, որ նման է քարի (որոշ հատկանիշներով), ծով համբերություն—համբերությունը, որ նման է ծովի (որոշ հատկանիշներով)։ Այստեղ առկա է եզրերի ոչ թե հավասարության հարաբերությունը (ինչպես տեղանունով բառակապակցություններում է), այլ՝ նմանության։

Քննարկվող տեղանվանական բառակապակցությունների եզրերի հարաբերությունը (հավասարություն) ավելի մոտ է բացահայտչի և բացահայտյալի հարաբերությանը (նույնություն), քան գոյական որոշչի և որոշյալի (նմանություն)։ Ուստի այս կապակցությունները ավելի ճիշտ

---

16 Գոյականի ածականական կիրառությունը նշել է դեռևս Մ. Ջամչյանը (1779, 343)։ Սակայն հատուկ անունները, համաձայնվում են նրանք գոյական անդամին, թե ոչ, նա համարում է բացահայտիչ (անդ, 285)։ Հատուկ անուններով գոյականական կապակցությունները բացահայտիչ-բացահայտյալ է դիտում նաև Ա. Բագրատունին (1852, 323—326)։ Հատուկ անվան և գոյականի անհամաձայնությունը նա համարում է բակառության դրսևորում։

է գնահատել որպես բացահայտիչ-բացահայտյալ, քան որոշիչ-որոշյալ[17]*։*

Տեղանուն-աշխարհագրական տերմին կապակցություններում եզրերի հարաբերության քննությամբ բացահայտվում է մեկ այլ կարևոր հանգամանք ևս։ Եզրերը հարաբերում են միմյանց ինչպես ընդհանուրը մասնավորին, սեռը՝ տեսակին։ Այս իմաստով նման կապակցությունները հիշեցնում են կենդանիների և բույսերի գիտական (լատինական) անվանումները, որտեղ առաջին եզրը սեռի ցուցիչն է, իսկ երկրորդը՝ տեսակի։ Տեղանվանական կապակցություններում աշխարհագրական տերմինը բոլոր դիրքերում սեռի ցուցիչն է, իսկ տեղանունը՝ կոնկրետ առարկայի անունը։ Այդ պատճառով մենք կարծում ենք, որ տեղանվանական կապակցություններում աշխարհագրական տերմինը, որպես ընդհանուրի, սեռի ցուցիչ էությամբ բացահայտիչ է, իսկ տեղանունը՝ բացահայտյալը։ Այս կարգի տեղանունները մենք համարում ենք ոչ բաղադրյալ, միանդամ տեղանուններ և քննարկում ենք առանց աշխարհագրական տերմինի զուգորդման։ Հայ միջնադարյան աղբյուրներում վկայված գետանունների զգալի մասը նման անվանումներ են։

Հայկական լեռնաշխարհի գետանունների մեծ մասը վկայված է «Աշխարհացույցում», սակայն այդ երկի մեզ հասած ընդարձակ խմբագրության մեջ նկատելի է, որ հեղինակը մանրամասնորեն նկարագրում է արևմտյան (բյուզանդական) Հայաստանի տարածքը (Բարձր Հայք, Ծոփք, Աղձնիք, Տուրուբերան, Տայք, Այրարատ), իսկ արևելյան (պարսկական) Հայաստանի տարածքի (Վասպուրական, Սյունիք, Արցախ, Ուտիք, Պարսկահայք, Փայտակարան, Գուգարք, Մոկս, Կորճայք) գավառների թվարկմամբ է բավարարվում։ Նման անհամամասնությունը ձեռագրի թերությամբ միայն բացատրելը այնքան էլ համոզիչ չէ։ Թերևս հեղինակն ինքը բյուզանդական Հայաստանից էր ու քաջատեղյակ Հայաստանի այդ մասի տեղագրությանը. թերևս նա անձամբ էր շրջել այդ վայրերում և հավաքել անհրաժեշտ նյութը։ Ինչևէ, Հայկական լեռնաշխարհի գետանունները, որ ավանդել է «Աշխարհացույցը», հիմնականում վերաբերում են Արևմտյան Հայաստանին։ Պատմական այլ աղբյուրները, թեև լրացնում են «Աշխարհացույցի» տվյալները, սակայն այդ հավելումները չնչին են և ընդհանուր պատկերը չեն փոխում։

---

17 *Հատկանվանական գոյականական բառակապակցությունները ժամանակակից հայերենում բացահայտիչ-բացահայտյալ հարաբերություն է դիտում նաև Գ. Ջահուկյանը* **(1974, 554—558)։**

Քանակական առումով սակավաթիվ են նաև հին (անտիկ) և հնագույն (սեպագիր) աղբյուրների ջրանվանական տվյալները: Սեպագիր աղբյուրների վկայությունները մեկ այլ թերություն ևս ունեն. գետանունների մեծ մասը կամ չի տեղորոշված (նույնացված), կամ տեղորոշումը (նույնացումը) վիճելի է: Թեև այս հանգամանքը իր բնույթով պատմա-աշխարհագրական է, այնուամենայնիվ որոշակի դժվարություններ է հարուցում նաև լեզվաբանական ուսումնասիրության համար:

Ամփոփելով Հայկական լեռնաշխարհի ջրագրությանը և պատմական աղբյուրներում նրա արտացոլմանը նվիրված այս համառոտ ակնարկը՝ կարելի է նշել. պատմական աղբյուրների ջրանվանական տվյալները թերի են՝

1) քանակական առումով,

2) տարածքների ընդգրկման անհամաչափությամբ,

3) տեղորոշման առումով:

Ձեռնարկելով Հայկական լեռնաշխարհի ջրանունների ծագումնաբանական քննությունը՝ մենք առայժմ սահմանափակվում ենք հայկական միջնադարյան աղբյուրների (մինչև XIV դարը) տվյալներով, որոնք նախ՝ բավարար տեղորոշում ունեն, ապա՝ հնչյունական ավելի նվազ աղավաղումներ:

Ներկա աշխատության գրության հանգամանքները: *Հայկական տեղանվանագիտական գրականության մեջ մեծ մասամբ քննության են ենթարկված նահանգների, գավառների, բնակավայրերի անունները, և գրեթե անուշադրության են մատնված լեռնանուններն ու ջրանունները (գետանունները): Ինչ խոսք, այս պարագան իր առարկայական բացատրությունն ունի. ա) պատմական աղբյուրներում վկայված գետանունները քանակապես զգալիորեն զիջում են գավառանուններին ու բնակավայրերի անուններին. բ) վերջինները ձևաբանական առումով որոշակի համակարգեր են կազմում, որը դրսևորվում է կաղապարային ընդհանրություններում: Մինչդեռ գետանունները հիմնականում առանձին, ձևաբանորեն ոչ մի ընդհանրություն չունեցող անուններ են: Բացի մի քանի պարզ ու հստակ ծագում ունեցող գետանուններից (Մեծագետ, Մեծամօր, Խոզմօր, Տղմուտ և այլն) մյուսներից յուրաքանչյուրը առանձին ստուգաբանական քննության է կարոտ:*

Սույն աշխատանքը հայ մատենագրության մեջ վկայված ջրանունների համակողմանի քննության առաջին փորձն է: Նման աշխատանքի կարևորությունը, կարծում ենք, բավարար չափով բացահայտված է

նախորդ շարադրանքում։ Այն ոչ միայն նպատակ ունի լրացնել հայկական տեղանվանագիտության մեջ բաց մնացած էական մի բաժին, այլև նպաստել հնագույն էթնոլեզվական գործընթացների լուսաբանմանը այս տարածքում։

Ուսումնասիրության ընթացքում մենք առաջնորդվել ենք ստուգաբանության հիմնական սկզբունքով, այն է՝ ստուգաբանվող բառի յուրաքանչյուր տարր (բաղադրիչ) պետք է բավարար բացատրություն ստանա. ցեղակից լեզուներում համանման կազմությունների առկայությունը, ինչպես նաև իմաստային համապատասխանությունները ա՛նհրաժեշտ պայման են ստուգաբանության հավաստիության համար։ Որպես լրացում այս սկզբունքի մենք հաճախ համեմատում կամ զուգադրում ենք ենթադրելի ցեղակից տեղանունները (հիմնականում գետանունները)։ Այս հանգամանքը, մեր կարծիքով, լրացուցիչ բավարար պայման է՝ հաստատելու, որ վերականգնված նախաձևը կարող էր տեղանվանանալ։ Ըստ այսմ էլ աշխատանքում քննության առարկա ջրանունների զուգադրվում են թե բառաձևեր, թե տեղանուններ (ջրանուններ)։

Աշխատանքում մենք առաջնորդվել ենք նաև արդի ջրանվանագիտության դրույթներով, որոնց մասին խոսվել է վերևում։ Տիպաբանական այդ դրույթները կարևոր սկզբունքային նշանակություն ունեն ամեն մի ջրանվանագիտական հետազոտության համար։

Աշխատանքի բնույթը (ստուգաբանական, ծագումնաբանական) թելադրում է նաև ուսումնասիրության մեթոդի ընտրությունը. բնականաբար այն պետք է համակցված մեթոդ լինի։ Առանձին դեպքերում կիրառել ենք համեմատական (-զուգադրական), ներքին և արտաքին վերականգնման, իմաստաբանական, կառուցվածքային մեթոդների տարբեր համակցումները, որոնցում ամենուր հիմնականը համեմատական մեթոդն է։

Հարկ ենք համարում նշել, որ ներկա աշխատանքը չի հավակնում լիակատարության և վերջնականության։ Այն սոսկ առաջին փորձն է հայկական լեռնաշխարհի հին ջրանունների ուսումնասիրության բնագավառում։

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՋՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԱԶԱՏ — Երասխի ձախակողմյան վտակ Այրարատի Մազազ գավառում։ Հայ մատենագրության մեջ վկայված է V դարից (Խոր., 265, **ՆՀԱ,** *111 և այլն)։*

Անվան ստուգաբանությունը տվել է դեռևս «Աշխարհացույցի» հեղինակը, համարելով հայ. ազատ (<իրան. āzāt) *բառի տեղանվանացում։ Ստուգաբանության հավանականության համար հմմտ.* Ἐλεύθερος *գետանունը Լիբանանում (այժմ Նահր էլ-Կասիմիա), որ հուն.* ἐλεύθερος *«ազատ» ածականի տեղանվանացումն է*[18]*։*

Ղ. Ալիշանը գետի նման անվանումը ենթադրում է «վասն արքունի ոստանի՞ն մատուցակութեանն» (Ալիշան, 1890, 331)։ Այս ենթադրությանը, թվում է, բավարար հիմնավորում է տալիս Մասիս (Մասիք) լեռան Ազատ անվանումը (Խոր., 192), որպես Մեծ Հայքի թագավորության ոստանում գտնվող լեռ։ Սակայն կարելի է ենթադրել նաև, որ գետն Ազատ է կոչվել, որովհետև ի տարբերություն Քասախ և Հրազդան գետերի, առանձին է խառնվել Երասխին (ՆՀԱ, *110)։* Ազատ *բառի նման՝ «զատ, մեկուսի, անմասն» իմաստ նշում է ՆՀԲ-ն (հ. Ա, 4)։*

**ԱԶՈՐԴԱՑ (ՓՈՐԻ) ԳԵՏ, *ԱԶՈՐԴԱԳԵՏ, *ԱԶՈՐԴ (ԳԵՏ) — Ճորոխի աջակողմյան վտակ Մեծ Հայքի Տայք աշխարհում. Ազորդաց փոր գավառի համանուն գետն է։ Վերականգնվում է ըստ «Աշխարհացույցի» հաղորդման*[19]*։ Այժմ՝ Թորթում (չայ), տեղորոշվում է գետաբերանի մոտ Թորթում լճի ափին գտնվող նույնանուն Ազորդ գյուղով։*

Ազորդաց փոր գավառանունը, ինչպես նույն փոր *բառով կազմված* Բերդաց փոր, Պարտիզաց փոր, Արսեաց փոր *(Տայքում),* Մանգ–

---

18 *Այս գետի անունը հայ մատենագրության մեջ ավանդված է թարգմանաբար՝* Ազատ. *տե՛ս Ա. Մակ. ԺԱ. 7, ԺԲ. 30, Խոր., 138։ «Աշխարհացույցը» վկայում է երկու ձևերը. «Ելեւթերոս, որ ասի Ազատ գետ»* (ՆՀԱ, *113)։ Բացառված չէ, որ հուն. գետանունը իր հերթին թարգմանություն կամ աղավաղում լինի գետի բնիկ հին անվան։*

19 *«Իսկ ի մտից Կողայ՝ Բերդաց փոր, Պարտիզաց փոր, զՃակս, յելս և ըստ հարաւոյ՝ զԲողխա, զՈքաղէ, զԱզորդաց փոր իւրեանց (համանուն) գետակօք, որք յիրար անկեալ իջանեն ի Ցոհ»* (ՆՀԱ, *109)։*

լեաց փոր (Գուգարքում) գավառանունները, բաղադրյալ է՝ հատկացուցիչ-հատկացյալ կամ թերևս սեռական հոլովով որոշիչ-որոշյալ տիպի բառակապակցություն։ Առաջին դեպքում գավառանունը երկրորդային կազմություն է, առաջացած մեկ այլ տեղանունից կամ ցեղանունից։ Երկրորդ դեպքում գավառանունը առաջնային է, որից կազմվել են (փոխանցմամբ) բնակավայրի և գետի անունները։ Գավառանվան առաջին եզրի հոգնակի ցուցիչը (եթե, իհարկե, Ց-ն սխալագրության հետևանք չէ՝ Յ-ի փոխարեն) ենթադրել է տալիս երկրորդային կազմության գետանուն (բնակավայրի կամ գավառի անունից կազմված, ցեղանունից գետանվան կազմությունը առանց միջանկյալ օղակի բացառվում է)։ Այդ դեպքում գետանունը ևս պետք է բաղադրյալ կազմություն ունենա՝ *Ազորդաց գետ (կամ *Ազորդաց փորի գետ)։ Եթե Ց-ն սխալագրություն է (Յ-ի փոխարեն), հնարավոր է ենթադրել նաև առաջնային գետանուն՝ *Ազորդ (գետ), որից կազմվել են գավառանունը (*Ազորդայ փոր) և բնակավայրի անունը (Ազորդ)[20]։

ԱԼԻՍ, ԱԼԻՍ — Փոքր Ասիայի խոշորագույն գետն է։ Հայ մատենագրության մեջ վկայել են Մ. Խորենացին (124, 125), «Աշխարհացույցը» (Խոր., 603)։ Անտիկ աղբյուրներում վկայված է Ἅλυς, Halys ձևերով (Հերոդոտոս, Քսենոփոն)։ Գետի հնագույն անունը Maraššanta = Maraššantija (գաղափարագիր՝ ÍD.SA_5 «կարմիր գետ») վկայված է խեթական արձանագրություններում (OGHT, 539)։ Այժմ պաշտոնապես Kızıl Irmak (թուրք. «կարմիր գետ»)։

Գետանվան ստուգաբանության երկու տարբեր փորձեր գտնում ենք հունական և բյուզանդական աղբյուրներում։ Ըստ Ստրաբոնի գետը Ἅλυς է կոչվել իր ափերին գտնվող աղահանքերի պատճառով։ Եվստաթեոսը առարկում է այս բացատրության դեմ, նշելով, որ եթե ճիշտ

20 Վ. Խաչատրյանը Ազորդ անունը համեմատում է խեթական արձանագրությունների հայասական Azzi երկրանվան հետ՝ համարելով հայ. -որդ ածանցով կազմություն (Хачатрян, 1971, 138)։ Գ. Ջահուկյանը Azzi երկրանունը համեմատում է հայ. ազն (հոգն. ազինք), ազգ բառերի հետ, հավանական համարելով նրանց ծագումը հ.-ե. *ozgho-ից։ Azzi-ի -i բաղադրիչը թերևս ծագում է հ.-ե. *-iio-ից, իսկ *gh>հայաս. z անցումը կամ նախորդ z-ի ազդեցությամբ է իրականացել, և կամ *gh-ի քմայնացմամբ -i-ից առաջ (Джаукян, 1964, 78—79)։ Ավելի ուշ Գ. Ջահուկյանը Azzi երկրանունը համեմատում է թրակյան անձնանուններում հանդիպող Αζ-, Ασ-, Αζα-, αζις, -αζος,-ασος բաղադրիչների, Ἄζωρος քաղաքանվան, ἄζον «մեծ, բարձր» գլոսայի (Հեսիքիոս) հետ (Ջահուկյան, 1970, 79)։

յիներ աշխարհագրագետի ստուգաբանությունը, ապա Ἅλυς-ը պետք է միշտ գրվեր թավ շնչի նշանով, բայց առանց այդ շնչի արտասանողները անունը բխեցնում են ἄλη «թափառում» բառից, որովհետև գետը հոսում է բազմաթիվ երկրներով[21]։

Յու. Պոկոռնին գետանունը համարում է հայ. աղի «աղի» (<հ. ե. *sal — «աղ» արմատից) բառի հունականացած ձևը (Pok. 878)[22]։

Ուշագրավ է Վ. Այլերսի ենթադրությունը. Hattušaš երկրի և խեթերի անունը թերևս ծագում է Halys գետի հին անունից (*Haδuš), (Eilers, 1982, 34, ծան. 113)։

Կարծում ենք, ուշադրության է արժանի խեթ. ÍD.SA$_5$ «կարմիր գետ» և թուրք. Kızılırmak «կարմիր գետ» համապատասխանությունը։ Եթե մի պահ անտեսենք ÍD. SA$_5$ (Maraššanta, Maraššantija)[23] Ἅλυς-Kızıl Irmak շարքի միջին օղակը (Ἅλυς գետանունը), ապա ավելի քան երկու և կես հազար տարվա ընդմիջումից հետո գետը կրկին «կարմիր» անվանելը միայն մեկ տրամաբանական բացատրություն կարող է ունենալ՝ գետի հոսանքում որևէ մի առարկա (և կարևոր, ակնառու առարկա՝ ջուրը, գետափի քարերը, ավազը և այլն) կարմիր գույն է ունեցել և ունի։ Իրոք, «գետը՝ երկաթահանքով և կարմիր հողով հարուստ լեռներից բխելու պատճառով ունի կարմիր, պղտոր ջուր» (ՀՀՇՏԲ, հ. 1, 90)։

Գետի ջրի կարմիր գույն ունենալու հանգամանքը ենթադրել է տալիս, որ Ἅλυς անունը նույնպես «կարմիր» իմաստն է ունեցել։ Այդ դեպքում գետանունը, ավելի ճիշտ, գետանվան հիմք հանդիսացած բա-

---

21 Այս տեղեկությունը քաղել ենք՝ Адонц, 1908, 58, ծան. 1։

22 Գետանվան նման ստուգաբանությունը հավանական են համարում նաև Թ. Գամկրելիձեն և Վ. Իվանովը (Гамкрелидзе, Иванов, 1984, 674, ծան. 2), ինչպես նաև ՀՀՇՏԲ-ն (հ. 1, 90)։

23 Խեթ. Marəššanta կամ Maraššantija անունը թե քաղաքի, թե գետի անուն է։ Է. Լարոշը գրում է. «Խնդիրը որոշելն է, թե՝ գե՞տն է անունը տվել քաղաքին, թե՞ հակառակը։ Marassanta-ն իր հերթին ածանցված է Marasa-ից..., որն ըստ երևույթին պարունակում է «կարմիր» նշանակող մի ածական հիմք (Laroche, 1961, 67)։ Ըստ Թ. Գամկրելիձեի և Վ. Իվանովի Maraššanta-ն հ.-ե. *mar- «ծով» ճահիճ» արմատի ածանցյալն է՝ -ašša-և-*anta վերջածանցներով (Гамкрелидзе, Иванов, 862)։

որ կարող է հ.-ե. *el-/*ol/*əl-(*al ?) «կարմիր, սրճագույն» արմատի որևէ ածանցյալ լինել։ Հ.-ե. այս արմատի -u-հիմքից ածանցված են գույն նշանակող որոշ ածականներ հ.-ե. պատմական լեզուներում. ինչպես՝ հնդ. aruṇá-ḥ «կարմրավուն, ոսկեգեղին», aruṣá-ḥ «հրագույն, հրակարմիր», ավ. auruša «սպիտակ», գերմ. *elwa «սրճագույն, դեղին», որից հբգ. elo (elawer), մբգ. el (elwer) (Pok., 302)։ Արմատի -i-, -n-, -m- հիմքերով ածանցյալները ավելի հաճախ հանդես են գալիս ծառերի ու կենդանիների անվանումներում։ Ուշադրության են արժանի «լաստենի» նշանակությամբ բառերը, որոնք լայնորեն ներկայացված են եվրոպական լեզուներում[24], ինչպես՝ լատ. alnus (*alsnos կամ *alenos նախաձևից), սլավ. *jelьcha (*elisa), որից հրուսլ. jelьcha. բուլղ. (j)elchá, o- ձայնդարձով *olьcha (olisa), որից լեհ. olcha, ռուս. ольха, գերմ. *alisa, որից հբգ. elira, դրափոխությամբ erila, նբգ. Eller, Erle (Pok. 302—303)։ Գերմանական նախաձևը փոխառվել է ֆրանսերենում alise «ալոճ» նշանակությամբ (Dauzat, Dubois, Mitterand, 1971, 22)։

Ինչպես կարելի է նկատել, հ.-ե. արմատը -u- հիմքով հանդես է գալիս ածականների կազմության մեջ, իսկ -i- հիմքով՝ «լաստենի» «արոսենի» անվանումներում (որպես «կարմիր ծառ»)։ Քննության առարկա գետանունն իր -u- հիմքով (Ἀλυ-ς<հ.-ե. *alu-) հարում է ածականներին, այսինքն պետք է ունենար գույնի նշանակություն։ Կարծում ենք, այն ունեցել է «կարմիր» իմաստը, ինչպես խեթական (գաղափարագիր) և ժամանակակից թուրքական անվանումներն են։

Նախահավելված H (հուն. թավ շունչը) հնչյունը, կարելի է ենթադրել, ուշ շրջանում գետանվան ժողովրդական ստուգաբանության հետևանք է՝ հունական միջավայրում։ Հարկ է նշել, որ հունարենում թավ և նուրբ շունչերի արտացոլումը գրության մեջ ուշ շրջանի երևույթ է։ Հերոդոտի և Քսենոփոնի ժամանակ դրանք գրության մեջ չէին արտացոլվում։ Գետանունը ստուգաբանելով որպես «աղի»՝ հույն հեղինակները բնա-

---

24 Լաստենու բնափայտը բաց գույնի է, սակայն օդում կարմրում է, այնպես որ լաստենու անվա-նումը հ.-ե. «կարմիր» արմատի հետ ակնհայտ է։ Ի դեպ, այս ծառը թուրքերենում ևս կոչվում է կարմիր ծառ kızılağaç. Հավանաբար այս արմատին է հարում նաև հայ. ալոճ բառը, որը Հր. Աճառյանը համարում է փոխառություն արևելյան թուրքերենից (ՀԱԲ, հ. 1, 95)։ Համո. ֆր. alise «ալոճ», նբգ. Elsbeere «արոսենի»։

կանաբար գործածել են թավ շունչը։ Իսկ Փոքր Ասիայում գետը շարունակել է անվանվել 'Ἅλυς (առանց թավ շնչի), բայց մեկնաբանվել է որպես «թափառող»։

ԱԽՈՒՐՅԱՆ—Երասխի ձախակողմյան խոշորագույն վտակը[25]։ Հայ մատենագրության մեջ վկայված է V դարից սկսած[26]։ Անտիկ աղբյուրներին այս անունն անծանոթ է։

Հայագիտական և ուրարտագիտական գրականության մեջ նշվել է գետանվան և ուրարտական արձանագրությունների Aḫurlani քաղաքի անվան կապը (Никольский, 1893, 92), սակայն տեղանվան ստուգաբանության փորձ չի կատարվել։ Որքան մեզ հայտնի է, առաջինը Գ. Ջահուկյանն է մատնանշել մեր գետանվան հավանական ծագումը հ.-ե. *ak^{u}- «ջուր» արմատից ծագող աղբյուրից (Джаукян, 1964, 70, ծան. 130) և համեմատել է պելասգ. (կամ թրա՞կ.) 'Αχέρον, 'Αχέλης, 'Αχελῷος գետանունների հետ (Ջահուկյան, 1970, 97)[27]։

---

25 Հնում Ախուրեան էր կոչվում այժմյան Կարսագետը մինչև Արփի լճից եկող գետի խառնվելը և այնուհետև այժմյան Ախուրեանի ստորին հոսանքը մինչև Երասխ (ԱՍ. 4)։ Ալիշանի այս տեղորոշումը հետագայում հաստատվեց Արգիշտի 1-ինի Սարիղամիշի արձանագրությամբ (Меликишвили, 1960, 257—258)։

26 Գետանվան առաջին հիշատակություններին հանդիպում ենք Խորենացու պատմության մեջ, այնուհետև՝ «Աշխարհացույցում», Դրասխանակերտցու, Ասողիկի, Ուռհայեցու, Գանձակեցու և այլոց պատմական երկերում։ Ուռհայեցին մեկ անգամ գետանունը վկայում է Ահուր ձևով (Ուռհայեցի, 104)։ Հայ մատենագրության մեջ գետանվան հիշատակությունները վերաբերում են գետի ստորին հոսանքին (Կարսագետի խառնուրդից մինչև Երասխ)։ Սակայն Ասողիկի մի վկայությունը («Ի Շիրակ գաւառի ի գիւղաքաղաքին Արգինայ, յեզերս Ախուրեան գետոյ». Ասողիկ, 185) հաստատում է, որ X դարում Ախուրեան էր կոչվում նաև Կարսագետը, որի ափին էր գտնվում Արգինա գյուղաքաղաքը։

27 'Αχέρον գետանունը բխեցնում են հ.-ե. *eg´hero- «լիճ» բառից (>հայ. եզր, Georgiev, 1981, 157)։ Սակայն մենք հավանական ենք համարում նրա թրակապելասգյան (այն է՝ նախահունական կամ ոչ հունական) ծագումը, հետևյալ նկատառումներով։ Բալկանների հատկանուններում (տեղանուններում, հատկապես ջրանուններում և դիցաբանական անուններում) հաճախ է հանդիպում ax- բաղադրիչը։ 'Αχέλης, 'Αχελῷος գետանուններում այն համարվում է հ.-ե. *ak^{u}- «ջուր, խմել» արմատի արտացոլումը (Georgiev, 341, 154)։ Դիցանուններում նույնպես, մեր կարծիքով, նույն արմատն է արտացոլված, որովհետև դիցաբանական այդ հերոսները այս կամ այն կերպ առնչվում են ջրի հին պաշտամունքին։ Այսպես, հույների 'Αχαίοι ինքնանվանման էպոնիմը

Հ.-ե. *ak^{u}-*անատոլիական (խեթա-լուվական) և թոխարական լեզուներում պահել է բայական (նախնակա՞ն) իմաստը՝ խեթ.* eku-, *պալ.* aku-, *լուվ.* aḫu-, *թոխ.* AB yok- *«խմել», իսկ* -ā *հիմքով* (*ak^{u}ā) *«ջուր» իմաստով պահպանվել է եվրոպական լեզուներում՝ լատ.* aquā, *գոթ.* ava, *հրգ.* aha, *նրգ.* Ach[28]*։*

Մեր գետանվան ախու- (aḫu-) *հիմքը, կարելի է ենթադրել, ներկայացնում է հ.-ե. արմատի՝ շրթնայնությունը պահպանած և բաղաձայնական տեղաշարժ կրած ձևը։ Նման արտացոլում այն կարող էր ունենալ անատոլիական կամ մերձավոր լեզվոլորտում։*

Եթե ախու- *հիմքը իրոք հ.-ե. ծագում ունի, ապա գետանվան* -րեան *հատվածը կարելի է դիտել որպես հ.-ե.* *-ro-, *-i̯o/a *և* *-no- *ածանցների միացում։ Հ.-ե.* *-ro- *ածանցը բայարմատներից բայանուններ է կազմում, ինչպես՝ հ.-ե.* *ed- *«ուտել»*>*խեթ.* et- *«ուտել», բայց* etri *«ուտելիք»* (Бенвенист, 1955, 65; Гамкрелидзе, Иванов, 302)*։ Թերևս համաբանությամբ անատոլիական (կամ մոտ) մի լեզվում* *aḫu- *«խըմել»* →*aḫur (o)- *«*խմելիք», ապա՝ «*ջուր» կամ «*աղբյուր»։ Կազմու-*

(անվանատուն)՝ Ἀχαιος-*ը, մի ավանդության համաձայն Պոսեյդոնի որդին է* (RE, *1, 205)։ Ի դեպ այս անունը հունարենով համոզիչ մեկնաբանություն չունի* (Georgiev, *105, 163)։ Տրոյական պատերազմի հերոս* Ἀχιλλεύς-*ը ևս առնչվում է ջրի պաշտամունքին. նա հին ծովային աստվածության՝ Ներևսի դստեր՝ ջրահարս Թետիսի որդին էր։ Հիշենք նաև, որ մի ավանդության համաձայն Աքիլլեսի մայրը, որդուն անխոցելի դարձնելու համար, նրան ընկղմել էր ստորերկրյա սրբազան Ստիքս գետի ջրերի մեջ։ Այս պարագայի վրա ուշադրություն են դարձրել դեռևս անցյալ դարում և դիցանունը կապել են* aqua *«ջուր» բառին* (RE, *11, 221—222)։ Այս մեկնաբանությամբ Աքիլլեսը համարվում է ջրային հին աստվածություն։ Գետային հին աստվածություն է՝* Ἀχελῷος-*ը՝ Օվկիանոսի և Թետիսի որդին։ Այս անունով հայտնի են հին Հունաստանում հինգ տարբեր գետեր։ Հ.-ե.* *ak^{u}-*արմատի* αχ- *արտացոլումը հունական չէ։ Բալկաններում այն համարվում է թրակա-պելասգյան լեզվական երևույթ* (Georgiev, *103, 114)։* Ἀχέρον *գետանվան ստուգաբանումը հ.-ե.* *eǵhero-*ից փաստորեն մեկուսացնում է այն նույն տարածքի նույնահիմք մյուս անուններից։*

28 *Գերմանալեզու ոլորտում մեծ տարածում ունեն հ.-ե.* *ak^{u}ā-*ի գերմանական զարգացման* Aha, Ach *ձևերից (հաճախ որպես երկրորդ բաղադրիչ) կազմված գետանունները՝ Գերմանիայում, Շվեյցարիայում, Նիդեռլանդներում, Բելգիայում և այլուր։*

թյան համար հմմտ. փռյուգ. αχαλα «ջուր»: Նկատված է, որ հ.-ե. *-lo- և *-ro- ածանցները համազոր են և հաճախ հանդիպում են միևնույն կազմություններում (Туманян, 1978, 64, 66): Ըստ այսմ, Ախուրեանի գետանվան ծագումը հ.-ե. *ak^{u}- «խմել» արմատից *-ro- ածանցով թըվում է հավանական: –եան բաղադրիչը մենք հակված ենք դիտել որպես հ.-ե. *-i̯a-no- ածանցների միացում, թեև բացառված չէ նաև կապը ուր. -iani ածանցի հետ: Գետանվան համար առաջարկվում է *ak^{u}-r (o)-i̯an (a/o) նախաձևը՝ հավանական «ջրավետ, ջրային» իմաստով: Այդ դեպքում գետանունը պետք է փոխանցված լինի մեկ այլ տեղանունից (երկրանունից կամ շենանունից):

*ԱՂԱՀԷՃ, *ԱՂԱՀԻՃՈՅ ԳԵՏ — Այս անունով գետ աղբյուրներում չի վկայված: Վերականգնվում է ըստ «Աշխարհացույցի» հաղորդման[29]: Սյունիքի Աղահէճ (որոշ ձեռագրերում ու աղբյուրներում նաև Աղահէճք, Աղահէջ, Աղահէջք) գավառը տեղորոշվում է Ադր. ԽՍՀ Լաչինի շրջանում: Այստեղ են գտնվում Աղաւնոյ գետի (Հագարու—Աքերաչայ) երեք ակունքները՝ Ակօղլան, Հոչասսու, Աքերաչայ վտակները, որոնցից մեկը, թերևս կենտրոնականը՝ Հոչասսուն, «Աշխարհացույցը» համարում է Աղահէճ գավառի համանուն գետը:

Ն. Ադոնցը գավառական Աղահէճք (–ք հոգնակերտ ածանցով) ձևում փորձում է տեսնել Դաղստանի հարավային շրջաններում բնակվող լահիճ ժողովրդի (ցեղի) անունը (Адонц, 1908, 424, ծան. 1):

Տեղանվան -էճ հանգը ենթադրել է տալիս իրանական աղբյուր: Եթե այն իրանական -էճ (-ēč) նվազական ածանցն է, ապա, թերևս, տեղանունը առնչվում է Աղաւնոյ գետի անվանը (Աղահէճ=Փոքր Աղաւնոյ գետ): Արդյո՞ք Աղահէճը նախկին գետանուն չէ, որ փոխանցվել է գավառին: Աղահէճ—Աղաւնոյ գետ հարաբերության համար հմմտ. Դոնեց—Դոն, Ռոսկա—Ռոս գետանունների զույգերը, որտեղ առաջինները երկրորդների վտակներն են և նշանակում են փոքր Դոն, Ռոս:

*ԱՂԱՆԴՌՈՍ — Երասխի աջակողմյան վտակներից մեկը (այժմ՝ Կոտուրչայ) կամ նրա վերին հոսանքը (այժմ՝ Էլենդ ռուդ/չայ): Հայ մա-

---

29 «...Սիւնիք. ... ունի գաւառս երկոտասան. զԵրնջակ, զՃահուկ, զՎայոց ձոր, զԳեղաքունի՝ հոմանուն ծովովն, զՍոթս, զԱղահէճ, զԾղուկն, զՀաբանդ, զԲաղս, զՁորս, զԱրեւիս, զԿովսական, հոմանուն գետովք» (ՆՀԱ., 109):

տենագրության մեջ վկայված է որպես Վասպուրական աշխարհի գավառի անուն։ Իբրև գետանուն վերականգնվում է նախ՝ ըստ երկրորդ բաղադրիչի իմաստի՝ ռոտ (<իր. *rauta-) «գետ», ապա՝ ըստ ժամանակակից Էլենգ (ռուդ/չայ) գետի անվան, որի հովիտն էր զբաղեցնում հին Աղանդռոտ գավառը (ՆՀԱ, 32)։

Տեղանվան առաջին՝ Աղանդ բաղադրիչն իր -անդ հանգով հարում է պատմական Հայաստանի և հարակից վայրերի նույնահանգ տեղանուններին, ինչպես՝ Վանանդ- 1) գավառ Այրարատում, այժմյան Կարսի շրջանը, ուր. Biana- (Меликишвили, 210), 2) գյուղ Սյունիքի Գողթն գավառում (Օրբել., 22), 3) գյուղ Սյունիքի Բաղք գավառում (Օրբել., 519). Հաբանդ — գավառ Սյունիքում, այժմյան Գորիսի շրջանի տարածքը, Մեւս Հաբանդ — գավառ Արցախում, Մարանդ- 1) վայր Սյունիքի Վայոց ձոր գավառում (ԱՍ, 158), 2) քաղաք և նրա շրջանի տարածքը Ատրպատականում, այժմ՝ Մերենդ։ Այս -անդ հանգը ամենայն հավանականությամբ առնչվում է հին Փոքր Ասիայի և Բալկանների բազմաթիվ տեղանուններում հանդիպող -anda-, -ντ-, νθ-/<*-ont-<*-n̥t-ածանցներին[30], այսինքն ծագում է հ.-ե. նշված ածանցից։ Այդ դեպքում Աղանդ հիմքի աղ- բաղադրիչը կարող է հ.-ե. *el- «կարմիր, սըրճագույն» արմատի դրսևորումը լինել։ Ստուգաբանության համար հմմտ. Թ. Արծրունու հետևյալ հաղորդումը. «...վայր խաղացեալ ի Մառականն աւան, առ Կարմիրն կոչեցեալ գետով, որ իջանէ ի գետն Երասխ» (Արծր., 285)։ Մառական ավանը (այժմ՝ Մարաքենդ), որ Արծրունիների ձմեռանոցն էր, գտնվում էր Ճուաշռոտ գավառում, այժմյան Ակռու (Ճուաշռոտ) և Էլենգ (Աղանդռոտ) գետերի գետախառնուրդում։ Կարմիր գետը պետք է Կոտուր չայը լինի։

Աղանդ տեղանվան կազմության համար հմմտ. Alantà/Aluonta-Նևեժիսի վտակ (Նեմանի ավազան), Alantà/Aluntà/Aluntĕle-Վիլինտայի վտակ (Ներիսի ավազան). Ãlantas/Alonts-Մինայի վտակ (Լիտվայում), Aluota (<*Alantà)-Երայի վտակ (Ներիսի ավազան), Elz (<*Alantià)-Մոզելի վտակ (ԳՖՀ). Alantia>Elz-Նեկկարի վտակ (ԳՖՀ)։

Թեև հ.-ե. *-n̥t- ածանցի արտացոլումը հայերենում կունենար -անդ ձևը, սակայն հայերենի բառապաշարի հ.-ե. շերտում այս ածանցը

---

30 Հ.-ե.-*ont-<-*n̥t-ածանցի մասին տե՛ս Laroche, 1961, 74—75, Georgiev, 179—180:

չի հաստատված։ Հ.-ե. այս ածանցը բավական արդյունավետ է, ինչպես նշեցինք, Փոքր Ասիայի և Բալկանների հին լեզուներում, նաև իրանական լեզուներում, հաճախ է հանդիպում տեղանուններում։ Թերևս քննարկվող տեղանունը նույնպես իրանական է։

ԱՂԱՒՆՈՅ ԳԵՏ — Երասխի ձախակողմյան խոշոր վտակներից մեկը։ Այժմ՝ Հագարու գետ (Աքերաչայ)։ Վկայում է Ստ. Օրբելյանը (80, 86), «Աշխարհացույցում» Աղուան գետ (ԵՀԱ., 109)։

Գետանունը բաղադրյալ է, թվում է, սեռական հոլովով գոյական որոշիչ-որոշյալ կառուցվածքով, որտեղ առաջին բաղադրիչը հայ. աղաւնի թռչնանունն է։ Կարծում ենք, գետանվան առաջին եզրը և հայ. թռչնանունը ծագումնաբանորեն կապվում են միմյանց, սակայն գետանվան վկայված ձևը ուշ շրջանում բուն գետանվան վերաիմաստավորման (կոնտամինացիայի) արդյունք է։ Հայ. աղաւնի թռչնանունը բխեցվում է հ.-ե. *aləbhni- կամ *aləuni- (<հ.-ե. *albho- «սպիտակ») նախաձևից (Джаукян, 1982, 74)։ Հ.-ե. *albho- «սպիտակ» արմատը, որպես գույնի անուն, պահպանվել է մի շարք հ.-ե. պատմական լեզուներում, սակայն որոշ դեպքերում հանդես է գալիս նաև սպիտակ, փայլուն առարկաների անուններում, ինչպես՝ հսլ. lebedĭ, ռուս. лебедь «կարապ», ռուս. олово «անագ», լիտ. álvas «անագ» և այլն։ Հ.-ե. այս արմատի ածանցյալները հաճախ են հանդիպում Եվրոպայի տարածքի գետանուններում, ինչպես՝ Alba- մի շարք գետերի անունը կենտրոնական և արևմտյան Եվրոպայում, այդ թվում նաև Elbe (տարբերակ՝ Laba), Albina/Albana- 1) գետ Ավստրիայում, այժմ՝ Alm, 2) գետ Բելգիայում, այժմ՝ Alfene (Krahe, 1962, 292), հուն. Ἀλφειός- գետ Պելոպոնեսում (Արկադիայում) և այլն։ Հ. Կրահեն նշում է, որ «սպիտակ», «փայլուն» իմաստ ունեցող բառերը հաճախ են գործածվում «գետ» իմաստով, տեղի է ունենում բառիմաստի ընդլայնում։

Կարելի է ենթադրել, որ մեր գետանվան մեջ ևս աղաւնի բառը նախ ունեցել է գույնի (սպիտակ) կամ «գետ» իմաստը, հետագայում բառիմաստի կորստի հետևանքով այն առնչվել է աղաւնի թռչնանվանը և առաջացել է Աղաւնոյ գետ բաղադրյալ անունը։ Գետանվան համար կարելի է առաջարկել *aləbh/u-n(o)-iio- նախաձևը, որը հայերենի հնչյունական օրենքներով կհանգեր Աղաւնի (սեռ. Աղաւնոյ) ձևին (Джаукян, 1982, 74)։

*ԱՂԻ ԾՈՎ, *ԱՂԻՈՅ ԾՈՎԱԿ— Վանա լճի բազմաթիվ անուններից մեկն է, որ վկայել են Մովսես Խորենացին և Հ. Մամիկոնյանը։ Մ. Խորենացու «որդի նորա (Մանաւազայ—Վ. Ջ.) Բազ (ժառանգէ) յարևմտից հիւսիսոյ զեզր ծովուն Աղւոյ և զգաւառն և զծովն անուանէ իւրով անուամբն» (38) և «(Շամիրամ) գայ հասանէ յարևելից կողմանէ յեզր ծովակին Աղւոյ» (51) հատվածներում ընդգծված բառակապակցությունները հակված ենք դիտել որպես հատուկ անուն հետևյալ նկատառումներով։

1. Վանա լիճը Խորենացու պատմության մեջ հանդիպում է երեք անգամ։ Առաջին անգամ լիճը դեռևս «անանուն» է. «հասանէ (Հայկ) յեզր ծովակի միոյ, որոյ աղի են ջուրքն, մանունս ունելով յինքեան ձկունս» (35)։ Երկրորդ անգամ լիճը ստանում է՝ միջնադարում հայտնի իր անունը՝ Բզնունեաց ծով (վերոբերյալ առաջին քաղվածքը)։ Երրորդ անգամ, արդեն անուն ունեցող լիճը կրկին ներկայանում է աղի ծովակ բնորոշմամբ (երկրորդ քաղվածք), մի հանգամանք, որ բնորոշ չէ Խորենացու նման ճշգրտասեր պատմաբանին։ Գոնե վերջին դեպքում Խորենացին պետք է լիճը կոչեր իրեն հայտնի և իր կողմից բացատրված Բզնունեաց ծով անունով։ Սակայն նա շարունակում է լիճը կոչել Աղի ծովակ (կամ թերևս Աղւոյ ծովակ)։

2. Հ. Մամիկոնյանը ևս Վանա լիճը անվանում է Աղի ծով։ Նրա պատմության առաջին հրատարակիչները (Վենետիկ, 1832) այս բառակապակցությունը դիտել են որպես հատուկ անուն (56)։

3. Վանա լճի մեզ հայտնի բոլոր անունները հատկացուցիչ-հատկացյալ տիպի բաղադրյալ անուններ են, որտեղ հատկացուցիչը՝ լճի շրջակայքում գտնվող որևէ աշխարհագրական օբյեկտի (գավառի, բնակավայրի) անուն է. հմմտ. Ուշտունեաց ծով (Բույ., 1832, 22), 'Αρση [σή] νη λίμνη (Արճեշի լիճ), (Ստրաբոն), Θω [=] λίμνη (Տոսպա լիճ), (Ստրաբոն), ինչպես նաև այժմյան անունը՝ Վանա լիճ (ծով)։

Կարծում ենք, որ Աղի (Աղւոյ) ծով կապակցության առաջին եզրը նույնպես որևէ տեղանուն է։ Այս առումով ուշադրության է արժանի լճի հս.-աև. ափին գտնվող Աղիովիտ գավառի անունը (Փավստոսը վկայում է Աղւոյ հովիտ ձևով), (146)։ Այս տարածքում, Արճեշ քաղաքի շրջակայքում Սեբեոսը (94) հիշում է Աղի անունով մի վայր։ Այս Աղին հավանաբար ուրարտական արձանագրությունների Alia (ասուր. Allî) քաղաքն է, որի անունով կոչվել է թե գավառը, թե լիճը (Ադոնց, 1972, 159, ծան. 1)։

ԱՂՈՒԱՆ ԳԵՏ — Երասխի ձախակողմյան խոշոր վտակներից մեկը Սյունիքի և Արցախի սահմանում։ Այժմ՝ Հագարու գետ (Աքերչայ)։ Ստ. Օրբելյանի Աղվանոյ գետն է։ Գետանվան և Աղուանք երկրանվան (←ցեղանունի՞ց) հնչյունական նմանությունը պատճառ է դարձել գետն անվանելու Աղուանից (ԱՍ, 265)։

Աղուան անունը, ըստ երևույթին, Աղվանոյ գետանվան հնչյունական տարբերակն է, որտեղ լիահունչ է դարձել -ւ- շրթնայինին հաջորդող -ը- գաղտնավանկ ձայնավորը (հմմտ. աղաւնի բառի բարբառային տարբերակները, ՀԱԲ, հ. 1, 123)։ Ըստ այսմ, գետանվան նախաձևը կարող է լինել *al-bhə-niio-.

ԱՂՍՏԵՒՈՅ ԳԵՏ — Կուրի աջակողմյան վտակ։ Այսպես է կոչում գետը Կ. Գանձակեցին (209)։ Այժմ՝ Աղստև, Ադր. ԽՍՀ տարածքում՝ Աղըստաֆա (չայ)։

Աղստև տեղանունը հայ մատենագրության մեջ վկայված է X դարից սկսած, որպես շենանուն կամ գավառանուն (Դրասխ., 144, Ասողիկ, 280, Օրբել., 397, Գանձ., 233)։ Մ. Իսրայելյանը և Հ. Կարագյոզյանը այս տեղանունը նույնացնում են ուրարտական աղբյուրների Alištu քաղաքի անվան հետ։ Հ. Կարագյոզյանը ենթադրում է, որ քաղաքի անունը հետագայում փոխանցվել է գավառին և գետին (1976, 80)։ Գետանունը (Աղստևոյ գետ) իր հատկացուցիչ-հատկացյալ կազմությամբ վկայում է երկրորդային ծագում. առաջնայինը կամ գավառանունն է, կամ շենանունը։

Տեղանվան ստուգաբանության փորձ չի կատարվել։ Այս առումով ուշադրության են արժանի Եվրոպայի տարածքի մի շարք նմանահնչյուն տեղանուններ, ինչպես՝ Alistos-ինչ-որ վայր Հս-ան կողմում (ըստ Պաուզանիասի), Alsten, միջնադարում՝ Alọst (<*Alōst)-կղզի Նորվեգիայում, Alustu-բնակավայր Ղրիմում, այժմ՝ Ալուշտա, Alista-վայր Կորսիկայում, Alostigi-վայր Իսպանիայի հարավում, Elsten, Aylsteche-վայրեր Գերմանիայում, Alette, միջնադարում՝ Alesta-վայր Ֆրանսիայում, Alst, միջնադարում՝ Alest (*<Alesta)-Վեզերի (Էմսի ավազան) աջակողմյան վտակ (Krahe, 1962, 296, 310)։ Հ. Կունը այս տեղանունների համար վերականգնում է *Alist-/*Alōst-/Alāst-նախաձևերը։ Նա, ինչպես նաև Հ. Կրահեն, այս տեղանունները դիտում են որպես հ.-ե. *-st-ածանցով կազմություններ։ Մեր տեղանվան համար, եթե, իհարկե, այն ծագումով հարում է հիշյալ տեղանուններին, կարելի է վերականգնել *Aləst-eu-նախաձևը։

ԱՌՈՒՆ — Գայլատու լճից դուրս եկող գետը՝ այժմ՝ Բալըքչայ։ Գետանվան միակ վկայությունն է. «զայգին մեծ, յոր մտանէր Առուն գետ՝ հանեալ ի ծովակէն Գայլատուայ» (Խոր., 194)։ Խորենացու երկի բազմաթիվ հրատարակություններում ընդգծված բառն ընկալվել է որպես հասարակ՝ հայ. առու բառը (<հ.-ե. *sru-t-)[31] և որոշյալ հոդով։ Մեր կարծիքով ճիշտ են այն հրատարակիչները, որոնք Առուն բառը համարում են հատուկ անուն (գետանուն)։

Հ.-ե. *ser- «հոսել» արմատիցածանցված գետանուններ շատ կան Եվրոպայի տարածքում. ինչպես՝ Sarine (Sarina)—գետ Շվեյցարիայում, Sarnos, այժմ՝ Sarno-գետ Նեապոլի ծոցի ավազանում, Sorna, այժմ՝ Zorn-Հռենոսի ձախակողմյան վտակ Էլզասում (Krahe, 290, 335) և այլն։

Գետանվան համար կարելի է վերականգնել *sr-uno/na-(?) նախաձևը. հմմտ. ավ. ravan «հեղեղ, հոսանք» /<հ.-ե. *sr-eu-na-/ (Pok., 1003, Гамкрелидзе, Иванов, 227):

ԱՍՊԱՀԵՆ — Մեծամորի վտակներից մեկը։ Անվան միակ հիշատակությանը հանդիպում ենք «Աշխարհացույցում». «յորոց յելից (Վաղարշապատի մատույներից—Վ. Ջ.) բղխեն աղբերք Ասպահեն գետոյ, որ է Խոզմոր, և խառնի ի Մեծամոր» (ՆՀԱ., 111)։ «Աշխարհացույցի» մեզ հասած բնագիրը շատ է խաթարված (մասնավորապես այս մասում), և գետի տեղորոշումը, ինչպես նաև անվան ճշտությունը կարող է վիճարկվել։ «Աշխարհացույցի» նշած վայրում այժմ գետ չկա։

Գետի զուգահեռ Խոզմոր անվան երկրորդ բաղադրիչը հայ. մօր (<հ.-ե. *məu-ro «խոնավ, տղմոտ») բառն է, իսկ առաջինը ամենայն հավանականությամբ խոզ բառը (կենդանին)։ Կարելի է ենթադրել, որ Ասպահեն անունը ևս նման կազմություն ունի։ Այդ դեպքում անվան առաջին մասը՝ ասպա. կարելի է դիտել իր. aspa «ձի» բառը։ Երկրորդ մասը՝ հեն մնում է անբացատրելի։ Արդյո՞ք այն ևս նշանակում է «ճահիճ», «ծով»[32]։ Ուշադրության է արժանի Մեծամորի (այժմ՝ Սև ջուր

---

[31] Այս վերականգնումը Գ. Ջահուկյանինն է (Джаукян, 1983, 106)։

[32] Այս կապակցությամբ, մեր կարծիքով, ուշադրության է արժանի Ինդոս գետի անունը. գետի հին Sindhu անունը իրանականում վերածվել է (օրինաչափորեն) Hindu-ի, վերջինս այժմ տարածում է գտել հունական ավանդույթով։ Յ. Մարկվարտը ենթադրում է, որ գետանունը առաջացել է hindu «գետ» հասարակ անունից (տե՛ս Eilers, 1982, 32)։ Հետևելով այս մեկնաբանությանը, գետանունը կարելի է բխեցնել հ.-ե. *sei- արմատից։ Գուցե Ասպահեն գետանվան հեն բաղադրիչը ևս այս արմատի ածանցյալ է։

գետի) ակունքի Այղր լիճ անվանումը (ayğr թուրք. նշանակում է «մտրուկ»), որը, թերևս, Ասպահեն անվան թարգմանությունն է (բացառված չէ նաև ժողովրդական ստուգաբանության հանգամանքը)[33]։

ԱՐԱԾԱՆԻ — Արևելյան Եփրատ գետը։ Համարվում է Եփրատի ձախակողմյան խոշորագույն վտակը, այժմ՝ Մուրատ չայ։ Հայ մատենագրության մեջ վկայված է VII դարում։ Զարմանալի է, որ V դարի հայ հեղինակներին այս անունն անծանոթ է. նրանք գետն անվանում են Եփրատ։ Այնինչ գետանունը հայտնի է ոչ միայն անտիկ հեղինակներին (Ստրաբոն), այլև վկայված է ասուրական արձանագրություններում։

Ն. Հարությունյանը Arşania, ինչպես նաև Arşuqu, Arşidu, Arşabia և մի շարք այլ անունների arşa-,arşi-, arşu-բաղադրիչներում փորձում է տեսնել ուրարտական դիցարանի Araşa աստծու անունը (Арутюнян, 1970, 356—357)։

Գետանվան առաջին՝ արած- (arş-,αρσ-) բաղադրիչը, ըստ երևույթին, հ.-ե. *arg'- «փայլուն, սպիտակափայլ» արմատի արտացոլումն է (հմմտ. արծաթ, արծնել), իսկ -անի (-ania,-ανιας) բաղադրիչը հ.-ե. *-nijo/<հ.-ե.*-en-+*-ijo/a-/ ածանցն է (հմմտ. աղունի թռչնանունը և գետանունը վերևում)։ Հ.-ե. այս արմատը հաճախ է հանդիպում նաև տեղանուններում, ինչպես՝ Ἄργος-մի շարք տեղանուններ (գավառանուններ, լեռնանուններ) Բալկաններում, Ἄρξος-Մարիցա գետի վտակ, այժմ՝ Arda (Բուլղարիայում), Ἀργῖος-այժմ՝ Էրջիաս, գործող հրաբուխ-լեռ Փոքր Ասիայում և այլն (Georgiev, 1981, 162—163)։ Հ. Կրահեն նշում է, որ «սպիտակ, փայլուն» իմաստով բառերը (*albho-, *bhel-,*arg'-) մեծ հակում ունեն գետանուն դառնալու (Krahe, 292)։ Կարծում ենք, Արածանի գետանունը հ.-ե. ծագում ունի. վերականգնում ենք *arg'-ən-ijo-նախաձևը, որի հայկական արտացոլումն է Արածանի գետանունը։

ԱՐԱՍԽ — Գետ Կապուտան (Ուրմիո) լճի ավազանում, Մեծ Հայքի

33 Գետի (լճի՞) զույգ անունների առաջին բաղադրիչները իմաստային տարբերություններ են ներկայացնում՝ «ձի»—«խոզ»։ Ճահճային տարածքը բնականաբար ավելի հարմար է խոզի բնակության համար և ոչ ձիու։ Այդ դեպքում ինչո՞ւ է իրանական անվանումը Ասպահեն «ձիագե՞տ, ձիալի՞ճ»։ Թերևս կենդանին նման է եղել թե խոզի, թե ձիու։ Կարելի է ենթադրել, որ այդ կենդանին տապիրն է (ժամանակակից հայ. գետակինճ)։ Ենթադրությունն անչափ վարկածային է։ Թերևս կենդանաբանները որոշ ճշգրտում կտան այս հարցին։

և Ատրպատականի սահմանն էր Պարսկահայք աշխարհի հարավում։ Ըստ «Աշխարհացույցի» կար և հոմանուն «Արասխ, որ և Ոլէա» գավառ (ՆՀԱ., 108)։ Գետանունը հիշում է Թ. Արծրունին. «Եւ ես մի իշխեցից քան զԱրասխ անցանել յայդ կոյս» (Արծր., 95)։

Գետանունը (նաև գավառանունը) հավանաբար ծագումնաբանական աղերս ունի Երասխ անվան հետ։

ԱՐԵԱՆ ԼԻՃ — Այս լճի անունը մեկ անգամ միայն վկայել է Թ. Արծրունին. «Իսկ նա անցեալ ի գաւառն Որսիրանից .... եւ բանակեալ կային ի լերինն, որ ի վերայ գեղջն Թուայ, ի հովիտս նորա, որ կոչի Արեան լիճ, զի է անդ լիճ մի մեծ ...»։

Թ. Արծրունին, թվում է, տեղանունը ստուգաբանում է հայ. արին բառով. «որ էր տեղի ասպարիսի ճակատամարտ զօրու նախարարութեան քաջացն մերոց իշխանացն Վասպուրականի» (Արծ. 160)։

*ԱՐԵԻԵԱՑ ԳԵՏ — Երասխի ձախակողմյան վտակ։ Այժմ՝ Մեղրի գետ։ Գետանունը չի վկայված։ Վերականգնվում է ըստ «Աշխարհացույցի» հաղորդման (ՆՀԱ., 109)։

Տեղանունը (գավառանուն→գետանուն)՝ Արեիք, կազմված է հայ. արեւ (<հ.-ե. *reu̯-) բառից հայ. -ի ածականակերտ (ունակական) ածանցով և հոգնակերտ -ք, տվյալ դեպքում տեղանվանակերտ, ածանցով։ Նշանակում է արևային, այսինքն արևոտ։

*ԱՐՃԻՇԱԿ ԼԻՃ — Լճի անունը չի վկայված։ Վերականգնում ենք ըստ Արճիշակովիտ գավառի (Վասպուրականում) և այժմյան Արճակ (<Արճիշակ) լճի անվան, որի հովիտն էր զբաղեցնում հին Արճիշակովիտը։

Թ. Հակոբյանը լճի այժմյան Արճակ անունը համարում է հին ենթադրական *Արշակի լիճ անվան աղավաղում (Հակոբյան, 1968, 43)։ Հարկ է նշել, որ հին աղբյուրներում այս անունով լիճ չի հիշվում, իսկ գավառի Արճիշակովիտ անվանումը հաստատում է, որ լիճը կոչվել է Արճիշակ, որից և հապլոլոգիայով՝ Արճակ անունն է առաջացել։

Ուշագրավ է լճի և Արճէշ քաղաքի անունների նմանությունը. ըստ երևույթին նրանք նույն ծագումն ունեն, միայն լճանունը Արճէշ քաղաքանվան նվազականն է։ Արդյո՞ք այս լիճը այսպես է կոչվել ի հակադրություն Արճէշի լճի (<հուն. 'Αρση [σή] νη λίμνη, այժմյան Վանա լիճը)։

Ուրարտագետ Հ. Կարագյոզյանը Արճէշ անունը բխեցնում է ուրարտ.

Arṣašku *քաղաքի անունից, որը տեղորոշում է Արճէշի մոտակայքում։ Ուրարտական քաղաքի անունը նա տրոհում է* arṣaš- *հիմքի և* -ku *ածանցի։* Arṣáš- *հիմքը նրա կարծիքով հայերենում օրինաչափորեն վեր է ածվում Արճէշի* (Карагезян, *1976, 86—88)։ Ընդունելով Հ. Կարագյոզյանի առաջարկած տեղորոշումն ու նույնացումը՝ չենք համաձայնում նրա առաջարկած վերլուծությանը։ Կարծում ենք, որ տեղանունը պետք է տրոհել* arṣ (a)- *հիմքի և* -šk- *ածանցի։* Arṣ (a)- *արմատը (հիմքը) հավանաբար ծագում է հ.-ե.* *arg´- *«փայլուն, սպիտակ» արմատից, որից ունենք հայ.* **արծաթ, արծնել, արծարծել** (*Pok., 64—65*)*։ Հ.-ե. ծագում ունի, թերևս, նաև* -šk- *ածանցը, որը մենք բխեցնում ենք հ.-ե.* *-sk- *ածանցից։ Ուրարտական անվան վերջին* -u- *ձայնավորը հ.-ե.* *-o- *հիմքակազմիչն է։ Հ.-ե.* *-sk-*ածանցը այս տեղանվան մեջ հանդես է գալիս, ըստ երևույթին,* *-skh- *տարբերակով։ Նշենք, որ սեպագրի էմֆատիկ* ḳ /q/ *հնչյունին հայերենում համապատասխանում է* կ-*ն հմմտ.* Qulḫi-**Գողթ**-*ն,* Arṣuqu-**Արծկէ**, *այնինչ* k-*ին, ըստ երևույթին, համապատասխանում է* **ք**-*ն. հմմտ.* Kulimeri-**Քղիմար**, Uelikuni-**Գեղաքունի**: *Ըստ այսմ,* -šk- *հնչյունախումբը* Arṣašku *անվան մեջ (ուրարտական սեպագրի տառադարձման* š -*ին, ինչպես խեթերենում, համապատասխանում է* s *հնչյունը) կարելի է դիտել որպես հ.-ե.* *skh- *ածանցի դրսևորում, որը օրինաչափորեն հայերենում կվերածվեր* շ-*ի։ Վերջինիս ազդեցությամբ (ետադարձ առնմանում) հիմքի* ծ *հնչյունը դարձել է* **ճ**. ***Արծէշ** > **Արճէշ**: *Մեր առաջարկած ստուգաբանությամբ չբացատրված է մնում* է *հնչյունի ծագումը Արճէշ անվան մեջ։ Թերևս այն ծագում է* -ei- *երկբարբառի՞ց*[34]*։*

ԲԱԳՐԱՎԵՒԱՆԴ ԳԵՏ — Արածանու աջակողմյան վտակ համանուն ***Բագրավեւանդ գավառում։ Մեկ անգամ վկայված է «Աշխարհացույցում»*** (ԽՀԱ., *110*)*։*

Տեղանվան ստուգաբանության ուշագրավ փորձ է կատարել Ն. Ադոնցը։ Ենթադրելով, որ Բագրեւանդը Բագրատունիների հնագույն կալվածքն է եղել, նա կապ է տեսնում գավառի և տոհմի անունների միջև։ Ըստ նրա՝ գավառի անվան նախաձևն է եղել Bagrat-vanda *«որտեղ*

---

34 *Հմմտ.* 'Αργ-αῖ-ος *լեռնանունը։*

vanda-ն ուշ շրջանի gund-ի հին ձևն է, ի միջի այլոց, տուն նշանակությամբ. հմմտ. վանդ-ակ» (Адонц, *1908, 307, ծան. 6*)։

Սակայն, մեր կարծիքով, այստեղ առկա է -ւանդ ածանցը (<հ.-ե. *-u̯ent-), որ հանդիպում է նաև Զարա/եւանդ գավառի անվան մեջ, ինչպես նաև դարաւանդ, գահաւանդ, սարաւանդ, բարձրաւանդակ բառերում։ Ածանցն, ըստ երևույթին, իրանական է, որտեղ այն ունակական նշանակություն ունի։ Այն հանդիպում է նաև իրանական լեզվոլորտի մի շարք տեղանուններում, ինչպես Demāvend (*Demāvandā), Էլբրուս լեռների բարձրագույն գագաթը, Elvend (<*Alvandā), լեռ Համադանից հր.-աե։ Այս ածանցը արդյունավետ էր նաև Փոքր Ասիայում (խեթա-լուվական լեզվոլորտում), (Laroche, *1961, 58—63*)[35]։

*ԲԱՂԱՆ ՌՈՏ, *ՌՈՏ Ի ԲԱՂԱ — Մեծ Հայքի Փայտակարան աշխարհի գավառներից մեկի անունն է (ՆՀԱ, *109*), ըստ երևույթին, փոխանցված գետանունից, ինչպես հուշում է ռոտ բաղադրիչը։ Գետը պետք է Երասխի աջակողմյան վտակներից մեկը լինի ստորին հոսանքում (թերևս Կարասո՞ւ, Բուլգարչա՞յ)։ «Աշխարհացույցը» վկայում է տեղանվան երկու ձևն էլ՝ թե իզաֆետային, թե ոչ իզաֆետային կազմությամբ։ Կարելի է ենթադրել իրանական ծագումը, նկատի առնելով տարածքը (Ատրպատականի սահմանի մոտ)։

*ԲԱՂԱՑ ԳԵՏ — Այսպես ենք վերականգնում Բաղք գավառի (Սյունիքում) համանուն գետի անունը (ՆՀԱ, *109*)։ Ըստ երևույթին Որոտան գետի միջին հոսանքի կամ այդ տարածքում նրա որևէ վտակի անունն է։ Գավառանվան -ք հոգնակերտ ածանցը, հավանաբար, ցեղանվան ցու-

---

35 Վերջածանցի առանձնացումից հետո մնում է բագրա- կամ բագրի- հիմքը։ Ենթադրելի է նաև նրա հ.-ե. ծագումը։ Նկատի ունենալով տարածքի (Բագրեւանդ գավառի) բնական աշխարհագրական առանձնահատկությունները, կարելի է առաջարկել հետևյալ հավանական մեկնաբանությունները. 1) *bhog- «հոսող ջուր, աղբյուր» (հմմտ. միռ. búal «հոսող ջուր»<*bhogla, búar «լույծ»<*bhogro-, հրգ. bah, նրգ. Bach «առու»), (Pok., *161*)+*-ro-որպես «ջրավետ, ջրառատ». 2)*bhŏgh-/*bhăgh-«ճահիճ, տիղմ» (Pok., *161*) +*-ro- որպես ճահճային։ Ըստ այսմ, առաջնային կարող է լինել գավառանունը, որից և անունն անցել է գետին։ Իբրև նախաձև կարելի է վերականգնել *bhog-r (o)-u̯ent-կամ *bhŏgh-r (o)-u̯ent-։

ցիչ է, ուստի գետանունը վերականգնում ենք հատկացուցիչ-հատկացյալ կաղապարով[36]։

*ԲԵՐԴԱՑ (ՓՈՐԻ) ԳԵՏ, *ԲԵՐԴԻԿ — Վերականգնվում է ըստ «Աշխարհացույցի» հաղորդման (ՆՀԱ, 110)։ Գավառանունը հատկացուցիչ-հատկացյալ կառուցվածքի բաղադրյալ անուն է։ Հատկացուցչի հոգնակի սեռականի -աց ցուցիչը բացառում է գետանունից գավառանվան կազմությունը (եթե, իհարկե, սխալագրություն չէ՝ ց-ն յ-ի փոխարեն)։ Հոգնակի ցուցիչով գետանունը անպայմանորեն փոխանցում է այլ տեղանունից։ Գետի ժամանակակից Փերթեկ անունը, թերևս, հաստատում է գետանվան Բերդիկ ձևը։

Տեղանունը, թվում է, կազմված է հայ. բերդ «ամրոց, ամրացված վայր» բառից, որպես Բերդերի ձոր[37]։

ԲԶՆՈՒՆԵԱՑ ԾՈՎ — Վանա լճի հիմնական անվանումը հայ մատենագրության մեջ։ Վանա լիճը առհասարակ կոչվել է իր ափերին գըտնըվող որևէ հայտնի աշխարհագրական օբյեկտի անունով (բնակավայրի, գավառի). հմմտ. Θω[σ]πῖτις λίμνη (Տոսպա լիճ), Ἀρση[σή]νη λίμνη (Արճեշի լիճ), Ռշտունեաց ծով, Վանա լիճ և այլն։ Լճի այս անվանումը ծագում է Բզնունիք գավառանունից (←տոհմանունից)։ Ինչպես լճի մյուս բոլոր անվանումները, այն ևս հատկացուցիչ-հատկացյալ կառուցվածքի բաղադրյալ անուն է։

---

36 Բալ-/բաղ- բաղադրիչը լայն տարածում ունի Հայկական լեռնաշխարհի տեղանուններում. հմմտ. Բալու (քաղաք Ծոփքում, Բալահովիտ գավառում), Բաղք (գավառ Սյունիքում), Բաղէշ (<*Բաղաղէշ, հուն. Βαλα-λεσων քաղաք Վանա լճի հր.-ամ.-ում) և այլն։ Գ. Ղափանցյանը այս տեղանուններում տեսնում է pala ցեղանունը (Капанцян, 1956, 127—129)։ Գ. Ջահուկյանը համեմատում է թրակ. Βαλας, Βαλης, balius անձնանունների հետ՝ ենթադրելով հ.-ե. ծագում *bhel- «փայլել» արմատից (Ջահուկյան, 1970, 76)։

37 Կարելի է ենթադրել նաև ծագումը հ.-ե. *bher- «բերել» արմատից *-to- ածանցով. հմմտ. լատ. fertus, fertilis «բերքառատ, բարեբեր», նրգ. Börde «բարեբեր հովիտ» (Pok., 130), տեղանունը այդ դեպքում կմեկնաբանվի որպես «բարեբերության ձոր»։ Հնարավոր է նաև հ.-ե. *bher- «փչել» արմատի ածանցում դիտել՝ *-to- ածանցով. հմմտ. ագս. brǣ̄ā «քամի, զեփյուռ, սյուք», լատ. fretum, -us «մակընթացություն», նաև «հուզում, ծովամրրիկ» (Pok., 132), այս դեպքում տեղանունը կարող է նշանակել «քամիների ձոր»։

*ԲՈՂԽԱ — *Տայք աշխարհի գավառներից մեկի անունն է։ Որպես գետանուն վերականգնվում է ըստ «Աշխարհացույցի» հաղորդման* (ԵՀԱ, *110)։ Ճորոխի աջակողմյան վտակներից մեկն է, ըստ Ս. Երեմյանի՝ այժմյան Օլթի-չայը (ԵՀԱ, 45)։*

Տեղանունը, կարծում ենք, կարելի է տրոհել բող- *և* -խա *բաղադրիչների։ Առաջինը՝* բող-, *հիմքն է և թերևս հանդիպում է նաև Գուգարքի* Բողնոփոր *գավառի անվան մեջ։ Երկրորդը՝* -խա *բաղադրիչը, ըստ երևույթին, ածանց է. հմմտ.* Կող *(գավառ Տայքում, Բողխայի հարևանությամբ) և* Qulḫa *(երկրանուն ուրարտական արձանագրություններում, նույնացվում է դասական շրջանի* Κολχίδα, *հայ. Կողքիս երկրին)։ Այս առումով ուշագրավ է* Բողխա *և* Բողնո- *ձևերի համեմատությունը.* բող- *հիմքի առանձնացումից հետո մնում են՝ մի դեպքում* -խա, *մյուս դեպքում* -նո *մասերը, որոնք, մեր կարծիքով, համապատասխանում են ուրարտական արձանագրություններում վկայված մի շարք տեղանունների զուգահեռ ձևերում հանդիպող* -ḫi-*և*-ni- *ածանցներին. հմմտ.* U̯elikuḫi-Uelikuni, Lueruḫi-Lueruni.

Բող- բաղադրիչը մենք հակված ենք դիտել հ.-ե. *bhel- *«փայլել, փայլուն, սպիտակ»* (Pok., *118),* *bhel- *«բույս»* (Pok., *122), թերևս նաև* *bhel- *«ուռեցնել, ուռճացնել»* (Pok., *120) արմատներից որևէ մեկի, իսկ -խա (=ուր.* -ḫi-/-ḫa-) *բաղադրիչը՝ հ.-ե.* -ko/a- *ածանցի արտացոլումը։ Ըստ այսմ տեղանվան համար կարելի է վերականգնել* *bhol-ka- *նախաձևը։*

**ԲՈՂՆՈ(ՓՈՐԻ) ԳԵՏ — Կուրի աջակողմյան վտակ, Գուգարքի Բողնոփոր գավառի համանուն գետը (Երեմյան, 104, 110)։ Այժմ Բոլնիս (Ծղալի)։ Գավառանունը կցական բարդություն է* Բողնոյ փորից. *հմմտ.* Ազորդաց փոր, Բերդաց փոր, Արսեաց փոր, Պարտիզաց փոր։

Բարդության առաջին բաղադրիչն է բողնո- *(կարելի է ենթադրել* *բողին- *կամ* *բողուն- *ավելի հին ձև), որի հիմքն է* բող-։ *Վերջինս, կարծում ենք, ծագում է հ.-ե.* *bhel- *«փայլել, փայլուն, սպիտակ»,* *bhel- *«բույս» և կամ* *bhel- *«ուռեցնել, ուռճացնել» արմատներից որևէ մեկից հ.-ե.* *-no- *ածանցով։*

ԳԱՅԼ — «Աշխարհացույցը» այս անունով երեք տարբեր գետեր գիտի. 1) Պոնտական Կապադովկիայում, հունական աղբյուրների Θερμώδων *ավելի ուշ՝* Λύκος *այժմ՝ Քելքիթ. 2) Արևմտյան Եփրատի վտակներից*

մեկը Բարձր Հայքում, այժմ՝ Թուզլա (՞). 3) Արածանու վտակներից մեկը Տուրուբերանում, «Աշխարհացույցի» Մեծ Գայլ գետը, այժմ՝ Քելխաս (՞)։

Թվում է, թե գետանունը ծագում է գայլ կենդանու անունից. հմմտ. Գայլ գետ — Λύκος (Քելքիթ), որտեղ հայ. և հուն. անունները միմյանց թարգմանություն են։ Նկատի առնելով այն հանգամանքը, որ այս գետը հին աղբյուրներում կոչվել է Θερμώδων (=*Ջերմագետ), և այն, որ բուն Հայաստանում ևս երկու Գայլ գետեր են եղել, ենթադրում ենք, որ հուն. Λύκος-ը թարգմանված է հայերենից (և ոչ հակառակը)։

Գետանվան ծագումը գայլ կենդանու անունից մեզ նվազ հավանական է թվում[38]։

Գայլթակղիչ է Գայլ գետանունը դիտել հ.-ե. *u̯el- «գոլ, տաք, ջերմ» արմատի ածանցյալ։ Նման ենթադրության է մղում հուն. Θερμώδων անվանումը։ Կարելի է գետանվան համար վերականգնել *u̯əl-io- նախաձևը (նման նախաձև է առաջարկվում նաև հայ. գայլ կենդանու անվան համար, Джаукян, 1983, 112)։ Հետագայում գետի և կենդանու անունների նմանահնչյունության հետևանքով գետանունը վերաիմաստավորվել է ու այդպես թարգմանվել հունարենի՝ Գայլ «գոլ, ջերմ, θερμός» → Գայլ «գայլ, λύκος» → Λύκος.

ԳԱՅԼԱՏՈՒ ԾՈՎԱԿ — Լիճ Ջրաբաշխ (Հայկական պար) լեռներում։ Անունը վկայել են Խորենացին (194) և «Աշխարհացույցը» (ԵՀԱ, 111)։ Այժմ՝ Բալըքգյոլ։ Սեբեոսը VII դարում հիշում է Գայլատուք քաղաք (76), որը ոմանք տեղադրում են Գայլատու լճի շրջակայքում (ՀՀՇՏԲ, հ. 1, 78)։

Առաջնայինը, ըստ երևույթին, լճանունն է. քաղաքի անունը կազմըված է -ք հոգնակերտով, որ բացակայում է լճի անվան մեջ։

Լճանունը կարելի է տրոհել գայլ և ատու կամ տու բաղադրիչների։ Առաջինը՝ գայլ, թերևս կարող է առնչվել հայ. գայլաձուկ բառին։ Երկրորդ բաղադրիչը՝ ատու/տու, կարող է լինել. 1) հայ. տամ բայի արմատը՝ **տու** (<հ.-ե. *dō-), այդ դեպքում լճանունը կնշանակի գայլ

---

38 Թեև կարելի է հմմտ. le Loup, la Loue գետանունները Ֆրանսիայում, (Dauzat, 1932, 200)։

(ձուկ) տվող[39]. 2) հ.-ե. *ad(u)- «հոսող ջուր, ջրահոսանք» արմատի ածանցյալ. կազմության համար հմմտ. վենետ.-իլլիր. Οὐ-αδούας (Օդեր գետի անունը), որի երկրորդ բաղադրիչը՝ 'αδούας, ըստ Յու. Պոկոռնու հ.-ե. այս արմատն է (Pok., 4)։

ԳԵՂԱՄԱՅ ԾՈՎ(ԱԿ) — Սևանա լճի անունը հայ մատենագրության մեջ։ Վկայված է V դարից սկսած (Խոր., 170, 315)։ «Աշխարհացույցը» (ԵՀԱ, 109) լիճն անվանում է Գեղաքունեաց ծով։

Հայկական ժողովրդական ավանդության համաձայն լճանունը, ինչպես նաև լճի արևմտյան ափը եզերող լեռների անունը (Գեղ, Գեղամա) կապում է ավանդական Գեղամ նահապետի անվանը (Խոր., 41)։

Գ. Ղափանցյանը Գեղ, Գեղամ, Գեղաքունիք անունների գեղ բաղադրիչը համարում է առաջացած vel- ցեղանունից։ Ըստ նրա, այս ցեղանունը կարող է առնչվել ուրարտ. ueli «աշխարհազոր, ջոկատ» բառին (Капанцян, 1975, 82)[40]։

ԳԵՂԱ(Ր)ՔՈՒՆԵԱՅ ԾՈՎ(ԱԿ) — Այսպես է կոչում Սևանա լիճը «Աշխարհացույցը» (ԵՀԱ, 109)։ Գեղա(ր)քունիքը Սյունիքի գավառներից մեկն էր լճի ամ. և հր.-ամ. մասում։ Դեռևս Գ. Ղափանցյանը գավառանունը նույնացրել է ուրարտական արձանագրությունների Uelikuni / Uelikuḫi երկրանվան հետ։

Լճանունը բաղադրյալ է, կազմված է գավառանունից (սեռական հոլովով, հատկացուցիչ) և ջրային տերմինից (ծով(ակ), հատկացյալ)։

Գավառանվան մեջ կարելի է առանձնացնել -նի(ք) (=ուրարտ. -ni/-ḫi) ածանցը, որից հետո մնում է գեղարկու– հիմքը (Գեղարքունիք ձևը թերևս հին է, բայց ծագել է ավելի ուշ՝ տեղանվան երկրորդ մասի՝ հայ. արքունիք բառի հետ զուգորդվելու հետևանքով)։ Այս հիմքը մենք հակված ենք համեմատելու հ.-ե. *ueli-kā- «արոտավայր, հովիտ» բառին։ Այս նախաձևից է հուն. ἑλίχη «արոտավայր» բառը, ինչ-

---

39 Այս մեկնաբանությունը առաջարկել է Գ. Ջահուկյանը բանավոր հաղորդմամբ։

40 Կարելի է ենթադրել, որ լճանունը հ.-ե. ծագում ունի և առնչվում է *uel- «պտտել, փաթաթել» արմատին։ Այս արմատից -mi- ածանցով է կազմված հհնդ. ūrmí-, ավ. varəmiš «ճանապարհ, ալիք» բառը (<հ.-ե. *ul-mi-)։ Նույն արմատից միևնույն ածանցով է կազմված, ըստ երևույթին, նաև մեր լճանվան առաջին բաղադրիչը (Գեղամայ), (Pok., 1140)։

պես նաև ’Ελιχών լեռնանունը (ավելի հին Fελιχών -ից) «արոտալեռ» իմաստով (Pok., 1141).

*ԳԷՆ — Երասխի աջակողմյան վտակ, սկիզբ է առնում Ալագ Մասիս հս.-աե. լանջի մեծ վիհից։ Գետանունը վերականգնում ենք ըստ Խորենացու վկայության. «(Արտաւազդ) յետ սակաւ ինչ աւուրց թագաւորելոյն իւրոյ անցեալ զկամրջաւն Արտաշատ քաղաքի որսալ կինճս և իշավայրիս զակամբք Գինայ ..... անկանի ի խոր իմն մեծ և խորասոյզ լեալ անհետի» (Խոր., 191)։ Ղ. Ալիշանը (ԱԱ, 450), նրա հետևությամբ նաև Մ. Երեմյանը (ԵՀԱ, 47), գետն անվանում են Գինեգոյն։ Ինչպես կարելի է եզրակացնել Խորենացու՝ բերված քաղվածքից, գետանունը գրված է սեռական հոլովով. անվան ուղիղ ձևը պետք է լինի Գէն[41]։

Կարծում ենք, որ գետանունը հ.-ե. ծագում ունի. կազմված է *ueis- «հալվել, հոսել» արմատից *-no-/-na- ածանցով։ Հ.-ե. այս արմատը հաճախ է հանդես գալիս եվրոպական տարածքի գետանուններում, ինչպես՝ Visa- 1) Հռենոսի աջ. վտակ, այժմ՝ Wiese, 2) գետ Նորվեգիայում, 3) հին շվեդական գետանուն։ Visera, Visara, Visura - 1) գետ Գերմանիայում, այժմ Weser, 2) գետ Մեծ Բրիտանիայում (Լանքաշիր), այժմ՝ Were, 3) գետ Ֆրանսիայում, Դորդոնի աջ. վտակ, այժմ Vézère, 4) գետ Բելգիայում, Ուրթի աջ. վտակ այժմ՝ Weser (Krahe, 1962, 340—341), Vistula (հռոմեական աղբյուրներում) դեռ. Wistlō, այժմ՝ Visla (Pok., 1134)։

Գետանվան համար մեր առաջարկած նախաձևը կազմությամբ համապատասխանում է լատ. vēnā (<*ueisnā «երակ» բառին (Pok., 1134)։

ԴԿՂԱԹ — Առաջավոր Ասիայի երկրորդ խոշոր գետը, որը Եփրատի հետ կազմում է Միջագետքը։ Այժմ՝ Տիգրիս։ Կազմվում է երկու գետերի խառնուրդից, որոնցից արևմտյանը համարվում է բուն Դկղաթ գետը։ Հայ մատենագրության մեջ վկայված են գետի երկու անուններն էլ, թե Դկղաթ (նև Դգղատ, Դիկղատ, Դգլատ), թե Տիգրիս[42]։ Դկղաթ գետա-

---

41 Անանիա Շիրակացին այսպես է կոչում Կամսարականների որսատեղին (Աբրահամյան, 1944, 228), որը տեղորոշում են Ծննդոց անտառում, Արմավիր քաղաքի շրջակայքում (ՀՀԾՏԲ, հ. 1, 834)։

42 Գետը Դկղաթ են անվանում Սեբեոսը, Ասողիկը, Կաղանկատվացին, իսկ Խորենացին ու Ղևոնդը՝ Տիգրիս։ Ի դեպ, այս անունը ծանոթ է նաև Ասողիկին ու Կաղանկատվացուն։

նունը վկայված է դեռևս շումերական և աքքադական հին արձանագրություններում (մ. թ. ա. 3—2-րդ հազարամյակներ) շում. IDIGNA, աք. Idiglat ձևերով:

Աքքադական Idiglat ձևը առաջացել է շումերականից -at իգականակերտ ածանցով, n>l հնչյունափոխությամբ: Աքքադական ձևից իրանական լեզվոլորտում l>r հնչյունափոխությամբ և «սրընթաց գետ» վերաիմաստավորմամբ առաջացել է Տիգրիս անունը, որը և այժմ հունա-հռոմեական ավանդույթով պաշտոնական ճանաչում է գտել:

Գետանունը (Դկղաթ) բավարար ստուգաբանություն չունի[43]:

ԵՂԻԳԻ ԼԻՃ — Լիճ Տուրուբերանի Երևարք գավառում: Միակ վկայությունը տալիս է «Աշխարհացույցը». «Գաւառ Երեւարք, յորում լիճ ինչ որ կոչի Եղիգի, յուղխից, զի ի վարելն յակօսն ջուր ըմպէ եզն և սերմանեալն քառասուն օրն հասանէ և բերէ ընդ միոյ յիսուն» (ԵՀԱ., 108): Ըստ այս նկարագրության՝ վայրը, ուր գտնվում էր Եղիգի լիճը, ջրառատ էր (թերևս նաև դաշտային) և բնականաբար կանաչազարդ: Արդյո՞ք լճանունը հայ. եղէգ «եղերդ, խատուտիկ, одуванчик» բառից չի կազմված -ի ունակական ածանցով. այդ դեպքում, թերևս, տվյալ վայրն է (դաշտը, հովիտը) կոչվել Եղիգի, ապա անունն անցել է նաև լճին: Նվազ հավանական է թվում տեղանունը բխեցնել հայ. եղէգն «եղեգն, тростник» բառից:

ԵՐԱՍԽ — Առաջավոր Ասիայի խոշոր գետերից մեկը, որն իր ողջ հոսանքով պատմական Հայաստանի տարածքում է գտնվում: Հայ մատենագրության մեջ ամենահաճախ հիշատակվող գետանուններից մեկն է (V դարից մինչև XVIII դարը ներառյալ): Հնագույն վկայությունները գտնում ենք հունական և հռոմեական աղբյուրներում (᾿Αράξης, Araxes): Հունա-հռոմեական ավանդույթն այժմ պաշտոնական ճանաչում է գտել, և գետը կոչվում է Արաքս[44]:

---

43 Ուշագրավ ենթադրություն է կատարում Վ. Այլերսը՝ I'D «գետ» և GIN «գնալ». ըստ այդմ գետանունը կնշանակի «(արագ) գնացող գետ» կամ «սրընթաց գետ», ինչպես ստուգաբանվում է Տիգրիսը (Eilers, 1982, 31):

44 Հայ իրականության մեջ գետն Արաքս է սկսել կոչվել XIX դարից սկսած: Մինչև XIX դարի կեսերը (այնուհետև նաև բազմաթիվ հայազգի հայագետների երկերում) գետը կոչվել է Երասխ: Ժողովրդախոսակցական լեզվում ավելի հաճախ կիրառվել է Արազ պարսկա-թուրքական ձևը: Այժմ Երասխ-Արաքսի ակունք է դիտվում Բյուրակնյան լեռների Սրմանց զագաթից սկիզբ առնող գետը (ԵՀԱ, քարտեզ, Հակոբյան, 1968, 49,

Գետանվան ստուգաբանության առաջին փորձն, ըստ երևույթին, Ստրաբոնինն է. «Համարում են, թե Արաքսը այսպես է կոչված Պենեոս (գետի) նմանության պատճառով, և այս անունը տվել է նրան Արմենոսը։ (Պենեոսը ևս նախապես) կոչվել է Արաքս, որովհետև խլել է (ἀπαράξαι) Օսսա լեռը Օլիմպոսից՝ ճեղքելով (ῥηξανῖα) Տեմպե (հովիտը)» (Ստրաբոն, 11, 14, 13)։ Այս հատվածից երևում է, որ Ստրաբոնը գետի հունական անունը մեկնաբանում է հուն. ἀπαράξαι «խլել» և ῥηξανῖα «ճեղքել» բառերով։ Նման փորձեր (օտար տեղանունների մեկնաբանություններ հունարենով) հաճախ են հանդիպում հույն հեղինակների, մասնավորապես Ստրաբոնի, երկերում։

Մ. Խորենացին, որ գրեթե ամենուր ձգտում է բացատրել տեղանունների ծագումը, հայկ. Երասխ անունը համարում է Արամայիսի թոռան՝ Երաստի անունից առաջացած (Խոր., 39)[45]։

Ստուգաբանության այս փորձերը, իհարկե, պետք է համարել ժողովրդական։

Գետանվան գիտական ստուգաբանական փորձերը այն կապում են իրանական լեզվոլորտին։

1. Երասխ գետանունը առաջացել է ուրարտական արձանագրություններում վկայված Eriaḫi ցեղանունից (→երկրանունից)։ Մ. Նիկոլսկու (Никольский, 1896, 92) և Ս. Երեմյանի (ԵՀԱ, 74)[46] այս կարծիքը փորձում է հիմնավորել Հ. Կարագյոզյանը. «ուրարտ. [I]Eriaḫe > հայ. *Երախս (հոգնակի թվի հայցական հոլովի վերջածանցով) > Երասխ, -խս > սխ դրափոխությամբ, քանի որ նախկին *Eraxs ձևից վերոհիշյալ օրենքով -χσ- > -κσ- > -ξ- հունարենում այս անունը հայտնի է որպես Ἀράξης (Карагезян, 1976, 93)։

Ոսկանյան, 1976, 28)։ Այնինչ հնում Երասխի ակունք են դիտվել Մեծրաց լեռների հր.-աե. շրջանի աղբյուրները։ Կարծում ենք, որ Ղ. Ալիշանի տեղորոշումը ճիշտ է (ԱԱ, 4)։ Դժբախտաբար Սրմանց գագաթից իջնող գետի հին անունը մեզ հայտնի չէ։

45 Թերևս Խորենացու ստուգաբանությունը որոշ պատմալեզվական հիմք կարող է ունենալ՝ արտացոլելով հին հայկական դիցաբանության ինչ-ինչ արձագանքները։ Երաստը իբրև Երասխի էպոնիմ (անվանատու) գուցե ինչ-որ գետային աստվածությո՞ւն էր. հմմտ. Աքելոոս (հերոս) և Աքելոոս (գետ)։

46 Ս. Երեմյանը ենթադրում է Eriaḫi ցեղի սկյութական ծագում (ԵՀԱ, 74)։

2. Հունական աղբյուրներում հիշվում են մի շարք ’Αράξης -ներ։ Վ. Այլերսը նշում է չորսը (այդ թվում նաև հայկականը)։ Նա գտնում է, որ այս գետանունը (հունական ձևը) հարում է «սև գետ» կարգի գետանուններին, ինչպես՝ գերմ. Schwarza (ch), իսպ. Rio Negro, թուրք. Karasu. Ուստի ’Αράξης գետանունը նա վերլուծում է a-raxša «ոչ փայլուն» (Eilers, 1985, 35)։

3. Ա. Մնացականյանը Երասխ գետը նույնացնում է Ավեստայի սրբազան Raṇha (=վեդ. Rasā) գետի հետ։ Նա գտնում է, որ Երասխ անունը ևս Raṇha (հուն. ’Ρᾶ, որից հայ. Ռահ. ի դեպ «Աշխարհացույցը» այսպես է անվանում Վոլգա գետը. ԵՀԱ, 101) անվան մի տարբերակն է (Մնացականյան, 1981, 86—93)։

Նախքան այս կարծիքների քննությանն անցնելը նշենք մեր գետի անվան՝ աղբյուրներում վկայված ձևերը. հունա-հռոմեական՝ ’Αράξης, Araxes, հայ. Երասխ, վրաց. Raxsi։ Այս անունների համեմատությունը ցույց է տալիս, որ հունա-հռոմեական և հայկական տարբերակներին նախաձայն ե/ա ձայնավորի բացակայությամբ հակադրվում է վրացական տարբերակը. սակայն այն նույնանում է հունա-հռոմեական տարբերակին վերջահանգ -xs- բաղաձայնական հնչյունակապակցությամբ, այդ կետում տարբերվելով հայերենից (–սխ–)։ Հունա-հռոմեական և հայկական տարբերակները հակադրվում են նաև նախաձայն ձայնավորի բնույթով՝ հունա-հռոմեական a-/հայ. ե–։

Առաջին տեսակետի դեպքում անբացատրելի է մնում վրացական ձևում ե/ա ձայնավորի բացակայությունը։

Երկրորդ տեսակետի դեպքում անբացատրելի է մնում առաջին՝ իրանական նախաձայն a-ի դիմաց (ժխտական ածանց, որ ունենք հայերենում իրանականից փոխառյալ ակամայ բառի մեջ) հայերենում ե–ի առկայությունը (նախաձայն ե/ա հնչյունափոխության օրինակները, որ բերված են Հ. Կարագյոզյանի հոդվածում, ձայնավոր նախահավելվածներ են ղ և ր բաղաձայններից առաջ)։ Երկրորդ՝ իրան. -xš- > հայ. –շխ–, այնինչ այստեղ առկա է ընդհանուր օրինաչափությունից դուրս մնացող մի եզակի օրինակ՝ իրան. -xš- > հայ. –սխ–։

Մեզ ավելի հավանական է թվում Ա. Մնացականյանի առաջարկած Երասխ-Ռահ (Կորյունի «Վարք Մաշտոցի» երկում մեկ անգամ հիշված գետանվան) նույնացումը։ Սակայն այս դեպքում վիճարկելի է ավ.

Raṇha և հայ. Երասխ գետերի նույնացումը, և բացարձակորեն անընդունելի է ավ. Raṇhā հայ. Երասխ անցումը, որը հնչյունական ոչ մի օրենքով հնարավոր չէ բացատրել (հաստատել)։ Այստեղ, մեր կարծիքով, խոսք կարող է լինել միայն երկու անունների՝ միևնույն հիմքից ծագելու մասին, տարբեր լեզվոլորտներում։

Կարծում ենք, որ Երասխ գետանունը հ.-ե. $*_{e}$res-/ $*_{e}$ros-/ $*_{e}$rs- «հոսել, ժայթքել» արմատի ածանցյալն է *-k/-kh- աճականով կամ *-ko/a- (-kho/a-) ածանցով կազմված։ Կազմության համար հմմտ. լատ. roridus «ցողոտ, խոնավ» *rosidus նախաձևից և լատ. roscidus «ցողոտ, խոնավ» *roskidus նախաձևից։ Հ.-ե. այս արմատից են ծագում նաև ավ. Raṇha, վեդ. Rāsā (առասպելական գետ արիական ցեղերի դիցաբանության մեջ, նրանց նախահայրենիքում, որոշ հետազոտողներ նույնացնում են Վոլգայի հետ)։ Վ. Գեորգիևը այս արմատից է բխեցնում նաև Ἰέρασος, Gerasus (այժմ՝ Սիրետ, Դանուբի ձախակողմյան հզոր վտակներից մեկը Ռումինիայում), Ἐρασῖνος (հինգ տարբեր գետեր հին Հունաստանում), Rosica կամ Rosita (Յանտրա գետի ձախակողմյան վտակը Բուլղարիայում, Դանուբի ավազան) գետանունները (Georgiev, 330,341)։

Գետանվան համար մենք առաջարկում ենք $*_{e}$ros-ka/kha- նախաձևը։ Այս նախաձևը հայերենում պետք է արտացոլվեր *Երոց կամ *Երոշ ձևով։ Հ.-ե. $*_{e}$ros- > *երաս, անցումը, ինչպես նաև *k/kh > -խ- անցումը հավանաբար պետք է որոնել անատոլիական լեզվոլորտում[47]։

*ԵՐՆՋԱԿԱՅ ԳԵՏ — Երասխի ձախակողմյան վտակ։ Գետանունը չի վկայված։ Վերականգնվում է ըստ «Աշխարհացույցի» հաղորդման (ԵՀԱ, 109) և գետի այժմյան Ալինջաչայ անվան, որը Երնջակայ գետ անվան աղավաղումն է թյուրքալեզու ոլորտում։ Գետանունը, հավանաբար, առաջացել է գավառանունից։

Երնջակ տեղանունը, թերևս, հայ. երինջ բառի (կենդանու անվան) տեղանվանացած նվազականն է։ Կենդանիների անուններից տեղանունների առաջացումը տարածված երևույթ է, իսկ Սյունիքում այն շատ հաճախ է հանդիպում. հմմտ. Աջառագաւիք, Ընչղակաբերդ, Խոզաբերդ,

---

[47] Գ. Ջահուկյանը ենթադրում է հ.-ե. *-skh- > իրան. -sx- անցումը (Джаукян, 1984, 160)։

Եղնաճար և այլն։ Կարելի է ենթադրել նաև Երնջակ տեղանվան ծագումը հայ. Երնջակ բուսանունից։

ԵՓՐԱՏ — Առաջավոր Ասիայի խոշորագույն գետը։ Հայկական աղբյուրներում վկայված է V դարից սկսած։ Ի դեպ, հաճախ այսպես է կոչվում նաև Արածանին։ Հունա-հռոմեական աղբյուրներում Εὐφράτης, Euphrates. Հնագույն վկայություններն են՝ շում. BURANUN, BURUNUN, աքքադ. Purantu, Purattu, խեթ. Puratti, Purun (a), Puruna, խուռ. Puranti, Uruttu. Որոշ արևելագետներ կարծում են, որ խեթ. արձանագրություններում գետի միջին կամ վերին հոսանքը կոչվել է Mala (OGHT, 537)։

Հայկական Եփրատ ձևը, ըստ երևույթին, ծագում է հունական Εὐφράτης-ից, որն իր հերթին իրան. hu-pərətwa-ի «լավ, հարմար գետանց, անցում» հունականացած ձևն է (հ.-ե.* su- «լավ»·հ.-ե. *pr̥to- «անցք, անցում», Pok., 817) կամ իրան. pərətwa<աքքադ. Purattu (<շում. Buranun/Burunun) վերաիմաստավորմամբ իրանական միջավայրում. Հարկ է նշել, սակայն, որ աքքադական և շումերական անունները այդ լեզուներով բավարար ստուգաբանություն չունեն (տե՛ս Eilers, 1982, 30)[48]։

---

48 Թ. Գամկրելիձեն և Վ. Իվանովը հ.-ե. *reudh- «հանք, պղինձ, կարմիր» բառը համարում են շում. urudu (<նախաշում. *burudu) «պղինձ» բառի փոխառյալ ձևը։ Ըստ նրանց, նախաշումերական ձևն էլ ընկած է մեր գետանվան հիմքում, քանի որ այս գետն էր պղնձի հայթայթման գլխավոր ուղին (Гамкрелидзе, Иванов, 712, 876)։ Նման բացատրությունը, մեր կարծիքով, համոզիչ չէ։ Նախ՝ շումերները (նաև նախաշումերները) պղինձը ներմուծում էին Հայկական լեռնաշխարհից (Միջագետքում պղնձի հանքեր չեն եղել, և տեղաբնիկներին պղինձը անծանոթ էր), ուստի առարկայի հետ մեկտեղ նրանք պետք է ներմուծեին (փոխ առնեին) նաև անունը. այսինքն, եթե ծագումնային կապ կա շում. urudu (<նախաշում. *burudu) և հ.-ե. *reudh- ձևերի միջև, ապա այն կարող է լինել միայն հ.-ե.>շում. և ոչ հակառակը։ Երկրորդ՝ գետանվան հնագույն շում. Buranun/Burunun ձևերը տարբերվում են նախաշում. *burudu-ից n∼d հարաբերությամբ։ Իհարկե, այս երևույթը կարելի էր բացատրել որևէ հնչյունական օրենքով, ինչպես, ասենք, ատամնային պայթականի ռնգայնացումով և այլն, սակայն եթե նախաշում. *burudu > շում. urudu բառասկզբի b-ի անկումով, ապա ինչո՞ւ burudu>Buranun նույն b-ի պահպանումով։ Մենք ենթադրում ենք, որ գետի շումերական և աքքադական անունները փոխառություն են հ.-ե. *per- «այն կողմն անցնել» արմատի -to- կամ -no- ածանցով կազմված ձևերից։ Այս առումով ուշագրավ է այս արմատի դրսևորումը (առանց ածանցի) ավ. pāra «ափ, սահման, վերջ» բառում, որը թույլ է տալիս հ.-ե. արմատում տեսնել նաև «սահման» իմաստը։

ԻՌԻՍ — Գետ Փոքր Հայքի և Պոնտոսի տարածքում։ Այժմ՝ Եշիլ ըրմաք (թուրք. «կանաչ գետ»)։ Գետանունը մեկ անգամ վկայված է «Աշխարհացույցում» (Խոր., 602)։

Կարծում ենք, ուշադրության է արժանի գետանվան և հուն. ἶρις «ծիածան» բառի (որից և Ἶρις դիցանունը, որպես ծիածանի անձնավորում) նմանությունը։ Վերջինս բխեցվում է հ.-ե. *uei- «պտտել, ծռել» արմատից *-ro- ածանցով (Pok., 1122)։ Կարելի է ենթադրել, որ գետանունը ևս այս արմատի որևէ ածանցյալ է։ Գետն իրոք նախ հոսում է արևմուտք, ապա միախառնվելով Գայլ (Լյուկոս, Քելքիթ) գետին, կտրուկ շրջադարձ է կատարում դեպի հյուսիս, այսինքն «պտտվում է, ծռվում»։ Թերևս Իռիս անունը բնիկ հին անվան հունականացած ձևն է կամ թարգմանությունը։

ԽԱԲՈՐ — Եփրատի ձախակողմյան վտակներից մեկը Հյուսիսային Միջագետքում։ Սկիզբ է առնում Մարդինի (Մասիոն) լեռներից։ Գետանունը վկայված է «Աշխարհացույցում» (ԵՀԱ., 113)։ Հունական աղբյուրներում վկայված է Χαβαρών, 'Αβώρ ձևերով (Ստրաբոն)։ Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ, ըստ երևույթին հունարեն բնագրի ազդեցությամբ, գետանունը վկայված է թե Քաբովր, թե Աբովր ձևով։ Այժմ՝ Խաբուր, նաև Արևմտյան Խաբուր, տարբերելու համար Տիգրիսի համանուն վտակից, որը կոչվում է Արևելյան Խաբուր։ Աքքադական աղբյուրներում վկայված է մ. թ. ա. X դարից Ḫabūr (Parpola, 1970).

Գետանունը, մեր կարծիքով, ծագումնաբանորեն առնչվում է Ḫabḫi երկրանվանը. այս երկիրը ըստ աքքադական աղբյուրների տարածվում էր այսօրվա երկու Խաբուրների միջագետքում։ Երկրանվան և գետանվան համեմատությամբ կարելի է առանձնացնել ḫab հիմքը և -ḫi ածանցը երկրանվան մեջ (հմմտ. այդ ածանցը Հայկական լեռնաշխարհի բազմաթիվ տեղանուններում), -ur ածանցը (?!) գետանվան մեջ։ Ի դեպ, թերևս նման հարաբերություն (գետանուն/երկրանուն) կարելի է դիտել նաև խեթ. TUL Šamura (այժմյան Սամուր գետն է կամ նրա ակունքը Եփրատի ավազանում, ոչ հեռու Խաբուրից) և URU Šamuḫa (քաղաք, որի տեղորոշումը հստակ չէ), (OGHT, 546, 338—341)։ Խաբոր գետանվան ստուգաբանությունը պարզ չէ։ Կարելի է ենթադրել խուռիական ծագում։

ԽՈԶՄՈՐ — *Մեծամորի վտակներից մեկը կամ, թերևս, նրա ակունքը։ Վկայված է միայն մեկ անգամ* (ՆՀԱ, *111*)։

Գետանունը կցական բարդություն է, կազմված է հայ. խոզ (*կենդանին*) *և* մor *«ճահիճ»* (*<հ.-ե.* *məu·ro) *բառերից։*

**ԾՂՈՒԿ, *ԾՂԿՈՑ ԳԵՏ* — *Գետանունը չի վկայված։ Վերականգնվում է ըստ «Աշխարհացույցի»* (ՆՀԱ, *109*)*։ Հավանաբար այսպես է կոչվել Որոտանի վերին հոսանքը՝ Ծղուկ գավառի տարածքում։ Պետք է ենթադրել, որ առաջնայինը գավառանունն է, որը վկայված է մ. թ. ա. VIII դարի ուրարտական արձանագրության մեջ* ^{KUR}Şuluqu *ձևով* (Арутюнян, *1983, 215*)*։ Տեղանվան ծագումն անհայտ է։*

**ԾՈՔ, *ԾՈՔԱՅ ԳԵՏ* — *Կուրի աջակողմյան վտակներից մեկը։ Այժմ՝ Շուլավեր։ Գետանունը չի վկայված։ Վերականգնվում է ըստ «Աշխարհացույցի» հաղորդման* (ՆՀԱ, *104, 110*)*։*

Ծոք *տեղանունը որևէ ստուգաբանություն չունի։ Մինչև իսկ դժվար է որոշել տեղանվան փոխանցման ուղղությունը՝ գետանուն, գավառանուն և շենանուն։*

ԾՈՎԱԿ ՀԻՒՍԻՍՈՅ — *Այժմ՝ Չըլդըր լիճ։ Լճի անունը վկայել է Մ. Խորենացին* (*Խոր., 109*)*։*

Լճանունը բաղադրյալ է, կազմված է հայ. ծովակ *«լիճ» և* հիւսիսի *«հյուսիս» բառերից՝ վերջինը սեռական հոլովով որոշիչ է. անունը որոշիչ-որոշյալ կառուցվածքի բառակապակցություն է։*

ԾՈՎՔ ԼԻՃ — *Ծոփաց աշխարհի լիճը, այժմ՝ Գյոլջուք։ Հայկական լեռնաշխարհի խոշոր լճերից մեկն է։ Վկայել է առաջին անգամ «Աշխարհացույցը»* (ՆՀԱ, *103*)*։*

Տեղանունը կազմված է հայ. ծով *բառից հոգնակերտ* -ք *ածանցով։ Թերևս այն ծագումնաբանորեն առնչվում է Ծոփք երկրանվանը, ուր.* ^{KUR}Şupani, *հուն.* Σωφηνή.

ԿԱՊՈՒՏԱՆ ԾՈՎ — *Հայկական լեռնաշխարհի խոշորագույն լիճը։ Այժմ՝ Ուրմիա։ Ստրաբոնը լիճն անվանում է* Μαντιανή *և մեկնաբանում է կապույտ* (*Ստրաբոն, 11, 14,8*)*։ Լճանունը իրանական է, իր.* kapōt *«կապույտ» բառից։*

ԿԱՐՆՈՅ ԾՈՎ — *Այս տեղանունը մեկ անգամ վկայել է Ղազար Փարպեցին* (*148*)*։ Հավանաբար նույն Շամբ Կարնոյ ճահճուտն է։ Կազմված է* Կարին *տեղանունից* (*սեռական հոլովով*) *և հայ.* ծով *բառից։*

*ԿՈՂԲ, *ԿՈՂԲԱՅ ԳԵՏ — Կուրի աջակողմյան վտակ Գուգարքում. Կողբոփոր գավառի համանուն գետն է։ Վկայված չէ մատենագրության մեջ։ Վերականգնվում է ըստ «Աշխարհացույցի» (ՆՀԱ, 104, 110)։

Կողբ տեղանունը հանդիպում է նաև Այրարատի տարածքում Երասխի ձախ ափին (մինչև Ախուրյանի հետ խառնվելը) Երասխաձոր—Արշարունիք գավառում որպես բնակավայրի անուն։ Կարծում ենք երկու տեղանուններն էլ միևնույն ծագումն ունեն և կարող են առնչվել հ.-ե. *gelb(h)- «սեղմել, հավաքել» (Pok., 367) արմատին, այդ դեպքում գետանունը, ըստ երևույթին, պետք է առաջացած լինի շենանունից կամ գավառանունից՝ փոխանցմամբ, այնուհետև գետանունից (կամ շենանունից) կազմվել է Կողբոփոր գավառանունը։

*ԿՈՎՍԱԿԱՆ, *ԿՈՎՍԱԿԱՆ(Ի) ԳԵՏ — Հավանաբար Երասխի ձախակողմյան վտակ Աղանոյ (Հագարու) գետի ստորին հոսանքի անունն է Սյունիքի Կովսական գավառում։ Վերականգնում ենք ըստ «Աշխարհացույցի» հաղորդման (ՆՀԱ, 109)։ Առաջնայինը պետք է գավառանունը լինի, ինչպես ցույց է տալիս -ական ածանցը, որը կազմում է երկրանուններ և շենանուններ. հմմտ. Ատրպատական, Մառական, Խերական և այլն։

Տեղանունը, թերևս, իրանական ծագում ունի։

ԿՈՐԴՈՒԱՅ ԳԵՏ — Գետ Արևելյան Տիգրիսի ավազանում։ Մեկ անգամ վկայված է Փ. Բուզանդի պատմության մեջ (220)։

Գետանունը հատկացուցիչ-հատկացյալ կառուցվածքի բաղադրյալ անուն է, կազմված է գավառանունից (Կորդուաց) և գետ բառից։

ԿՈՒՐ — Առաջավոր Ասիայի խոշոր գետերից մեկն է։ Հայ մատենագրության մեջ վկայված է V դարից սկսած։ Անտիկ աղբյուրներում՝ Κῦρος, վրացական՝ Mtkuari։

Կուրի ակունքները գտնվում են Տայքի Կող գավառում։ Իր վերին հոսանքում Կուրը հոսում է խոր ձորերով ու կիրճերով։ Այս հանգամանքը, թերևս, կարող է գետանվան ստուգաբանության հիմք դառնալ։ Այն կարող է հ.-ե. *$g^{u}er$-- «կուլ տալ, կոկորդ, երախ» (Pok., 474) արմատի արտացոլումը լինել։

*ՀԱԲԱՆԴ, *ՀԱԲԱՆԴԱՅ ԳԵՏ — Վերականգնվում է ըստ «Աշխարհացույցի» հաղորդման (ՆՀԱ, 109)։ Հավանաբար Որոտան գետի ձախակողմյան որևէ վտակի անունն է այժմյան Գորիսի շրջանի տարածքում։

Տեղանունը (գավառանո՞ւնը) իր -անդ (-բանդ) հանգով հարում է **Վանանդ, Մարանդ, Բագրևանդ, Ջարևանդ, Աղանդ(ռոտ)** անուններին։

Առաջնային տեղանվան հարցը քննելի է։ Տեղանունը, թերևս, իրանական ծագում ունի։

ՀՐԱԶԴԱՆ — Երասխի ձախակողմյան վտակ։ Հնում այն խառնվում էր Մեծամորին։ Գետանունը վկայված է երեք տարբերակով՝ Հրազդան (Խոր., 42, 121), Հուրազդան (Սեբ., 47), Հուրաստան (Դրասխ., 114, Ուռհայեցի, 88)։ Ըստ երևույթին ճիշտ է Հրազդան (<Հուրազդան) ձևը, որն այժմ պաշտոնական ճանաչում է գտել։ Ուշ միջնադարում կոչվել է Զանգի, Զանգու, որ շարունակում է գոյատևել ժողովրդախոսակցական լեզվում։

Գետանունը, հավանաբար, իրանական ծագում ունի. երկրորդ բաղադրիչը իրան. dānu- «գետ» բառն է, որ հանդիպում է մի շարք գետանուններում՝ Դոն, Ալդոն, Դնեպր, Դնեստր, Դանուբ և այլն։

Առաջին բաղադրիչն այս դեպքում կարելի է համեմատել իրան. frač- «վերև, կից» բառին, որով գետանունը կմեկնաբանվի որպես «Վերին գետ»։

*ՁՈՐ, *ՁՈՐՈՅ ԳԵՏ, *ՁՈՐԱԳԵՏ — Կուրի աջակողմյան վտակներից մեկը Գուգարքում։ Ձորափոր գավառի համանուն գետն է։ Վերականգնում ենք ըստ «Աշխարհացույցի» (ԵՀԱ., 104, 110)։ Այժմ՝ Ձորագետ (→Փամբակ→Դեբեդ)։

Տեղանունը հայ. ձոր (<հ.-ե. *g'hou̯-oro-) (Джаукян, 1983, 71) բառից է կազմված։ Թերևս առաջնայինը գավառանունն է (հմմտ. Սյունիքի Ձորք գավառի անունը)։ Սակայն բացառված չէ նաև առաջնային գետանվան հնարավորությունը (*Ձոր գետ→Ձոր գավառ → Ձորափոր)։

*ՁՈՐՈՅ ԳԵՏ — Հավանաբար Որոտանի վտակ Ողջի գետի վերին հոսանքի կամ Գեղի գետի անունն է։ Հայ մատենագրության մեջ չի վկայված։ Վերականգնվում է ըստ «Աշխարհացույցի» հաղորդման (ԵՀԱ., 109)։ Առաջնայինն այստեղ գավառանունն է, -f հոգնակերտը, որ մեծ տարածում ունի տարաբնույթ տեղանուններում՝ գավառանուններում, լեռնանուններում, շենանուններում, բացակայում է ջրանուններում։ Հմմտ. նախորդ հոդվածը։

*ՃԱԿԱՅ ԳԵՏ — Այսպես պետք է կոչվեր, ըստ «Աշխարհացույցի» Տայքի Ճակք գավառի համանուն գետը (ԵՀԱ., 110)։ Ճակf տեղանվան ծագումն անհայտ է։ Թերևս կազմված է ցեղանունից (-f հոգնակերտ ածանցով), որը նախ անցել է գավառին, ապա՝ գետին։ Բոլոր դեպքերում գետանունը երկրորդային է։

*ՃԱՀՈՒԿ, *ՃԱՀԿՈՅ ԳԵՏ — Գետանունը աղբյուրներում չի վկայված։ Վերականգնում ենք ըստ «Աշխարհացույցի» հաղորդման (ԵՀԱ, 109)։ Այժմյան Ջաղրիչայ գետն է (Նախիջևանի ԻնՍՀ-ում), որի Ջաղրի-ն հին Ճաճուկ.-ոյ գետ անվան աղավաղումն է։ Նախիջևանի գետի (Նախճաւանի գետի) աջակողմյան վտակն է Սյունիքի Ճահուկ գավառում։

Տեղանունը, թերևս, հայ. ճաճուկ «խումբ, ջոկ» բառի (ծագումն անհայտ) տեղանվանացումն է. հմմտ. Մոկք Առանձնակ (գավառ Մոկսում), Ուտի Առանձնակ (գավառ Ուտիքում), (ԵՀԱ, 108, 109)։

ՃՈՒԱ(Ր)ՇՌՈՏ — Վասպուրականի գավառներից մեկն է։ Տեղորոշվում է այժմյան Կոտոր գետի (հնում Կարմիր գետ) ձախ վտակ Ակչայի ընդարձակ հովտում։ Հավանաբար այսպես է կոչվել Ակչայը հնում, ինչպես թելադրում է գավառանվան երկրորդ բաղադրիչը, որն իրան. *rōt «գետ» բառն է։ Թվում է, թե գավառանունը գետանունից է առաջացել, սակայն իրականում փոխանցման ուղղությունը պարզ չէ։ Աղբյուրներում վկայված Ճուաշ գավառ ձևն ավելի է խճողում վիճակը։ Կարելի է նշել փոխանցման հետևյալ հավանական ուղղությունները. ա) գավառանուն→ գետանուն՝ Ճուաշ գաւառ → Ճուաշ գետ, պրս. Ճուաշռոտ, որից հետադարձ՝ գավառանուն՝ Ճուաշռոտ գետ→Ճուաշռոտ գաւառ. բ) գետանուն→գավառանուն՝ Ճուաշ → Ճուաշ, ապա նույնանուն օբյեկտների տարբերակում համապատասխան տերմիններով՝ Ճուաշ գետ/ռոտ ~ Ճուաշ գաւառ, վերջապես՝ բաղադրյալ գետանուն→գավառանուն՝ Ճուաշռոտ գետ→Ճուաշռոտ գաւառ։

Ճուաշ անունը չի ստուգաբանված։ Սակայն ռոտ բաղադրիչը, կարծեք, հուշում է իրանական աղբյուր։ Թերևս այս նույն անվան կամ բառի չբմայնացած սկզբնահնչյունով տարբերակն է Կուաշ ձևը, որ պահպանվել է հայ. Կուաշ (գյուղ Արագածոտնում, այժմ Կոշ Աշտարակի շրջանում) տեղանվան մեջ։ Արդյո՞ք նույն ծագումը չունի նաև հայ. Կուառս (<*Կուառք) տեղանունը Տարոնում։ Եթե ծագումնաբանական կապ կա այս անունների մեջ, և եթե Ճուաշ-ը իրանական է (հմմտ. նաև Ճուարշ ձևը), ապա Կուաշ (<*Կուարշ) և Կուառ- (-ս-ն հայերենի հոգնակի հայցականի ցուցիչն է) ձևերը չեն կարող հայկական լինել (ճ ~ կ հարաբերությունն իրանական է, տեղաշարժ չկա)։

ՄԱՄՈՒՇԵՂ — Այս գետանունը, որ մեկ անգամ վկայված է Փ. Բուզանդի պատմության մեջ (221), դեռևս չի տեղորոշված։ Հավանաբար Եփրատի միջին հոսանքում կամ Արևմտյան Տիգրիսի ավազանում որևէ գետ է։

Գ. Ջահուկյանը (բանավոր հաղորդմամբ) համեմատում է հայ. մա-

մուռ և բարբ. մամշել «բորբոսնել» բառերի հետ։ Ըստ այսմ գետանունը կարող է նշանակել «մամռոտ»՝ *մամուշ «մամուռ»+-եղ (հայ. ունակական ածանց)։

ՄԱՆԱՆԱՂԻ — Արևմտյան Եփրատի ձախակողմյան վտակ համանուն գավառում (Բարձր Հայք)։ Մեկ անգամ վկայված է XI դարում (Լաստ., 158)։

Տեղանունն իր -աղի հանգով (ածանցով) հարում է այդ տարածքի Դարանաղի, Մարդաղի, Եկեղի(ք), (<*Եկիաղի) գավառանուններին։ Ն. Ադոնցը, մերժելով -աղի ածանցի առնչությունը հայ. աղ բառի հետ, որպես ժողովրդական ստուգաբանություն, ենթադրում է, որ այն առնչվում է վրաց. -eli և հայ. -եղ ունակական ածանցներին։ Ըստ այդմ էլ հիշյալ գավառանունները բացատրում է որպես Մարդ-ային, Ման(ան)-ային, Դարան-ային, Եկի-ային. իսկ գավառանունների առաջին բաղադրիչները դիտում է որպես ցեղանուններ (Адонц, 1908, 56)։

Գ. Ղափանցյանը ընդունելով -աղի ածանցի՝ Ն. Ադոնցի մեկնաբանությունը, իր հերթին առաջարկում է մի նոր, այն է՝ ցեղանվանակազմիչ նշանակություն, հայ. ացի, -եցի ածանցին համազոր (Капанцян, 1956, 443—446)։ Կարելի է ավելացնել նաև, որ այս ածանցում կարելի է տեսնել նաև ուր. -li հոգնակերտը։

Մանանաղի տեղանվան առաջին բաղադրիչը՝ մանան- (ման-. ըստ Ն. Ադոնցի ճիշտ է Մանաղին, իսկ Մանանաղին առաջացել է Դարանաղիի ազդեցությամբ, Адонц, 46—56) հակված ենք դիտել հ.-ե. *mano-/*ni- «թաց, խոնավ» ձևի արտացոլում, ինչպես՝ լատ. mānō,—āre «հոսել», բրետ. mān «քարաքոս, ծառաքոս, մամուռ», կիմր. mawn «տորֆ», հոլ. mōin «մամուռ, ճահիճ, տորֆ», հ.-ե. այս նախաձևի արտացոլումներն են -mannia, -mennia ձևույթները գետանուններում և շենանուններում (Pok., 699—700)։

Տեղանվան հիմքի նման մեկնաբանությունից հետո -աղի ածանցը կարելի է դիտել որպես հ.-ե. *-lo- և *-ii̯o-ածանցների միացում։ Հ.-ե. *-lo- ածանցը հանդիպում է Բալկանների և Փոքր Ասիայի մի շարք տեղանուններում (Гиндин, 1967, 76)։ Ըստ այսմ, տեղանվան համար կարելի է վերականգնել *mānə-lii̯o- նախաձևը «ճահճային» իմաստով։ Հմմտ. այս կապակցությամբ հայկական աղբյուրների Ճամբ Կարնոյ տեղանունը։

ՄԵԼԱՍ — Գետ Կապադովկիայում (Խորենացի, 1865, 603)։ Տեղո-

բուշումը հստակ չէ։ Թերևս Եփրատի աջակողմյան վտակներից մեկն է։ Արդյո՞ք խեթական արձանագրությունների Mala գետն է։ Ամենայն հավանականությամբ Մելասը գետի տեղական անվան հունականացած ձևն է։ Գետանունը, կարծում ենք, ծագում է հ.-ե. *mel- «կեղտոտ, տհաճ գույն, կեղտոտել» արմատից (Pok., 720—721, հ.-ե. այս արմատի ածանցյալները հ.-ե. պատմական լեզուներում տե՛ս ստորև ՄԵՂ հոդվածում)։

ՄԵԾ ԳԵՏ, ՄԵԾԱԳԵՏ — Ախուրյանի խոշոր վտակներից մեկն է, ըստ երևույթին, Պաղակացիս (Ջըլդըր) լճից սկիզբ առնող գետն է՝ մինչև Կարսագետի հետ խառնվելը[49]։ Գետանունը վկայված է երկու անգամ։ Խորենացու վկայության մեջ այն բաղադրյալ անուն է՝ «որոշիչ-որոշյալ» կառուցվածքի։ «Աշխարհացույցում» այն բարդ բառ է։ Կազմված է հայ. մեծ (<հ.-ե. *meg´a-) և գետ (<հ.-ե. *u̯edo-) բառերից։

ՄԵԾ ՄՈՐ — Այս գետանունը մեկ անգամ վկայել է Մ. Խորենացին։ Թերևս այն Կարսագետի (հին Ախուրյան գետի) միջին հոսանքի անունն է, և կամ Պաղակացիս (Ջըլդըր) լճից սկիզբ առնող գետը։ Գետանունը բաղադրյալ է՝ «որոշիչ-որոշյալ» կառուցվածքի. կազմված է հայ. մեծ (<հ.-ե. *meg´a-) և մոր (<հ.-ե. *məuro-) «ճահիճ», թերևս նաև «գետ» բառերից։

ՄԵԾԱՄՈՐ — Երասխի ձախակողմյան հզոր վտակներից մեկը։ Գետանունը վկայված է V դարից (Խոր., 176)։ Նախորդ կապակցությունից կազմված բարդ անուն է։

ՄԵՂ — Արածանի-Եփրատի ձախակողմյան վտակն է Մշո դաշտում (Տարոնում)։ Գետանունը վկայված է մեկ անգամ (ՑՀԱ., 107)։ Այժմ՝ հայ. Մեղրագետ, թուրք. Կարասու։

Մեր գետանվան հետ համեմատելի են բալկանյան-փոքրասիական տարածքի Μελας (գետեր Բեովտիայում, Թեսալիայում, Թրակիայում, Պամփյուլիայում, Սիցիլիայում), Μελης (Զմյուռնիայի մոտ), Mella (Պո գետի ավազանում, Հյուսիսային Իտալիա, Բրեշա քաղաքի մոտ), գե-

49 «... Վանանդ եւ Շիրակ, ի հիւսիսի, յորոց եկեալ գետն Ախուրեան՝ հանդերձ Մեծագետովն» (ՀԱ, 110)։ Քանի որ Ախուրեանը հնում Կարսագետի անունն էր, ուրեմն Մեծագետը այժմյան Ախուրյանի վերին հոսանքի անունն է։ Խորենացին ևս ծանոթ է այս գետանունը. «(Վաղարշակ) զափամբ Մորին Մեծի բանակի ի տեղւոջ, ուր Գետն Մեծ ի ծովակէն Հիւսիսոյ սկիզբն առեալ իջանէ և խառնի ի Մորն Մեծ» (Խոր., 109)։

տերի անունները: Խեթական արձանագրություններում վկայված է Mala գետանունը, որը ուսումնասիրողներից ոմանք համարում են Եփրատի միջին հոսանքի, ուրիշները՝ Տիգրիսի վտակ Բիթլիս-սուի հին անունը: «Աշխարհացույցը» Առաջին Կապադովկիայում նշում է Մելաս գետը (Խոր., 603): Արդյո՞ք խեթ. Mala-ն այս գետն է, թե՞, թերևս, Արևմտյան Եփրատը, որն այժմ կոչվում է Կարասու: Կարելի է ենթադրել նաև, որ խեթ. գետանունը մեր Մեղ գետին է առնչվում:

Բալկանյան-փոքրասիական տարածքի բերված զուգահեռ ձևերը խորհել են տալիս գետանվան համար որոնելու հ.-ե. աղբյուր: Կարելի է նշել հ.-ե. *mel- «գույների, հատկապես մուգ, կեղտոտ, տհաճ երանգների նշանակությամբ, կեղտոտել, կեղտոտ», որից հնդ. maliná- «կեղտոտ, սև», mlāna «սև, մուգ», հուն. μέλας, -αινα, -αν «սև», μίλτος «կարմիր կավ, սանգինա», μύλλος (ձկան տեսակ), լատ. mulleus «կարմրավուն, պուրպուր գույնի», ռուս. малина «մոշ, մորի» և այլն (Pok., 720—721):

ՄԵՂՏԵԱՅ ԳԵՏ, ՄԵՂՏԻ — Գետ Տարոնում, Արածանու ավազանում: Այս գետանունը հիշում է միայն Հ. Մամիկոնյանը (23, 32), սակայն նա չգիտե Մեղ գետը: Թերևս նույնն է Մեղ գետի հե՞տ: Գետը համանուն է Տարոնի Մեղտի ավանին, որը սակայն գտնվում է Արածանու աջ ափին, այդ դեպքում Մեղտի կամ Մեղտեայ գետը կարող է այլ գետ լինել:

Տեղանունն, ըստ երևույթին, հարում է նախորդ գետանվանը՝ -տի ածանցով: Այս տեղանվանը (գետանուն, շենանուն) իր կազմությամբ հարում է, թերևս, նաև Կապադովկիայի Մելիտենե, սեպագիր արձանագրությունների Meliṭeia, այժմ՝ Մալաթիա քաղաքի անունը: Մեղտի տեղանվան մեջ -տի ածանցը կարող է ծագել հ.-ե. *-diio-ից (վերջինս հայերենում պետք է դառնար -տի):

ՄՈՒՐՑ, ՄՈՒՐՑԱՄՈՐ — Երասխի առաջին խոշոր աջակողմյան վտակը[50]: Վկայված է V դարից սկսած. ծանոթ է Խորենացուն (199), Սեբեոսին (30), Ասողիկին (50): «Աշխարհացույցը» ավանդում է Մուրց

50 Ըստ աղբյուրների տվյալների (Խորենացի, Սեբեոս, Ասողիկ, «Աշխարհացույց», նաև Պլինիոս Ավագ) Մուրցը խառնվել է Երասխին Այրարատի Բասեան գավառում: Քանի որ հայտնի է, որ Մուրց գետը Կարին քաղաքից հարավ գտնվող Մեղեդուխ լեռներից է սկիզբ առնում, որոնք ըստ «Աշխարհացույցի» հաղորդման Կարինի (Բարձր Հայքում) և Մարդաղիի (Տուրուբերանում) սահմանն էին, ուրեմն Մուրցը նախ պետք

և Մուրցամոր ձևերով (ԾՀԱ., 107, 110)։ Անտիկ հեղինակներից գետանունը ծանոթ է Պլինիոս Ավագին (ՀԺՊՔ, հ. 1, 365)։ Գետանունը, թերևս, բնիկ հայկական է և համեմատելի է Μάρις (Հերոդոտ), Μάρισος (Ստրաբոն), այժմ հունգ. Mureş ռում. Mureşul (Տիսայի ձախ. վտակ Դանուբի ավազանում), Marus (Պլինիոս, Տակիտոս), այժմ չեխ. Morava, գերմ. March (Դանուբի ձախ. վտակ) գետանունների, որոնք բխեցվում են հ.-ե. *meu- «խոնավ, թաց, տղմոտ» արմատից (Georgiev, 331)։ Գետանվան համար կարելի է վերականգնել *mu-r-sko- նախաձևը։ Մուրցամոր անունը բարդված է Մուրց անունից և հայ. մոր «ճահիճ», թերևս նաև «գետ» (°) բառից (մոր բառը հաճախ է հանդիպում Հայկական լեռնաշխարհի գետանուններում, ինչպես՝ Խոզմոր, Մեծամոր, և թերևս նշանակում է որոշ տեսակի գետ)։

ՅՈՀ — Ճորոխ գետի անուններից մեկը, տարբերակ՝ ՎՈՀ (ԾՀԱ., 106, 110)։ Նույնն է հուն. Boas ձևի հետ։ Ստուգաբանությունը պարզ չէ։

ՇԻԹԻԹՄԱ — Արևմտյան Տիգրիսի վտակներից մեկը Աղձնիքում. կոչվում է նաև ՔԱՂԻՐԹ։ Գիտե միայն «Աշխարհացույցը» (ԾՀԱ., 107, 114), որը և նշելով, որ այս գետը Բյուզանդիայի և Պարսկաստանի սահմանն է (VI դարի վերջ), տալիս է անվան թարգմանությունը «որ է արինարբու»։

Այս գետը ևս բազմանուն է. բյուզանդական աղբյուրները կոչում են Νυμφίος: Եթե ճիշտ է Հ. Մանանդյանի՝ Տիգրանակերտի տեղորոշումը, ապա անտիկ աղբյուրներում գետը, ըստ ամենայնի, կոչվել է Parthenios կամ Nicephorius։ Ասորական աղբյուրներում այն կոչվում է Kalaϑ (հմմտ. Քաղիրթ)։

Ն. Ադոնցը ենթադրում է, որ այս անուններից յուրաքանչյուրը վերաբերել է գետի տարբեր հոսանքներին (Адонц, ծան. 1)։ Նա նշում է, որ Մարկվարտը Շիթիթմա անունը բացատրում է արամեերենով իբրև «արյունարբու» šadi + dema։ Ըստ Մարկվարտի գետն այսպես կարող էր կոչվել ժողովրդի կողմից, քանի որ նրա ափերին արյունահեղ պատերազմներ են եղել։

ՈՐԲ — Հավանաբար Արևելյան Տիգրիսի ավազանի գետերից մեկն

է Տուրուբերանից մտներ Այրարատ և ապա խառնվեր Երասխին։ Ըստ այսմ Երասխը հենց այն գետն էր, որ սկիզբ է առնում Մեծրաց լեռներից ու հոսում է դեպի արևելք։ Այսպես է տեղորոշում այս գետերը Ղ. Ալիշանը (ԱԱ, 4)։

է, Մեծ Հայքի Մոկաց աշխարհի Արքայից գավառում։ Միակ հիշատակությունը գտնում ենք «Աշխարհացույցում» (ԵՀԱ, *108)։*

Գետանունը համահնչյուն է հայ. «որբ» *բառին։ Հնարավոր է նաև միևնույն ծագումը, սակայն գետանվան համար հարկ է որոնել այլ իմաստ, թերևս, «արբանյակ», որպես գլխավոր գետի օժանդակ։ Հայ.* որբ *և* արբանյակ *բառերը ծագում են հ.-ե.* orbho- *«որբ» արմատից* (Джаукян, *1983, 91)։*

ՊԱՂԱԿԱՑԻՍ — Այժմյան Չլդըր լիճը։ Լճանունը մեկ անգամ վկայել է Ա. Լաստիվերտցին (13)։ Տեղանվան ստուգաբանությունն անհայտ է։

**ՊԱՐՏԷԶ — Այսպես պետք է կոչվեր, հավանաբար, Տայքի Պարտիզաց փոր գավառի համանուն գետակը* (ԵՀԱ, *110), այժմյան Բարդիզ գետը։*

Գետանունը, թերևս, իրան. *pairi-daēzā *«պարտէզ» բառից է։*

ՋԵՐՄ, ՋԵՐՄԱՅ — Արևմտյան Տիգրիսի վտակներից մեկն է Մոկաց աշխարհի Ջերմաձոր գավառում (ԵՀԱ, *108)։ Գետանունը ծանոթ է նաև Սեբեոսին, որն անվանում է Ջերմայ (52)։*

Գետանունը հայ. ջերմ *(<հ.-ե.* *g^{u}her-mā) *բառն է։*

ՌԱՀ — Գետանունը մեկ անգամ վկայել է Կորյունը. «պատահէին երանելւոյն զափամբ Ռահ գետոյն» (Կորյուն, 54)։

Գետի տեղորոշման հարցում տարբեր կարծիքներ են արտահայտվել։ Մենք հակված ենք ընդունելու Ա. Մնացականյանի տեղորոշումը (Մնացականյան, 1881, 86—93)։ Թերևս ընդունելի է նաև Ռահ անվան համար նրա առաջարկած ստուգաբանությունը՝ Ռահ իրան. Raṇha *(<հ.-ե.* *ros-o- *հմմտ.* Վոլգա *գետի հին անվանումը՝ Պտղոմեոսի* ‘Ρᾶ, *«Աշխարհացույցում»՝ Ռա,* ԵՀԱ, *101)։*

**ՎԱՅՈՑ ՁՈՐ — Այսպես ենք վերականգնում Վայոց ձոր գավառի համանուն գետի անունը* (ԵՀԱ, *109)։ Թերևս այսպես է կոչվել Արփան վերին հոսանքում կամ Եղեգիս գետը։ Տեղանվան բաղադրյալ կազմությունը, հատկացյալի հոգնակի սեռական ձևը, որ ենթադրել է տալիս ուղղական* Վայք*՝ հոգնակերտ-տեղանվանակազմիչ* -ք *ածանցով, հուշում է, որ գետանունը փոխանցված է գավառանունից։* Վայք *տեղանվան ծագումն անհայտ է։ Հավանական է փոխանցումը ցեղանունից։*

ՏՂՄՈՒՏ — Այս գետանունը վկայում է միայն Եղիշեն (116)։ Փարպեցին այսպես է կոչում դաշտը (69)։

Տեղանունը բնիկ հայկական է՝ կազմված հայ. տիղմ (<հ.-ե. dēl-mo-) բառից -ուտ ածանցով։

ՔԱՍԱԽ, ՔԱՍԱՂ — Երասխի ձախակողմյան վտակը, որ սկիզբ է առնում Արագած լեռից, Արարատյան դաշտում միախառնվում է Մեծամորին և այնուհետև՝ Երասխին։ Գետանունը հայտնի է Խորենացուն (Քասախ), (130, 199) և Դրասխանակերտցուն (Քասաղ), (88)։ Ասողիկի միակ վկայությունը Խորենացուց բերված քաղվածքում է (50)։

Կարծում ենք, որ ճիշտ է Քասախ (հնագույն) ձևը, որը, թերևս, բխում է հ.-ե. *k´as- «մոխրագույն» և *ak^u «ջուր» բառերի բարդումից՝ *k´as-ak^u- >Քաս-ախ։ Սակայն հ.-ե. նման նախաձևը այսպիսի զարգացում կարող էր ունենալ միայն կենտումային լեզվոլորտում։ Ենթադրում ենք անատոլիական (խեթա-լուվական) լեզվոլորտը։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՋՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայկական լեռնաշխարհի ջրանունների կառուցվածքային տիպերը հայերենի կաղապարում։ Տեղանուններն ըստ կազմության կարող են լինել բառեր (արմատական, ածանցավոր, բարդ) կամ բառակապակցություններ (նաև նախադասություններ)։ Սակայն նման բաժանում (դասակարգում) հնարավոր է կատարել միայն տեղանունների ոլորտում (տեղանվանագիտության սահմաններում), քանի որ այդ ոլորտից դուրս բոլոր տեղանունները, անկախ իրենց կազմությունից, դիտվում են իբրև մեկ ամբողջական միավոր։

Տեղանուններն իբրև լեզվի բառապաշարի միավորներ ստեղծվում են լեզվական միջոցներով։ Այստեղ ևս գործում են բառակազմական, բառակապակցական, շարահյուսական միևնույն օրենքները, որոնք հատուկ են տվյալ տեղանունն ստեղծած ժողովրդի լեզվին։ Սակայն տեղանունների յուրահատուկ բնույթը պայմանավորում է այդ օրենքների գործառման որոշ սահմանափակումներ։ Այդ սահմանափակումները տարածվում են ինչպես լեզվական միավորների (արմատների, բառերի,

բառակազմական ձևույթների), այնպես էլ այդ միավորների կապակցությունների (բառակազմական, բառակապակցական կաղապարների ու մանրակաղապարների) ընտրության վրա։ Տեղանուններում կարող են հանդես գալ ոչ բոլոր արմատներն ու ածանցները, ինչպես նաև ոչ բոլոր բառակապակցական եղանակները։

Աշխարհագրական որոշակի տարածքի տեղանունները բազմաշերտ են ըստ լեզվական ծագման։ Բնականաբար բացառություն չէ նաև Հայկական լեռնաշխարհը, որը հազարամյակներ շարունակ էթնոլեզվական բարդ գործընթացների թատերաբեմ է եղել։ Ինչպես ցույց է տալիս աշխատանքի նախորդ բաժնում կատարված քննությունը, տարածքի ջրանունները ներկայացնում են ծագումնային մի քանի խումբ։ Ջրանունների կառուցվածքային քննությունը նպատակահարմար ենք գտնում կատարել յուրաքանչյուր ծագումնաբանական շերտի ներսում առանձին, քանի որ տվյալ լեզվական շերտից դուրս տեղանունը անտրոհելի է։

Հայկական լեռնաշխարհի ջրանունները հայերենի կտրվածքում ներկայացնում են կառուցվածքային հետևյալ տիպերը՝ բաղադրյալ անուններ, բարդ անուններ, պարզ անուններ (արմատական և ածանցավոր)։ Քննենք այդ տիպերից յուրաքանչյուրը առանձին։

ա) **Բաղադրյալ ջրանուններ**: Հայկական լեռնաշխարհի բաղադրյալ ջրանուններում հանդիպում են բառակապակցության հետևյալ եղանակները՝ որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ։ Այս անուններում լրացյալի (որոշյալի, հատկացյալի) պաշտոնում հանդես են գալիս **գետ, մոր, ծով, լիճ** բառերը։

Որոշիչ-որոշյալ կառուցվածքի բաղադրյալ անուններում որոշչի պաշտոնում հանդես են գալիս ածականներ (**Մեծ** գետ, **Մեծ** մոր, **Կարմիր** գետ) կամ սեռական հոլովով գոյական որոշիչներ (ծովակ **Հիւսիսոյ**, **Արճեան** լիճ)։ Այս կարգի ջրանունների երկու եզրերն էլ հայերեն (թեկուզ և փոխառյալ) բառեր են, որոնք անկախաբար գործածվել և գործածվում են հայերենում։ Այս անունները մենք համարում ենք հայկական անուններ։

Հատկացուցիչ-հատկացյալ կառուցվածքի բաղադրյալ ջրանուններում հատկացուցչի պաշտոնում հանդես են գալիս այլ տեղանուններ, հիմնականում գավառանուններ (**Կորդուաց** գետ, **Մեղտեայ** գետ, **Բզնունեաց** ծով, **Ռշտունեաց** ծով, **Գեղաքունեաց** ծով)։ Թեև այս տեղանուններից ոչ բոլորն են հայկական, սակայն բառակապակցության եղա-

նակը, լեզվական միջոցները (հատկացուցչի սեռական հոլովի վերջավորությունը) հայերենի իրակություններ են, ուստի և այս անունները ևս դիտում ենք հայկական։

Ի դեպ, թերևս այս կաղապարով է պետք վերականգնել (մենք այդպես էլ վերականգնել ենք) հայկական աղբյուրներում ակնարկված գավառներին համանուն որոշ գետերի անունները՝ *Արեւեաց գետ, *Բաղաց գետ, *Զորոց գետ, *Ծղկոյ գետ, *Հաքանդայ գետ և այլն։

բ) Բարդ ջրանուններ: Համեմատաբար սակավաթիվ են բարդ կազմությամբ վկայված ջրանունները՝ Խոզմօր, Մեծագետ, Մեծամօր, Մուրցամօր: Այս անուններից առաջինը (Խոզմօր) սովորական կցական բարդություն է, եթե, իհարկե, վրիպակի արդյունք չէ՝ առանձին բառերի կից գրություն կամ տպագրություն։ Մեծագետ և Մեծամօր անունները իսկական բարդություններ են (հմմտ. Մեծ գետ, Մեծ մօր բաղադրյալ անունները)։ Մուրցամօր անունը, որ մեկ անգամ վկայված է «Աշխարհացույցում», Մուրց գետի անունն է՝ բարդված մօր բառով (ի դեպ, «Աշխարհացույցը» մեկ այլ տեղում գետն անվանում է Մուրց): Ըստ էության նախկին բացահայտիչ-բացահայտյալ կապակցությունը վեր է ածվել բարդ բառի։ Սա հետաքրքրական երևույթ է, և հիմք է տալիս ենթադրել, որ այլ գետանուններ ևս կարող էին նման կազմություն ունենալ, այսինքն բուն գետանունը բարդված գետ կամ մօր բառով։ Նման (բարդ) կազմություն կարող էին ունենալ նաև գավառներին համանուն որոշ գետեր, ինչպես, օրինակ՝ Զորագետ, որը Զորափոր գավառի համանուն գետի այսօրվա անունն է։ Թերևս այս կաղապարով կարելի է վերականգնել նաև *Ծղկագետ, *Հաքանդագետ և այլն։

գ) Պարզ ջրանուններ: Վերոհիշյալ խմբերից դուրս մնացող բոլոր մյուս ջրանունները, ըստ էության, հայերենի մակարդակում պարզ են։

Երկու ջրանուն վերլուծվում են իբրև ածանցավոր կազմություններ՝ Տղմուտ (հայ. տիղմ+-ուտ), Մամուշեղ (հայ. բարբ. *մամուշ «մամո՞ւռ»+-եղ):

Պարզ ջրանուններից մի քանիսը առնչվում են համապատասխան հայերեն բառերին, այսինքն հայերեն բառերի տեղանվանացումներ են, ինչպես՝ Առուն-առու, Ջերմ-ջերմ, Ազատ-ազատ, Պարտեզ-պարտեզ (վերջին երկու բառերը թեև իրանական փոխառություններ են, սակայն գետանուն կարող էին դառնալ նաև հայկական միջավայրում, ուստի գետանունները կարելի է դիտել հայկական)։

Թվում է, Որբ, Գայլ գետանունները ևս առնչվում են հայ. որբ,

գայլ բառերին։ Առաջին դեպքում, կարծում ենք, ծագումնաբանական ընդհանրություն կա բառի և գետանվան միջև, սակայն իմաստային զարգացման մեկ կողմը, որ հիմք է դարձել բառի տեղանվանացման, հայերենում չի պահպանվել։ Երկրորդ տեղանվան համապատասխանությունը գայլ կենդանու անվանը ընդունվում է շատերի կողմից. մենք հակված ենք այս անվան մեջ տեսնել *գայլ — «գոլ, տաք, ջերմ» արմատը, կամ թերևս *գայլ «ոլոր(ուն)» արմատը, որ հանդիպում է գայլուկ (պատատուկ բույս), գայլիկոն (պտտվելով ծակող գործիք, շաղափող) բառերում։

Հայկական է նաև *Աղաւնի գետանունը։ Աղբյուրներում վկայված Աղաւնոյ գետ ձևն առաջացել է ավելի ուշ՝ գետանվան և աղաւնի թռչնանվան բաղարկության հետևանքով։ Թե գետանունը, թե թռչնանունը միևնույն ծագումն ունեն։

Բնիկ հայկական (հնդեվրոպական) ծագում ունեն մի շարք պարզ գետանուններ, որոնց համապատասխան բառային միավորները հայերենում չեն պահպանվել (Գէն, Մեղ, Մուրց)։

Հայերենի մակարդակում չվերլուծվող (պարզ) ջրանունների մի մասը իրանական ծագում ունի (մենք չենք առանձնացնում իրանական առանձին լեզուները, որոնք կարող են ընկած լինել այս անունների հիմքում)։

Առաջին հերթին իրանական պետք է գիտել ռոտ (<իրան. *rauta- «գետ») բաղադրիչով ջրանունները՝ Աղանդռոտ, Բաղանռոտ կամ Ռոտ ի Բաղա, Ճուաշռոտ (Ճուաշռոտ և Ճուաշ զուգահեռ ձևերի համեմատությամբ թեև առանձնացվում է ռոտ բաղադրիչը, բայց քանի որ այն հանդիպում է միայն այս տեղանուններում, և երբեք չի կիրառվել հայերենում որպես ինքնուրույն բառ, տեղանունները մենք համարում ենք իրանական)։ Աղանդռոտ, Բաղանռոտ, Ճուաշռոտ անունները, ինչպես նաև Հրազդան և Ասպանեն գետանունները իրանական բարդություններ են։ Իրանական ծագում ունեն նաև Կապուտան, Ռահ ջրանունները։

Հանգամանալից պետք է խոսել Եփրատ և Տիգրիս գետանունների մասին։ Երկու անուններն էլ, ըստ երևույթին, հունականացած ձևերն են իրանական անունների /Hufratu>Εὐφράτης, *Tigri/a->Τίγρις/. Սակայն իրանական անուններն իրենց հերթին առավել հին անունների իրանականացած ձևերն են (Purattu > pərətwa > (Hu)fratu, Idiglat >

*Tigra-)։ Ներկա վիճակով գետանունները կարելի է դիտել որպես իրանական։

Աշխատանքի նախորդ բաժնում մի շարք ջրանունների համար առաջարկվել է հնդեվրոպական մեկնաբանություն (այն է՝ հնդեվրոպական ծագում)։ Այդ անունները առայժմ հնարավորություն չունենք առնչակցելու այս տարածքում մեզ հայտնի որևէ հնդեվրոպական լեզվի հետ։ Հայկական և իրանական ցեղերը միակ հ.-ե. տարրը չէին Հայկական լեռնաշխարհում։ Նրանցից առաջ, նրանց հետ միաժամանակ և, թերևս, հետագայում էլ հ.-ե. տարբեր էթնիկական տարրեր ներթափանցել են այս տարածքը (օրինակի համար նշենք, որ մ. թ. ա. III դարում, կրտրելով գրեթե ողջ Եվրոպան արևմուտքից արևելք, Փոքր Ասիա ներխուժեցին գաղատները, կելտական մի ցեղ, որոնք այստեղ, հենց Փոքր Ասիայի կենտրոնում հիմնեցին իրենց պետությունը՝ Գաղատիան)։ Մինչև մ. թ. ա. XII դարը Փոքր Ասիան բնակեցված էր հնդեվրոպական խեթա-լուվական ցեղերով ու ժողովուրդներով։ Բացառված չէ, որ ցեղակից այլ ժողովուրդներ կարող էին լինել նույնիսկ Հայկական լեռնաշխարհի տարածքում։ Բոլոր դեպքերում, ակնհայտ է, որ Հայկական լեռնաշխարհում կարող են լինել ոչ հայկական և ոչ իրանական, բայց կրկին հնդեվրոպական ծագման տեղանուններ։

Մեր կարծիքով, անատոլիական (խեթա-լուվական) կամ ցեղակից լեզվոլորտում են ստեղծվել Երասխ, Ախուրեան, Քասախ գետանունները։ Հնչյունական այն օրենքները, որոնք գործել են այստեղ (մեր առաջարկած նախաձևից մինչև մեզ ավանդված տեղանունը) բնորոշ են ընդհանուր առմամբ այս լեզուներին, մասնավորապես՝ պալայերենին, որը կրողների հայրենիքը տեղորոշվում է ուշ շրջանի Բարձր Հայքից արևմուտք։ (Նշենք, որ Գ. Ջահուկյանը ենթադրում է, որ այս լեզվաճյուղի լեզու կարող է լինել նաև հայասերենը)։

Հ.-ե. ծագում ունեն նաև Մեղտի, Ալիս գետանունները։ Թեև վերջինի հ.-ե. ծագումը ընդունվում էր և նախկինում, սակայն մեր առաջարկած ստուգաբանությունը դժվարացնում է անվան լեզվական առնչակցումը որևէ լեզվի։ Հնարավոր է ինչպես հայկական, նույնպես և այլ հ.-ե. ծագում։

Ջրանունների մի մասը ոչ հ.-ե. ծագում ունի։ Կարելի է նշել Դրկղաք գետանունը, որն ըստ երևույթին շումերական (>աքքադական> արամեական՞) ծագում ունի։ Այն հայ մատենագրության մեջ գործածվել է նույն գետի Տիգրիս անվան հետ զուգահեռ։ Արամեական ծագում

ունի Շիրիմա գետանունը։ Մի շարք ջրանուններ, որոնց ծագումը պարզ չէ, հավանաբար ներկայացնում են խուռի-ուրարտական, կովկասյան, թերևս նաև այլ անհայտ լեզվոլորտներ։

2. Հնդեվրոպական ծագման ջրանունների կառուցվածքային քննություն: Վերջին տասնամյակներին տարբեր տարածքների (մասնավորապես Եվրոպայի զանազան շրջանների) գետանունների ծագումնաբանական և կառուցվածքային ուսումնասիրությունները բացահայտել են հին հնդեվրոպական (որոշ ուսումնասիրողներ անվանում են հնեվրոպական) ջրանվանակազմության եղանակներն ու կաղապարները։ Քանի որ այդ եղանակներն ու կաղապարները ընդհանուր հնդեվրոպական բառակազմական եղանակների ու կաղապարների մասնակի դրսևորումներն են, մենք հակված ենք կարծելու, որ դրանք ընդհանուր էին նաև ջրանվանակազմության ոլորտում։

Փորձենք պարզել, թե արտահայտվա՞ծ են արդյոք հ.-ե. ջրանվանակազմական կաղապարները հայերենում և ինչ չափով։

Հնեվրոպական (այսինքն՝ հին հնդեվրոպական) ջրանվանակազմության խնդիրները առավել համգամանալից քննել է Հ. Կրահեն։ Ամփոփելով նախորդ հետազոտողների և իր նախկին աշխատանքների արդյունքները՝ «Հին եվրոպական ջրանունների կառուցվածքը» աշխատանքում նա ներկայացնում է հնդեվրոպական ջրանվանակազմության եղանակներն ու կաղապարները։

ա) Արմատական ջրանուններ.

Մաքուր արմատից ջրանունները կազմվում են -a կամ -o- հիմքակազմ ձայնավորի միջոցով. վերջինս հանդես է գալիս -os (սիգմայացված) ձևով։ Հ. Կրահեն նշում է, որ -a հիմքով ջրանունները հանդիպում են Եվրոպայի հյուսիսային շրջաններում (Ֆրանսիա, Գերմանիա, Լեհաստան և այլն), իսկ -os հիմքով ջրանունները՝ հարավում (Ապենինյան և Բալկանյան թերակղզիներ)։ Օրինակներ՝

-a հիմքով՝ Ava, Drava, Kara, Sara, Sava Vara, Vera և այլն։

-os հիմքով՝ Avos, Dravos, Karas, Saros, Savos, Varos և այլն։

Հայերենում շեշտի ազդեցությամբ վերջին վանկերի կորստյան պատճառով Հայկական լեռնաշխարհի տեղանունների վանկերը ևս կորել են։ Շատ դեպքերում անհնար է որոշել տեղանվան հիմքակազմ ձայնավորը։ Այս բնույթի ջրանուններ են Հայկական լեռնաշխարհում՝ **Մեղ** (<հ.-ե. *mela/o-), Ռահ (<իրան. Raṇha< հ.-ե. *rasa-)։

ր) Ածանցավոր ջրանուններ.

Այս կազմություններում ևս ջրանունը վերջնականապես ձևավորվում է -a *կամ* -o- *հիմքակազմ ձայնավորով, որին նախորդում է հնդեվրոպական որևէ պարզ (միակազմ) կամ բաղադրյալ (երկկազմ կամ եռակազմ) ածանց։*

Հնդեվրոպական ջրանուններում հանդիպում են հետևյալ ածանցները.

-i-: Avia, Salia, Sarios, Varia, Alia, Palia, Eisia, Aisia.

-u-: Alava, Arva, Arvos, Argua, Saravos.

Այս ածանցները կարող են հաջորդել մեկ այլ ածանցի՝ նախորդելով հիմքակազմ ձայնավորին, այսինքն, ըստ էության, -ia, -ios, -ua (-ava), -uos (-avos) *բաղադրյալ ձևույթները ներկայանում են իբրև հիմքակազմ։ Այսպիսով, հնդեվրոպական ջրանուններում հանդիպում են հետևյալ հիմքակազմ վերջավորությունները* -a, -o-, -ii̯a, -ii̯o-, -u̯a, -u̯o-, *որոնք հաջորդելով ածանցին կազմավորում են ջրանունը։*

-m-: Alma, Almos, Arma, Auma, Salma, Serma, Sermos *և այլն։ Հայկական լեռնաշխարհում այս ածանցը հանդիպում է* Գեղամայ *ծով բաղադրյալ անվան առաջին բաղադրիչում՝* Գեղամայ (<Հ.-ե. *uelәma-?), *թերևս այս նույն կազմությունն ունի նաև* Ուրմիա *լճանունը, հնդիրանական լեզուներին բնորոշ Հ.-ե.* *-l->-r- *անցումով։*

-n-: Alna, Alnos, Avena, Dravina, Dravonus, Sorna, Sarnos, Savina, Varina *և այլն։*

Հայկական լեռնաշխարհի հետևյալ ջրանուններում, մեր կարծիքով, առկա է այս ածանցի (հիմքակազմ զանազան վերջավորություններով) խրտացոլումը՝ Ախուրեան (<*ak^{u}rii̯a-n (o)-), Արածանի (<*arәg′-nio-), Աղաւնի (Աղաւնոյ գետ *անվան առաջին բաղադրիչը.* <*alәu-nio-), Սռուն (<*sreu-no-):

-r-: Alara, Aura, Avara, Salara, Savara, Vararos, Visera *և այլն:*

Մեր կարծիքով, այս ածանցը առկա է Ախուրեան *գետանվան մեջ, սակայն ոչ վերջընթեր դիրքում, այլ նախավերջընթեր դիրքում* (?) (<*ak^{u}-rii̯a-(no).

-l-: Albula, Eisla, Arla *և այլն։*

Այս ածանցը հանդիպում է Գայլ (<*uәi-lo), *թերևս նաև* Մանաղի (<*manә-lio-?) *անուններում։*

-s-: Alisa, Ausa, Avesa, Avisos, Karisa, Karisia, Karusios, Salusia, Varisa, Visusia *և այլն։*

Հ.-ե. ածանցը միջձայնավորային դիրքում (հայկական լեզվոլորտում) պետք է վերածվեր **ճ**-*ի կամ կորչեր։ Այս ածանցի արտացոլումները գտնելը այս իմաստով բավական դժվարանում է։*

-k-: Arika, Salika, Sarka, Varika *և այլն։*

*Մեր քննած ջրանուններում այս ածանցը, թերևս, հանդիպում է Բողխա (<**bhol-ko-*), Գեղաքունի (**<uelə ko (nio)) *տեղանուններում։*

-t-: Aista, Aiseta, Druta, Drutos, Salotas, Sarta, Vareta *և այլն։*

Հ.-ե. այս ածանցը հայկական լեզվոլորտում կարող էր վերածվել յ-ի կամ ւ-ի։ Մենք դժվարանում ենք այս ածանցի արտացոլումներ նշել։

-nt- (*բաղաձայնական ածանց է*): Alanta, Alantia, Avanta, Avantia, Salantas, Salantia, Savintia, Taranta, Visantia, Visentios, Varantia *և այլն։*

Այս ածանցը հանդիպում է հետևյալ տեղանուններում (բաղադրյալ ջրանունների կազմում)՝ **Բագրեւանդ** (<*bhograu̯-ento- **Աղանդ** (<*ala-nta-*), թերևս նաև* **Հարանդ** (<*Hapa-nta*), հմմտ.* **-անդ** *հանգով մյուս տեղանունները ևս)։*

-st-: Alesta, Karista, Savistas.

Հայկական լեռնաշխարհի ջրանուններից մեկում (որպես բաղադրյալ անվան տեղանվան լրացում) հանդիպում է հ.-ե. այս ածանցը՝ **Աղստեւ** (<*alə-st-eu-)։

Հայկական լեռնաշխարհի հ.-ե. ծագման ջրանուններում (նաև տեղանուններում) հանդիպում է նաև *-sk- *ածանցը* **Մուրց** (<*mur-sko-*),* **Արճեշ** (<*arg′ ei-skho-)։

Իհարկե, նշված մանրակաղապարներով կազմված բազմաթիվ այլ հ.-ե. ծագման տեղանուններ կարելի է որոնել ու գտնել Հայկական լեռնաշխարհում, սակայն այն դուրս է եղել մեր նպատակներից։

Նշված ջրանվանական մանրակաղապարները հնդեվրոպական անվանակազմության ընդհանուր Rs *կաղապարի դրսևորումներն են, որտեղ* R-*ը արմատն է, իսկ* s-*ը՝ ածանցը։ Ածանցի դերում հանդես են գալիս հ.-ե. բոլոր բաղաձայններն ու ձայնորդները, ընդ որում որոշակի հերթականությամբ։ Ածանցների հերթականությունը հստակ ձևով ներ-*

կայացված է Գ. Ջահուկյանի «Հայոց լեզվի համեմատական քերականության» մեջ։ Արմատին առաջին դիրքում հաջորդում է շփական բաղաձայնով (-s-), երկրորդ դիրքում՝ շրթնային ռնգայինով կամ շրթնային կիսաձայնով (-m-, -u-), երրորդ դիրքում՝ առաջնալեզվային ռնգայինով (n-), չորրորդում՝ առաջնալեզվային կամ ետնալեզվային պայթականով (-d-, -t-, -g-, -k-, -g′-, -k′, -g^{u} -k^{u} ...), հինգերորդում՝ նաչ ձայնորդով (-r-, -l-), վեցերորդում՝ շրթնային կիսաձայնով (-u-), յոթերորդում՝ առաջնալեզվային կիսաձայնով (-i-) արտահայտված ածանցը։ Վերջին՝ ութերորդ դիրքում հանդես է գալիս հիմքակազմ ձայնավորը։ Ածանցների այս հերթականությունը բացահայտում է նաև, թե ինչու կան -men-, -ṷen-, -nt-, -st- բաղադրյալ ածանցներ, բայց չկան -nem-, -ten-, -ks- և այլ ածանցներ։

Ածանցները հանդես են գալիս լիաձայն (-es-, -em-, -en- և այլն) և սղված (-s-, -m-, -n- և այլն) վիճակներով, որոնք պայմանավորված են արմատի վիճակով. լիաձայն (e կամ o ձայնդարձով) արմատին հաջորդում է սղված (զրո ձայնդարձով) ածանց, իսկ սղված (զրո ձայնդարձով) արմատին՝ լիաձայն ածանց։ Առաջին դեպքում ածանցն իր գրսևորմամբ համընկնում է հնդեվրոպական աճականին։ Բնականաբար այս դեպքում դժվարանում է աճականի և ածանցի տարբերակումը, և հաճախ խոսում են ոչ թե կոնկրետ ածանցի կամ աճականի միջոցով կազմված ձևերի մասին, այլ -m-ով կազմության, -n-ով կազմության, -t-ով կազմության մասին և այլն։

գ) Բարդ ջրանուններ.

Բացառելով հայկական և իրանական բարդ և բաղադրյալ կազմությամբ ջրանունները՝ հնդեվրոպական բարդ և բաղադրյալ կազմությամբ ջրանունների թերևս միակ օրինակն է Քասախ գետանունը, եթե ճիշտ է առաջարկված ստուգաբանությունը ((*k′as-ak^{u}-)։ Հ.-ե. նախալեզվում կային բառաբարդման հետևյալ ձևերը՝ արմատի կրկնություն, համադասական բարդություն (դվանդվա), ստորադասական բարդություն (բահուվրիհի)։ Քասախ գետանունը ներկայացնում է բառաբարդման երրորդ եղանակը։ Ի դեպ այս եղանակով է կազմված, հավանաբար, Գայլատու լճանունը (*uəilo- adua-), ինչպես նաև Մեծագետ, Մեծա-

մոր գետանունները: Թերևս դվանդվա կազմություններ են՝ Խոզմոր, Մուրցամոր, Աղանդոտ, Ճուաշոտ, Ասպահեն ջրանունները:

Ամփոփելով Հայկական լեռնաշխարհի հնդեվրոպական ծագման ջրանունների կառուցվածքային քննությունը, կարելի է նշել, որ այստեղ առկա են հնդեվրոպական բառակազմության երեք հիմնական եղանակները: Սակայն առավել լայնորեն ներկայացված են, ինչպես և պետք էր սպասել, ածանցավոր կազմությունները:

3. Ջրանուններում հանդես եկող հ.-ե. արմատների իմաստաբանական քննություն: Հայտնի է, որ ջրանուն դառնալու առավել մեծ հավանականություն ունեն «ջուր» իմաստային դաշտին պատկանող բառերը:

Հնդեվրոպական նախալեզվում այս իմաստային դաշտին են պատկանում բազմաթիվ բառեր, ինչպես՝ *ap-/*ab- «ջուր, գետ», *ak^{u}a/*ek^{u}- «ջուր, գետ. խմել», *au̯ (e) /*au̯ed-/*au̯er- «գետ, ջուր, աղբյուր, հոսել», *bhog- «հոսող ջուր, առու», *dānu- «գետ» *reg´- «անձրև. խոնավ» և այլն: Հ.-ե. այս նախաձևերի մի մասը հ.-ե. ածանցյալներ են «հոսել», «խոնավ» և նման՝ ջրին բնորոշ հատկանիշներ նշող բառերի: Եվրոպական տարածքի ջրանուններում, մասնավորապես գետանուններում, հ.-ե. այս նախաձևերը և նրանց ածանցյալները (արդեն հ.-ե. առանձին լեզուներում) լայնորեն են ներկայացված, թե որպես ինքնուրույն անուններ, թե որպես բարդ անունների բաղադրիչներ: Հայկական լեռնաշխարհի ջրանուններում, մեր կարծիքով, հանդիպում են հետևյալ հ.-ե. նախաձևերի արտացոլումները.

ա) բարդ և բաղադրյալ անունների կազմում, որպես երկրորդ բաղադրիչ.

*u̯edo- գետ. Թերևս այս բառը օգտագործվել է նաև որպես ինքնուրույն գետանուն, հմմտ. Գետիկ տեղանունը (Գետիկի կամ Գետկայ վանք), որն ըստ երևույթին փոխանցում է գետանունից. Նոր Գետիկ տեղանունը ծագում է Գետիկ տեղանունից:

*məuro- մոր. բառը գրաբարում նշանակում է «ճահիճ», սակայն գետանունների կազմում նրա կիրառությունը ենթադրել է տալիս նաև «գետ» իմաստի առկայությունը: Եվրոպական տարածքում այս նախաձևը հաճախ է հանդես գալիս գետանուններում. հմմտ. Morava, Mureș, Mur գետանունները Դանուբի ավազանում:

*dānu-իրան. dānu-> հայ. -դան (Հրազդան անվան մեջ)։ Հ.-ե. այս բառը հանդիպում է Դանուբ, Դնեպր, Դնեստր գետանուններում, այդ բառի տեղանվանացումն է Դոն անունը։ Հ.-ե. այս բառի բնիկ հայկական արտացոլումն ըստ երևույթին չի պահպանված (հավանական տարբերակն է *-տան)։

*seino->իրան. *haina->հայ. -ճեն. (Ասպաճեն անվան մեջ)։ Այս զուգադրությունը մեր առաջարկածն է, այլ տարածքներում հ.-ե. այս բառի ժառանգները գետանուններում չեն հանդիպում (գոնե մենք տեղյակ չենք)։

*adu-> հայ. -ատու (Գայլատու անվան մեջ)։ Զուգադրությունը մերն է. հմմտ. Οὐισδιύας: Հ.-ե. այս արմատը և նրա ածանցյալները հաճախ են հանդիպում Եվրոպայի տեղանուններում։ (Մեր կարծիքով հ.-ե. այս արմատի -*ro-ով կազմություն է Սալմանասար 3-րդի հիշատակած ^{ŠADU}Adduru լեռնանունը, որը տեղորոշվում է Վանա լճից հյուսիս)։

*lēgi̯a-> հայ. լիճ. հայ մատենագրության մեջ առավել հաճախ այս իմաստով գործածվում են ծով և ծովակ բառերը (ուրարտական փոխառություններ ?)։

բ) պարզ անուններում և բարդ ու բաղադրյալ անունների առաջին բաղադրիչի դերում.

*ak^{u}ā/*ek^{u}-«ջուր, գետ. խմել» — Ախուրեան, Քասախ գետանուններում։ Հ.-ե. արմատի գերմանական զարգացումը հաճախ է հանդիպում գետանուններում, թե անկախ (Աա գետերը Գերմանիայում, Շվեյցարիայում, Հոլանդիայում), թե բարդ բառերում, իբրև երկրորդ բաղադրիչ (Շվարցախ, Զալցախ և այլ գետանունները նույն տարածքներում)։ Մեր գետանունները թերևս անատոլիական ծագում ունեն. հ.-ե. արմատը կարող էր նման զարգացում ունենալ անատոլիական կամ մերձավոր ցեղակից լեզվոլորտում։

*bhog- «հոսող ջուր, առու» — Բագրեւանդ անվան մեջ։ Գերմանական լեզվոլորտում հ.-ե. արմատի գերմանական զարգացումը հաճախ է հանդիպում որպես գետանունների երկրորդ բաղադրիչ -bach։ Հայկական տեղանուններում հանդիպող -բակ բաղադրիչը արդյո՞ք նույն արմատից է։

*eres/eros- «հոսել. խոնավ. ցող» — Երասխ անվան մեջ: Նույն արմատի իրանական զարգացումն է Ռաճ գետանունը:

*mano- «խոնավ» — Մանաղի (Մանանաղի) անվան մեջ:

*mur- «ճահիճ» — Մուրց անվան մեջ:

*u̯eis- «հոսել, հալվել» — Գէն գետանվան մեջ: Այս անունը ըստ երևույթին, հայկական զարգացումն է *u̯eisnā նախաձևի, իսկ այս արմատի այլ ածանցյալներ տարածված են Եվրոպայի հին գետանուններում:

*sreu- «հոսել» — Առուն գետանվան մեջ: Այս արմատից է ծագում նաև հայ. առու բառը: Արմատի զանազան ածանցյալներ տարածված են հ.-ե. զանազան լեզուներում, ինչպես նաև գետանուններում:

Թերևս այսքանով չեն ավարտվում Հայկական լեռնաշխարհի տեղանուններում պահպանված՝ այս իմաստային դաշտին պատկանող հ.-ե. արմատները, և նրանց ածանցյալները: Կարելի է իբրև հավանական նշել, օրինակ, հ.-ե. *ap- «ջուր, գետ» արմատի հայ. *-աւ զարգացումը Կճաւ, Սուկաւ և այլ տեղանուններում: Սակայն այդ խնդիրը դուրս է եղել մեր նպատակներից և կարող է մեկ այլ հետազոտության առարկա լինել:

գ) գույն նշանակող բառեր Հայկական լեռնաշխարհի ջրանուններում.

Հաճախ ջրանուն են դառնում գույն նշող բառերը: Ուշագրավ է, որ հաճախականությամբ առանձնանում են «սպիտակ», «սև» իմաստներն արտահայտող բառերը:

*el-(*ol-)*al- «կարմիր, արճագույն» -Ալիւս (*Alus), Աղաւնոյ, Աղանդ անուններում: Հ.-ե. այս արմատի նախնական իմաստն ըստ երևույթին եղել է «մաքուր», «մաքուր, պարզ գույն» (համմտ. *mel- «կեղտոտ, գույներ. սև», որից է ռուսերեն малина «մոռ, մոշ»):

*ar (a) g´ — փայլել. փայլուն» — Արածանի, Արճէշ, Արճիշակ անուններում: Բոլոր անուններն էլ հ.-ե. արմատի հայկական զարգացումներն են:

*bhel-/*bhal- «փայլել, փայլուն» — Բալիքէս, Բաղան, Բաղք անուններում:

k´as- «մոխրագույն» — Քասախ անվան մեջ: Հ.-ե. արմատի նման զարգացումը հայկական չէ, ենթադրում ենք անատոլիական աղբյուր:

*mel- «մուգ, կեղտոտ գույներ. սև» — Մեղ գետանվան մեջ:

դ) ջրային օբյեկտի այլ հատկանիշներ նշող բառեր.

*meg´a- *«մեծ»* — *հայ.* **մեծ՝** *Մեծագետ, Մեծամօր անուններում։*

*g^{u}her- *«տաք»* — *հայ.* **ջերմ՝** *Ջերմ գետանվան մեջ։*

*dĕl- *«տիղմ»* — *հայ.* **տիղմ՝** *Տղմուտ անվան մեջ։*

Հայկական լեռնաշխարհի գետերից շատերը համանուն են եղել իրենց հովիտներում գտնվող գավառներին։ Որոշ դեպքերում գավառանունն է առաջացել գետանունից, այլ դեպքերում հակառակը՝ գետանունը գավառանունից և կամ երկուսը միասին մեկ այլ տեղանունից։

Գետանունների կազմում (որպես բաղադրյալ գետանունների առաջին բաղադրիչ) հանդես եկող գավառանունների մի մասը հայկական է, կազմված է հայերեն բառերից, ինչպես՝

Արեւիք *հայ.* **արեւ** *(<հ.-ե.* *reu̯-) +**-ի** *(ունակական ածանց)+* **-ք** *(հոգնակերտ, նաև տեղանվանակերտ ածանց)։ Այժմյան Մեղրու շրջանի հին անունն է։ Թվում է անմիջապես կապվում է գավառի բնույթին՝ «արևային, արևոտ» իմաստով։*

Բերդաց փոր *(<***Բերդիք, *Բերդք**) բաղադրյալ կազմություն է հայ.* **բերդ** *«ամրություն» (հոգնակի սեռական հոլովով՝* **բերդաց**) *և հայ.* **փոր** *«ձոր, հովիտ» բառերից, թերևս «բերդերի ձոր» իմաստով։ Հավանական ենք համարում նաև հ.-ե.* *bher-to- *«բերքառա՞տ» նախաձևից հայ. *բերդ «բերքառա՞տ, բարեբե՞ր». հմմտ. լատ.* fertus *«բարեբեր, բերքառատ», նբգ.* Börde *«բարեբեր հովիտ»։ Այս դեպքում գավառի անունը կունենա «բերքառատ, բարեբեր հովիտ» իմաստը։ Հետագայում այս բառերի բաղարկության և երկրորդի (*բերդ «բերքառատ») գործածությունից դուրս մնալու հետևանքով, նախկին «բերքառատ հովիտը» վերաիմաստավորվել է «բերդերի հովտի»։*

Ձորք, Ձորոփոր — *հայ.* **ձոր** *(<հ.-ե.* *g´hou̯oro-) +**-ք** *և հայ. ձոր (սեռական հոլով՝* **ձորոյ**) — **փոր**:

Բաղադրյալ ջրանուններում հանդես եկող **Գեղաքունի(ք)** *և* **Բողնոփոր** *գավառանունները թերևս նույնպես հայկական են և բխում են համապատասխանաբար հ.-ե.* *u̯elika- *(հմմտ. հուն. ἑλική) և* *bhol-en(o) *(հ.-ե.* *bhel- *«բույս» կամ «ուռեցնել, ուռճացնել»+*-en(o)-) *նախաձևերից։* **Բողնոփոր** *անվան* **բողն-** (***բողին-, *բողուն-**) *բաղադրիչը հմմտ. հայ.* **բեղուն** *բառի հետ։*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայկական լեռնաշխարհի՝ V—XIII դարերի հայ մատենագրության մեջ վկայված ջրանունների ծագումնաբանական և կառուցվածքային վերլուծության հիման վրա կարելի է որոշ եզրակացություններ անել.

1. Եթե առաջարկված ստուգաբանությունները նույնիսկ մասամբ համապատասխանում են իրականությանը, ապա ջրանունների զգալի մասը հ.-ե. ծագում ունի և ներկայացնում է հայկական, իրանական, թերևս անատոլիական կամ մերձակից և առայժմ անհայտ կամ չճշգրտված հ.-ե. լեզվոլորտներ։

2. Հայկական ջրանունները ըստ կազմության ներկայացնում են կառուցվածքային երեք եղանակ՝ բաղադրյալ անուններ, բարդ անուններ, պարզ (արմատական և ածանցավոր) անուններ։ Բաղադրյալ և բարդ անունները հարաբերականորեն նոր կազմություններ են՝ ստեղծված հայերենի լեզվական հիմքի վրա։

3. Պարզ ջրանունների մի մասը կամ հայերեն բառերի անդանվանացումներ են կամ նրանց հետ ընդհանուր ծագում ունեն (Առուն — առու <հ.-ե. *sru-no-/-to-, *Ջերմ—ջերմ<հ.-ե.* *g^{u}herma/o-, *Տըղմուտ—տղմուտ, Որբ—որբ<հ.-ե.* *orbho-, *թերևս Գայլ—գայլ<հ.-ե.* u̯elii̯o-/.

4. Հ.-ե. արմատների կամ ածանցյալների մի շարք արտացոլումներ պահպանվել են հայկական ջրանուններում, սակայն դուրս են մընացել հայերենի բառապաշարից (գոնե չեն վկայված). Գէն, վկայված է սեռական հոլովաձևով «զակամբք Գինայ» բառակապակցության մեջ հ.-ե. *u̯eisnā, *հմմտ. լատ.* vēnā *«երակ», Մեղ<հ.-ե.* *mel- *«սև, կեղտոտ գույն», Աղանի<հ.-ե.* *alə-bh-nio- *«սպիտակ», հետագայում այս բառիմաստի մթագնման և կորստի հետևանքով գետանունը բաղարկվել է* աղաւնի *թռչնանվան հետ և վերածվել դարձել է* Աղաւնոյ գետ, *թերևս* Գայլ*<հ.-ե.* *uəlii̯o- *«գոլ, տաք». հմմտ. նույն գետի հուն. հնագույն անունը* Θερμώδων.

5. Ուշագրավ է, որ հայերենում սեւ, սպիտակ, ճերմակ *գունանունները իրանական փոխառություններ են, իսկ հ.-ե. ծագման համապատասխան բնիկ հայկական բառերը չեն պահպանվել։ Բառապաշա-*

րից դուրս մնացած այդ բառերը պահպանվել են սակայն գետանուններում (Մեղ, Աղամի)։

6. Երեք գետանուններ (Երասխ, Ախուրեան, Քասախ) թերևս ներկայացնում են անատոլիական կամ որևէ մերձավոր լեզվոլորտ։ Այս անուններից յուրաքանչյուրը, առաջարկված ստուգաբանությամբ, դրսևորում է որոշակի յուրահատկություններ հ.-ե. նախաձևերի զարգացման, որոնք հատուկ չեն ոչ հայերենին, ոչ իրանական լեզուներին (Երասխ<հ.-ե. *erosk/kho-, հ.-ե. *sk/kh>հայ. շ/ց. իրան. šx, Ախուրեան<հ.-ե. $ak^{u}rija$ (na)-, հ.-ե. k^{u}>հայ. ք, իրան k, Քասախ<հ.-ե. *k'as-ak^{u}-, հ.-ե. k'> հայ. ս, իրան. š, հ.-ե. s> հայ. ∅, իրան. h)

7. Իրանական ջրանունները հիմնականում լեռնաշխարհի արևելյան շրջաններն են ընդգրկում (Վասպուրական, Սյունիք, մասամբ Այրարատ)։

8. Ոչ հ.-ե. ծագման ջրանունները ընդգրկում են լեռնաշխարհի ծայրագավառները։ Հարավում դրանք են Դկղաթ (<արամ.<աքքադ.<շում.), Շիթիթմա (<արամ.)։ Այլ ջրանունների վերաբերյալ որոշակի եզրակացություններ առայժմ դժվար է անել։

9. Հայկական լեռնաշխարհի խոշոր գետերի անուններից (Երասխ, Եփրատ, Ախուրեան, Արածանի, Դկղաթ, Տիգրիս) միայն Արածանին հայկական ծագում ունի։ Հայկական ջրանուններն ընդգրկում են գլխավորապես Երասխի միջին հոսանքը, Արածանիի հովիտը, ինչպես նաև Բարձր Հայքը։ Հետաքրքրական է Մոկս-Տուրուբերանի հարավային կղզյակը։

10. Հայկական լեռնաշխարհում հնագույն էթնոլեզվական շփումների լուսաբանման ուղղությամբ տարածքի տեղանունների համակողմանի ու լայն ուսումնասիրության անհրաժեշտությունն ակնհայտ է։ Պատմական աղբյուրների տեղանվանական տվյալները, մանավորապես ջրանվանական տվյալները, սուղ են և հնարավորություն չեն ընձեռում առավել հիմնավոր կարծիքների ու եզրակացությունների։ Թերևս լավագույն տարբերակն է լեռնաշխարհի առանձին շրջանների ողջ տեղանունների ժամանակակից ուսումնասիրությունը հետահայաց եղանակով՝ աստիճանաբար բացառելով նորագույն, նոր շերտերը։ Միաժամանակ այն հանգամանքը, որ Հայկական լեռնաշխարհում գոյություն ունեն համանուն տարատեսակ աշխարհագրական օբյեկտներ (գավառ-գետ, գետ-բնակավայր, գավառ-բնակավայր, լեռ-գավառ, լեռ-բնակա-

վայր և այլն), թելադրում է ուսումնասիրության նշված մոտեցման նպատակահարմարությունը։

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Միջնադարյան հայկական աղբյուրներ

Ագաթ. — *Ագաթանգեղայ պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914, 488 էջ։*

Ասողիկ — *Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան պատմութիւն տիեզերական, ՍՊբ, 1885, 440 էջ։*

Արծր. — *Պատմութիւն տանն Արծրունեաց ի Թովմայ վարդապետէ Արծրունւոյ, Կոստանդնուպօլիս, 1852, 404 էջ։*

Բուզ. — *Փաւստոսի Բուզանդացւոյ պատմութիւն Հայոց ի չորս դպրութիւնս, Վենետիկ, Ս. Ղազար, 1832, 286 էջ։*

Գանձ. — *Կիրակոս Գանձակեցի. Պատմութիւն Հայոց. աշխատութեամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանեանի, Երևան, 1961, 554 էջ։*

Դրասխ. — *Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, 452 էջ։*

Եղիշե — *Եղիշէի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին. ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երևան, 1957, 284 էջ։*

Լաստ. — *Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ, Թիֆլիս, 1912, 196 էջ։*

Խոր. — *Մովսիսի Խորենացւոյ պատմութիւն Հայոց. աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, 394 էջ։*

Խոր. — *Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ մատենագրութիւնք. երկրորդ տպագրութիւն. Վենետիկ, Ս. Ղազար, 1865, 640 էջ։*

Կաղանկ. — *Մովսէս Կաղանկատուացի. Պատմութիւն Աղուանից աշխարհի. քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի, Երևան, 1983, 383 էջ։*

Կորիւն — *Կորիւն. Վարք Մաշտոցի. բնագիրը ձեռագրական այլ ընթերցվածներով, թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով ի ձեռն պրոֆ., դ-ր Մ. Աբեղյանի, Երևան, 1941, 125 էջ։*

Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. Վենետիկ, Ս. Ղազար, 1862, 196 էջ։

Ղեւոնդ — *Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի Հայոց. ՍՊբ., 1887, 295 էջ։*

Մամիկ. — *Յովհաննու Մամիկոնենի եպիսկոպոսի պատմութիւն Տարօնոյ, Վենետիկ, Ս. Ղազար, 1832, 64 էջ։*

Մեծին Վարդանայ Բարձրբերդցւոյ պատմութիւն տիեզերական. ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, 217 էջ։

Ուռհայեցի — *Մատթէոսի Ուռհայեցւոյ ժամանակագրութիւնք, Վաղարշապատ, 1898, 454 էջ։*

Ուխտանէս եպիսկոպոս — Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, 258 էջ:

Պատմութիւն Անանուն զրուցագրի. կարծեցեալ Շապուհ Բագրատունի. Թարգմանությունը գրաբարից, առաջաբանն ու ծանոթագրությունները Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանի, Երևան, 1971, 238 էջ:

Պատմութիւն Տարօնոյ զոր թարգմանեաց Զենոբ Ասորի. Վենետիկ, Ս. Ղազար, 1832, 52 էջ:

Սամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց, յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս, Վաղարշապատ, 1893, 301 էջ:

Սեբ. — Սեբէոսի եպիսկոպոսի պատմութիւն. բաղդատութեամբ ձեռագրաց, հանդերձ առաջաբանիւ եւ ծանօթութեամբք ի ձեռն Ստ. Մալխասեանց, Երևան, 1939, 300 էջ:

Վարդան — Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի. քննական հրատարակութիւն Հ. Պէրպէրեանի, Բարիզ, 1960, 106 էջ:

Փարպեցի. — Ղազարայ Փարպեցւոյ պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան. աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Մալխասեան, Տփղիս, 1904, 232 էջ:

Օրբելյան — Պատմութիւն նահանգին Սիսական. արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, 618 էջ:

2. Օտար աղբյուրներ

Հերոդոտոս. — Պատմություն ինը գրքից. թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1986, 652 էջ:

Քսենոփոն — Անաբասիս. թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1970, 284 էջ:

Օտար աղբյուրները հայերի մասին. № 1, հունական աղբյուրներ. Ստրաբոն. — քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, 1940, 124 էջ, 1 քարտեզ:

Օտար աղբյուրները հայերի մասին. № 3, լատինական աղբյուրներ. Տակիտոս — քաղեց և լատիներենից թարգմանեց պրոֆ. պաշտ. Պ. Սոտնիկյան. Երևան, 1941, 150 էջ:

Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. հ. 5, բյուզանդական աղբյուրներ. Ա. Պրոկոպիոս Կեսարացի. թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Երևան, 1967, 360 էջ:

Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. հ. 8, ասորական աղբյուրներ. թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Գ. Մելքոնյանի, Երևան, 1976, 480 էջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայերեն

Ադոնց. Ն. — Հայաստանի պատմություն. ակունքները, 10—6-րդ դդ. մ. թ. ա., Հայերի ծագումը: Հոդվածներ. ֆրանսերենից թարգմանեց Վ. Պ. Սեդրոսյանը, Երևան, 1972, 432 էջ:

Ալիշան Ղ. — Այրարատ. Վենետիկ, Ս. Ղազար, 1890, 590 էջ:

Ալիշան Ղ. — Շիրակ. Վենետիկ, Ս. Ղազար, 1881, 192 էջ, 1 քարտեզ:

Ալիշան Ղ. — Սիսական. Վենետիկ, Ս. Ղազար, 1893, 564 էջ, 1 քարտեզ:

Բարսեղյան Հ. Խ. — *Հատուկ անուն, Երևան, 1964։*

Երեմյան Ս. Տ. — *Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», Երևան, 1963, 156 էջ, 1 քարտեզ։*

Էփրիկյան Ս. — *Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, ՀՀ. 1—2. Վենետիկ, Ս. Ղազար, 1903—1905, Հ. 1, 343 էջ, Հ. 2, 471 էջ։*

Ինճիճյան Ղ. — *Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի. ՀՀ. Ա—Գ. Վենետիկ, Ս. Ղազար, 1835, Հ. Ա, 487 էջ, Հ. Բ, 426 էջ, Հ. Գ, 394 էջ։*

Ինճիճյան Ղ. — *Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, Ս. Ղազար, 1822, 552 էջ։*

Հակոբյան Թ. Խ. — *Հայաստանի պատմական աշխարհագրություն. երկրորդ հրատարակություն, Երևան, 1968, 510 էջ։*

Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ. — *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Հ. Ա. Երևան, 1986, 1024 էջ։*

Հյուբշման Հ. — *Հին Հայոց տեղվո անունները, թարգմ. Բ. Պիլեզիկճյան, Վիեննա, 1907։*

Ղափանցյան Գ. Ա. — *Հայոց լեզվի պատմություն. հին շրջան, Երևան, 1961, 264 էջ։*

Միրախորյան Մ. — *Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս Արևելյան Տաճկաստանի. տեղագրութիւնք սարեն և ձորեն, հինեն և նորեն պիտանի գիտնոց. Կ. Պոլիս, ՀՀ. 1—3, 1884—1885, Հ. 1. 203 էջ, Հ. 2. 286 էջ, Հ. 3. 224 էջ։*

Շահխաթունյան Հ. — *Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, բաժանեալ յերկուս հատորս, Ս. Էջմիածին, 1842, Հ. Ա. 393 էջ, Հ. Բ. 410 էջ։*

Ջալալյան Ս. — *Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, աշխատութեամբ Սարգիս վարդապետ Ջալալեանց, միաբանի վանաց Սանահնի, ի 1841 ամի. ՀՀ. 1—2, Տփխիս, 1842—1858, Հ. 1, 245 էջ, Հ. 2. 517 էջ։*

Ջահուկյան Գ. Բ. — *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, 588 էջ։*

Ջահուկյան Գ. Բ. — *Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Երևան, 1970, 215 էջ։*

Սարգսյան Ն. — *Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, Ս. Ղազար, 1864, 289 էջ։*

Սրվանձտյանց Գ. — *Թորոս աղբար. ՀՀ. 1—2. Կ. Պոլիս, 1879—1884, Հ. 1 354 էջ, Հ. 2. 516 էջ։*

2. Ռուսերեն

Абаев В. И. Историко-этимологический словарь осетинского языка, тт. I—III, М., Л., 1958—1979.

Адонц Н. Армения в эпоху Юстиниана. Политическое состояние на основе нахарарского строя. СПб., 1908, 538 с. (Второе издание: Ереван, ЕрГУ, 1971, 558 с., ротапринт).

Арутюнян Н. В. Новая урартская надпись из Сиснана. В кн.: Древний Восток, вып. IV, Ереван, АН АрмССР, 1983, 195—220.

Арутюнян Н. В. Топонимика Урарту, Ереван, АН АрмССР, 1985, 308 с.

Бенвенист Э. Индоевропейское именное словообразование. М., 1955.

Гамкрелидзе Т. В. Передвижение согласных в хеттском (несиитском) языке. В кн.: Переднеазиатский сборник, М., 1961.

Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс. Индоевропейский язык и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и пракультуры. I—II, ТбГу, Тбилиси, 1984, 1328.

Георгиев В. И. Исследования по сравнительно-историческому языкознанию. М,. 1958.

Герценберг Л. Г. Морфологическая структура слова в древних индоиранских языках. Л., 1972.

Гиндин Л. А. Язык древнейшего населения юга Балканского полуострова. Фрагмент индоевропейской ономастики. М., Наука,, 1967, 200+I карта.

Гиндин Л. А. Древнейшая ономастика Восточных Балкан. (Фрако-хетто-лувийские и фрако-малоазийские изоглоссы), София. БАН, 1981, 240.

Гумбольдт В. фон. Язык и философия .М., Прогресс, 1985, 452.

Джаукян Г. Б. Хайасский язык и его отношение к индоевропейским языкам. Ереван, АН АрмССР, 1964, 96.

Джаукян Г. Б. Очерки по истории дописьменного периода армянского языка. АН Арм. ССР. 1967, 382.

Джаукян Г. Б. Взаимоотношение индоевропейских, хуррито-урартских и кавказских языков. Ереван, АН Арм.ССР, 1967, 218.

Джаукян Г. Б. Общее и армянское языкознание. Ереван, АН Арм. ССР, 1978, 334.

Джаукян Г. Б. Сравнительная грамматика армянского языка. Ереван, АН Арм.ССР, 1982, 274.

Дьяконов И. М. Предыстория армянского народа. История Армянского нагорья с 1500 по 500 г до н. э. Хурри, лувийцы, прото армяне, Ереван, АН Арм.ССР, 1967.

Дьяконов И. М. Типы этнических чередований в ранней древности. (с конца IV по начало I тысяч. до н. э.) в книге Древний Восток, 4, АН Арм. ССР, 1983, 5—20.

Дьяконов И. М. Хуррито-урартский и восточно- кавказские языки, в книге Древний Восток, 3, АН Арм.ССР, Ереван, 1978, 25—38.

Иванов В. В. Общеиндоевропейская, праславянская и анатолийская языковые системы (сравнительно-типологические очерки). М., 1965.

Иванов В. В. Хеттский язык. М., 1963.

Историческая ономастика. (Под редакцией А. В. Суперанской), М., Наука 1977, 308.

Капанцян Г. А. Историко-лингвистические работы. II, Ереван, АН АрмССР, 1975, 542.

Капанцян Г. А. Историко-лингвистические работы. К начальной истории армян. Древняя Малая Азия. Ереван, АН Арм.ССР, 1956, 472.

Карагезян О. О. Локализация урартского царского города Арцашку.—Вестник общественных наук, АН Арм.ССР, 1976, № 5, 67—98.

Меликишвили Г. А. Урартские клинообразные надписи, М., АН СССР, 1960, 504+1 карта.

Мещанинов И. И. Аннотированный словарь урартского (биайнского) языка. Л., Наука, 1978, 388.

Мурзаев Э. М. География в названиях. М., Наука, 1982, 176.

Мурзаев Э. М. и *М. В.* Краткий топонимический словарь. М., 1966.

Нерознак В. П. Принципы исследования палеобалканской ономастики. В книге Историческая ономастика. М., Наука, 1977, 27—48.

Нерознак. Фракийские реликты в балканских языках.—Балканская филология, Л., 1970.

Нерознак В. П. Названия древнерусских городов. М., Наука, 1983, 208.

Никонов В. А. Введение в топонимику. М., Наука, 1965, 180.

Смолицкая Г. П. Гидронимия бассейна Оки. М., 1976.

Суперанская А. В. Что такое топонимика? М., Наука, 1985, 176.

Суперанская А. В. Имя и эпоха (к постановке проблемы). В книге Историческая ономастика, М., Наука, 1977, 7—26.

Топоров В. Н. Несколько иллирийско-балтийских параллелей из области топонимики.—ПИЯ, 1964.

Топоров В. Н., Трубачев О. Н. Лингвистический анализ гидронимов Верхнего Поднепровья, М., 1962.

Трубачев О. Н. Названия рек Правобережной Украины. Словообразование. Этимология. Этническая интерпретация. М., 1968.

Туманян Э. Г. Структура индоевропейских имен в армянском языке. М., Наука, 1978, 368.

Фасмер М. Этимологический словарь русского языка. Перевод с немецкого и дополнения О. Н. Трубачева. Издание II, стереотипное, в 4-х томах, 1964—1973.

Хачатрян В. Н. Восточные провинции Хеттской империи. (Вопросы топонимики). Ереван, АН АрмССР. 1971.

Хачатрян В. Н. Юго-западные провинции Хеттекого царства. (Вопросы топонимики). В книге Древний Восток, 4, Ереван, АН Арм.ССР, 1983, 148—173.

1. *Dauzat = Albert Dauzat*, Les noms de lieux. Orgiine et évolution. Paris, Librairie Delagrane, 1932.
2. *Diakonoff I. M., Kashkai S. M.* Geographical Names according to urartian texts / Répertoire géographique des textes cunéiformes. *B*and 97/, Wiesbaden, 1981.
3. *Eilers = Wilhelm Eilers*, Geographische Namengebung in und um Iran. Ein Überblick in Beispielen. /Bayerische Akademie der Wissenschaften. Philosophische-historische Klasse. Sitzungsberichte. Jh. 1982, H. 5. München, 1982, 67 s.

4. *Friedrich J.*, Hethitisches Wörterbuch. Kurzgefasste kritische Sammlung der Deutungen hethitischer Wörter. Heidelberg, 1952—1954.
5. *Friedrich J.* Hethisisches Wörterbuch. Ergänzungshefte I—III, Heidelberg, 1957—1966.
6. *Garstang J.*, *Gurney O. R.* The Geography of the Hittite Empire. London 1957.
7. *Georgiev* = *Georgiev V. I.*, Introduction to the History of the Indo—European Languages. Sofia, P. H. of the Bulgarian Academy of Sciencis, 1981. 424 p.
8. *Hewsen R. H.*, On the Date and Authorship of the Asxarhac^{c}oyc^{c}. /Révue des études arméniens. Paris, vol. IY (1967), 409—432/.
9. *Hewsen R. H.*, Introduction to Armenian historical Geography. /Révue des études arméniens. Paris, vol. XIII (1978 1979), 77—97.
10. *Krahe* = *Hans Krahe*, Die Struktur der alteuropäischen Hydronymie. /Ab handlungen der Akademie der Wissenschaften und der Literatur zu Mainz. Geistes-und Sozialwissenschavtichen Klasse. Jg. 1962, No. 57, Wiesbaden.
11. *Laroche*=*Laroche E.*, Etude de toponymie anatolienne (RHA, XIX, 69, 1961).
12. *Laroche E.*, Les noms des hittites. Paris, 1966.
13. *Markwart J.*, Eransahr nach der Geographie des Pseudo—Moses Chorenazi Marburg, 1901.
14. *Monte*, *Giuseppe F. del*, *Tischler*, *Johann*. Die Orts—und Gewässernamen der hethitischen Texte. (Répertoire géographique des taxtes cunéiformes, Band 6.), Wiesbaden, 1978.
15. *Parpola*, *Sino*, Neo—assyrien Toponyms, Neukirchen—Vluyn, 1970.
16. *Pok.* = *Pokorny Y.*, Indogermanisches etymologisches Wörterbuch, I, Bern-München, 1959.
17. *Soukry A.*, Géographie de Möise de Corène d'aprês Ptolémée. Venice, 1881

Ն. Մ. ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ
(ծագումնաբանական քննություն)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գրաբարի բառապաշարի ուսումնասիրությունը միշտ էլ գտնվել է հայագետների ուշադրության կենտրոնում։ Եթե նկատի չունենանք հայ հին և միջնադարյան քերականագիտական աշխատություններում հանդիպող բառաքննական-ստուգաբանական, բառակազմական առանձին դիտողությունները, ապա կարելի է ասել, որ հայերենի բառապաշարի ստուգաբանական, բառագիտական ուսումնասիրությունները գիտական լուրջ հիմքերի վրա են դրվում պատմահամեմատական լեզվաբանության, որպես առանձին գիտակարգ, ձևավորվելուց հետո։ Հնդեվրոպական լեզվաբանության առաջին իսկ ներկայացուցիչները հայերենը դասում են հ.-ե. լեզուների շարքը և սկիզբ դնում հայերենի համեմատական ուսումնասիրությանը։ 1837 թ. լույս է տեսնում Հ. Պետերմանի «Հայոց լեզվի քերականություն», իսկ 1846-ին՝ Ֆր. Վինդիշմանի «Հայերենի տեղը արիական լեզվաբնում» աշխատությունները։ Այս առաջին ուսումնասիրությունները գիտական շրջանառության մեջ են դնում հայերենի նյութը։ Ձեռնարկվում է հայերենի լեզվական կառուցվածքի տարբեր կողմերի՝ հնչյունաբանության, քերականության, ինչպես նաև բառային կազմի համեմատական հետազոտությունը, որի արդյունքներն օգտագործվում են հնդեվրոպաբանության ընդհանուր-տեսական հարցերի լուսաբանմանը, հ.-ե. նախալեզվի կառուցվածքային առանձնահատկությունների վերականգնմանը նվիրված աշխատություններում։ Հայերենի բառապաշարի ծագումնաբանական-ստուգաբանական համգամանալից քննություն է կատարում Հ. Հյուբշմանը, նա առանձնաց-

նում է հայերենի բնիկ՝ հ.-ե. ծագման բառերը, իրանական փոխառությունները, կատարում հետաքրքիր ստուգաբանական դիտարկումներ։

Անգնահատելի է Հ. Աճառյանի վաստակը հայերենի համեմատական քերականության, այդ թվում նաև բառապաշարի հետազոտության բնագավառում կատարած իր ուսումնասիրություններով. բազմաթիվ բառաքննական-ստուգաբանական դիտարկումներ, հայերենի բառապաշարի ծագումնաբանական (հ.-ե. բառաշերտ, փոխառություններ այլ՝ հին ու նոր լեզուներից), իմաստային դասակարգում և, վերջապես, հայերենի շուրջ 11 հազար արմատների ու արմատական բառերի ծագումնաբանական, իմաստային ու բառակազմական քննություն, որն ամփոփված է նրա «Հայերենի արմատական բառարանում»։

XX դարի սկզբից, հատկապես վերջին տասնամյակներում նկատվում է հայագիտական ուսումնասիրությունների շրջանակների ընդլայնում, ինչպես նաև հետազոտության խնդիրների, բնագավառների մանրամասնում։ Ընդհանուր բնույթի աշխատությունների կողքին երևան են գալիս ավելի նեղ, մասնակի հարցերի նվիրված ուսումնասիրություններ։ Շարունակվում են հայ հին գրական լեզվի՝ գրաբարի լեզվական կառուցվածքի առանձին կողմերի ուսումնասիրության աշխատանքները։ Որոշ հետազոտողներ անդրադառնում են նաև բառակազմության խնդիրներին։ Այստեղ անհրաժեշտ է հիշատակել Է. Թումանյանի «Древнеармянский язык» (1971) մենագրությունը, որտեղ գրաբարի բառակազմության հարցերը ենթարկվում են բավական հանգամանալից քննության։ Նա առանձնացնում է բառի կառուցվածքային միավորները՝ բառակազմական առանձին ձևույթները՝ նախածանցներ, վերջածանցներ, կատարում դրանց իմաստային, գործառական դասակարգում, անհրաժեշտ դեպքերում՝ նաև ծագումնաբանական քննություն։ Հայերենի բառակազմության հարցերի քննությանը մի քիչ այլ տեսանկյունից Է. Թումանյանն անդրադառնում է նաև «Структура индоевропейских имен в армянском языке», (1978) աշխատության մեջ։ Այստեղ նա կատարում է հայերենի հ.-ե. ծագման անունների կառուցվածքային վերլուծություն՝ բացահայտելով հ.-ե. անվանական կաղապարի կրած փոփոխությունները հայերենում։

Գրաբարի բառակազմության քննությունը «պատմական քերականության հայեցակետից» կատարում է Մ. Մուրադյանը «Հայոց լեզվի պատմական քերականության» (հ. II, 1975) «Բառագիտության» բաժնում։ Նպատակ ունենալով քննել «հայերենի բառային իրողություննե-

րը իրենց զարգացման ընթացքի մեջ», նա առանձնացնում է «բառերի կառուցվածքային տարրերը», հենվելով մի կողմից՝ բառերի ստուգաբանական վերլուծությունների արդյունքների վրա, մյուս կողմից՝ լեզվի զարգացման ամեն մի փուլում դրանց կրած փոփոխությունների հաշվառման վրա։

Գրաբարի բառապաշարի և բառերի կառուցվածքի (ըստ հայ մատենագրության գրավոր առաջին հուշարձանի՝ «Աստվածաշնչի» լեզվի) քննություն է կատարում Վ. Առաքելյանը «Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը» (1984) աշխատության մեջ։ Դասակարգելով «Աստվածաշնչի» բառամթերքը ըստ բառակազմական բաղադրիչների՝ նա առանձնացնում է անբաղադիր (պարզ), բաղադրյալ ածանցավոր և բարդ բառերը։ Բառերի ձևույթային միավորների վերլուծության ժամանակ հաճախ դիմում է նրանց ստուգաբանությանը, կատարելով հետաքրքիր դիտարկումներ։

Պատմահամեմատական հայեցակետից հայերենի բառապաշարի, այդ թվում նաև բառակազմության, քննություն է կատարում Գ. Ջահուկյանը «Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան» (1987) աշխատության մեջ։ Այս գիրքը հայերենի զարգացման նախագրային փուլի լեզվական առանձնահատկությունների հետազոտությանը նվիրված նրա երկրորդ աշխատությունն է։ Առաջինում՝ «Очерки по истории дописьменного периода армянского языка» (1967), նա քննում է նախագրային շրջանի հայերենի հնչյունական համակարգի առանձնահատկություններն ու զարգացման միտումները։ Քննության ենթարկելով հայերեն գրավոր լեզվին՝ գրաբարին նախորդած հնագույն և վաղնջական շրջանների լեզվական կառուցվածքը, նա անդրադառնում է նաև այդ ժամանակաշրջանների հայերենի բառակազմական առանձնահատկությունների վերլուծությանը։ Ելակետ ունենալով գրաբարի բառային կազմը և սահմանազատելով ավելի հին, արխաիկ և գրաբարում արդեն ոչ գործուն բառակազմական կաղապարները նոր առաջացող, գործուն կաղապարներից, Գ. Ջահուկյանը վերականգնում է գրաբարին նախորդած հին հայերենի և վերջինիս նախորդած՝ հայերենի՝ որպես ինքնուրույն լեզվի կազմավորման ժամանակաշրջանների բառակազմական հիմնական եղանակները, նշում բառակազմական ձևույթների ծագումնաբանական (հ.-ե., ենթաշերտային, փոխառյալ) աղբյուրները։

Ինչպես դժվար չէ նկատել, գրաբարի բառակազմության հարցերը

*քննվել են հայոց լեզվի պատմության, գրաբարի քերականության և բառապաշարի ուսումնասիրությանը նվիրված ընդհանուր բնույթի աշխատություններում**։ *Այդ ուսումնասիրություններում, սակավ բացառություններով (Մ. Մուրադյան, Գ. Ջահուկյան), քննությունը տարվել է գրաբարի՝ որպես ձևավորված լեզվավիճակի ուսումնասիրության ուղղությամբ։ Հետևաբար բառակազմության հարցերը ևս քննության առարկա են դարձել ստատիկ, համաժամանակյա կտրվածքով։ Այդ ուսումնասիրությունները նպատակ չեն ունեցել բառի բաղադրատարրերի պատմական-ծագումնաբանական քննությունը և այդ կողմին անդրադարձել են ոչ հետևողականորեն։*

Մեր այս աշխատության մեջ, որը գրաբարի բայակազմության հարցերին նվիրված ուսումնասիրության մի մասն է միայն, նպատակ ենք ունեցել քննել հայերենի (գրաբարի) հ.-ե. ծագման նախածանցավոր-նախամասնիկավոր և կրկնությամբ առաջացած բայական կազմությունները, տալով նրանց բառակազմական բաղադրիչների ծագումնաբանական հիմքերը, նրանց պատմական զարգացումը, աշխատել ենք ըստ հնարավորին տարբերակել հայերենի ինքնուրույն զարգացման արդյունք հանդիսացող ձևերը։

ՆԱԽԱՄԱՍՆԻԿԱՎՈՐ ԲԱՅԵՐ

Հնդեվրոպական լեզվում նախածանցման՝ իբրև բառակազմական եղանակի գոյության և գործառության վերաբերյալ հնդեվրոպաբանության մեջ տարբեր կարծիքներ են եղել։

Բառի կառուցվածքի ուսումնասիրության հարցերով հնդեվրոպական լեզուների համեմատական քերականության ներկայացուցիչներն ի մոտո սկսել են զբաղվել համեմատաբար ավելի ուշ՝ XIX դարի վերջին քառորդից և հատկապես XX դարի սկզբներից սկսած։ Այս շրջանում հ.-ե. առանձին լեզուների ուսումնասիրության ուղղությամբ արդեն բավական աշխատանք էր կատարվել և հավաքվել էր բավականաչափ փաստական նյութ՝ լեզվական կառուցվածքի տարբեր կողմերի համեմատական հետազոտության, առանձին երևույթների համադրության, կա-

---

* *Այստեղ չենք անդրադառնա գրաբարի բառակազմական համակարգի ամբողջական ուսումնասիրությանը նվիրված Լ. Հովսեփյանի «Գրաբարի բառակազմությունը» աշխատությանը, քանի որ հեղինակը V դարի գրաբարի լեզվական նյութը քննում է համաժամանակյա բառակազմության հայեցակետից։*

ռուցվածքային ընդհանրությունների բացահայտման, ինչպես նաև դրանց հիման վրա տեսական եզրակացությունների հանգելու, զարգացման օրինաչափություններ սահմանելու համար։

Բառի կառուցվածքային տարբեր ձևույթների՝ արմատի, աճականների, ածանցների, դրանց իմաստային ու գործառական առանձնահատկությունների, լեզվի զարգացման ընթացքում նրանց կրած փոփոխությունների, իմաստային ու կառուցվածքային տեղաշարժերի վերաբերյալ շատ ուսումնասիրություններ են կատարվել[1]։ Բայց այդ ուսումնասիրություններում հիմնականում ուշադրություն է դարձվում արմատին աջից ավելացող տարրերի՝ աճականների, միջածանցների, վերջածանցների, թեմատիկ ձայնավորների բնույթին, իմաստային ու կառուցվածքային առանձնահատկություններին։ Արմատի ձախակողմյան հավելվածներին համեմատաբար քիչ են անդրադարձել՝ ավելի հաճախ բավարարվելով միայն նախահար՝ նախահավելվածային (проклитик) տարրերի գոյության կամ չգոյության մասին ընդհանուր դիտողություններով։

Հնդեվրոպական լեզվում արմատին նախորդող մասնիկների՝ ածանցների կամ ձևույթների (преформанты) գոյությունը կանխադրվել է հնդեվրոպական «շարժական» s-ի (smobile) ծագման հարցի հետ կապված։ Շարժական s-ի ծագման մասին տարբեր, իրար հակադիր կարծիքներ են հայտնվել։ Դեռևս անցյալ դարի վերջերին Ֆ. Կոլինեն և Խ. Սխրյնենը առաջ են քաշում նախաձևույթների վարկածը՝ շարժական s-ը համարելով նախահնդեվրոպական նախածանց[2]։

Երիտքերականները չեն ընդունում s-ի նախածանցային ծագման տեսակետը և այն համարում են շարահյուսական հնչյունաբանության կամ արտաքին sandhi-ի արտահայտություն։ Այս տեսակետն են պաշտպանել նաև Մ. Լոյմանը, Ֆ. Էջերտոնը։ Այլ հնդեվրոպաբաններ (օր. Է. Ցվիցները) այն համարում են ենթաշերտային երևույթ, ուրիշները (օր. Գ. Շեվելովը) գտնում են, որ շարժական s ունեցող բառերի համար օրինաչափություն սահմանել հնարավոր չէ, և ամեն մի առանձին դեպքում առանձին բացատրություն պետք է որոնել։ Ա. Մեյեն նախածանցների խնդրին անդրադառնում է հնդեվրոպական բառի կառուցվածքային վերլուծության կապակցությամբ։ Նա գրում է. «Հնդեվրոպական լեզուն չուներ նախածանցներ. միակ նախածանցը, որը կարելի է ընդունել, այսպես կոչված նախահավելվածն է (приращение, аугмент).

սկր. á-bharat, հուն. ἔ-φερε, հայ. ե-բեր, բայց նախահավելվածը ...բայաձևերի անհրաժեշտ բաղկացուցիչ մասը չէր»[3]։ Եթե ասվածին ավելացնենք նաև այն, որ այդ հավելվածները ունեն ոչ թե բառակազմական, այլ ձևաբանական գործառույթ, ապա պարզ է դառնում, որ դրանք իսկական իմաստով նախածանցներ չեն։

Միանգամայն հակադիր տեսակետ է արտահայտում Ն. Տրուբեցկոյը. որևէ լեզվի՝ հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանելու չափանիշների մեջ նա նշում է նաև վեց կառուցվածքային հատկանիշ, որոնցից մեկն էլ ձևակերպում է հետևյալ կերպ. «Պարտադիր չէ, որ բառն սկսվի արմատով։ Առանց նախածանցների հնդեվրոպական լեզուներ չկան։ Նույնիսկ առավել հին հնդեվրոպական լեզուներում կան իսկական նախածանցներ, այսինքն այնպիսի ձևույթներ, որոնք հանդիպում են միայն հաջորդող արմատի հետ, և իբրև ինքնուրույն բառեր երբեք չեն գործածվում։ ...Ուշ հնդեվրոպական լեզուներում այդպիսի նախածանցների թիվը հակում ունի աճելու»[4]։

Է. Մակաևը «Բառի կառուցվածքը հնդեվրոպական և գերմանական լեզուներում» աշխատության մեջ հանգամանալից քննության է ենթարկում հնդեվրոպական լեզվում նախածանցային տարրերի առկայության հարցը։ Դիտարկելով հնդեվրոպաբանության մեջ շարժական s-ի վերաբերյալ արտահայտված տեսակետները, ինչպես նաև հենվելով գերմանական լեզուների ստուգաբանական նյութի վրա և հաշվի առնելով հնդեվրոպական այլ լեզուների ընձեռած տվյալները, նա հանգում է այն եզրակացության, որ շարժական s-ի առկայությունը հ.-ե. լեզվում և գերմանական լեզուներում առանձնակի, մեկուսացած երևույթ չէ։ Այն պետք է քննել հնդեվրոպական բառի բառասկզբում հերթագայվող այլ տարրերի (k, n, d և այլն) հետ ունեցած կապի մեջ (հմմտ. հուն. ὀστέον «ոսկոր»-հին սլավ. kostь, հուն. ἄνθραξ-հուն. κάνδαρος «ածուխ», հուն. κάρυον-հուն. ἄρυα «ընկույզ», ռուս. коза- հնդկ. ajā, մպ·ակ azak, լիտվ. ožka «այծ», հուն. χελερός «բորոտ»-հուն. ἀ φός «բորոտություն» և այլն. հվգերմ. ottar. հվգերմ. nâtara «ջրասամույր, իժ», ժամանակակից գերմ. Otter—Natter «իժ» և այլն. գոթ. dags «օր»-հ հնդկ. áhar-, ahan-«օր», գոթ. arbaifs «աշխատանք»-լիտվ. dâbas «աշխատանք», dìrbti «աշխատել» և այլն)[5]։

Բառասկզբի հերթագայվող այս տարրերը, ըստ Մակաևի, լավագույնս բացատրվում են որպես երբեմնի ինքնուրույն կամ կիսով չափ ինքնուրույն սպասարկու (синсемантический) տարրեր, որոնք աստի-

ճանաբար կորցրել են իրենց իմաստային ինքնուրույնությունը՝ մասամբ պահպանվելով իբրև արմատի ազատ տարբերակներ, մասամբ էլ արմատի հետ միասին վերածվելով պարզեցված կառույցների[6]։

Հնդեվրոպական արմատի կառուցվածքային կաղապարների քննության ժամանակ Թ. Գամկրելիձեն և Վ. Իվանովը արմատի կանոնական C_1VC_2 կաղապարի կողքին նշում են նաև բառասկզբում սուլական *s- և *$\widehat{s}$- ունեցող կաղապարները, որոնցում դրանք «...կարող են մեկնաբանվել որպես հնագույն նախածանցներ, չնայած նրանց ձևաբանական գործառույթը մնում է ոչ պարզ»[7]։

Հնդեվրոպական լեզվի կառուցվածքի տարբեր կողմերի, այդ թվում նաև բառակազմության հարցերի քննությանն է անդրադառնում Գ. Ջահուկյանը «Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան» (1987) աշխատության մեջ։ Խոսելով հնդեվրոպական լեզվի բառակազմական առանձնահատկությունների մասին՝ նա գրում է. «Հնդեվրոպական լեզվում լայնորեն գործում են բառակազմության երկու հիմնական եղանակները՝ բառաբարդումը և բառածանցումը, սակայն նախ՝ բարդության ոչ բոլոր տեսակներն են հավասարապես տարածված և երկրորդ՝ նախածանցումը բառիս բուն իմաստով բացակայում է»[8]։

Անհրաժեշտ է նշել, որ հնդեվրոպական լեզվում արմատին նախորդող և հաջորդող ձևաբանական տարրերը՝ նախածանցները և վերջածանցները, իմաստային և գործառական առումով հավասարարժեք չեն եղել։ Ինչպես նկատել են հնդեվրոպաբանները, հ.-ե. լեզուների համար շատ էական է նախածանցային և վերջածանցային ձևույթների իմաստային տարբերությունը, որը կայանում է նրանում, որ առաջինները սկզբնապես բոլորովին չեն օգտագործվում որպես բառափոխական միջոց և ավելի հատակ են պահպանում իրենց կոնկրետ-բառային բնույթը[9]։ Ասվածին պետք է ավելացնել, որ հ.-ե. լեզվում նախածանցների կամ իբրև այդպիսին համարվող տարրերի և վերջածանցների միջև ավելի էական տարբերություն կա նրանց գործառական ծանրաբեռնվածության տեսակետից։ Այս իմաստով վերջածանցներն ավելի ծանրաբեռնված են եղել՝ ունենալով ոչ միայն բառակազմական, այլև ձևաբանական գործառույթ։ Այնինչ նախածանցային ձևույթները հ.-ե. լեզվում հիմնականում հանդես են եկել բառակազմական դերով (հնդեվրոպական լեզվաընդհանրության որոշ տարածքներում նախահար մասնիկները կատարել են նաև ձևաբանական գործառույթ. հմմտ. վերը

բերված հայ. ե-բեր, հուն. ἔ-φερε, սկր. á-bharat և այլն։ Բայց նույնիսկ այդ լեզուներում նախահար ձայնավորն ունեցել է ոչ պարտադիր կիրառություն. հայերենում, օրինակ, այն հանդիպում է միայն միավանկ բայաձևերում, իսկ հունարենում և սանսկրիտում այդ բայաձևերը կարող են օգտագործվել նաև առանց այդ հավելվածների)։ Բուն իմաստով նախածանցները բառին սովորաբար տալիս են իմաստային նոր երանգ։ Բայց հետագայում, այդ նախածանցային ձևույթների իմաստային հողմնահարման և իբրև առանձին ձևույթ չընկալվելու հետևանքով, նախածանցով և առանց նախածանցի հանդես եկող արմատները վեր են ածվում բառակազմական տարբերակների, իսկ այդ բառերի միջև իմաստային կապի աստիճանական թուլացման, ապա նաև կորստյան հետևանքով կորչում է նաև ծագումնաբանական կապը, և այդ արմատները դիտվում են իբրև առանձին բառեր։

Այսպիսով, ինչպես ցույց են տալիս հնդեվրոպական առանձին լեզուների կառուցվածքի ուսումնասիրությունները, ընդհանուր հնդեվրոպական լեզվում նրա տրոհմանը նախորդած ժամանակաշրջանում նախամասնիկավորումը բառակազմական գործուն եղանակ չի եղել։ Շարժական s-ի, բառասկզբի այլ հերթագայվող տարրերի գոյությունը հիմք են տալիս ենթադրելու, որ դրանք հավանաբար երբեք գործուն բնույթ ունեցած նախամասնիկավորման առանձին հետքերն են միայն և հատուկ են եղել հնդեվրոպական լեզվաընդհանրության ոչ բոլոր տարածական տարբերակներին։

Այնուամենայնիվ, հնդեվրոպական լեզուներում, թե՛ ժամանակակից, թե՛ պատմական զարգացման ավելի վաղ փուլերում, նախածանցումը նշանակալի գործառություն է ունեցել։ Այդ երևույթի հիմքերը ոչ միշտ պետք է փնտրել լեզուների նախապատմության մեջ։ Նախածանցային ձևույթների առաջացման ամենից ավելի սովորական ուղին լիիմաստ բառերից քերականական իմաստ ունեցող (սպասարկու), վերջիններից էլ՝ նախդիր-նախածանցների անցումն է, չնայած ոչ միշտ է հնարավոր վերականգնել այդ գործընթացի բոլոր օղակները։

* * *

Հայերենի նախագրային շրջանի բառակազմության քննության ժամանակ, հենվելով գրաբարի՝ դեռևս իբրև բաղադրական կազմություն

գիտակցվող բառերի, հ.-ե. այլ լեզուների նյութի վրա, Գ. Ջահուկյանը վերականգնում է հայերենի՝ որպես ինքնուրույն լեզու ձևավորվելու՝ վաղնջական, և դրան հաջորդած՝ հնագույն շրջանների հայերեն բառերի կառուցվածքային միավորները։ Վաղնջական շրջանի հայերենում հնդեվրոպական ծագման նախածանցներն ավելի մեծ թիվ են կազմում և դեռևս գործուն են. դրանք և՛ քանակով, և՛ արդյունավետությամբ նվազում են հաջորդ՝ հնագույն շրջանում։ Այս փուլում մեծ գործածություն են ստանում փոխառյալ և բնիկ լիիմաստ բառերից առաջացած նախածանցները։ Կարելի է եզրակացնել, որ նախածանցումը որպես բառակազմական միջոց սկսել է կորցնել իր արդյունավետությունը հնդեվրոպական լեզվական ընդհանրության տրոհման ժամանակաշրջանում և ունեցել է մարման միտում։ Դրա համար էլ հայերենի՝ հ.-ե. լեզվին ժամանակագրորեն ավելի մոտ շրջանում դրանք ավելի շատ են եղել, քան հաջորդ փուլում։

Այստեղ մենք քննության ենք առնում գրաբարի նախամասնիկավոր բայական կազմությունները, դրանց կառուցվածքային առանձնահատկությունները, նախամասնիկների բնույթը, ինչպես նաև բայերին նրանց տված իմաստային նրբերանգները։

Փորձել ենք որոշել նախամասնիկավոր կազմությունների հարաբերական ժամանակագրությունը՝ չափանիշ ընդունելով բայերի նախամասնիկավոր և արմատական ձևերի իմաստային, կառուցվածքային (նախամասնիկը գիտակցվո՞ւմ է իբրև այդպիսին, թե՝ ոչ) առանձնահատկությունները, նախամասնիկների՝ հնդեվրոպակա՞ն ծագման, թե՝ փոխառյալ բայարմատների հետ զուգորդվելու ընդունակությունը։

Գրաբարի նախամասնիկավոր բայերն են.

ան-խայել (խնայել), ան-կղիտանալ (կտղիլ), առ-ածանել, առ-ածիլ (ածել), առ-աքել, առ-աւելուլ, առ-եղծանել (եղծել), առ-լնուլ (լնուլ), առ-խեթել (խեթել, խայթ), զ-ականել, զ-անգիտել, զ-անցանել, զ-ատանել, զ-առածիլ / զ-առածանել, զ-առանցել, զ-արդարել, զ-արթնուլ (հարթնուլ-ից), զ-արկանել, զ-արմանալ, զ-այրանալ, զ-անխլանալ, զ-աչաղել, զ-գալ, զ-գածել, զ-գենուլ, զ-գետնել, զ-գլխել, զ-գնալ, զ-եկուցանել, զ-եղծանել, զ-եղուլ, զ-եռալ, զ-ետեղել, զ-իջանիլ, զ-կծել, զ-տեղել, զ-օդել, զ-փախչիլ, ընդ-արմանալ, ընդ-աւաղել, ընդ-գեղձանիլ, ընդ-գճիլ, ընդ-գոգել, ընդ-գրկել, ընդ-դիմանալ, ընդ-ելանիլ/ընդ-ելնուլ, ընդ-ելուզանել, ընդ-խառնել, ընդ-հարկանել, ընդ-միջել, ընդ-մտանել, ընդ-ողնիլ, ընդ-ուլնել, ընդ-ունել, ընդ-վզիլ, ընթեռնուլ, ըն-

կլնուլ, ըն-կլուզանել, ըն-կճել / ըն-գճել, ըն-կողնիլ / ըն-կողմանիլ, ըն-կրկել, ըն-ձեռել, ըն-կապճիլ, ըմ-բռնել, ըմ-բերել, ըմ-բերանել, ըմ-պել, (ը)ստ-անձնել, ըստ-արտուղիլ, (ը)ստ-գտանել, (ը)ստ-երխ-րել, ըստ-ունգանել, յ-ածիլ (ածել), յ-ականել (ականել), յ-աղել (աղել), յ-այցել (այցել), յ-անձանձել, յ-անձնել, յ-անցանել, յ-աշաղել, յ-առ-նել, յ-երիւրել, յ-երկուանալ, յ-ղել, յ-արդարել, յ-աւելուլ, յ-անգիլ (անկանել), յ-արմնիլ (արմնիլ), յ-օրինել, յ-ողնիլ, (հ)-ամ-բառնալ, համ-բերել, ն-խոթել, ն-շողել (շողալ), ն-ստիլ, ս-պրդիլ (պրծանիլ), ս-տածել, ս-տեղանալ (ստեղել), ս-փածանել (փածանել), ս-փռել (փռել), ս-փոփել (փոփոգ), ս-փողել (փողել), ս-քողել (քող), ս-ուրալ / յ-ուրալ, տ-քնիլ։

Գրաբարի զ- (ս-), առ-, ընդ-, (ըմ-, ըն-), ըստ- (ստ-), յ-, (հ)ամ-, ն- (նի-) նախամասնիկներին վերագրվում է հնդեվրոպական ծագում։

Զ նախդիրը հանգեցնում են հ.ե. *g'ho «հետևում, հետո, համար» նախաձևին։ Զուգահեռներ ունի միայն բալթիկ-սլավոնական լեզուներում՝ ուկր., բելոռուս. за, հին սլավ. за, բուլղ. за, սերբախորվաթ. za, լատվ. az, âz, լիտվ. ažù և այլն։ Սլավոնական за-ն հայերենի զ-ի հետ նմանություն է դրսևորում նաև կիրառության մեջ*։

Հայերենի զ- նախամասնիկով բայերը կարելի է բաժանել երկու խմբի։ Առաջինի մեջ ընդգրկվում են այն բայերը, որոնցում զ-ն ունի սաստկական նշանակություն. որպես կանոն այդ բայերը գործածվում են նաև առանց զ-ի. հմմտ. զգետնել-գետնել, զգլխել-գլխել, զականել-ականել, զգնալ-գնալ, զկծիլ-կծիլ, զեղծանել-եղծանել, զարմանալ-արմանալ, զայրանալ-այրել և այլն։ Ինչպես տեսնում ենք, այս դեպքում այն գործածական է ոչ միայն հնդեվրոպական ծագման՝ բնիկ, այլև փոխառյալ կամ անստույգ ծագման բայերի հետ։

Երկրորդ խմբի բայերի առանց զ-ի ձևերը կամ առանձին անգործածական են, կամ ձևական տարբերություն ունեն արմատականներից. օր.՝ զգենուլ (բբառ. գենուլ), զգածել, զեկուցանել, զտեղել/զետեղել։ Այս բայերը բնիկ՝ հ.-ե. ծագման բայեր են։

---

*Ստուգաբանական նյութը բերվում է ըստ Յ. Պոկոռնու Indogermanisches etymologisches Wörterbuch, 1—2, Bern-München, 1959—1969, և Մ. Ֆասմերի Этимологический словарь русского языка. М., 1986—87. բառարաններից։

Հայերեն զգենուլ բայը հանգում է հ.-ե. *u̯es- «հագնել» արմատի *u̯es-ղu-ձևին: Հ.-ե. լեզուների մեծ մասում այն ունի զուգահեռներ. հնդկ. vásatē «հագնել», ավ. waste, vanhaiti- հագնել», հնդկ. vásana-, ավ, vanhana - հագուստ, զգեստ», հուն. ἕννῦμι «հագնել», լատ. vestis «հագուստ» գոթ. wasjan «հագնել», wasti «հագուստ», միջգերմ. wester «կնունքի՝ տոնական հագուստ» և այլն:

Ուշադրություն դարձնենք այն հանգամանքի վրա, որ բացակայում են բալթիկ-սլավոնական լեզուների ձևերը: Ինչպես տեսնում ենք, հ.-ե. բոլոր լեզուներում, որտեղ պահպանվել է այդ արմատը, այն հանդես է գալիս «հագնել, զգեստ» նշանակությամբ, ընդ որում «հագնել» այս դեպքում նշանակում է հագնել զգեստ և ոչ թե, ենթադրենք, կոշիկ:

Հայերենում ունենք հնդեվրոպական ծագման մեկ այլ բայ ևս, որ նորից նշանակում է «հագնել». դա ագանիլ բայն է. նույն արմատից են կազմված ագուցանել «հագցնել, օղակի մեջ անցկացնել», ագոյցք «օղակ, օղակի մեջ անցկացնելով բռնելու ձող»[10]: Հետագայում՝ արդեն ն-ի հավելումով առաջացել են ճագանիլ, ճագնիլ ձևերը: Ագանիլ բայը հանգում է հ.-ե. *eu- «ձգել՝ քաշել, հագնել՝ վրան քաշել շոր՝ հագուստ՝ կոշիկ», *ou-tlā-«կապ» արմատին: Հնդեվրոպական լեզուներում այս արմատը պահպանված է տարբեր իմաստներով. ավ. aoϑra- «կոշիկ», լատ. ex-uō «հանել», ind-uō «հագնել», ind-uviae «հագուստ, զգեստ», ind-uvium «ծառի կեղև», exuviae «օձի հանած մորթը՝ կաշին, հանած զգեստ», լիտվ. aviù,-ëti «կոշիկ՝ կոշիկերեն հագնել՝ կրել», aũklė «կոշիկի քուղ՝ կապ», եկ. սլավ. izuju, izuti «կոշիկը հանել», հին. սլավ. obujǫ, obuti «կոշիկ հագնել» և այլն:

Փաստորեն հայերենում «հագնել, հագուստ՝ զգեստ» նշանակության համար ունենք երկու՝ ագանիմ և զգենում բայերը: Մենք ենթադրում ենք, որ նույն իմաստի համար երկու բառի գոյությունը պայմանավորված է եղել այդ արմատների իմաստային կիրառական տարբերություններով: Հ.-ե. *eu-, *ou-tlā ձևերի «քաշել՝ ձգել, կապ՝ քուղ» իմաստները, ինչպես նաև ավ. aoϑra «կոշիկ» և հայերենի աւղ՝ օղ «կոշիկ», այլ լեզուներում ևս «կոշիկի քուղ՝ կապ, կոշիկ հագնել, կոշիկ» իմաստներով բառերի առկայությունը նկատի ունենալով հնարավոր ենք համարում ենթադրել, որ այդ արմատն սկզբնապես ունեցել է «քաշել՝ ձգել՝ ծածկել (հմմտ. հայ. աւրոց)», «կոշիկ, կոշիկի քուղ՝ կապ», «կոշիկ հագնել» իմաստները, հետագայում այս վերջին՝ «կոշիկ

հագնել» իմաստի ընդլայնումով առաջացել են «հագնել, հագանել» իմաստները։

Այժմ տեսնենք, թե ինչ իմաստներով են հանդես գալիս գրաբարում ագանիմ և զգենում բայերը։ Ագանիմ բայի համար ՆՀԲ բերում է հետևյալ իմաստները. «զգենլի ինչ առնուլ զանձամբ, յոտս կամ յայլ մասն մարմնոյ»[11]։ Բերված բնագրային օրինակներում կան և՛ հագուստ, և՛ կոշիկ հագնելու իմաստով գործածություններ։ Զգենում բայի համար ՆՀԲ բերում է հետևյալ իմաստները. «ագանել, արկանել զիւրև. զգածիլ. ունել, կրել յանձին, առնուլ զանձամբ. հագածիլ. զարդարիլ»[12]։

Պետք է նեթադրել, որ ագանիլ-ը ունեցել է ավելի լայն իմաստ՝ նշանակելով հագնել և՛ կոշիկ, և՛ հագուստ, իսկ զգենուլ-ը գործ է ածվել միայն զգեստ հագնել իմաստներով, հավանաբար նաև այն հատուկ է եղել ավելի բարձր, վսեմ ոճին. հմմտ. գերմանական լեզուների «տոնական հագուստ» և հայերենի «զարդարիլ» իմաստները։

Այս երկու բառերի հնդեվրոպական նախաձևերի մասին խոսելիս Հ. Աճառյանը գրում է. «Հնխ. ves պարզական արմատ չէ, այլ աճած է eu «հագնիլ» արմատից, իբրև u̯-es»[13]։

Իմաստային առումով թերևս հնարավոր լինի բացատրել այս արմատների կապը։ Բայց *u̯es- արմատը համարել *eu- ի աճած ձև, հընչյունական առումով հավանական չէ։ Եթե *eu-ն աճել է՝ տալով*u̯-es, ապա անբացատրելի է *eu-ի u-ի անկումը և s-ի հավելումը, իսկ եթե *eu-ն է աճել es-ով, ապա այդ դեպքում էլ անբացատրելի է e-ի անկումը։ Ավելի հավանական է նեթադրել, որ դրանք իրարից անկախ, տարբեր, բայց հոմանիշ արմատներ են եղել, որոնք երկուսն էլ իրենց արտացոլումն են գտել հայերենում։

Հայ. զգենուլ-ի կողքին առանց զ-ի ձևի բացակայության հետևանքով զ-ի բերած իմաստային տարբերությունը նկատելի չէ։ Հայ բարբառներում առկա առանց զ-ի ձևերը՝ կ՛ենալ, կէց տալ, կէցել, կէցվել, գ՛եստ, իմաստային առումով ոչ մի տարբերություն չեն դրսևորում։ Այդ ձևերը համարվում են ավելի նախնական, հին, քան գրաբարյան զգենուլ-ը, և դիտվում են իբրև հնդեվրոպական հնաբանություն։ Իսկ եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ այն բարբառներում, որտեղ առկա են այս ձևերը, հիմնականում չի պահպանվել գրաբարյան ագանիմ-ից առաջացած և այժմ լայն տարածում ստացած հագնել բա-

յը, ապա կարելի է ենթադրել, որ ագանիմ և զգենում ձևերը հավանաբար եղել են տարածական տարբերակներ։

Հայ. զգածիլ «հագնել» բայի առանց զ-ի ձևերը նույնպես գործածական չեն։ Հ. Աճառյանը այն կազմված է համարում գած արմատից՝ զ մասնիկով. նույն գած արմատն է առկա նաև առ-ի-գած «գոգնոց, մարմնի վրա գցվող ծածկույթ» բառում։ Հ. Աճառյանն այս բառը դասում է չստուգաբանված արմատների շարքը։ Ա. Մեյեն կապում է հնխ. *u̯eg- արմատի հետ[14]։ Է. Աղայանը զարգացնում և հիմնավորում է Ա. Մեյեի այս ենթադրությունը։ Հայ (զ)գած- արմատը գատի> գոտի բառի հետ համգեցնում է հ.-ե. *u̯eg- «հյուսել, հանգուցել, հյուսվածք, գործվածք» արմատին. (ծ→տ և ա→ու հնչյունական համապատասխանության համար հմմտ. արած-արատ)[15]։ Հնդեվրոպական մի շարք լեզուներում առկա են այս արմատի՝ հայերենին մերձավոր իմաստ ունեցող բառեր (հմմտ. լատ. vēlum «վարագույր, ծածկոց՝ վերմակ», vēlare «ծածկել, փաթաթել, կապել», հվգերմ. wiocha «ոլորած թել, պատրույգ», մվգերմ., նվգերմ. wickeln «պատել, փաթաթել» և այլն)։ Նույն արմատից, ինչպես իրավացիորեն նշում է Է. Աղայանը, կարող էր ծագել հայ. գատի բառը (հմմտ. հ.-ե. մյուս լեզուների «պատել, փաթաթել, կապել, ոլորած թել» նշանակությամբ բառերը)։ Գածարմատի «պատել, կապել, ծածկել» իմաստներից հեշտությամբ կարող էր զարգանալ հայերենի «հագնել» իմաստը։ Իմաստային այս անցումը նմանություն է դրսևորում հ.-ե. *ag- արմատի «կոշիկի քուղ, կապ, կոշիկ, կոշիկ հագնել» և «հագնել» իմաստային զարգացման հետ։

Ինչպես զգենուլ, այնպես էլ զգածիլ բայի առանց զ-ի ձևերի բացակայությունը հնարավորություն չի տալիս բացահայտելու զ-ի բերած իմաստային նրբերանգը։

Մեր կարծիքով պետք է տարբերակել նախդիրի և նախամասնիկի գործառությամբ հանդես եկող զ-երը։ Նախդրական կիրառությամբ հանդես եկող զ-ն իմաստային և գործառական նմանություններ է դրսևորում սլավոնական լեզուների հետ և իր իմաստով կապվում է հ.-ե. *g̑ʹho «հետևում, հետո, համար» արմատի հետ։ Բայական նախամասնիկի կիրառությամբ հանդես եկող զ-ն նշված հ.-ե. արմատի հետ իմաստով չի կապվում։ Բայերի մի մասում, որոնց առանց զ-ի ձևերը նույնպես գործածական են, զ-ն իբրպես սաստկականության իմաստ է հաղորդում բայերին։ Մյուս բայերում զ-ի տված իմաստային նրբ-

քերանգը որոշելը դժվարություններ է հարուցում։ Թերևս դրանցում ևս այն սաստկականության իմաստ է ունեցել, բայց առանց զ-ի ձևերի համեմատության եզրի բացակայության պատճառով այն այլևս չի գիտակցվում։

Պետք է ենթադրել, որ զ-ն իբրև բայական նախամասնիկ չի կապվում նախդիր զ-ի հետ, և նրան հ.-ե. ծագում վերագրելը փաստական հիմքեր չունի։ Զ-ի հավելումը բայերին հավանաբար ուշ շրջանի երևույթ է։ Այդ ենթադրության համար հիմք են տալիս հետևյալ նկատառումները. ա) զ նախդիրը հանդիպում է հայերեն և բալթիկ-սլավոնական լեզուներում զ նախամասնիկը բալթիկ-սլավոնական լեզուներում բացակայում է, բ) հայերենում այն գործածական է նաև փոխառյալ բայերի հետ, գ) զ նախամասնիկի հավելումը ավելի ուշ է տեղի ունեցել, քան առ-, ան-, յ- նախամասնիկների հավելումը. հմմտ. զանգիտեմ-անգիտեմ, զառանցել, զանխայեմ և այլն։

Զ-ի գրքային տարբերակ է համարվում ս- նախամասնիկը, որը հանդես է գալիս բառասկզբի խուլերից առաջ։ Այդ նախամասնիկն ունեն հետևյալ բայերը. ս-փռել-փռել, ս-պրդիլ-պրծանիլ, ս-տածել-տածել, ս-փածանել-փածանել, ս-փոփել-փոփոգ, ս-քողել-քող, ս-փողել-փողել[16]։ Հավաստիորեն հնդեվրոպական ծագում է վերագրվում միայն փռել (ս-փռել) բային. մնացածներն ունեն անստույգ ծագում։ Սա ևս կարող է զ-ի ուշ ծագման մեր ենթադրության համար կռվան լինել։ Զ-ի բնույթի (փոխառյալ, առշերտային) վերաբերյալ դժվար է որևէ որոշակի ենթադրություն անել, բայց կարծում ենք, որ նրա գործածությունը հավանաբար ամրապնդվել է այդ բայերի հետ զ որոշիչ հոդով անունների կիրառության ազդեցությամբ։

Այլ է պատկերը ընդ- և ըստ- նախդիրների դեպքում։ Ընդ-ի համար վերականգնում են հ.-ե. *anti «դիմաց, առջև» և *n̥dhos «տակ» նախաձևերը։ Հնդեվրոպական լեզուների մեծ մասում վկայված են այդ արմատի զուգահեռները և՛ նախդրային, և՛ նախամասնիկային (բայերի հետ) կիրառություններով. հմմտ. հուն. ἀντι-ἀνθίστημι, ἄντικρυς, լատ. ante - antid-īre, ante-cēdo և այլն։

Հայերենում ընդ-ը իբրև բայական նախամասնիկ հանդես է գալիս նաև ըն- և ըմ- ձևերով. դրանցով կազմված բայերը գերազանցապես հնդեվրոպական ծագում ունեն։ Պետք է ենթադրել, որ ըն-ով և ըմ-ով ձևերը ավելի հին կազմություններ են։ Նախապես ընդ-ը գործածվել է բնիկ հայերեն բայարմատների հետ. ժամանակի ընթացքում այն և՛

հնչյունական փոփոխությունների է ենթարկվել (կարծեք «մաշվել» է), և՛ իմաստային հոմանշարման: Եթե ընկղմել-ի մեջ ընդ-ի իմաստը դեռևս գիտակցվում է, ապա ըմպել բայի մեջ այն այնքան է մթագնված, որ այդ բառի ստուգաբանությունը տարակարծությունների տեղիք է տվել: Հ. Աճառյանը այն կապում է ումպ բառի հետ՝ վերջինիս ծագումը համարելով անստույգ: Ա. Մեյեն այն առաջացած է համարում ավելի նախնական *ճիպել (սկր. pibāmi) ձևից, ընդ նախդիրի հավելումով[17]: Հնդեվրոպաբանների մեծ մասը այն կապում է հ.-ե. *pō(i)-, *pī- արմատի հետ, որի հետ հայերենի բայը կապվում է իմաստային առումով, բայց դժվարություններ է հարուցում հնչյունական կողմի բացատրությունը: Գ. Ջահուկյանը նույնպես այն կապում է հ.-ե. այդ արմատի հետ, բայց հայերենի ձևի համար ենթադրում է կրկնավոր կազմությամբ ներկա, որի զուգահեռներն են հնդկ. pibati, լատ. bibō, ere (*pibō-ից), հիռլ. ibid (*pibeti-ից), բոլորն էլ «խմել» նշանակությամբ: Հայերենի ձևն առաջացել է. «...*pibeti>*hipeti անցմամբ և ընդ-ի հետագա հավելմամբ՝ *ընդ-ճիպել>ըմպել»[18]: Հետագայում արդեն այս ձևից ունդ, ունչ ձևերի համաբանությամբ առաջանում է ումպ-ը:

Ընդ-ով կազմված մյուս բայաձևերը, որոնց մեջ կան և՛ հ.-ե. ծագման, և՛ փոխառյալ արմատներ, ընդ-ի նախդրային կիրառությունից առաջացած ուշ կազմություններ են. դրանց առանց ընդ-ի ձևերը նույնպես գործածական են:

Հնդեվրոպական *pos «անմիջապես հետո, հետո, հետևում՝ հետևից» նախաձևի -ti-ով աճած ձևին է հանգում հայ. ըստ «համեմատ, համաձայն, այն կողմը, հետո, հետևից» նախդիրը: Հ.-ե. մյուս լեզուներում առկա են հետևյալ զուգահեռները. լիտվ. pàs «մոտ», ալբ. pas «հետո», լատ. post «հետո» (հայերենի նման հ.-ե. *pos-ti-ից) և այլն. որոշ լեզուներում հանդիպում են *pos արմատի -ko-ով աճած ձևերը. հհնդկ. paśca «հետևում, հետևից», ավ. pašca «հետևում», լիտվ. paskuī, pāskui «հետևում, հետևից»:

Ըստ-ը հայերենում գործածական է և՛ իբրև նախդիր, և՛ իբրև նախամասնիկ. վերջինիս դերում հանդես է գալիս ավելի սակավաթիվ բայերում, քան վերը նշվածները՝ (ը)ստանձնել, (ը)ստգտանել, (ը)ստերիւրել, ըստարտուղիլ: Բոլոր բայերի արմատներն էլ հնդեվրոպական

ծագում ունեն։ Առաջին երեք բայերի մեջ ըստ- նախամասնիկը հանդես է գալիս նաև ստ- ձևով։ Եվ դա, մեր կարծիքով, պատահական չէ. դրանք ավելի հին կազմություններ են, քան ըստարտուղիլ-ը (ուղի→արտուղի→ըստարտուղիլ)։

Հայերեն առ-ը կապվում է հ.-ե. *porsō (d) արմատի հետ. զուգահեռներ կան հունարենում՝ πόρρω, πόρσω, լատիներենում՝ porrō «առաջ», որտեղ դրանք հանդես են գալիս իբրև նախդիրներ։ Հայերենում առ-ը ավելի գործածական է իբրև նախդիր։ Իբրև բայական նախամասնիկ հանդես է գալիս ոչ մեծ թվով բայերի մեջ (տե՛ս վերը բերված բայերի ցանկը)։ Դրանցից միայն առածել, առաւելով բայերն են, որ ունեն հավաստի հնդեվրոպական ծագում։ Մնացած առ-ով բայերը համարում ենք ուշ կազմություններ, որոնցում առ-ը գործածվել է փոխառյալ կամ անստույգ ծագման բառերի հետ և հստակորեն պահպանել է իր նախդրային իմաստները։

Հայերեն ն(ի)- նախամասնիկը կապվում է հ.-ե. *ni-, *nei- «ցած» արմատի հետ։ Հանդես է գալիս սակավաթիվ բայերում, օր. հայ. նըստիմ։ Ն(ի)- մասնիկը հայերենում ևս ունեցել է «ցած, ներքև» իմաստը, և նստիմ-ը նախապես նշանակել է «ցածում տեղ զբաղեցնել». ն(ի)-ով կազմություններ առկա են նաև այլ լեզուներում. ավ. nišāδayeiti «նստել ցած, ներքևում», հպրսկ. niyašādayam «նստում եմ» («ցածում տեղ զբաղեցնել→նստել» իմաստային անցման համար համեմատել ավեստայի, հին պարսկերենի և հայերենի ձևերը. հին պարսկերենում արդեն, ինչպես և հայերենում, ն(ի-)-ն կորցրել է իր «ցածում, ներքևում» իմաստը և *sed- արմատի հետ արդեն ունի «նստել» իմաստը)։

Հավանաբար ն(ի-)-ն նույն իմաստով պահպանվել է նաև նշողեմ բայի մեջ, նշանակելով «շողալ, շողերը ներքև՝ ցած տարածել»։ Նխոբեմ բայի ն-ի համար, հավանաբար, այլ ծագում պետք է ենթադրել. այն ավելի շատ ունի «ներս», քան թե «ցած» իմաստը։

Խնդիրն ավելի պարզ է յ- նախամասնիկի դեպքում։ Այն հանգում է հ.-ե. *en «մեջ» նախաձևին. զուգահեռներն առկա են հնդեվրոպական գրեթե բոլոր լեզուներում։ Յ-ն, լինելով ի նախդրի դիրքային տարբերակ, հանդես է գալիս միայն ձայնավորներից առաջ։ Եվ քանի որ ձայնավորները հայերենում բառասկզբի դիրքում քիչ են փոփոխությունների ենթարկվում (թերևս միայն ուղի→յուղեմ→յղեմ), յ- նախամա-

նիկը ավելի հստակ է տարանջատվում։ Իմաստային առումով ևս այն ի(յ)-ի նախդրային նշանակությանը ավելի հարազատ է, երբեմն միայն հանդես բերելով սաստկականության երանգ։ Ի տարբերություն մյուս բայական նախամասնիկների, յ-ն պակաս արդյունավետ է և, թերևս, ավելի կարճատև է գործուն եղել։ Այն իբրև նախամասնիկ հանդես է գալիս (սակավ բացառություններով՝ յարձակել, յապաղել) հիմնականում հնդեվրոպական ծագման բայերի հետ և հայոց լեզվի զարգացման հետագա փուլերում չի գործառել (հմմտ. ընդ-ի հետագա կիրառությունների՝ ընդլայնել, ընդգծել և այլն, կողքին յ-ով կազմություններ չկան)։

Ամփոփելով գրաբարի նախամասնիկավոր բայերի կազմության վերաբերյալ վերն ասվածները, կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

ա) Որոշ նախամասնիկներ արդեն գրաբարյան փուլում չեն գիտակցվում իբրև այդպիսիք (օր. ճստել, ըմպել). դրանք այն նախամասնիկներն են, որոնք հնչյունական փոփոխությունների ենթարկվելով՝ ձուլվել են արմատին և հեռացել սկզբնաձևից. արմատական ձևերի բացակայության պատճառով մթագնել է նաև նախամասնիկների բերած իմաստային նրբերանգը։

բ) Որոշ նախամասնիկների գործառությունը (առ-, զ-, յ-) սահմանափակվել է գրաբար փուլով. հավանաբար այստեղ նշանակալի դեր է խաղացել նաև դրանց նախդրային կիրառության սահմանափակումը (հմմտ. ընդ-ի ավելի հաճախական գործածությունը թե՛ իբրև նախդիր, թե՛ իբրև նախամասնիկ)։

գ) Որոշ նախդիրների՝ իբրև բայական նախամասնիկներ, կիրառությունը (օր. ընդ) զուգահեռներ ունի նաև հնդեվրոպական այլ լեզուներում։ Այն դեպքերում, երբ այդպիսի զուգահեռներ չկան, նախդիրների նախամասնիկային կիրառությունը, հավանաբար, հայերենի ինքնուրույն զարգացման արդյունք է։

ԿՐԿՆԱՎՈՐ ԲԱՅԵՐ

Հնդեվրոպական առանձին լեզուների համեմատական քերականության հարցերին, ինչպես նաև հնդեվրոպական լեզվաընդհանրության լեզվական կառուցվածքի նկարագրությանը նվիրված ուսումնասիրություններում հնդեվրոպաբանները քննության են առնում լեզվական

տարբեր մակարդակների միավորների կառուցվածքային առանձնահատկությունները։ Անդրադառնալով հնդեվրոպական անվանական և բայական հիմքերի հնչյունական և ձևույթային բնութագրին՝ նշում են այդ հիմքերի կառուցվածքային տիպերը։ Բնականաբար ուշադրության են արժանանում նաև կրկնավոր կազմությունները և՛ անվանական, և՛ բայական համակարգում։ Եթե անվանական հիմքերում կրկնությունը սոսկ բառակազմական միջոց է, ապա բայական հիմքակազմության մեջ այն հանդես է գալիս հիմնականում ձևաբանական գործառույթով։

Կրկնությունը հին և շատ տարածված բառակազմական եղանակ է։ Հնդեվրոպական լեզվում կրկնության գործառության և կրկնավորների կազմության վերաբերյալ հնդեվրոպաբանների տեսակետները հիմնականում միասնական են[19]։ Կրկնությունը բայական հիմքերի կազմավորման միջոցներից մեկն է եղել։ Կրկնավորների իմաստային կողմի առանձնահատկությունները նկատի ունենալով՝ տարբերում են կրկնության երկու տեսակ՝ սովորական և սաստկական։ Սաստկական կրկնությամբ կազմությունները ցույց են տալիս գործողության կրկնություն կամ տևականություն, գործողության վերջնական ավարտվածություն՝ բայական հիմքերում, և արտահայտչական (էքսպրեսիվ) իմաստ են հաղորդում բառին՝ անվանական հիմքերում։ Ըստ կրկնավորների կազմության տարբերում են կառուցվածքային երկու տիպ. մասնակի և ամբողջական կրկնություն։ Մասնակի կրկնության ժամանակ կրկընվում է արմատի սկզբի բաղաձայնը, որին ավելանում է i ձայնավորը կամ e/o ձայնավորը։ Երբեմն կարող է կրկնվել արմատի սկզբի բաղաձայնը, ձայնավորը և դրան հաջորդող ձայնորդը։ Ամբողջական կամ լրիվ կրկնության ժամանակ, որը հատուկ է արտահայտչական (էքսպրեսիվ) իմաստ արտահայտող անուններին, և ինտենսիվ, սաստկական իմաստ ունեցող բայերին, կրկնվում է արմատն ամբողջությամբ. ըստ որում այս դեպքում կարող է տեղի ունենալ արմատի վերջին ձայնորդի փոփոխություն կրկնության առաջին եզրում։

Կրկնությունը որպես բառակազմական եղանակ հատուկ է եղել հայերենին նրա զարգացման գրեթե բոլոր փուլերում։ Բայց այն անփոփոխ չի մնացել լեզվի զարգացման տարբեր ժամանակաշրջաններում և հանդես է բերել յուրահատկություններ թե՛ կառուցվածքային, թե՛ արդյունավետության առումով։ Կրկնության որոշ տեսակներ, որոնք գործուն են եղել լեզվի զարգացման ավելի վաղ շրջանում, դադարել են

այդպիսիք լինելուց հետագայում, ինչպես նաև կրկնության այլ կաղապարներ ի հայտ են եկել ավելի ուշ։

Հայերենի կրկնավորների հարցին անդրադարձել են շատ հայագետներ՝ Ա. Մեյե, Հ. Աճառյան, Մ. Աբեղյան, Գ. Սևակ, Գ. Ջահուկյան, Ա. Աբրահամյան, Վ. Առաքելյան, Է. Թումանյան, Ա. Մուրվալյան, Ջ. Գրեպին և ուրիշներ։ Կատարվել է կրկնավորների դասակարգում ըստ կրկնության տեսակների (արմատի պարզ կրկնություն, կրկնություն արմատական ձայնավորի կամ բաղաձայնի փոփոխությամբ, կորստով կամ հավելումներով և այլն)։ Փորձեր են արվել, համեմատաբար ավելի քիչ ուսումնասիրողների կողմից, բացահայտելու կրկնության՝ իբրև բառակազմական երևույթի ծագումնաբանական բնույթը՝ այն հայերենին բնորո՞շ երևույթ է, հիմքեր ունի՞ հնդեվրոպական ընդհանրության շրջանում, թե՞ բացատրվում է որպես ենթաշերտային, առշերտային կամ այլ կարգի ազդեցությունների հետևանք։ Այստեղ մենք համառոտակի կանգ կառնենք լեզվաբանների այն աշխատությունների վրա, որոնցում նրանք քննության են ենթարկել գրաբարի կրկնավոր կազմությունները և այդ կապակցությամբ նաև՝ կրկնավորների ծագմանը, նրանց հնդեվրոպական հիմքերի բացահայտմանն են անդրադարձել։ Ա. Մեյեն «Դասական հայերենի համեմատական քերականության ուրվագիծ» աշխատության մեջ, խոսելով գրաբարում ներկայի բայահիմքերի կազմության մասին, նշում է նաև արմատի կրկնությամբ բնորոշվող ներկայի հիմքի առկայությունը հայերենում և բերում ազ-ազ-իմ, դն-դնւ-իմ, թա-թաւ-եմ, թաւ-թափ-եմ, կոչ-կոճ-եմ, ող-ող-եմ, ճոտ-ոտ-իմ, փաղ-փաղ-իմ կրկնավոր բայերը, ավելացնելով, որ դրանք դրսևորում են կրկնավորների կազմության նույն եղանակը, ինչ որ առկա է հայերենում[20]։

Հ. Աճառյանը «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատության 3-րդ հատորում խոսելով կրկնության մասին նշում է, որ այն հնդեվրոպական լեզվում կատարել է և՛ բառակազմական, և՛ քերականական գործառույթ։ Քննելով հայերենի կրկնավորները, նա բերում է հայերենի շուրջ հինգ հարյուր կրկնությամբ կազմված բառեր, դասակարգելով դրանք ըստ կրկնության տեսակների։ Հ. Աճառյանն անդրադառնում է նաև կրկնավորների ծագման հետ առնչվող հարցերի՝ մասնավորապես «...կարո՞ղ էր հայերենը կրկնավորի դրությունը նախամորից ժառանգած լինել», կրկնավորները զուտ հայկակա՞ն գոյացություններ են, թե իրենց հիմքերն ունեն հնդեվրոպական նախալեզ-

վում։ Նա գտնում է, որ հայերենի կրկնավորները նախալեզվի վիճակն են արտացոլում. «...եթե երբեք հայերենի խորագույն հնության վիճակը որևէ կերպով մի օր երևան գա, բայերի կրկնավոր ժամանակներն էլ մեջտեղ պիտի ելնեն, որին ապացույց է մի թանկագին նշխարք, **արարի** ձևը»[21]։ Կրկնության տարբեր տեսակների մասին խոսելիս Հ. Աճառյանը այն կարծիքն է հայտնում, որ նախալեզվի հնագույն վիճակին ավելի հարազատ են արմատի ամբողջական կրկնությամբ կազմված ձևերը. «չենք ուզում ասել, թե այս ձևով հայերեն կրկնավորները նախալեզվյան վիճակն են ներկայացնում, այլ թե՝ կրկնության այս ձևը ժառանգություն է մնացած նախալեզվից»[22]։ Նշանակում է, արմատի ամբողջական կրկնությունը հատուկ է եղել և հնդեվրոպական լեզվին, բայց սա չի նշանակում, թե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կրկնությամբ կազմված հայերեն բառի նախօրինակը պետք է փնտրել հնդեվրոպական նախալեզվում։ Կրկնության մյուս տեսակը, որի ժամանակ արմատի վերջին մասը «...թեթևանում է բառի առաջին եզրի մեջ», օրինակ, **բաբախել**, **պապանձել** և այլն, նույնպես, ըստ Հ. Աճառյանի, արտացոլում է հ.-ե. կրկնության սովորական տիպը։ Քննելով կրկնության այլ տեսակները ևս, նա եզրակացնում է, որ «հայերենը պահած լինելով հանդերձ հնդեվրոպական կրկնության ընդհանուր ոգին, մշակել է իր մեջ մի ավելի կանոնավոր ձև»[23]։

Կրկնության, որպես բառակազմական եղանակի քննություն է կատարում և Է. Թումանյանը իր «Древнеармянский язык» և «Структура индоевропейских имен в армянском языке» աշխատություններում։ Նա բերում է գրաբարի կրկնավորների հիմնական կաղապարները և նշում նրանց առաջացման երեք հիմնական աղբյուրները՝ հնդեվրոպական կրկնավոր նախաձևեր, հնդեվրոպական ոչ կրկնավոր նախաձևեր, այլ՝ ոչ հնդեվրոպական ծագման կրկնավորներ, առաջացած համաբանության ազդեցությամբ[24]։

Որոշ հետազոտողներ էլ հակված են կրկնության հիմքերը համարել ենթաշերտային կամ այլ ազդեցությունների հետևանք։ Ջ. Գրեպինը, օրինակ, «Հայ լեզվաբանության տարեգրքի» 1981 թ. համարում զետեղված «Կրկնավոր կաղապարները դասական հայերենում» հոդվածում բերում է գրաբարի կրկնավոր բառերի ցանկը՝ 20-ից ավելի, որոնց, քիչ թե շատ հավաստիորեն, վերագրվում է հնդեվրոպական ծագում։ Քննելով այս կրկնավորները, որոնցից հնդեվրոպական ծագում է վերագրում ընդամենը հինգ անվանական (թիթեռն, ծիծառ, կոկորդ, հե-

դեղ, սխեռն) և երկու բայական (հոտոտիմ, թոթռեմ) կազմությունների, նա նշում է, որ հայերենում հնդեվրոպական կրկնության կաղապարները մարելու միտում են ունեցել։ Նա ավելացնում է, որ կրկնավորների կորուստը անսովոր երևույթ չի եղել հնդեվրոպական լեզուների համար. իբրև ապացույց բերում է կրկնավոր կազմությունների բացակայությունը գերմանական, թոխարական լեզուներում[25]*։ Հայերենում կրկնավոր կազմությունների կենսունակությունը և նախագրային շրջանում նրանց «վերածնունդը» բացատրում է վաղնջահայերի (*protoarmenians*) հարևան՝ մասնավորապես խեթալուվական և խուռաուրարտական լեզվախմբերի ազդեցության հետևանք*[26]*։*

«Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան» աշխատության մեջ Գ. Ջահուկյանը վաղնջահայերենի և հին հայերենի բառակազմության այլ եղանակների՝ ածանցում, բարդում, թվում քննություն է առնում նաև կրկնությունը։ Նշելով այն փաստը, որ գրաբարում դեռևս առկա է հնդեվրոպական քերականական կրկնության մնացուկային երևույթ հանդիսացող արարի *ձևը, նա ենթադրում է, որ այն վաղնջահայերենում ավելի տարածված պետք է լիներ։ Հնդեվրոպական բառային կրկնությունը հայերենում արտացոլվել է բավական հարազատորեն, տարածում գտնելով նաև բայական հիմքերում։ Գ. Ջահուկյանը, հենվելով հնդեվրոպական կրկնավոր կաղապարների վրա, տարբերակում է հայերենի՝ վաղնջական և հնագույն շրջանների կրկնավոր կազմությունները, կատարում կրկնավորների դասակարգում՝ առանձնացնելով վաղնջահայերենի համար նույնական և ոչ նույնական կրկնության տեսակները, վերջինի մեջ էլ ավելի մանրամասն բաժանում կատարում, ելնելով հայերենի կրկնավորների յուրահատկություններից։ Հնագույն շրջանի հայերենում վաղնջահայերենից պահպանված կրկնավոր կաղապարների կողքին սկսում են հանդես գալ նորերը, որոնցից առանձնացնում է հատկապես հոդակապավոր և նախդրավոր կազմությունները։ Գ. Ջահուկյանը փորձում է որոշել կրկնավոր կազմությունների հարաբերական ժամանակագրությունը, տարբերակելով հնդեվրոպականից գրաբար անցման փուլի կրկնավոր կազմությունների հին, հնդեվրոպականին ավելի մոտ կաղապարները հետագա հայկական նորակազմություն հանդիսացող կաղապարներից։*

Ամփոփելով գրաբարի կրկնավոր կազմությունների վերաբերյալ արտահայտված կարծիքները, անհրաժեշտ ենք համարում նշել, որ կրկնությունը իբրև բառակազմական եղանակ անհարկի, խորթ երևույթ չի

ծղել հնդեվրոպական լեզվի կամ հնդեվրոպական այն տարածքային տարբերակի համար, որից ծագած է համարվում հայերենը։ Կրկնավոր կազմությունների բացակայությունը հնդեվրոպական որոշ լեզուներում բավարար հիմք չի հանդիսանում չընդունելու նրա գոյությունը հայերենում։ Հնդեվրոպական կրկնավոր կազմությունների արտացոլումներն առկա են նաև հայերենի հետ տարածքային սերտ աղերսներ ունեցող այնպիսի լեզուներում, ինչպիսիք են հունարենը, հին հնդկերենը։ Լեզուների պատմական զարգացման ընթացքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներթաշերտային, առշերտային կամ այլ ազդեցությունների հետևանք հանդիսացող լեզվական երևույթները կարող են չուղեկցել տվյալ լեզվին նրա զարգացման բոլոր փուլերում, դրանց գործառությունը կարող է սահմանափակվել տարածական և ժամանակային գործոններով։ Իսկ բառակազմական (Գ. Ջահուկյանի տերմինով՝ բառային) կրկնությունը հատուկ է եղել հայերենին՝ նրա բոլոր ժամանակային և տարածական դրսևորումներին։

Հայերենի՝ կրկնությամբ կազմված արմատների թվում հանդիպում են ինչպես անվանական, այնպես էլ բայական հիմքեր։ Բայց հայերենում ևս, ինչպես և հնդեվրոպական լեզվում, գերակշռում են կրկնավոր կազմությամբ բայահիմքերը։ Բայական կրկնավորները տարբերվում են անվանականներից։ Այդ տարբերությունը դրսևորվում է հիմնականում բառի բովանդակության՝ նրա արտահայտած իմաստային նրբերանգների մեջ։ Կրկնությամբ կազմված անուններին կրկնությունը սովորաբար իմաստային նոր նրբերանգներ չի հաղորդում. այն ուղղակի անվանում է առարկան (օր. կոկորդ, բիբեռն, ծիծաղ *և այլն), կամ եթե նույնիսկ պատմականորեն այդպիսի երանգ հաղորդել է, այն վաղուց արդեն չի գերազանցվում (նկատի չունենք կրկնությամբ կազմված բնաձայնությունները)։ Իսկ կրկնությամբ կազմված բայերը, քիչ բացառությամբ, ունենում են սաստկականության, հաճախականության իմաստ, թեև այս դեպքում ևս այդ սկզբնական իմաստները հաճախ կարող են պահպանված չլինել, հատկապես այն բայերում, որոնց պարզական արմատը չի պահպանվել։*

Գրաբարի կրկնությամբ կազմված բայերը բավական մեծ թիվ են կազմում։

Հայերենի կրկնավորների քննության ժամանակ աշխատել ենք ցուցաբերել տարբերակված մոտեցում՝ ըստ հնարավորին առանձնացնելով հ.-ե. այլ լեզուներում զուգահեռներ ունեցող կրկնավոր ձևերը, հետագա հայկական կազմությունները, հնարավոր ազդեցությունների

հետևանք հանդիսացող կրկնությունները, տիպաբանական նույն կաղապարներով, բայց ինքնուրույն կազմությունները և այլն։

Գրաբարի կրկնությամբ կազմված բայերի մեջ գերակշռում են նույնական (անփոփոխ) կրկնավորները. այդ բայերն են՝ ազազել, ազազել, աղխաղխել, արծարծել, գեղգեղել, երերիլ, լմլմել, լոմլոմել, խըլխլել, խարխարել, խողխողել, կափկափել, կերկերիլ, կողկողիլ, հարհարել, մլմլել, յեղյեղուլ (յեղյեղել), ողողել, ողողանալ, ուլուլալ, ջախջախել, փաղփաղիլ, փողփողել «փայլել», փողփողել «հյուսել», քայքայել, քրքրել, օրօրել[27]։

Այս բայերի մի մասը ակնհայտորեն փոխառյալ ծագում ունի (խողխողել, քրքրել, ջախջախել), մի մասը հավաստի ստուգաբանություն չունի (փողփողել «հյուսել», քայքայել)։ Որոշ բայերի հնդեվրոպական ծագման վերաբերյալ տարակարծություններ կան (աղխաղխել, կափկափել)։ Մնացած բայերը, որոնք գերակշռող մաս են կազմում, անկասկած հնդեվրոպական ծագում ունեն։

Ազազել բառը հանգում է հ.-ե. *ăs- «այրել» արմատի *azg'h- ձևին։ Հ.-ե. *ăs-նախաձևից են հհնդկ. ása-ḥ «մոխիր, աճյուն, փոշի», լատ. āreō «չորանալ», նվգերմ. Esse (*asi̯ōn), հիսլ. arinn «բարձունք, կրակատեղի». արմատի d-ով աճած ձևից են հուն. ἄζω (*az-d-i̯ō) «այրել, չորացնել», սլովեն. ozditi, չեխ. ozditi «չորացնել», լեհ. ozditi «չորացնել». և այլն։

Ջ. Գրեպինը իր վերը նշված հոդվածում առարկում է այս ստուգաբանության դեմ, ելնելով հ.-ե. zg'h>հայ. զ հնչյունական անցման դեմ։ Նա գրում է. «Այն, որ հ.-ե. *g'h-ն հայերենում նախաձայնավորային դիրքում արտացոլվում է իբրև զ, ոչ ոք չի կարող ժխտել, բայց չի կարելի ապացուցել նաև այն, որ այլ կապակցություններ (իմա հընչյունակապակցություններ—Ն. Մ.) էլ արտացոլվում են նույն կերպ»[28]։

Այն, որ հայ. ազազիլ-ը իմաստային առումով կապվում է հնդեվրոպական նշված արմատի հետ և իմաստային մերձավոր զուգահեռներ ունի հնդեվրոպական այլ լեզուներում պահպանված ձևերի հետ, ոչ մի կասկած չի հարուցում։

Կարծում ենք, որ կասկածելի չպետք է թվա նաև հայերեն բառի հնչյունական կազմը։ Հայերենում իբրև զ է արտացոլվում ոչ միայն հ.-ե. *g'h-ն, այլև *zg'h-ն. այս վերջին անցման համար կարելի է բերել հ.-ե. *mozg'-hi̯o- -հայ. մոզի, հ.-ե. *ozg'ho- -հայ. ոզոր համապատասխանությունները։

Հայերեն ազազել *բառի կրկնավոր կազմության մասին կարելի է ասել հետևյալը. հ.-ե.* *ăs- (*azd-, *azǵh-) *արմատը հնդեվրոպական ոչ մի լեզվում արտացոլված չէ կրկնությամբ, բացի հայերենից։ Նախ, նկատենք, որ ձայնավորով սկսվող արմատների կրկնությունը բնորոշ չէ հնդեվրոպական լեզվին և այնքան էլ հաճախադեպ չէ հնդեվրոպական լեզուներում։ Մյուս կողմից, հայտնի է, որ ամբողջական կրկնությունն ուղեկցվում է իմաստի սաստկությամբ, արտահայտչականությամբ։ Կարելի է ենթադրել, որ* ազազել *բայի կրկնավոր կազմությունը անմիջականորեն չի գալիս հնդեվրոպական լեզվից. այն, հավանական է, հնդեվրոպական կաղապարի նմանությամբ առաջացած հայկական կազմություն է։ Կրկնավոր կազմության համար թերևս դեր է խաղացել նաև արմատի միավանկ լինելը։*

Աղաղել *«մորթը աղել, դաբաղել» բայը հանգում է հ.-ե.* *sal- *արմատին. վերջինս վկայված է հնդեվրոպական լեզուների մեծ մասում «աղ, աղի, քաղցր, քաղցրանալ» իմաստներով։ Հայերենում արտացոլվել են հ.-ե. արմատի «աղ, աղի, քաղցր» իմաստները (հմմտ.* ան–ալի, աղու)*:* Աղաղել *կրկնավորը զարգյալ հայկական կազմություն է՝ արտահայտելով գործողության հաճախական, ինտենսիվ բնույթը։*

Հայերեն աղխաղխել *«գիզել, կուտակել» բայի ծագման վերաբերյալ տարբեր կարծիքներ են եղել։ Հ. Աճառյանն այն դասում է չստուգաբանված արմատների շարքը։ Գ. Ջահուկյանը այն հայերեն* աղխ, ախ *«փականք, օղակ, ունեցվածք, ամբոխ, ցեղ, ժողովուրդ» բառերի հետ միասին հանգեցնում է հ.-ե.* *aleq- *«փակել, փակելով պահպանել» արմատի հետ. հնդեվրոպական մյուս լեզուներում պահպանված ձևերն են՝ հուն.* ἀλέξω *«պահպանել»,* ἀλαλκεῖν *«ետ մղել՝ վանել, պահպանել»,* ἀλκάθω *«օգնել՝ օգնություն ցույց տալ», գոթ.* alhs *«տաճար», հլիտվ.* elkas, aĩkas *«սրբազան պուրակ» և այլն*[29]*։ Մեզ համար այստեղ առավել հետաքրքրական է հունարենում առկա* ἀλαλκεῖν *կրկնությամբ կազմված ձևը։ Հայերենի* աղխաղխել *ձևին զուգահեռ հունարենի կրկնավորի առկայությունը թույլ է տալիս ենթադրել կրկնության իմաստային համանման հիմքի առկայություն, որն այս դեպքում եթե ընդհանուր հնդեվրոպական չէ, ապա գոնե ընդհանուր է հայերենի և հունարենի համար։*

Հայերեն **արծարծել/արծարծանել** *«վառել, բորբոքել» բառը* **արծնել** *բայից կազմված կրկնավոր է։ Հայ.* արծնել*–ը կապվում է հ.-ե.* *ar(e)ǵ-

«փայլուն, սպիտակ» արմատի հետ։ Հնդեվրոպական լեզուներում առկա են այս արմատից կազմված ինչպես անվանական, այնպես էլ բայական հիմքեր. հմմտ. հնդկ. árju-na-h «սպիտակ, փայլուն», rajatám «արծաթ», լատ. argentum, օսկ. aražetut «արծաթ», կիմր. arian (t), բրետ. argant «արծաթ», ինչպես նաև լատ. arguō «լուսաբանել, պարզ դարձնել» և այլն։ Հայերենում բայական կազմությունը ունի -ն ածանցը՝ արծնել, որի համար կարելի է հնդեվրոպական ծագում կանխադրել. հմմտ. վերը բերված n-ով ձևերը։ Պարզ արմատն առկա է արծարծել կրկնավորի մեջ։ «Բորբոքել, գրգռել, վառել» իմաստը, որ ունի արծարծել բայը շնորհիվ արմատի կրկնության, դարձյալ սաստկականության երանգ է արտահայտում։ Այս դեպքում ևս այն դրսևորվել է միայն հայերենում։

Գեղգեղել բառի հնդեվրոպական ծագումը, չնայած որոշ հետազոտողների կասկածներին (Հ. Աճառյան, Ջ. Գրեպին և այլն), ակնհայտ է. այն կապվում է հ.-ե. *ghel- «կանչել, կոչել, գոռալ» արմատի հետ, որ համապատասխանություններ ունի հ.-ե. շատ լեզուներում. հիսլ. gjalla «հնչել՝ արձագանքել», անգլսաքս. galan «երգել», հուն. χελιδών «ծիծեռնակ», կրկնությամբ՝ κίχλη «սարյակ» և այլն։ Հայերենում պարզ արմատով բայական հիմք չի պահպանվել։ Այս դեպքում կրկնության առաջ բերած իմաստային երանգը որոշելը դժվար է. գուցե և նախապես այն արտահայտել է սաստկականություն, բայց չի գիտակցվում իբրև այդպիսին արմատական ձևի բացակայության պատճառով։

Երերիլ բառը հանգում է հ.-ե. *tres-, *ters- արմատի *tres-ri- ձևին։ Հնդեվրոպական մյուս լեզուների ձևերն են. հնդկ. trásati «դողալ», ավ. tarŝta «վախկոտ», հպրսկ. tarsatiy «վախենալ», լատ. terreo, -ēre «վախեցնել», հուն. τρέω «դողալ», լիտ. trišù «դողալ» և այլն։ Հայերենի երեր-արմատը պահպանել է նախնական «դողալ» իմաստը (հմմտ. դողալ→վախենալ→վախ, սարսափ), իսկ արմատի ամբողջական կրկնությունը կատարվել է սաստկականության երանգ արտահայտելու նպատակով։ Կրկնավոր ձևն առկա է միայն հայերենում։

Հայերեն լմլմել, լոմլոմել բառը Հ. Աճառյանը դասում է չստուգաբանված արմատների թվին։ Այս բառի ստուգաբանությանն, իրարից անկախ, անդրադարձել են Է. Աղայանը և Գ. Ջահուկյանը[30], կապելով այն հ.-ե. *lem- «մանրել, կոտրել, փափուկ» արմատի հետ։ Հ.-ե. մյուս լեզուներում առկա զուգահեռներն են՝ ալբ. lemë, գեգ. lamë «կալ, ձիթհանք», հվգերմ. lam (<*lom-), հիսլ. lami «կաղ, խեղ, հաշմ»,

հբուլգ. prě-lamati «կոտրել», հպրուս. limtwei «կոտրել, ջարդել» և այլն: Հայերենում պահպանվել են և՛ պարզական արմատը՝ լմել, և՛-լ-ով աճած լմլել (հմմտ. հբուլգ. loml'jǫ «կոտրել, ջարդել»), և՛ սաստկական կրկնությամբ կազմված լոմլոմել, լմլմել ձևերը:

Հայերեն կերկերիլ բայը Հ. Աճառյանը համարում է կեր անծանոթ արմատի կրկնությամբ կազմված: Է. Աղայանը կապում է այն հ.-ե. *ger- արմատին: Ուրիշ հետազոտողներ էլ այն համարում են բնաձայնական արմատ: Պեդերսենը այն կապում է հունարեն γαργαρίζω «խախաչում եմ» բառի հետ, որը Գ. Ջահուկյանը համարում է կասկածելի[31]: *ger- արմատից ծագած լինելու, բնաձայնություն լինելու դեպքում էլ կրկնավոր կազմությունը պատճառաբանված է, չնայած կրկնությունն առկա է միայն հայերենում:

Հայերեն կողկողիլ «ողբալ, բարձրաձայն լալ» բառը Հ. Աճառյանը համարում է չստուգաբանված: Գ. Ջահուկյանը այն կապում է *kel- «ծեծել, կտրել՝ հատել» արմատի հետ[32]: Է. Աղայանը կապում է հ.-ե. *gal- «կոչել, գոչել, բղավել» արմատի հետ[33]: Նույն նախաձևին են հանգում կիմր. *galw- «կոչել, կանչել», մբրետ. galu «կանչ», հեկսլավ. glagolją glagolati «խոսել». վերջին ձևերի համար կանխադրվում է *gal-gal- կրկնավոր նախաձևը: Հայերեն կողկողիլ բայի ոչ կրկնավոր, պարզ ձևն առկա է հայերեն բարբառներում՝ փօղալ «վրան լալ, ողբալ»: Կողկողիլ կրկնավորը սաստկական իմաստ է արտահայտում: Կրկնությամբ կազմված զուգահեռի առկայությունը սլավոնական լեզուներում կարող է հիմք տալ ենթադրելու, որ կրկնությունը հնդեվրոպական արմատներ է ունեցել:

Հայերեն մլմլել բայը մալել «մանրել, փշրել» բայի կրկնավորն է: Մալել-ը կապվում է հ.-ե. *mel- «մանրել, փշրել, աղալ» արմատի հետ: Հնդեվրոպական այս արմատի զուգահեռները կան հնդեվրոպական շատ լեզուներում և՛ անվանական, և՛ բայական հիմքերով. հուն. μώλω «ջարդել, փշրել, աղալ», լատ. molō, -ēre «ջարդել, փշրել, աղալ», molīna «ջրաղաց», mola «երկանաքար», գոթ. malma «ավազ» և այլն: Մլմլել «շփել, քսել» բայը, այս արմատի կրկնությունից կազմված, թերևս զուգահեռներ ունի գեմանական լեզուներում հանձինս հին.

malmr «հանքաքար», մվգերմ. malmen «փշրել, մանրացնել, փոշի դարձնել (քերելով)» ձևերի։

Հայերեն յեղյեղել «փոփոխել» բայը յեղուլ «փոխել, մի վիճակից մի ուրիշի դարձնել» արմատի կրկնավորն է։ Կրկնավորի սաստկական իմաստն ակնհայտ է։ Բայց հնդեվրոպական ծագում ունի, կապվում է *k^{u}el-, *k^{u}elə- «շրջել, փոխել» արմատի հետ, արմատն ունի նաև կրկնավոր *k^{u}ek^{u}lo- ձևը։ Հնդեվրոպական մյուս լեզուներում պահպանվել են ինչպես պարզական, այնպես էլ կրկնավոր արմատի արտացոլում հանդիսացող ձևերը. հնդկ. cárati «շրջվել, շարժվել», հուն. πέλω, πέλομαι «շարժման մեջ լինել, մի բանի վերածվել» կրկնավոր կազմություններ են հուն. κύκλος «շրջան, շրջանակ», հնդկ. cakras, cakrám «անիվ, շրջանակ», ավ. čaxra «ճախարակ», լիտ. kaklas «վիզ՝ պարանոց (սկզբնական նշանակությունն է եղել շրջվող, պտտվող)» և այլն։

Հայերենի կրկնավոր ձևն, այսպիսով, հնդեվրոպական կրկնության արտացոլումն է։ Հայերենում կրկնությամբ կազմվել է սաստկականության, հաճախականության իմաստ ունեցող բայաձև, իսկ հնդեվրոպական այլ լեզուներում կրկնությամբ կազմվել են անուններ։ Մեզ համար կարևորն այստեղ կրկնավոր ձևերի առկայությունն է հ.-ե. այլ լեզուներում, որը հիմք է տալիս հայերենի կրկնավոր ձևն ուղղակիորեն կապելու հնդեվրոպական նախաձևի հետ։

Հայերեն ողողանալ «լալ, ողբալ, կոծել» բայը հանգում է հ.-ե. *el-/*ol- արմատին։ Արմատի ոչ կրկնական ձևը առկա է ող-բ բառում։ Հունարենում և լատիներենում վկայված են կրկնավոր ձևեր. հուն. ὀλολύζω «ճչալ», ὀλολυγή «ճիչ», ὀλολυγαία. «ողբացող(բու)», լատ. ululo «ոռնալ», ululatio «ողբ, կոծ», ulula «բու», կրկնավոր ձև են պահպանել նաև սլավոնական լեզուները՝ ռուս. улюля «բու», լիտ. ulūloti «աղաղակել» և այլն։ Նշված հնդեվրոպական լեզուներում կրկնավոր կազմություններ են և՛ անվանական, և՛ բայական հիմքերը։ Հայերենում կրկնավոր է միայն բայը։ Նույն արմատից կազմված ողբ, ողոք, աղմուկ, աղաւրք բառերը ներկայացնում են արմատի ոչ կրկնավոր ձևը։ Կրկնությամբ կազմված բայաձևը հայերենում արտահայտում է սաստկական իմաստ։ Հ. Աճառյանը այս արմատին է հանգեցնում նաև բարբառային ուլուլալ «ողբալ, աղաղակել»

բայը[34]։ Այն չէր կարող առաջացած լինել գրաբարյան ողողանալ ձևից։ Եթե այն արտացոլում է հ.-ե. *ol- արմատը, ապա այն պետք է դիտել իբրև հնդեվրոպական հնաբանություն. հօգուտ այդ ենթադրության կարող է վկայել նաև բարբառային բայարմատի հանդես գալը առանց բայածանցի։

Հայերեն ողողել բայը հանգում է հնդեվրոպական *pel- արմատի *pol- ձևին։ Այդ արմատը հանդես է գալիս հ.-ե. շատ լեզուներում։ Այդ արմատից են ծագել նաև հայերեն հեղուլ, լի բառերը։ Հ.-ե. այլ լեզուներում վկայված չեն կրկնավոր ձևեր։ Սա թույլ է տալիս եզրակացնելու, որ այս բայի կրկնավոր կազմությունը հայերենին հատուկ երևույթ է, կազմված հ.-ե. ամբողջական կրկնության կաղապարով։

Հայերեն փաղփաղիլ, փողփողել և փայլ, փայլել բառերը հանգեցվում են հ.-ե. *(s) p (h) el- արմատին։ Փայլ, փայլել ձևերի համար ենթադրվում է *pheli- կամ *phl̥u- նախաձևը։ Փաղփաղել-ը նույնպես կարող էր առաջացած լինել նույն նախաձևից (*phl̥-ի l-ի երկակի՝ լ և ղ արտացոլման համար այլ օրինակներ էլ կան հայերենում), կրկնությամբ արտահայտելով իմաստի սաստկականություն։ Փողփողել-ը հանդես է գալիս արմատի այլ ձայնավորումով։ Հ.-ե. այլ լեզուներում բացակայում են կրկնավոր կազմությունները, և, հետևաբար, դժվար է հայերենում առկա կրկնությանը վերագրել հնդեվրոպական հիմք։

Փողփողել-ը «իրար հետ հյուսել, ընդելուզել» փողել «հյուսել» բայի կրկնավորն է։ Բառի ծագման վերաբերյալ Հ. Աճառյանը հստակ կարծիք չի հայտնում։ Գ. Ջահուկյանը այն կապում է հ.-ե. *pel- «ծածկել, կաշի, գործվածք, հագուստ» արմատի հետ, որը հ.-ե. այլ լեզուներում հանդես է գալիս «հյուսել»՝ հուն. πλέκω, լատ. plectō, -ere, հվգերմ. flehtan, «ցանց, գործվածք»՝ հուն՝ πλεκτή, հհնդկ. praçnas և այլն, իմաստներով։ Կրկնավոր ձև հնդեվրոպական մյուս լեզուներում չի վկայված։

Այսպիսով, հայերենի ամբողջական կրկնությամբ կազմված բայերի մեջ կարելի է տարբերակել երկու խումբ. մի խումբը կազմում են այն բայերը, որոնք կրկնությամբ կազմված զուգահեռներ ունեն հ.-ե. այլ լեզուներում. այս կրկնավորների համար կարելի է ենթադրել հնդեվրոպական հիմք (կերկերիլ, ողողանալ, յեղյեղուլ)։ Երկրորդ խմբի մեջ մտնում են այն բայերը, որոնց կրկնավոր ձևերը հանդես են գա-

չիս միայն հայերենում։ Դրանք համարում ենք հ.-ե. կրկնության կաղապարների նմանությամբ առաջացած հայկական կազմություններ։ Կրկնավոր կազմության մյուս բայերում կրկնությունն ուղեկցվում է հնչյունական փոփոխություններով, կամ առկա է, Գ. Ջահուկյանի բնութագրմամբ, ոչ նույնական կամ փոփոխական կրկնություն[35]։

Այս խմբի կրկնավոր բայերի մեջ զգալի թիվ են կազմում այն բայերը, որոնցում տեղի է ունեցել արմատի վերջին բաղաձայնի փոփոխություն կրկնության առաջին եզրում. դրանք են՝ դանդաղել, խարխալել, խարխափել, խորխոլել, կաղկանձել, կարկաչել, կարկառել, կոչկոճել, կրկչալ, կրկտել, պաղպաջել, պերպերել, սարսափել, տաղտապել, տաղտել, տնտղել և այլն։ Այս բայերի մի մասը (պերպերել, տաղտել, կոչկոճել, կրկտել) անստույգ, սակավ գործածություն ունեցած բառեր են։ Մի քանի բայեր էլ (խարխալել, խարխափել, խորխոլել, սարսափել) ակնհայտորեն ոչ հնդեվրոպական ծագման, փոխառյալ բառեր են։ Բայց ուշագրավն այստեղ այն է, որ այդ փոխառյալ կամ անհայտ ծագման բառերը ենթարկվել են հայերենում շատ տարածված կրկնության կաղապարին։ Փոխառյալ կրկնավորը, օրինակ, խարխարել բայը հետագա կրկնությամբ դարձել է խարխալել, խարխուլ, խարխլել և այլն (այս փոխառյալ հիմքերից բնիկ ածանցներով կազմվել են նաև անվանական հիմքեր՝ հմմտ. խարխարել–խարխար-ուն)[36]։ Բաղաձայնների հայերենին հատուկ հերթագայությամբ (ր-լ, ր-փ, ղ-տ, ղ-պ, ն-դ, դ-չ) բնորոշվող այս կրկնությունը կարող էր ուղեկցվել նաև ձայնավորների փոփոխությամբ։

Այս խմբի բայերից հնդեվրոպական ծագում է վերագրվում դանդաղ-ել, կաղկանձել, տաղտապել և տնտղել բայերին։

Դանդաղել բայը հանգեցվում է հ.-ե. *dhel- արմատի *ḍhl̥- ձևին։ Նույն արմատի ձայնդարձի տարբեր աստիճանով ձևերին են հանգում նաև հայ. դոնդող, դողալ, դողդոջ բառերը[37]։ Դանդաղել բառի համար ենթադրվում է *դաղ պարզական արմատը, որն առանձին չի հանդիպում։ Կրկնությունը հանդես է գալիս միայն հայերենում։

Կաղկանձել բայի ստուգաբանությանը մենք անդրադարձել ենք «Հայ բարբառների հնդեվրոպական հնաբանությունները» աշխատանքի մեջ[38]։ Այստեղ միայն ուզում ենք նշել, որ այն հ.-ե. *kel- արմատի *k(e)lem-d-ձևին է հանգում, որի կրկնությամբ էլ կազմվել է հայերեն կաղկանձել (<*կանձ-կանձել>կաղ-կանձել) բայը։ Կրկնության

ժամանակ նձ-ղ համապատասխանությունը առկա է նաև պապանձել բայի բարբառային պաղպանձել ձևի մեջ (*պանձպանձել>պաղպանձել>պապանձել)։

Կրկնությամբ կազմված մյուս բայը, որին հնդեվրոպական ծագում է վերագրվում, տնտղել-ն է։ Հ. Աճառյանն այն համարում է առանձին անգործածական տղել «շարժել» բայի կրկնավոր ձևը և կապում է հ.-ե. *dil- «շարժել» արմատի հետ։ Զուգահեռ ունի, և այն էլ կրկնավոր, միայն հունարենում՝ δενδίλλω «աչքերը այս ու այն կողմ շարժել»։

Գ. Ջահուկյանը տաղտապել «նեղել, չարչարել» բայը ևս կապում է տղել «շարժել» (ան-տղելի, ան-տիղ «անշարժ») բայի հետ, համեմատելով հնդկ. dolayati «օրորում է, տատանում է», լիտվ. delsti «հապաղել», շվեդ. tulta «անվստահ քայլել» ձևերի հետ և հանգեցնում է հ.-ե. *dēl նախաձևին[39]։

Կրկնավոր կազմությամբ այս բայերը (դանդաղել, կաղկանձել, տաղտապել, թերևս նաև տնտղել-ը, քանի որ կրկնավոր ձև ունի միայն մեկ լեզվում՝ հունարենում) համապատասխան կրկնավոր ձևեր չունեն հնդեվրոպական այլ լեզուներում։

Հնդեվրոպական ամբողջական կրկնությանը հատուկ է ձայնորդների տարբերակային հերթագայություն. հմմտ. լատ. can-cer<*car-cros, հնդկ. karkaṭa, հուն. καρκίνος «քաղցկեղ», հուն. παιπάλη «մանր ալյուր» և այլն[40]։

Կրկնության ժամանակ ձայնորդների հերթագայությունը բնորոշ է եղել հնդեվրոպական լեզվին։ Եվ եթե հայերենում ձայնորդների հերթագայությամբ ուղեկցվող կրկնավոր բայերը իրենց անմիջական զուգահեռ կազմությունները չունեն հ.-ե. այլ լեզուներում, դա դեռ չի նշանակում, որ կրկնության այս տեսակը հիմքեր չի ունեցել հնդեվրոպական լեզվում։ Ճիշտ հակառակը. այն այնքան կենսունակ է եղել հայերենում, որ անգամ փոխառյալ բառերը ենթարկվել են հնչյունական նույն փոփոխություններին։

Կրկնավոր բայերի մյուս խումբն են կազմում այն բայերը, որոնցում կրկնության ժամանակ, Հ. Աճառյանի բնութագրմամբ, «թեթևանում է» բառի առաջին եզրը։ Այդ բայերն են՝ բաբախել, դադարել, դեդեւիլ, թաթախել, թաթաւել, թոթովել, պապանձիլ, տատանիլ, փոփոխել և

այլն։ Այս խմբի մեջ ընդգրկված բայերի մեջ գերակշռում են հնդեվրոպական ծագման բայերը։

Դաղարել բայը հանգում է հ.-ե. *dher-, *dherə- «կանգնել, պահել» արմատին. հայերենում այն ունի անվանական կրկնավոր ձև, որից էլ կազմվել է բայը։ Կրկնավոր ձևեր առկա են միայն հին հնդկերենում՝ dṛ-dhṛ-á- «ամուր պահած, կանգնեցված», didhīṛšā «կանգնելու մտադրություն»։

Դեղեփել բայը հանգեցվում է հ.-ե. *dheu-, *dheu̯ə- ձևին։ Հայերենում պարզական արմատը չի պահպանվել։ Կրկնավոր ձևեր կան միայն հին հնդկերենում՝ dō-dhavitl, dudhāva «շարժել, ցնցել»։

Թաքաւել բայի համար վերականգնվում է հ.-ե. *tap- «թրջել» արմատը[41]։ Բերվում են միայն սլավոնական լեզուների տվյալները։

Ավելի հավանական է թվում այս արմատը կապել հ.-ե. *tā-, *tə- «հալվել, լուծվել, տարրալուծվել, անհետանալ» արմատի հետ, որից ծագած է համարվում և հայ. **թանալ** < *tā-n բայը։ Հ.-ե. *tā-p -ձևը հայերենում կարող էր արտացոլվել իբրև ***քաւ-**, որից և կրկնությամբ՝ **քաքաւել**: **Թաքախել** բայը նույնպես պետք է կապել այս արմատի հետ. հայ. **ւ-խ** լծորդ հնչյուններ են և կարող են հերթագայվել. հմմտ. հայ. խարդախություն-խարդաւանք, հայ. բրբռ. աւձ-աղձ, ուխն-օխտը, գաւտի-գախտի և այլն[42]։

Կրկնավոր ձևեր հնդեվրոպական մյուս լեզուներում չեն վկայված։

Տատանել բայի ստուգաբանությանն անդրադարձել է Հ. Աճառյանը և կապել այն հ.-ե. *den- արմատի *dn̥- ձևի հետ։ Զուգահեռ ունի միայն հունարենում δονέω «շարժել, ցնցել, հարել, ճոճել»։

Պետք է նշել, որ Յ. Պոկոռնին հունարենի այս ձևերը կապում է հ.-ե. *deịə (*dịā-, *dịə-, *dī-) «ճոճվել, պտտվել» արմատի հետ և բերում է հունարենի նշված ձևերից բացի նաև հոմերյան δίζημαι (*δι-δiā-μαι) կրկնությամբ ձևը։

Թոթովել բայի ծագման վերաբերյալ տարբեր կարծիքներ են հայտնվել։ Հ. Աճառյանն այն կապում է հ.-ե. *steu- «բարձրաձայն գովաբանել» արմատի հետ, որը զուգահեռներ ունի միայն հնդարիական և հունարեն լեզուներում։ Գ. Ջահուկյանի կարծիքով հայ. **թոթովել**, **թովել** բայերը կարելի է հանգեցնել հ.-ե. *teu- «բարեկամաբար ուշադրու-

թյուն դարձնել» արմատին[43]: Հնդեվրոպական լեզուներում այս արմատը հանդես է գալիս տարբեր իմաստներով՝ լատ. tueor, -ēre «դիտել, հետևել», միռլ. tud «ծածկել, թաքցնել»: Ինչպես նշում է Գ. Ջահուկյանը, հայերենին իմաստով ավելի մոտ է կելտ. *teu-to-ից առաջացած միռլ. tut «կախարդ, թովող» բառը:

Թերևս երկու ստուգաբանություններն էլ ունեն ստարկելի կողմեր, բայց եթե հարցին մոտենանք մեզ հետաքրքրող կրկնության առումով, ապա պետք է նշել, որ հ.-ե. լեզուներում պահպանված թե՛ մեկ, թե՛ մյուս արմատի համապատասխանությունները կրկնավոր կազմություններ չեն դրսևորում:

Պապանձիլ բայը հայերեն պինդ բառի հետ հանգում է հ.-ե. *bhendh- «կապել» արմատի *bendh-, *bn̥dh-s ձևերին: Հ.-ե. մյուս լեզուներում առկա են զուգահեռներ և՛ բայական, և՛ անվանական հիմքերով: Հայերենը չի արտացոլել այս արմատի «պարան, թոկ» իմաստը. «կապել» բայի սաստկական իմաստի արտահայտության համար ստեղծվել է կրկնավոր պապանձիլ (<պաղպանձիլ (բրբռ.)<*պանձ-պանձիլ) ձևը, որն այլ լեզուներում չի վկայված:

Կրկնավոր բայերի այս խմբի քննությունը ցույց է տալիս, որ հայերենում շարունակվել է հնդեվրոպական արմատի ամբողջական կամ լրիվ կրկնության գործընթացը, ենթարկվելով հետագա հնչյունական փոփոխության՝ արմատի բաղաձայնի կորստի: Այս բայերում առկա է ոչ թե հնդեվրոպական մասնակի կրկնություն, որի ժամանակ կրկնվում է արմատի բաղաձայնը +i կամ e/o, այլ՝ ամբողջական կրկնություն: Այդ պատճառով էլ, որպես կանոն, կրկնության առաջին եզրում պահպանվում է արմատական ձայնավորը:

Բայերի մի այլ խումբ են կազմում այն կրկնավորները, որոնցում արմատի փոփոխություն է տեղի ունենում կրկնության երկրորդ եզրում. դրանք են՝ ճայթայթել, ճեծեծել, ճեկեկալ, ճոռոռիլ, ճեղեղել և այլն: Այստեղ ուզում ենք անդրադառնալ կրկնության այս ձևին անկախ այդ բայերի ծագումից: Բանն այն է, որ այստեղ առկա է կրկնության մի կաղապար, որում երկրորդ եզրում տեղի է ունենում ճ- բաղաձայնի կորուստ: Ըստ որում ճ-ն անկման միտում ունի նաև բառասկզբի դիրքում, երբ բառասկզբում տեղի է ունենում որևէ նախամասնիկի հավելում. հմմտ. ճեղուլ-զեղուլ և այլն:

Կրկնության այս ձևը ևս հայերենին հատուկ կաղապար է:

Հայերենի այն կրկնավորները, որոնցում կրկնության ժամանակ հոդակապ է գործածվում, ուղեկցվելով կամ չուղեկցվելով կրկնվող հիմքերի հնչյունական այլ փոփոխություններով (բաղաձայն և ձայնավոր հնչյունների հավելում կամ փոփոխություն), ավելի ուշ շրջանի կազմություններ են, եթե անգամ այդ կրկնավորների մեջ կան հնդեվրոպական ծագում ունեցող արմատներ[44]*։*

Կրկնավոր բայերի քննությունը հանգեցնում է հետևյալ եզրակացությունների.

1. Հնդեվրոպական ամբողջական կամ լրիվ կրկնությունը հայերենում իր արտացոլումն է գտել, բայց շարունակել է զարգանալ, առաջացնելով ձայնորդների հերթագայությամբ, արմատական բաղաձայնի կորստով ուղեկցվող կրկնություն։ Կրկնության այս կաղապարը իր տարատեսակներով շատ գործուն և արդյունավետ է եղել հայերենում նրա զարգացման գրեթե բոլոր փուլերում, տարածվելով նաև փոխառյալ բառերի վրա։

2. Հնդեվրոպական մասնակի կրկնությունը հայերենի բայական կազմություններում չի պահպանվել. մասնակի կրկնության հնդեվրոպական կաղապարն առկա է միայն անվանական կրկնավոր կազմություններում (հմմտ. թիթեռն, ծիծառն, ծիծաղ, թիթեռ *և այլն)։ Մասնակի կրկնության այս կաղապարը գործել է հավանաբար շատ վաղ փուլում և դադարել արդյունավետ լինելուց։ Փոխառյալ բառերից այդպիսի կաղապարով կրկնավորներ չեն կազմվել։*

Ծ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1 Տե՛ս հատկապես P. Persson, Studien zur Lehre von der Wurzelerweiterung und Wurzelwariation, Upsala, 1891. G. Curtius, Zur Chronologie der indogermanischen Sprachforschung. "Abhandlungen der Königlichen Sächsischen Gesellschaft der Wissenshaften", Leipzig, 1867. *А. Мейе,* Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.—Л., 1938, *Э. Бенвенист,* Индоевропейское именное словообразование, М., 1905, *Э. А. Макаев,* Структура слова в индоевропейских и германских языках, М., 1970, *Э. Г. Туманян,* Структура индоевропейских имен в армянском языке, М., 1978, *Г. Б. Джаукян,* Сравнительная грамматика армянского языка, Е., 1982, *Գ. Բ. Ջահուկյան, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Երևան, 1959,* Հ. Վ. Սուքիասյան, *Աճականը հայերենում, Երևան, 1986 և այլն։*

2 *Ph. Colinet*, Essai sur la formation de quelques groupes de racines indoeuropéennes, 1. Les preformantes proto-aryennes. Gent-Leipzig-Löven, 1892, J. Schrijnen, Étude sur le phénomène de l's mobile, KZ, 35, 1905.

3 *А. Мейе,* Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.—Л., 1938, стр. 171.

4 *Н. С. Трубецкой,* Мысли об индоевропейской проблеме, ВЯ, 1958, № I, с. 71.

5 *Э. А. Макаев,* Структура слова в индоевропейских и германских языках, М., 1970, стр. 268—271.

6 Նույն տեղում, էջ 251:

7 *Т. В. Гамкрелидзе.* В. В. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы. Тбилиси, 1984, стр. 219.

8 Գ. Բ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 57:*

9 *Տե՛ս* Вопросы методики сравнительно-исторического изучения индоевропейских языков, М., 1956, стр. 163.

10 Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. I, Երևան, 1971, էջ 75:*

11 Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. I, էջ 2:

12 Նույն տեղում, էջ 727:

13 Հ. Աճառյան, *ՀԱԲ, հ. II, էջ 88:*

14 Նույն տեղում, էջ 87—88:

15 Է. Բ. Աղայան, *Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, Երևան, 1974, էջ 48—50:*

16 Տե՛ս նաև Հայոց լեզվի պատմական քերականություն, Երևան, 1975, էջ 34: Ս-ուրալ-յ-ուրալ *զույգի Մ. Մուրադյանի կողմից կատարված զուգադրությունը մեզ անհավանական է թվում. նախ՝* սուրալ-*ի համար Հ. Աճառյանը կանխադրում է* սույր *արմատը, որի* -ույր-*ը առանձին անգործածական է, մյուս կողմից՝* յուրալ-*ը անստույգ բառ է՝ ոչ հստակ նշանակությամբ:*

17. Հ. Աճառյան, *ՀԱԲ, հ. III, էջ 600:*

18. Գ. Բ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, էջ 817:*

19 *Տե՛ս А. Мейе*, Введение..., *A. Meillet*, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936, R. Beekes, The development of the Proto-Indo-European Laryngeals in Greek, The Hague-Paris, 1969, *О. Семеренььи*, Введение в сравнительное языкознание, М., 1980, *Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов,* Инодевропейский язык и индоевропейцы, *Э. Г. Туманян,* Структура индоевропейских имен в армянском языке, М., 1978, Գ. Բ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան և այլն:*

20 *A. Meillet*, Esquisse..., p. 113.

21 Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի, Երևան, 1957, հ. III, էջ 96:*

22 Նույն տեղում։

23 Նույն տեղում, էջ 98։

24 *Э. Г. Туманян,* Древнеармянский язык, М., 1971, стр. 168—170, Структура индоевропейских имен в армянском языке, М., 1978, с. 86—88.

25 *J. A. C. Greppin,* Reduplicated Patterns in Classical Armenian, "Annual of Armenian Linguistics,,, 1981, N 2, p. 7.

26 Նույն տեղում, էջ 8։

27 Այստեղ չեն բերվում բնաձայնական կրկնությունները։

28 *J. A. C. Greppin,* Reduplicated Patterns... p. 3—4.

29 *Г. Б. Джаукян,* Очерки дописьменного периода армянского языка, Е., 1967, стр. 121.

30 Տե՛ս Է. Բ. Աղայան, *Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, էջ 76,* Գ. Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 296։*

31 Գ. Բ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան էջ 168։*

32 *Г. Б. Джаукян,* Очерки..., стр. 144.

33 Է. Բ. Աղայան, *Բառաքննական ..., էջ 86—87։*

34 Հ. Աճառյան, *ՀԱԲ, հ. III, էջ 555։*

35 Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, էջ 251։*

36 Նույն տեղում, էջ 386։

37. Է. Բ. Աղայան, *Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, էջ 58—59։*

38 Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, Երևան, 1979, էջ 244։

39 Գ. Բ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, էջ 117, 161։*

40 *Տե՛ս Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов,* Индоевропейский язык и индоевропейцы, стр. 221.

41 *J. Pokorny,* Indogermanisches etymologisches Wörterbuch, 1—2, Bern-München, 1959—1969. S. 1056.

42 Գ. Բ. Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն, էջ 275։*

43 Գ. Բ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, էջ 196։*

44 Նույն տեղում, էջ 364։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ալբ. — ալբաներեն
անգլոսաքս. — անգլոսաքսոներեն
ավ. — ավեստերեն
բելոռուս. — բելոռուսերեն
բրբռ. — բարբառային
բրետ. — բրետոներեն

բուլղ. — բուլղարերեն
գեղ. — գեղերեն
գերմ. — գերմաներեն
գոթ. — գոթերեն
եկսլավ. — եկեղեցասլավոներեն
խալ. — խալանդերեն
լատ. — լատիներեն
լատվ. — լատվերեն (լատիշերեն)
լիտվ. — լիտվերեն
կելտ. — կելտական
կիմր. — կիմրերեն
հ. — հին

հայ. — հայերեն
հնդկ. — հնդկերեն
հուն. — հունարեն
մ. — միջին
պրսկ. — պարսկերեն
ռուս. — ռուսերեն
սերբախորվ. — սերբախորվաթերեն
սլավ. — սլավոներեն
սկր. — սանսկրիտ
վ. — վերին
ուկր. — ուկրաիներեն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Լ. Շ. Հովհաննիսյան

Բառային տարբերակներ V դարի գրաբարում 5
I. Հնչյունական տարբերակներ 9
1. Ձայնավորային փոփոխություններով զուգաձևեր 9
2. Բաղաձայնական փոփոխություններով զուգաձևեր 17
II Բառակազմական տարբերակներ
1. Ածանցային տարբերակներ 37
2. Հիմքակազմական տարբերակներ 43
3. Հոդակապով և առանց հոդակապի բարդություններ 48
4. Տարբեր հոդակապով բարդություններ 51
5. Բարդ բառերի բաղադրիչների շարադասական տարբերակներ . . 53
Գրականություն 58

Ն. Գ. Հովհաննիսյան

Նաղաշ Հովնաթանի տաղերի լեզուն որպես վաղ աշխարհաբարի արտահայտություն
Ներածություն 61
Գլուխ I Բառապաշար
1. Գրաբարյան և միջին հայերենյան բառաշերտեր 80
2. Նոր բառեր և իմաստային նոր կիրառություններ 86
3. Բարբառային բառեր 90
4. Նեղ բարբառային բառեր 95
5. Փոխառյալ բառեր 98
6. Բառակազմական առանձնահատկություններ 117
Գլուխ II Ձևաբանական առանձնահատկություններ
Հոլովման համակարգ 128
1. Անվանական հոլովում. հոլովման տիպեր 128
2. Հոլովակազմություն 130
3. Հոդնակերտ ձևույթներ 134
4. Դերանվանական հոլովում 136
Խոնարհման համակարգ 138
1. Ժամանակաձևերի կազմությունը 141
2. Բայի եղանակային ձևերի ոճական կիրառություններ 150
Գլուխ III Շարահյուսական առանձնահատկություններ
Նախադասությունների կառուցվածքային տիպերը 152
1. Բարդ համադասական նախադասություն 154
2. Երկրորդական նախադասությունների բնույթը 158
3. Շարահարությամբ բարդ նախադասություն 164
Նախադասության անդամների ձևաբանական արտահայտությունը . . 172
Ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը 181
Եզրակացություն 182

Հավելված Ա 184
Հավելված Բ 185
Համառոտագրություններ 187
Գրականություն 189

Վ. Գ. Ջ ի ն ա ն յ ա ն

Հայկական լեռնաշխարհի ջրանունները

Ներածություն 193
Գ լ ո ւ խ   ա ռ ա ջ ի ն. Հայ տեղանվանագիտության արդի վիճակը և խնդիրները 201
Գ լ ո ւ խ   ե ր կ ր ո ր դ. Հայկական լեռնաշխարհի ջրանունների ծագումնաբանական քննություն 220
Գ լ ո ւ խ   ե ր ր ո ր դ. Ջրանունների կառուցվածքային և իմաստաբանական քննություն 256
Եզրակացություն 269
Գրականություն 272

Ն. Մ. Ս ի մ ո ն յ ա ն

Հայերենի բայակազմության մի քանի հարցեր

Ներածություն 277
Նախամասնիկավոր բայեր 280
Կրկնավոր բայեր 293
Ծանոթագրություններ 309
Համառոտագրություններ 311

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Պրակ 3

Հրատ. խմբագիր Ս. Վ. Հովակիմյան
Գեղ. խմբագիր Հ. Ն. Գործակալյան
Տեխ խմբագիր Ջ. Հ. Սարգսյան
Սրբագրիչ Ն. Հ. Մկրտչյան

ИБ № 1635

Հանձնված է շարվածքի 23. 02. 1990 թ.։ Ստորագրված է տպագրության 19. 02. 1991 թ.
Չափը $60\times84^{1}/_{16}$, Թուղթ № 1։ Տառատեսակ «Գրքի սովորական» բարձր տպագրություն
Պայմ. 18,36 մամ., տպագր. 19,75 մամուլ։ Ներկ. մամուլ 18,36։ Հրատ-հաշվարկ. 17,4
մամուլ։ Տպաքանակ 1000։ Հրատ. № 7871։ Պատվեր № 83։ Գինը 3 ռ. 55 կ.։

Հայաստանի ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան,
Մարշալ Բաղրամյան պող. 24 գ.։

Издательство АН Армении, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24 г.

Հայաստանի ԳԱ հրատարակչության տպարան, 375019, Երևան,
Մարշալ Բաղրամյան պող. 24։

Типография Издательства АН Армении, 375019, Ереван,
пр. Маршала Баграмяна, 24 г.

3 n. 55 k.

A II / 81887